


Ըսպիտն Առաքելչանն

ՔԱՂԱՔՆԵՐԸ
ԱՐՃԵՍՏՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
IX-XIII ԴԴ.





A III

202.6 (47.925)

4

1-70 Unauftragte f.

Autopsie in Alphab.

unabhängig 24n 654

1/58 866



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Бабкен Аракелян

ГОРОДА
и
РЕМЕСЛА
АРМЕНИИ
В IX-XIII ВВ.



I

Издательство АН Армянской ССР
Ереван - 1958

Հայկեն Առաքելյան

02.6 (47.925)
Ա-70

ՔԱՂԱՔՆԵՐԸ
ԱՐԿԵՍՏՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
IX-XIII ԴԱՐԵՐՈՒՄ




I

Հայկական ԱԱԶ ԳԱ Իրատարակչություն
Երևան - 1958



Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ



Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Անդրկովկասի երկրները, կաղմելով Արևելքի բազկացուցիչ մասը, իրենց պատմական ուղին դարեր շարունակ անցել են Արևելքի մի շարք երկրների վարդապետներ համընթաց: Միաժամանակ, Հայաստանը գտնվելով Ասիայի և Եվրոպայի միջև, Աև, Կասպից ծովերի, Միջերկրական ծովի ռազմական և առևտրական, հնում ամենաբառուկ, ճանապարհների խաչմերուկներում՝ մշտապես տնտեսական, քաղաքական և կուլտուրական սերտ կապեր է ստեղծել Արևելքի և Արևմուտքի երկրների հետ, խառնելով նշանակալից դեր նրանց փոխհարաբերությունների վարդապետ մեջ:

Այդ առավել ևս վերաբերում է միջին դարերն ընդգրկող ժամանակաշրջանին, ուստի Հայաստանի միջին դարերի պատմության, տնտեսության և կուլտուրայի հարցերով վերազվողը պարտավոր է լայնորեն հաշվի առնել այն միջավայրը, որի մեջ գտնվում էր Հայաստանը և այն կապերը, որ նա ուներ այլ երկրների հետ:

Ֆեոդալական հարաբերություններն Արևելքում ավելի վաղ վարդապետ և առաջադիմեցին, քան, օրինակ, Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում:

Իսկ Անդրկովկասի երկրները, սրանց թվում

և Հայաստանը 9—13-րդ դարերում իրենց երկրագործական տնտեսությամբ, քաղաքների և արհեստների վարդապետմամբ, ինչպես և իրենց կուլտուրայով կանգնած էին Արևելքի առավել վարդապետ երկրների շարքում:

9—10-րդ դարերում Անդրկովկասում ձևավորվում է ֆեոդալական քաղաքը: Առաջացած բազմաթիվ քաղաքներում բարձր վարդապետ է հասնում տնտեսական կյանքը՝ արհեստներն ու առևտուրը, ինչպես և կուլտուրան: Այս հարցերի ռեսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում, իսկ նրանց լուսաբանման համար աղբյուրները տրամադրում են բավականաչափ առատ նյութ:

Մի քանի լեզուներով (հայերեն, վրացերեն, արաբերեն, պարսկերեն, հունարեն) դոյություն ունեցող զբաղող աղբյուրներում քիչ չեն պահպանվել այնպիսի տեղեկություններ ու վկայություններ, որոնք մեծ արժեք են ներկայացնում Արևելքի երկրների, քաղաքների արհեստագործության և առևտրի պատմության ռեսումնասիրության համար: Ավիլի մեծ, կարելի է ասել, բացառիկ նշանակություն ունեն Անդրկովկասում, մանավանդ Հայաստանում, ձեռնարկված միջնադարյան քաղաքների աղբյուրները, որոնք

արդեն հսկայական նյութ են երևան բերել քաղաքների կյանքի շատ կողմերի վերաբերյալ:

Անդրկովկասի միջնադարյան քաղաքներից Անին, Դվինը՝ Հայաստանում, Դմանիսին, Քութայիսին, Բրիլիսին՝ Վրաստանում, Գանձակը, Փայտակարանը (Օրան-կալա)՝ Ադրբեջանում արդեն դարձել են ծավալուն կամ մասնակի հնադիտական ուսումնասիրության առարկա: Առավել երկարատև ու սխտեմատիկ պեղումներ կատարվել են Անիում և Դվինում: Վերջին տարիների ընթացքում ծավալուն պեղումներ են կատարվում Փայտակարանում (Օրան-կալա):

Անիում պեղումները ձեռնարկվեցին դեռևս 1892—1893 թթ. և երկար ընդհատումից հետո վերսկսվեցին 1904 թ. շարունակվելով մինչև 1914 թվականը: Պեղումները ղյսավորող Ն. Յա. Մաուր հաղթահարելով մեծ դժվարություններ, կարողացավ իրականացնել այդ քաղաքի հնադիտական ուսումնասիրությունը երկար տարիների ընթացքում: Այդ աշխատանքներին մասնակից եղան կամ դրանց հետ կապված առանձին հարցերի ուսումնասիրությունը հանդես եկան մի շարք ակադեմիկոս գիտնականներ, մասնավորապես ակադ. Հ. Օրբելիս: Անիի հնադիտական արշավախումբը բավականաչափ ծավալուն աշխատանքներ կատարեց միջնադարյան Հայաստանի այդ նշանավոր մայրաքաղաքում, որը չափազանց հարուստ է հնադիտական ամեն տեսակի հուշարձաններով: Հայտնաբերված նյութերն այնքան առատ են, որ արդեն գոյություն ունեցող մի շարք ուսումնասիրությունների ու հրատարակությունների մեջ ճրանք դեռևս չեն սպառվել և կարող են նյութ ծառայել առանձին հարցերի նվիրված, ինչպես և ընդհանրացնող մի շարք նոր ուսումնասիրությունների համար:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, հնադիտական աշխատանքները շտեմնված թափ ու ծավալ ստացան: Նրանք ընդգրկում են ինչպես սյա-

լսովիյան, նույնպես և բրոնզեդարյան, սերաբուական, անտիկ շրջանի հայկական ու միջնադարյան բազմաթիվ հուշարձաններ: Տարիներ շարունակ աշխատում են Կարմիր-բլուրի, Դվինի և Գառնիի խոշոր արշավախմբերը:

Դվինի պեղումները երևան են բերել հսկայական նյութեր, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու վաղ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքի և զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի արհեստագործության և առևտրի խոշորագույն կենտրոններից մեկի բնակչության նյութական արտադրության, սպառման, կյանքի ու կենցաղի բազմաթիվ կողմերը: Դվինում հայտնաբերված հնադիտական նյութերը վերաբերում են առավելապես տրվյալ աշխատության մեջ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին՝ 9—13-րդ դարերին և անդնահատելի աղբյուր են հանդիսանում այդ դարերի քաղաքների և արհեստագործության պատմության ուսումնասիրության համար:

Կարևոր նշանակություն ունեն և Գառնիի միջնադարյան շերտերից հայտնաբերվող նյութերը, որոնք թույլ են տալիս լուսարանելու փոքր քաղաքների, դյուղաքաղաքների և ավանների նյութական արտադրության ու կյանքի պատկերը: Նրանք ցույց են տալիս, որ արհեստագործությունը զարգացած է եղել նաև փոքր քաղաքներում ու դյուղաքաղաքներում, որոնք հանդիսացել են արհեստալին արտադրության և առևտրի փոքր մասշտաբի տեղական կենտրոններ:

Անբերդում ակադ. Հ. Օրբելու ղյսավորությունները կատարված պեղումները (1936—1937 թթ.) ցույց տվեցին, որ ֆեոդալական այս բերդ-դյուղը սերտորեն կապված է եղել քաղաքների, մասնավորապես Անիի հետ, և նրա բնակիչներն արհեստագործական արտադրանքի իրենց պահանջը բավարարում էին ոչ այնքան սեփական, որքան քաղաքային արտադրությամբ:

Այսպիսով, գրավոր աղբյուրները և մա-

նախնից պեղումները բավականաչափ աստանշալ են ընձևուում՝ քաղաքների ու արհեստագործության պատմության ուսումնասիրության համար: Բնական է, որ այդ նշալիքը պետք է գրավեն գիտնականները՝ աշագրությունը, հրատարակիչին և ուսումնասիրության աստղիկ հանդիսանային առանձին մենագրություններում: Եվ իրոք, միջնադարյան Հայաստանի քաղաքների պատմությունը, նրանց պեղումներին, արհեստներին ու առևտրին մի շարք գրքեր ու հրատարակություններ են նվիրված, որոնց համառոտ տեսությունը կամենում ենք անցնել:

Դեռևս Անիում կատարված պեղումների տարիներին սիսականատիկարաբ հրատարակվում էր յուրաքանչյուր տարվա աշխատանքների հաշվետվությունը, որոնց նկարագրվում էին պեղումների հիմնական արդյունքները¹: Այս հրատարակություններից մի քանիսը շատ համառոտ են և պեղումների

ամբողջական պատկերը չեն տալիս, մյուսները ընդարձակ են և նրանց մեջ նկարագրված են թե պեղումները և թե նրանց ժամանակ հայտնաբերված նշալիքը:

Անիում կազմակերպելով թանգարան, Անիի հնագիտական արշավախումբը ձևանարկեց նրա նշալիքների հրատարակությանը «Անույ շարք» կոչվող հատուկ սերիայով: Այս սերիայով հրատարակված աշխատությունների թվում խիստ արժեքավոր է, մանավանդ Հ. Օրբելու «Каталог Анниского музея древностей» աշխատությունը, որտեղ հմտորեն նկարագրված և բնութագրված է Անիի թանգարանի հնագիտական նշալիք (բացառյալ քանդակազարդ և արձանագործություն կրող քարերի): Անիի պեղումներով հայտնաբերված հնագիտական նշալիք, հետևաբար և քաղաքային կյանքի ու արհեստների ուսումնասիրության տեսակետից այս աշխատությունը բացառիկ նշանակություն ունի: Նույն սերիայով յույս տեսած մյուս աշխատություններն ևս արժեքավոր նշալիք են պարունակում:

Վերևում նշված երկու սերիաներից դուրս, Անիի վերաբերյալ գրվել են և այլ աշխատություններ ու հոդվածներ, որոնց մեջ նույնպես քննարկված են Անիի և առհասարակ Հայաստանի միջնադարյան քաղաքներ-

¹ Անիի պեղումների տարեկան արդյունքները հրատարակված են՝

1892 թ.— ОАК за 1892 г., стр. 75—86.

1893 թ.— ОАК за 1893 г., стр. 33—36.

1904 թ.— ОАК за 1904 г., стр. 97—98.

Подробный отчет ИАК, вып. XVIII, стр. 73—94.

1905 թ.— ОАК за 1905 г., стр. 75—76.

1906 թ.— ОАК за 1906 г., стр. 105.

Подробный отчет Н. Я. Марр, О раскопках и работах в Анни летом 1906 г., СПб, 1907.

Н. Я. Марр, О раскопках 1907 и 1908 гг. в Анни, ЗВО, т. XIX, СПб 1909.

Его же, Восьмая Анни́ская археологическая кампания.

IX Анни́ская археологическая кампания.

X Анни́ская археологическая кампания. ЗВО, т. XXI, вып. 1, СПб, 1912.

XI Анни́ская археологическая кампания. Приложение к труду—Книжная история Анни и раскопки на месте городища. Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. XIII, СПб, 1913.

XII археологическая кампания в Анни. ЗВО, т. XXII, вып. 1—II; СПб, 1914, стр. XVII—XIX,

¹ «Անույ շարք» սերիայով յույս են տեսել՝

№ 1. Н. Марр. Краткий каталог Анни́ского музея, СПб, 1906.

№ 2. Н. Марр. Ресстр предметов древности из VI-ой (1907) археологической кампании в Анни, СПб, 1908.

№ 3. И. Орбели, Каталог Анни́ского музея древностей, вып. I. Описание предметов первого отделения, СПб, 1910.

№ 4. И. Орбели, Краткий путеводитель по городищу Анни, СПб, 1910.

№ 5. В. Бартольд. Персидская надпись на стене анни́ской мечети Мануче, СПб, 1911.

№ 6. М. И. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, СПб, 1911.

№ 7. В. И. Бенешевич, Три анни́ские надписи XI в., Петербург, 1921.

րի, արհեստների և առևտրի պատմության մի շարք հարցեր¹:

Մի քանի աշխատություններ նվիրվել են Անիի ճարտարապետությանը: Գրանցից ամենաուշագրավն ու արժեքավորներն են Թորոս Թորամանյանի աշխատությունները²: Այս անխոնջ ու բեղմնավոր գիտնականը հնագիտական մի շարք արշավների ընթացքում և նրանցից դուրս տարիներ շարունակ ուսումնասիրել է հայկական ճարտարապետության հուշարձանները Անիում և իր թողած աչքի ընկնող գիտական ժառանգության մեջ զգալի տեղ է հատկացրել նրանց:

Անիի ճարտարապետական հուշարձանները վառ կերպով ցույց են տալիս այդ քաղաքի աճի ու դարգացման պատկերը:

Հավաքվել և ուսումնասիրության առարկա են հանդիսացել նաև Անիի վիմական արձանադրությունները: Գեռևս 1881 թ. հրատարակված «Շիրակ» պատմա-աշխարհա-

գրական տեղագրական աշխատության մեջ Ալիշանը փորձել է տալ Անիի պատմությունը, մեջ բերելով և այդ քաղաքի շենքերի վրա հանդիպող վիմական արձանադրությունները, որ նա քաղել է նախորդ աշխատություններից: Այդ արձանադրությունների մեջ հիշատակվում են Անիի արհեստավորական մի շարք թաղամասեր, շարքեր, կուղ-պակներ (արհեստանոց-խանութ), քրաղացներ, ձիվհաններ և այլն: Անիի հնագիտական արշավախմբի աշխատանքների ժամանակ այդ քաղաքի վիմական արձանադրությունները հավաքել և գիտական հրատարակության է պատրաստել Հ. Օրբելին, բայց զժրախտաբար մինչև օրս էլ այդ շատ արժեքավոր ժողովածուն, որը բաղկացած է մի քանի պրակներից, դեռևս լույս չի տեսել:

Անիում երկար տարիների ընթացքում կատարված հնագիտական աշխատանքը հանրագումարի է բերված ահադ. Ն. Յա. Առաի «АНИ» աշխատության մեջ³, որի վրա կամ այն շատով բնարկվում են հայ ճարտարապետության պատմությանը վերաբերող բոլոր աշխատություններում:

Գրանցից առավել կարևորներն են. Strzygowski J. Baukunst der armenier und Europa, Band I—II Wien, 1918; Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946; В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества. Москва, 1951; А. Л. Якобсон, Очерки истории зодчества Армении V—XVII вв., Москва-Ленинград, 1950; Н. Г. Бунятов, Ю. С. Яралов, Архитектура Армении, Москва, 1950. Կան և առանձին հարցերի նվիրված ուսումնասիրություններ, ինչպես, օրինակ, «Памятники армянского искусства. Ани. Дворцовая церковь. Под редакцией Н. Я. марра по обмерам и чертежам архитектора-художника Н. Г. Бунятова», вып. I, Петербург, 1915; К. Л. Оганесян, Зодчий Трдат. Ереван, 1951, որը հաշկավոր ճարտարապետ Տրդատի ստեղծագործության վերլուծությանը նվիրված մենագրություն է, կան և շատ ուրիշ աշխատություններ ու հոդվածներ:

¹ Н. Я. Марр, Ани, Книжная история города и раскопки на месте городища, Москва-Ленинград, 1934.

² Անիի վերահրատարակությունը, Երևան, 1939:

¹ Վերևում բերված երկու սերիաներից դուրս, Անիի վերաբերյալ հրատարակվել են.

И. Орбели. Развалины Ани, СПб, 1911.

Н. Марр. Отчет Анийского музея древностей за 1915 г., Петроград, 1917.

Г. Н. Чубинов. Отчет Анийского музея древностей за 1916 г. Анийские древности III. Петроград, 1918.

Его же. Декоративное убранство анийских паросов. Христианский Восток, т. V, вып. I. Петроград, 1916.

² Թորոս Թորամանյանը Անիի ճարտարապետությանը նվիրել է մի շարք աշխատություններ. տե՛ս «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատ. 1-ին, Գաղիաշեն ս. Գրիգոր, էջ 270—281, Անի, էջ 323—351, Հայաստանի արժանական և իշխանական ապարների և անոնց ներքին կենցաղը, էջ 352—374, Անիո միջնաբերդի պեղումները, էջ 375—378, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատ. 2-րդ, Հովվի եկեղեցին, էջ 103, Անիո պարիսպների մասին, էջ 106—107, Անի, էջ 176—186, «Անի քաղաք, թի ամրոց», Թիֆլիս, 1912 թ., (առանձնատիպ «Աղղաղրական հանդես»-ի 22 և 23 գրքերից): Անիի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ տպված են մի շարք պարբերականներում (տե՛ս Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», 1-ին հատորի 396 էջում բերված ցանկը): Անիի ճարտարապետության հարցերը այս

անհրաժեշտ է հանդամանորեն կանգ առնել: Աշխատութիւնը բաղկացած է առաջարանից և երկու բաժնից: Առաջին բաժնում հեղինակը գրավոր աղբյուրների և պեղումների գլխավոր արդյունքների հիման վրա քննարկում է Անիի պատմութիւնը սկզբից մինչև անկումը, նրա զարգացման էտապները, նրա դերը հայկական կուլտուրայի զարգացման պատմութիւն մեջ և այլն: Առարկելով հայ տրագիցիոն պատմագրութիւն տեսակետների դեմ, հեղինակը ջանացել է ցույց տալ, որ Բագրատունիների անկումով Անին դեռևս չի ընկնում, որ սելջուկներից ստացած ծանր հարվածներից հետո էլ նա շարունակում է աճել, ընդարձակվել և 13-րդ դարի առաջին երրորդում դառնում է խոշորագույն արհեստագործական և առևտրական կենտրոն, որ Անին երկրաշարժի հետևանքով միանգամից չի կործանվել, այլ նրա անկումը տեղի է ունեցել աստիճանաբար՝ իբրև հետևանք մոնղոլական ծանր ու քայքայիչ լծի: Գրքում շատ էջեր են նվիրված հայ ժողովրդի սոցիալական պատմութիւն հարցերին, ցույց է արված մեծամեծ հարստութիւնների կուտակումը իշխող դասակարգի, ֆեոդալների, մեծատունների և հոգևորականութիւն ձևերում, սրանց շուրջ ու զոյհ կյանքը և դրա կողքին աշխատավորական դանդաղների թշվառութիւնն ու իրավազրկութիւնը: Նշվում է, որ այդ ամենի հետևանքով սրվել էին դասակարգային ներհակութիւնները, որ երկրի աշխատավոր բնակչութիւնը անտարբեր չէր մնում «կյանքի անհաշուէլի հակամարտութիւնների նրկատմամբ և պայքարի էր կննում: Բացի հայկային հարցի առթիվ ծագած գյուղացիական շարժումներից Հայաստանում առաջացել էր նաև արվիկյան (իմա՝ թոնդրակյան) կրոնա-սոցիալական ուսմունքը, որի հետևորդները գերազանդապես, եթե ոչ բացառապես, աշխատավոր ժողովրդից էին»¹:

Սրվել էր նաև դասային ու միջդասային պայքարը, մասնավորապես կենտրոնախույս ֆեոդալների պայքարը Բագրատունիների կենտրոնական իշխանութիւն դեմ, որը տեղի էր ունենում Բյուզանդական կայսրութիւն նվաճողական քաղաքականութիւն ուժեղացման պայմաններում: Այս ամենի մեջ Ն. Յա. Մառը տեսնում է Բագրատունաց թագավորութիւն անկման պատճառները: Բագրատիվ էջեր են նվիրված հայ ժողովրդի կուլտուրայի պատմութիւնը:

Գրքի երկրորդ բաժնում նկարագրված են Անիի հնագիտական արշավախմբի 1892—1893 և 1904—1913 թթ. 12 կամպանիաների ընթացքում կատարված աշխատանքները և շարադրված են դրանց հիմնական արդյունքները: Մեջ են բերված մեծ քանակութիւն մեծածախք հնագիտական նյութեր: Ն. Մառի «АНИ» աշխատութիւնը մի խոշոր առաջընթաց քայլ էր հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և կուլտուրական կյանքի տեսնման հասիրութիւնը բնագրավառում:

Գրքի այս դրական կողմերի հետ միասին, նրա մեջ տեղ են զտել և խոշոր թերութիւններ, պատմագիտական տեսական սխալներ:

Մառը մերժելով հասարակութիւնն ու կուլտուրայի զարգացման պատմական պրոցեսի անընդհատութիւնը Հայաստանում, փոխարինել է այն ցիկլային տեսութիւնը նմանվող մի տեսակետով, որի համաձայն Հայաստանի հասարակական կյանքը և կուլտուրան զարգանալով հասնում են մի որոշ աստիճանի, ապա արտաքին ներխուժումների կամ ինչ-որ ներքին պատճառների հետևանքով կործանվում, ոչնչանում են և դրանից հետո ամեն ինչ նորից սկսվում է սկզբից: Անգամ միևնույն ֆորմացիայի մէջ Մառը մի քանի այդպիսի կատաստրոֆիկ անկում ու «նոր հիմքերի» վրա, կամ «նոր միջավայրում» «նոր» զարգացում է տեսնում: Նրա կարծիքով մի այդպիսի կատաստրոֆա հաստատուցել էր 11-րդ դարում՝ այս անգամ ֆեոդալական շահագործման ստատ-

¹ Н. Я. Марр, Ам. Ереван. 1939. стр. 57.

կացման և ներշնչակ դասակարգերի միջև անհաշտելի պայքարի սրման հետևանքով: «Առաջացել էր սոցիալական մեծ շարիք»¹, «հնամենի կարգը» Հայաստանում «կազմալուծվել էր» և իբրև թե պետք է «բախտի կամքով» կործանվեր, այն էլ արտաքին թարմ ուժերի շնորհիվ: Եարունակելով իր սխալ գատողությունները, Ն. Մառը ոչ միայն չի տեսնում սելջուկյան արշավանքների ու տիրապետության ավերիչ, երկրի վարդացտճը կասեցնող ու միանգամայն բացասական դերը, այլև հենց սելջուկներին է համարում «բախտի կամքը» իրագործող այն փրկարար ուժը, որը պետք է կործաներ Հայաստանի կազմալուծված հին կարգը և ստեղծեր նորը: Ն. Մառը գրում է. «...հնամենի կարգը (Հայաստանում) կազմալուծվել էր: Թարմ ուժ էր պահանջվում՝ հինը անդառնալիորեն կործանելու և նոր սոցիալական միջավայրում նոր կյանքի վերածնության հնարավորություն ստեղծելու համար: Բյուզանդիան բավականաչափ ուժեղ չգտնվեց, որպեսզի հանդիսանար այս «բախտի կամքի» իրագործողը: Պահանջվում էր էլ ավելի արմատապես գործող ուժ»²: Այդ ուժը իբրև թե հանդիսացան սելջուկները:

Դրան հակառակ՝ ճշմարտությունն այն է, որ սելջուկները, որոնք նոր էին թևակոխում ֆեոդալիզմի վարդացման փուլը և իրենց հասարակական զարգացման աստիճանով դարերով հոտ էին մնում Միջին Ասիայի, Իրանի և Անդրկովկասի ժողովուրդներից, ծանր հարված հասցրեցին և խոշոր չափով դանդաղեցրին այդ երկրների տնտեսական ու կուլտուրական զարգացումը: 10—11-րդ դարերում Հայաստանի հասարակական քաղաքական կյանքի բնորոշ երևույթներից էին մի կողմից՝ ճնշված դասակարգերի երկարատև ու սուր պայքարն՝ ընդդեմ իշխող դասակարգի, մյուս կողմից՝ թագավորական

կենտրոնական իշխանության և հզորացած ֆեոդալական խոշոր տների կենտրոնախույս ուժերի միջև տեղի ունեցող պայքարը: Այս պայքարում պետական իշխանությունը թույլ գտնվեց, հակամարտ կենտրոնախույս ուժերը նույնպես բավականաչափ զորեղ չէին և նրանցից շատերը բյուզանդական նվաճողների գործիքը դարձան: Երկիրն ընկավ Բյուզանդական կայսրության տիրապետության տակ, սակայն նրա տնտեսական ու կուլտուրական զարգացումը դեռևս շարունակվեց նախկինի պես: Հողագործությունը, անասնապահությունը, արհեստագործությունը, քաղաքներն ու քաղաքային կյանքը շարունակում էին զարգանալ նորմալ ընթացքով: Տնտեսական և հասարակական այս առաջադիմությունը ի վերջո, պետք է հանդեր երկրի նոր միավորման և նրա անկախության համար տնտեսական ու քաղաքական հիմքերի ստեղծմանը: Սակայն սելջուկյան արշավանքներն ու տիրապետությունը մոտ հարյուր տարով դանդաղեցրին զարգացումն այս տեղղությունը. միայն 12-րդ դարի երկրորդ կեսից երկրի տնտեսական զարգացումը վերսկսվեց և խոշոր առաջադիմություն ունեցավ 13-րդ դարի առաջին երրորդում, սակայն շուտով անբուժելի հարվածներ ստացավ ու միանգամայն խափանվեց մոնղոլների ներխուժման ու նրանց տիրապետության հետևանքով: Ժողովրդական զանգվածների պայքարը ֆեոդալների դեմ առաջ էր մղում հասարակական կյանքը, իսկ կենտրոնական իշխանության դորեղացումը և պայքարը կենտրոնախույս ֆեոդալների դեմ նույնպես դրական նշանակություն էր ունենում երկրի զարգացման համար: Կենտրոնական իշխանությունն ալղ պայքարում անհրաժեշտաբար հենվելու էր առավելապես մանր ազնվականության և քաղաքային բնակչության վրա, որոնք անշուշտ, որոշ օգուտ կբաղեին նրա հաղթանակից, մասնավոր դրանով նկատելիորեն կուսանձահարվեին խոշոր ֆեոդալների կամայականություններն ու սպորինությունն-

1 Н. Я. Марр, Ани, Ереван, 1939, стр. 53.

2 Նույն տեղում, стр. 48.

րը: Բայցի այդ, ֆեոդալական մասնատվածության վերացմամբ առավել նպաստավոր պայմաններ կստեղծվեին արհեստագործության, առևտրի, քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացման համար: Ասկաջն ինչպես կարելի է նման դեր վերագրել սելջուկյան պետությանը, որը ետ մղելով երկրի զարգացումը, բերեց այն բանին, որ շուտով միասնական պետությունը քայքայվեց՝ բաժանվելով մանր ու մեծ ամիրայությունների, ավելի խորացավ ֆեոդալական մասնատվածությունը, հետաձգվեց և ուշացավ զարգացումը երկրի նոր միավորման համար տեղական հիմքերի առաջացման ուղղությամբ:

Ն. Մառի սխալները, կապված սելջուկների տիրապետության բնույթի հետ, գրանով շեն վերջանում: Խոսելով 10—11-րդ դարերում աշխատավոր բնակչության ծանր վիճակի ու կեղեքվածության և դատակարարային պայքարի սրման մասին, Ն. Մառը հանգել է այն սխալ եզրակացության, որ «այս «Հայկական տան» աշխատավոր արդիները, այդ թվում և գյուղացիական բնակչությունը, իսկապես իրական ոչինչ չունեին հօգուտ այն բանի, թե ինչու պետք է ելնեին օտարի դեռևս անձանոթ տիրապետության դեմ»¹: Այնուհետև խոսելով այն մասին, թե Հայաստանի աշխատավոր բնակչությունը ոչ միայն գրկված էր իր իսկ արտադրած բարիքներից, այլև այդ բարիքները վաճելիս, աղնվականներն ու հոգևորականները, նույնիսկ չէին էլ հիշում դրանց արտադրողներին, Մառը գրում է. «Հարց է առաջանում, կարո՞ղ էին արդյոք... այն ժամանակվա Հայաստանի աշխատավոր հայ գյուղացիները, այսինքն ամբողջ արտադրող աշխատավոր բնակչությունը չհամակրել իրենց ճնշող սոցիալական կարգի ամեն մի ցրնցմանը»²:

Ավելի խորացնելով այս սխալը, Մառը հայ ժողովրդի մասին գրում է, թե նա «սկսել էր իր ազատությունը տեսնել օտար տիրապետության հաջողությունների և աշխատավոր բնակչության համար այն ժամանակ ավելի արդար նոր կարգերի հաստատման մեջ»¹: Գուրս է գալիս, իբրև թե հայ աշխատավոր ժողովուրդը 11-րդ դարում օտար, հետամնաց ու բարբարոս տիրողներից ակնկալություններ է ունեցել, նույնիսկ իր ազատությունը տեսնել է օտարի տիրապետության մեջ: Ավելին, գուրս է գալիս, որ սելջուկ թուրքերի հաստատած կարգը, որն ավելի հետամնաց էր և որը հայ ժողովրդի վրին դրված դատակարարային կեղեքման լծին ավելացնում էր օտարի լուծը, իբրև թե ժողովրդի կողմից կարող էր ընկալվել որպես ավելի արդար կարգ, քան տեղական ֆեոդալների հաստատած կարգը:

Այսպիսով, Ն. Մառը, որը բազմիցս ասիթ է ունեցել արտահայտելու իր հարգանքը հայ աշխատավոր ժողովրդի և նրա սակզած կուլտուրայի նկատմամբ, տարվելով իր պարզունակ սոցիոլոգիական սխեմաներով, սխալ և շրջված գիրքով է ցույց ավել հայ ժողովրդի ազատագրական ձրգտումները և պայքարը օտաբների տիրապետության դեմ:

Ն. Մառը սխալներ է գործել նաև Հայաստանի 12-րդ դարի վերջերի և 13-րդ դարի հասարակական կարգերի բնութագրության հարցում. համարելով դրանք, բուրժուական կարգեր: Բայց դա չի խանգարել նրան թերագնահատելու քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացումը 10—11-րդ դարերում: Անիի մասին նա գրում է. «Բազրատունիների ժամանակ Անին փաստորեն քաղաք էլ չէր, բարձիս մեր հասկացած իմաստով, այլ առավելապես թագակիր ֆեոդալի բերդ-ղղջակ էր...»²:

Բայց 12—13-րդ դարերում Անին զար-

1 Н. Я. Марр. Ани, Ереван, 1939, стр. 53.

2 նույն տեղում, էջ 55.

1 Н. Я. Марр, Ани, стр. 59.

2 նույն տեղում, էջ 62.

զանում է այն աստիճան, որ Ն. Մառի ասելով՝ հարստության ազդեցությունը և իշխանությունը բողոքներում անցնում են «խոշոր կապիտալիստներին» ձևերը: Անեցի Տիգրան Հոնենցին, օրինակ, Մասը համարում էր «իր էպոխայի համար տիպիկ կապիտալիստ»¹: Նա գրում է. «Տեղի է ունենում իշխանական և տոհմիկ ազնվականական «հայրենիքներին» անցում խոշորագույն կապիտալիստների ձևերը...»²: Այդ սխալ գրվածքի հիման վրա նա եզրակացնում է. «Ժսիապես, ամեն ինչ մեզ հակում է դեպի այն բանը, որպեսզի հաստատվի, թե Անիի հենց այն հնոցն էր, որի մեջ հայկական ֆեոդալիզմը դեռևս հայրենիքում վերափոխվեց հայկական շուրճուական աշխարհի»³:

Միանգամայն բնական է, որ նման սխալ գնահատականներ տալով հասարակական երևույթներին և կանգնելով «առևտրական կապիտալիզմի» տեսության վրա (չմոռանանք ասել, «ք նրա «ԱՌՄ» աշխատությունը լույս է տեսել Պոկրովսկու զպրոցի ուժեղ ազդեցության շրջանում), Ն. Մառը պետք է շարժանցումներով դերագնահատեր առևտրական կապիտալի և քաղաքային գոստի դերը:

12—13-րդ դարերի Հայաստանում բազմաթիվ և քաղաքային կյանքի՝ արհեստների, առևտրի, վաճառական, քաղաքային ինքնավարության զարգացում իրոք տեղի է ունեցել, այն էլ նշանակալից չափերով: Ն. Մառը առաջինը նկատեց այդ երևույթները, սրեց ուշադրությունը դրանց վրա, սակայն հարցը վերաբերում է այդ զարգացմանը ճիշտ գնահատական տալուն, իսկ ինչպես ասացինք Ն. Մառի գնահատականը իր հիմքում ունի «առևտրական կապիտալիզմի» տեսությունը, ուստի և սխալ է:

Ն. Մառի կարծիքով «հայկական բուրժուական աշխարհում» 12—13-րդ դարերում, նույնիսկ 11-րդ դարի վերջերից նոր հիմքի

վրա առաջանում և զարգանում է նոր կուլտուրա, մասնավորապես արվեստի նոր ոճ, որը նա անվանում է «Անիի ոճ», և որի վերաբերյալ գրում է. «Ժսի Անիի եկեղեցական հարստապետության յուրահատուկ ոճը, որը նոր էպոխա ստեղծեց հայկական արվեստի պատմության մեջ, ֆեոդալական Հայաստանին չի պատկանում»¹: Պարզ է, որ իրոք ֆեոդալական Հայաստանին պատկանող ֆեոդալական կուլտուրային արվեստման գնահատականը անընդունելի է:

Նյութական կուլտուրայի հուշարձանները, մասնավորապես Անիի պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերը քննելիս Ն. Մառն իր «ԱՌՄ» աշխատության մեջ (ինչպես և այլ աշխատություններում) ձգտել է կուլտուրայի և արվեստի երևույթները բացատրել սոցիալական պատճառներով: Պա, իհարկե, նշանակալից դրական երևույթ էր ներկա դարի սկզբներին տիրապետող բուրժուական դիտական գրականության մեջ, մասնավորապես, Ն. Մառը որանով հակադրվում էր նաև հայկական կուլտուրայի երևույթներին տրվող կղերական և ազգայնական այն ժամանակ տիրապետող տեսակետներին: Սակայն պետք է ասել, որ դա արվում էր ոչ առանց սխալների: Ն. Մառը փորձում էր վեր հանել կուլտուրայի շատ երևույթներին, մասնավորապես նյութական կուլտուրայի հուշարձանների, բուրժուականության և ձևի սոցիալ-գոստակարգային արմատները, սակայն նա սխալվում էր, երբ ելնելով դրանից Անիի «Նոր ոճի» առաջացումը վերագրում էր նոր՝ բուրժուական գոստակարգին: Միջնադարյան Հայաստանի, Վրաստանի և հարևան այլ երկրների կուլտուրաների մեջ նկատվող ազերսները, ձևական նմանություններն ու ընդհանուր դժերը Ն. Մառը բացատրում էր սոցիալական մեկնույն պայմաններում նրանց ծնունդ ասունելու հանգամանքով և միևնույն գոստակարգային պատկանելությամբ: Բայց այստեղ ևս նա չի խուսափել սրտը չափազանցությունից՝

¹ Н. Я. Марр, АИИ, стр. 65.

² Նույն տեղում, էջ 65:

³ Նույն տեղում:

¹ Н. Я. Марр, АИИ, стр. 66.

Նախ նա այդ մտաւայտմը տարածում էր նաև շեղվի երևույթների վրա, որը սխալ է, մշտա կողմից անհրաժեշտ ուղադրուկուն: Հէր նվիրում տարբեր ժողովուրդների կուլտուրաների առանձնահատկութուններին:

Ն. Մառը հակադրվեց Վնդրկովկասի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների կուլտուրաների մեջ կրոնական և ազգային պատենները կանգնեցնելու հին և տրադիցիոն տեսակետներին, պնդելով, թե ջրբաժան դիժը, անջատվածութունն ու հակադրութունները պետք է տեսնել ոչ թե կրոնական և ազգային, այլ սոցիալական բաժանվածութան, դասակարգային պատկանելիութան և այս կարգի հատկանիշների մեջ¹:

Ն. Մառի այս եզրակացութունները կարևոր էին և ուշագրավ, սակայն հակադրվելով հին տեսակետներին, նա ծայրահեղութունների հասցրեց միևնույն ժողովրդի դասակարգայնորեն իրարից տարբեր երկու կուլտուրաների իր ըմբռնումը, նկատելիորեն անտեսելով տվյալ ժողովրդի ստեղծած կուլտուրային հատուկ բնորոշ գծերը—նրա ազգային ձևը: Դրանով, մասամբ ջնջվում էին տարբեր ժողովուրդների կուլտուրաների էթնիկ և ազգային սահմանները:

Ն. Մառի «АНИ» աշխատութանը երկրորդ բաժնի վերաբերյալ պետք է ասել, որ նա ունի դերագանցակա հաշվետվութան բընույթ, որտեղ նկարագրված են Անիի պեղումները 12 տարվա աշխատանքների ընթացքում, բնութագրված են պեղումների ժամանակ բացված հուշարձանները, իրեն ու առարկաները: Այս բաժինը շատ կարևոր ազդյուր է մանավանդ քաղաքների և արհեստների պատմութունը ուսումնասիրելիս, և թերութուններն այս բաժնում ավելի բիչ են: Դժբախտաբար բոլոր հուշարձանների պեղումները չէ, որ նկարագրված են միևնույն մանրամասնությամբ: Մի քանի

պեղումներում տեղեկութուններն ընդհանուր են, ընթերցողը լրիվ պատկերացում չի ստանում կատարված աշխատանքների բոլոր արդյունքների մասին: Նրբեմն դժվար է պարզել պեղումներով հայտնաբերված առարկաների շեփտագրութունը: Այդ բանը շատ սվելի դժվարանում է մանավանդ այն պատճառով, որ պեղումների օրագրերը չեն պահպանվել:

Ն. Մառի պատմահնագիտական աշխատութունների տեսական-մեթոդոլոգիական սխալները հսկայահարեղի են և դրանք պետք է մերժել, սակայն այդ աշխատութունները ամփոփում են Անիի երկարամյա պեղումների արդյունքները, որոնք անգնահատելի նշանակութուն ունեն միջնադարյան Հայաստանի քաղաքների պատմութան, նրանց նյութական արտադրութան, կյանքի և կենցաղի ուսումնասիրութան համար:

Ակադ. Հ. Օրբելին Անիի սերիայով լույս տեսած աշխատութուններից բացի Հայաստանի 10—13 դարերի նյութական կուլտուրայի, արվեստի, սոցիալական կյանքի և կենցաղի առանձին հարցեր քննարկել է մի շարք հոդվածներում, որոնք լույս են տեսել Շոթա Ռուսթավելու կախային նվիրված և Պետական էրմիտաժի հրատարակությամբ լույս տեսած ժողովածուի և այլ հրատարակութունների մեջ: Առանձին կոնկրետ հարցերի քննութունը հեղինակը կատարել է իրեն հատուկ թափուկ հմտությամբ և նուրբ դիտողականությամբ¹:

¹ И. А. Орбели, Герои поэмы Руставели и их преданные. Самосознание низов в баснях XII—XIII вв. См. Памятники эпохи Руставели. Ленинград, 1938, стр. 139—158.

Баня и скоморох XII в. В том же сборнике, стр. 159—170.

Его же, Дорожный ковшик XII—XIII вв. В том же сборнике, стр. 275—282.

Грузинская лампада с арабскими надписями. В том же сборнике, стр. 283—292.

Бронзовая курильница XII в. в виде барса. В том же сборнике, стр. 293—300.

¹ Տե՛ս Ի. Ա. Մառ, Անի, Երևան, 1939, էր. 76.

Հայաստանի քաղաքներին և համաշխարհային առևտրի մեջ նրանց խաղացած դերին: շատ արժեքավոր աշխատություններ է նվիրել հանգուցյալ ակադեմիկոս Հ. Մանանդյանը: Դեռևս 1930 թ. լույս տեսավ նրա «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.)» հայտնի աշխատությունը¹: Օգտագործելով հունարենումնական, հայկական, արարական, բյուզանդական մատենագրական աղբյուրները և հին ժամանակների համաշխարհային առևտրի մասին տարբեր լեզուներով գոյություն ունեցող գիտական գրականությունը, Հ. Մանանդյանը այդ աշխատության մեջ ցույց է տվել, թե տարբեր էսպիսաներում Հայաստանում քաղաքային ինչ կենտրոններ են եղել, երկիրը ինչպիսի առևտրական կապեր է ունեցել հարևան և հեռավոր երկրների հետ: Համաշխարհային տարանցիկ առևտրի ֆոնի վրա քննարկված է Հայաստանի և նրա քաղաքային կենտրոնների շատ կարևոր դերը Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրի գործում, ցույց է տրված, թե Հայաստանը սեփական ի՞նչ արտադրանքով է մասնակցել այդ առևտրին, հետևաբար թե արտադրության ո՞ր ճյուղերը և ի՞նչ արհեստներ էին զարգացած երկրում: Աշխատության մեջ լուսարանված է Հայաստանի և նրա քաղաքների տնտեսական վերելքը, զարգացման տատանումները, վերջապես անկումը՝ 14—15-րդ դարերում:

Албанские рельефы и бронзовые котлы XII—XIII вв. В том же сборнике, стр. 301—326.

И. А. Орбели, Колокол с ангийскими орнаментальными мотивами XII—XIII вв. ЗВО, том XX, СПб, 1900, стр.

Նույնի, Проблема сельджукского искусства. См. III Международный конгресс по иранскому искусству и археологии. Доклады. Москва-Ленинград, 1939, стр. 150—155.

¹ Проф. Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры—XV в. н. эры), Ереван, 1930.

Ակադ. Հ. Մանանդյանի այս շատ արժեքավոր աշխատության մեջ, սակայն, տեղ են գտել առանձին թերություններ ու սխալներ: Ամենից առաջ պետք է նշել այն, որ երկրի տնտեսական զարգացումը, քաղաքների առաջացումն ու անկումը, արհեստների զարգացումը բացատրված են ոչ թե երկրի արտադրողական ուժերի աճով ու նրանց մեջ տեղի ունեցած փոփոխություններով, այլ միջազգային տարանցիկ առևտրով: Հեղինակի ելակետը հենց տարանցիկ առևտուրն է եղել:

Աշխատության մեջ քաղաքների զարգացումը չի կապված արհեստագործության զարգացման հետ և արհեստների մասին խոսվում է միայն ի միջի այլոց՝ առևտրի կապակցությամբ:

Պետք է նշել նաև այն, որ աշխատության մեջ բավարար չափով չեն օգտագործված հնագիտական տվյալները, գոնե Անիի պեղումների վաղուց հայտնի արդյունքները, մանավանդ տնտեսական կյանքի և արհեստագործության վերաբերյալ:

Այս աշխատությունը հեղինակն իր մահից առաջ նոր հրատարակության է պատրաստել նկատելիորեն ընդարձակելով նրա ծավալը (15 մամուլից հասցված է մոտ 22 մամուլի): Աշխատությունը լույս է տեսել 1954 թ.:

Նոր հրատարակության մեջ վերացված են առաջին հրատարակության մի շարք թերությունները, առանձին հարցեր ավելի հանգամանորեն են լուսարանված, ավելացված է վեց ենթագլուխ, որոնցից երկուսը վերաբերում է մեր ուսումնասիրության ժամանակաշրջանին: Մեծավաստակ գիտնականի աշխատությունը նոր հրատարակությամբ ավելի քան կարևոր և արժեքավոր մի գործ է:

Ակադ. Հ. Մանանդյանը հատուկ աշխատություն է նվիրել հին Հայաստանի առևտրական ճանապարհներին¹, որի մեջ մեկ առ

¹ Պրոֆ. Հակոբ Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեկտինգերյան րարտեզի, Երևան, 1936:

մեկ քննարկում է ոչ միայն ամենադժվար սուղիները, այլև համեմատաբար երկրորդական նշանակություն ունեցողները: Այդ աշխատությունից երևում է, որ, չնայած մի շարք առևտրական ճանապարհների գոյությունը, երկրի տարրեր նահանգներն ու գավառները իրար հետ տնտեսապես համարյա կապված չէին և ընդհակառակը, կազմում էին ինքնամիտի միավորներ: Տարանցիկ առևտուրը երկրի տարրեր գավառների մեջ տնտեսական կապ ստեղծել չէր կարող:

2. Մանանդյանը ունի և մի առանձին աշխատություն՝ նվիրված Հայաստանի քաղաքներին 10—11-րդ դարերում¹: Մոտ 3 մամուլ ծավալ ունեցող այս գրքույկում վերամշակված և ընդարձակված են քաղաքների և առևտրի մասին վերևում քննարկված աշխատության առաջին հրատարակության համապատասխան հատվածները. արված են մի շարք եզրակացություններ Հայաստանի տնտեսական և քաղաքական զարգացման վերաբերյալ 10—11-րդ դարերում: Աշխատության մեջ հնագիտական փաստերը ավելի են օգտագործված, բայց ընդհանրապես նա ունի նույն առավելություններն ու թերությունները, փնչ որ նախորդ աշխատությունը: Քաղաքների ներքին կյանքին և արհեստներին այստեղ էլ պատշաճ ուշադրություն չի նվիրված:

Հայաստանի զարգացման պատմական ընթացքի, քաղաքների, առևտրի և հասարակական զարգացման աստիճանի վերաբերյալ իր տեսական ընդհանրացումների կոնսպեկտիվ շարադրությունը Հ. Մանանդյանը ավել է իր «Краткий обзор истории древней Армении» աշխատության մեջ²: նախորդ, մանամանդ այս աշխատության

մեջ, «Եզրինակը արտահայտում է այն տեսակետը, թե միջնադարյան Հայաստանն իր զարգացման աստիճանով շատ առաջ էր երևմտյան Եվրոպայի երկրներից, բայց այս ձիշտ եզրակացություններից շատ ավելի հետո գնալով, նա գտնում է, թե Հայաստանում 10—11-րդ դարերում ֆեոդալիզմը հասել էր իր զարգացման այն աստիճանին, երբ սկսվել էր նրա, իրրև հասարակարգի քայքայումը, որը տանելու էր դեպի նոր բուրժուական հասարակության առաջացումը:

Վաստակավոր գիտնականի այս տեսակետի հետ չի կարելի համաձայնվել: 10—11-րդ դարերը ֆեոդալիզմի ծաղկման դարեր են եղել և ծաղկումը որոշ կասեցումով շարունակվեց նաև 12—13-րդ դարերում, իսկ ֆեոդալիզմի քայքայումը Հայաստանում, անգամ երկրի նորմալ զարգացման դեպքում, կարող էր սկսվել միայն դարեր հետո:

Քաղաքների 12—15-րդ դարերի վիճակի վերաբերյալ նախորդ աշխատություններում արտահայտած իր տեսակետները Հ. Մանանդյանը բերում է նաև «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության»¹ աշխատության երրորդ հատորում, որը նվիրված է առավելապես այդ դարերի քաղաքական պատմությանը և որի մեջ տնտեսական ու սոցիալական հարցերին մեծ տեղ չի հատկացված:

Քաղաքներին և արհեստներին նվիրված մի շարք նոր աշխատություններ երևան եկան կապված Դվին քաղաքի և նրա պեղումների հետ: Դա բնական էր: Այս նշանավոր քաղաքի բազմամյա պեղումների շնորհիվ առատորեն հայտնաբերվեցին հնագիտական բազմապիսի նյութեր և ինչպես գրանց, նույնպես և պեղումների ժամանակ բացված ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ լույս ընծայվեցին

1 Ակադ. Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1944:

2 Акад. Я. А. Манандян. Краткий обзор истории древней Армении, Издат. Академии наук СССР, Москва-Ленинград, 1943.

1 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952:

մի շարք ուսումնասիրություններ և աշխատություններ¹:

Ա. Շահնազարյանը, առանձին ուսումնասիրության մեջ, շարադրել է Դվին քաղաքի պատմությունն ըստ գրավոր աղբյուրների սկսած 5-րդ դարից, երբ Դվինը մայրաքաղաք դարձավ, մինչև 13-րդ դարը: Դվինը այդ ժամանակամիջոցում անցել է մի քանի էտապներ, մինչև որ 10-րդ դարում դարձավ ֆեոդալական խոշոր քաղաք, արհեստագործության և առևտրի աչքի բնկնող կենտրոն: Աշխատության մեջ Դվինի պատմությունը շարադրված է ըստ առանձին էպոխաների, բայց դա արված է պեղումներից առաջ, միայն դրավոր աղբյուրների հիման վրա, ուստի շոշափված են առավելագույն

բողոքական պատմության հարցերը, քաղաքի աճը, կատարված շինարարությունը, նաև Դվինի առևտրական դերն ու կապերը, և այդ քաղաքում արտադրված իրերը, առարկաների տեղը առևտրի մեջ ըստ գրավոր աղբյուրների:

Դվինի 1937—1939 թթ. պեղումներով հայտնաբերված և, մասնավորապես, 5—7-րդ դարերին վերաբերող ճարտարապետական հուշարձանները ուսումնասիրության առարկա դարձրեց ճարտարապետ Վ. Հարությունյանը, հրատարակելով դրանք առանձին գրքով²:

Շատ արժեքավոր են Բ. Ա. Շելկովնիկովի աշխատությունները³, որոնք նվիրված են

Վ. Հարությունյան, Դվինի V—VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Հայպետհրատ, Երևան, 1950:

Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952: Այս աշխատության մեջ ամփոփված են Դվինում 1937—1950 թթ. կատարված պեղումների արդյունքները ամբողջությամբ:

Դվինի պեղումներով հայտնաբերված նյութերը տեղ են գտել նաև մի քանի այլ աշխատություններում, օրինակ՝ կղմինդրների վրայի արձանագրությունները ուսումնասիրված են Կ. Ղաֆաղարյանի «Հայկական գրի սկզբնական տևակները» (Արմֆան, Երևան, 1939) աշխատության մեջ:

Դվինի ճարտարապետական հուշարձաններին տեղ է հատկացված Ն. Մ. Տոկարսկու «Архитектура древней Армении» (Երևան, 1946) աշխատության և այլ աշխատությունների մեջ:

1 Վ. Հարությունյան, Դվինի V—VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Հայպետհրատ, Երևան, 1950:

2 Բ. Ա. Շելկովնիկով, Художественная керамика двинских раскопок, «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, 1940, № 4—5, փ. 181—189:

Բ. Ա. Շելկովնիկով, Художественная керамика промышленность средневековой Армении, «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, 1942, № 6 փ. 3—32:

Բ. Ա. Շելկովնիկով, Керамика и стекло из раскопок города Двина. Հայաստանի Պետական պատմական թանգարանի Աշխատություններ, հատ. IV, 1952, փ. 5—111:

Բ. Ա. Շելկովնիկով, Поливная керамика из раскопок города Ани, Ереван, 1957:

¹ Դվինին և նրա պեղումներին նվիրված են հետևյալ աշխատությունները (թվարկում ենք հրատարակության ժամանակի հաջորդականությամբ):

Բ. Առաքելյան, Վ. Հարությունյան, նյութեր Դվին քաղաքի պեղումներից, «Սովետական Արվեստ» ամսագիր, Երևան, 1940, № 4, փ. 47—55:

Ա. Շահնազարյան, Двин. Историко-географический очерк. АрмФАН, Ереван, 1940:

Բ. Ա. Շելկովնիկով, Художественная керамика двинских раскопок, «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, Երևան, 1940, № 4—5, փ. 181—199:

Его же, Художественная керамическая промышленность средневековой Армении, «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, 1942, № 3—4, փ. 9—36:

Его же, Керамика и стекло из раскопок города Двина. Հայաստանի Պետական պատմական թանգարանի Աշխատություններ, հատ. IV, 1952, փ. 5—111:

Վ. Հարությունյան, Դվինի պեղումները, «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1946, № 6, փ. 41—43:

Վ. Արտյունյան, Архитектура патриаршего дворца в Двине. Труды Ереванского политехнического института имени К. Маркса, Ереван, 1947, փ. 147—168:

Հ. Ա. Չանփոսյան, Դվինի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթները: Պետական պատմական թանգարանի Աշխատություններ, հատ. III, Երևան, 1950, փ. 147—167:

Դվինի և այդ կապակցությունը ընդհանրապես միջնադարյան Հայաստանի կազմադրությունն, մասնավորապես գեղարվեստական խեցեղենի և ապակու մասնագիտական քննությունը: Հեղինակը ուսումնասիրության առարկա է դարձրել Դվինի (նաև Անիի գոտեգործ կարասները, ջնարակա՝ խեցեղենն ու հախճապակին և ապակեղենը՝ իրենց պատրաստման և զարդարման բազմազան տեխնիկայով:

Դվինի կավե ձվաձև անոթները, այսպես կոչված, «անդկամանները» քննարկված են Հո. Մ. Զանդուղյանի մի հոդվածում¹:

Դվինում ութ տարվա ընթացքում կատարված հնագիտական աշխատանքների արդյունքները հանրագումարի են բերված պեղումների գեկավար պրոֆ. Կ. Ղաֆազարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» ընդարձակ աշխատության մեջ²: Գրքի համառոտ ներածականում խոսվում է Դվին անվան ծագման մասին և տրվում է քաղաքի վերաբերյալ մատենագրական աղբյուրների ու մատենագրական տեղեկությունների բնութագիրը: Առաջին գլխում նկարագրված են Դվինի հնագիտական հուշարձանները՝ մինչև պեղումները, երկրորդ գլխում արված է յուրաքանչյուր տարվա պեղումների նկարագիրը և բնութագրված են աշխատանքների հիմնական արդյունքները: Երրորդ գլխում հեղինակը քննարկում է քաղաքի ճարտարապետական կառուցվածքները: Դրանք բաժանվում են երկու հիմնական խմբի՝ 4—7-րդ դարերի հուշարձաններ և 9—13-րդ դարերի հուշարձաններ: Ծարտարապետական հուշարձանները ոչ միայն ցույց են տալիս քաղաքի աճը, նրա տարրեր շինա-

րարական շրջանները, այլ և բացահայտում են շինարարության տեխնիկայի և շինարարական արվեստի ու արհեստների զարգացումն ու կրած փոփոխությունները:

Աշխատության շարքորդ գլուխը նվիրված է Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված առարկաներին և դրանց հիման վրա՝ Դվինում զարգացած արհեստների քննությանը: Հատուկ տեղ է հատկացված մետաղագործությանը, կավագործությանը, մասամբ ջուլհակությանը, փայտի և ոսկորի մշակման արհեստներին, պղնձագործությանը ու ոսկերչությանը: Առանձին խոսվում է Դվինում գտնված դրամների մասին: Այդ նյութերը ցույց են տալիս Դվինի թե՛ ներքին շուկայի, և թե՛ արտաքին ընդարձակ կապերի զարգացած լինելը: Գրքում բերված են պեղումների ժամանակ գտնված արձանագրությունները, արոնք առավելապես պալեոգրաֆիկ նշանակություն ունեն: Աշխատության վերջում գրավոր աղբյուրների և հնագիտական նյութերի հիման վրա առանձին քննարկված են Դվինի առևտրական կապերը հարևան քաղաքների և երկրների հետ:

Դվինի հնագիտական նյութերը համեմատված են Անդրկովկասի քաղաքների (հին Գանձակի, Դմախիսի)՝ և այլ երկրների համադաստատման նյութերի հետ: Դվինի բազմամյա պեղումների արդյունքներն ամփոփող այս աշխատությունը կարևոր ներդրում է Անդրկովկասի հնագիտության մեջ:

Միջնադարյան Հայաստանի արհեստներին նվիրված մի առանձին ուսումնասիրություն լույս է ընծայել պատմական դիտությունների թեկնածու Վ. Աբրահամյանը¹: Այս ուսումնասիրությունը, որն ունի 10 մամուլ ծավալ, գրված է Անիի և Դվինի պեղումներով հայտնաբերված նյութերի և գրավոր աղբյուրների հիման վրա: Նրա մեջ քննարկված են՝ մետաղագործությունը իր

¹ Հո. Ջանդուղյան, Դվինի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթները, Աշխատություններ Հայաստանի Պետական պատմական թանգարանի, հատ. III, Երևան, 1950, էջ 147—167:

² Կ. Ղաֆազարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հնագիտական արշավախմբի 1937—1950 թթ. աշխատանքների արդյունքները, Երևան, 1952:

¹ Վ. Աբրահամյան, Արհեստները և համարական կազմակերպությունները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1946:



երեք ինքնուրույն ճյուղերով (զարբնություն, զինագործություն, սովերչություն և արծաթագործություն), մանածագործությունը, կավագործությունը, քարակոփությունն ու որմնագործությունը և հյուսնությունը — բնդամենը յոթ արհեստ: Մյուս արհեստները հիշատակված են գրավոր աղբյուրների հիման վրա, մասնավորապես մեջ է բերված Անիում 1222 թ. արտերենից հայերեն թարգմանված երազահանի վկայությունը, որտեղ հիշատակված է 46 արհեստ և միջին դարերում արհեստ համարվող, բայց արհեստների հետ քիչ կապ ունեցող զուսան, երաժիշտ, փայտ կտրող, բամբակ ծախող, սլարտիզպան և այլն): Աշխատության վերջին մասը նվիրված է համքարական կազմակերպությունների գոյության հարցին:

Միջնադարյան Հայաստանի արհեստագործության ուսումնասիրությանը նվիրված այս աշխատությունն սենի լուրջ թերություններ: Հեղինակը բազմակողմանի և հանգամանորեն չի քննարկում ու վերլուծում մի շարք հարցեր, որոնք այդ պատճառով համողիչ լուծում չեն ստանում. շատ են խախտված ուսումնասիրվող ժամանակի շրջանակները ավելի հին և հետագա ժամանակների վերաբերող շեղումներով, որոնք նկատելիորեն վնասելով 9—13-րդ դարերին վերաբերող նյութի քննությանը՝ աշխատությանը տրված է առհասարակ հին Հայաստանի արհեստագործությանը նվիրված համառոտ և շատ ընդհանուր ակնարկի բնույթ: Արհեստագործության մի շարք կարևոր բնագավառներ ուսումնասիրության մեջ առանձին քննության առարկա չեն հանդիսացել: Համքարական կազմակերպությունների դժվարագույն հարցը նույնպես պահանջում էր հեղինակից նոր փաստեր օգտագործել և եղածներն էլ ավելի խորը վերլուծել, քան այդ կատարված է: Այնուամենայնիվ, իբրև միջնադարյան Հայաստանի արհեստագործությանը նվիրված առաջին ուսումնասիրություն՝ այն արժանի է ուշադրության:

Հիշյալ գրքի հեղինակն այժմ ձեռնարկել

և Հայաստանի առանձին արհեստների ուսումնասիրությանը, որը շատ կարևոր ենք համարում: Նա լույս է ընծայել սովերչության տեխնիկային վերաբերող մի հոդված՝ և միջնադարյան զինագործությանը նվիրված մի ուսումնասիրություն, որտեղ ի մի են բերված զենքերի և նրանց տեսակների վերաբերյալ մատենագրական և հնագիտական տվյալները²:

1956 թ. լույս տեսավ Վ. Աբրահամյանի «Արհեստները Հայաստանում 4—18-րդ դարերում» աշխատությունը, որի մեծ մասը նվիրված է մետաղագործությանը և անկվածագործությանը, որը և կազմում է աշխատության առավել արժեքավոր բաժինը: Այստեղ մեջ է բերված զգալի քանակությամբ նոր նյութ: Մնացած արհեստներին նվիրված բաժինը վերին աստիճանի սեղմ է և հանդիսանում է արդեն հրատարակվածի կրկնությունը:

Աշխատության հիմնական թերությունը պետք է համարել այն, որ հեղինակը արհեստների զարգացումը 4—18-րդ դարերի երկարատև ժամանակամիջոցում դիտում է ստատիկ վիճակում: Այստեղ ևս, ինչպես նախորդ աշխատություններում, հեղինակը բավականաճանաչում է գերազանցապես մատենագրական և հնագիտական փաստեր մեջ լերելով, առանց պատշաճ շափով ու խորությամբ վերլուծելու և արժեքավորելու դրանք:

Արհեստավորական կազմակերպություններին՝ համքարություններին նվիրված են Հախվերդովի³ և Եղիազարովի⁴ աշխատու-

¹ Վ. Աբրահամյան, Ոսկերչության տեխնոլոգիան հին Հայաստանում, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 12, 1952, էջ 69—90:

² Վ. Աբրահամյան, Միջնադարյան Հայաստանի զենքերի տեսակները. տե՛ս Աշխատություններ Հայաստանի Պետական պատմական թանգարանի, հատ. II, 1949, էջ 37—38:

³ А х в е р д о в, Тифлиссские амкары, Тифлис, 1883.

⁴ С. А. Е г н а з а р о в, Городские цехи. Организация и внутреннее управление заваказских амкаров, Казань, 1891.

Յյունները, սակայն նրանք քննարկում են համաքարտեթյունների վիճակը և նրանց հետ կապված հարցերը 19-րդ դարում: Հիշյալ հեղինակներից Եղիազարսովը համաքարտեթյունների խնդիրը քննարկում է լայն ասպեկտով և, անդրադառնալով նրանց ծագման ու սովորույթների հարցերին, ուշադրալ դիտողութայուններ է անում նաև միջին դարերի վերաբերյալ:

Բացի ամմիջապես քաղաքներին և արհեստներին վերաբերող աշխատութայուններից, հրապարակի վրա կան բազմաթիվ աչք աշխատութայուններ, նվիրված հայ ժողովրդի պատմութայան, գրականութայան, հասարակական մտքի և արվեստների պատմութայան հարցերին, որոնց մեջ այս կամ այն չափով շոշափվում են երկրի սոցիալական կյանքի, քաղաքների և արհեստների հետ կապված հարցեր¹:

19—13-րդ դարերի քաղաքական պատմութայունը շարադրված է Չամչյանի «Հայոց Պատմութայունը» աշխատութայան Բ և Գ հատորներում, Մ. Օրմանյանի «Ազգապատում» աշխատութայան Ա հատորում (Կոստանդնուպոլիս, 1912), Լևոյի «Հայոց Պատմութայուն» աշխատութայան Բ հատորում (Երևան, 1947), Հ. Մանանդյանի «Հայաստանի Պատմութայունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», ձեռագրի իրավունքով, Երևան, 1922 թ. աշխատութայան մեջ, նույնի «Քննական տեսութայուն հայ ժողովրդի պատմութայան» 3-րդ հատորում (Երևան, 1952 թ.), «Հայ ժողովրդի Պատմութայուն» (Երևան, 1951 և վերահրատարակութայունը 1956 թ.) ձեռնարկի Ս. Տ. Երեմյանի գրած բաժնում, նույն հեղինակի «Армения в IX—первой четверти XIII вв.» (См. Очерки истории СССР. Период феодализма IX—XV вв., ч. I, стр. 589—641). В. Брюсов, «Летопись исторических судеб армянского народа» Москва, 1918.

J. Morgan, Histoire du peuple arménien, Paris, 1919. R. Grousset, Histoire du peuple arménien, Paris, 1917.

Հայաստանի պատմութայունը վերաբերող այս քննադատող աշխատութայունների մեջ սոցիալական պատմութայան հարցերը փոքր տեղ են գրավում, դրական խմատով բուցառութայուն են կազմում Ս. Երեմյանի աշխատութայունները:

Բացի թվարկված աշխատութայուններից կան առանձին քննադատողների և խնդիրների նվիրված բազմա-

Հայ ժողովրդի 9—13-րդ դարերի պատմութայան առանցքային հարցը կազմում է Հայաստանի տնտեսական դարգացման և սոցիալական հարաբերութայունների ճշգրիտ լուսարանութայունը, առանց որի զրկվար է հաստատուն հիմքերի վրա գնել նաև այդ ժամանակաշրջանի հասարակական մտքի, կուլտուրայի, գրականութայան և արվեստի ուսումնասիրութայունը:

Վերջին տարիների ընթացքում հատուկ ուսումնասիրութայան առարկա դարձան միջնադարյան Հայաստանի գյուղացիութայան պատմութայունը, հողային հարաբերութայունները և սոցիալական պայքարի հարցերը: Զգալի աշխատանք է կատարված ժամանակաշրջանի տնտեսական կյանքի, սոցիալական հարաբերութայունների և ազա-

թիվ աշխատութայուններ ևս, որոնց մեջ մեզ հետաքրքրող հարցերը մասամբ շոշափվում են:

Հատկապես պետք է նշել պրոֆեսոր և Սամուելյանի (Հին Հայ իրավունքի պատմութայունը» աշխատութայան առաջին հատորը (Երևան, 1939), որի մեջ հեղինակը քննարկում է միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և իրավական հարաբերութայունները: Պրոֆեսոր Գ. Միքայելյանի «История Киликийского армянского государства» (Երևան, 1952) արժեքավոր աշխատութայունը:

Արաբական տիրապետութայան և Բագրատունյաց թագավորութայան առաջին ժամանակաշրջանին են վերաբերվում մի երկու աշխատութայուն՝ Մ. Ղաղարյանի «Armenien unter der arabischen Herrschaft Marburg, 1903». Ա. Դադրաշյանի «Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1893», Հ. Թոփչյանի «Die inneren Zustände Armeniens unter Aschot I, Berlin, 1904», Դվինի, Գանձակի և Անիի Շաղղադյանների պատմութայանն է նվիրված Վ. Մինորսկու «Studies in Caucasian history» լոնդոնում 1953 թ. լույս տեսած աշխատութայունը: Մի շարք հարցեր քննարկված են գերմանացի հայագետ Մարկվարտի աշխատութայուններում, (Südarmenien und Tigrisquellen, Wien, 1930. Die Entsethung» und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919 և այլն), իսկ հայկական տեղանուններին առանձին ուսումնասիրութայուն է նվիրել Հյուբշմանը իր «Հայոց տեղոյ անունները» (Թարգմ. Հ. Պրկեղիկյան, Վրեննա, 1907): Արժեքավոր է ֆրանսիացի գիտնական Լորանի աշխատութայունը J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam.

տաղրական պայքարի դադարախառնության ուսումնասիրության ուղղությունը¹։

Ինչպես տեսնում ենք սովետական հայագիտության տարրեր բնագավառներում քննարկված հարցերի թիվը բավականաչափ

10—13-րդ դարերի սոցիալական հարաբերությունների բնութագրերը ավել Լ. Մ. Սերեյանը «Հայոց հին գրականության պատմություն», գիրք առաջին, 1944 և գիրք 2-րդ, 1946 թ. աշխատության մեջ, մասամբ Մ. Մկրչյանը «Գրիգոր Նարեկացի» մենագրության մեջ, Պրոֆեսոր Վ. Զալոյանը «Իշխյոյ դարերի բնութագրությունը անդրադարձել է այդ ժամանակաշրջանի հայ հասարակական մտքի և փիլիսոփայության պատմության կազմակերպչամբ. (տե՛ս նրա հոդվածները «Основные вехи развития философской мысли в Армении (V—XIII вв.)», Отдельный оттиск из трудов Сектора философии АН АрмССР, Ереван, 1950. «Վերածնության պոռթկմբ Հայաստանում» (Մովևտական գրականություն և արվեստ N 3, 1951), «Հայկական վերածնության մասին» (Հայկական ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, N 12, 1955, և N 4, 1956)։

Հայ ժողովրդի 9—13-րդ դարերի պատմության կուլտուրայի հասարակական մտքի, գրականության և արվեստի պատմության հարցերին նվիրված են բազմաթիվ այլ ուսումնասիրություններ և հոդվածներ, որոնք մեկ առ մեկ հիշատակել հնարավոր չէ։ Նրանց մասին ըստ անհրաժեշտության կանդրադառնանք այս կամ այն հարցի կոնկրետ քննության ժամանակ։

Զգալի աշխատանք է տարված նաև ձեռագիր աղբյուրների ժողովածուներ կազմելու և հրատարակելու ուղղությամբ։ Առանձնապես պետք է հիշատակել Գարեգին Ա. կաթողիկոս (Գ. Հովսեփյան) կազմած «Յիշատակարանք ձեռագրաց, հատոր առաջին» (Անթիլիսոս, 1951), Լ. Խաչիկյանի կազմած «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները» (Երևան, 1950), «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները» (Երևան, 1955) Վ. Հակոբյանի կազմած «Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ.» հատ. Ա, Երևան, 1951) և «Մանր ժամանակագրություններ 13—18 դդ.» հատ. Բ (Երևան, 1955) ժողովածուները, որոնք պարունակում են արժեքավոր նյութեր այլ և այլ հարցերի, նաև մեկ հետաքրքրող հարցերի վերաբերյալ։

1 Նկատի ունենք պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ Ս. Ս. Հակոբյանի «Հայ գյուղացիության պատմությունը (վաղ ֆեոդալիզմի դա

մեծ է, Երևան ևն կկել շատ արժեքավոր աշխատություններ, կատարվել են նշանակալից հնագիտական աշխատանքներ, որոնք ավել ևն խոշոր արդյունքներ։

Այս ամենը նպաստավոր պայմաններ է ստեղծել միջնադարյան Հայաստանի քաղաքների պատմությունը ավելի հանգամանորեն ուսումնասիրելու և մինչև այժմ պակաս լուսաբանված կամ գիտնականների ուշադրությունից վրիպած հարցերի քննարկման և լուծման համար։

Նվազ ուսումնասիրված հարցերի թվին ևն պատկանում, օրինակ, Հայաստանում ֆեոդալական քաղաքի առաջացման և զարգացման պատճառներն ու պայմանները, արհեստների զարգացումը, ընթացքը, արհեստագործության մեջ աշխատանքի բաժանման խորացումը, տեխնիկական փոփոխություններն ու նորամուծությունները։ Դեռևս չի լուծված համաքրությունների դոկտրինայի հարցը Հայաստանի միջնադարյան քաղաքներում և բավարար չափով չեն լուսաբանված համաքրությունների ներքին կարգերն ու հարաբերությունները, չի կատարված քաղաքների մանրակրկիտ վերլուծությունը՝ նրանց դասակարգումն ըստ զարգացման և երկրագործությունից անջատման սատիճանի, ըստ տիրակալության ձևի ու կառավարման առանձնահատկությունների։ Անբավարար են լուսաբանված քաղաքների ներքին կյանքը, սոցիալական հարաբերությունները, քաղաքային ինքնավարության առաջացման և զարգացման կարևոր հարցը և այլն։

Կարելի է դոհացուցիչ համարել ուրիշ երկրների հետ Հայաստանի ունեցած առևտրական կապերի և միջազգային տարան-

բաշքան), 1», Երևան, 1957; (Երկրորդ մասը պատրաստվում է ասպարություն), Ս. Պ. Պողոսյանի «Գյուղացիության ճորտացումը և դյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում», Երևան, 1956, Աշոտ Հովհաննիսյանի «Գրվազներ հայազատագրական մտքի պատմության», գիրք առաջին, Երևան, 1957 և այլ աշխատություններ

դիկ առևտրին երկրի ունեցած մասնակցության հարցերի ուսումնասիրության վիճակը է. Մանանդյանի աշխատություններում, սակայն նույնը չի կարելի ասել ներքին առևտրի թատմնասիրման մասին: Միանգամայն անբավարար է քննարկված քաղաքների և ապրանքային արտադրության դերը երկրի տնտեսության և հասարակական հարաբերությունների զարգացման դրժում: Վերջին հաշիվով դեռևս բազմակողմանիորեն և ճիշտ բնութագրված չէ Հայաստանի 9—13-րդ դարերի հասարակական-տնտեսական զարգացման մակարդակի կարևորագույն հարցը:

Ներկա աշխատությունը միջնագարջան Հայաստանի սոցիալ տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության ուղղությամբ աշխատող կատարվող քաջերից մեկն է և նպատակ ունի տարբեր սկզբնաղբյուրների հիման վրա քննարկելու քաղաքների, արհեստների, ապրանքային արտադրության և առևտրի զարգացման ու գրա հետ կապված՝ քաղաքների ներքին, հասարակական կյանքի հիմնական հարցերը 9—13-րդ դարերում:



Աշխատությունը շարադրելիս, օգտագործել ենք մատենագրական, հնագիտական, արձանագրական և այլ մեզ մաաչելի աղբյուրներ ու նյութեր:

Միջնագարջան Հայաստանի քաղաքների և արհեստների պատմությունն ուսումնասիրելիս մեր հիմնական մատենագրական աղբյուրները, բնականաբար, եղել են հայկական աղբյուրները, որոնք կարևոր նյութեր են պարունակում, մանավանդ երկրի ներքին կյանքի, սոցիալական հարաբերությունների և մյուս հիմնական հարցերի վերաբերյալ: Օգտագործել ենք ժամանակաշրջանին վերաբերող համարյա բոլոր հրատարակված աղբյուրները, և հնարավորության սահմաններում նաև չհրատարակված

ձեռագիր աղբյուրներ, որ սիրալիր կերպով մեզ տրամադրել են Մատենադարանի աշխատակիցները:

Վրացական աղբյուրները օգտագործված են պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատության Ա և Բ հատորների միջոցով:

Օտար աղբյուրների պարունակած նյութերը քննարկվող հարցի վերաբերյալ անհավասարաչափ արժեք ունեն: Դրանցից առավել կարևոր են արաբական աղբյուրները, որոնք նշանակալից տեղեկություններ են պարունակում Արևելքի ինչպես և Հայաստանի քաղաքների, արհեստների, առևտրի ու առևտրական կապերի ու բնական հարստությունների մասին: Այդ տեղեկությունները վերաբերում են գերազանցապես 9—10-րդ դարերին: Հետագա հեղինակները մեծ մասամբ կրկնում են նախորդ հեղինակներին, տալով նաև որոշ նոր տեղեկություններ և անդրադառնալով տեղի ունեցած փոփոխություններին: Այն հեղինակները, որոնք իրենց աշխատությունները գրել են պարսկերեն, 10—11-րդ դարերի վերաբերյալ ավելի քիչ տեղեկություններ են հաղորդում, բայց շատ արժեքավոր են սելջուկների և մոնղոլների տիրապետության ժամանակաշրջանի պատմությունը ուսումնասիրելու տեսակետից:

Բյուզանդական աղբյուրները Հայաստանի մասին տեղեկություններ պարունակում են առավելապես ռազմա-քաղաքական տնցքերի առնչությամբ և շատ ավելի նվազ՝ երկրի տնտեսության և սոցիալական հարաբերությունների վերաբերյալ:

Արաբական աղբյուրները օգտագործել ենք Ն. Ա. Կարաուլովի, Մորթմանի, Բ. Խայաթյանցի և պրոֆ. Պ. Կ. Ժուզեի կատարած թարգմանությունների միջոցով (տե՛ս աղբյուրների ցանկը վերջում): Հայաստանի մասին Յակուտի տեղեկությունները մեջ են բերված Պատմության ինստիտուտի աշխատակից, հանգուցյալ Հ. Նալբանդյանի թարգմանության ձեռագրից, որ ժամանակին սի-

բաշխու կերպով տրամադրել էր մեզ հեղինակը, որի հիշատակը հարգում ենք խորին շնորհակալությամբ¹: Արարական ազդյունների որոշ տեղեկություններ քաղել ենք նաև «Enzyklopaedie des Islam»-ից և այլ գիտական աշխատություններից:

Պարսկալեզու ազդյունները նույնպես օգտագործել ենք եղած թարգմանությունների միջոցով, իսկ բյուզանդական ազդյունները՝ մասամբ եղած թարգմանությունների միջոցով, (Պրոկոպիոս Կեսարացի, Կոնստանդին Ծիրանածին), մասամբ՝ Բոննում հրատարակված բնագրերից (Գեորգիոս Կելլենոս, Միքայել Ատաալիատես), մասամբ էլ Հ. Մանանդյանի և ուրիշ գիտնականների բազմաթիվ թարգմանությունների միջնորդությամբ:

¹ Տողատակի մեր ծանոթությունների մեջ ցույց են արված Յակուպի աշխատությունների արարական բնագրերի հրատարակության էջերը, ինչպես այդ արել է իր թարգմանության ձևագրում Հ. Նալբանդյանը:


Ներկա աշխատության համար կարևոր ազդյուններ հանդիսացել են նաև Հայաստանի միջնագաղթյան քաղաքների և բերդերի պեղումներով երևան բերված հուշարձաններն ու հնագիտական նյութերը: Մեր տրամադրության տակ եղել են ոչ միայն այդ պեղումների վերաբերյալ հրատարակությունները, հաշվեալությունները և ուսումնասիրությունները, այլև բուն հնագիտական նյութը: Կատարվող պեղումների մի մասին մասնակից ենք եղել անձամբ, բայց ավելի շատ հնագիտական նյութերը օգտագործել ենք Հայաստանի Պետական պատմական ինստիտուտում՝ օգտվելով ինստիտուտի գրքերից և աշխատակիցների սիրալիր վերաբերմունքից:

Աշխատության մեջ օգտագործված են նաև հայերեն վիճակի արձանագրությունները, մասամբ և ազգագրական նյութեր:



ՔԱՂԱՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
IX-XI ԴԱՐԵՐՈՒՄ





Ա. Ռ. Ա. Ջ. Ի. Կ. Լ. Ռ. Ե. Կ.

ՖԵՌԴԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՖԵՌԴԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Միջնադարյան քաղաքների առաջացման հարցը վաղուց է գրավել գիտնականների ուշադրությունը և գրա վերարերջալ գոյություն ունի տեսությունների և տեսակետների մի ամբողջ շարան: Դրանց քննարկումըն ու քննադատությունը մեր նպատակներից դուրս է, ուստի կասմանափակվենք նրանց բնութագրություններ միայն, ամենասեղմ և ընդհանուր պեկրով, որքանով դասնհրաժեշտ է մեր առաջ ծառայած հարցի քննարկումը առաջ տանելու համար:

Պարզունակ մի տեսություններ նվրոպայի միջնադարյան քաղաքները համարվել են սոսկ իբրև Հուսից մնացած ժառանգություն: Հայտնի է քաղաքների առաջացման վտաչինային տեսությունը, որի համաձայն քաղաքը առաջանում է ֆեոդալական կալվածի հիման վրա, դեռևս վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում: Ավստրիական գիտնական Ա. Դոպլը, մշակելով այս տեսությունը, գտնում էր, թե քաղաքները և քաղաքային հիմնարկները առաջացել են ֆեոդալական կալվածի (վտոչինայի) հիման վրա, քանի որ կապիտալիստական հարարերու-

թյաններ գոյություն ունին դեռևս կարուլինգների ժամանակաշրջանի ֆեոդալական վտոչինայում: Զգալի թվով բուրժուական գիտնականներ, մասնավորապես գերմանական իրավաբանական շկոլայի ներկայացուցիչները, քաղաքները գիտել են որպես վաղա-քաղաքական, իրավական և ոչ սոցիալտնատեսական կատեգորիա, ընդգծելով քաղաքների առաջացման իրավաքաղաքական շիմքերը (Գ. Բելով): Գերմանական մի շարք գիտնականների հատուկ է նաև մարկի կամ համայնքի տեսությունը, որով քաղաքի ծագումը կապվում է գերմանական գյուղական համայնք-մարկի հետ: Արմետա-նվրոպական գիտնականներն են մշակել նաև գիլդիական տեսությունը, որի համաձայն քաղաքները առաջացել են գիլդիական միություններից:

Հայտնի է դոյակային կամ բուրգային տեսությունը, ըստ որի ֆեոդալական բերդ դոյակը կամ բուրգն է քաղաք դարձել: Եուկոյակային տեսության կողմնակիցների կարծիքով քաղաքի հիմքը կազմել է շուկան իրեն հատուկ օրենքներով: նվրոպայի միջ-

նադարյան քաղաքների պատմության ու վերջի ժամանակակից ուսումնասիրողներից էր բելգիական գիտնական Անրի Պիրեննը (մեռել է 1935 թ.): Նա իր շատ կողմնավոր քաղաքավոր աշխատություններում, մասնավորապես «Բելգիայի միջնադարյան քաղաքները» աշխատության մեջ, գերազնահատուտ է առևտրի դերը և բելգիական քաղաքները համարում է առաջացած առևտրականների հիմնած գաղութ-բնակավայրերից:

Պիրեննի կարծիքով հողագործ բնակչության դանդաղ աճից անջատվում են առևտրականները, որոնք գիլդիա կազմած հիմնում են առևտրական գաղութներ կամ ավաններ Բելգիայի ծովափնյա կամ գետափնյա վայրերում, որոնք կարող էին և հին բնակավայրեր լինել իրենց գյուղական բնակչությանը, ապա այստեղ են ձգտում նաև արհեստավորները¹: Այս եղանակով վաճառականական գաղութը, որի փաստական դեկավարությունը գանվում է առևտրական գիլդիայի ձևաբան, աստիճանաբար իսկական քաղաքի տեսք է ընդունում²:

Բելգիայում առաջացած քաղաքները, ասում է Պիրեննը, «իրենց ծագումով պարտական են առևտրին»³: Բայց պետք է ասել, որ քաղաքների կոնկրետ պատմությունը գրեթե Պիրեննը բավականաչափ վառ և պատկառական պատկերներ է դնում, մասնավորապես քաղաքների ներքին կյանքի վերաբերյալ:

Իտալական քաղաքները և Ֆրանսիական ու հունոսյան քաղաքների մեծ մասը Պիրեննը համարում էր վերածնված հումեական քաղաքներ⁴:

Ռուսական մինչևեկոյուցիոն ժամանակաշրջանի գիտնականներից ոմանք, առավելապես ֆեոդալական, մասամբ և բուրժուական սուրջեկտիվ սոցիոլոգիական պատ-

մագրությունների կազմակերպիչները, քաղաքների հիմնադիրներ և նրանց պարզացման հսկանավորներ համարում էին իշխաններին ու թագավորներին: Բուրժուական պատմաբան Վ. Ի. Սերգեևիչը, ընդհակառակը, պնդում էր, թե քաղաքները հիմնել են վաճառականները: Բուրժուական պատմագիտության խոշորագույն ներկայացուցիչներից Կլյուչևսկին սուսական միջնադարյան քաղաքների առաջացումը բացատրում էր առևտրի զարգացմամբ, մասնավորապես «վարչագրներից դեպի հույները տանող» Գնեպրվոյսովյան և Վոլգայով դեպի Նյուսիս տանող ջրային ճանապարհներով կառավարվող առևտրի հաջողություններով:

Կլյուչևսկու տեսակետները անտեսական մատերիալիզմին բնորոշ մեխանիստական մեկնարանություններով կրկնում էր Պոկրովսկին, որը «առևտրական կապիտալիզմի» վերաբերյալ իր տեսակետներով էր բացատրում, ի շարս շատ երևույթների, նաև քաղաքների զարգացումն ու անկումը, արդիականացնելով միջնադարյան քաղաքի պատկերը:

Ֆեոդալական քաղաքի առաջացման գիտական հիմունքները տարբեր առիթներով լուսարանել են մարքսիզմի կլասիկները Իբենց բազմաթիվ ասույթներում, որոնց վրա հենվելով այդ հարցը քննել են և շարունակում են քննել սովետական գիտնականները: Ս. Վ. Յուշկովը, խոսելով 9—10-րդ դարերի սուսական քաղաքների մասին, նշում է, թե դրանք քաղաքներ, այսինքն առևտրական-արդյունաբերական կենտրոններ անվանել չի կարելի: Այս կամ այն ցեղի կենտրոն հանդիսացող քաղաքում, նրա ասելով, կենտրոնանում էին իշխանը, դրուժինայի հետ միասին և ցեղային ավագանին: Նման քաղաքներում, որպես լավ պաշտպանված վայրերում, արհեստավորներն ու առև-

¹ А. Пиренн, Средневековые города Бельгии, Москва, 1937, стр. 175.

² Նույն տեղում, էջ 183:

³ Նույն տեղում, էջ 178:

⁴ Նույն տեղում, էջ 169:

¹ В. О. Ключевский, Курс русской истории. ч. I, 1937, стр. 123—124. Его же. Боярская дума древней Руси. Петербург. 1919, стр. 28.

աբակաճանները ավելի շուտ էին բնակություն հաստատում, քան որևէ այլ տեղում¹: Այս եղանակով առաջանում են 11—13-րդ դարերի բուսական քաղաքները, դառնալով կենտրոն իրենց շրջապատող հողերի, կամ ավյալ դավառի, առանց որի քաղաքը պատկերացնել չի կարելի²:

Վաղ շրջանի (9—10-րդ դդ.) սուսական քաղաքները համարելով ցեղային և փշխանական կենտրոններ, Յուզկովը շատ կարևոր դեր է վերագրում ցեղի առաջնորդ իշխանին ու ցեղային ավագանուն կամ պարզապես ֆեոդալներին, քաղաքը դիտելով իբրև վերջինիս տնտեսական ռազմական և վարչական կենտրոն³:

Սակայն, 10—13-րդ դդ. ֆեոդալական քաղաքի առաջացման հիմնական պատճառը Յուզկովը ճիշտ կերպով տեսնում է արտադրողական ուժերի աճի մեջ, աշխատանքի բաժանման և արդյունաբերության ու առևտրի դուրսնաբերությանից անջատման մեջ⁴:

Ռուսական քաղաքներին ընդարձակ մեկնադրություն է նվիրել ակադեմիկոս Մ. Ն. Տիխոմիրովը: Հատկապես կանգ առնելով քաղաքների առաջացման հարցի վրա, հեղինակը մերժում է այն տեսակետը, համաձայն որի քաղաքներն առաջացել են առևտրի, մասնավորապես ջրային մեծ ճանապարհներով կատարվող առևտրի շնորհիվ:

Մ. Ն. Տիխոմիրովը քաղաքների առաջացումն ու զարգացումը բացատրում է դուրսնաբերության, արհեստների ու առևտրի զարգացումով⁵: Նա գրում է. «Քաղաքները առաջանում են, մեր կարծիքով, առաջին

հերթին այնտեղ, որտեղ զարգանում է դուրսնաբերությունը և անջատվում են արհեստավորներն ու վաճառականները, առաջանում է քաղաքը շրջապատող դավառը (городская округа), որը ձգտում է դեպի իր կենտրոնը»¹: Քաղաքների առաջացման կարևորագույն պայմանը Մ. Ն. Տիխոմիրովը համարում է հողագործական խիտ բնակչություն ունեցող դավառի առկայությունը: Այդ պատճառով էլ նա նշում է, թե սուսական քաղաքները կենտրոնացած են եղել Կիևի շրջակայքում, Բուդի վերին հոսանքի ու Վոլինյան հողագործական ռազմակազմի վերջապես Վոլոգայի վերին հոսանքի և Կյուպյուսկի միջև: Այս երեք շրջանները հանդիսանում էին սուսական հողագործական գլխավոր շրջանները և աչքի էին ընկնում իրենց խիտ բնակչությամբ: Հեղինակը նշում է, թե քաղաքը առաջանում է զարգացած հողագործության կենտրոնում. արհեստի զարգացումով զարգանում են քաղաքի արհեստավորական թաղերը և արվարձանները (поселки): Մի քանի առանձին դեպքերում քաղաքի զարգացման բազան կարող էր դառնալ բնական հարստությունների մշակումը²:

Մ. Ն. Տիխոմիրովը չի թերադնաճատում նաև առևտրի նշանակությունը: Նա նշում է, որ ջրային ճանապարհներից հետև կանգնած մի քանի քաղաքներ արագ թուլացան: «Նրբ վոլգան կարևորագույն առևտրական ճանապարհի նշանակություն ստացավ, Սուդոպը և Ռոստովը արագորեն կորցրին իրենց նշանակությունը և նրանց փոխարեն առաջագիմեցին Օկայի և Վոլգայի վրայի քաղաքները»³: Ասելով, թե նույնը տեղի ունեցավ Գնեպրի վրայի քաղաքների հետ, հեղինակը եզրակացնում է. «Առևտուրը կյանքի չի կոչում քաղաքները, ինչպես մտածում էր Վ. Օ. Կյուչևսկին, բայց նա պայմաններ էր ստեղծում նրանցից առավել

1 С. В. Юшков, Очерки по истории феодализма в Киевской Руси. Москва-Ленинград, 1939, стр. 20—24.

2 նույն տեղում, էջ 136:

3 նույն տեղում, էջ 46—48:

4 նույն տեղում, էջ 131—138:

5 М. Н. Тихомиров, Древнерусские города. См. Ученые записки, выпуск 99. Издание МГУ, Москва, 1946, стр. 357.

1 М. Н. Тихомиров, Древнерусские города... стр. 36.

2 նույն տեղում, էջ 38:

3 նույն տեղում, էջ 39:

խոշորների ու հարուստների առաջադիմության համար»¹:

Մ. Ն. Տիխոմիրովի գիտողությունները արժանի են հատուկ ուշադրության և բարձր գնահատականի, միայն պետք էր ցանկանալ, որ նա ավելի ընդգծեր աշխատանքի հասարակական բաժանման, մասնավորապես երկրագործությունից արհեստների և առևտրի անջատման նշանակությունը՝ քաղաքների առաջացման գործում:

Մ. Ն. Տիխոմիրովը իր աշխատության մեջ իրավացի նկատում է, որ ահազ. Բ. Գ. Գրեկովը իր «Киевская Русь» աշխատության մեջ համարյա չի խոսում Կիևյան Ռուսիայի քաղաքների մասին: Հաշվի առնելով այդ գիտողությունը, ահազ. Բ. Գ. Գրեկովը իր աշխատության նոր հրատարակության մեջ առանձին տեղ է հատկացրել քաղաքների առաջացման և զարգացման հարցերին: Ելնելով մարքսիզմի կլասիկների տալլիթներից, նա ապիս է քաղաքի հետևյալ բնորոշումը. «Քաղաքը, դա մի բնակավայր է, որի մեջ կենտրոնացած է արդյունաբերական և առևտրական բնակչություն, որն այս կամ այն չափով կարված է հողագործությունից»²: Այնուհետև հեղինակը նշում է, թե այսպիսի քաղաքը հանդիսանում է «հողագործությունից արդյունաբերական ու առևտրական աշխատանքի անջատման հետևանքը և հանրագումարը... աշխատանքի հասարակական բաժանման հանրագումարը»³:

Քաղաքների առաջացմանը, նույն բացատրությունն է տրված Բ. Ա. Ռիրակովի «Ремесло древней Руси» նշանավոր աշխատության⁴, ինչպես և «История культуры»

ры древней Руси» կոլեկտիվ աշխատության մեջ: Նույն տեսակետը գտնում ենք նաև սուսական առանձին քաղաքներին նվիրված այն բաղմաթիվ աշխատություններում, որոնք լույս են տեսել վերջին տարիների ընթացքում: Կարելի է ասել, որ միևնույն հիմունքներով է լուսարանում քաղաքների առաջացումը «ՍՍՌՄ ժողովրդական անակուսության պատմությունը» աշխատության հեղինակ Պ. Ի. Լյաշենկոն⁵:

Ֆեոդալական քաղաքների առաջացմանը և նրանց դերին սխալ և անբնորոշելի բացատրություն է տալիս պրոֆ. Ֆ. Յա. Պոլյանսկին: Նրա ասելով «քաղաքները 11—15-րդ դարերում (արևմտյան եվրոպայում) կեան փոխարինելու կարվածային արհեստին և խաղում էին վերջինիս դերն ընդլայնված մասշտաբով՝ ամբողջ ֆեոդալական կարգերի շրջանակներում և ոչ թե մեկուսացված կարվածի նեղ շրջանակներում»⁶: Ըստ Պոլյանսկու քաղաքները և ապրանքային արտադրությունը 11—13-րդ դարերում կոչված էին սպասարկելու ֆեոդալների դասակարգին ու ծառայելու նրա շահերին, նպաստելու ֆեոդալական կարվածքի զարգացմանը: Նման սահմանափակումը, իհարկե, միակողմանի է և սխալ: Քաղաքների և ապրանքային արտադրության դերը շատ ավելի բազմակողմանի և զգալի է եղել: Վ. Վ. Ստոկլիցկայա-Տեբեշկովիչը Պոլյանսկու հայացքները որակում է իբրև մի տեսություն, որը պնդում է, թե քաղաքը ստեղծել են ֆեոդալները⁷:

¹ П. И. Лященко. История народного хозяйства СССР, том I. Докантинистические формации, издание третье. Москва, 1952, стр. 188—210.

² Ф. Я. Полянский, О товарном производстве в условиях феодализма. «Вопросы истории» № I, 1953, стр. 54.

³ В. В. Стоклицкая-Терешкович, Происхождение феодального города в Западной Европе. «Вестник Московского университета», Серия общественных наук № 1, 1955, стр. 3.

⁴ М. Н. Тихомиров. Древнерусские города, стр. 39.

⁵ Б. Д. Греков. Киевская Русь, Москва, 1949, стр. 34.

⁶ նույն տեղում, էջ 94:

⁷ В. А. Рыбаков, Ремесло древней Руси, изд. Академии наук СССР, 1948, стр. 8, 97—98.

11—15-րդ դդ. ֆեոդալական քաղաքների պատմությունը նվիրված ընդարձակ մենագրության մի հատվածը կազմող իր հոդվածում Ստոկիլիցիայա-Տերեզիովիչը ընդգծում է գյուղացիական արհեստավորական զանգվածի դերը քաղաքների առաջացման հարցում, ցույց տալով, որ արհեստի անջատումը գյուղատնտեսությունից տեղի է ունենում ղեռես գյուղական համայնքի ներսում, ապա աշխատանքի հասարակական քաժանման բնույթ է ստանում քաղաքների առաջացման պրոցեսում:

Մերձավոր ու միջին Արևելքի երկրների, դրանց թվում և Անդրկովկասի ու Հայաստանի քաղաքների առևտրի և արհեստների մասին իրենց աշխատություններում խոսել են արևմտա-ևվրոպական բազմաթիվ գիտնականներ: Այդ գիտնականները ֆեոդալական քաղաքի առաջացման հարցը հատուկ քննարկման առարկա չեն դարձրել: Քաղաքները Արևելքում նրանք սովորաբար դիտել են իրրև վարչական, առևտրական կենտրոններ և ազգական հենակետեր, որոնք գոյություն են ունեցել հին ժամանակներից ի վեր և որոնց քանակը փոփոխվել է Արևելքի քաղաքական իրադրությունների և առևտրական հարաբերությունների փոփոխություններին համեմատ:

Արևելքի քաղաքների և առևտրի հարցերին հատուկ ուշադրություն է նվիրել Վ. Հեյդը¹, որը քաղաքների առաջացումը, բարդավաճումն ու անկումը բացատրում է առավելապես միջազգային տարանցիկ առևտրի զարգացմամբ, նրա տատանումներով, այդ առևտրի ճանապարհների ուղղություններով և դրանց փոփոխություններով:

Սովետական բազմաթիվ արևելագետներ, որոնք զբաղվել են Արևելքի միջին դարերի պատմության և նյութական կուլտուրայի ուսումնասիրությունը՝ Վ. Վ. Բարտոլդ, Ն. Մառ, Հ. Օրբեյի, Բ. Վլադիմիրցի, Ա. Յա-

կուբովսկի, Վ. Գորդևսկի, Ի. Ս. Տոլստով, Ի. Պետրուշևսկի, Բ. Զախոդեր, Ն. Պախոմով և ուրիշներ իրենց աշխատությունների մեջ, թեև հատկապես չեն քննարկել Արևելքում ֆեոդալական քաղաքի առաջացման հարցը, սակայն քաղաքների զարգացումը կապել են ֆեոդալական հասարակության, արհեստների, ապրանքային արտադրության և առևտրի աճի ու զարգացման հետ: Ա. Յակուբովսկին նշում է նաև գյուղական բնակչության սակավահողության, գործիքներ և լծկան շուկաների և ցանքսի կիսարական սիստեմի հետևանքով բնակչության փախուստը քաղաք, այստեղ օրվա հացը վաստակելու հուսով:

Հայաստանի միջնադարյան քաղաքների առաջացման և զարգացման հարցերը շատ ավելի պակաս շարժվել են քննության առարկա դարձել, քան դա արված է արևմուտյան Նվրոպայի և Ռուսաստանի քաղաքների վերաբերյալ: Հայ տրագիցիոն պատմագրության մեջ, մինչև Ալիշանը և Պալասանյանը ներառյալ, միջնադարյան Հայաստանի քաղաքների առաջացումը դիտվել է իրրև հայ նշանավոր թագավորների և իշխանների շինարար գործունեության արդյունք:

Դրանից շատ առաջ շանցավ նաև Լեոն, որը նույն տեսակետը կրկնում էր սուբյեկտիվ սոցիոլոգիական դիրքերից: Նա իր «Հայոց պատմություն» մեծածավալ աշխատության 2-րդ հատորում, որն ընդգրկում է 5—11-րդ դարերը, առանձին տեղ չի հատկացրել երկրի տնտեսական կյանքին, արհեստագործությանը և քաղաքին: Քաղաքներից միայն Անիի մասին է խոսում Լեոն, այդ նշանավոր կենտրոնի առաջացումը դիտելով իրրև Աշոտ Գ-ի կատարած մի խոշոր ձեռնարկություն: Նշելով, որ Անին մինչև 10-րդ դարը միայն անառիկ ամրոց էր, կառուցված բնականից անառիկ վայրում և

¹ W. Heyd, Geschichte des Levantehandels im Mittelalter, Leipzig, 1923, B. I—II.

1 А. Якубовский, Сельджукское движение и туркмены в XI в. ИАН, № 4. 1937, стр. 925.

շրջապատված պորտիպոններով, Լեոն գրում է. «Քաջ այս ամբողջունների շուրջը, դեպի Հյուսիս տարածվող տափարակի վրա, Ախուրյանի արևելյան և արևմտյան համեմատաբար փոքրիկ ձորերի մեջ ապրում էր մի ազգաբնակչություն, որը բավականաչափ ստվարաթիվ էր՝ մի խոշոր քաղաք կազմելու համար: Ահա այս քաղաքն էլ պիտի դառնար Բագրատունյաց թագավորության կենտրոնը: Այսպես պահանջում էին նրա (Բագրատունյաց թագավորության) թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական շահերը. Այս անհրաժեշտությունը, անշուշտ, զգացել էին և Աշոտի նախորդները, բայց իրագործելու բխտը վիճակվեց միայն սրան: Խոշոր ձեռնարկությունները՝ նախաձեռնող և վրձնականությունը օժտված բնավորություններին են տրված»¹: Այնուհետև Լեոն խոսելով այն մասին, թե Աշոտը ընդարձակեց ամրոցը, պալատ կառուցեց, Ախուրյանի ձորի և Ծաղկաձորի միջև, միջնաբերդից հետո պարիսպ կանգնեցրեց, ջրմուղով ջուր բերել տրվեց քաղաքը, եզրակացնում է. «Եվ այսպես, Հայաստանի մեջ երևան էր գալիս մի նոր մայրաքաղաք, որ բացառիկ նշանակություն պիտի ունենար հայ ազգի պատմության մեջ: Այս տեղափոխությունը սկսվում էր ոչ միայն Բագրատունյաց թագավորության, այլև հայ պատմական կյանքի Անիական շրջանը...»²:

Ահա թե ինչպիսի նշանակություն է վերագրում Լեոն խոշոր ձեռնարկություններ նախաձեռնող և վճարակառուցյալ օժտված բնավորություն ունեցող Աշոտ Գ-ի այն քայլին, որ նա գահը Կարսից Անի տեղափոխեց:

Ակադեմիկոսներ Ն. Մառը և Հ. Օրբելին միջնադարյան հայկական քաղաքների դարգացումը կապում են միջին դարերում Առաջավոր Ասիայի ընդհանուր առաջադիմու-

թյան հետ, նշելով, որ այդ քաղաքներում խաշավորվում էին Արևելքի տարբեր ժողովուրդներին պատկանող այլալեզու և այլազավան բնակչության արտադրական փորձը, առևտուրը և կուլտուրական գործունեությունը: Ն. Մառը և Հ. Օրբելին ֆեոդալական քաղաքի առաջացման հարցը քննել են մասնավորապես Անիի կառուցվածքը:

Միջնադարյան Հայաստանի քաղաքների պատմության հարցերին, ինչպես նշվեց վերևում, ամենից ավելի մեծ ուշադրություն է ցուցվել է ակադ. Հ. Մանանդյանը: Երկրի տնտեսական վերելքը և քաղաքների առաջացումն ու զարգացումը 9—11-րդ դարերում Հ. Մանանդյանը բացատրում է արտաքին քաղաքական բարենպաստ պայմաններով և միջազգային տարանցիկ առևտրով: Նա գրում է. «Հայաստանի տնտեսական վերածնությունը և նրա քաղաքային կենտրոնների նոր ծաղկումը հնարավոր դարձան, ինչպես ինձ թվում է, սկսած 9-րդ դարի երկրորդ կեսից՝ շնորհիվ արտաքին քաղաքական իրադրության մեջ տեղի ունեցած արժատական փոփոխության, որը ծայր աստիճանի ձեռնտու էր բուֆերային Հայաստանի քաղաքական և տնտեսական զարգացման համար»³:

Հայաստանի տնտեսական վերածնության, նրա քաղաքների նոր ծաղկման այդ «ծայրաստիճան» բարենպաստ իրադրությունները, Հ. Մանանդյանի կարծիքով, ստեղծվեցին շնորհիվ Արաբական խալիֆայի թուլացման և քայքայման, Բյուզանդական կայսրության հետզհետե օւժեղացման, որը հնարավորություն տվեց բյուզանդական զորքերին քարուքանդ անել արաբական սահմանային ամրությունների սիստեմը և քայլ առ քայլ տիրանալ խալիֆայի սահմանամերձ մարզերին և շարժվել դեպի արևելք, խորանալով Հայաստանի մեջ: Վերջապես, բարենպաստ քաղաքական իրադրություն էր ստեղծվում Հայաստանում,

¹ Լեոն, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, Երևան, 1947, էջ 596:

² Նույն տեղում, էջ 596:

³ Я. А. Манандян. О торговле и городах Арменни, 1930. стр. 140—141.

երբ արարները ստիպված են լինում փոխել իրենց խիստ քաղաքականությունը և 862 թվականին Աշոտ Բագրատունուն իշխանաց իշխան են հռչակում:

Այս ամենը, սկսած Մանանդյանի կարծիքով, նպաստավոր էր այն բանի համար, որպեսզի Հայաստանը տնտեսական բուֆեր գառնա Բյուզանդիայի և Արաբական խալիֆայի միջև կատարվող տարանցիկ առևտրի համար՝ Ահա այս տարանցիկ առևտուրն էր, որից հեղինակի կարծիքով գոյանում էին երկրի հիմնական եկամուտները և որը տնտեսական վերելքի ու քաղաքների առաջացման ու ծաղկման աղբյուր էր հանդիսանում: Հայաստանի տնտեսական բուֆեր լինելու շնորհիվ, նրա միջով անցնող առևտրական ճանապարհները դարձան միջազգային տարանցիկ առևտրի գլխավոր ճանապարհները և նրանց վրա ու առևտրի շրջորհիվ է, որ հյանքի կոչվեցին Հայաստանի քաղաքները՝ Անին, Կարսը, Արծնը կարավանային առևտրի հյուսիսային մայրուղու վրա², Խոջը, Սալմասը, Բերկրին, Արճևշը, Մանազկերտը, Խլաթը, Բագիշը, Արզնը, Նիրկերտը՝ հարավային մայրուղու վրա:

Նշված աշխատությունից տաս տարի հետո, 1940 թ. գրված «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում» հոդվածում աշխատության մեջ տեղադրվելու Չ. Մանանդյանը ավելի է բնութագրում արհեստների և ապրանքային տնտեսության զարգացումը քաղաքներում, սակայն քաղաքների և արհեստների զարգացումը, ինչպես նախորդ դրքում, գիտում է իրեն հեռուանք տարանցիկ առևտրի նոր վերելքի:

Անժխտելի համարելով Հայաստանի բարգավաճ վիճակը և քաղաքային կյանքի զարգացումը 10—11-րդ դարերում, Չ. Մանանդյանը առաջադրում է այն հարցը, թե «ինչ՞ով պետք է բացատրել այդ արտա-

կարգ բարգավաճումը 10—11-րդ դարերում», և պատասխանում է այդ հարցին, կրկնելով նախորդ աշխատության մեջ շարադրած տեսակետը, հավելապես, նշելով, թե զա պետք է բացատրել նրանով, որ Բագրատունյաց Հայաստանը «ոչ միայն մեծ նշանակություն ստացավ իրեն համաշխարհային առևտրի արանդիտային ճանապարհ, այլև դառավ տնտեսական իդեալական բուֆեր երկիր և շեղուք վայր միջազգային առևտրի»¹:

Նշելով Հայաստանի աշխարհագրական դիրքը հեղինակը շարունակում է՝ «Աշխարհագրական այս պայմաններում Բագրատունյաց Հայաստանը դառել էր, բնականաբար, գլխավոր ու միակ արանդիտային ճանապարհը և միակ հարմար ու ապահով վայրը համաշխարհային առևտրի:

Բագրատունիների հովանավորության տակ զարգացող մեծ առևտրի վերակենդանացմանը պետք է վերագրել, անշուշտ, թե՛ Հայաստանի տնտեսական բարգավաճ վիճակը և թե՛ հոյակապ քաղաքների հիմնումը ու նրանց բուռն ու արագ աճումն այս ժամանակաշրջանում»²:

Խոսելով քաղաքների զարգացման մասին, 12-րդ դարի վերջերին և 13-րդ դարի առաջին քառորդում, Մանանդյանը գրում է. «Հենց նշված ժամանակ նորից բարենպաստ իրադրություն է ստաջանում Արևմուտքի հետ Տրապիզոնի և Սև ծովի վրայով կատարվող միջազգային առևտրի համար»³, որը և հեղինակը համարում է քաղաքների նոր վերելքի պատճառը: Արհեստագործության և նրա արտադրության ապրանքային բնույթ ստանալու և ապրանքային տնտեսության զարգացման ու դերի մասին հեղինակը չի խոսում:

¹ Ա. Ա. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940, էջ 9—10:

² Նույն տեղում, էջ 10:

³ Մ. Ա. Մանանդյան, О торговле и городах Армении, стр. 187—188.

¹ Я. А. Манандян, О торговле и городах Армении, стр. 183.

² Նույն տեղում, էջ 149—150:

Ամփոփելով իր խոսքը Հայաստանի բուրք քաղաքների մասին, Հ. Մանանդյանը ընդգծում է. «Ինչպես տեսնում ենք, Հայաստանի համարյա բոլոր քաղաքների համար ընդհանուր է այն փաստը, որ նրանք, բուրքն էլ հնում առաջացել են միջազգային առևտրի կարավանային ճանապարհների վրա»¹:

Տարանցիկ առևտուրը քաղաքների առաջացման և զարգացման գործում, իհարկե լուրջ, արտը գեղաբերում նույնիսկ վճռական նշանակություն կարող է ունենալ, սակայն նա չի եղել և չէր կարող լինել ոչ քաղաքների առաջացման, ոչ էլ անկիման գլխավոր պատճառը, ինչպես այդ ներկայացնում է Հ. Մանանդյանը:

Միջնադարյան քաղաքների առաջացմանը վերաբերող տեսություններին շատ ընդհանուր գծերով ծանոթանալուց և Հայաստանի միջնադարյան քաղաքների առաջացման վերաբերյալ արտահայտված տեսակետները համառոտակի մեջ բերելուց հետո հարկ է անցնել այդ հարցի բուն քննությունը հայ ժողովրդի պատմության ընձեռած փաստական նյութի հիման վրա:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՆԿՈՒՄԸ

Մինչև ֆեոդալական քաղաքի ձևավորումը 9—10-րդ դարերում քաղաքները և քաղաքային կյանքը Հայաստանում անցել են զարգացման շատ երկար ուղի: Հայաստանի մինչֆեոդալական ժամանակների քաղաքների պատմությունը քննարկվող թեմայից դուրս է, սակայն դրան կանգնադրված միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ֆեոդալական քաղաքի առաջացումը լուսարանելու համար: Դրա կարիքը կա մտնավանդ այն պատճառով, որ Հայաստանի քաղաքների զարգացումը մինչև վերջերս գիտվել է իրրև մի միասնական պրոցես,

որը միայն խոշոր տատանումներ և ելևեղներ է ունեցել: Անտեսվել է Հայաստանի չին և միջնադարյան քաղաքների միջև եղած որակական տարբերությունը և միջնադարյան մի շարք քաղաքներ համարվել են սոսկ վերածնված չին քաղաքներ:

Այդ տեսակետը բնորոշ է եղել բոլոր այն հայագետների համար, որոնք հայ ժողովրդի պատմության հին շրջանը գիտել են իրրև ֆեոդալական հասարակության ժամանակաշրջան. կամ լավագույն դեպքում համարել անցման շրջան:

Հայկական լեռնաշխարհի քաղաքների մասին առաջին հիշատակությունները շատ հին են և վերաբերում են Հայաստանի պատմության ժամանակաշրջանին (14—13-րդ դարեր մեր թվ. ա.), սակայն դրանք դեռևս բազի բուն իմաստով քաղաքներ չէին, այլ հանդիսանում էին Հայաստան-Ազգի ցեղային միություն և նրա մեջ մտնող գլխավոր ցեղերի ամբողջված կենտրոնները: Դրանից մի քանի դար հետո քաղաքներ առաջանում են ներարտական պետության մեջ: Սրանք արդեն վարչական և տնտեսական կենտրոններ էին, և ինչպես ցույց են տվել Կարմիր-բլուրի պեղումները, հանդիսանում էին տիպիկ հին արևելյան ստրկատիրական բնույթի քաղաքներ, որոնք ունեին ընդհանուր պլանավորում, արտառյալ խավին հատկացված թաղամասեր, սևիական տնտեսություն ղվարող, եկվոր և իր տնտեսությունն ունեցող տեղական բնակչության թաղամասեր, պահեստներ, մառաններ, արհեստանոցներ: Այս քաղաքների բնակչությունը, մասնավորապես ստրուկները, կատարում էին գանազան աշխատանքներ, դրանց թվում գերազվում էին նաև ստացվող բնահարկի վերամշակմամբ և արհեստներով:

Տե՛ս Բ. Բ. П и о т р о в с к и й, Кармюр-блур I. Результаты работ археологической экспедиции Института истории Академии наук АрмССР и Государственного Эрмитажа 1939—1949 годов. Ереван, 1950, стр. 17—18 и др.

¹ Я. А. М а н а н д я н, О торговле и городах Армении, стр. 207.

Ուրարտական պետության անկմանը հետևեց նաև ուրարտական քաղաքների անկումը, քանի որ նրանք հիմնված էին առավելագույն պետական ստրկության հիմքի վրա: Երբ դադարեց գոյություն ունենալ պետությունը, ստրուկները ցրվեցին, քաղաքները զրկվեցին իրենց արտադրական հիմքից և անկում ապրեցին: Բնորոշ է, որ Կարմիր-բլուրի քաղաքատեղին, ինչպես ցույց են տալիս պեղումները, հետագայում (4—3-րդ դարեր) վերածվել է գերեզմանոցի¹:

Մի շարք նոր և ավելի խոշոր քաղաքներ առաջացան հայկական ստրկատիրական պետության կազմավորման և զարգացման ժամանակաշրջանում (երրորդ դար մեր թվ. ա. մինչև չորրորդ դար մեր թվ.): Հայկական և հունա-հռոմեական մատենագրական աղբյուրներում հիշատակված քաղաքների թիվը շուրջ երկու տասնյակի է հասնում: Դեռևս 4-րդ դ. վերջին քառորդում մ. թվ. ա. վերականգնվում է Ուրարտական պետության հյուսիսային խոշոր կենտրոն հանդիսացած և վաղուց ավերված Արդիշտիխինիլի քաղաքը: Սա արդեն նոր քաղաք էր, որն անվանվեց Արմավիր և դարձավ երվանդունիների Այրարատյան թագավորության մայրաքաղաքը: Շուտով (2-րդ դարի սկզբներին մ. թվ. ա.) Այրարատում հիմնադրվեց երվանդաշատ մեծ քաղաքը:

Երվանդունիների մյուս ճյուղի մայրաքաղաքը Մոսիբում 3-րդ դարի կեսերին դարձավ Արշամաշատը: 2-րդ դ. առաջին կեսում երևան եկավ Մոսիբի մյուս քաղաքը՝ Արկաթիակերտը:

Փոքր Հայքի թագավորության կենտրոնն էր Անի-Կամախը:

Քաղաքների առաջացումն ու աճը, քաղաքաշինությունը նոր և խոշոր թափ ստա-

ցան հայկական հողերի միավորման և հայկական պետության ամրապնդման ժամանակաշրջանում: 2—1-ին դարերում մ. թվ. ա. Մեծ Հայքի միավորված հայկական թագավորության մայրաքաղաքը 2-րդ դ. առաջին կեսում դարձավ հռչակավոր Արտաշատը: Սա մի խոշոր կենտրոն էր, որին իր տեղը պիչեց Արմավիրը: Հավանաբար նույն 2-րդ դ. առաջացան նաև Զարեհավան անունը կրող երեք քաղաք, Զարիշատ անունով երկու քաղաք, Արտաշեսյան և Արտավազդական կոչվող քաղաքները, որոնց մասին, սակայն ոչինչ հայտնի չէ²: Տիգրանի ժամանակ (95—56 մ. թվ. ա.) հիմնվեց Տիգրանակերտ մեծ քաղաքը: Աճելով խոշոր քաղաք դարձավ Վարդգեսավանը, որը մ. թվ. 2-րդ դարում շրջապատվեց պարսպով և վերանվանվեց Վաղարշապատ:

Հին Հայաստանում կային և մի շարք քաղաքներ, որոնց առաջացման ստույգ ժամանակը հայտնի չէ. դրանցից էին Վանը, Նախճավանը, Մծուրնը: Բացի այս քաղաքներից Հայաստանի գավառներում, մանավանդ առևտրական ճանապարհների վրա, կային քաղաքատիպ ավաններ, ամրոցներ, կայան-հանգրվաններ, որոնց մի առ մի թվարկման կարիք չկա³:

Հին Հայաստանի քաղաքներից առավել խոշորներն էին Արմավիրը, երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը, Վաղարշապատը, Վանը և Զարիշատը: Քաղաքներն այդ ժամանակաշրջանում հելլենիստական բնույթի ստրկատիրական կենտրոններ էին՝ երկրագործության, արհեստագործության և առևտրի կենտրոններ³:

1 С. Т. Е р е м я н, Развитие городов и городской жизни в древней Армении. ВДИ. № 3, 1953, стр. 14 и др.

2 Այդ առթիվ տե՛ս Ս. Երեմյանի հիշյալ հոդվածը, Շ. Մանանդյանի «О торговле и городах Армении», «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատությունները:

3 Г. С а р к и с я н, Градостроительство в Армении при Тигране II и вопрос о переселении чужестранцев («Տեղեկագիր», № 2, 1955, стр. 47—48).

1 Տե՛ս В. В. П и о т р о в с к и й, Кармир-Блур I, Результаты работ археологической экспедиции Института истории Академии наук АрмССР и Государственного Эрмитажа 1939—1949 годов. Ереван, 1950, стр. 19.

Քաղաքային բնակչության վերնախավի հիմնական սեփականությունը կազմում էին քաղաքի շրջակայքում գտնվող հողերը, այդ է պատճառը, որ հին քաղաքները շրջապատված էին իրենց պատկանող ավաններով և ագարակներով: Դրա հետ մեկտեղ քաղաքների համար առաջնակարգ նշանակություն ունեին զոյալի շափերով զարգացած արհեստները և առևտուրը: Քաղաքները կապված էին միջազգային, տարանցիկ առևտրի հետ, որին մասնակցում էին նաև սեփական արտադրանքով¹:

Քաղաքները, ինչպես պարզված է, ունեին որոշ ինքնավարություն և զրան համապատասխան ստատուս: Ճիշտ է Հայաստանի քաղաքները քաղաք պետություններ չէին, բայց հավանաբար կազմում էին Առևտրի քաղաքային համայնք իր որոշ ինքնավարությամբ, ինչպես դա պարզված է Տիգրանահերտի վերաբերյալ²:

Այդ քաղաքներն ունեին բազմալեզու բնակչություն, այդպիսին էր մանավանդ արհեստավորների և առևտրականների կազմը: Հիմնական բնակչությունը կազմող հայերից բացի քաղաքներում բնակվում էին հրեաներ, ասորիներ, կապադովկիացիներ, մասամբ և հույներ, որոնք ապրում էին առանձին թաղամասերում: Բնակչության Թման կազմը բնորոշ էր հեղինիստական տիպի ստրկատիրական քաղաքներին:

Ստրկատիրության ժամանակաշրջանի հայկական քաղաքները դեռևս չեն ուսումնասիրված, միայն պեղումները Վաղարշապատում, մանավանդ Գտոնիում, որտեղ թագավորական աճյուրի կողքին գոյություն է ունեցել բնդարձակ ավան, ցույց են տալիս, որ այդ քաղաքներում արտադրական

կյանքը բավականաչափ զարգացած է եղել, անգամ բնակչության կենցաղը բնորոշ է ստրկատիրական հասարակության ժամանակաշրջանի քաղաքի համար³:

Հայաստանի ստրկատիրական ժամանակաշրջանի քաղաքներն անկում ապրեցին ստրկատիրական հասարակության անկման հետ միասին:

Պատահական չէ, որ Հայաստանի բազմաթիվ քաղաքներից և ոչ մեկը չպահպանվեց, վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում դրանցից ոչ մեկը բառի բուն իմաստով այլևս քաղաք չէր: Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը նշելով հոմեոսական կայսրության անտեսական անկումը նրա ճգնաժամի ժամանակաշրջանում, գրում են. «Քեպի անկումը թեքված հոմեոսական կայսրության վերջին դարերը և նրա նվաճումն իսկ բարբարոսների կողմից արտադրողական շատ ուժեր քայքայեցին՝ հողագործությունը անկման հասավ, արդյունաբերությունը սպառման բացակայության պատճառով նվազեց, առևտուրը մեղավ, կամ բռնի կերպով կանգնեցվեց, զյուզական և քաղաքային բնակչությունը նվազեց»⁴:

Հայաստանում ստրկատիրական հասարակության ճգնաժամը և անկումը արտահայտվեցին իրենց համար բնորոշ առանձնահատկություններով, բարբարոսների ներխուժումն էլ այստեղ տեղի չունեցավ, բայց մի բան պարզ է, որ այդ հասարակության ճգնաժամի և անկման գլխավոր անտեսական հետևանքներից մեկը եղավ քաղաքների անկումը: Դրան նպաստեցին նաև Շապուհ Բ-ի հասցրած ծանր հարվածները 4-րդ դարի վախճանական թվականներին, երբ քաղաքները ավերվեցին և նրանց արհեստավորա-

¹ Ս. Ա. Մանандյան, О торговле и городах, Армении, Ереван, 1954, стр. 106—108.

² Գ. Խ. Տարկեսյան, Из истории городской общины в Армении (IV в. н. э.). ВДН, № 3, 1955, стр. 48—62.

³ В. А. Ракелян, Гарин И. Результаты работ археологической экспедиции Института истории АН АрмССР, 1949—1950, стр. 51—56.

⁴ К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. IV, стр. 14.

կան ու առևտրական բնակչութիւնը տասնյակ հազարներով Սասանյան Պարսկաստան դադիկեցվեց: Սակայն քաղաքների քայքայման և անկման գլխավոր պատճառը ոչ թէ ավերին ու կողոպուտն էր, բնակչութեան դադիկեցումը, այլ հասարակութեան և նրա անտեսութեան մեջ տեղի ունեցած փոփոխութիւնները¹:

5-րդ դարում ստրկատիրական բնույթի հին քաղաքները դադարեցին իբրև աշղախսին գոյութեան ունենալուց:

Դեռևս 4-րդ դարից Հայաստանում սկըսում են ձևավորվել ֆեոդալական հարաբերութեանները, ֆեոդալական խոշոր նախարարական հողատիրութեամբ հանդերձ: Երևաններն սկսում են կախման մեջ ընկնել հողատերերից: 5—7-րդ դարերում ֆեոդալական հարաբերութեանները և անտեսութեանը նկատելիորեն ամրապնդվում են:

Պարսից տիրապետութեան դեմ 5-րդ դարում բարձրացած ժողովրդական հռժկու ապստամբութեանների շնորհիվ Հայաստանը որոշ չափով պահպանում է իր ինքնուրույնութիւնը, մանավանդ անտեսական և կուլտուրական զարգացման հնարավորութեանները: Այս ժամանակաշրջանում սակայն հին քաղաքները չեն վերականգնվում ու նոր վերելք չեն ունենում: Նրանցից մի քանիսը միայն, օրինակ Վանը, Արտաշատը, Տիգրանակերտը, Նախճավանը, Կարինը պահպանում էին իրենց գոյութեանը, սակայն իրենց բնույթով սրանք ավելի շատ վարչական և ռազմական կենտրոններ էին և փաստորեն վերածվել էին բերդերի: Քաղաքների փոխարեն տիրապետող դիրք ձեռք է բերում ֆեոդալական բերդը: Միակ խոշոր քաղաքային նոր կենտրոնը, որ առաջացավ ֆեոդալականացող Հայաստանում՝ Դվինն

էր: Իբրև թագավորական նստավայր՝ հիմնադրվելով դեռևս 4-րդ դարում, Դվինը 5—6-րդ դարերում դառնում է խոշոր քաղաք և ձեռք է բերում մայրաքաղաքի հռչակ: Դրա պատճառը մի կողմից Դվինի վարչա-քաղաքական խոշոր կենտրոն, մյուս կողմից՝ Արևելքի և Արևմուտքի երկրների միջև շարունակվող բավականաչափ աշխույժ տարանջրիկ առևտրի կենտրոն լինելն էր, որտեղ կարող էին ապաստանել հին քաղաքների դեռևս իրենց գոյութեանը պահպանող արհեստավորներն ու առևտրականները: Այս տեսակետից շատ բնորոշ է 6-րդ դարի հեղինակ Պրոկոպիոս Կեսարացու վկայութեանը: «Դուրվյը (Դվին), — գրում է նա, — շատ արգասիք էր կրել է, ունի բարեշունչ օդ և լավ ջուր: Բնողոսուպոլսից հեռու է ութ օրվա ճանապարհ: Դաշտերը հարթ են, հարմար ձիով ճանապարհորդելու համար, մեկը մյուսի մոտ դասավորված բազմամարդ գյուղերը զբաղեցված են առևտրականներով, որովհետև Հնդկաստանից, հարևան Իբերիայից և պարսիկներին, նույնիսկ հռոմայեցիներին ենթակա բոլոր ժողովուրդներից այստեղ բերում են ապրանքներ, որոնցով նրանք տուտուր են անում»¹:

Նրկրի պատմական զարգացումը, սակայն, շուտով ընդմիջվեց Արաբական խալիֆայի տիրապետութեամբ, որը Հայաստանում տեղի շուրջ երկու հարյուր տարի (7—9-րդ դդ.): Այս ժամանակաշրջանում Հայաստանի անտեսական և կուլտուրական զարգացման ընթացքը խիստ նկատելի կերպով դանդաղեց:

Արաբական տիրապետութեան ժամանակաշրջանում, մանավանդ 7—8-րդ դարերում, երկարատև պատերազմական գործողութեանների, քաղաքական ցնցումների, նվաճված երկրների, մասնավորապես Հայաստան

¹ Г. Х. Саркисян, Из истории городской общины в Армении (IV в. н. э.). ВДИ. № 3, 1955, стр. 61—62.

¹ Прокопий Кесарийский, История войн римлян с персами. Перевод С. Дестуниса, Петербург, 1880, кн. II стр. 181—182.

նի դաժան կեղեքման հետևանքով արհեստագործությունն ու առևտուրը անկում են ապրում: Առևտրի խիստ նվազմանը նպաստել էր նաև Առաջավոր Ասիայից Հայաստանի վրայով դեպի Սև ծովը դնացող ձանապարհների փակված լինելը՝ արաբա-բյուզանդական թշնամական հարաբերությունների հետևանքով: Արաբներն առաջին շրջանում զարգացնում էին իրենց առևտրական կապերը Չինաստանի, Հնդկաստանի և հարավ-արևմտյան Եվրոպայի, մասնավորապես Իսպանիայի հետ¹:

Բյուզանդիայի հետ առևտուրն ընդհատված էր մշտական ընդհարումների հետևանքով ու արաբա-բյուզանդական սահմանը երկու կողմից էլ բերդերով էր ծածկված: Հայաստանի քաղաքները՝ Նախճավանը, Արճեշը, Կարինը վերածվել էին արաբական զորքերի հենակետների, սրահվ մեծ կայսր էր պահվում և արաբ վետերանների գաղութներ էին հիմնված², իսկ Նիբիհերաբ բյուզանդական հենակետ էր:

Առևտուրը խիստ նվազել էր:

Ճիշտ է, 725 թվականին արաբների բռնի կերպով մացրած գրամական հարկը, (որը դանձվում էր ամենայն դաժանությամբ, հարկատուների ընտանիքի անդամներին ստրկության վարելու և մահապատժի սպանակալիքով), ստիպում էր գյուղացուն իր արտադրանքի մի մասը վաճառել շուկայում³, բայց դա քայքայում էր հիմնական արտադրողի տնտեսությունը: Երկրի ընդհանուր անտեսառական անկումը չէր կարող բացասաբար չազդել բաղարների վրա. այդպես էլ խիստ բացասաբար էր ազդում նաև արաբական հարկային լծի ծանրությունը: Արաբներն ավելի ծանրացրին հարկերը սկսած 8-րդ դարի կեսից, երբ ձևնարկվեց Բագդադի կառուցումը, իսկ նույն դարի վերջին Հարուն-ալ-Ռաշիդի ժամանակ արաբական

Արմենիա վարչական միավորը՝ 13 միլիոն զինհամ հարկ էր վճարում խալիֆային⁴:

Ղևոնդ երեցը վկայում է, թե արաբական հարկահանությունը սաստիկ ծանր էր և դրա հետևանքով թանկագին մետաղները երկրում բոլորովին սղառվեցին: Նա գրում է. «Ջսոնն ժամանակս ի հրամանատարութեան Եղիտի և յիշխանութեանն Աբղլայի միւսոյ յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Հայոց. քանզի դժոխածե ազահութիւն անհամբոյր թշնամոյն ոչ շատացաւ ուսել զմարմինս ընտրելոց Քրիստոսի հօտիս և ըմպել զարխն իրբև զջուր զարհամարհանս Տոցա. այլ համօրէն զբուլբուլ երկիրս Հայոց արկանէր ընդ անհանդուրժելի վտարանդիւք. զի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն ոք տալով զպատճարանս ընչից իւրեանց՝ ոչ դատնէին զգինս փրկանաց անձին իւրեանց. և շար կտտանօք, գելարանօք և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան: Յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս և ի փաղարս երկրի՝ զօղեալ թաղչէին. և ոմանք ձիմասհեղձ և գետալէժ լի-

1 Արաբական վարչական միավոր Արմենիան, արաբական ազդուրները բաժանում են չորս մասի՝ Ա, Բ, Գ, Դ, Արմենիա, ըստ Իրն-ալ-Ֆակիհի՝ Առաջին Արմենիայի մեջ մտնում էին Բայլահանը, Կարալան, Շիրվանը, Երկրորդ Արմենիայի մեջ՝ Զուրգանը, Սուգդարիլը, Բար-Ֆիրուզ-Կուրաղը և Լակիքը: Երրորդ Արմենիայի մեջ մտնում էին Բուսպուրաջանը, Դարիլը, Սիրաջ-Յայրը, Բագրևանդը և Նաշավան: Զորրորդ Արմենիայի մեջ՝ Շիմշառը, Խլաթը, Կալիկալան, Արջիշը և Բաջունայը: (Տե՛ս ՇՄՄՄԻԿ, XXXI, սթր. 13): Իրն-Խորդադրեն նույնն է վկայում, միայն այն տարբերությամբ, որ Առաջին Արմենիայի մեջ հիշատակում է, բացի Կարալայից, Բայլահանից և Շիրվանից, նաև Սրաջանը, Առանը, Բիֆլիսը և Բերդան (տե՛ս ՇՄՄՄԻԿ, XXXII, սթր. 13): Այլ խոսքով Առաջին Արմենիայի մեջ մտնում էր Ազրբեջանը, թերևս նաև Սյունիքը: Երկրորդ Արմենիայի մեջ՝ Վրաստանը, Ափխազիան ու Լակիքը, իսկ Երրորդ և Զորրորդ Արմենիաների մեջ մտնում էին բացառապես հայկական հողերը:

2 A. Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, Wien 1874, Bd. I, S. 358.

1 Я. А. Манандян, О торговле и городах Армении, стр. 135.

2 նույն տեղում, էջ 136:

նէին վասն անտանելի աղետիցն. զի ոչ էր զիսա զոր հայցէինն, գտանել պահանջումն սակի արծաթոյն, այլ ըստ դիտոյ արանց. որովք թափուր մնացեալք յամենայն ստացուածոց՝ կապէին կապանօր անանկութեան երկիրս Հայոց»¹:

Միխայել Աստրին վկայում է, թէ զրամբ սպասուել էր այն ատիճան, որ Հայաստանի հարեան Միչազեարում բնակիչներն ստիպուած էին հարկատուներին վաճառել իրենց երեխաներին ընդամենը հինգ դերձեմով, իսկ եղևներն ու էշերը վաճառուել էին մեկ դերձեմով²:

Արարները ժամանակավորապէս ծանր հարված հասցրին նաև խոշոր հողատիրութեան ժառանգական իրավունքին, զգալի չափով փոխարինելով զա հողերի նկատմամբ արարական պետութեան գերազույն իրավունքով և ֆեոդալական պայմանական հողատիրութեամբ: Դրա հետ միասին հարկահանութեան իրենց ծանր և դաժան սիստեմով արարները քամում էին երկրի հյուսիսը: Պատահական չէ, որ մտա երկու հարյուր տարով բնդհատվեց շինարարութեանը Հայաստանում, իսկ կուլտուրայի զարգացումը համարյա կանգ առնելու չափ նվազեց:

3. ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՎ ՎԵՐՆԷՔԸ, ՆՐԱ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Հայաստանում ֆեոդալական հասարակութեան առաջընթաց զարգացմանը արարները խանգարել չէին կարող, մանավանդ իրենք էլ թեակոխել էին այդ հասարակութեանը: Պայմանական հողատիրութեանը երկար տեղ չէր կարող, և ֆեոդալական հարարերութեանը վարդացմամբ վերածվելու էր ժառանգական հողատիրութեան: Իրոք հայ ֆեոդալները 8—9-րդ դարերում ոչ միայն ամրապնդեցին ֆեոդալական խոշոր

հողատիրութեան իրենց խախտված իրավունքը, այլև ընդարձակվեցին այն:

8-րդ դարի վերջում, մանավանդ 9-րդ դարում, շատ սուր սրայքար էր տեղի ունենում ֆեոդալական տիրույթների վերարժանման և ժառանգական հողատիրութեան ամրապնդման ու ընդարձակման համար:

Մի շարք նախարարական տների ոչընչացումը արարների կողմից, մյուսների հետևանքը Բյուզանդիա և շատերի պարտութեանը ավելի զորեղ մրցակիցներից՝ ժառանգական խոշոր հողատիրութեան ընդարձակման համար մղվող սրայքարում, ինչպէս և Արարական խալիֆայի քայքայումը նրա պատեցին միայն մի քանի խոշորագույն իշխանական տների, այն է Բագրատունիների, Արծրունիների և Սյունաց իշխանների հզորացմանը, որոնք իրենց մեջ բաժանեցին Հայաստանի հողերի մեծագույն մասը:

Ժառանգական խոշոր հողատիրութեան զարգացման նույն օրինաչափ պրոցեսի հետևանք էր նաև արարական մի քանի ամիրայութեանների առաջացումը Հայաստանում, ամիրայութեաններ, որոնք իրենց հողատիրական իրավունքը ամրապնդեցին և ինքնուրույնութեան ձևը բերեցին նույնպէս Արարական խալիֆայի թուլացմանն ու քայքայմանը համընթաց:

Այս ամենի հետևանքով, սկսած 9-րդ դարից նկատելի չափերով տեղի է ունենում գյուղացիական հողերի զավթումը ֆեոդալների կողմից և գյուղացու ճորտացումը:

Այսպիսով, արարական տիրապետութեանը միայն ժամանակավորապէս դանդաղեցրեց ֆեոդալական հարարերութեանների առաջընթաց զարգացումը Հայաստանում: Այս զարգացումը ավելի մեծ թափ է ստանում 9-րդ դարի երկրորդ կեսում ու 10-րդ դարում, երբ հասարակութեանը Հայաստանում ավելի բարձր ատիճանի է հասնում, թեակոխելով զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանը:

Ֆեոդալական հասարակութեան զարգացման այս երկրորդ՝ ավելի բարձր փուլը

¹ Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 135—136:

² Մի խ ա յ ե լ Ա ս ո թ ի, ժամանակագրութիւն, երասպղեմ, 1871, էջ 359:

Հայաստանում ընտրովում էր մի շարք հան-
դամանքներով: Նշենք դրանցից պիտու-
ները.

ա) Ամբաստանում է ժառանգական խո-
շոր հողատիրությունը, առաջանում են ինք-
նուրուչնության ձգտող ֆեոդալական խոշոր
իշխանություններ, ձևավորվում է ֆեոդալա-
կան հայրենիք-կալվածքը, փոտշինան, ֆեո-
դալներն իրենք սկսում են վարել խոշոր
անասնաբուծություն, տերունի հողի վրա, իսկ
մնացած հողը մանր հողատիրների ձե-
լով մնում է գյուղացիների օգտագործման
ներքո:

բ) Խորանում է գյուղացիության ճոր-
տացման պրոցեսը, գյուղացիության հողա-
զրկված և ընչազրկված դանդաղները ճոր-
տական կախման մեջ են ընկնում:

Վ խոշոր ֆեոդալների՝ իշխանական տների ժառան-
գական տիրությունները ամբաստանելու և ընդարձակելու
ինչպես և առանձին իշխանական տների տարբեր
ճյուղերի միջև այդ տիրությունները բաշխելու ու վերա-
բաշխելու համար մղվող տեղական պայքարի վերա-
բերյալ փաստեր շատ կան 10-րդ և հետագա դարերի
հեղինակների, մասնավորապես Քոզիմա Արծրունու,
Հովհաննես Գրատիանոսի երազու, Ասողիկի և Մանփա-
նոս Որբեկյանի աշխատությունների մեջ:

Հայ բուրժուական պատմագրությունը շեղանկով
այդ պայքարի սոցիալ-տնտեսական հիմքերը՝ դիտել
է այն իրի խզման վրա և «Տալիական անհամարա-
խություն» արտահայտություն:

Ուշագրավ է, որ նույն ժամանակաշրջանի գրական-
ությունում մեջ են մեղ հասել առաջին այն տեղեկու-
թյունները, որոնք վկայում են, ինչպես խոշոր
ֆեոդալների ու վանքերի սեփական անասնաբուծան,
այգիների, ձկնորսարանների, ոտոզների ջրի միայն
իրենց համար օգտագործելի առուների, նույնպես և
վանքերին՝ ամբողջ գյուղեր նվիրարկելու մասին:
Ըստ որում գյուղերը նվիրարկվում էին իրենց հողե-
րով, սակավ գեղերում առանց իրենց բնակչության
և ալվի հաճախ՝ բնակչությամբ հանդերձ: Կան և
փաստեր, երբ նվիրարկվել են առանձին շինական-
ներ, թվով 1—2 հողի: Գյուղական հողերի բանա-
գրավման և ֆեոդալական ստատկացած կեղերման
գեղ շինականները մղում էին համառ պայքար, որ-
պիսի փաստեր, ինչպես հայտնի է, արձանագրել են
Հովհաննես Գրատիանոսի երազին և Մանփանոս Որբե-
կյանը:

գ) Զարգանում են արհեստները, առե-
տուրը և բազարները. արհեստները ան-
չառավելով երկրագործությունից կենսաբուծա-
նում են բազարներում, վերջիններս գտնում
են հիմնականում արհեստաշին արտադրու-
թյան և տեղաբի կենտրոններ՝ ձևավորվում է
ֆեոդալական ժողովրդը, որն անջատվում է
գյուղից. սրվում է հակադրությունը բազարի
և գյուղի միջև:

դ) Մոտանում է բազարային դասը, խո-
րանում է ֆեոդալական հասարակության
սոցիալական շերտավորումը, տեղի է ունե-
նում իշխող և ճնշված դասակարգերի հե-
տագա բեռնացում, դասակարգային պայ-
քարը ստանում է սուր և տեղական բախում-
ների բնույթ:

Ձևավորվում է ֆեոդալական հասարա-
կությունից դասային կառուցվածքը բազարա-
յին դասով հանդերձ:

Ֆեոդալական հայրենիք-կալվածքը (վոս-
շինան) և բազարը, իրենց ամբողջությունը
և հեռանկարներով վերցրած, հանդիսանում
են պարզապես ֆեոդալիզմի ամենարևոտ
անտեսական հատկանիշները:

Մասնագետները իրավացիորեն ընդգծում են
փոշինալի խոշոր դերը ուսուց պատմության մեջ,
ֆեոդալական փոշինան համարելով ոչ միայն իրի
անասնաբուծական կազմակերպական ձև, այլև ֆեոդալա-
կան ամբողջ անասնաբուծական սխեմի կենտրոն (Ս. Մ.
Лященко. История народного хозяйства
СССР. том. I. стр. 188—189).

Հայաստանում ֆեոդալական հայրենիք-կալվածք
հանդիսացող հողատիրության ձևերից 9—11-րդ դա-
րերում առավել զարգացում ստացան իշխանական
(ներստյալ նաև արքունական) և վանքային հողատի-
րությունը, իսկ Ռուսաստանի համար բնորոշ մասնա-
վոր տիրույթ փոշինան Հայաստանին ամենին բնո-
րոշ չէր և անհշան չափերով երևան է կելի միայն
12—13-րդ դարերում:

Իշխանական և վանքային սեփական կամ տերունի.
երկրագործական անասնաբուծական առաջացման շնորհիվ
և նրա ընդարձակման համեմատ առաջանում և ըն-
դարձակվում է ճարտությունը և առհասարակ շահ-
գործման աշխատավճարային ձևը, որը տնտեսական
անհրաժեշտություն է գտնում: Բայց հիմնական առ-
տադրողների մեծագույն մասը, ստալվա պես, մնում է
անմիջական ճարտական կախումից ազատ շինականը:

Ֆեոդալական հարաբերությունների նըմանօրինակ զարգացումը նախադրյալներ էր ստեղծել Հայաստանի անկախության վերականգնման համար: Այդ նախադրյալները կարելի է բաժանել երկու խմբի՝ ներքին և արտաքին: Առաջին խմբին կարելի է գասել, ա) երկրում սկսված անտեսական վերելքը, զյուզատնտեսության, արհեստների և առևտրի զարգացումը, որոնց հետևանքով տեղի էր ունեցել անտեսական աճ: Մասնավորապես մեծացել էին հայ ֆեոդալների կառնուտները, տալով նրանց անտեսական գործողություն: բ) Հայկական իշխանական խոշոր տները ամրապնդելով և ընդարձակելով իրենց ժառանգական հողատիրության իրավունքը դարձել էին երկրի հողերի մեծ մասի և հսկայական անտեսական-ուղղման միջոցների տեր, ձևաք էին բերել քաղաքական մեծ ազդեցություն: Բարատունիները մասնավորապես 9-րդ դարում արդեն տիրացել էին երկրի տերիտորիայի մեծ մասին, նրանց ձևաքին էր գտնվում տեղական իշխանությունը և զինվորական վարչությունը, թեև դեռևս արարներին խնամակա վիճակում: գ) Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարում էին երկրի հասարակական բոլոր խավերը, թեև տարբեր նպատակներով ու ակնկալություններով, բայց միահամուռ ուժերով: Բացառիկ նշանակություն ունեցան անընդհատ տեղի ունեցող ժողովրդական ապստամբությունները արաբական լծի դեմ, որոնք խաբխել էին արաբական տիրապետության հիմքերը Հայաստանում և Արաբական խալիֆայի ընդհանուր թուլացման պայմաններում անհնարին էին դարձել այդ տիրապետության հաստատությունը, դրանով իսկ հող էին սրատրաստել երկրի անկախության վերականգնման համար:

Հայաստանի անկախության վերականգնման համար կարևոր նշանակություն ունեին նաև արտաքին նախադրյալները: Դրանք էին.

ա) Արաբական խալիֆայի թուլացումը և

քայքայումը: Դեռևս 9-րդ դարի առաջին երթարդում բանկվեց խուսամյանների երկարատև ապստամբությունը Բաբելի գլխավորությամբ, որը 22 տարի տևեց և հիմնավորապես խաբխել է խալիֆայի հիմքերը: Կենտրոնական իշխանության դեմ ապստամբություններ ծագեցին խալիֆայի բոլոր ծայրամասերում. անկախության էին ձգտում ոչ միայն խալիֆայի լծի տակ ընկած ժողովուրդները, այլև հողային ընդարձակ տիրույթներ ձեռք բերած և սեփական զինված ուժեր ունեցող քիչ թիվ շատ խոշոր արաբական ամիրայությունները: Այս ամենի հետևանքը եղավ Արաբական խալիֆայի կազմալուծումը, մի պետություն, որն առանց այն էլ գուրկ էր քաղաքական միասնությունից:

բ) Արաբա-բյուզանդական պարավոր մրցակցությունից հաղթող գուրս եկավ Բյուզանդիան, որը պատրաստ էր նպաստել խալիֆայի քայքայմանը: Այդ նպատակով բյուզանդական կայսր Վասիլ Ա.-ը, քաղաքական սերտ հարաբերություններ սկսեց Հայաստանի հետ, նպատակելով նրա անկախության վերականգնմանը, մասնավորապես Հայաստանը տերիտորիալ, անտեսական և ուղղման տեսակետից մեծ նշանակություն ունեցող և նրա դաշինքը կարող էր վճարական դեր խաղալ Բյուզանդիայի կատարյալ դերակազմությունը խալիֆայի նկատմամբ ապահովելու գործում: Բնական է, որ կայսրությունը պետք է ձգտեր այդ դաշինքին, իսկ Հայաստանը պետք է աշխատեր օգտուք ազդել դրանից վրձ անկախության վերականգնման համար մղվող պայքարում: Հայտնի է, որ այս ամենը սոսկ ձգտումների շնորհիվ այլ հանգեցին իրական դաշինքի¹:

Երկրի անկախության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները միա-

¹ «Այլև մեծ կայսրն հունաց Բարսել ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան և հաճութեան և սիրոյ հաստատէր ընդ արքային մերոյ Աշոտոյ», — ասում է Հովհաննես Դրասխանակերտցին (տե՛ս «Պատմութիւն», Երուսաղեմ, 1867, էջ 177):

Նյութովն էին: Արաբական խալիֆաթի թուլացումը շատ էր առաջ դնացել և հայֆեոցայնները անգամ Բուգայի հասցրած ծանր նարվածներից հետո էլ շարունակում էին ամրապնդել իրենց զիրքերը: Աշոտ Բագրատունին դառնում է իշխանաց իշխան, և խալիֆը ստիպված է լինում նրան հանձնել հարկահանույթունը երկրից. վերանում են հարկապահանջույթյան ժամանակ դործադրվող դաժան հայանձանքներն ու անասնձկոզուպուսը, որն սեղեկչվում էր ամեն տեւակի կամայականությամբ և շահատակություններով, խիստ նվազում է Հայաստանից խալիֆաթի դանձարանը մուծվող հարկի բանակը: 8-րդ դարի վերջերի 13 միլիոն գիրհեմի փոխարեն 9-րդ դարի կեսերին Արմենիան, ինչպես վկայում է Իբն-Խորդադբեն, մուծում էր միայն 4 միլիոն գիրհեմ հարկ¹, փաստորեն վերացվում է հարկահանության արարական ծանր սխտեմը, այժմ հարկերը Բագրատունիներն էին հավաքում և մուծում խալիֆաթի դանձարանը: Դրա շնորհիվ երկրի հարստությունների մեծ մասը մնում էր երկրի ներսում, նպաստում էր նրա անտեսական զարգացմանը և ֆեոդալների անտեսական ու ռազմական ուժի հզորացմանը: Երկրի իշխանությունը և ռազմական ուժը փաստորեն կենտրոնացել էին Բագրատունիների ձեռքում, իսկ սրանք խոշոր քաղաքական ազդեցություն էին ձեռք բերել և վճռական գերազանցություն ստացել ինչպես արաբական ուստիկանների, նույնպես և մրնացած ամիրաների ու մանավանդ հայ իշխանների նկատմամբ: Բագրատունիներին պակասում էր թագավորական թագը, սրին նրանք ձգտում էին: Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին Աշոտի իշխանաց իշխան դառնալու առթիվ, տեղին նկատում է. «Եւ այսպէս պատուականագոյն և առաջին նա դռեայ կղև քան զամենայն նախարարու-

թիւնս Հայոց, և ամենեքեան զաշինս ընդ նմա զնէին՝ որպէս արդարև ընդ թագաւորական զարմի: Այլ և ի մտի ամենեցուն կղևայ. զի թլ զէպ ինչ պիտոյից զոցի՝ նաև ի տոհմ իւր արժանի լիցի նմա տուչեայ [Թիֆլիսի 1912 թ. հրատ. «ճատչել»] ի թագաւորութեան ցեղս՝ զնոսա որոշել յայլոց նախարարութեան ցեղից»:

Աշոտ իշխանաց իշխանը իրոր դարձել էր երկրի թագավորը ավելի վաղ, քան իբրև ալդայիսին նրան պաշտոնապես ճանաչեց և թագ ուղարկեց Մովսէսի-Բիլլա՝ խալիֆը 884 կամ 886 թվականին:

10-րդ դարի առաջին քառորդում Հայաստանը դեռևս շարունակում էր պաշարք արաբական ռանձգությունների դեմ: 922 թ. նա հաղթող դուրս եկավ այդ պայքարից և վերջնականապես ամրապնդեց իր անկախությունը:

Երկրի անտեսական վերելքի համար խոշոր նշանակութուն ունեցավ խալիֆայությանը վճարվող հարկերի նվազեցումը, ապա և դադարեցումը, որը հավանաբար տեղի բունեցավ նույն 922 թ.: Դեռևս Աշոտ Բագրատունու իշխանաց իշխան դառնալու ժամանակներից (862) հարկերը արարներին վճարում էին անկանոն կերպով, գերազանցապես ռեայ սպանալիքների ղոյության ղեկբերում: Աշոտ Ա-ի թագավոր դառնալուց հետո թեև Հայաստանը դեռևս հարկատու էր համարվում արարներին, սակայն հարկերը վճարվում էին պատերազմական անհաջողությունների ժամանակ և ռազմական տուգանքի բնույթ էին ստացել:

Իրն-Հաուկայի մի վկայութունից երևում է, որ 10-րդ դարի սկզբներին² հարկը

¹ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն, Երուսաղեմ, 1867, էջ 169; Հմմտ. Թիֆլիսի 1912 թվ. հրատարակութուն, էջ 133:

² Իրն-Հաուկայը խոսում է հիշքի 344 (955) թվականի մասին, բայց դա սխալ է: Կրեմերը իրավացիորեն ասում է. Իրն-Հաուկայի գրած ժամանակներում Հայաստանը անկախ էր և հարկ չէր տալիս Բագրատունիներին: (Kremer, Bd. I. S. 343):

¹ A. Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, Wien, 1874, Bd. I. S. 343 և 377:

վճարվել է 4 միլիոն գիրճեմից փոքր ինչ պակաս գումարով: Համաձայն այդ վկայության՝ Վայձուրը (Վայոց ձոր) պետք է վճարեր 50 հազար գինար և տար նվերներ. Բանու-Պայրանը (Վասպուրականի թագավորը) 100 հազար գիրճեմ, Բանու-Սանրատը 2 միլիոն գիրճեմ, որ պակասեցրեց 200 հազար գիրճեմով¹: Վայոց ձորից կամ Այունիքից վճարվող 50 հազար գինարը կազմում էր 1 միլիոն գիրճեմ, նույնքան պետք է լիներ նաև Վասպուրականից վճարվող հարկը: որը սխալմամբ տաս անգամ պակաս է ցույց տրված: Բազրատունիների վճարելիք 2 միլիոն գիրճեմի հետ միասին հարկերի գումարը կկազմեր 4 միլիոն գիրճեմ, բայց Բազրատունիները հարկերի քանակը 200 հազար գիրճեմով ևս պակասեցրել էին:

Պետք է նկատի ունենալ, որ բացի Արմենիա արարական վարչական միավորից հարկերը վճարում էին նաև հարավային Հայաստանի այն դավառները, որոնք չէին մտնում այդ միավորի մեջ: Արարացի հեղինակ Կողաման ցույց տալով Արմենիայի հարկը 4 միլիոն գիրճեմ, դրանից առանձին հիշատակում է Արզնի և Մայաֆարկինի հուհանգից ոտնձուլող հարկերը՝ 4,100 հազար գիրճեմ և Տարոնից դանձվող հարկերը՝ 1 միլիոն գիրճեմ²: 10-րդ դարում արարական խալիֆայի հարկ չէր վճարում նաև Տարոնը, իսկ Արզն-Մայաֆարկինի նահանգի մճարած հարկերը նախկինի պես ծանր չէին: Հետագայում այդ հարկերը մնում էին անգում գոյացած ամիրայությունների ներսում:

Հայաստանի անկախության վերականգնումը և արարների օգտին հարկատվության դադարեցումը խոշոր նշանակություն ունեցան երկրի տնտեսական, քաղաքական և կայսրության նոր ու տեական վերելքի համար:

¹ СМОМПК, вып. XXXVIII, стр. 105.

² А. К рем е р, Culturgeschichte des Orients, Bd I, S. 368.

Ժամանակակից պատմիչները միաբերան նշում են երկրի շենանալն ու տնտեսական վերելքը Բազրատունիների ժամանակ: Հովանենս Դրասխանակերտցին Բազրատունի առաջին թագավորների ժամանակի մասին գրում է.

«Թակ աշխարհս Հայաստանեայց յաւուրսն յայնոսիկ այց արարեալ Տեառն, և պատըսպարեալ և յաջողեալ ի բոլոր բարութիւնս, բնակեցան իւրաքանչիւր ոք ի ժառանգութիւնս իրեանց. և սեփհականեալ զերկիր՝ տնկեցին այգիս, և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին ձերկս արտաքոյ փշոց, և կթեցին պտուղս հարիւրաւորս, զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. լցան գուրք զինուոյ ի կուխս այդեստանեայց, և լերինք ցնծութիւն զդեցան, զի բազմացան ի նմա արօտականք անդեայք արջառոց և հօտք ուխտըաց»¹:

Հեղինակը խոսում է նաև ավաններում և ազարակներում կատարվող շինարարություն², քաղաքների, շեների ու դաստակերանների բարգաւաճման մասին³:

Ստեփանոս Տարոնացին խոսելով Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի ժամանակների մասին, նույնպես վկայում է, թե «էր շինութիւնս և խաղաղութիւնս աշխարհիս Հայոց», և դրա շնորհիվ ազարակները ավան են դառնում, ավանները՝ քաղաք բազմամարդավայմք և ընչեղությամբ⁴:

Երկրում սկսված վերելքը տեւելով Բազրատունաց թագավորության ամբողջ ժամանակաշրջանում, շրջհաստվեց նրա անկումով (1045) ու շարունակվեց մինչև սելջուկյան նվաճումները:

¹ Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո զ ի կ ո ս Դրասխանակերտցի, Պատմութիւն, էջ 250—251:

² նույն անգում, էջ 251:

³ նույն անգում, էջ 176:

⁴ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ռ ո ն ա յ ի, Պատմութիւն, էջ 161:

4. ԵՐԿՐԻ ԱՐՏԱԿՐՈՂԱԿԱՆ ՈՒՓԵՐԻ ԱՃՐ

9—13-րդ դարերի մատենագրական աղբյուրները, նյութական կուլտուրայի հուշարձաններն ու հնագիտական նյութերը թույլ են տալիս ակնառու կերպով հետևելու շիշյալ դարերում Հայաստանում տեղի ունեցած անաստեղծ ու կուլտուրական դարդացման ինչպես վերելքին, նույնպես և խոշոր տատանումներին:

Ֆեոդալական անաստեղծության հիմքը կազմում է երկրագործությունը, ռուսի արտադրողական ուժերի աճի մասին խոսելիս նախ՝ պետք է տեսնել, թե ինչ էր տեղի ունենում այս բնագավառում: Աղբյուրները թույլ են տալիս պնդելու, որ երկրագործության մեջ որոշ առաջադիմություն նկատվում էր: Այդ վերաբերվում է երկրագործական տեխնիկայի որոշ կատարելագործմանը, սոսոկելի տարածությունների ընդարձակմանը, նոր ջրանցքների անցկացման միջոցով, այգեգործության, մանավանդ տեխնիկական մշակութայինների աճին, երկրագործական մթերքների վերամշակման զծով տեղի ունեցող փոփոխություններին:

Շատ հին ժամանակներից սկսած Հայաստանում հողը վարել են արտրով, գործազրբվել է նաև գուլմանը: Էժկան անաստեղծներ եղել են եզր և գոմեշը, իսկ ձին օգտագործվել է հեծնելու և բռնելու համար: Թե ինչ տեսք է ունեցել գուլմանը շատ հնում՝ մեզ հայտնի չէ, սակայն ոչ ուշ քան իններորդ դարի գուլմանի խոփի և գոնվելի Զվարթնոցում, որի շտիկերն են՝ երկարությունը 40 սմ, լայնքը 25 սմ, գուլմանի կարող է հողի մեջ մտնող մասը 27 սմ, այլ խոսքով գուլմանը կարող էր վարել հողը մինչև 27 սմ խորությունը (նկ. 1):

Նման խոփ ունեցող գուլմանը վարում էր երկաթե խոփ ունեցող արտրից սովելի խորը և շնորհիվ խոփի նկատելի կորրեկցիայի վրա մասամբ էլ շրջում էր հողը: Սակայն դա ծանր գուլման էլ չէր, որին լծելն 6—8 լուծ էլ, կարծում ենք գոնվածը այն տիպի

գուլմանի խոփն է, որը 10—11 դարերի աղբյուրներում կոչվում է վեցկի կամ վեցկի՝, որին լծել են երեք լուծ կամ վեց էլ (այստեղից էլ կարող էր ծագել նրա անունը): Նման գուլմանը գործադրվել է նաև հարևան



ՆՔ. 1. Գուլմանի խոփ, Զվարթնոց 9—10-րդ դդ., ՊՊԹ N 1649:

Արդարելում, որի մասին վկայությունն ունի 10-րդ դարի արար հեղինակ ալ-Մուկադդասին. սրա տեսլով, եզրերի չափաբանչուր լծի համար կար մի զշոգ¹:

Բայց, ինչպես երևում է, 10-րդ դարում կամ դրանից քիչ հետո երկրագործության մեջ սկսել են կիրառել նաև ծանր գուլմանը, որն ունեցել է սովելի մեծ խոփ, աշխատել է անիվի օգնությամբ, հույնիսկ ունեցել է ձեղն, որը խոփի առջևից ճեղքում էր հողը և հնարավոր դարձնում շուտ տալ հողի այն շերտը, որն բնկնում էր սկոսի և ձեղնի միջև: Զեղնով մեծ խոփի գոնվել է Անիի պեղումների ժամանակ²: Սա արդեն մեծ առաջադիմություն էր երկրագործության մեջ:

Անիվի օգնությամբ աշխատող մեծ գուլ-

1 Կիմական տարեգիր, էջ 27:

2 СМОПН, вып. XXXVIII, стр. 16:

3 Н. О р б е л и н. Каталог Анникого музея древностей, СПб, 1910, стр. 115:

Սանի մասին հիշատակություն կա նաև մասենադրական աղբյուրներում: Առաջել Սյունեցին «գունդ» բառի ստուգարանության կադակցությամբ հիշատակում է մի շարք անիվավոր սարքեր, դրանց թվում նաև գուլիանը. «Իսկ գնդական արհեստը ամենայն գնդաձև մարմնով առնէ՝ զգործ իւր և գնդական ասի՝ որպէս սայլն, որ հոյսվի շարժմամբ և ջահրի գունդն և գունդն գուրանին և ջրաղացին կունդն և քարն»¹:

Հեղինակը գուլիանի անիվը հիշատակում է եզակի թվով, որից կարելի է ենթադրել, թե մեծ քուլիանը ուներ խոփի հակից պտրտող և գուլիանի աշխատանքը հեշտացնող մի անիվ, որպիսի գուլիանի գոյությունը հնում հաստատվում է նաև աղագորական ավայրներով:

Ծանր գուլիանը գործադրվում էր ֆետրայական խոշոր անտեսությունների մեջ, որոնց ձևավորումը և ընդարձակվելը 9—10-րդ դարերում մի նշանակալից առաջընթաց էր երկրագործության բնագավառում:

Գիտական գրականության մեջ նշվում է նաև, որ 9—10-րդ դարերում երկրագործության մեջ մտցվում է եռադաշտը²: Միամիգամայն հնարավոր համարելով այդ, միաժամանակ հարկ ենք համարում ասել, որ սկզբնաղբյուրներում այդ բանը հաստատող փաստորկ մենք չգտանք, ուստի դա մնում է իբրև հնարավոր ենթադրություն, որն ապացուցման կարիք ունի:

Մասենադրական աղբյուրներում վկայություններ կան, որ մեծ հետաքրքրող ժամանակներում կիրառվում էր նաև պարարտացումը աղբով³, մոխրով: Վիմական արձանագրություններից երևում է, որ պարարտացված հողերը կոչվել են աղբայինք և

¹ Մասենադրանի ձեռագիր № 7550, էջ 79ա: (Ընդգծումը մերն է—Բ. Ա.):

² С. Т. Еремян. Армения в IX-первой четверти XIII в. Очерки Истории СССР. Период феодализма, IX—XV вв. ч. I. Москва 1953, стр. 590.

³ Ֆրիկի մոտ կարգում ենք. «վարպետ մ'երեկ գեծ խիստ ճարտար, դադն կրկ արտի համար» («Բանա-

րարձը են դնահատվել»: Տվյալները քիչ կան դատելու, թե որչափով էր կիրառվում հողերի պարարտացումը, սակայն դա նշանակալից երևույթ էր երկրագործության առաջադիմության տեսակետից: Հայաստանում մշակվում էր նաև առվույտը և շինուկամները գարավոր փորձով գիտեին, որ առվույտի տեղում ցանած կուլտուրայից մեծ բերք է ստացվում:

Դաշտավարության մեջ կիրառվում էր նաև մոլախոտերի հեռացում-քաղհանը⁴:

Հայ ժողովուրդը այդեգործության և պտղաբուծության դարավոր փորձ ուներ և խաղողի, պտղատու ծառերի այգիները լավ մշակելուց, փորելուց, ոռոգելուց, պարարտացնելուց բացի կիրառում էր մրգատու ծառերի պատվաստում, մշակվող կուլտուրաների սերմացուի ընտրություն, պաշքարում էր այգիների վնասատուների և հիվանդությունների դեմ: Այս առթիվ ուշագրավ վկայություններ գտնում ենք 12—13-րդ դարերի հեղինակներ Ներսես Շնորհալու և Ֆրիկի մոտ⁵:

ստեղծություններ», Երևան, 1941, էջ 210): Հունարևից հայերեն թարգմանված, բայց հայկական միջավայրում լայնորեն հայտնի «Գիրք վաստակոց»-ում, (դ. ԼԳ) ասվում է. «Թաղում և հողով անգամ պարս է աղբով զվատ դեռինն և ոչ մէկ հեռ. դի թէ հեռ ու հեռ չաղբի, նա պաղ լինի»:

¹ Վիմական տաբեղիր, էջ 248:

² Ֆրիկի մոտ գտնում ենք՝ «Սպրբիկ քաղհանի յերակ, մի թողուլ զփուշն ի յատակ» («Բանաստեղծություններ», էջ 59):

³ Այգիների և պարտեղների նկատմամբ հասուկ ուշադրության և հոգատարության, մրգատու ծառերի պատվաստման, հիվանդությունների բուժման մասին տե՛ս Ներսես Շնորհալի «Թուղթ քնդհանրական», էջ 29—31: Խաղողի այգին Ֆրիկի մի բանաստեղծության մեջ պահանջելով, որ այգեգործը իրեն լավ մշակի ստում է.

Ձիս յօտլ ւ ի խոր փորէ,

Որ ես դարթչիմ զուարթանամ...

Առողա յորդ վտակով,

Որ կանաչեմ և մանկանամ...

Յիս սընոյ և դարմանէ,

Որ ի ժամու պտուղ քեզ տամ:

(Ֆրիկ, «Բանաստեղծություններ», էջ 66—67):

Յամաքային կլիմա ունեցող Հայաստանի Յամար խոշորագույն նշանակություն է ունեցել ոռոգելի ջուրը և հնագույն ժամանակներից ի վեր երկրում անցկացվել են բազմաթիվ ջրանցքներ ու առուներ: Հնագիտական, արձանագրական և մատենագրական տեղեկությունները պարզ ցույց են տալիս, որ ոռոգման ուղղութեամբ բավականաչափ լայն աշխատանքներ են տարվել նախաուրարտական, մանավանդ ուրարտական և հայկական թագավորության՝ Երվանդունիների, Արաշեսյանների, Արշակունիների ժամանակաշրջաններում: 10—13-րդ դարերում ջրոռոգման ուղղութեամբ տարվող աշխատանքները ավելի լայն շափեր են ստանում քան այդ արվում էր նախորդ մի քանի դարերն ընդգրկող վաղ ֆեոդալական ժամանակամիջոցում: Ճիշտ է, մեզ հասած տեղեկությունները շատ կցկտուր են, բայց և բնորոշ են, քանի որ վերաբերում են երկրագործական կարևոր նշանակություն ունեցող Շիրակ, Վասպուրական նահանգներին և Սյունիքին:

Դեռևս 783 թ. ունի Ուխտատուր վանական իր եղբայր Տոտի հետ միասին, արձանագրություն են թողել, որտեղ ասված է «Բերաք գաղբիւրս ի Սարկապանու գաշտէն ի Թալին. թէ յիշխանաց որ խեցեք, իմ մեղացըս պարտական եղիցի»¹: Սա կարող էր լինել թե խմելու և թե թոռոգելու ջուր, որ երեւում է իշխանների կողմից խլվելու վտանգի հիշատակությունից:

10-րդ դարի սկզբներին Սյունիքում հանվել է մի մեծ առու Ջագեձորս Վարարակն կոչվող գետակից: Ստեփանոս Օրբելյանն այդ առթիվ թողել է ընդարձակ տեղեկություններ, որոնցից մեզ ենք բերում մի բնորոշ հատված՝ «Եւ բազում աշխատութեամբ և մեծամեծ ծախիւք ածեալ էր (ջուր) ի լեռնէն Ջարէձորոյ և բերեալ ի Յաքուտն, որ հանդէպ վանիցն յայնկոյս գետոյն. և արար դամենայն վայրն տուապար և միշա-

լից՝ վարդուա և տնկալից. տնկեաց բազում սչգիս և որմս սորեկս, էարկ տունկս քանազան պտղաբերաց՝ ձիվենիս և թղենիս և նունենիս. և յամենայն մրգաբերաց արար դրախտս գարմանալիս. և գարգարեալ զբոլար վայրն ընդարձակագոյն Սանձրախիտ ծառովք և քաջուղէշ որթովք ի վայելումն կորաչրովեանն»²:

Վարարակն ջուրը պատկանում էր Սյունյաց Փիլիպի իշխանին, իսկ Սյունյաց Հակոբեպիսկոպոսը այն գնել էր, վճարելով 12000 դրամ և մի պատվական դոճար: Նա համել է տալիս առուն, որն անվանված է մասաակ, այսինքն մայր առու, որն անցնում էր մի քանի գյուղերի սահմաններով, բայց վանքը արդելք էր դրել այդ ջրից օգտվելու վրա: «Եւ շկա յայս ջրոյս հաշիւ ոչ Նորեցեաց, ոչ Խոտանանեցեաց, ոչ Շնհէրացեաց կամ Հալեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ վտրել և ոչ ի մարդ և ոչ պարտիզի ջուր տալ դատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և ամասնոյ»³:

985 թվականին հանվել է Բյուրականի Հայաթաղի առուն³:

1008 թ. հանվել է Գնդեվանքի առուն, որը պատկանել է նույնանուն վանքին: Այս առուն սկիզբ առնելով Ջլնարած գետի սկունքներից, անցնելով մի քանի գյուղերի սահմաններով, սոսոգում էր վանքի հողերը: Վանքը արգելել էր ուրիշներին օգտվել այդ առվից: «...Ջանհուն առապարն անջրդի արար ջրաբբի,— դրում է պատմիչը,— և դամենայն լիտնակողմն. յորում ոչ դոյ ումեք հաշիւ՝ ոչ Պրակեցեաց, ոչ Կեչուտեցեաց, և ոչ այլ սահմանակից զիւղօրէիցն և ոչ այլ ումեք»⁴:

1198 թ. ոռոգելու, թե խմելու ջուր է բերվել Հոռոմոսի վանքը⁵: 1235 թ. նույն վանքի

¹ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 253—254:

² Նույն տեղում, էջ 255:

³ Վիմական տարեգիր, էջ 9:

⁴ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 262—263:

⁵ Վիմական տարեգիր, էջ 39:

¹ Վիմական տարեգիր, էջ 2:

համար հեշտը վահրամը «երևր զմիս ջուրս»¹:

Վասպուրականում օգտագործվել է Արտուս լեռից իջնող ջուրը²: Բազմաթիվ հիշատակություններ կան ջրի արակալությունների մասին: Քրիստոսը ֆեոդալներին պատկանելու և նրանց կողմից ջրի օգտագործումը անօրինելու և կարգավորելու, այդ առթիվ գյուղերի միջև ծագած վեճերը լուծելու վերաբերյալ³, որոնք ցույց են տալիս, որ ստեղծվել էր կարգավորությունը ստացել էր խոշոր նշանակություն:

Նոր ջրանցքների անցկացումը և ստեղծվել էր կարգավորության աճը զգալի շարժում բարձրացնում էր հողի, իրրև արտադրության հիմնական միջոցի դերն ու նշանակությունը, յուրացվում էին դարերով խոպան մասացած նոր հողեր: Այս ամենը նպաստում էր երկրի տնտեսական վերելքին:

Խոշոր էր ստեղծվել կարգավորության դերը, մանավանդ պաղատու և խաղողի այգիների, խնայես և տեխնիկական կուլտուրաների բնածառ աստվածությունների բնագործակիման համար:

Խաղողը և դրա հիման վրա զարգացող գինեգործությունը Հայաստանի տնտեսության մեջ կարևոր տեղ էին գրավում, ինչպես դա երևում է Կարմիր-բլուրի պեղումներից, դուռնու ուրարտական ժամանակներից սկսած⁴: Արարատյան դաշտի այգիներն ու խաղողի հնձանները հիշատակված են նաև հայ հին մատենագրության մեջ⁵: Իզուր չէ, որ խաղողի որթը հայկական քանդակագործության մեջ ամենասիրված մոտիվն է եղել: Մրգերից առաջին տեղը բռնում էր ծի-

րանը, ապա դեղձը, խնձորը, տանձը, սալորը: Որոշ դավաճաններում աճում էին նաև լեռնալույս, ձիթալույս: Իրեն-Հատկալը Հայաստանի մասին ասում է. «Մրգաստաններ, այգիներ, արմաթք, թթենի, ամեն ինչ կարելի է գտնել այնտեղ, մինչև իսկ շաքարեղևը»⁶:

Նկատելիորեն ընդարձակվում է տեխնիկական կուլտուրաների՝ բամբակի, վուշի, քունջութի, կանաչի մշակությունը:

Խոշոր դեր էր խաղում բամբակենու մշակությունը: Ռե երբ էր մտել այդ կուլտուրան Հայաստան, դժվար է ասել, այնուամենայնիվ նա հիշատակված է 7-րդ դարի Հայկական աշխարհագրության մեջ, որտեղ ֆեոդալարան նահանգի մասին ասվում է. «Լինի ի նմա բամբակ անբաւ և դարի ինքնարոյս»⁷:

Միջին դարերում բամբակենին լավ հայանի էր ու տարածված Անդրկովկասի և Հայաստանի շատ վայրերում, մանավանդ Արարատյան դաշտում⁸: Բամբակը մասսայաբար օգտագործվում էր գործվածքներ արտադրելու համար: Մի վերին աստիճանի բնորոշ առակ՝ հանդիպում է Մխիթար Գոշի մոտ, որ մեջ ենք բերում ամբողջությունը.

«Մերձ առ սօսի առողանէին երկրագործք զբամբակենիքն, և միմեանց պատուիրէին զգուշանալ, զի մի՛ դժառս կոխեսցեն զբամբակենիս. և լուեալ սօսոյն զչարացալ՝ կոչելով զնա ծառ, ասաց. Զիա՞րդ ինձ համարուն կոչի դա ծառ, զի ես այսքան ստուար և բարձր եմ, և զբազում տեղիս ըմբռնեալ ունիմ: Եւ լու ի լու ոչ զանգիտեալ՝ պատասխանեալ բամբակենի ասելով. Բարձր ես և ստուար, սակայն անօգուտ. ոչ ի շինուած և ոչ ի պտուղ և ոչ յայրուսնս գովելի:

¹ Վիմական տարեգիր, էջ 146:

² Թոփմա Արծրունի, Պատմութիւն, էջ 476:

³ Տե՛ս Վիմական տարեգիր, էջ, էջ 3, 20, 28, 37, 47, 133, 142, 148, 164: Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ, էջ 178, 182, 205, 217, 229, 252, 270, 294—295, 328, 356—357, 361, 366 և այլն:

⁴ В. В. Пнотровскнй, Кармир-блур I, стр. 30—31. Кармир-блур II, стр. 16—19.

⁵ Աղաթանգիոս, Պատմութիւն Հայոց, Տրիփոլիս, 1909, էջ 85:

⁶ Իրեն-Հատկալի այս տեղեկությունը մեջ է բերել Հ. Նալբանդյանը «Արարական աղբյուրները հայերի ու Հայաստանի մասին» աշխատության մեջ, որի ձեռագրից և օգտվել ենք:

⁷ Անանիա Շիրակացու Մատենագրությունը, Երևան, 1944, էջ 350:

⁸ Վիմական տարեգիր, էջ 129, 138:

այլ թանձր սունկով ստուեր, չորմէ բամբու-
սիս մանաւանդ քան գովիւս. իսկ ես թէ-
պէտ փանաբի և տկար, այլ բազմաշա՛ւ ոչ
միայն մեծատանց, այլ և ազբատաց, ի
սածել, ի քաղել և ի գործել, և լինիմ հան-
դերձ որպէս զասը յոշխարաց և զվուշ ի
կտակ և զմետաքս չորդանց. չորոց և զու-
սչ ինչ ունիս բնաւ, բայց միայն խողակ: Եւ
այսու յանդիմանեալ լռեաց»¹:

Հայաստանում բավականաչափ զարգա-
ցած է եղել նաև շերամապահութիւնը, որը
դեռևս 6-րդ դարում զարգարեց միայն Չի-
նաստանի գաղտնիքը լինելուց և հայանի
դարձավ Բյուզանդիայում, Մերձավոր Արևել-
քում, Միջին Ասիայում, նաև Անդրկովկա-
սում: Այդ զբաղմունքը ժողովուրդը անվա-
նել է շերամապահուրյուն ևս «որդ պահեթ»,
իսկ այն շենքը, որտեղ պահել են շերամի
թրթուրները, կոչվել է որդնանց:

Մխիթար Գոշը մի առակ ունի նաև շե-
րամապահութիւնի վերաբերյալ: Չիթենին
պարծենում է, թե ձեթ է տալիս, սրը նշով
է լուսավորութեան համար, իսկ թթենին
պարծենում է «քի քաղցրութեան պաղոյ, և զի
սաղարթ իւր նիւթ մետաքսոյ է, զոր որդունք
ծնանին, չորմէ կերպասք լինին, զոր թա-
զաւոր և իշխանք վայելեն»²:

Ներսէս Շնորհալիին թթենուն և շերամին
նվիրել է երկու հանկուղի:

«Ձայն ծառն տես, որ կու ծաղկի.

Տերեն է իւրն զերդ ըզկաշի,

Նարմով զգեստ մարդկան լինի,
Խիստ վայելուչ և ցանկալի»³:

«Կարգաւ ի շուրջ եկի մենակ,

Եւ ոչ գտայ իւր նրմանակ,

Որդան եղև ինքն ճաշակ,

Թագաւորաց անգին դիպակ»⁴:

¹ Մ խ ի Թ ա Ր Գ ո շ, Առակներ, Երևան, 1951,
էջ 54—55:

² Նույն տեղում, էջ 50:

³ Մատենադարանի ձեռագիր N 7703, էջ 100ա—
100բ:

⁴ Նույն տեղում, էջ 100բ:

9-րդ դարի հայագիր չեղինակ Նանա
ասորին, իր «Մեկնութիւն Յովհաննու Աւե-
տարանին» աշխատութեան մեջ գրում է.
«Որոց թագաւորական ծիրանիսն ստանալ
փափագին՝ ի զարանաց վայրենեաց սրտան
զշահաւոր պատուականութիւնն: Իսկ ոմանք
յայլ իմն տկարագոմնիցն չորդանց զարգա-
ցելոց հարստանան, չորոց մետաքսն յատուչ
զան...»¹:

Շերամապահութիւնը ոչ միայն հայանի
էր, այլև հանդիսանում էր եկամտի աղբյուր:

Հայաստանի դաշտավար գյուղացին մը-
շակում էր հացարուցներ, յուղատու և թն-
լատու բույսեր, քունջութ, կտավատ, բամ-
բակ, կանեփ, փնչպես և զանազան պարտե-
զային կուլտուրաներ ու խոտարուցներ:
Դաշտավարութեանը ապահովում էր երկրի
հացի պահանջը, այլև որոշ քանակութեամբ
հաց արտահանում էր հարեան երկրները.
օսինակ Տարաբին վկայում է, թե Հայաս-
տանը հաց էր արտահանում Բաղդադ²: Հա-
յաստանի մի քանի գավառներն ու հովիտ-
ները՝ Շիրակը, Տարսնը, Բագրևձառը (Ա-
լաշկերտի հովիտ) համարվում էին հացի
շտեմարաններ:

Երկրագործութիւնը երկու ճյուղերով՝
դաշտավարութեամբ և այգեգործութեամբ
հայ ժողովրդի հիմնական զբաղմունքն էր
և նրա եկամտի գլխավոր աղբյուրը, միա-
ժամանակ արամադրում էր բաղմազան
մթերքներ և նշույթներ՝ քաղաքներին և ար-
հեստավորներին: Բնական է, որ առանց
զարգացած երկրագործական գավառի առ-
կալութեան քաղաքներ չէին առաջանա, ար-
հեստները չէին զարգանա: Քաղաքների ան-
ջատումն ու զարգացումը իրենց հերթին ըզ-
պալիտրեն նպաստել են երկրագործութեան,
այգեգործութեան, տեխնիկական և պարտե-
զային կուլտուրաների տարածութիւնների
աճին:

¹ Գ ա Ր Ե գ ի ն Ա կ ա թ ո Ղ ի կ ո ս, Յիշատակա-
րանք ձեռագրաց, հատ. Ա, Ե դարից մինչև 1905 թ.
Անթիլիաս, 1951, էջ 61:

² S. Tabari, III, 272, 275:

շատ խաղաղորդների ու կառավարիչների մոտ և շի տեսել ավելի հարուստ և անասունների թվով ավելի նշանակալից մի երկիր, քան Արմենիան»¹:

Բնակչության անտեսության մեջ սրոշ գեր խաղում էին նաև որսորդությունը, ձրկնորսությունը և մեղվաբուծությունը: Միջնադարյան արքայությունները շատ ուշադրով տեղեկություններ են պահպանել հատկապես ձրկնորսության վերաբերյալ: Վանա լիճը և նրա մեջ թափվող գետերը, Սևանա և մյոսս ավելի փոքր լճերը, Արաքս և այլ գետերը նշակված էին իբրև ձրկնորսության վայրեր:

Վանա տառևխը այդ զրված վիճակում տարածվում էր երկրով մեկ և ինչպես վկայում են արաք հեղինակները մեծ շափերով արտահանվում էր երկրից դուրս:

Իրն-ալ-Ֆակիհը, Ալ-Իսթահրին, Յակուարը և ուրիշ արաք հեղինակներ վարմանքով են խոսում տառևխի առատության մասին Վանա լճում և ընդգծում են այդ դրած վիճակում այդ ձկան արտահանությունը շատ երկրները²:

Երկրագործական մրեբֆնեբի վերամշակումը: Երկրի արտադրողական ուժերի աճը արտահայտվում էր նաև երկրագործական և անասնապահական մրեբներքների վերամշակման բնագավառում: Անհամեմատ ընդարձակվում են գինեգործությունը, ձիթահանությունը, սովորական երկվույթ են դառնում և լայն տարածում ստանում ջրաղացները:

Այգեգործական շրջաններում ամենուրեք կային հնձաններ, խաղողը ձմելու և նրա բաղցուից գինի, դոշար պատրաստելու համար: Հնձանները սովորաբար պատկանում էին ֆեոդալներին և այլ խոշոր տնտեսատերերին:

1 СМОМПК вып. XXXI, стр. 29. Որտեղ Հաստան անվան փոխարեն գործածում ենք Արմենիա անունը, պետք է հասկանալ արաքական վարչական միավոր Արմենիան, որի մեջ մտնում էին և Առանն ու Վրաստանի մի մասը:

2 СМОМПК, вып. XXXI, стр. 35. Там же вып. XXIX, стр. 25. Յակուար I, 513:

Խաղողի հնձաններ Հայաստանում եղել են հնագույն ժամանակներից: Կարմիր-բլուրի պեղումները ցույց են տալիս, որ այդպիսի հնձաններ այստեղ եղել են ուրարտական ժամանակաշրջանում¹: Ագաթանգեղոսը խոսում է հին Վաղարշապատի հնձանների մասին²: Հետագայում ևս այս կամ այն առիթով հնձաններ հիշատակվում են: Մի վարքագրության մեջ, օրինակ, կարդում ենք Վաղողի հնձանի, քաղցու ձմելալի կարատի³:

Պեղումների ժամանակ Գլինում և Գառնիում բացվել են գինու հնձաններ և մառաններ, որոնց մեջ դասավորված էին կարասներ:

Գառնիում բացված հնձանները թույլ են տալիս գաղափար կազմելու թե ինչ տեսք ունեին նրանք միջին դարերում: Այստեղ, ամրոցի տերիտորիայում (որի միայն մի մասն է պեղված) բացվել են 12—14-րդ դդ. 8 հնձանի մնացորդներ: Դրանք սովորաբար բաղկացած են երկու փոքրիկ սենյակից, որոնց հատակը և պատերը որոշ բարձրությամբ սվաղված են լինում կրով կամ գաճով: Յուրաքանչյուր սենյակում կամ նրանցից միայն մեկում փորված է լինում մի մեծ հոր, որի պատերը շարված են ոչ խոշոր անմշակ որձաքարերից, իրար ամրացված կրաշաղաղով: Հորի պատերը և հատակը սվաղված են լինում կրով կամ գաճով, պատերի վրա ներսից գուրս ցցվող քարերի օգնությամբ հարմարանք է ստեղծված հորի մեջ իջնելու, ինչպես և այնտեղից դուրս գալու համար: Հորի բերանը նեղ է և ծածկված է լինում բոլորակ ձևի լավ մշակված մեկական կամ երկուական սալաքարերով, որոնց կենտրոնում փորված է լայն անցք, որը

1 Б. Б. Пиотровски й, Кармир-блур I, стр. 31. Кармир-блур II, стр. 16, 28, 31 и 91.

2 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Պատմություն, էջ 85, 90, 104:

3 Յայամուտքը փետրվարի ԺԱ: Հնձանում խաղող ձմողը կոչվել է հնձանահար (Ծոպի, ԿԳ. 1):

փակվել է քարե խցանով: Դեպի ցած հորը շատ լայնանում է: Հնձանի սենյակներից մեկի հորը ունենում է հարթ հատակ, իսկ երկրորդ հորի հատակի կենտրոնական մասում փորված է հատուկ փոս, նույնպես լավ սվաղված: Այս փոսը ունի շրջված կոնի՝ ձև, որի բացվածքի տրամագիծը կազմում է 0,50—0,70, մ, իսկ խորությունը 0,30—0,45 մ: Դա հարմարություն էր տալիս քաղցուն կամ գինին հորից հանել մինչև վերջին գավաթը: Բայց եթե միայն դրանով բացառելու հորի հատակին փորված փոսի անհրաժեշտությունը, ապա հմաճն փոս պետք է ունենային բոլոր գինու հորերը: Սավայն հիմքեր կան պնդելու, որ հնձանների այս մեծ հորերի մեջ քաղցուն պահվում էր մինչև նրա խմորվելը: Դեռևս խմորումից առաջ քաղցուն սպաղվելով նստվածք էր տալիս հորի հատակին ձագարած փոսում, ուստի կարելի էր աճն փոխադրել, առանց վախենալու, թե կպղասովի:

Գինու հորերի հատակին պահպանվել են ինչ որ դեղնավուն զանգվածի մնացորդներ: Հնարավոր է, որ այդ զանգվածը գոյացած լինի քաղցուի կամ գինու նստվածքից: Որպեսզի գինին զերծ մնար զանազան հիվանդություններից՝ այն ախտահանում էին ծծմբով, վերջինս հորի վրա կարասի մեջ վառելու եղանակով: Գինու ախտահանումը ծծմբի օգնությամբ Հայկական լեռնաշխարհում շատ հին գործադրություն է ունեցել և հայտնի է դեռևս ուրարտական ժամանակներից¹: Հորերի պատերը կրով կամ դաճով սվաղելով և անասոճնի հալած ճարպ քսելով կարելի էր նրանց մեջ գինին պահել շատ երկար ժամանակ և առանց կորուստների: Գինին հորերում պահելու սովորությունը շատ տարածված է եղել և նման հորեր հանդիպում են շատ վայրերում, մասնավորապես միջնադարյան վանքերի բակերում:

Այդ սովորության վերաբերյալ կա և Ստեփանոս Օրբելյանի վկայությունը: Նա պատմում է, թե արաբները 10-րդ դարի սկզբին ասպատակելով Հայաստանը մտել էին և Սյունյաց աշխարհը, որտեղ ավերել էին սյունյաց իշխանանիստ դաստակերտը (Նվեգիքը) և մեծամեծ ավանները, որտեղ «Ունայնացեալ (էին) զամբարս ցորենոյ և խորտակեալ զգուբս գինւոյ»²:

Դեռևս շատ հնում սովորություն է եղել հնձանները կառուցել շենքերի ներքնահարկերում: Վաղաքապատ քաղաքի հյուսիսարևելյան մասի Այգեստանի հնձանները և հնձանահարկերը, դեռևս 3-րդ դարի վերջերի և 4-րդ դ. սկզբներին հիշատակում է Ագաթանգեղոսը²:

Անկասկած է, որ զգալի թվով հնձաններ կային Հայաստանի միջնադարյան այն քաղաքներում, որոնք տեղադրված էին այգեկուրծական շրջաններում:

Հայաստանի հովիտներում և նախալեռնային վայրերում տեղադրված քաղաքներում շատ կային ձիթահաներ, յուղատու բույսերի՝ կտավատի, բունջուլի սերմերից ձեթ հանելու համար: Դրանք պատկանում էին ֆեոդալներին, մեծատուններին, նաև վանքերին, փնչպես դա պարզ երևում է վիմական արձանագրություններից:

Ձիթահաները ձեթ հանում էին ոչ միայն տվյալ անտեսության մեջ ստացված կտավատից ու բունջուլից, այլև որոշ վարձով վերամշակում էին ամեն մեկի բերքը: Դրա շնորհիվ էլ ձիթահաները աշխատանք էին ունենում երկար ժամանակ և մեծ օգուտներ էին բերում իրենց տերերին: Ձիթահանում կտավատը մաղելուց, մաքրելուց հետո բովում էին, ապա ճմլում, մանրում: Հնագիտական տվյալները ցույց են տալիս, որ դրա համար ձիթահանի հատակին գետնի մեջ խցեցված էր լինում բազալտից կամ գրանի-

¹ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 193:

² Ագաթանգեղոս, Պատմութիւն, էջ 85, 90, 104:

¹ Б. Б. Пнотровский, Кармир-базр. III, стр. 15.

տից շինված մեծ կալաքարը, որն ունենում էր ընդարձակ հարթ մակերես, իսկ եզերքները բարձր էին լինում տաշտի եզերքների պես, բայց ոչ շատ բարձր: Կալաքարի վրա լցվում էր բովված կտավատը, որը ազապ-վում, փոխինդ էր դարձվում՝ ջաղացաքարի նման, բայց նրանից ավելի հաստ ու ծանր ձիթաքարով, որը նույնպես շինվում էր բազալտից կամ գրանիտից: Ձիթաքարի եզրերը հարթ ու լայն էին լինում և շարժանակի հզկված, իսկ կենտրոնում լինում էր առանցքակալ անցքը: Այս անցքի միջով անցնում էր ձիթաքարի առանցքը, որի մի ծայրը սմբացված էր լինում կալաքարի կենտրոնում անկված մետաղե ձողին, իսկ մյուս ծայրը դուրս էր գալիս կալաքարի եզերքից և հարմարեցված էր՝ նրան գոմեշ լծելու համար: Ձիթաքարը դոմշի ուժով պտտեցվելով մանրում էր բովված կտավատը և փոխինդ դարձնում: Այնուհետև փոխինդը մազվում էր, նորից լցվում կալաքարի մեջ, վրան տար ջուր ավելացվում և նորից արորվելով դարձվում էր փափուկ խմորի պես դանդված¹, ապա լցվում էր կտավե տուպրակների կամ կողովների մեջ և զրվում ձիթհանի մամլիչի կամ ճղմիչի քարի տակ² և հսկայական քարի ծանրությունից ձեռք անջատվելով ծոր էր տալիս մամլիչի մոտ հարմարեցված տաշտի կամ հորի մեջ³:

¹ Այս խմորանման դանդվածը բարրառնեկում կոչվում է գելասո:

² Ձիթհանի մամլիչ քարը բարրառնեկում կոչվել է բախտաքար:

³ Քունջութի ձիթհանը, դասելով ազգագրական տվյալներից, նույն կառուցվածքն ունենր, միայն այն տարբերությամբ, որ քունջութը բովվում էր նախօրոք կեղևահան կամ թեփահան արվելուց հետո: Դրա համար ձիթհանի ներսում կողք կողքի լինում էին մի քանի մեծ սանդեր, որոնցից մեկի մեջ քունջութը թրջոց էր զրվում, մյուսի մեջ ծեծելով թեփահան էր արվում, իսկ երրորդի մեջ աղաջրի օգնությամբ քունջութը անջատվում էր թեփից, ապա շորացվելով բովվում էր: Բովված քունջութը արորվում էր, գելասո դարձվում տար ջուր խառնելով արրելով, ապա նրանից քամվում էր ձեթը:

Ավելի պրիմիտիվ ձիթհաններում, մամլիչի քարի փոխարեն, ձեթը քուսպից անջատելու համար պարզապես արորում էին սոփերով, ապա ձիթհանի բանվորը հավաքելով մնացած խմորը կամ քուսպը կույտի ձևով նստում էր նրա վրա ու զույգ ձեռքերով հարվածելով մամլում ու քամում էր ձեթը, որից հետո քուսպը լրացուցիչ կերպով քամվում էր տուպրակների մեջ լցվելով և մամլիչի տակ զրվելով: Ներսես Շնորհալին կտավի (կտավատի) և ձիթհացաքանի վերաբերյալ իր հանելուկներում նկարագրել է ձիթհանում կատարվող այդ աշխատանքը:

Կտավատի մասին նա գրում է.

«Ընդհն խոտ է դեմնարուչս,
Կոճակ ունի ի պլուխն և յուս,
Երբ շարշարեն զընեն ի սոյգ,
Արեգական նրման տա լոյս»:

Ձիթհացաքանի մասին Շնորհալին գրում է.

«Ոմն բազմեալ ի հողէ ձի,
և հանապազ ծափս հարկամփի,
Հալաւ հազեր դարմանալի,
Թէ զգինն ասես փող մի շարժի»¹:

Անիում եղել են մեծ թվով ձիթհաններ, որոնցից մի քանիսը հիշատակված են Անիի և նրա շրջակայքի ճարտարապետական հուշարձանների վրա թողնված արձանագրությունների մեջ: Ինչպես երևում է զգալի թվով ձիթհաններ կային ոչ միայն Անիում, այլև նրա արվարձաններում ու մտատկա ավաններում: Երբևմն, ձիթհանները նվիրվում էին եկեղեցիներին: Անեցի հարուստ Տրդրան Հոնենցը Անիի սուրբ Գրիգոր եկեղեցուն նվիրել է երկու ակ ձիթհան², իսկ ոմն Ավապ աիկին Արջուափձի (Անիի մոտ) եկեղեցուն նվիրել է ամուսնություն ժամանակ իր հորից իբրև բաժինք ստացած կես ակ ձիթհանը³ (մի ձիթաքար ունեցող ձիթ-

¹ Մատենադարանի ձեռագիր, № 7703, էջ 103 ա:

² Կիմական տարեգիր, էջ 59:

³ Նույն տեղում, էջ 48:



Նկ. 2. Ջիվհանի մնացորդներ, Անի:

հանքի կեսը): Ջիվհանները կարելի էր գնել, վաճառել և նվիրել: Վաչուռայան Վաչի կին Մամախաթունը 1220 թ. Վահրամ իշխանի սրգիներին գնելով Հաղրատի վանքին է նըվիրել մի ձիթհան¹: Նույն Մամախաթունը իր դանձագին մի ձիթհանն էլ նվիրել է Սանահինի վանքին²:

Անիի հնագիտական արշավախումբն իր աշխատանքների ժամանակ հայտնաբերել կամ հաշվի է առել 19 ձիթհան միայն քաղաքի տերիտորիայում (նկ. 2), դրանց թվում և սուրբ Գրիգոր վանքին պատկանող ձիթհանը նույն վանքին պատկանող շենքերի միջև³:

Ջիվհանների քարեր կամ կալաքարեր գտնվել են նաև այլ վայրերում. օրինակ՝ Լոռի քաղաքի ավերակներում:

Վիմական արձանագրություններից սլարդ երևում է, որ ձիթհանները իբրև շատ եկամտաբեր հաստատություններ պատկանում էին քաղաքի մեծատուններին և վանքերին:

¹ Վիմական տարեգիր, էջ 63:

² Նույն տեղում, էջ 66:

³ И. Орбелн, Краткий путеводитель по городищу Ани С.-Петербурга, 1910. Стб. «Список развалин» գրքի վերջում №№ 14, 18, 19, 22, 25, 29, 30, 30а, 31, 32в, 47а, 53, 55, 58, 61, 65, 76, 76а, 86 և 100.

Հայաստանում շատ հին ժամանակներից եղել են նաև ալյուր աղալու ջրաղացներ: Միջին դարերում ջրաղացների թիվը շատ մեծ էր: Նրանք պատկանում էին խոշոր ֆեոդալներին, եկեղեցիներին և մեծատուններին: 12—13-րդ դարերում ջրաղացների զգալի մասը ընկնում է մեծատունների ձեռքը: Ջրաղացները մեծ եկամուտ էին բերում, որովհետև նրանց մեջ ալյուր աղացողը պարտավոր էր բավականաչափ մեծ աղունավարձ վճարել: Անիի շուրջը կային բազմաթիվ ջրաղացներ, մասնավանդ Գլիծորում: Ջրաղացներ ունեին նաև նույն Հոռոմոսի վանքը: Դա պետք է բացատրել այն հանգամանքով, որ այս վանքը Բագրատունիների տոհմական հանգստարանն էր և իր ունեցվածքով հստակորձ Բագրատունիներին էր պատկանում և գտնվում էր Ախուրյանի ձորում ջրաղացների համար չափազանց հարմար մի վայրում: 12-րդ դարի վերջին նա դարձավ Զաքարյանների հեղուրների հանգստարանը: Հեղուրները, որ այս ժամանակ սոսկ սենեկապետներ չէին, այլ վարում էին Զաքարյանների անտեսական գործերը Անիում, սահմանում են, որ «ոչ պատրոն և ոչ ճորտ ի վանքն (Հոռոմոս) աղունձ աղան»¹:

¹ Վիմական տարեգիր, էջ 42—43:

Առաջին հայացքից այս կարգադրութունը տարօրինակ է թվում՝ հեջուրը սահմանում է, որ իրեն պատկանող վանքի ջրաղացում աղուն շաղան. բայց դա պետք է բացատրել հավանաբար այն բանով, որ Զաքարյանները վանքը նվիրելով հեջուրին, սահմանափակել էին նրա ջրաղացներից եկամուտ ստանալը, որովհետև դա կլիներ ի վնաս իրենց՝ Զաքարյանների և քաղաքի մյուս ջրաղացատերերի, կնվազեցնելու աղունավարձից նրանց ստացած եկամուտները:

Պահպանվել է մի հիշատակություն, որից երևում է, որ ջրաղացի տեր վանքը իր հեղինակությունը բարձրացնելու նկատառումով, իրեն խոշոր բարեգործություն աղունավարձ չի վերցրել: Հաղբատի 1086 թվակիր իր արձանագրության մեջ այդ վանքի առաջնորդ Սարգիսը ասում է. «Շինեցի ջրաղաց և արարի աղատաղաց»¹, այսինքն այդ ջրաղացից բացի վանքից, կարող էին օգտվել նաև Հաղբատ դուղի բնակիչները, դուրս առանց վարձ վճարելու և որպես բացառիկ դեպք և բարեգործություն նշված է հատուկ արձանագրությամբ և միայն հաստատում է այն փաստը, որ ջրաղացները աղունավարձ էին վերցնում և եկամտարիբ հաստատություններ էին:

Երկրի բնական հարստությունների օգտագործման ընդարձակվելը: Հայաստանի ընդերքը շատ հարուստ է պանազան հանածոներով ու հանքերով: Հայաստանը, ինչպես և ամբողջ Անդրկովկասը, դեռևս հնագույն ժամանակներից աչքի է ընկել մետաղագործությամբ:

Ուրարտական ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհից երկաթ էր արտահանվում թե՛ հարավ՝ դեպի Ասորեստան և թե՛ դեպի հյուսիս՝ Սկյութական աշխարհը: Ալավերդու, Ախթալայի (որը կոչվել է Պղզընձահանք), Միսխանայի և մյուս պղնձահանքերը օգտագործվել են անհիշելի ժամանակներից սկսած: Հնագիտական նյութ-

թեքը շատ ավելի պերճախոս կերպով վիպում են, որ Հայաստանն ունեցել է մետաղի հանույթի և մշակման իր դարաշրջանի համար շատ բարձր կուլտուրա: Մետաղի օգտագործման ամենավաղ ժամանակներից սկսած մինչև ուշ միջնադարին վերաբերող այն մետաղե առարկաները, որոնք հայտնաբերվել են պեղումների ժամանակ, առատ են, և իրենց ձևերով ու մշակման եղանակներով շատ բազմազան:

Գրավոր աղբյուրները որոշ հիշատակություններ նույնպես պահպանել են: Դեռևս Ստրաբոնը խոսելով Սպերի ոսկու հանքերի մասին, հիշատակում է և այլ հանքեր: Նա գրում է: «Կան ոսկու հանքեր Սիսպիրիտիսի մեջ՝ Կաբալլայում, որ ուղարկվեց Մենոնը Ալեքսանդրի կողմից զորքով, բայց խեղդամահ եղավ բնակիչների կողմից: Կան նաև ուրիշ հանքեր, ինչպես սանդիքս կոչվածը, որ կոչվում է նաև հայկական դուրն և նման է կալքեյի (= ծիրանի խեցի)»²:

Հայ հին մատենագրության մեջ ևս կան վիպություններ մետաղների հանույթի, և առավել ևս նրանց մշակման, նրանցից պանազան իրեր, առարկաներ պատրաստելու վերաբերյալ: Աղբյուրներից երևում է, որ երկաթահանքով հարուստ են եղել Ռըշտունիքի լեռները, որտեղ երկաթի հանույթը զարգացած է եղել հին ժամանակներից ի վեր: Փավստոս Բուզանդի ասելով Հալիոր Մժրնացին Հայաստան դալով «հասանէր ի լեռն երկաթահատացն և կապարահատացըն... ընդ Ըռշտունիս»²: Ուրեմն, այս լեռը հռչակավոր էր իր երկաթի և կապարի հանքերով, և որովհետև երկար ժամանակ այստեղ երկաթ ու կապար էին հանել, այդ պատճառով էլ ստացել էր «երկաթահատաց և կապարահատաց լեռ» հռչակը:

Ավանդաբար պատմվում է, որ Բարդուղիմեոս առաքյալը Հայաստան դալով, երկ-

1 Ս տ ր ար ո ն, քաղեց և թարգմանեց 2. Աճառյան (Օտար աղբյուրները հայերի մասին № 1, Երևան, 1940, էջ 61):

2 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, Պատմութիւն, էջ 38:

1 Վիճական տարեգիր, էջ 25:

րի հարավում՝ Անձեալայ երկրում հանդիպում է «Ռարբնայ քար»-ին, այսինքն երկաթի մշակման մի այնպիսի նշանավոր վայրի, որը շատ հայտնի էր և Բուզանդը բացատրություններ տալ հարկ չի համարում, իսկ «Ռարբնայ քար» կարող էր կոչվել երկաթաքարը, կամ երկաթահանքը: Ղազար Փարպեցին գովարանելով Արատյան դաշտը, հիշատակում է նրա ընդերքի ոսկին, սլդինձը, երկաթը և պատվական բարերը¹:

5-րդ դարում Մամիկոնյանների տիրույթը կազմող Տայքում ևս կար ոսկու հանք, որի տնօրինությունը Վահան Մամիկոնյանի ձեռքին էր գտնվում: Փարպեցին պատմում է, թե Վահանի գործակիցներից Վրիվ անունով մեկը ամբաստանում է նրան Պերոյ թագավորի առաջ, թե Վահանը «ինձ ի գործ ոսկեհատին շատ ինչ մօտ երթալ. և իւր ժողովեալ զամենայն ոսկի աշխարհին՝ խորհի երթալ առ կայսր և կամ յաշխարհն Հոնաց, և տուեալ զոսկին՝ կամի խնդրել զունդ և ապստամբելը»²:

Թերևս նույն ոսկու հանքի մասին է խոսում 6-րդ դարի բյուզանդական հեղինակ Պրոկոպիոս Կեսարացին, որը հիշատակում է Հայաստանի՝ Պարսից տերությանը ենթակա մասում բյուզանդական սահմանից ոչ հեռու Բոլոն և Փառնադիոն բերդերը, որոնք «այն տեղումն են, ուր պարսիկները ոսկի են հանում, որը տանում են արքային»³: Այս ոսկու հանքը Պրոկոպիոսի առեկով, գտնվում էր Պարսկահայք երկրում, Թեոդոսուպոլսից ոչ շատ հեռու և 6-րդ դարում Կապլատի հրամանով, մշակում էր բնիկներից Միմեոն անոնով մեկը⁴:

Մի ուշադրով վկայություն գտնում ենք Մովսես Կաղանկատվացու մոտ: Նա ասում է, թե 629 թ. խաղարների խաքանը կամե-

նում էր զավթել Անդրկովկասի երկրները, տիրել նրա հանքավայրերին, հանքագործությունը ու մետաղների մշակությունը պարսպող արհեստավորներին և հարկեր էր պահանջում: Կաղանկատվացին գրում է. «Յերկրորդ ամի Արտաշրի որդույ Կաւատայ Պարսից արքայի (յամի տետն 629) մինչ դեռևս առնէր նա զիշխանութիւնն ըստ կամս իւր, իշխանն հիւսիսոյ [խաղարների իշխանը] զօրանայր բռնութեամբ յամենայն հրամանս իւր. և եդ զահ և զերկիւղ իւր ընդ երեսս երկրի: Առաքեաց գործակալս ի վերայ ազգի ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկեծնութեան և արծաթահատութեան և երկաթահատութեան և պղնձագործութեան ունէին. նաև զանցս վաճառաց և զկարթընկէցս ձկնորսութեաց, մեծամեծ գետոցն Կուրայ և Երասխայ՝ զամենայն ճշդիւ պահանջէր և զդարաքմայսն ըստ սովորութեան աշխարհագրի Պարսից թագաւորութեանն: Եւ իբրև ստուգեաց զամենայն բարութիւնս երկրիս՝ և հաստատեաց ի միտս իւր ոչինչ ծածկիլ ի նմանէ, եդ ի մտի իւրում ի ժամանակս ամառնային վազել յաշխարհն Հայոց և զնոսա ևս սահմանակցօքն նորա ածել ի հնազանդութիւն իւր»¹:

Այս վկայության մեջ մի քանի կարևոր մոմենտներ կան, որ կամենում ենք ընդգծել. խաղարների խաքանը ձգտելով տիրանալ Անդրկովկասին (մասնավորապես հիշատակված է Հայաստանը), ամենից առաջ հետաքրքրվում էր այն հարցով, թե ինչ մետաղներ են հանում այստեղ և մետաղը հանող ու մշակող ի՞նչ արհեստավորներ կան, ուստի լրտեսներ է ուղարկում պարզելու այդ հանգամանքը, ինչպես և օգտագործվող մյուս բնական հարստությունների վիճակը, օրինակ, Կուրի և Արաքսի ձկնորսության վիճակը, որպեսզի՝ այդ ամենը ստուգությունը իմանա և զավթել կարողանա: Առանձնապես նշված են Հայաստանի

1 Ղազար Փարպեցի, Պատմութիւն, էջ 21:

2 Նույն տեղում, էջ 256—257:

3 Procop, De bello pers. I, 15, p. 18.

4 Նույն տեղում, I, XV, 26—29:

1 Մովսիսի Կաղանկատուացույ Պատմութիւն Ազոանից աշխարհի, Թիֆլիս, 1919, էջ 190:

և Անդրկովկասի մյուս երկրների ոսկեծնու-
թյունը, արծաթահալուսթյունը, երկաթի հա-
նուսթյունը և պղնձագործությունը, որ զիտելին
այս երկրի արհեստավորները:

Անանիա Շիրակացին իր «Աշխարհա-
ցույց»-ում խոսելով Հայաստանի նահանգ-
ների մասին, նշում է նրանց առավել աչքի
ընկնող հարստությունները, ըստ որում եր-
կաթի հանքերը հիշատակում է Տուրուրերա-
նում և Աղձնիքում¹:

Գիտնիսիոս Ռեկ Մահրեցումն վերագրված
ասորական ժամանակագրության մեջ, որը
գրվել է 775 թ., նկարագրված է 774—
775 թ. Չորրորդ Հայքի Տուտիս վայրում
տեղի ունեցած ապստամբությունը և այդ
կապակցությամբ խոսվում է այստեղի
երկաթի, կապարի և արծաթի հանքերի մա-
սին:

«Տուտիսի շրջակայքում գտնվում էր մի
վայր, որտեղ արդյունահանվում էր կապար,
արծաթ և այլ երկաթահանքանյութ... Մար-
դիկ այնպիսի մեծ քանակությամբ հավաքվել
էին այնտեղ, որտեղ գտնվում էր կապարը,
որ այդ շրջանը ընդարձակ ճամբար դարձավ
և որ թագավորը այնտեղ կուսակալ էր նը-
շանակել: Ամեն տեղից մարդիկ դալիս էին
այս շրջանը և փորում էին մեծ և խորը հո-
րեր՝ սողալատ որոնելու ճալատակով»²:

10—13-րդ դարերում մետաղի և այլ
հանքանյութերի պահանջը անհամեմատ մե-
ծացել էր և հանույթն ու մշակումը շատ
ավելի ընդարձակվել: Սկզբնաղբյուրներում,
մանավանդ արաբական մատենագրության
մեջ, հիշատակվում է, որ Հայաստանում
հանվում էին բազմաթիվ մետաղներ ու այլ
օգտակար հանածոներ՝ երկաթ, պղինձ, ոս-
կի, արծաթ, կապար, արձիճ, մագնեզիում,

սնդիկ, բորակ, մկնդեղ, ծծումբ, պաղլեղ,
կալաքար, իրրե շիճանյովի ծառայող զա-
նազան քարեր, նաև կճաքար (մարմար),
դանազան կավեր, գեղնախունկ, խեժ և
այլն:

Երկաթի հանույթն ու գործածությունը
այնքան էր մեծացել, որ Ռովմա Արծրաւնու
վկայությամբ 10-րդ դարի սկզբներին Ադ-
թամարում Գագիկ Արծրունու պալատական
շենքերի վրա ծախսվել է 200 հազար լիար.
այսինքն 80 տոննայից ավելի երկաթ³:

Իրն-ալ-Ֆակիհը վկայում է՝ Հայաս-
տանում կան սնդիկի, պղնձարջասալի, սը-
ղընձի, արծաթի և կապարի հանքեր⁴: Իսկ
Յակուան իր պատմաաշխարհագրական բա-
նարանում նշում է Հայաստանում մշակվող
երկաթի հանքերը Տուրուրերանում, Վաժնու-
նիում (Վարաժնունիք), Բալույում, Ապա-
հունիքում, Գիարբեքիի մարզում գտնվող
Հայնի քաղաքում, որի մասին ասվում է,
թե այստեղի երկաթը արտահանվում է ուրիշ
երկրներ: Նույն Վաժնունիում, նաև Մանա-
նաղում, Գուգարքում, Տաշիրում նա ցույց է
տալիս պղնձի հանքեր: Բաջունայս (Վաս-
պուրական) նահանգի մեջ մտնող Ապահու-
նիք գավառի մասին նա ասում է, թե՛ «Այս-
տեղ կան ընդարձակ աղահանքեր, մագնե-
զիումի և պղնձի հանքեր»⁵: Մագնեզիումը
հանվում էր նաև երկաթի մարզում: Ապա-
հունիքում հիշատակվում է նաև կարածյու-
թը: Յակուար հիշատակում է նաև արձիճի,
պղնձարջասալի, սնդիկի և լեռնային խեժի
հանույթի մասին⁶:

Այրարատ նահանգի երկաթի կամ պղնձի
բավերից մեկը հիշատակված է Կիրակոս
Գանձակեցու մոտ: Հեղինակը վկայում է,
թե Մխիթար Գոշի կառուցած Նոր Գետիկի
վանքին Ջաքարիա Ամիր-սպասալարը նը-

1 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ
349 («Աշխարհացույց»):

2 Լ. Մեկիբսեթ-Քեկ, Չորրորդ Հայքի 774—
775 թթ. գյուղացիական ապստամբության պատմու-
թյան շուրջը, «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1948, № 2,
էջ 54—55:

1 Ռովմա Արծրունի, Պատմություն, էջ 482:

2 СМОМПК, XXXI, стр. 39.

3 Յակուա, գիրք 1-ին, էջ 455:

4 Յակուա, նույն տեղում:

վիրել է հոգեր «և բով մի յԱրասաձոր... ի նահանգին Բջնոյ...»¹։

Արծաթը և ոսկին հայանի էին Սպերում, Տաջրում, Աղիովխաում, նաև Այրարատում, ինչպես և Հյուսիսային Հայաստանի այլ վայրերում։ Պաղլեղը ստացվում էր Ուրմիա լճի ափին, ծծումբը մի շարք վայրերում, մեծ քանակությամբ հանվում էին բորակ և մկնդեղ։ Իրն-Հառակալը վկայում է, թե Վանա լճի մոտ կային մկնդեղի հանքեր, որտեղից այդ նյութը արտահանվում էր ուրիշ երկրներ։ Այստեղ հանվում էր կարմիր և դեղին մկնդեղ։ Սրանք օգտագործվում էին ներկագործության մեջ։ «Կարուզան (Կապուտան) լճի ափին հանվում է պղնձի օբսիդ (օխրա), սրբ արտահանվում էր Իրաք, Ասորիք և Նփիպոսս։ Այս նյութից (վաճառրից) մեծ շահույթ են ստանում»²։

Արարական աղբյուրներից քաղած հատվածների թարգմանիչ Ն. Ա. Կարաուլովը ծանոթություն է գրել, թե պղնձի օխրան օգտագործվում էր մետաղները դոգելիս, և արաբական աշխարհում հայտնի էին չորս տեսակի պղնձի օխրաներ՝ ջրայինը, լեռնայինը, հայկականը և Ֆգիպտականը³։

Քիմիայի պատմաբան Բերտելոյի աշխատություններում, ինչպես նշում է քիմիկոս Ա. Հարությունյանը, հիշատակվում են նյութեր, որոնք տարվել են Հայաստանից, կամ կրում էին «հայկական» անունը, ինչպես օրինակ, պղնձի կանաչ և կապտավուն կարբոնատները՝ ադուրիտը, հայկական հողը, սրբ ոսկեգույն մկնդեղն է, և այլն⁴։

14-րդ դարի արաբ ճանապարհորդ Իրն-Բատուտան խոսակցով Արզանջանի (Նրզնկայի) մասին ասում է, թե «նրա մեջ կան

պղնձի հանքեր, որով շինում են ամաններ և «բայսուս»-ներ»¹։

Օգտագործվել են նաև Սյունիքի պղնձի և ոսկու (Ձոդ) հանքերը, որ պարզ երևում է տեղ-տեղ պահպանված բովերի հետքերից և խարամի կույտերից։ Համալլահ Ղազվինին (14-րդ դ.) հիշատակում է Աջանանի պղնձի հանքերը և արհեստանոցը՝ քարխանե²։

17-րդ դարի պատմագիր Հակոբ Կարնեցին (1622—1662) հիշատակում է ոսկու, պղնձի, արծաթի, երկաթի հանքեր Բարձր Հայքում, հատկապես Գյումուշխանեում։ Նա գրում է. «Եւ անտի ուղիղ ի կողմն հիւսիսոյ ձորն էր Մանախոյ, ունի դիւղք և փոքրը բերդորայք... և ունի քաղաք Կիւմուշխանան և բնակիչք սորա հայ և հոռոմբ բազում... և ելանէ աստի ոսկի և արծաթ ընտիր բազում. ելանէ նաև պղինձ, արձիճ և երկաթ բազում, որ Արդրում և շրջակայքն սորա ընուն»³։ Գյումուշխանան թեև Բարձր Հայքի մեջ չէր մտնում, բայց սերտորեն կապված էր նրա հետ և բնակչության ղգալի մասն էլ հայեր էին, իսկ այստեղի արծաթի հանքերը հայտնի էին վաղուց։ Նույն Իրն-Բատուտան հիշատակում է Գյումուշ քաղաքը և նրա արծաթի հանքերը⁴։

Յակուտը վկայակոչելով Իրն ալ-Ֆակիհին պատմում է, թե Ամիդի մոտի մի լեռան ստորոտում կար երկաթահանք, որտեղ լեռան ծերպում մի թուր էր խրված և ով որ բռներ այդ թուրը՝ կտանար մեծ ցնցում։ «Այդ երկաթի ձուլական ուժը շատ ավելի մեծ է,— ասում է նա,— քան մազնիսի ուժը. այնպես, որ երբ նրա հետ շինեն մի ուրիշ թուր կամ դանակ, դա էլ մազնիսանում է և ստացած ուժը շի նվազում անգամ հարյուր

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, 204։

2 СМОЛІК, вып. XXXVIII, стр. 97.

3 Նույն տեղում, էջ 124—125։

4 А. Х. А р у т ю н я н, Развитие технико-химических знаний в древней и средневековой Армении. Труды Института истории естествознания, 1949, т. III, стр. 258.

1 Իրնի Բատուտա, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Նրևան, 1940, էջ 31։

2 И. П. Петрушевский, Хамдаллах Назвини как источник истории Восточного Закавказья. ИАН СССР № 4 1937 стр. 909—910.

3 Հակոբ Կարնեցի, Նկարագիր Վերին Հայք, էջ 15։

4 Իրնի Բատուտա, էջ 29։

տարի անցնելուց հետո»¹: Դա նշանակում է, թե միջնադարյան արհեստավորները գիտեին, մագնիսի օգնությամբ երկաթե գեներերի և գործիքների սրակը բարձրացնելու զագանիքը:

Հայաստանի հանածոներից մի քանիսը մեծ հռչակ էին վայելում: Այդպես էր, օրինակ, Վանա լճից հանվող բորակը: Ամբողջ Մերձավար Արևելքում նա համարվում էր լավագույնը և հայտնի էր պուրեի կրճանի, այսինքն հայկական բորակ անունով: Հայկական ալքիմիական ձեռագրերում Վանա բորակը հայտնի էր կամ յճի անունով, կամ պարզապես կոչվում էր Հայկական բորակ, նաև պուրե կալոց: Ալքիմիկները բորակը դասելով աղերի շարքը և իմանալով չորս տեսակի աղեր, այն է՝ հանքային, ծովային, բուսական և կենդանական—բոլորի մեջ գերակշռությունը տալիս էին Վանա բորակին: «Ջրայինըն (ջրային բորակները կամ աղերը) հաճախ են (ամենից շատ են հանդիպում), այլ լավն Հայոց ծովինն է, որ է Վանա բորակն»²: Մի ալքիմիական ձեռագրում, որն ըստ երևույթին թարգմանված է արաբերենից, բորակի մասին ասվում է. «Ենչն յ Հայոց դայ» (պարզ է, որ հայը չէր ասի, թե բորակը Հայաստանից է դալիս): Այսպիսով, Վանա բորակի արտահանման վերաբերյալ տեղեկություններ կան թե հայկական և թե օտար աղբյուրներում:

Հայաստանը հարուստ էր օգտագործվող աղահանքերով: Ամենանշանավորը Կողբի աղահանքն էր, որը և տալիս էր մաքուր բյուրեղային աղ, հայտնի «կողբացի աղ» անունով: Կողբա աղահանքը վաղուց էր մշակվում և հավանաբար պատկանում էր արքունիքին: Երբ 628 թ. Հերակլը դրավեց Հայաստանի մեծ մասը, այդ աղահանքը նա պարզեցրադիկեդոնականությունն ընդունած Եզր կա-

թողիկոսին³: Հեռագայում Կողբի աղի հանույթը շատ ավելի էր մեծացել:

Կիրակոս Գանձակեցին շիշատակում է աղահանքեր «ի Կողբ և որ այլ կողմանա»⁴: Իսկապես, Հայաստանի այլ կողմերում էլ Կաղվամնում, Ապահունիքում, Աղխալխում, Գարանաղում օգտագործվող աղահանքեր կային: Անանիա Շիրակացին Բարձր Հայքի հարստությունների թվում հիշատակում է և աղը⁵: Կերակրի աղ հանվում էր և Վանա լճից, որը Իրն-Հատկայի ասելով՝ արտահանվում էր Իրաք և Ջեղիքե՝ հացիկովաներին վաճառելու համար⁶:

Հայաստանը ունեցել է և նավթ, որը Անանիա Շիրակացու մոտ հիշատակված է Տուրուբերանի և Աղձնիքի հարստությունների շարքում⁷: Բայց նավթի գլխավոր աղբյուրներ գտնվում էին հարևան Շիրվանում⁸:

Կորճեքը հարուստ էր գառիկով (մկրնդեղ), Չորրորդ Հայքն ուներ բյուրեղաքար, որից ուլունքներ, մատանու ակ և կնիքներ էին պատրաստում⁹: Նույնպիսի բյուրեղային քար կար Այրարատ նահանգում:

Նասիր Խոսրովը Բաղեշի մոտի լեռներում (հավանաբար Խուլթի լեռներում) տեսել է մարդկանց, որոնք շրջում էին լեռան վրա և սոճու ծառի նման ինչ որ ծառեր էին կըտրատում: «Հարցրեցի նրանց՝ սրանից ի՞նչ էր պատրաստում. նրանք պատասխանեցին՝ աչ ս փալտի մի ծալրը դնում ենք կրակի մեջ և նրա մյուս ծալրից խեժ է գուրս պա-

1 Սերևոս եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ 101—102:

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1909, էջ 349:

3 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349:

4 СМОМПК, XXXVIII, стр. 97.

5 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349:

6 Մորթիման, Հատուածք պատմութեան Հայաստանի, Կ. Պոլիս, 1874, էջ 38:

7 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349:

1 Յակոբ, գիրք 1-ին, էջ 66:

2 Կ. Ղաֆադարյան, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940, էջ 67:

լիս, բոլորը հավաքում ենք մի հորի մեջ և կժերով տանում ենք ամեն կողմ»¹: Պարզ է, որ այդ խեղճը (որը հավանաբար Գոշի հիշատակած մազթաբեն էր) ամեն կողմ տանում էին վաճառելու համար:

Հայաստանում պատրաստում էին և կարգար՝ մեծ քանակությամբ կալիակաճ ազեր պարունակող բույսերից, կամ որոշ տեսակի ծառերը կանաչ-կանաչ այրելու եղանակով: Ծառ հայտնի էին Հայաստանի ղեղարույսերը, ներկանյութերը և շինանյութերը: Անանիա Ծիրակացին դանազան դավաճանների բնական հարստությունների թվում հիշատակում է նաև գլխորը Աղձնիքում, աղտորը (սումաղ) Տաջքում, լավ փայտանյութ ավող անայուտ և հաճարի ծառերը՝ Գուգարքում²:

Վերջապես, հիշատակենք, որ երկրի համարչա բոլոր դավաճաններում կալին լավագույն քարերի բազմաթիվ «քարհատներ», սրոնցում մեծ քանակությամբ քար էր կարվում և տարվում քաղաքներն ու առևանները, մոտամենալ շենքեր, վանքեր ու Լեկզեցիներ կառուցելու համար, ըստ սրում բարբ անդամոթվում էր տասնյակ կիլոմետրներ:

Վրաստանը և Աղվանքը (Աղբբեջանը) նույնպես հարուստ էին հանքերով ու հանածոներով: Աղվանքի մասին խոսելով Մովսես Կաղանկատավացին գրում է հետևյալ ջերմ տողերը. «Բարեվայելուչ և ցանկայի է աշխարհն Աղուանից ամենագիւտ շահիւք և բարձրաբերձ կոհակօք Կովկասայ: Եւ գեարն մեծ Կուր՝ հեղասահ դնացիւք բերելով յինքեան դձկունս մեծամեծս և մանունս, ձեմելով դայ անցանէ և անկանի ի ծովն Կասպից: Եւ որ շուրջ զնովանն են դաշտք՝ դտանի ի նոսա հաց և դինի շատ, նաւթ և աղ, ապրեշում և բամբակ, և անբաւ ձիթենիք:

Եւ հատանի ի լերանցն ոսկի, արծաթ, պրղինձ և դեղնախունկ: Եւ որ ինչ վայրենիք՝ առիւծ, ինձ, յովազ և ցիւս: Եւ ի թաշնոց յուլովից՝ արծուիք և բաղէք և նմանք նոցին: Եւ մայրաքաղաքն ունի զմեծն Պարտաւ»³:

Բալաձորին նույնպես վկայում է, թե Ծիրվանի երկրի նավթի և աղի հանքերը մշակվում էին և ալ-Մանսուրը այդ հանքերը զրեց Եզիդ ստիկանի իշխանության ներքո: Հուզուդ-ալ-ալամ կոչվող տաջիկական աշխարհագրական երկում ևս խոսվում է Հայաստանի և Անդրկովկասի լեռների մասին և հատկապես հիշատակվում են նրանց մեջ գտնվող հանքերը²:

Անդրկովկասի, մանավանդ Հայաստանի բնական հարստությունների և նրանց օգտագործման մասին փաստեր շատ կան, մեջբերվածներն էլ պերճախոս են և բավականանաք նրանցով:

Ֆեոդալական հատարակության մեջ արտադրության հիմնական միջոցներն, իհարկե, գտնվում էին ֆեոդալական իշխող դասերի ձեռքում: Դա իր իրավաբանական ձևակերպումն է ստացել Մխիթար Գոշի «Դատաստանագրքում», որտեղ գտնում ենք հողի և ջրի՝ տերերին (իշխաններին) պատկանելու պատճառով նրանց ծառայելու հարկադրանքի (ձորտական կախման) առաջացման վերաբերյալ կլասիկ ձևակերպումը, թե «Ազատ յԱրարէն եղև մարդկայինս բնութիւն, ալ ծառայել անբանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ»³:

Տերերին էին պատկանում արոտներն ու անտառները, որսավայրերն ու ձկնորսարանները, նաև երկրի ընդերքի հարստությունները: Գոշի «Դատաստանագրքում» կարդում ենք. «Թ գաւառս ոսկեհանս գտեալ յամենայն սահմանս իշխանաց՝ արքայից

1 Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ջ ի, Պատմութիւն, Թիֆլիս, 1919, էջ 15:

2 Հ. Փ ա փ ա զ յ ա ն, Անանուն տաջիկ աշխարհագրութիւն... «Տեղեկագիր» № 5, 1953, էջ 76—77:

3 Մ խ ի Թ ա ր Գ ո շ, Դատաստանագրք, էջ 320:

1 Н а с н р и Х у с р а у, Сафарнамэ, М.-Л., 1933, стр. 39.

2 Անանիա Ծիրակացու մատենագրությունը, էջ 349—350:

լիցի, իսկ արծաթ՝ թագուհեաց. և ի կամս նոցա է մասնաւորել նոցա կամ ոչ:

Այլ պղինձ և երկաթ և այլք ի նմանեաց նոցին—իշխանաց իցէ մեծամեծաց՝ պարզեօք թագաւորաց. նմանապէս և աղ և բորակ, նաւթ և կուպր, ապակի և այլ ինչ այսպիսի: Իսկ ակն և մարգարիտ արքունի լիցի և այլ ինչ պատուաւորաց:

Իսկ ձիւթ և խունիկ և դեղնախունիկ և գըխթոր և մազղթաբէ և զարիկոն և սակամունի և այլք այսպիսիք, որք վաճառին և շահին տասնորդիցին իշխանաց¹:

Այս կանոնի համաձայն, իշխանների տիրույթներում գտնվող ոսկու, ավնեղենի և արծաթի հանքերն ու գյուտերը արքունիքին էին պատկանելու: Թագավորները իրավասու են եղել իշխաններին «մասնավորել կամ ոչ», այսինքն եկամտից նրանց բաժին հանել կամ չհանել: Պղինձը, երկաթը, սրանց նման այլ հանքերը, նաև աղը, բորակը, նավթը, կուպրը, ապակին (պետք է հասկանալ ապակու հումքը) և սրանց նման օգտակար հանածոներն ու նյութերը իշխաններին էին պատկանում, բայց այդ իրավունքը պիտի ձևակերպվեր թագավորի կողմից: Իհարկե փաստական տերերը իշխաններն էին, իսկ թագավորը, քանի որ համարվում էր երկրի և նրա հարստությունների գերագույն տերը, պետք է ձևականորեն իշխաններին պարգևեր փաստորեն նրանց պատկանող հանքերն ու հանածոները, այսինքն ճանաչեր իրերի փաստական դրույթունը: Զլուծը, խունիկը, դեղնախունիկը, գղթորը, մազթաքին, զարիկոնը (անկից պատրաստվող արեթը, որը օգտագործվում էր իբրև պատրուշգ կայծաքարը և մետաղը իրար խփելով կրակ ստանալու ժամանակ), սակամունին (դեղարույս է) և սրանց նմանները, որոնք վաճառվում և շահ էին բերում, պետք է տասնորդվեին իշխանների կողմից: Տասնորդվում էին նաև անսաղի

փայտն ու պտուղները, դաշտերի, սարերի խոտն ու արոտը, որսի կենդանիներն ու դետերի ձկները, եթե ֆեոդալները լույս էին տալիս բնակչությանը դրանք օգտագործել:

Երկրի արտադրողական ուժերի աճի տեսակետից խոշոր նշանակություն ունեցան նաև արտադրական փորձի կուտակումը արհեստագործության բնագավառում, արհեստների զարգացումը և նրանց անջատումը գյուղատնտեսությունից: Դա, իր հերթին, նպաստեց արհեստագործության նորանոր ճյուղերի առաջացմանը և արհեստագործական տեխնիկայի կատարելագործմանը, որի մասին հանգամանորեն կխոսվի համապատասխան բաժնում:

Այսպիսով, վերևում մեզ բերված փաստերը որոշակի կերպով ցույց են տալիս, որ Հայաստանում 9—10-րդ դարերում, (ինչպես և հետագայում՝ 11—13-րդ դարերում), տեղի էր ունենում երկրի արտադրողական ուժերի աճն ու զարգացումը տնտեսության բոլոր ճյուղերի դեմով: Դրա հետևանքով 9—10-րդ դարերում նոր ֆեոդալական հիմունքներով տեղի է ունենում արհեստագործության և առևտրի անջատումը գյուղատնտեսությունից և կենտրոնացումը քաղաքներում՝ առաջանում է ֆեոդալական քաղաքը:

5. ՖԵՈԳԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քաղաքների առաջացումը Հայաստանում 9—10-րդ դարերում պայմանավորված էր մի շարք պատճառներով ու նախադրյալներով: Դրանցից պլխավորն էր ֆեոդալական հասարակության, թեև դանդաղ (մասնավորապես արտադրական տիրապետության հետևանքով ավելի դանդաղ), բայց հարաճուն առաջադիմությունը, երկրի տնտեսական վերելքը, արտադրողական ուժերի աճն ու զարգացումը:

Երկրի տնտեսական վերելքի, մասնավորապես արտադրողական ուժերի աճի գլխա-

¹ Մ ի Թ ա ր Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 325—327:

վոր հետևանքը հանդիսացավ նոր՝ ֆեոդալական պայմաններում տեղի ունեցած աշխատանքի հասարակական այն մեծ բաժանումը, որն արտահայտվեց արհեստագործության և առևտրի անջատմամբ գյուղատնտեսությունից և նրանց կենտրոնացմամբ քաղաքներում. քաղաքը անջատվեց գյուղից և հակադրվեց նրան:

Նրկրագործությունից արհեստագործության անջատման պրոցեսը տեղի է ունեցել վաղ ֆեոդալիզմի ամբողջ ժամանակաշրջանում, բայց սկզբում նա գյուղական համայնքներից համարյա դուրս չէր դալիս, կամ հիմն դուրս էր դալիս, ապա միայն աննշան չափերով: Դվինը միակ քաղաքն էր, որտեղ դեռևս 5—7-րդ դարերում դիմում էր գյուղից հեռացող արհեստավորը: Աննշան քանակությամբ արհեստավորներ թողնելով գյուղը հաստատվում էին նաև ֆեոդալական բերդերում կամ նրանց շուրջը եղած ավաններում, ինչպես և վանքերում: Տաթևի վանքում, օրինակ, 10-րդ դարի սկզբին կային «գործատներ», որտեղ աշխատում էին գանաղան արհեստավորներ, որոնց թվում և «արհեստատրք նկարչացն և գրողացն անհամեմատը»¹:

Իհարկե գրիչ և նկարիչ արհեստավորները կարող էին լինել և սովորաբար լինում էին հողատերականներ, սակայն դա չի նշանակում, թե վանքում հողատերական կոչում չունեցող այլ մասնագիտության արհեստավորներ չկային: Նույն ժամանակներում ապրեստամբ ցուրարերդցիները հարձակվելով վանքի մրա, պատմիչի ասելով, կոդոպտում են նաև վանքի «գործատներն»²: Այս անգամ չի ասվում, թե դա ի՞նչ արհեստանոց-գործատներ էին, բայց պարզ է, որ կոդոպտով ինչքը նյութական արժեք էր ֆերկայացնում:

Գործատներ կային նաև ֆեոդալական

բերդ-գղջակներում, սակայն ինչպես վանքային, նույնպես և գղջակային արհեստագործությունը ոչ մի ժամանակ խոշոր դեր չի խաղացել արհեստային արտադրության մեջ:

Վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում արհեստները զարգանում էին գյուղերում և գյուղերի ու ավանների վերածված հին քաղաքներում: Արհեստավորների զգալի մասը դեռևս կիսով չափ երկրագործ էր, կիսով չափ արհեստավոր և արհեստով զբաղվում էր տարվա, որոշ՝ երկրագործական աշխատանքից ազատ ամիսներին, բավարարելով գյուղական համայնքի պահանջարկը: Ժամանակի ընթացքում, թեև դանդաղ, աճում էր արհեստագործական արտադրանքի պահանջարկը գյուղում, մանավանդ, ավաններում և բերդավաններում: Մյուս կողմից ավելի մեծ թվով, արհեստագործներ ձևով էին բերում փորձ և հմտություն: Քայլ առ քայլ արհեստավորները կարվում էին երկրագործությունից և արհեստը, երկրագործի ֆերկորդական զբաղմունքից դառնում էր ինքնուրույն զբաղմունք, որը կոչված էր սպասարկելու բնակչության ավելի ու ավելի լայն շերտերի տնտեսական, կենցաղային և կուլտուրական աճող պահանջները: Արհեստը դառնում էր ապրուստի բոլորովին ինքնուրույն միջոց:

Սկզբում արհեստավորը, երբեմն երզից-երդ անցնելով, երբեմն էլ իր տնային արհեստաճեոցում կատարում էր իր համայնքի անդամների այս կամ այն պատվերը, վարձը ստանալով, սովորաբար, միջերեքով, բայց նա պատվերներ կատարելուց բացի ժամանակ էր ունենում իրեր, առարկաներ պատրաստել պատահական գնորդներին, կիրակնօրյա շուկաներում կամ տոնավաճառների ժամանակ վաճառելու համար: Մատենագրական աղբյուրները վկայություններ պահպանել են նման կիրակնօրյա շուկաների և տոնավաճառների մասին: Դրանցից էր Ազգանից Պարտավ քաղաքի գուներից մեկի առջև գտնվող շուկան, ինչ-

¹ Ս տ ե փ ա ն ո ս Թ ր ր և լ յ ա ն, Պատմություն հայաստանի Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 225—226:

² Նույն տեղում, էջ 247:

պես վկայում են արարացի մատենագիր-ները, որն անգամ ստացել էր «Կիրակի» անունը¹:

Արտադրող արհեստավորն ինքը հանդես էր գալիս նաև իբրև վաճառող և, ինչպես Վ. Ի. Լենինն է նշել, կարող էր շուկայում հայտնվել իր արտադրանքի կամ աշխատանքի դիմաց ստացած բնամթերքով, ինչպես և պատվեր կատարելուց ազատ մնացած ժամանակ արտադրած իրերով²:

Որպեսզի արհեստը անջատվիր երկրագործությունից և միանգամայն ինքնուրույն գրադմունք դառնար, նա պետք է լիներ արհեստավորի և նրա ընտանիքի սպրուստի կայուն միջոց: Դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի արհեստավորը սպասարկեր ոչ թե սեզոնային պատվիրատուի կամ պատահական գնորդի սահմանափակ պահանջարկը, այլ գտներ ավելի մեծ թվով պատվիրատուներ ու գնորդներ՝ ամբողջ տարվա ընթացքում: Գյուղում այդ բանը հնարավոր չէր, արհեստավորների թվի աճի և սպառողների թվի և սպառողունակության սահմանափակության պատճառով:

Ավելի մեծ թվով պատվիրատու և գնորդ գտնելու, հետևաբար և սպրուստի կայուն աղբյուր ունենալու համար արհեստավորները դիմում էին դեպի ավանները, բերդավանները, թագավորների և իշխանների վարչակազմի կենտրոնները հանդիսացող խոշոր բնակավայրերը, բերդերը:

Արհեստավորների կենտրոնացման համար ամենից ավելի հարմար էին բերդավանները, այսինքն այն բերդերը, որոնք իրենց առջև փռված ունեին մեծ բնակավայր՝ ավան³: Դա բնավ պատահական չէր և ուներ իր ինչպես տնտեսական, նույնպես և քաղաքական հիմքերը: Ավանը հա-

մեծաոտարար խոշոր բնակավայր էր, առաջացած երկրագործական կարևոր գավառի կամ ավելի նեղ շրջանի կենտրոնում: Իբրև կանոն ավաններ գոյացել են Հայաստանի տնտեսապես առավել կարևոր երկրագործական գավառներում, որտեղ կային արդավանդ հողեր, գարգացած երկրագործություն և խիտ բնակչություն: Ավանները շքուշապատված էին լինում բազմաթիվ գյուղերով: Հայաստանի ավանները 8—9-րդ դարերում սովորաբար փռված էին լինում բերդերի առջև և իբրև բնակավայր, բերդի հետ միասին կազմում էին մի ամբողջություն: Բերդի և ավանի նման կապը առաջացել էր մի շարք պատճառներով: Ամենից առաջ ավանների էին վերածվել հին Հայաստանի քաղաքները, որոնք ունեին իրենց բերդերը: Այդպիսին էին Վանը, Նիրիկերտը, Նախճավանը, Աշմուշատը, Վաղարշակերտը, Կամախը, Զարեվանդը: Բացի այդ ավաններ կային մի շարք հին բերդերին, օրինակ Գառնիին, Նրաղավորքին, Բագարանին, Կաղզվանին, Թեոդոսուպոլիս — Կարինին, Անիին և այլ բերդերին կից: Այդ բերդերից մի քանիսը իշխանանիստ էին, մյուսները հանդիսանում էին ռազմական հենակետեր: Արաբական տիրապետության ժամանակ խոշոր հենակետերի նշանակությունը ստացան հին ամրոցներից մի քանիսը, մասնավորապես Նիրիկերտը և Կարինը, առաջացան մի շարք նոր հենակետեր, ինչպես, օրինակ՝ Արղնը, Բաղեշը, Խլաթը, Մանաղկերտը, Արճեշը, Բերկրին և ուրիշները, որոնք հետագայում քաղաքներ դարձան:

Ֆեոդալական իշխանությունների կենտրոն կամ ռազմական հենակետ հանդիսացող ամրոցներից շատերին կից կային բնակավայրեր, ավաններ կամ գյուղեր, որոնց բնակիչները պատերազմների և ռազմական ընդհարումների ժամանակ պարսպադրվում էին ամրոցներում: Ամրոցներին կից բնակավայրերում, իբրև համեմատաբար պաշտպանված վայրերում, բնակչություն թիվը հետզհետե մեծանում էր, մա-

¹ СМОМПК, ВВН. XXIX, стр. 9.

² Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, Նրևան, 1947, էջ 418:

³ Ինչպես կտեսնենք քաղաքներ առաջացել են նաև բերդերից հեռու գանձվող և նրանց հետ կապ չունեցող խոշոր բնակավայր-ավաններից:

նավանդ այն պատճառով, որ սովորական գյուղից տարբերվող այս վայրերում արհեստավորներն ավելի մեծ թվով պատվիրատու և զնորդներ կգտնեին, այստեղ հաստատված ֆեոդալների, զինվորների և բնակչության մյուս խավերի շրջաններում:

Այս եղանակով ամբոցներին կից ավաններն աճում էին, իսկ այն բնակավայրերը, որոնք կից լինելով ամբոցին, դեռևս ավան չէին, աստիճանաբար դառնում էին այգայիսին: Ավանները աճում, մեծանում էին: Այստեղ հաճախում էին շրջիկ վաճառականներ, առևտրական կարավաններ: Ամբոցների, բերդերի մոտ ավաններում կարող էր տեղի ունենալ կիրակնօրյա առևտուրը, որին իբրև վաճառորդներ կարող էին մասնակցել տեղական բնակիչները, մանավանդ արհեստավորները, եկվոր վաճառականները, նաև մոտակա գյուղերի որոշ արհեստավորները, իսկ իբրև զնորդներ կարող էին հանդես գալ ավանի և բերդի բնակիչները, եկվոր վաճառականները՝ ձեռք բերելով տեղական արտադրանքի որոշ տեսակները այլ տեղերում վաճառելու համար, տակավ առ տակավ նաև շրջակա գյուղերի բնակիչները: Այսպիսով՝ բերդ-ավանները հանդիսացան այն բնակավայրերը, որտեղ ավելի ու ավելի էր հող ստեղծվում, որպեսզի արհեստները անջատվեին գյուղական համայնքից և դառնային ինքնուրույն զբաղմունք և ապրուստի մշտական միջոց: Ավանը ձգում էր նաև գյուղական արհեստավորներին, որոնք սկզբում այստեղ կարող էին հայտնվել իրենց արտադրած որոշ իրերը և աշխատանքի դիմաց ստացած բնամթերքի մի մասը վաճառելու համար: Ավանն ավելի ու ավելի էր տարբերակվում գյուղից, այստեղ աճում էր արհեստավորների թիվը, գոյանում էր շուկան: Ավանը սկսում էր քաղաք դառնալ:

Ավանների քաղաք դառնալու գործում խոշորագույն նշանակություն ունեցավ արհեստավորական թաղամասերի առաջացումը:

Միջին դարերում սովորաբար միևնույն արհեստով զբաղվող արհեստավորները կենտրոնանում էին միևնույն թաղում կամ շարքում, որտեղ դիմում էին ինչպես պատվիրատուները, նույնպես և զնորդները: Երբեմն էլ նման թաղերի գոյացումը պայմանավորված էր ավալ արհեստի բնույթով, օրինակ՝ կաշեգործները, կավագործները՝ իրենց արհեստանոցները հիմնում էին ավանի կամ քաղաքի միջով կամ նրա կողքով հոսող գետերի և գետակների ափին:

Արհեստավորական թաղերի կամ շարքերի առաջացումը արդեն նշանակում էր մշտական շուկայի առաջացում, քանի որ արհեստավորը հանդես էր գալիս ոչ միայն իբրև արտադրող, այլև իբրև իր արտադրանքը վաճառող:

Բնական է, որ դեռևս ավանում պետք է երևան դային շուկայական հարաբերություններ և իրավունք: Այս տեսակետից վերին աստիճանի կարևոր մի վկայություն դառնում ենք Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»: Այդ «Դատաստանագրքի» երկրորդ մասի 123-րդ հոդվածով սահմանվում է՝ «Եւ վաճառք ըստ հրամանի թագաւորաց կարգեսցին ի քաղաքս, կամ յիշխանաց ըստ հրամանի թագաւորաց, թէ՛ ի քաղաքս, կամ յաւանս, կամ յայլ ինչ տեղիս ի գաւառս»¹: Այս վկայության մեջ քննարկվող հարցի տեսակետից շատ կարևոր է այն հանգամանքը, որ առևտուրը մշտապես բույլատրված էր քաղաքներից բացի նաև ավաններում: Թե երբ է ձևակերպվել այս իրավունքը, մեզ հայտնի չէ, բայց թվում է, թե այդ իրավունքը գոյություն է ունեցել առնվազն այն ժամանակաշրջանում, երբ ձևավորվում էր ֆեոդալական քաղաքը և երբ ավանն սկսել էր խոշոր տնտեսական դեր խաղալ: Այդ իրավունքն ինքը հետևանք լինելով ավանների տեղական ժամանակի ըն-

¹ Մ խ ի Թ ա Ր Գ ո շ, Դատաստանագիրք, երկրորդ մաս, հոդվ. 123, էջ 434:

թացքում խաղացած իրական կտրևոր դերի, խոշոր նշանակություն է ունեցել ավանդների աճի և քաղաք գառնալու պրոցեսում: Առևտուրը՝ ավանի մշտական իրավունքը ճանաչելը նշանակում էր գյուղական պայմաններից տարբեր և արհեստագործության զարգացման համար նպաստավոր պայմանների առկայություն ավաններում, որտեղ արհեստային արտադրությունը սկսում էր դուրս գալ գյուղական համայնքի սպառողական կարիքները բավարարող երկրորդական զբաղմունքի շրջանակներից և գառնալ ինքնուրույն զբաղմունք:

Վերևում նշվեց, որ ավաններ պահպանվել էին հին քաղաքների տեղերում, աճել բերդերին և ամրոցներին կից, բայց կային և այնպիսիները, որոնք գոյացել էին ֆեոդալական դաստակերտ-ձեռակերտներում, բոլոր դեպքերում էլ այստեղ կարող էր տեղի ունենալ արհեստագործության աճն ու զարգացումը, թեև դանդաղորեն, քայլ առ քայլ: Նման ավաններում արտադրության գլխավոր նպատակը, ինչպես նշել է Կ. Մարքսը՝ «հանդիսանում է արհեստավորի, արհեստագործ վարպետի գոյության ապահովումը, հետևաբար՝ սպառողական արժեքը, և ոչ թե հարստացումը, ոչ թե փոխանակային արժեքը, իրրև ինքնանպատակ: Արտադրությունը, այդ պատճառով, ամենուրեք ենթարկված է սպառմանը, արի վրա նա նախորդ հույս է դնում (расчитывается), առաջարկը ենթարկված է պահանջարկին (спрос) և այդ պատճառով արտադրությունը ընդարձակվում է սոսկ դանդաղորեն»¹: Դա միաժամանակ հանդիսանում է ֆեոդալական քաղաքի առաջացման պրոցեսի ձրկարատեսության անտեսական պատճառը: Բայց արհեստագործությունը որքան էլ զանգաղ տակալ առ տակալ անջատվելով գյուղատնտեսությունից կենտրոնանում էր «քաղաքացեալ» ալաններում, ապա՝ ավելի մեծ շա-

փերով քաղաքներում: Դա մի հարատև պրոցես էր, որը վճռական նշանակություն ունեցավ ֆեոդալական քաղաքի ինչպես առաջացման, նույնպես և աճի ու զարգացման գործում:

Յուզերից քաղաք ամենից շատ գալիս էին արհեստավորները, որոնք այստեղ զրտնում էին արտադրության և իրենց արտադրանքի իրացման անհամեմատ ավելի լայն նաբավորություններ, ուստի և նրանց արհեստը զարձեղ էր ապրուստի կայուն միջոց: Այսպիսով, քայլ առ քայլ խորանում էր աշխատանքի հասարակական բաժանումը՝ արհեստը անջատվում էր գյուղատնտեսությունից և կենտրոնանում քաղաքներում: Աշխատանքի այս բաժանումն էլ բնկնում է ֆեոդալական քաղաքի առաջացման հիմքում:

Մարքսիզմի կլասիկները քանիցս ընդդրծել են աշխատանքի բաժանման դերը քաղաքների առաջացման գործում: Աննենկովին գրած իր մի նամակում Կ. Մարքսը, քնննադատելով Պրուդոնին, գրում է. «Պրո. Պրուդոնը այնքան հեռու է աշխատանքի բաժանման հարցը հասկանալուց, որ անդամ չի հիշատակում քաղաքի՝ գյուղից անջատվելու մասին, որը Գերմանիայում, օրինակ, տեղի է ունեցել 9—12-րդ դարերում»¹:

Աշխատանքի բաժանումով էր հիմնականում պայմանավորված ֆեոդալական քաղաքի և՛ առաջացումը և՛ զարգացումը, ապրանքային արտադրության աճը ֆեոդալական քաղաքում:

Վ. Ի. Լենինը նշել է, որ ապրանքային տնտեսությունը իրեն նախորդող հասարակության մեջ այլ կերպ զարգանալ չէր կարող, քան արդյունաբերության անջատումով հողագործությունից: Նա գրում է. «Քանի որ ապրանքային տնտեսությունը նախորդող դարաշրջանում մշակող արդյունա-

¹ К. Маркс, Формы, предшествующие капиталистическому производству, Госполитиздат, 1940, стр. 50.

¹ К. Маркс и Ф. Энгельс. Избранные письма, т. I. 1947, стр. 25.

բերութիւնը միացած է արդունահանող արդունարեւոյթի հետ, իսկ վերջինս զըլխավորում է հողագործութիւնը, ապա ապրանքային անտեսութեան զարգացումը ներկայանում է իր բնարդունարեւոյթի անջատումը հողագործութիւնից՝ մեկ ճշուրը մշտաբար կոչելով՝ «Նահապետական հողագործութեանից կարվող արդունարեւոյթի անաջին ձևն արհեստն է»² ասում է Վ. Ի. Լենինը:

Նույնքան հարատե ու կրկնվող մշտապարտքը, որը խոշոր նշանակութիւն ունեցավ ֆեոդալական քաղաքի առաջացման և աճի տեսակետից— դա դոկտրինայի մասին և խոստան էր դեպի ավանները, քաղաքները:

Բայց ինչո՞ւ էր բացատրվում այդ պրոցեսը և ինչո՞ւ 9—11-րդ դարերում այն տեղի էր ունենում բազմապիստեան կերպով: Պրա համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմաններ և պատճառներ ստեղծվել էին ֆեոդալական հասարակութեան զարգացման հետևանքով՝ արդեն նույն 9—10-րդ դարերում: Ամենից առաջ խոսքը վերաբերում է ֆեոդալական խոշոր տիրույթների, մանավանդ կալված-հայրենիքի ձևավորմանը և դոկտրինայի մասին ճորտացման պրոցեսի խորացմանը: Աշխարհիկ և հոգևոր խոշոր ֆեոդալների տիրույթների և կալվածների ընդարձակումը տեղի էր ունենում ոչ միայն մանր և միջին ֆեոդալների հողերի միավորմամբ՝ խոշոր ֆեոդալների տիրույթների մեջ, այլև դոկտրինայի մասին հողերի զավթման միջոցով: Այդ երևոյթը տեղի է ունեցել լայն շափերով, սակայն դրա վերաբերյալ մեկ հասած տեղեկու-

թիւնները պատահական են ու աննշան: Այդ պատճառով բացառիկ արժեք ունեն Ստեփանոս Օրբելյանի պահպանած վիպակութիւնները ցուրարեղծիների մասին: Սյունիքի դոկտրինայի ապատարբութեան վերաբերյալ հանրահայտ այդ տեղեկութիւնները բազմիցս օգտագործվել են. մենք կամենում ենք ընդգծել միայն հարցի այն կողմը, որ ցուրարեղծիները իրենց հողերի ժառանգական տերերն էին՝ «հին հայրենի տէրք էին»¹, ասում է պատմիչը, այնուամենայնիվ նրանց հողերը խլիվցին և արվեցին Տաթևի վանքին, իսկ գյուղի բնակիչները բունի կերպով հեռացվեցին դարերով շինացրած իրենց բնակավայրից²:

Շատ ավելի մեծ թվով տեղեկութիւններ նույն Ստեփանոս Օրբելյանը, հայրենի վիճակի արձանագործութիւնները և այլ աղբյուրներ հաղորդում են հողերի, ամբողջ գյուղերի՝ իրենց բնակիչներով հանդերձ, ֆեոդալների տիրակալութեան տակ գտնվելու և վանքերին նվիրարեղծելու վերաբերյալ³: Գյուղերը կազմում էին ֆեոդալների «հայրենիքը», պատկանելով նրանց ժառանգաբար կամ ձեռք բերվելով գանձով («գանձագին հայրենիք») և արվում էին վանքերին, նույնպէս հայրենատիրական իրավունքով, սովորաբար իրենց «ժողովրդով» կամ «բնակչօք»: Տեղեկութիւններ կան (թեև ավելի ուշ ժամանակի՝ 13-րդ դարի համար) նաև առանձին շինականներ նվիրարեղծելու վերաբերյալ⁴:

Այս ամենը վկայում է, որ 9—10-րդ դարերում շինականների ճորտացման պրոցեսը խորացել էր, առաջ էր եկել ճորտութիւնը

1 Ստ. Օրբելյան, Պատմութիւն հահանդին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 230:

2 Նույն տեղում, էջ 248:

3 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջեր 174, 178—179, 182—283, 204—207, 209, 215—220, 229—230, 236—237, 245—246, 262—263 և այլն: Վիճակի տարեգիր, էջեր 3, 5, 6, 7, 8, 9, 10, 22 և այլն:

4 Վիճակի տարեգիր, էջեր 53, 65, 68, 85, 87, 140, 144, և այլն:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, Երևան, 1947, էջ 25:

2 Նույն տեղում, էջ 415:

բառի բուն իմաստով¹, որը գտել է և իր օրենսդրական ձևավորումը Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» երկրորդ բաժնի «Յաղագս դասաւանաց շինականաց» երրորդ հոդվածում, որի համաձայն ֆեոդալի տիրույթներից փախած շինականին տերը կարող էր վերադարձնել և ճորտութունից ազատվում էին շինականի միայն այն գավակները, որոնք ծնվել էին այլ վայրերում:

Ճորտական կախման սաստկացումը բնականաբար առաջ բերեց ծանր ճորտացումից խուսափող և ճորտացող շինականների փախուստը դեպի քաղաքացու ավաններն ու գյուղաքաղաքները, քաղաքները:

Այս երևույթը, պատահական բնույթ չէր կրում, այլ հանդիսանում էր հարատև, հարաձուռ մի պրոցես, որը խոշորագույն նշանակություն է ունեցել միջնադարյան քաղաքների աճի համար: Բնավ պատահական չէ, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» շինականների փախուստը գտել է իր օրենսդրական ձևակերպումը: Գոշը շինականի մասին գրում է. «Եւ պայս պատշաճ կարծեմ դատաստան—զի թողեալ գտերունիսն ազատ է ուր և կամիցի կալ»: Այնուհետև ասվում է. «Ապա թէ այսմ ոչ ներէ ոք ի տէրանցն և բռնադատէ զգնացեալսն անդրէն դատնալ, զկնի մահուան հօրն ազատ են որդիք ծնեալք այլուր և ոչ անդ»³:

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» այս հոդվածը երևան չէր գա, եթե շինականների փախուստը խոշոր չափերով տեղի չունենար և հարատև բնույթ չկրեր: Այլևի՞նչ այն երևան չէր գա, եթե չլինեին այնպիսի վայրեր, որտեղ հեռանալով շինականը կազատվեր ճորտ

տութունից, կամ տնավազն, ճորտութունից կազատվեին այդ վայրերում ծնված նրա գավակները: Բայց դա հնարավոր չէր լինի, եթե շինականը մի ֆեոդալի տիրույթից մյուս ֆեոդալի տիրույթի գյուղական վայրերը փախչեր, քանի որ նա այնտեղ էլ ճորտական կախման մեջ կընկներ և նրա գավակներն էլ այնտեղ ծնվելով ազատ չէին լինի ճորտական կախումից:

Իսկ ո՞ւր կարող էին փախչել շինականները, որպեսզի ազատվեին ճորտութունից կամ առնվազն, եթե «ոք ի տէրանց» նրանց հարկադրեր վերադառնալ իրենց նախկին տեղը, դոնե ազատ մնային փախուստի վայրում ծնված նրանց գավակները: Հայկական սկզբնաղբյուրները այդ հարցի պատասխանը բարեխառնաբար տալիս են: Վերևում նշվեց, որ Հայաստանի քաղաքները անտիկ շրջանում ունեցել են իրենց ստատուտը և կազմել կիսաինքնավար համայնք: Ինչպես երևում է, անտիկ շրջանի քաղաքների անկումից հետո էլ քաղաքային բնակչությանն արտոնությունները պահպանվել են, անգամ առանձին դեպքերում, տարածվել են որոշ փոքր (քաղաք չհանդիսացող) բնակավայրերի վրա: Հայտնի է Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունը Ջվարթնոցի մասին: Տաճարը կառուցելուց հետո ներսևս կաթողիկոսը «կարդեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս կրղումարդաց ըստ պայմանի քաղաքականաց»¹:

Թե ի՞նչ էին այս «ըստ պայմանի քաղաքականաց» կոչված արտոնությունները, ստույգ հայտնի չէ, բայց նրանք ավանդաբար դալիս էին հին Հայաստանի քաղաքների ստատուտից, որի վերաբերյալ ակնարկներ և հիշատակություններ կան Տիգրանակերտի հունարեն արձանագրության մեջ և Մովսես Խորենացու մոտ: Մովսես Խորենացին օրենսդրական և այլ կարգի մի

¹ Այդ առթիվ տե՛ս պրոֆ. Ն. Սամուելյան, «Հին հայ իրավունքի պատմությունը», հատ. 1-ին, Երևան, 1938, էջ 320—321 և Ս. Պ. Պողոսյանի «Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում» աշխատության երկրորդ գլուխը, էջ 245—346:

² Մ խ ի թ ա Ր Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 320—321:

³ Մ խ ի թ ա Ր Գ ո շ, Դատաստանագիրք, մասն 2-րդ, էջ 320—321:

¹ Հ ո Վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, Պատմութիւն, էջ 118:

շարք սահմանումներ վերագրելով՝ վաղարշակի թագավորին, նշում է, որ նա իրավարարներ կարգեց արքունի տանը, քաղաքներում և ավաններում: Այնուհետև ասվում է «Հրաման տայ՝ և քաղաքացեաց մարդկան արդոյ և պատիւ լինել առաւել քան զգեղեցեաց. և գեղեցեաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի կարի առ զգեղեցի պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք, և որ ինչ նման այսոցիկ»¹:

Քննելով Տիգրանակերտի հունարեն արձանագրութիւնը և բերելով Խորենացու սույն վկայութիւնը, Գ. Սարգսյանը իրավացիորեն եզրակացնում է, թէ «մեջ բերված բոլոր տվյալները, այսպիսով, խոսում են այն մասին, որ Հայաստանի քաղաքները 4-րդ դարում դեռևս պահպանում էին հելլենիստական ժամանակաշրջանի քաղաքային կազմակերպության (устройство) կարևորագույն դժերը—նրանք հանդիսանում էին անմիջապես թագավորի հետ կապված կիսաինքնավար քաղաքային համայնքներ, յենին իրենց կառավարման օրգանները և վայելում էին մի շարք իրավունքներ ու արտոնութիւններ»²:

Այդ իրավունքներն ու արտոնութիւնները, ձևափոխութիւններ կրելով հանդերձ, պահպանվել են նաև վաղ միջնադարում և Խորենացու ներկայացրածից տարբեր, բայց միջնադարի համար բնորոշ կերպարանք են ստացել Մխիթար Գոշի «Դատաստանագրութեամբ»:

Հենվելով Հայաստանում գոյութիւն ունեցած հին կարգի վրա, Գոշը սահմանում է. «Արք քաղաքացիք առաւել քան

զգեղեցեաց պատուիցին և գեղեցեաց նմանապէս առաւել պատիւ լիցի քան բնակչաց պարակի. սոյնպէս լիցի բերդի բնակչաց և աւանի, զի և կարդ առաջնոցն է մերոց թագաւորացն այլոքիկ»³:

Ճիշտ է նկատված, որ Խորենացու մոտ քաղաքացիները հակադրված են գեղջուկներին, ինչպես իշխանները շինականներին, բանի որ Խորենացու տված տեղեկութիւնները վերաբերում են այն հին շրջանին, երբ քաղաքային (քաղաքացու իրավունք ունեցողը անտիկ քաղաքում) ստրկատեր էր և իշխող²: Գոշի մոտ քաղաքացիները սոսկ «առաւել քան զգեղջուկս պատուիցին», քանի որ նկատի է առնվում միջնադարյան քաղաքի բնակչութիւնը, որի մեջ մտնում էին քաղաքի ոչ ազնվական խավերը՝ առևտրականները, արհեստավորները և մյուս ուսմիկ խավերը: Սրանք գյուղացու համեմատ ունեին որոշ արտոնութիւններ, համեմայն գեղջուկս ազատ էին ճորտութիւնից:

Քաղաքների առաջացման հարցի տեսակետից վերին աստիճանի մեծ կարևորութիւն էր ներկայացնում և այն հանգամանքը, որ քաղաքացիներին համար սահմանված արտոնութիւնները, ըստ Գոշի հիշյալ օրենքի երկրորդ մասի, շնորհված էին նաև բերդի և ավանի բնակիչներին: Այս բանի վրա զիտականները պատշաճ ուշադրութիւն չեն դարձրել, նույնիսկ այդ հատվածը սխալ է հասկացվել:

Գոշի «Դատաստանագրի» ուսուերեն թարգմանութիւն մեջ այդ հատվածը այնպես է հասկացվել, թէ որպիսի արտոնութիւններ ունեին քաղաքացիները գեղջուկների նկատմամբ և գեղջուկները ազարակի բնակիչների նկատմամբ, նույնպիսի արտոնութիւններ էլ վայելում էին բերդի բնակիչները ավանի

¹ Մ ո վ ս ե ո Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, Պատմութիւն, գիրք երրորդ, գլ. Ը, էջ 117—118:

² Г. Х. Саркисян, Из истории городской общины в Армении (IV в. н. э.). ВДИ. № 3, 1955, стр. 58.

¹ Մ խ ի Թ ա Ր Գ ո շ, Դատաստանագրի, մասն երկրորդ, հոդվ. Ա, էջ 318:

² Г. Х. Саркисян, Из истории городской общины в Армении (IV в. н. э.). ВДИ. № 3, 1955, стр. 56.

րնակիչներին նկատմամբ¹: Մինչդեռ Գոշը խոսելով քաղաքացիների արտոնությունների մասին ավելացնում է «սոյնպէս լիցի բերդի բնակչաց և աւանի...»

Հին (անտիկ շրջանի) Հայաստանում առհասարակ ամրացված բնակավայրերը դիտվում էին իբրև քաղաք և նրանց բնակիչները օգտվում էին քաղաքացիների արտոնություններից: Այդ բանը ճիշտ է նկատել և Գոշի ռուսերեն թարգմանիչը: Ինչ վերաբերում է մեր պնդումին, թե ավանների բնակիչները նույնպես վայելում էին այդ արտոնությունները, ապա դա հաստատվում է, ոչ միայն այն պատմական եղելությունը, որ դա նպաստեց ավաններին դառնալ քաղաքներ, այլև Խորենացու և Գոշի արդեն վկայակոչված կողմնակի ցուցումներով: Ինչպես տեսանք, Խորենացին խոսելով վաղարշակ

յնավայրի ձևնարկած միջոցառումների մասին, գրում է, թե նա կարգում է «իրաւարարս ի տանն արբունի, իրաւարարս և ի քաղաքս և յաւանս»²:

Այստեղ խոսքը վերաբերում է քաղաքներում և ավաններում հավասարապես հաստատվող տեղական իշխանությունը, որը պետք է պաշտպաներ այդ վայրերի բնակիչների իրավասությունները և հետևեր նրանց պարտավորությունների կատարմանը: Ավանն, այսպիսով, իրավական տեսակետից հավասարեցվում է քաղաքին, իսկ գյուղի կամ շենի մասին խոսք չկա և չկրել կարող լինել: Գոշն իր հերթին առևտուրը թույլատրելի է համարում քաղաքներին հավասարապես նաև ավաններում³: Գարձյալ գյուղի մասին ոչ մի խոսք: Այս մասնակի վկայությունը նույնպես հաստատում է քաղաքի և ավանի բնակիչներին արտոնությունների ընդհանրությունը, մանավանդ, իբրև կանոն ավանները կապված էին բերդերի հետ և երկուսը միասին դիտվում էին իբրև մի միասնական բնակավայր՝ բերդավան:

Այսպես, քաղաքների, բերդերի և ավանների բնակչությունը վայելում էր որոշ արտոնություններ, որոնցից զուրկ էր գյուղական բնակչությունը: Այսպիսով, քաղաքների, բերդերի և ավանների բնակիչները ազատ էին անմիջական ճորտակաճ կախումից, վայելում էին տեղից տեղ շարժվելու կամ բնակչության վայրը փոխելու իրավունք, քաղաքները, բերդերը և ավանները փախած շինակառուցների այստեղ ծնված զավակները ազատ էին և չէին ճորտացվում: Բացի այդ, քաղաքացիները ազատ կերպով կարող էին դրադվել ոչ միայն արհեստներով, այլև առևտրով և այնպիսի գործերով, որոնք գյուղում չէին լինում: Քաղաքացիները կրե-

¹ Ստորև բերում ենք Գոշի երկրորդ չորվածի համապատասխան մասը և նրա թարգմանությունը: «Արք քաղաքացիք առանկ քան զղեղուկս պատուիցին և զեղջիտց նմանապէս առանկ պատու լիցի քան բնակչաց ագարակի, սոյնպէս լիցի բերդի բնակչաց և աւանի, զի և կարդ առաջնոցն է մերոց թաղաւորացն այգորիկ»:

Ա. Պատուկյանը թարգմանում է. «Горожане должны пользоваться почетом большим, чем сельчане; сельчане же почетом большим, чем жители агарака (բնակիչք ագարակի), то же самое и для жителей крепости в отношении к жителям посада (աւանի), ибо порядок такой. установленный прежними нашими царями». (Армянский Судебник Мхитара Гоша, Перевод с древнеармянского А. А. Паповяна, Ереван, 1954, стр. 148).

Նախ՝ Վ. Բոստամյանցը ճիշտ է վարվել, երբ «սոյնպէս լիցի» բառերից առաջ տեսել է մի ամբողջական միտք և նախադասությունը փակել է միջակետով, ուստի թարգմանիչը իզուր է միջակետը փոխարինել ստորակետով, երկրորդ միանգամայն սխալ է, երբ «սոյնպէս լիցի բերդի բնակչաց և աւանի» հատվածը թարգմանվում է թե ինչևէն «посад» դարձնելով կրե-

¹ Մ ո վ ո ս և Խ ո ռ և ն ա ց ի, Պատմութիւն, գիրք երկրորդ, գլ. Բ, էջ 117:
² Մ ի ի թ ա ր Գ ո շ, Դատաստանագիրք, մասն երկրորդ, ճիճ, էջ 434:

լով քաղաքի ամրութիւնները բարեկարգ պահելու պարտավորութիւններ, միաժամանակ ազատ էին ֆեոդալի օգտին կատարւող պարհակային պարտավորութիւններէր: Նույնը կարելի է ասել բերդի բնակիչների և այն ավանների բնակիչների մասին, սրտեք լծակվելով բերդերի կողքին, վստահօք ժամանակ պատասպարվում էին բերդում:

Վերջապես, քաղաքներում կային տեղական իշխանութեան մարմիններ՝ քաղաքային վարչութեան, որը հետագայում քայլեր կատարեց քաղաքային ինքնավարութեան դառնալու ուղղութեամբ:

Քաղաքների բերդերի և ավանների (կամ բերդավանների) բնակչութեան վայելած արտոնութեաները գյուղական բնակչութեան համար խոշոր ձգողական սեւ ստացան 9—10-րդ դարերում, երբ գյուղացիութեանը ճորտացման էր ենթարկվում: Ճորտացումից խուսափող և արդեն ճորտացած գյուղացին սկզբնապես, երբ դեռ քաղաքներ չկային, կարող էր փախչել դեպի բերդերն ու ավանները: Բերդերում բնակչութեան հաստատելը բիչ էր հնարավոր և մատչելի, ուստի փախչող բնակչութեանը հաստատվում էր բերդերի տակ, որտեղ սովորաբար լինում էին ավաններ, կամ դոլանում էին նման բնակավայրեր: Գյուղերից եկած արհեստավորները սպասարկում էին բերդերի կայազորներին և բերդատակի ավանի բնակչութեանը: Դա հավասարապես վերաբերում է թե՛ այն բերդերին ու ավաններին, որտեղ հաստատված էին հայկական զորքեր և հայ բնակչութեան, և թե՛ այն բերդերին, որտեղ հաստատված էին արաբական զորքեր և զինվորականների ընտանիքներ: Հայտնի է, որ 775 թ. ապստամբութեանից հետո մեծ թվով արաբ բնակչութեան բերվեց Հայաստան և բնակեցվեց առավելապես երկրի հարավի բերդերում՝ Միաֆարկինում, Արզնում, Բաղշում, Խլաթում, Մանազկերտում, Արճիշում, Բերկրիում, նաև Դվինում և Կարինում: Արաբացի այս բնակչութեան սպասողական կարիքները սպասարկում էին, ինչպես հայ

գյուղացիները, նույնպես և արհեստավորները. վերջիններս աստիճանաբար հաստատվում էին այդ բերդերին կից առաջացած ավաններում: Այս պրոցեսի հարատև և շարունակական լինելու շնորհիվ ավանները դառնում էին գյուղաքաղաքներ, ապա և քաղաքներ, որտեղ ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մեծ բնակչութեան էր հաստատվում և, որտեղ փախչելով շինականը ոչ միայն կարող էր ազատվել ճորտութեանից, այլև ապրուստ գտնել պարապելով արհեստներով, աշխատելով քաղաքներում ծավալվող շինարարութեան վրա, սպասարկելով արհեստավորներին և առևտրականներին, կատարելով ամեն տեսակի աշխատանքներ: «Ամբողջ միջնադարի ընթացքում,— գրում են Կ. Մարքան ու Ֆ. Էնգելսը,— շարունակվում էր ճորտերի փախուստը քաղաք»¹:

Գյուղերից հեռանալով քաղաքներում հաստատվում էին ոչ միայն արհեստավորները, այլև ամեն տեսակի սև աշխատանք կատարելու պատրաստ մի բավականաչափ ստվար խավ: Քաղաքները չվող սևագործների բազմութեանը օրվա իր ապրուստը վաստակում էր գերազանցապես օրավարձով կատարվող զանազան պատահական աշխատանքների շնորհիվ. այդ է պատճառը, որ քաղաքային բնակչութեան այս խավին պատկանողները հայկական աղբյուրներում անվանված են «վարձկանք»:

Գյուղացիութեան մի մասի հողերի զավթումը ֆեոդալների և վանքերի կողմից և ճորտացման պրոցեսի խորացումը, խոշոր և մշտապես գործող աղղակ էին նաև այս կարգի բնակչութեան գյուղից քաղաք փախչելու հարցում, իսկ քաղաքների աճը ավելի ու ավելի մեծ հնարավորութեաններ էր բաց անում, որպեսզի «վարձկանները» որևէ աշխատանք գտնեն և օրվա կտոր հացը վաստակեն: «Օրավարձով աշխատողների կարի-

¹ К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. IV, стр. 41.

քը քաղաքներում,— գրում են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը,— ստեղծեց սևագործների ամբուխը (чорнь)»¹:

Գյուղացիական դանդաղածների փախուստը քաղաք 9—10-րդ դարերում տեղի էր ունենում պալլիկյան և թոնդրակյան հուժկու սոցիալական շարժումների պայմաններում: Դասակարգային այս սուր պայքարը նույնպես ազդակ էր հանդիսանում և պայմաններ էր առաջացնում գյուղացիության մի մասի քաղաք փախչելու համար:

Քաղաքների աճող բնակչությունը կենսամթերքներով և հումքով ապահովելու համար քաղաք է համարվում գյուղացին՝ իր մթերքները վաճառելու համար, քաղաքում կուզպակներ են բաց անում ֆեոդալներն ու վանքերը:

Դեռևս 9-րդ դարում այդպիսի կուզպակներ Անիում, օրինակ, տնեին խոշոր ֆեոդալները և Մաքենոցաց վանքը²: Առևտուրը նույնպես սկսում է մասամբ անջատվել գյուղատնտեսությունից, հետագայում նաև արհեստագործությունից: Քաղաքներում առաջանում են շուկաներ, առևտրական կուզպակներ, դինետներ, պանդոկներ, իջևաններ կամ կարավանատներ և առևտրի հետ կապված այլ հաստատություններ:

Առևտուրը երկրի ներսում նպաստում էր քաղաքների աճին: Այդ տեսակետից խոշոր դեր էր խաղում, մասնավորապես միջազգային տարանցիկ առևտուրը, որի ամենանշանակալից կենտրոններից մեկը, ինչպես իրավացի կերպով նշել է Հ. Մանանդյանը, դեռևս 9-րդ դարից դառնում է Հայաստանը³:

Քաղաքների առաջացման նախադրյալներից մեկն էլ քաղաքական բարենպաստ

պայմանների առկայությունն էր: Իս դրսևլորվում է մի կողմից՝ հայկական ֆեոդալական մի քանի տների տնտեսական ու քաղաքական զուրեղացմամբ, մյուս կողմից՝ արաբական խալիֆայի թուլացմամբ ու կազմալուծումով: Հայաստանում առաջացան ֆեոդալական խոշոր իշխանություններ և վերջիվերջո հաստատվեց Բագրատունյաց թագավորությունը: Երկրի անկախությունը վերականգնումը խոշոր շահով նպաստեց Հայաստանի տնտեսական վերելքին և քաղաքների առաջացմանն ու աճին:

Քննարկելով միջնադարյան քաղաքի առաջացման հարցը, պետք է ընդգծել, որ Հայաստանի համար ամենատիպականը հանդիսանում է քաղաքի առաջացումը բերպավանից, ըստ որում, ինչպես կտեսնենք, վերաճելով գյուղաքաղաք, ապա քաղաք է դառնում բերդի առջև փոված ավանը, որը պարսպապատվում է, իսկ բերդը վերածվում է ներքին բերդի կամ միջնաբերդի:

Այս երևույթը ժամանակին այն աստիճան ակնառու և բնորոշ է եղել, որ ժամանակակից Ստեփանոս Տարոնացի պատմիչը, խոսելով, Սմբատ Ա և Աշոտ Ա թագավորների ժամանակների մասին, գրում է.

«Յատուրս սորա (Սմբատի) և յիշխանութեան հօր իւրոյ էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարգարէութեանն՝ հանգչել իւրաքանչիւր ուրուք ընդ որթով իւրով և ընդ թղնեաւ: Եւ այսպէս ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչևիւրքեամբ...»¹:

Եթե Ստեփանոս Տարոնացու համար այս բանաձևը ավելին չէր, քան ակնառու եղևլութեան արձանագրումը, ապա մեզ համար այն ստանում է խոշոր և ճիշտ ընդհանրացման նշանակություն:

Բայց բերդավան—քաղաք զարգացման ուղին տիպականը լինելով, միակը չէր: Եղևլ

¹ К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. IV, стр. 42.

² Վիճական տարեգիր, էջ 5:

³ Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.— XV в. н. э.), Ереван, 1930, стр. 143—144 и др.

¹ Ստեփանոս Տարոնացի, Պատմութիւն, էջ 161: (Ընդգծումը մերն է—Ք. Ա.):

են քաղաքներ, թեև փոքր թվով, որոնք առաջացել են բերդի հետ շկատված ավաններից, ինչպես և այն բնակավայրերից, որոնք զայսպես են երկրի բնական այս կամ այն հարստության օգտագործման հիման վրա: Բոլոր դեպքերում էլ քաղաքների աճն ու զարգացումը պայմանավորված է եղել այն ամեն նախադրյալների ու պայմանների ամբողջությամբ, որոնց մասին խոսվեց վերելում:

Քաղաքներում ֆեոդալները իրացնում էին իրենց ստացած հավելյալ արդյունքի մի մասը, ուստի խոշոր ֆեոդալները սկզբնապես նպաստում էին քաղաքների աճին, մաքսավանդ որ դրա շնորհիվ զգալի չափերով աճում էր նրանց ենթակա բնակչության թիվը, դերազանցապես մյուս ֆեոդալներին ենթակա բնակչության հաշվին: Քաղաքի բնակչության արհեստագործության և առևտրի զարգացումով աճում էին քաղաքի տեր ֆեոդալների եկամուտները: Բացի այդ, երկրի տնտեսական անշատվածության պայմաններում, յուրաքանչյուր խոշոր քաղաք հանդիսանում էր ֆեոդալական սովյալ իշխանության տնտեսական, քաղաքական և ռազմական հենարանը՝ մյուս ֆեոդալների դեմ, ուստի քաղաքի տեր իշխանը նպաստում էր այդ հենարանի աճին ու ամրապլնդմանը:

Անիի, Կարսի և մի շարք այլ քաղաքների պատմությունը շատ ապացույցներ է պարունակում նաև հարցի այդ կողմի վերաբերյալ:

Առաջացող քաղաքների բնակչությունը կազմված էր դերազանցապես արհեստավորներից, առևտրականներից, օրավարձով սև աշխատանք կատարող ամբոխից, նաև երկրագործությամբ պարապող աշխատավորներից: Աշխատավոր ու կեղեքվող բնակչության հոծ զանգվածների կողքին քաղաքներում ապրում էր և աշխարհիկ ֆեոդալներից բաղկացած վերնախավը, որը նույնպես կենտրոնանում էր քաղաքներում շահագործման ենթակա բնակչության և ար-

տադրական օբյեկտների աճին համեմատ: Այս վերնախավը քաղաքների տնօրինությունն ու վարչությունը իր ձեռքը վերցնելու, բնակչությանը կեղեքելու համար, ստեղծում է ստվարաթիվ պաշտոնեություն, իսկ աշխատավորների դիմադրությունը ճնշելու համար, քաղաքներում կենտրոնացնում ու պահում է կայազոր: Ահա այսպես ձևավորվում է միջնադարյան ֆեոդալական քաղաքը, նրան բնորոշ սոցիալական ու դասային կառուցվածքով:

Իր բնակչության կազմով արտադրական և փոխանակային հարաբերություններով քաղաքը դառնում էր մի կարևոր տնտեսական օրգանիզմ, որը ի վիճակի էր մի կողմից՝ զգալի թվով աշխատավորների տրամադրել աշխատանք և ապրուստի միջոցներ, թեև ֆեոդալական շահագործման ծանր պայմաններում, մյուս կողմից՝ քաղաքի ֆեոդալական տարրերին և վերնախավի մյուս ներկայացուցիչներին ընձեռում էր մեծ եկամուտներ ու եկամտի նորանոր աղբյուրներ:

Քաղաքը դառնում էր նաև ֆեոդալական հասարակության կուլտուրական կենտրոնը: Այսպիսով, քաղաքը ֆեոդալական հասարակությանը և նրա տարրեր դասերին սպասարկում էր (թեև տարբեր ձևով ու եղանակով) և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես, և՛ կուլտուրապես, դառնալով ֆեոդալական հիմունքներով կառուցված հասարակական համակեցության կենտրոնատեղի:

Դեռևս միջին դարերում լավ էին հասկանում քաղաքի դերը արտադրության և սպառման բնագավառում, մարդկանց փոխադարձ կապերի և մեկը մյուսի նյութական պետքերը լրացնելու գործում: Բնորոշ է, որ միջնադարյան ձեռագրերից մեկում քաղաքների առաջացումը և նրանց մեջ բնակվելու պատճառը բացատրվում է այն բանով «... դի կարօտ եմք միմեանց, վասն որոյ ժողովիմք ի բնակութիւն քաղաքաց, դի միմեանց լցցուք զպէտան»¹:

¹ Մատենագրանի ձեռագիր № 573, էջ 42ա:

Քննարկելով Հայաստանի միջնադարյան քաղաքների առաջացման պատճառներն ու նախադրյալները, տեսնում ենք, որ դրանք բազմազան են: Վճռական դեր խաղացին տնտեսական պատճառները՝ երկրի տնտեսական վերելքը, արտադրողական ուժերի աճը, աշխատանքի հասարակական այն մեծ բաժանումը, որը դրսևորվեց արհեստագործություն և առևտրի անջատումով երկրագործությունից, որը տեղի ունեցավ ավելի լայն հիմքերի վրա, քան առաջ: Արհեստը և առևտուրը վարզանալով և քաղաքներում կենտրոնանալով աշխատանքի ինքնուրույն բնագավառ և զգալի թվով բնակչության ապրուստի միջոց դարձան:

Խոշոր նշանակություն ունեցան և սոցիալական պատճառները՝ ֆեոդալական «հայրենիքի» ձևավորման հետևանքով գյուղացիության հողերի մի մասի զավթումը, գյուղացիության ճորտացման սլոտցեսի խորացումը, սոցիալական պայքարի խիստ սրվելը և գյուղացիության փախուստը դեպի բերդերը, ավաններն ու քաղաքները, որտեղ ճարտար դրսևում էին ապրուստի որոշ պայմաններ և ազատվում էին ճորտությունից:

Երկրի անկախության վերականգնումը, ֆեոդալական խոշոր իշխանությունների գոյացումը և Բագրատունյաց թագավորության հաստատվելը հանդիսացան քաղաքների առաջացման քաղաքական նախադրյալները:


Քաղաքների առաջացմանը և աճին մեծապես նպաստեցին նաև միջազգային իրավունքայինները, մանավանդ միջազգային

տարանցիկ առևտրի վերականգնումն ու ծավալումը և այդ առևտրի մեջ Հայաստանի խաղացած բացառիկ դերը:

Ահա այս պայմանների գոյացմանը համընթաց դեռևս 8—9-րդ դարերում մի շարք բերդավաններ ու ավաններ դառնում են գյուղաքաղաք, իսկ 9-րդ դարն արդեն հանդիսացավ այն սահմանաբաժան ժամանակաշրջանը, երբ զգալի թվով բերդավաններ ու ավաններ աճելով դարձան գյուղաքաղաքներ ու քաղաքներ:

Քաղաքների առաջացումն ու աճը քննելիս պետք է ուշադրություն առնել այն հանգամանքը, որ ֆեոդալիզմի պայմաններում քաղաքների համաչափ տեղաբաշխման մասին որևէ չափով խոսք չի նկատվում: Երկրի տնտեսապես առավել կարևոր, առավել զարգացած ու խիտ բնակեցված երկրագործական նահանգներում, որոնց միջով, սովորաբար, անցնում էին կարավանային ճանապարհները, ավելի մեծ թվով քաղաքներ առաջացան և նրանց աճը ավելի արագ էր կատարվում: Քաղաքական տեսակետից էլ երկիրը մի միասնություն չէր ներկայացնում, և քաղաքների զարգացման պայմանները ամենուրեք միևնույնը չէին: Այս հանգամանքը հաշվի առնելով, քաղաքների առաջացումն ու զարգացումը հարկավոր է քննարկել ըստ այն վարչա-քաղաքական բաժանման, որը, թեև ոչ կայուն ձևով, գոյություն ուներ Հայաստանում 9—11-րդ դարերում:





Ե Ր Կ Ր Ո Ր Գ Գ Լ Ո Ւ Ե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ 9—11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔՆԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քաղաքների առաջացման և զարգացման համար առավել բարենպաստ տնտեսական և քաղաքական նախադրյալներ կային Հյուսիսային Հայաստանում: Այստեղ էին գտնվում Արարատյան և Շիրակի արդավանդ դաշտերը, որոնք երկրի աչքի ընկնող տնտեսական կենտրոններն էին՝ շին ու խիտ բնակեցված:

Քաղաքական տեսակետից ևս հայտնի է, որ երբ Հայաստանը 9-րդ դարի վերջերին անկախություն ձեռք բերեց, ազատագրվեցին երկրի ոչ բոլոր տերիտորիաները, այլ միայն Հյուսիսային Հայաստանը, Վասպուրականը և սրանց կից որոշ գավառներ: Ամենախոշոր պետական միավորումը Բագրատունիների գլխավորությամբ առաջացավ Հյուսիսային Հայաստանում, որտեղ և ավելի լուրջ նախադրյալներ ստեղծվեցին տնտեսական զարգացման և քաղաքների աճի համար: Բնական է, որ Բագրատունյաց պետության սահմաններում պետք է առաջանային առա-

վել մեծ թվով և ավելի քան աչքի ընկնող քաղաքներ:


Նպատակ ունենալով շարագրել ոչ թե յուրաքանչյուր քաղաքի պատմությունը, այլ լուսաբանել քաղաքների առաջացման և աճի հարցը, կաշխատենք այդ անել յուրաքանչյուր քաղաքի պատմության ընձեռած փաստերով, որքանով այդ թույլ կտա՞ն աղբյուրները:

Դվին: Խնչպես վերևում ասվեց, Դվինը, հիմնադրվելով 4-րդ դարում, 5-րդ դարում արդեն նշանակալից քաղաք դարձավ և պահպանեց արհեստավորական ու առևտրական խոշոր կենտրոնի նշանակությունը: 5—10-րդ դարերում սա Հայաստանի խոշորագույն քաղաքն էր: 9—10-րդ դդ. արաբ հեղինակները ամենից շատ և մեծ գովեստներով խոսում են Դվինի և այստեղ արտադրվող ապրանքների մասին: Արարական տիրապետության շրջանում Դվինում կտրվում էին պղնձյա և արծաթյա դրամներ՝ Դվին և Աւմենիա

մակագրութեամբ և ունեին միջազգային կիրառութիւն:

10-րդ դարի առաջին կեսում, թեև արդեն դոյութիւնն ունեին մի շարք քաղաքներ, բայց Դվինը դրանցից խոշորագույնն էր և մայրաքաղաքի իր համբավը չէր կորցրել:

սեղի ունեցող պատերազմների ժամանակ Դվինը կարևոր կենտրոնակետ էր՝ թե՛ Սըմբատ Ա-ի և թե՛ Ափշինի ու Յուսուֆի համար: Նույն ժամանակներում սկսված ներքին երկպառակութիւնների մեջ էլ Դվինը կարևոր դեր էր խաղում. այստեղ ամրա-



ԴՎԻՆԻ ԲԵՐԴԻ ԲԱՏԱԿԱԶԵԱՆ ԸՍՏ Ն.ՄԱՌԻ

Նկ. 3. Դվին քաղաքի միջնաբերդի հատակագիծը՝ ըստ Ն. Մառի:

Քաղաքի միջնաբերդը գտնվում էր բլրի վրա (նկ. 3), որի շուրջը, մանավանդ դեպի հարավ, փռված էր ընդարձակ քաղաքը:

Դվինը միակ քաղաքն է, որը Շապուհ Բագրատունուն վերադրվող աշխատութեան մեջ կոչվում է «շահաստան», այսինքն արհեստագործութեան և առևտրի խոշոր կենտրոն¹: Թովմա Արծրունու մոտ (10-րդ դարի սկզբին) Դվինը անվանված է «մեծ մայրաքաղաք»²: Հովհաննես կաթողիկոսը 909 թ. դեպքերի կապակցութեամբ Դվինն անվանում է «մայրաքաղաք»³: 10-րդ դարի սկզբներին

ցավ Աշոտ Բ-ի դեմ ապստամբած Աշոտ սպարապետը՝ Շապուհի որդին: Յուսուֆն էլ լավ էր հասկանում այս խոշոր հենակետի դերը, ուստի ձգտելով խորացնել Հայաստանում սկսված երկպառակութիւնները, Աշոտ սպարապետին թագադրեց Դվինում¹: Աշոտ Բ-ը ղգալով իր հակառակորդի ձեռքում այդպիսի մի հենակետի գտնվելու վտանգավորութիւնը, պաշարում է Դվինը, բայց անհաջող, միայն Վրաստանից ստացված զորքի օգնութեամբ նա դրավում է քաղաքը և իրեն հնազանդեցնում Աշոտ սպարապետին²:

1 Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, էջ 72:

2 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 488:

3 Յովհաննէս կաթողիկոս Դրաստանակերտցի, Պատմութիւն, էջ 269:

1 Յովհաննէս կաթողիկոս Դրաստանակերտցի, Պատմութիւն, էջ 366:

2 Նույն տեղում, էջ 373, 375, 376, 384:

Թե որպիսի մեծ և բազմամարդ քաղաք
էր Դվինը, կարելի է դատել՝ 893 թ. տեղի
ունեցած երկրաշարժի նկարագրությունից:
Սաստիկ երկրաշարժից «կործանումն զքնակ-
օթ քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տապա-
լէր»¹, ասում է պատմիչը: Երկրաշարժն
«այնքան ահագին (էր) մինչ զի տոհասա-
րակ կործանեցաւ քաղաքն ամենայն և հիմն
ի վեր տապալեցաւ»²: Երկրաշարժից տու-
ժածներն թիվը քաղաքում «ասի յինև յզի
ատաւել րաճն Հնի (70 հազար)»³: Այս թիվը,
էթե նույնիսկ համարենք խիստ չափազանց-
ված զոհվածների համար և ընդունենք, որ
խոսքը վերաբերում է հիմն ի վեր կործան-
ված քաղաքի ամբողջ բնակչությանը, ապա
դա նույնպես ցույց է տալիս, թե Դվինը շատ
մեծ քաղաք էր:

Շատ ուշագրավ են արարական ազդյու-
ների պահպանած տեղեկությունները Դվի-
նի, իբրև մեծ քաղաքի և արհեստագործա-
կան ու առևտրական խոշոր կենտրոնի մա-
սին:

10-րդ դարի արար աշխարհագիրը ալ-Իս-
թահարին, նկատի ունենալով արաբական տի-
րապետության շրջանը, գրում է. «Դարիլը
(Դվինը), մեծ է Արդաբեյլից: Այս քաղաքը
Հայաստանի մայրաքաղաքն է, նրա մեջ է
երկրի կառավարչի պալատը, ինչպես Առա-
նի կառավարչի պալատը Բերդալում (Պար-
տավ) և Ագրբեջանի կառավարչին ինը՝ Ար-
դաբեյլում: Դվինի շուրջը պարիսպ կա. այս-
տեղ շատ քրիստոնյաներ կան և զլիակալ
մզկիթը եկեղեցու կողքին է: Այս քաղաքում
արտադրում են բրդե զգեստներ, զորդեր,
մութաքիներ, օթոցներ, ժանյակներ և հալ-
կական արտադրության այլ առարկաներ.
Նրանց մոտ արտադրվում է «կրքմըղ» կոշ-
վող ներկը, նրանով ներկում են բրդեղե-
նը... Բացի այդ, ես իմացա, որ այնտեղ

1 Յ ո վ հ ա ն ն է ս կ ա թ ո ղ ի կ ո ս Դ ր ա ս խ ա -
ն ա կ ե ր տ ց ի, Պատմություն, էջ 204:

2 «Յայամաուրթ», հոկտեմբերի թիվ:

3 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ս ի, Պատմություն, էջ 372:

շատ մետաքսե գործվածքներ են արտա-
դրում»¹:

Նույնպիսի տեղեկություններ գտնում ենք
ալ-Մուկադդասիի, իբն-Հատաբալի և ուրիշ-
ների մոտ:

Ալ-Մուկադդասին տալով Դվինի նկարա-
զիրը, նշում է, թե Դվինը ամրացած քաղաք
է և միջնաբերդ ունի: Քաղաքի հրապարակ-
ները, նրա ասելով, խաչաձև են, աները
կառուցված աղյուսից և քարից: Քաղաքն
ունեցել է բազմաթիվ զանր, որոնցից հե-
ղինակը հիշատակում է Բար-Կիլդարը, Բար-
Թիֆլիսը և Բար-Անին: Այս ասում է, թե
«քաղաքն ունի արվարձաններ և շրջապատ-
ված է այգիներով ու սքանչելի վարելահո-
ղերով: Նրա բոլոր արժանիքներով հանդերձ,
քաղաքում գերակշռում են քրիստոնյա-
ները»²:

Իբն-Հատաբալը, կրկնելով ալ-Իսթահարու
սածները, միաժամանակ նկատում է, թե
«Դվինը... ամենանշանավոր վայրը և գա-
վառն է ներքին Հայաստանում»³:

Հուլուդ-ալ-ալամ կոչվող տաջիկական
աշխարհագրական երկում ես նշվում է, թե
Դվինը խոշոր քաղաք է, Արմենիայի կենտ-
րոնը, բարիքներով լի հարուստ քաղաք է,
շատ բնակիչներ և մեծ թիվով վաճառական-
ներ ունի և նրան պատկանող հողերը շատ
են և հասնում են մինչև Զաղիրայի սահ-
մանները: Հիշատակվում է Դվինում ստաց-
վող որդան կարմիր ներկը և գոտիների ար-
տադրությունը⁴:

Մատենագրական ազդյուրներից երևում
է, որ Դվինը սկսած Աշոտ Բ-ի գահակալու-
թյան ժամանակներից մինչև Գագիկ Ա-ի

1 СМОПК, вып. XXIX, стр. 19.

2 Նույն տեղում, вып. XXXVIII, стр. 9—10.


3 Նույն տեղում, вып. XXIX, стр. 92.

4 Հ. Փ ա փ ա ղ յ ա ն, Անանուն տաջիկ աշխարհա-
գիրք Հայաստանի, Ագրբեջանի և Արևելյան Վրաս-
տանի աշխարհագրության և տնտեսական հարաբե-
րությունների մասին (10-րդ դար) ԳԱ «Տեղեկագիր»,
1953, № 5, էջ 78; Худуд аз-алем рукописъ
Туманского. Ленинград, 1930, стр. 32 б.

մա՛րը գտնվել է Բագրատունյաց թագավորության մեջ, թեև եղել են այնպիսի պահներ, երբ նա ընկել է արաբական կամ աղբրբեջանական էմիրների իշխանության ներ-

քը, որը Գանձակի էմիր Փաղունի ազգականը և վասալն էր:

Մատենադրական ավյալներից պարզ երևում է, որ Դվինը 9—10-րդ դարերում



Նկ. 1. Հին շենքերի մնացորդներ Դվին քաղաքի միջնաբերդում, հատակագիծ ճարտ. Գր. Քոչոյանի

քո, բայց կարճատև ժամանակամիջոցում, օրինակ 980-ական թթ.¹: Ինչպես երևում է Գաղիկ Ա-ի ժամանակ Դվինը նորից զրտնրվում էր Բագրատունիների տիրապետության ներքո: Այլ կերպ անհնարին կլիներ Գաղիկ Ա-ի մահից հետո թագավորությունը Հովհաննես Սմբատի և Աշոտի միջև բաժանելիս Դվինը Աշոտին հանձնելը²: 1020-ական, թվականներին Դվինում հաստատվում է Աբու-Սուար Շեղադյան էմիր-

հանդիսանում էր Հայաստանի խոշորագույն առևտրա-արհեստագործական կենտրոնը, որտեղ առանձնապես զարգացած էր գործվածքների և զորգերի արտադրությունը: Դվինն է եղել նաև տրդան կարմիր ներկի արտադրության զլխավոր վայրը³: Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերվել են զանազան շինությունների մնացորդներ միջնաբերդում (նկ. 4) և մեծ քանակությամբ բազմազան իրեր ու առարկաներ, որոնք ցույց են տալիս, որ այստեղ զարգացած գլխավոր արհեստներից էին նաև կավագործությունը, մետաղագործությունը՝ իրենց մի-

¹ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց Ի, Պատմութիւն, էջ 188, 189, 198, 199, 200—201, Տե՛ս նաև Ա. Ս. Шахназарян, Двин. Историко-географический очерк, Ереван, 1940, стр. 125—126.

² Ա ր Ի ս տ ա կ ե ս Վ ա ս Ի վ ե ր ա ց Ի, Պատմութիւն, էջ 7, նաև Մ ա ր կ վ ա ր տ, Հայ Բագրատունիների էյուլագրությունը, Ազգային մատենադարան, գիրք 73, էջ 42:

³ Ա. Ս. Шахназарян, Двин, Историко-географический очерк. Ереван, 1940. стр 92—98.

շարք ճշուզերով հանդերձ: Դվինում գեռևս 9—10-րդ դարերում աղյուսի, փողրակների, հասարակ-անջնարակ խեցեղենի բազմազան տեսակների կողքին արտադրվում էին նաև ճնարակած խեցեղեն, հախճապակի (սկսած 10-րդ դարից) և ապակեղեն: Մետաղագործության ճյուղերից առանձնապես զարգացած էին դարբնությունը, զինագործությունը և սակերչությունը¹:

Դվինում և նրա շուրջը շատ զարգացած էր սյուղեգործությունը և դրա հիման վրա զինեղործությունը: Այստեղ հավանաբար մշակվել է և բամբակը:

Դվինը 9—10-րդ դարերում լինելով Հայաստանի առևտրա-արհեստավորական խոշորագույն կենտրոնը, միաժամանակ հանպիսանում էր առևտրական ճանապարհների հանգուցակետ, որտեղից ճանապարհների տանում էին գեպի Հայաստանի մյուս խոշոր քաղաքները և հարևան երկրները՝ Վրաստան, Ադվանից աշխարհ, Ատրպատական, Իրան, Միջագետք և Բյուզանդական կայսրության կենտրոններն ու Տրապիզոն նավահանգիստը:

10—11-րդ դարերում Դվինը շուրջ 100 հազար բնակչություն ունեցող խոշոր քաղաք էր՝ Մերձավոր Արևելքի խոշոր քաղաքային կենտրոններից մեկը: Այստեղ մեծ զարգացման էին հասել արհեստներն ու առևտուրը. Դվին այցելում էին առևտրական կարավաններ շատ երկրներից:

Ա. և Ի: 5—9-րդ դարերում լինելով Հայաստանի մայրաքաղաքը, Դվինը, սակայն, չդարձավ Բագրատունիների թագավորության կենտրոնը: Այս թագավորության հիմնական բազան Շիրակն էր, որտեղ և առաջանում է նոր մայրաքաղաքը՝ Անին:

Անի բերդը միանգամից չէ, որ քաղաք դարձավ: Ինչպես երևում է Հայաստանի մի շարք բերդեր՝ Գառնի, Երազդավորը, Արտա-

գերս, Դարոյնք, ինչպես և Անին, բացի ամրոց լինելուց, եղել են նաև ավաններ: Ավանը գտնվում էր ամրոցի պարսպից դուրս: Եթե վիճելի է, որ 6—7-րդ դարերում Կամսարականների Անի ամրոցի կողքին գտնվում էր համանուն գյուղը, որտեղից էր Անանիա Շիրակացին¹, ապա միանգամայն անվիճելի են Անի ամրոցի կողքին բնակավայրի գոյությունը հնագիտական փաստերը: Պեղումները ցույց են տվել, որ Անիի միջնաբերդից դուրս Կամսարականների ժամանակ եկեղեցի և բնակավայրեր են եղել: Այդ հին եկեղեցու մնացորդները բացվել են հետագայում կառուցված Առաքելոց եկեղեցու մոտ, իսկ բնակարանների մնացորդները՝ և՛ աստուղ, և՛ Աշոտի պարիսպներից ներս: Այս փաստը վկայում է, որ 7-րդ դարում Անի բերդի կողքին բավականաչափ բնդարձակ բնակավայր է եղել: 9—10-րդ դարերի սահմանադրված Անին բազմաթիվ կողպակներ (արհեստանոց-խանութ) ունեցող ավան էր: Դա երևում է Գրիգոր Սուփանի 901 թվակիր արձանագրությունից, որը փորագրված է Մաքենոցաց վանքի վրա: Արձանագրության մեջ, այլևայլ նվերների հետ, Գոհոտ Սուփանը հիշատակում է նաև առվանքին նվիրված «հինգ կուղակ յԱնի»², Պարզ է, որ դրանք Անիի մեակ կուղպակները չէին: Այսպիսով, Անին 9-րդ դարի վերջերին ավան էր կամ գյուղատաղավար և 10-րդ դարի առաջին կեսում աճելով քաղաք դարձավ. ուստի Ստեփանոս Տարոնասու «առանադ քաղատառու» հատմեի բանաձևը յրիվ չափով վերաբերում է նաև Անեին: Թագավորամիստ կենտրոն դառնալը (961 թ.) նպաստեց քաղաքի զարգացմանը: Այս ամենը նկատի ունենալով, կարելի է պնդել, որ Անին Ֆեոդոսյական քաղաքի առաջատման տեսակետից տալիս է բնութո՞ղ և տնտեսական օրինակ: Անին Աշոտ Գ թագավորի

1 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, գլուխ շորտրդ, էջ 153—238:

1 Ա. Արրա համյան, Անանիա Շիրակացու մասնագրությունը, էջ 35—36:

2 Վիճական տարիգիր, էջ 5:

չանքերով քաղաք դառնալու տեսակետը, ի-
դեպ իրատական լինելով՝ միաժամանակ շի-
համապատասխանում պատմական իրողու-
թյան, քանի որ նա արդեն քաղաք էր թագա-
վորանիստ կենտրոն դառնալուց առաջ:

Երկար տարիների ընթացքում Անիում
կատարած հնադիտական աշխատանքների և
դիտողությունների հիման վրա բազմալսու-
տակ ճարտարապետ Ռորոս Ռորամանյանը
իրավացիորեն նշել է, թե Անին քաղաք էր
դարձել մինչև մայրաքաղաք դառնալը, որ
հին հուշարձանները ցույց են տալիս, «թե
նախքան Աշոտի ամրոն այդտեղ փոխա-
դրելը, արդեն քաղաքը ընդարձակված էր
այսօրվա պարիսպներեն ոչ նվազ տարածու-
թյամբ»² Աշոտ Գ-ի ժամանակ կառուցված
պարիսպը հին քաղաքն ամբողջությամբ չէր
ընդգրկում: Արտաքին պարսպից ներս եր-
կու ձորերի միացման տեղից ոչ հեռու բար-
ձունքի վրա գտնվում էր քաղաքի միջնա-
բերդը (տախտակ I):

Բազրատոմնիների թագավորության կենտ-
րոնական մարզում՝ Շիրակում ուրիշ քա-
ղաքի բացակայությունը և Անիի մայրա-
քաղաք դառնալը իսկապես նպաստեց այդ
քաղաքի արագ աճին: Միայն բառորդ դար
էր անցել Աշոտ Գ-ի ժամանակ Անի քա-
ղաքի առաջին պարիսպը կառուցելուց,
(963—964 թթ.). երբ քաղաքն այնքան ըն-
դարձակվեց, որ հարկ եղավ 989 թ. Սմբատ
Բ-ի ժամանակ նոր պարիսպ կառուցել, որն
սրդեն փակում էր Ախուրյան և Անի գետե-
րի միջև փովոզ հրվանդանը, ոչ թե նրա
ծայրին մոտ գտնվող ամենանեղ մասում,
բրտեղ կանգնեցված էր առաջին պարիսպը,
այլ դրանից ավելի հեռու, որով պարսպի
մեջ առնված քաղաքը մոտ եռապատիկ ըն-
դարձակվում էր (տե՛ս քաղաքի հատակա-
դիժր նկ. 5): Բայց այս ժամանակ արդեն

գոյացել էին քաղաքի արվարձանները,
որոնք պարսպի մեջ չառնվեցին: Ռորաման-
յանը իրավացի է ասելով, թե Սմբատի ժա-
մանակ կառուցված պարիսպն էլ ամբողջ
քաղաքն իր մեջ չառավ՝:

8—10 մետր բարձրություն ունեցող այս
պարիսպը (տխտ. II). ձգվում էր 2,5 կիլո-
մետր երկարությամբ: Նրա առջև Իգաձորի
և Գլիձորի միջև ընկնող հարթության վրա,
պարսպի առավել խոցելի մասում կառուց-
վել էր ջրով լցվող խրամատ, որն ուներ
500 մետր երկարություն և 10—12 մետր
լայնություն, երկու կողմից շարված որձա-
քարերով՝ ջուրը պահելու համար: Նրամա-
տի ավելի բարձրադիր մասից ջուրը թափվում
էր ցածրադիր մասերի մեջ, իսկ երկու ծայ-
րերից հոսում դեպի ձորերը, մանավանդ
դեպի Գլիձոր՝ պարտեղները ջրելու և ջրա-
ղացներ աշխատեցնելու համար³:

10-րդ դարի վերջին Անին արդեն խո-
շոր քաղաք էր, որը եթե իբրև արհեստա-
պործության և առևտրի կենտրոն չէր անցել
Դվինից, ապա ետ էլ չէր մնում նրանից: Ն.
Յա. Մառի այն պնդումը, թե «Բագրատու-
նիների ժամանակ Անին իսկապես դեռևս
քաղաք չէր»³, իրականության չի համա-
պատասխանում:

Անին դեռևս 10-րդ դարում և 11-րդ
դարի առաջին կեսում դառնում է նաև խո-
շոր կուլտուրական կենտրոն: Նրա մեջ և
նրա շուրջը հիմնվում են մի շարք վանական
դպրոցներ, դրանց թվում և Դպրեվանքի
բարձր տիպի դպրոցը:

Հայ պատմիչները միարբերան նշում են,
որ Անին փարթավազ քաղաք էր, որն աչ-
քի էր ընկնում իր ցոփ բարեբրով, վաշ-
խառությամբ, տնանվների կեղեքվածու-


1 Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 596:

2 Ռորոս Ռորամանյան, Նյութեր հայկա-
կան ճարտարապետության պատմության, հատ. Բ,
էջ 323:

3 Ռորոս Ռորամանյան, Նյութեր..., հատ.
Ա, էջ 324:

2 Նույն տեղում, էջ 334:


3 Н. Я. Марр. Ани. Ереван. 1939. стр.
62.



Նկ. 5. Անի բազարի բնօրինակը հաստիպղիծը՝ ըստ Յ. Մոստիկի

թյամբ¹: Առավել ուշագրավը Ուոհայեցու վկայությունն է. խոսելով սելջուկների ձեռքով Անիի ավերման մասին նա ասում է. «Վասն զի էր Անի բազմամբոխ, քաղաքն

Իհարկե, եկեղեցիների թվի նման չափազանցումները Անիի շատ խոշոր քաղաք լինելու և շքեղության արտահայտություններ են միայն:



Նկ. 6. Անիի Բագրատունյաց պալատի հատակագիծը, բառ Թ. Բորամանյանի

լցեալ բիւր բիւրոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ հիացումն արկանէր տեսողացն, զոր կարծեալ զօրացն բազմաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց իցէ. և յայնմ ատր հազար և մէկ եկեղեցի ի պատարագի կայր յԱնի»²:

Անիի փարթամությունը նշել են նաև օտար հեղինակները: Բյուզանդական հեղինակ Միքայել Ատտալիատոսը (11-րդ դ.) ասում է «Անին մեծ և բազմամարդ քաղաք է»³:

Արաբացի հեղինակ ալ-Ասիրն էլ է վկայում, որ Անին մի մեծ ու բարգավաճ քաղաք էր, ուներ մեծ բնակչություն և նրա մեջ կային ավելի քան 500 եկեղեցի⁴:

¹ Արիստակես Աստիվերոցի, Պատմութիւն, էջ 111:

² Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 147:

³ Ἄνιον πόλις ἐστὶ μεγάλη καὶ πολυάνθρωπος. Michaelis Attaliothae Historia, Bonnæ, MDCCCL III, 79.

⁴ Из Тарихи ал-Камиль Ибн-ал-Асир, пер. П. К. Жюзе, стр. 120.


Անին իրոք շքեղորեն զարդարված էր բարձրարվեստ ճարտարապետություն ունեցող նշանավոր հուշարձաններով, որպիսիք էին Բագրատունիների պալատը միջնաբերդում (տես հատկագիծը, նկ. 6), Անիի մայր տաճարը (տխտ. III), Զվարթնոց տաճարի օրինակով կառուցված եկեղեցին, որ շինել էր տվել Գագիկ Ա թագավորը (տխտ. IV ա) Փրկչի եկեղեցին, (տխտ. IV բ), Առաքելոց եկեղեցին և բազմաթիվ այլ շենքեր: Քաղաքի մատույցները պաշտպանված էին ամուր բերդերով:

Շիրակի թագավորության անկումից հետո մինչև սելջուկյան արշավանքները, Անիում կյանքը զարգանում էր իր նորմալ ընթացքով: 1064 թ. Ալի-Արսլանը պաշարելով Անին, գրավեց քաղաքը և Արիստակես Աստիվերոցու ասելով՝ «զԱնի խողխողմամբ սրոյ և հրկիզութեամբ ամայի և անպատ արար»¹: Վրաց աղբյուրները ևս վկայ-

¹ Արիստակես Աստիվերոցի, Պատմութիւն, էջ 115:

յում են, որ Ալի-Արսլանը «Գրավեց Անին, ավերեց այն և անթիվ ժողովուրդ գերեց և զնաց իր երկիր՝ Պարսկաստանը»¹։ Քաղա-

քը և մայրաքաղաքի հռչակ ձեռք բերեց։ Այդ բանում խոշոր նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ Անին հանդիսանում էր



Նկ. 7. Անի քաղաքի բնակելի մի թաղամասի հատակագիծը, ըստ Թ. Բորամանյանի։

քում տեղի տվանցած կոտորածի, ավերի և գերեզմանաբերական մասին խոսում է նաև Սամվել Անեղիին²։

Քաղաք դառնալով 10-րդ դ. առաջին կեսին, Անին այնքան արագ աճեց, որ նույն դարի վերջերին և 11-րդ դարի սկզբներին դարձավ Հայաստանի խոշորագույն քաղա-

մայրաքաղաք՝ Հայաստանի տերիտորիայում, այդ դարերի ընթացքում գոյություն ունեցող ամենախոշոր և ամենազտրեղ Բագրատունյաց պետության, որին ենթակա էին նաև հայկական մյուս թագավորություններն ու արաբական էմիրությունները։ Այսպիսով, տնտեսական հանգամանքների կողքին, քաղաքի աճի համար խոշոր դեր խաղում էին նաև քաղաքական հանգամանքները։

Անիի պեղումները ցույց են ապրիս, որ այստեղ առավել զարգացած արհեստներից

1 Լ. Ս ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Վրաց աղբյուրները, հատ. Ա, էջ 207։

2 Սամուելի քահանայի Անեցույ Հաւարմունք ի դրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 112։

էին շինարարակաճ, արհեստները, դարբնությունը, զինագործությունը, պղնձագործությունը, կավագործությունը, հասարակ (անջնարակ), ջնարակած խեցեղենի և բարձրարվեստ հախճապակու արտագործությունը: Կարևոր տեղ էին բռնում նաև մանածագործությունը և գրչության արվեստը: Անին հռչակված էր շինարարությամբ և այս քաղաքում աշխատել են մեծ թվով շինարար վարպետներ, քանդակագործներ, ատաղձագործներ և շինարարության հետ կապված այլ արհեստավորներ: Անիում կային մեծ թվով ջրաղացներ և ձիթհաններ:

Արհեստագործության և առևտրի խոշոր կենտրոն դարձած այս քաղաքում կային շուկաներ և ըստ երևույթին դեռևս 10—11-րդ դարերում գոյացել էին արհեստավորական և առևտրական շարքեր, որոնց վերաբերյալ տեղեկություններ մեզ հասել են 13-րդ դարից:

Առևտրի հետ կապված գոյացել էին նաև իջևաններ և հյուրատներ: Անին, այսպիսով, դեռևս 10-րդ դարի վերջերին և 11-րդ դարի առաջին կեսում հանդիսանում էր Մերձավոր Արևելքի խոշոր քաղաքային կենտրոններից մեկը:

Կարս: Այս քաղաքը ևս, ինչպես Անին առաջացավ 10-րդ դարում: 9-րդ դարի վերջերին Կարսը բերդ էր, տրտեղ ամրացել էր Սմբատ Ա-ի հորեղբայր սպարապետ Աբասը¹: «Կարուց բերդը» նույն ժամանակի համար հիշատակում է և Ստեփանոս Տարոնացին, որի ասելով Սմբատի հակառակորդ Ափշինը «առնու գերդն Կարուց, գերի վարեալ զազատըս կանամբք և մանկամբք իւրեանց և ողորմելի տեսակաւ հասուցանէ ի քաղաքն Դուին»²: Բնորոշ է, որ Կարսը անվանված է բերդ, իսկ Դվինը քաղաք և գերի վերցվածներն էլ ազատներն են ու նրանց ընտանիքները՝ բերդի համար տիպիկ բնակիչներ. այլ գերիներ չեն

հիշատակվում: Թուվա Արծրունին խոսելով նույն դեպքերի մասին, ասում է, թե Ափշինը «պաշարէ զբերդն Կարուց, և բացեալ զմթերեալ տունս գանձուց՝ առնու աւար բաղում»³: Պարզ երևում է, որ Կարսը տնտեսական նշանակություն էր ձևաբ բերել, քանի որ այնտեղ կային պետական գանձարան և մթերանոցներ: 10-րդ դարի առաջին քառորդում Կարսը աճելով արդեն քաղաք է դառնում, որտեղ 929 թ. հաստատվում է Աբաս թագավորը: Աբասը կառուցել է տալիս կաթողիկե եկեղեցին «ի քաղաքին Կարուց վիմարդեան արձանօք, որձաքար սուղովատատաշ վիմօք բտլորապէս գմբէթաւորեալ պայծառ զարդուք երկնանման խորան»⁴: Այնուհետև Տարոնացին Կարսի մասին խոսում է իբրև հայտնի քաղաքի: Այդ ժամանակամիջոցում Կարսը հիշատակում են և օտար հեղինակները, օրինակ, Կոնստանդին Միրանածիճը⁵ (913—959): Այն բանից հետո, երբ Անին դարձավ Բագրատունիների թագավորանիստ քաղաքը, Կարսը շկորցրեց իր նշանակությունը, մասնավանդ, որ Աշոտ Գ-ի եղբայր Մուշեղը, որը նշանակված էր Կարսի կառավարիչ, 963 թ. վասալական իրավունքներով թագավոր հռչակվեց: Կարսը դարձավ Վանանդի առանձին թագավորության կենտրոնը: Կարսի թագավորության առաջացումն իսկ բացատրվում է այս քաղաքի և նրա նահանգի՝ Վանանդի նշանակալից տնտեսական դերով, ինչպես և Բագրատունիների միասնական թագավորություն ստեղծելու փորձերի տնտեսական հիմքերի բացակայությամբ:

Կարսը աճում և ընդարձակվում էր: 10-րդ դարի երկրորդ կեսին նա դարձել էր Հայաստանի առավել խոշոր քաղաքներից մեկը: Վանանդի համար նա մայրաքաղաք էր, և

1 Յ ո վ հ ա ն ն է ս կ ա թ ո ղ ի կ ո ս Դ բ ա ս խ ա ն ա կ ե բ տ ց ի, Պատմութիւն, էջ 183:

2 Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 161:

1 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ն ի, Պատմութիւն, էջ 448:

2 Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 172:

3 Const. Porph. De administrando imperio, ed. Bonn, cap. 44.

Ստեփանոս Տարոնացին նրան այդպես էլ անվանում է՝ «մայրաքաղաքն Կարս»¹:

Կարսը արդեն դարձել էր արհեստագործական և առևտրական կենտրոն: Նա խոշոր գեր էր խաղում տարանցիկ առևտրի մեջ, կառավարանային ճանապարհներով կապված լինելով Անիի, վրաց Բագրատունիների թագավորության կենտրոնների՝ Արտանուջի, ինչպես և Դմանիսի և Թրիլիսի քաղաքների հետ: Արևմուտք տանող առևտրական ճանապարհով Կարսը կապված էր Արծն խոշոր քաղաքի հետ: Սև ծովի ափերը տանում էին Կարսից Արտանուջի վրայով և Կարսից Արծնի վրայով գեպի Տրապիզոն և մյուս նավահանգիստները դնացող ճանապարհները: Կարսի իշխանները մեծ եկամուտներ էին ստանում արհեստներից և առևտրից, նաև տարանցիկ առևտրից: Պատմիչի գիպուզ բնութագրությամբ կարսեցիները փարթամացել էին «հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալք»²:

Դրան նկատելի կերպով խանգարում էր անվերսահմանության բացակայությունը, ու գողությունը, որը տարածված էր թե՛ քաղաքում և թե՛ Վանանդով անցնող առևտրական ճանապարհների վրա: Այդ էր պատճառը, որ Մուշեղին հաջորդած Աբաս թագավորը (984—1029) ամենավճռական միջոցառումներով ապահովեց տնտեսական գործունեության անվերտանգությունը քաղաքում և կարավանների անվտանգությունը ճանապարհներին³:

Կարսը քաղաք դառնալուց ի վեր պատերազմական հարձակման չէր ենթարկվել, ավեր ու կողոպուտ չէր կրել օտարներից, մի բան, որը նպատակ էր նրա պարզամանր: Երբ 1053/54 թվականներին սելջուկները⁴

հարձակվեցին Կարսի վրա, այս հարուստ քաղաքը պաշտպանության հարցում անփութվ գտնվեց, թեև Վանանդի զորքերը խիզախ կոմսեր էին: Արիստակես Լաստիվերացին, սելջուկների հարձակման առթիվ, գրում է. «Քաղաքս այս ի բազում ժամանակաց հետ չէր զփորձ շարեաց առեալ. վասն որոյ յանհոգս և յանկասկածի կէին, հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ... և քանդի առանց զիշերագիտաց էր քաղաքն, մտեալ ի ներքս, սուր ի վերայ առն եղեալ, անողորմ կոտորեցին դամենեան, որ յոչ ողորց արժանի է պատմութիւնս... քանդի մեծահարկի և պատուական վաճառականք շարաշար մահուամբ ըստյանեալք, երիտասարդք և ըմբշամարտք ի փողոցսն սրահոտորք. պատուական ալիք ծերոցն արիւնաշաղախ առ նոքօք անկեալք»:

Կոտորածից ու կողոպուտից ազատվում են միջնաբերդում ամրացած աղնվականները և սակավաթիվ այլ բնակիչներ, որոնց հաջողվում է նույնպես պատասպարվել միջնաբերդում: «Եւ մնացեալ զօրն ողջոյն ի տեղւոջն խիլ արկեալ բրեցին զառուսն, և ապա հուր հարեալ այրեցին քաղաքն, և ինքեանք առեալ զգերի և զկապուտ քաղաքին դնացին յաշխարհն իւրեանց»⁵:

Այս վկայություններից պարզ երևում է, որ Կարսը նշանակալից քաղաք էր, աշխույժ առևտրա-արհեստավորական կյանքով: Քաղաքը շրջափակված էր քարե ամրակուտ պարսպով, իսկ քարձրագիր մի բլրի վրա կանգնած էր քաղաքի միջնաբերդը:

Վաղարշակեալ: Այս փոքրիկ քաղաքը 5—9-րդ դարերում դարձել էր պարզապես մի բերդ: Կեղծ Շապուհ Բագրատունին Ալաշկերտը (Վաղարշակերտը) և Վաղարշավա-

1 Ս տ ե փ ա ն ո ս Տ ար ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 196.
2 Ա ռ ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ եր տ ց ի, էջ 61:
3 Ս տ ե փ ա ն ո ս Տ ար ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 196—197:
4 Արիստակես Լաստիվերացու մոտ ասված է. «զօր անօրինացն» (էջ 61), որոնք ակադ. Հ. Մանանդյանի ասելով Շրատ երևույթին ոչ թե սելջուկյան թուրքերի

զորքերն էին, այլ հարեան երկրների հրոսակախմբերը (տե՛ս Հ ա կ ո թ Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. 3, էջ 47): Նույնպես նման պնդման համար բավարար հիմք չկա:
1 Ա ռ ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ եր տ ց ի, Պատմութիւն, էջ 61—62:
2 Նույն տեղում, էջ 62:

նը հիշատակում է այն քաղաքների թվում, որոնք Սմբատ Ա-ի ժամանակ ազատագրվելով մտնում են Բագրատունիների թագավորության մեջ¹: Ասողիկն էլ հիշատակում է Վաղարշակերտը Բագրատունիների թագավորության մեջ և ավելացնում է, թե Յուսուֆի զորքերը «զան ի դավանն ի Բագրևանդայ և առնուն զբերդն Վաղարշակերտ յՅՄԹ թուականին և ապա երթեալ հասանին ի յամուրն Կապուտայ», որտեղ ամրացել էր Սմբատը²:

Եթե Ասողիկը 10-րդ դարի սկզբին Վաղարշակերտը անվանում է բերդ, ապա նույն դարի վերջերին հիշատակում է իբրև քաղաք, որտեղ հավաքվում են հայ և վրաց զորքերը և դուրս թշում երկիրն ասպատակող Մամլունի ընդհանր³: Նույն հեղինակը Վաղարշակերտը քաղաք է անվանում նաև 11-րդ դարի սկզբին, երբ այստեղ է դալիս բյուզանդական կայսր Վասիլ Բ-ը և իզուր սպասում Դագիկ Ա-ի իրեն ներկայանալուն: Իսկ Գագիկը շներկայացավ, «իբրև փոքրութի՞ն համարեալ զգալն իւր առ նա»⁴:

Ըստ երևույթին Վաղարշակերտը 10-րդ դարի վերջերին և 11-րդ դարի սկզբներին մտնում էր վրաց Դավիթ Կյուրոպաղատի տիրապետության մեջ: Կաստիլերոցին ևս ասում է, թե վրացի եպիսկոպոս էր նստում «ի քաղաքն Վաղարշակերտ»⁵:

Ինչպես հնում, նույնպես և միջին դարերում Վաղարշակերտը մնաց մի փոքրիկ և աննշան քաղաք:

Լռոն: Շիրակի Բագրատունիներից վասալական կախում ունեցող Տաշիր-Չորագետի թագավորությունը չառաջանալով 978 թ., քիչ թե շատ աչքի ընկնող մի կենտո-

րոն շուննր: Սկզբնապես նրա թագավորանիստ բերդաքաղաքն էր Սամշվիլդեն: Շուտով, սակայն առաջանում է մի բերդաքաղաք Տաշիր-Չորագետի կենտրոնում: Պատմիչները այդ նոր բերդաքաղաք կոռեի հիմնադրումը վերագրում են Դավիթ Անհողին թագավորին, որի ժամանակ (989—1048) Տաշիր-Չորագետի թագավորությունը առավել ընդարձակ և ուժեղ էր: Խոսելով Կյուրիկե Բ-ի մասին Վարդան Արևելցին ավելացնում է. «Սմա հայրն Դաւիթ շինեաց զԼօռէ, և այլ ևս երկոտասան բերդ»¹: Այս վկայությունից երևում է, որ Լոռեն էլ հիմնվել է իբրև բերդ: Տեղում դիտելով այս բերդի մնացորդները դժվար չէ համոզվել, որ պարսպապատը սկզբից ևեթ կանգնեցվել է Չորագետի և Միսխանա գետակի միացմամբ կազմված եռանկյունի հրվանդանի հիմքի այն մասում, որը ամենից նեղ է (այդ պարսպապատը դարերի ընթացքում կրկնով փոփոխություններ այժմ էլ կանգուն է): Պարսպի ներսում մնում էր մի բավականաչափ ընդարձակ տարածություն, որտեղ կարող էր առաջանալ Լոռե ավանը:

Լոռեն աճում և քաղաք է դառնում 11-րդ դարի կեսերին և 1064 թ. Կյուրիկե Բ Ռազավորը (1048—1090-ական թթ.) այն դարձնում է թագավորանիստ: Քաղաքը զգալի տարածություն էր բռնում Չորագետի և Միսխանա գետակի միջև ընկնող հրվանդանի վրա և իր հատակագծով (նկ. 8) հիշեցնում էր Անի քաղաքը:

Բջնի: Բագրատունյաց թագավորության մեջ խոշոր դեր խաղացող Պահլավունի իշխանական տան մի ճյուղը հաստատվել էր Այրարատ նահանգի Մաղաղ գավառում, կենտրոն ունենալով Բջնին: Աղբյուրներում Բջնին հիշատակվում է միայն 11-րդ դարից սկսած: 1021 թ. երկիրը ասպատակող դեմիկները հասնում են մինչև Բջնի բերդը, որի տերն էր Վասակ Պահլավունին. սա ետ

1 Շ ա պ ու Ն Բ ա գ ր ա տ ու ն ի, Պատմութիւն, էջ 65:

2 Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 165:

3 Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 267:

4 Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 277—278:


5 Ա ր ի ս տ ա կ ե ս լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, Պատմութիւն, էջ 9:

1 Վ ա ր դ ա ն Բ ա ր ձ ր ք ք ր ց ի, Հաւարումն պատմութեան, էջ 106:

մղեց թշնամուն և ինքն էլ պատահաբար սպանվեց¹: Բջնի բերդի տերը զարձավ Վասակի որդի Գրիգոր Պահլավունին: Ինչպես երևում է Բջնի բերդի կողքին կար և ավան,

մասին, ստում է, թե սա էր «ի քաղաքէն Բջնոյ»¹:

Սուրմարի: 11-րդ դարում հիշատակվում է և Սուրմարի կամ սուրբ Մարի բերդաքա-



Նկ. 8. Նորի քաղաքի հասակագիծը, ՐԱՍ ՀԱՐԱՄ. Վ. ՀԱՐՈՒԹՅԱՆՆԵՐԻ:

որը արագ աճելով դառնում էր քաղաք: Բջնիի եկեղեցու վրա 1031 թ. փորագրված արձանագրության մեջ ասվում է. «Շնորհին Աստուծոյ այս հրամանք է իմ տեառն Պետրոսի և Սմբատայ շահնշահի, որ հաստատեաց եպիսկոպոսարան ի Բջնի քաղաքս»²: Բջնիի ուներ և հզոր ամրոց, որը Ուռհայեցու մոտ կոչված է «Բջնի մեծ ամրոց»³: 1045 թվականին Գրիգոր Մաղիստրոսը Բջնիի հանձնեց Բյուզանդիային⁴: Կիրակոս Գանձակեցին խոսելով Գրիգոր Մաղիստրոսի որդի Վահրամի աթոռակալութւյան

գաբը: Սա պատկանում էր Վեստ Սարգսին, որտեղ նա ամրացավ՝ հեռանալով Անիից, իրրև Բագրատունյաց թագավորության սահմանման կողմնակիցների հակառակորդ: Նշելով Անիի միջնաբերդից՝ Վեստ Սարգսը «երթայ ի բերդաքաղաքն, որ կոչի Սուրմարի»²:

Իրն-ալ-Ասիրը սելջուկների գրաված քաղաքների ու բերդերի թվում հիշատակում է և Սուրմարի բերդը, որի մեջ կային հոսող ջրեր և այգիներ³:

Բագրատունյաց քաղախորուրյան մեջ գտնվող գյուղաքաղաքները: Առավել նշանա-

¹ Մատթևոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 11—14:

² Վիմակեան տարեգիր, էջ 17:

³ Մատթևոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 88:

⁴ Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 41—42:

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 89:

² Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 38:

³ Из Тарихи ал-Камиль Ибн ал-Асфра, пер. П. К. Жүзе, стр. 118.

կալից քաղաքների կողքին առաջացած մանր քաղաքներից քիչ էին տարբերվում գյուղաքաղաքները, որոնց բնակչության մի մասը նույնպես զբաղվում էր արհեստագործությունամբ և առևտրով: Ինչպես փոքրիկ քաղաքները, նույնպես և գյուղաբնակավայրերը դավառական փոքրիկ և զուտ տեղական նշանակություն ունեցող կենտրոններ էին: Կային և խոշոր քաղաքների մերձակայքում գտնվող գյուղաքաղաքներ, որտեղ արհեստներն ու առևտուրը նշանակալից զարգացում չունեցան, բայց որոնք ոչ միայն սպասարկում էին տվյալ խոշոր քաղաքը մթերքներով և հումքով, այլև ունեին իրենց արհեստանոցներն ու շուկան, կապված էին խոշոր քաղաքի հետ տնտեսական, առևտրական բավականաչափ սերտ կապերով և իրենց հյուրատուներում ու իջևաններում հյուրընկալում էին զեպի մեծ քաղաքը եկող առևտրական կարավանները, քանի որ խոշոր կարավանները մեծ քաղաքների պարիսպներից ներս չէին թողնվում: Գտնվելով խոշոր քաղաքի մերձավոր և հեռավոր մատուցներում, նրանցից մի քանիսը ունեին նաև ռազմական-պաշտպանական նշանակություն:

Առանց մանր քաղաքների և գյուղաքաղաքների գերի հաշվառման՝ աշխատանքի հասարակական բաժանման, արհեստագործության, առևտրի և քաղաքային կյանքի պատկերը թերի կլիներ:

Մի շարք գյուղաքաղաքներ դասավորված էին Անիի շուրջը և սերտորեն կապված էին նրա հետ: Դրանք էին Մրենը, Տեկորը, Շիրակավանը, Բագարանը, Արգինան, Բալինը, Արուճը, Կողբը և Կաղզվանը:

Մրենը հիշատակված է դեռևս 5-րդ դարում¹, իսկ 7-րդ դարում այստեղ կառուցվել է մի հռչակավոր եկեղեցի, «որ ի քաղաքագիւղն Մրենն»²: Այս վկայությունը 10-րդ դարի հե-

ղինակ Հովհաննես կաթողիկոսինն է, ուստի Մրենը անվանելով քաղաքագյուղ՝ պատմիչը, հավանաբար, ելնում է իր ժամանակի իրողությունից:

Մրենի ճարտարապետական հուշարձանների վրա փորագրված բազմաթիվ արձանագրությունները ցույց են տալիս, որ 10—11-րդ դարերում Մրենը Բագրատունիներին պատկանող կարևոր բնակավայր էր, շրջապատված ընդարձակ այգիներով:

Ինչպես երևում է, Մրենը ամրացված էր պարսպով. 1160-ական թվականներին Նլակուղ աթաբեկը արշավելով Անիի կողմերը «գայ ի Մրեն,— ասում է պատմիչը,— և այրէ անդ զամրոցն, ուր ողջակիզեցան... ոգիք իբրև շորեք հազար...»³:

Նթե ընդունենք, որ այս թիվը չափազանցված է, հաշվի առնենք և այն, որ վրտանդի ժամանակ ամրոցն էին հավաքվել մոտակա գյուղերի բնակիչները, այնուամենայնիվ կստանանք բնակչության մի այնպիսի քանակ, որը բավական էր միջնադարյան մի գյուղաքաղաքի համար:

13-րդ դարում Մրենը Զաքարյաններին է պատկանել, որոնցից և այն գնել է անեցի հարուստ Ավետեսը Սահմաղինը⁴:

Տեկորն էլ Մրենի պես Անիի կողքին հին ժամանակներից ի վեր գոյություն ունեցող բնակավայր էր: Այստեղ 5-րդ դարում կառուցված բազիլիկ եկեղեցու վրա 7-րդ դարում գմբեթ է դրվել: 10—11-րդ դարերում Տեկորը պատկանում էր Բագրատունի թագավորներին: Արձանագրություններում նշվում է, որ 10—11-րդ դարերում վերացվել են Տեկորի մի քանի հարկերը: Տեկորը մի ձեռագրի հիշատակարանում անվանված է քաղաքագյուղ⁵:

Բագարանի Հայաստանի հնագույն բնա-

1 Ա լ ի շ ա ն, Շիրակ, էջ 138—141:

2 Վ ա ռ դ ա ն, էջ 127:

3 Ա լ ի շ ա ն, Շիրակ, էջ 140:

4 Գ ա ռ ե գ ի ն Ա կ ա թ ո ղ ի կ ո ս, Յիշատակարանք, էջ 4:

1 Ղ ա գ ա ռ Փ ա ռ պ ե ջ ի, Պատմութիւն, էջ 92, 122:

2 Հ ո վ հ ա ն ն Ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Դ Ր ո ս խ ա ն ա կ Ե Ր ա ջ ի, Պատմութիւն, էջ 104:

կալվայրերից մեկն է: 2-րդ դարի սկզբներին Երվանդ Թագավորը Երվանդաշատից այստեղ փոխադրեց Հեթանոսական կուսքերը, որի պատճառով և կոչվում է Բագարան: Հեթանոսական շրջանից հետո չի հիշվում մինչև 9-րդ դարը, երբ այստեղ հաստատվեցին Բագրատունիները զարձնելով այն իրենց իշխանանիստ ամրոցը: Երբ Աշտա Ա-ը թագավոր դարձավ, նստեց նույն Բագարանում, որտեղ և նա թագվեց մեռնելուց հետո՝ «ի քնարանի հարց իւրոց»¹: Պատմելով այս անցքերը, Հովհաննես Գրատխանակերացին Բագարանը անվանում է «Թագաւորանիստ աւան»²:

10-րդ դարի սկզբներին նույն հեղինակը Բագարանը արդեն քաղաքագլուխ է անվանում³: Պատմիչի վկայությունից երևում է, որ նա հանդիսացել է սպարապետների կալվածք (սկզբում Շաղուհ Բագրատունու, իսկ սրա մահից հետո նրա որդի Աշոտ սպարապետի):

Արձանագրություններից երևում է, որ Բագարանը զարգացած այգեգործություն է ունեցել⁴: Արհեստների մասին տեղեկություն չկա, բայց մի գյուղաքաղաք, սրն ունեցել է հինգից ավելի եկեղեցի (հնգի մնացորդները պահպանվել են), պեճ է որ բավականաչափ բնակչություն, զրանց թվում և արհեստավորներ ունենալ:

Երազգավոր՝ կամ Շիրակավանք Աշոտ Ա-ի մահից հետո զարձավ Սմբատ Ա-ի գահանիստ «սեպհական կալուածք»⁵: Ինչպես զիտենք, հետագայում էլ Կորսն է թագավորանիստ գտնւում. զրոս պատճառն այն է, որ դեռևս մի խոշոր կենտրոն չկար, ինչպես ճիշտ նկատել է Վարդան պատմիչը:

Նա ասում է. «Բսկ Սմբատ [Ա] առեալ գաւառին, շինէ զսուրբ Փրկիչն յԵրազաւորն, որ է Շիրակաւան. ուր օծաւ իսկ. զի նա էր նախադաս Թագաւորացն Բագրատունաց, մինչդեռ չէր ընդարձակ շինեալ քաղաքն Անի»⁶:

Շիրակավանք 7-րդ դարում հիշատակված է սոսկ որպիս գյուղ⁷, իսկ 9-րդ դարի կեսերին արդեն քաղաքացյուղ է անվանված⁸: Երազգավորը այդ ժամանակ կարևոր կենտրոնի նշանակություն ուներ, ուստի այնտեղ է գումարվել եպիսկոպոսների ժողովը Զաքարիային կաթողիկոս ընտրելու համար⁹: 9-րդ դարի վերջերին ևս Հովհաննես կաթողիկոսը Երազգավորը անվանում է մեծ քաղաքացյուղ⁵, և Բագրատունյաց արքայական տան «սեպհական կալուած»⁶:

Երազգավորը իբրև քաղաքացյուղ կամ ավան գոյություն ուներ նաև 11—13-րդ դարերում: Հավանական է, որ սելջուկները Անին ավերելիս չեն խնայել նաև Երազգավորը, որի ավերված շենքերը, ինչպես երևում է Բարսեղ եպիսկոպոսի ժամանակ փորագրված մի արձանագրությունից, վերականգնվեցին 12-րդ դարի երկրորդ կեսին⁷:

Արգիճան (Երզինա) հին բերդ բնակավայր է եղել⁸, ունեցել է և վանք, որտեղ որոշ ժամանակով հաստատվել է և մահվանից հետո թողվել է Անանիա Մոկացի կաթողիկոսը⁹: Երևում է, որ Արգիճան այդ ժամանակ զարձեղ էր կաթողիկոսի սեփական կալվածք: Շուտով 970 թվականին, Խաչիկ կաթողիկոսը, ինչպես պատմիչն է վկայում,

1 Հովհաննես կաթողիկոս Գրատխանակերացի, Պատմութիւն, էջ 181:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 244:

4 Ալիշան, Այրարատ, էջ 66—68:

5 Հովհաննես կաթողիկոս Գրատխանակերացի, Պատմութիւն, էջ 181—182:

1 Վարդան, Հուարումն պատմութեան, էջ 86:

2 Սերբոս, Պատմութիւն, էջ 74:

3 Հովհաննես կաթողիկոս Գրատխանակերացի, Պատմութիւն, էջ 161:

4 Նույն տեղում, էջ 161:

5 Նույն տեղում, էջ 231:

6 Նույն տեղում, էջ 181, 274:

7 Վիմական տարեգիր, էջ 247:

8 Սերբոս, Պատմութիւն էջ 74, 76:

9 Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 275, 288:

«նորոգեաց զառն կաթողիկոսարանին ի Շիրակ զաւառի ի գիւղաքաղաքին Արգինայ, յեղերս Ախուրեան գետոյ, ի հանգստարանի տեան Անանիայի...»¹:

Արգինան այստեղ անվանված է գյուղաքաղաք, սակայն մի տող հետո, խոսելով հռչակավոր ճարտարապետ Տրդատի Արգինայում կառուցած կաթողիկի եկեղեցումասին, պատմիչն այն անվանում է գյուղ. «Ի նմին գեօղ շինեաց զսուրբ կաթողիկէ եկեղեցին»²: Մինչև 11-րդ դարը Արգինան մնաց իբրև կաթողիկոսական աթոռանիստ:

Ուռհայեցիին խոսելով Արգինայի մասին այն անվանում է «Մեծն Արգինա»³, որտեղ նրա մի այլ վիպյության համաձայն կար վանական դպրոց⁴: Ինչպես երևում է, Արգինան իբրև գյուղաքաղաք առանձին զարգացում չի ունեցել:

Թալիւր նշանավոր ավան է եղել գետն 7-րդ դարում և պատկանել է Ներսես Կամսարական իշխանին:

Հովհաննես կաթողիկոսը Թալիւն անվանում է գյուղաքաղաք և ասում է, թե Սուելյման ոստիկանի ժամանակ (8-րդ դարի երկրորդ կեսին⁵) այստեղ սպանվել են 700 և գերի են վերցվել 1200 մարդ⁶:

Թալիւրը Բագրատունիների ժամանակ, հիշվում է իբրև հայտնի բնակավայր: 1040 թ. Թալիւնի կաթողիկեին մի այգի է նվիրել Հովհաննես-Սմբատ թագավորը⁷: Ինչպես երևում է, Թալիւրը թագավորի սեփականութուն էր: Վարդան Արևելցու պատմելով այստեղ էր քաշվել Աշոտ թագավորը, որ և

փորձ արեց թակարդը ձգել Հովհաննես-Սմբատին¹:

Առունը 7-րդ դարում եղել է Գրիգոր Մամիկոնյանի իշխանանիստ բերդը և ավանը: 10-րդ դարում, ինչպես երևում է, պատկանում էր Բագրատունի թագավորներին և ընդարձակվելով գյուղաքաղաք է դառնում:

Արուճում, իբրև գյուղաքաղաքում, կային հարկ հավաքող պաշտոնյաներ, որոնք բաժ էին գանձում շուկա հանվող մթերքներից: 897 թ. թողնված արձանագրության մեջ Սմբատ շահնշահը նշում է, թե վերացել է շալակավորի բաժը, որը գանձվում էր Արուճում²: Հնագիտական դիտողությունները ևս ցույց են տալիս, որ 10—11-րդ դարերում Արուճը գյուղաքաղաք է եղել և ունեցել է բերդ:

Կողբը հին բնակավայր էր, շատ հայտնի իր աղահանքերով, որոնք պատկանել են թագավորական տանը: 7-րդ դարի առաջին քառորդում աղահանքը անցավ Եզր կաթողիկոսի ձեռքը³:

Հովհաննես կաթողիկոսը վկայում է, թե Եզրին Հերակլ կայսրը տվեց Կողբ գյուղաքաղաքի հրրորդ մասը և ապա հանքը ամբողջությամբ⁴:

9-րդ դարի վերջերին Կողբը պատկանում է Բագրատունիներին և Սմբատ սպարապետը այստեղ եկեղեցի է կառուցել. «Հիմնադրէ եկեղեցի ի քաղաքագեօղն Կողբ բազմածախ փարթամութեամբ»⁵, — ասում է պատմիչը:

Կողբը ոչ միայն քաղաքագյուղ, այլև դաստակերտ է կոչված, որովհետև իբրև սեփական տիրույթ պատկանում էր Անիի Բագրատունիներին: 10-րդ դարի առաջին քառորդում տեղի ունեցող պատերազմների

1 Ս ա ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, Պատմութիւն Էջ 185:

2 Ն ու չ ն տ ե ղ ու մ:

3 Մ ա տ թ ե ո ս Ու ա հ ա յ Ե ց ի, Ժամանակագրութիւն, էջ 33:

4 Ն ու չ ն տ ե ղ ու մ, էջ 183:

5 Ը ս տ Ա ի ի շ ա ն ի՝ 774 թ., տե՛ս «Այրարատ», էջ 139:

6 Հ ո վ հ ա ն ն Ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս Գ ր ա ս ի ա ն ա կ ե ր տ ց ի, Պատմութիւն, էջ 136:

7 Ա լ ի շ ա ն, Այրարատ, էջ 139, Վիմական տարիգիր, էջ 21:

1 Վ ա ր ղ ա ն, Հաւարումն պատմութեան, էջ 97:

2 Վ ի մ ա կ ա ն տ ար ե գ ի ր, էջ 9:

3 Ս ե ր ե ո ս, Պատմութիւն, էջ 102:

4 Հ ո վ հ ա ն ն Ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս Գ ր ա ս ի ա ն ա կ ե ր տ ց ի, Պատմութիւն, էջ 100:

5 Ն ու չ ն տ ե ղ ու մ, էջ 245:

և ներքին երկպառակությունների ժամանակ, երբ Աշոտ Բ-ը Բյուզանդիայից վերադարձավ, նրա դեմ ապստամբել էր նաև «մեծ գաստակերտն Կողբ»¹:

Բնորոշ է այն, որ Կողբը գյուղաքաղաք է դարձել շնորհիվ այտակեղ եղած բնական հարստության՝ աղահանքերի օգտագործման:

Կողբը Բագրատունիների ձեռքին էր մինչև 11-րդ դարի կեսերը: 1035 թ. Հոսամոսի վանքի պատին Հովհաննես-Սմբատ Բագավորի փորագրել տված արձանագրության մեջ նշվում է, որ այդ վանքին Բագավորը նվիրել է մի այգի Կողբում և տարեկան 100 բևո արշ²:

Հետագայում ևս (13-րդ դարում) Կողբն ուժեղ հայրենատեր ազատ քաղաքացիներ, որոնք զանազան վանքերին նվիրաբերել են այգի, աղահանք, շենքի ներքնատուն, դրամ և այլն³:

Բնորոշ է այն, որ կողբեցիները դրամական նվերներ հաճախ են արել, դա նշանակում է, թե Կողբը գյուղաքաղաք էր, որտեղ տեղի էր ունենում առևտուր և դրամական շրջանառություն:

Կաղզվանք, Արշարտուրում գտնվող այս բերդավանքը, առաջին անգամ հիշատակված է Ստեփանոս Տարոնացու մոտ 863 թ. անցքերի կապակցությունը, իբրև հայկական գործերի գորակայան⁴:

Այգյախի դեր նա կատարում էր նաև 10—11-րդ դարերում: Հովհաննես կաթողիկոսը նկարագրելով Սմբատ Ա-ի և Ափշինի բնդհարումները, ասում է, թե երբ Ափշինը Կարսը կողոպտելուց հետո դնաց Դվին այնտեղ ձմեռելու, Սմբատն էլ իր գործերով դնաց Կարս, բայց «վասն զի ըստ ձմեռային ժամանակին ոչ կարաց անդ որոշել կոչանս»,

գնայ անտի յամուրս Երասխաձորոյ՝ ի դեօղն Կաղզուան»¹:

Այգյախով, ժամանակակից պատմիչը 10-րդ դարի սկզբին Կաղզվանը ամբողջ և գյուղ է անվանում, իսկ Ստեփանոս Տարոնացին, որն ապրում էր նույն դարի վերջում, նկարագրելով 9-րդ դարի 60-ական թվականների դեպքերը, Կաղզվանը բերդ և ավան է համարում: Պարզ է, որ ոչ մի հիմք չկա կարծելու, թե ավանը հետագիմելով գյուղ էր դարձել և, եթե այտակեղ մենք գործ չունենք գյուղ և ավան տերմինների անփուլթ գործածության հետ, (իսկ դա հաճախ է պատահում), ապա կարելի է ենթադրել, թե Ստեփանոս Տարոնացին Կաղզվանը ավան է կոչում նկատի ունենալով նրա վիճակը ոչ թե 9-րդ դարում, այլ իր ապրած ժամանակաշրջանում:

Կաղզվանում, ինչպես Կողբում, կային աղահանքեր, որոնց մշակումը նշանակություն ունեցավ այս բնակավայրի որոշ աճի և գյուղաքաղաք դառնալու գործում:

Վաղարշապատը. 4-րդ դարում ավերվելուց հետո այլևս քաղաք չապարձավ: Կաթողիկոսն էլ 5-րդ դարում Վաղարշապատից Դվին փոխադրվեց: Սակայն, որոշ հիմքեր կան պնդելու, թե 9—13-րդ դարերում Վաղարշապատը քաղաքացույ էր և անգամ հին անունով քաղաք էր կոչվում:

Շապուհ Բագրատունին Սմբատ Ա-ի տիրած երկրների և քաղաքների թվում հիշատակում է և Վաղարշապատը²:

10-րդ դարի սկզբին Սմբատ Ա-ի որդի Արասին բաժին էր ընկել Արագածոտնը. պատմիչը վկայում է, թե նա «գայ իջան է ի գաշտն, Վաղարշապատ քաղաքի»³:

Գագիկ Բ-ի մասին էլ ասում է, թե սա էր Բագավորության ժամանակ անհնազանդ-

1 Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմություն, էջ 366:

2 Վիժական տարեգիր, էջ 91:

3 Նույն տեղում, էջ 79, 99, 130, 141:

4 Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա յ ի, Պատմություն, էջ 110:

1 Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմություն, էջ 227:

2 Շ ա պ ո հ Բ ա գ ր ա տ ո ն ի, Պատմություն, էջ 66:

3 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմություն, էջ 488:

ներին հնազանդեցնելով և հակառակորդներին հալածելով «եքթեալ բնակէր յԱյրարատ գաւառ ի Վաղարշապատ քաղաք»¹։

Ստեփանոս Օրբելյանը ևս իր սղբի մեջ մատնանշում է, թե Վաղարշապատը Բագրատունիների ժամանակ մասամբ շինացել էր։ Վաղարշապատի անունից նա ասում է, թե Բագրատունիները

Զթագ արքայիցն այն առաջին
Որպէս պսակ ի գլուխ եղին,
Եւ զիս սակաւ կազգուրեցին,
Բէպէտ առ իս ոչ օթեցին²։

1321 թ. վերագրվող մի վարքագրության մեջ ասվում է, թե մոնղոլները ասպատակութուններ կատարելով Այրարատում, այրեցին էջմիածնի վանքը, «Ընդ նմին և զկէս քաղաքին»։ Խոսքը այստեղ Վաղարշապատի մասին է, որը քաղաք է անվանված։ Էջմիածնում և Զվարթնոցի մոտերքը կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել է միջնադարյան խեցեղեն, որի հավաքածուի մեջ կան տեղական արտադրության՝ քաղաքային տիպի ջնարակած կավանոթների վաղ (9—10-րդ դդ.) նմուշներ։ Այսպիսով, Ֆյուլթական կուլտուրայի մնացորդները ևս ցույց են տալիս, որ Վաղարշապատը 9—11-րդ դարերում կրկին քաղաք էր դառնում, սակայն քիչ թե շատ ուշադրումով զարգացում չունեցավ։

Գառնին ևս մտնում էր Բագրատունիների տիրապետությանը ենթակա հողերի մեջ։

5—7-րդ դարերում Գառնին գորանիստ ամրոց էր, որի կողքին կար և ոչ մեծ մի սուլան³։ 9-րդ դարի վերջերից սկսած Գառնին արդեն հիշատակվում է իբրև գյուղաքաղաք, և եթե առաջ Գառնին անվանվում էր ամրոց, ապա 9—13-րդ դարերում ամրոցը այլևս չի հիշատակվում, ադրյուրներում նա գյուղաքաղաք է։

1 Ա լ ի շ ա ն, Այրարատ, էջ 208։

2 Նույն տեղում, էջ 208։

3 Ս ե ի ե ո ս, Պատմութիւն, էջ 31, 47։

Առաջին անգամ Գառնին գյուղաքաղաք է անվանում Հովհաննես կաթողիկոսը¹։ Գյուղաքաղաք է կոչված Գառնին նաև Գրիգոր Ստեփանի 901 թ. արձանագրության մեջ²։

Ստեփանոս Տարոնացին նույնպես Գառնին անվանում է գյուղաքաղաք³։ Կիրակոս Գանձակեցին Գեորգ Գառնեցու ավոտակայության առթիվ (877) Գառնին անվանում է քաղաքադյուղ՝ «Տէր Գէորգ ի քաղաքագեղջէն Գառնոյ»⁴։

Գառնին միակ գյուղաքաղաքն է, որը դարձել է հնագիտական ուսումնասիրության առարկա և արդյունքները պերճախոս կերպով ցույց են տալիս, որ փոքրիկ քաղաքներն ու գյուղաքաղաքները նույնպես որոշ դեր էին խաղում արհեստագործության և առևտրի մեջ, բայց այդ մասին կխոսվի հետո՝ 12—13-րդ դարերի կապակցությամբ։

Բագրատունյաց Հայաստանում հիշատակվում են նաև մի քանի այլ գյուղաքաղաքներ և ամլելի մեծ թվով ավաններ, որոնց վերաբերյալ պիտի է որևէ բան ասել առանց հնագիտական ուսումնասիրության։ Այդպիսիներից հիշատակենք Քարունջ գյուղաքաղաքը⁵, որը գտնվել է Դվինից քիչ հեռու՝ նրանից արևելք, Եղվարդը⁶, ավաններից՝ Բյուրականը⁷, Կավակիրտ գաստակերտը Հրազդանի ափին⁸, Օշականը, Աշնակը, Կուաշը Արագածոտն գավառում։

Աշնակի բնակչության թիվը հավանաբար հիմնականում կազարից պակաս չէր, որ երևում է

1 Հ ո վ հ ա ն ն է ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն, էջ 174, 424։

2 Վ ի մ ա կ ա ն տ ա թ ե գ ի թ, էջ 5։

3 Ս տ ե փ ա ն ո ս Տ ա թ ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 106, 111։

4 Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն, էջ 75։

5 Հ ո վ հ ա ն ն է ս կ ա թ ո ղ ի կ ո ս, էջ 416։

6 Ս ե ի ե ո ս, Պատմութիւն, էջ 74։

7 Հ ո վ հ ա ն ն է ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն, էջ 422, և հետո։

8 Նույն տեղում, էջ 142, 144, 146, նաև Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Ղ Յ Ա ն, Պատմութիւն, էջ 297։

Սամվել Անեցու մի վկայությունից, թի 1162 թ. Նյուիուզը գրավելով Աշնակ մեծ ավանը հրկիզեց այն և մոտ 5000 մարդ այրվեց¹:

Ավարտելով մեր խոսքը Բագրատունյաց Հայաստանի քաղաքների և գյուղաքաղաքների մասին, կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի այս մասում 9—13-րդ դարերում քաղաքները, արհեստագործությունն ու առևտուրը ավելի զարգացած էին քան մյուս մասերում: Այստեղ առաջ էին եկել մի շարք խոշոր քաղաքներ, որոնք Հայաստանի առավել աչքի ընկնող քաղաքներից էին և ավելի մեծ թվով փոքր քաղաքներ և գյուղաքաղաքներ, որոնք կառված էին քաղաքային գլխավոր կենտրոնների հետ, բայց ավելի սպասարկում էին տեղական նեղ շուկայի պահանջները:

2. ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔՆԵՐԸ ԱՅՈՒՆԻՔՈՒՄ

Սյունիքը կազմում էր առանձին ֆեոդալական իշխանություն, որը սկզբում մտնում էր Բագրատունյաց թագավորության մեջ, իսկ 970 թ. ինքնուրույն թագավորություն դարձավ, սակայն ճանաչում էր Անիի Բագրատունիների սյուլիերեն իշխանությունը:

Սյունիքը Հայաստանի այն նահանգներից մեկն էր, որտեղ խոշոր քաղաքներ չդույացան, եթե չհաշվենք Նախճավանը, որը 10-րդ դարի սկզբին միացվեց Սյունիքին, իսկ հետո առանձին ամիրայություն կենտրոն դարձավ: Սյունիքի միակ քիչ իւ շատ աչքի ընկնող քաղաքը, որն այնուամենայնիվ քաղաքային խոշոր կենտրոն չդարձավ, Կապանն էր: Սյունիքի համար բնորոշ են նրա տարբեր գավառներում գոյացած գյուղաքաղաքները:

Անդամ Արունյաց թագավորության ա-

¹ Սամվել Անեցի, Ժամանակագրություն, էջ 138:

առաջացածից հետո էլ Սյունիքը բաժանված էր տնտեսական երեք գավառների, որոնք փաստորեն առանձին իշխանություններ էին կազմում: Դրան, համեմատ Սյունիքում առաջացան տարբեր գահանիստ կենտրոններ՝ Սիսավանը, Կապանը՝ լուծ Սյունիքում, Նղեգիրը՝ Վայոց Ձորում և Կոթը՝ Գեղարքունյաց գավառում: Հանդիսանալով տնտեսական տեսակետից փոքր գավառների կենտրոններ և հետո լինելով առևտրական գլխավոր ուղեգծերից, այս կենտրոնները չէին կարող սեղել և զարգանալ:

Նախճավան: Այս քաղաքը հին Հայաստանում կարևոր դեր էր խաղում Արտաշատ—Նիքատան առևտրական ճանապարհի վրա: Նախճավանը մտնում էր Արշակունիների թագավորության տիրույթի մեջ: 360—ական թվականներին Նախճավանը հիշատակված է Շապուհ Երկրորդի ավերած քաղաքների թվում, որից հետո երկար ժամանակ կորցնում է քիչ թե շատ կարևոր արհեստագործական և առևտրական կենտրոնի դերը, թեև շարունակվում է քաղաք համարվել (սահպանում է քաղաքի ըստատուտը): Արաբական արշավանքների ժամանակ Նախճավանը կոչված է դաստակերտ՝ կամ քաղաք²: Հաբիր իբն-Մասլաման վերցնելով Նախճավանը, նրա բնակիչների հետ կնքեց պայմանագիր՝ նման Դվինի պայմանագրին:

8-րդ դարի սկզբներին Նախճավանը հիշատակվում է հայ նախարարներին և նրանց գործերը այնտեղ այրելու Նախճիրի կապակցությամբ³: Ըստ երևույթին, Նախճավանն այդ ժամանակ արդեն մի հանգրվան էր Իրանից եկող առևտրական կարավանների ճանապարհին՝ մինչև Դվին հասնելը:

9-րդ դարի կեսերին Նախճավանը վերա-

¹ Ղևոնդ վարդապետ, Պատմություն, էջ 7:

² Նույն տեղում, էջ 11, 24:

³ Բ. Նայաթյան, Արտաքի մատենագիրներ, էջ 44:

կենդանանում է և հիշատակվում է իբրև քաղաք¹։ Նույն ժամանակներում Նախճավանում արաբական ամիրայություն էր հաստատվել, և Նախճավանը դառնում է առանձին ամիրայության կենտրոն²։ Թովմա Արծրունին՝ խոսելով Զ-րդ դարի վերջերի անցքերի մասին, Նախճավանը անվանում է քաղաք³։

Շուտով Նախճավանը ազատվում և Բագրատունիների թագավորությանն է միացվում։ Սմբատ Ա-ի ժամանակ՝ Զ-րդ դարի վերջերին⁴, քաղաքը տրված էր Այունյաց իշխաններին։ Բայց Հայաստանի հարավում, կալսիկների դեմ մղած պատերազմներում, Սմբատ թագավորին մեծապես օգնեց Վասպուրականի իշխան Աշոտը, որին նա ավելց Նախճավանը, որը քաղաք և ոստան է անվանված⁵։ Հետո էլ նրանից վերցնելով վերադարձրեց Այունյաց իշխան Սմբատին, նույնպես նրա հավատարմության և ծառայությունների համար⁶։

Դա հանդիսացավ առիթներից մեկը, որպեսզի Գագիկ Արծրունին պատակովի Աշոտ Բագրատունուց և դաշնակցի նրա հակառակորդի՝ Ատրպատականի էմիր Յուսուֆի հետ⁷։

Նախճավանը երկար չմնած սյունյաց իշխանների ձեռքին, շուտով աջուեղ հաստատվեց արարական ամիրայություն, որը և մասնակի ընդհատումներով ու փոփոխություններ կրելով, իր գոյությունը պահպանեց 10—11-րդ դարերում։

Կապան։ Հնում Կապանը, ինչպես Լրե-

վում է, եղել է բերդ, որը Ստեփանոս Օրբելյանը նույնացնում է Բաղաբերդի հետ¹, թեև նույն հեղինակի մոտ, այլ էջերում Բաղաբերդը և Կապանը նշվում են իբրև տարբեր բնակավայրեր։

Զ-րդ դարի վերջերին Այունիքը բաժանված էր երեք մասի, որոնք կազմում էին երեք իշխանություն։ Այունիքի մեծ մասը նդեղիս կենտրոնով պատկանում էր Փիլիպի որդի Աշոտ դահերեց իշխանին, Բաղք գավառը Կապան կենտրոնով՝ Ջագիկ իշխանին, իսկ Գեղարքունիքը՝ Կոթ կենտրոնով Գրիգոր Սուփանի տիրույթն էր կազմում։

Հենց այս ժամանակներում էլ՝ Զ-րդ դ. վերջերին և 10-րդ դարի սկզբներին, Կապանը աճում, քաղաք է դառնում։ Այստեղ նկատելի շինարարություն է կատարվում։ Ստեփանոս Օրբելյանը գովելով իր նախնիներից մեկին, Ջագիկ իշխանին, ասում է, թե սա եուն էր ի բաժնի զԲաղաց դաւան և զԿապան քաղաք, որ և յետ բազում բարեկարգութեանց վախճանի»²։

10-րդ դարի կեսերին Այունիքի իշխանները անկախության էին ձգտում, որն իր արտահայտությունը գտավ և Այունյաց աթոռի անջատական ձգտումների մեջ։ Կապանի տեր Ջհանշիրը, որը Ջագիկի որդին էր, ինքն էլ ձգտելով թագավոր դառնալ, պատասպարում է իր մոտ սյունյաց Հակոբ կաթողիկոսին, որն հրաժարվում էր ենթարկվել հայոց կաթողիկոսին³։ Հակոբի մահից հետո 959 թ. Անանիա Մոկացի կաթողիկոսը դնում է Այունիք, մի առժամանակ մնում է Կապան քաղաքում՝ եկեղեցական գործերը կարգավորելու համար, և վերացնում իրենց արարքները զղջացած Այունյաց դահերեց իշխան Վասակի ու Կապանի տեր Ջհանշիրի բանադրանքը։ Դրանից հետո այս իշխանները, ասում է պատմիչը, Անանիային «սա-

1 Կ ա դ ա ն կ ա տ վ ա ց ի, Պատմութիւն, էջ 378։

2 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն, էջ 317։

3 նույն տեղում, էջ 387։

4 Շ ա պ ու ռ Տ Բ ա գ ր ա տ ու ն ի, Պատմութիւն, էջ 79։

5 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն, էջ 397։

6 Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն, էջ 263։

7 Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն, էջ 263—264։ Ս տ ե փ ա ն ո ս Օ ր օ ր Ե լ յ ա ն, Պատմութիւն, էջ 187։

1 Ս տ ե փ ա ն ո ս Օ ր օ ր Ե լ յ ա ն, Պատմութիւն, էջ 12։

2 նույն տեղում, էջ 200։

3 նույն տեղում, էջ 282—284։

րեալ մեծապէս շքով հանգուցին յարքունական գահոյս ի Կապան քաղաքի»¹:

11-րդ դարի սկզբին Կապանը դարձավ Սյունյաց թագավորութեան մայրաքաղաքը, որի անունով՝ Սյունյաց թագավորութունը հռչակում էր նաև Կապանի թագավորութունը²:

Եղեգիբ կամ Եղեգիս: Սյունյաց իշխանների գահանիստը վաղուց հետե եղել է Եղեգիսը, որ իրավացիորեն մատնանշել է Ալիշանը³: 9-րդ դարի վերջին Եղեգիսը հանդիսանում էր Սյունյաց գահերից իշխանի գահանիստը և նրա անմիջական սեփականութուն կազմող դաստակերտը:

10-րդ դարի սկզբին Եղեգիսը ավերվել է Յուսուֆի զորքերի ձեռքով, և երբ Սմբատ Սյունի իշխանը եղբայրների հետ վերադարձան իրենց հայրենի դաստակերտը, «տեանէին նորա քակեալ զարքունական ապարանսն իւրեանց, աւերեալ զեկեղեցիս և անրնակ անապատացեալ զմեծամեծ աւանսն և զեղեցիկ դաստակերտն, ունայնացեալ զամբարս ցորենոյ և խորտակեալ զգութս զինոյ»⁴: Ավերվածք վերաշինվում է, Սյունիքի պաշտպանութունը ամրապնդվում, զորքը մարտական պատրաստութեան բերվում և երբ Յուսուֆի զորավար Նարը զորքով շարժվում է Եղեգիս գյուղաքաղաքի վրա, նա չի հանդգնում կռվի բռնվել և վերադառնում է⁵:

Եղեգիսը գյուղաքաղաք է անվանված նաև 936 թվականին: Այստեղ Սմբատ իշխանը վաչկերում էր խաղաղութուն արտաքին հարձակումներից և որսի էր գութս գալիս իր գյուղաքաղաքից: Նա արտաքին թշնամիների չի հանդիպում վերևի սարերում, այլ տեսնում է մի խումբ խոտաճարակ մարդկանց «և զարմացեալ ընդ ներքեալ և ընդ անշքաքիալ տեսիլս նոցա՝ հարցանէր

¹ Մ տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ի Լ Յ ա ն, Պատմութիւն, էջ 264:

² Մ ա տ Թ Ե ո ս Ո լ ո ճ ա յ Ե ց ի, Ժամանակագրութիւն, էջ 80:

³ Ա Լ Ի Չ ա ն, Սխական, էջ 146:

⁴ Մ տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ի Լ Յ ա ն, Պատմութիւն, էջ 193:

⁵ Նույն տեղում, էջ 199:

ի նոցանէ զկեանս նոցա. և նոքա հեզիկ պատասխանեալ - ասեն. «հալածեալ փախըստական եզաք յաշխարհէ թերևս կարացուք ապրիլ ի դառն ալեկոծութենէ սորա»¹: Եպիսկոպոս պատմիչը սրանց ճգնավոր է անվանում, բայց պարզ է, որ դրանք այնպիսի ընչազուրկ և հալածված մարդիկ են եղել, որպիսիք էին Տաթևի եկեղեցու կողմից ընչազրկված և հալածված ցուրարեղցիները: Ամեն ինչից զրկված քարածերպերում ապաստանած մարդկանց թշվառական կյանքին հակառակ՝ ազնվականները ապրում էին Եղեգիսում, որտեղ կային ամեն տեսակի բարիքների շտեմարաններ, զինուպետ, այգիներ և ծաղկոցներ²: Եղեգիսը հետագայում էլ շարունակում է աճել ու զարգանալ և դառնում է քաղաք: Նրա ավերակների մակերեսային դիտումներն անգամ ցույց են տվել, որ այնտեղ եկեղեցիներ (տխտ. VI ա) ու շքեղ շենքերի մնացորդների կողքին եղել են շատ կուղպակ-արհեստանոցներ և այլ շենքեր. մնում են և ձիթահանների մնացորդները³: Քաղաքից վերև սարի գագաթին կառուցված էր ամուր բերդ, որտեղ քաղաքի տերերը պաշտպանվում էին վտանգի դեպքում:

Սխալվան: Սյունյաց գահանիստը Շագաթից հետո դարձավ Սիսավանը (Սիսական): Հնարավոր է, որ հենց հին ժամանակներից Սյունյաց իշխանները երկու գահանիստ ունեին: Համենայն դեպս Օրբելյանի որոշ մտթ աեղեկությունները թույլ են տալիս նման ենթադրություն անելու: Ալիշանի կարծիքով Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Սյունյաց գահանիստը՝ «գահ իշխանաց ի Սիւնիս» նշանակում է Սյունյաց ստանը⁴, որը գտնվել է երկու վտակների միացման վայրում կազմված հրվանդանի վրա: Իշխանական պալատները գտնվել են

¹ Մ տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ի Լ Յ ա ն, Պատմութիւն, էջ 250:

² Նույն տեղում, էջ 193, 260:

³ Ա Լ Ի Չ ա ն, Սխական, էջ 146:

⁴ Նույն տեղում, էջ 214:

հրվանդանի ծայրին գետակների միացման կետին մոտ, որը կոչվել է «Կից վտակաց»¹: Ազրյուրների վիայություններից երևում է, որ 9-րդ դարում Սյունյաց գահերից իշխանների գահանիստը դառնում է Եղեգիսը, բայց ինչպես երևում է Սիսավանը կամ Սիսականը չի կորցնում իր նշանակությունը և դառնում է գյուղաքաղաք: 13-րդ դարում այնտեղ հաստատվել էր մոնղոլական Բաշու Նուլյինի նշանակած Խոճա Նուլյինը, որը իշխան էր Արաքսից հյուսիս ընկնող Սյունյաց երկրի վրա²: Այս ժամանակները Սիսավանում մոնղոլ իշխանավորի մոտ իշխանել են Հեթում թագավորը՝ մոնղոլական մեծ խանի մոտ կատարած ճանապարհորդությունից վերադառնալիս³:

Կար: Սյունյաց իշխանների Գեղարքունյաց ճյուղի իշխանանիստ կենտրոնը Կոթն էր: 901 թվականին Կոթը քաղաքագյուղ է անվանված: Գրիգոր Սուփան իշխանը այստեղ կառուցած եկեղեցու վրա փորագրել է ավել մի ընդարձակ արձանագրություն, որի սկզբում ասված է. «Խնձ Սուփանայ յիշատակարան հաստատեալ հոգևոր ի Քրիստոս ի քաղաքագիւղս Կոթայ՝ ի կացուածի իմոց նախնեացն, զոր նախքան զայս պարսպպատ շրջապատեալ էին ի բազմածախս գանձուց յոլով աշխատութեամբ»⁴: Կոթը դարձավում էր այն ճանապարհի վրա, որը Դվինի և Բջինի վրայով տանում էր դեպի Պարտավ, անցնելով Սեանա լճի հարավ-արևելյան ավազանով:

Ստ. Օրբելյանը Կոթը անվանում է գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ նույն 10-րդ դարի սկզբի անցքերի կապակցությամբ⁵:

Սեանա լճի հարավային ավազանը կըտ-

1 Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Յ Ա Ն, Պատմութիւն, էջ 74:
2 Ա Լ Ի Շ Մ Ա Ն, Սիսական, էջ 215:
3 Նույն տեղում:
4 Նույն տեղում, էջ 55: Տե՛ս նաև Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Յ Ա Ն, Պատմութիւն, էջ 177:
5 Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Յ Ա Ն, Պատմութիւն, էջ 177, 180:

րելով լճի մեջ են թափվում մի շարք գետակներ, որոնց գետաբերանները հղել են ձկնորսարաններ: Դրանցից մեկը Կոթա գետկան է, կամ Իշխանագետը, որի գետաբերանում գտնվում էր Կոթը՝ Սեանի խոշորագույն ձկնորսարաններից մեկը:

Կոթը Եղեգիսից էլ ավելի երկար է պահպանել իր գոյությունը, մնալով որպես գյուղաքաղաք:

3. ՔԱՂԱՔՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Վասպուրականը 9-րդ դարում բաժանված էր մանր իշխանությունների, իսկ 10-րդ դարի սկզբներին միավորվեց մի թագավորության մեջ:

Վասպուրականը բավականաչափ խիտ բնակչություն ուներ: Սամվել Անեցու վկայությամբ՝ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը 1021 թ. Բյուզանդիային՝ հանձնեց 8 քաղաք, 72 բերդ, 115 վանք և 400 գյուղ:

Բյուզանդական ժամանակագիր Գեորգիոս Կեղրենոսի մոտ քաղաքների թիվը երկուսով ավել է ցույց տրված: Մեղ թվում է, թե քաղաքների թիվում հաշվվել են և այնպիսիները որոնք գտնվելով Վասպուրականի սահմաններում՝ լենն պատկանել Վասպուրականի թագավորությանը, ինչպես՝ Արճեշը և Բերկիրն:

Այժմ տեսնենք, թե որոնք են Վասպուրականի 8—10 քաղաքները և ինչ զարգացյում ունեցան նրանք:

Վաև: Ուրարտական մայրաքաղաք Տուշպան վերակենդանացավ հայկական ստրկատիրական պետության ժամանակ Վան անունով, սրը նույնպես ուրարտական ծագում ունի: Կրկին անկում ապրելով 4—8-րդ դարերում՝ Վանը վերականգնվում է միջնադարյան քաղաքի ձևավորման և զարգացման ժամանակաշրջանում, 9—10-րդ դարերում: Այս ժամանակ քաղաքը հանդես է գալիս Վան, Վանտոսպ և քաղաքն Շամիրամայ անուններով:

1 Ս ա մ վ ե Լ Ա ն ե ց Ի, ժամանակագրութիւն, էջ 104:

Թովմա Արծրունին վանը կամ վանտոս-
պը քաղաք է անվանում սկսած 9-րդ դարի
կեսերից¹: «Քաղաքն Շամիրամայ» և «վան-
տոսպը» նույնացած դանում ենք նույն
Թովմա Արծրունու պատմության մեջ², ըստ
որում «քաղաքն Շամիրամայ» անվանված է
«հռչակելին և յոյժ փառաւորագոյնն յամե-
նայն կողմանց վասպուրականի»³:

Վանա բերդը լճի ափին բարձրացող ժայ-
ռարլուրի վրա կառուցված էր ուրարտացի-
ների ժամանակ: Միջին դարերում այն վերա-
կանդնվել է և հայտնի է «ամրոցն Վան քա-
ղաքի»⁴, «Շամիրամայ բերդ»⁵ անուններով:
Այստեղ կառուցված ժայռափոր շենքերը
նկատի ունենալով պատմիչը Վանա բերդը
անվանում է նաև «Ամրական քարանձաւ»,
որակը շինարարութուն է կատարվել Դերե-
նիկ Արծրունու, մանապէս Գագիկի ժամա-
նակ: Խոսելով Ամրականի գագաթին և նրա
ատորտում՝ Վան քաղաքում կառուցված
եկեղեցիների մասին⁶, պատմիչը շարունա-
կում է, թե Գագիկը «Շինեաց և ի վերայ Ամ-
րական քարանձաւին յևս և ի մուտս կոյս
տունս խրախիցս ոսկեղօծս պատեղդամեալ,
յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դե-
րանկէն շինեալ: Իսկ ի հարաւակողմն կուսէ
ի ջրամբար արձանադորժ քարեղինէն ճա-
նապարհ աշաիճանեալ ներքուտ ի վեր
մինչ ի կատար անձաւին հեշտալիք վել և
վէջս յօրինեալ, քարադորժ աւաղամած
կրագործութեամբ: Այլ և պատկանարար ի-
մաստութեամբ պատրաստեաց ջրմուղ ներք-
սագոյն երկրի ի քարանց տաշելոյ փողոցս
զնացից ջրոյն կաղմեալ, գալ իջանիկ յիւից ի
ստորտէ լերինն վարաբայ առշեղիալ ի
հարաւոյ ի հիւսիսի ի խաղաղ ընդդայնու-

նիստ գողաձև դաշտականացսն, ելանել ի
գաղաթն Ամրական անձաւին դրօսնուլ նովա
տո վճարումն բուականութեան, ըստ մա-
սանց պիտոյից օժնդակութեան քաղաքա-
յարգար ապարանից թագաւորական պաղա-
տի իւրոյ ձեռակերտին, առ հօրն յաւելյա-
ղելով շինուածս իւր»¹:

Այս ամուր բերդի առաջ և փակած էր
Վան քաղաքը, որը վասպուրականի ամենա-
բնդարձակ քաղաքն էր, սկզբում նաև իշխա-
նանիստը, ուստի և Շապուհ Բագրատունին
Վանը անվանում է մայրաքաղաք²: Այգպես է
անվանված քաղաքը նաև ավելի քան երկու
դար հետո՝ 1119 թ. մի ձեռագրի հիշատա-
կարանում³:

Սակայն պետք է նկատել, որ Վանը մեծ
էր վասպուրականի իշխանութեան մեջ զբա-
նըվող քաղաքների համեմատութեամբ, քանի
որ այստեղ մեծ քաղաքներ չէին առաջացել,
իսկ Անիի, Դվինի, Արծնի և մյուս մեծ քա-
ղաքների համեմատութեամբ Վանը միջին
մեծութեան քաղաք էր, նա մեծ զարգացում
չունեցավ: Թովմա Արծրունու շարունակողը
այս «մայրաքաղաքը» մեծ ավան⁴, կամ
պարզապես ավան⁵ է կոչել: Թեև պիտի
նկատենք, որ նրա մոտ ավան և քաղաք բա-
ւերը նույն իմաստն ունենւ: Ըստ էութեան
Վանը ոչ միայն մայրաքաղաք, այլև խոշոր
քաղաք չդարձավ:

Վանում զարգացած արհեստների վերա-
բերյալ մեր տեղեկությունները շփաղանց
սակավ են: Ալքիմիական ձեռագրերից
պարզվում է, որ այստեղ մեծ քանակու-
թեամբ բորակ էր արտադրվում, որ կոչվում
էր Վանա բորակ, կամ հայ բորակ, որն
արտահանվում էր ուրիշ երկրներ և համար-

1 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 218,
335, 347, 364, 383, 389, 399, 405:

2 Նույն տեղում, էջ 386:

3 Նույն տեղում, էջ 404:

4 Նույն տեղում, էջ 376:

5 Նույն տեղում, էջ 414:

6 Նույն տեղում, էջ 405—406:

1 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 406:

2 Շապուհ Բագրատունի, Պատմութիւն,
էջ 71:

3 Գրեգորիս Ա կաթողիկոս, Յիշատակա-
րանք ձեռագրաց, հատ. Ա, էջ 339:

4 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 500:

5 Նույն տեղում, էջ 442, 445, 449, 498:

վում էր լավագույնը¹: Վանը ինչպես յուրա-
տական ժամանակաշրջանում, նույնպես և
ուշ միջնադարում՝ հանդիսանում էր մեծա-
դագործության կենտրոն, ուստի հիմք կա
նման կենտրոնի դերը նրան վերագրել նաև
9—13-րդ դարերում:

Վանում և նրա ամրոցում կատարված
շինարարության վերաբերյալ տեղեկություն-
ներից կարելի է եզրակացնել, թե այս քա-
ղաքում զարգացած էին շինարարական ար-
հեստները, մասնավորապես քարագործությունն ու
քարակուրծությունը:

Ուսան: Ոստանը սկզբնապես Ռշտուն-
յաց իշխանների նստավայրն էր, ուստի
սովորաբար կոչվում է «ոստան Ռշտունեաց»:
Առաջին անգամ այս բնակավայրը հիշա-
տակվում է 9-րդ դարի կեսերին՝ Բուղայի
զորքերի դեմ Վասպուրականում մղված կը-
ռիվների առնչությամբ²:

Թովմա Արծրունու մի տեղեկությունից
պարզվում է, որ այս ժամանակ ոստանն
Ռշտունյաց մի «ամրածև բերդ էր»³:

9-րդ դարի կեսերից մինչև դարի վեր-
ջերը Արծրունի իշխանների մեջ վերնաց և
մահու կռիվ էր տեղի տնկնում Վասպուրա-
կանը իրենց մեջ բաժանելու, ապա և ամ-
բողջ Վասպուրականին տիրելու համար:
Այս կռիվների ժամանակ, իբրև կարևոր
ամրոց և հենակետ, զգալի դեր է խաղացել
և «ոստանն Ռշտունեաց»⁴:

Ոստանում աչքի ընկնող շինարարական
աշխատանքներ են կատարվել Գագիկ Արծ-
րունու ժամանակ, որոնց մասին տեղեկու-
թյուններ գտնում ենք Թովմա Արծրունու
«Պատմության» բուն տեքստում և, մանա-
վանդ, նրա շարունակողի մոտ:

Պատմիչը ասում է. «Հինաց Գագիկ
պարսպաւոր ամրափակութեամբ զբլուրն

յՈստանին Ռշտունեաց զաւերեալն ի բազում
ամաց, շինեալ նորոգեաց և ղեկեղեցին որ ի
նմա...»¹:

Թովմա Արծրունու շարունակողի մոտ
տեղեկությունները մանրամասն ու կարևոր
են և տալիս են Ոստանի ընդհանուր պատ-
կերը: Պատմիչը ասում է, որ Գագիկը իր
մթերած գանձերը տալիս է «ի ձեռս գործա-
վարաց և արուեստաւորաց՝ պարսպաւորել
ամրութեամբ զբլուրս դագաթնաւորս և զա-
նառիկ ամրոցս բերդից ի գաւառս և ի մի-
ջոցս երկրի, ի պէտս ապաստանի փախու-
ցելոց ի հինից և ի խռովութեանց օտար
ազգաց»²: Իհարկե ֆեոդալական բերդը մի-
այն օտարների ասպատակություններից ու
խռովություններից պաշտպանվելու ապաս-
տարան չէր, այլ ամենից առաջ ֆեոդալների
հենարան էր՝ ներքին խռովությունները,
գյուղացիների դիմադրությունը ճնշելու և
նրանց կեղեքելու համար: Ոստանում կա-
տարված շինարարությունից հետո այս նախ-
կին բերդավանդ բերդաքաղաք է դառնում,
որտեղ Արծրունիները հաստատում են իրենց
գահը:

Շինարարությունը կատարվել էր Վաս-
պուրականի տարրեր վայրերում, որոնցից
ամենն առ եղերք ծովուն, որ է աւանն Ոստան
ի գաւառն Ռշտունեաց, որ է յոյժ բարեխա-
ռըն, ի շորից ծագաց երկրի օդոց առ հասա-
րակ նա շնչելով. նաև ծառովք պտղաբերովք
սաղարթեալ և այգևետ բազմութեամբ յոյժ
վայելչացեալ զարդարի. բղխեն և աղբիւրք
բարեխառնը շուրջ զքաղաքան, օգնականու-
թիւն մատուցանելով մարդկան ի բազում
պէտս...»³:

Քաղաքի կլիմայական բարեմասնու-
թյունների այս գեղարվեստական նկարագը-
րությունը հետևում է նրա դիրքի և շինարա-
րության առավել գեղարվեստական նկարա-

1 Կ. Ղ ա Փ ա գ ա ղ յ ա ն, Ալքիմիան պատմական
Հայաստանում, Երևան, 1940, էջ 67:
2 Թ ո Վ մ ա Ա Ր ծ Ր Ո Ւ Ն ի, Պատմութիւն, էջ 319:
3 Նույն տեղում, էջ 323:
4 Նույն տեղում, էջ 335, 345, 377:

1 Թ ո Վ մ ա Ա Ր ծ Ր Ո Ւ Ն ի, Պատմութիւն, էջ 405:
2 Նույն տեղում, էջ 475:
3 Նույն տեղում, էջ 475—476:

գիրքը: «Եւ ինքն գագաթն ամբողջին է ծովա-
հայեաց և յոյժ վաշկելուչ. եթէ շարժեացի ծով
յուզեալ ի հողմոց՝ ծագկաձև ալիքն զբօսա-
ցուցանողք և վաշկելուչը երեկին. և եթէ մա-
րուր յօդոյ լինիցի՝ դամենեցուն աշս գրաւէ
գիրն տեսանել ծաւալումն. վասն որոյ և
արքայի ձեռնարկեալ շինէ ի նմա տաճարս և
սենեակս և փողոցս հրաշալիս պատկերա-
կերպս և ազգի ազգի յօրինուածս, զոր ոչ
բաւեմ պատմել: Պարսպէ և զծովակողմն
զօրաւոր վիմօք, դնելով զհիմունսն յանհնա-
րին խորովեան, շինէ և ի գլուխս պարսպին
ընդդէմ ծովուն տաճար մի ձեմարանոց ոս-
կեզարդ և պէսպէս պաճուճեալ զեղովք,
արեգակնահրաշ ճառագայթաձևս ի խաղչ-
տանս աշաց և յուրախութիւն սրաի ինքեան
և իւրոց արժանեացն. իսկ զգրունս կազ-
մեալ կամարաձևս, օդաբերս, զովացուցիչս,
միանգամայն և բուսանցոյցս շողախաղացս,
որք ի ծագել և ի մտանել արեգակաճնն փայ-
լատակելով ի վերայ ծովուն՝ շող գործեն ի
ւիրտս տաճարին, և յերփներփն շրջըջելով
զգրօշեալ պատկերատիպսն և զզանազան
յօրինուածսն՝ զմիտս հիացուցանէ զտե-
սօղացն, և ի վեր անդր անցանէ քան
զպատմողաց գիտութիւն:

Իսկ մեր ի բազմաց զսակաւն յիշատա-
կելով՝ ահա ասացաք որ ինչ յազագս Ոս-
տանն աւանի»¹:

10-րդ դարում Ոստանը քաղաք էր դար-
ձել և Թովմայի շարունակողը, որը Վանը և
Վասպուրականի այլ քաղաքները ավան է
կոչում, բերված տեքստում Ոստանը երկու
անգամ ավան է անվանում, մի անգամ՝
քաղաք: Ուշագրավ փոփոխություն է կրում
և այդ բնակավայրի անունը: Սկզբնապես
նա սոսկ «ոստան Ռշտունեաց» է կոչվում,
որ նշանակում է Ռշտունյաց իշխանների
նստավայր և սեփական կալված, հատուկ
անուն չէ: 9-րդ դարի վերջերին իբրև հա-
տուկ անուն գրվում է «Ոստան Ռշտունեաց»,
իսկ 10—11-րդ դարերում նա մի ոչ մեծ,

¹ Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 476—
477:

բայց հայտնի քաղաք է՝ Ոստան անունով,
առանց Ռշտունյաց որոշիչի: Այդպես է
ճանաչում նրան Նասիր Խոսրովը, որը
1046 թ. կատարած իր ճանապարհորդու-
թյան ժամանակ Վանի վրայով այցելել է
Ոստան և խոստով է նրա շուկայի ու գի-
նեատների մասին¹:

Ուհայեցին նկարագրելով դելմիկների
հարձակումը Վասպուրականի վրա 1016 թ.
ասում է, թե Վասպուրականի գորքերը ետ
քաշվեցին Ոստան քաղաքը, որտեղ գտնվում
էր Անեքերիմ թագավորը²:

Ոստանը փոքր, շղարգացած քաղաք էր
Ադրամար: Վանա լճի մեջ գտնվող Ազ-
թամար կղզին լինելով ջրառատ և բնակա-
նորեն պաշտպանված, բնակեցված է եղել
հնագույն ժամանակներից:

Թովմա Արծրունին Ազթամարի բնակվա-
ծությունը վերագրում է անհիշելի ժամա-
նակների՝ մոտավորապես 1-ին դարին մեր
թվականությունից առաջ³:

Մովսես Խորենացին պատմում է, թե
Ազթամարը ամրոց էր դեռևս 4-րդ դարում
և գտնվում էր Ռշտունի իշխանների ձեռքին⁴:

7-րդ դարի 40—50-ական թթ. Ազթա-
մարը Թեոդորոս Ռշտունու հենակետն էր:
Սերիոսն ասում էր, թե այդ ժամանակ
Ազթամար կղզին շենանում է և այստեղ
ապաստանում են մի շարք գավառների
բնակիչները⁵:

Այդ բնակչությունը Ազթամարում գտն-
վում էր, սակայն, վտանգի ժամանակ, քանի
որ այդ կղզու վրա զգալի թվով բնակչու-
թյունն իր զոյությունը պահպանել չէր կա-
րող, առանց դրսից բերվող մթերքների և
սպառման այլ առարկաների: Այդ է պատ-

¹ Насыр-и Хусрай, Сафарнаме, М.
Л., 1933, стр. 38.

² Մատթեոս Ուհայեցի, ժամանակա-
գրութիւն, էջ 48:

³ Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 478:

⁴ Մովսես Խորենացի, Պատմութիւն, էջ
274:

⁵ Սերիոս, Պատմութիւն, էջ 104: Ստեփանոս
Տարնացի, Պատմութիւն էջ 120:

ձառք, որ հիշյալ դարերում Աղթամարը, ինչպես երևում է Թովմա Արծրունու և նրա շարունակողի մի շարք վկայություններից, մշտական բնակավայր էր կրոնավորների համար և ապաստարան վտանգի դեպքում¹։

10-րդ դարի սկզբներին Աղթամարում ընդարձակ շինարարություն է կատարվում և կղզու վրա գոյանում է մի փոքրիկ, բայց բարեկարգ քաղաք։

Շինարարությունը կղզու վրա կատարվել է Արծրունյաց Գաղիկ թագավորի ժամանակ և նրա նախածնունդով։ Այդ թագավորի երկրպագու և ջատագով պատմիչը ամեն ինչ վերագրելով Գաղիկին, սակայն, պատմում է, թե կղզու վրա մինչ այդ գտնվող բնակարանները նման էին տաղավարի կամ մրկապահաց հյուղերի², բայց նկատի ունենալով, որ կղզին հարմար էր բնակության և բնականից պաշտպանված էր ավերից ու ասպատակովթյունից, գավառի բնակչությունը՝ իշխանները, ազատները, ռամիկները և կրոնավորները կղզու վրա բնակություն հաստատելու թույլտվություն են ստանում թագավորից, որին պատկանում էր կղզին, և այնտեղ մեծ շինարարություն են սկսում։ «Եւ զինի հնդից ամաց,— ասում է պատմիչը— յորմէ հետէ սկսան շինել՝ պայծառացեալ բարձրացաւ շինութիւն քաղաքին առաւել քան զառաւել»³։

Կղզու վրա շինարարություն կատարելու համար եկել էին «արուեստաւորք բազումք, արք պատուաւորք ժողովեալք յամենայն սղգաց յերկրէ»։

Շենքեր են կառուցվում ռամիկ մարդկանց, ազատների, կրոնավորների և իշխանների համար։ Ինչպես երևում է, քաղաքը կառուցվում էր հավաքված ժողովրդի և արհեստավորների ջանքերով, բայց մի ընդհանուր պլանով՝ Մանվել ճարտարապետի

գեկավարությամբ։ Կղզու վրա գոյանում են փողոցներ, հրապարակներ, պարտեզներ և ծաղկանոցներ։ Քաղաքի մեջ բխող հորդառատ աղբյուրը ոռոգում էր «բուրաստանս և պարտէզս, բուրաստանաց և ծաղկացաց որոշեալ հովիտս»⁴։

Կղզու կենտրոնում բարձրացող բլրի ստորոտում Մանվել ճարտարապետը կառուցում է թագավորական պալատը, պարտեզներն ու ծաղկանոցները։ Թագավորական պալատը, որը մանրամասն նկարագրված է, ճարտարապետական մի հոյակապ կառուցվածք է եղել՝ բաղկացած առանց սյուների գմբեթաբազ մեծ դահլիճից, որը քառակուսի ձև ուներ 40×40 կանգունի վրա և նույնքան էլ բարձրություն։ Դահլիճի կողքերին կամ անկյուններում կառուցվել էին նույնպես գմբեթաբազ սենյակներ և խորաններ։ Պալատը շքեղորեն զարդարված է եղել ոսկեզարդ ու «գեղոցն պատկերագրութեամբ» գեղեցիկ որմնանկարներով, որոնք պատկերել են արքային և նրա մերձավորներին խնճուղի և ուրախության ժամին, նրա սպասավորներին, զուսանների և պարոպ աղջիկների խմբեր, «սուսերամերկաց հոյգ և ըմբշամարտաց պատերազմունք», կենդանիներ, զազաններ, թռչուններ և այլ զարդարանքներ ու պաճուճանքներ (օրնամենաներ) բոլորն էլ հիացմունքի արժանի և աչքբան շատ, որ բոլորը նկարագրել մեծ աշխատություն կապահանջի պատմողներից ու լսողներից՝ ասում է հեղինակը։ «Եւ է փառք տաճարին ահեղ իմն և զարմանալի. եղեալ են ի նմա զրոնք հատուածոյք մանր յօրինուածով և հրաշալի գեղգեղմամբ, ի բանայն իւրեանց երկբացիկք են, օղաբերք զովացոցիչք. իսկ հոպ առ միմեանս գոլով՝ երևին իբրև զմի պատկեր»⁵։

Այս մեծ պալատը, որը պատմիչի ասելով էի մէջ քաղաքին երեւի իբրև զմեծ մի բլուր. ոչինչ նուազեալ բարձրութեամբ քան զքա-

1 Թովմա Արծրունի, Պատմութիւն էջ 369, 501, 507։

2 Նույն տեղում, էջ 478։

3 Նույն տեղում, էջ 480։

1 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 480։

2 Նույն տեղում, էջ 482։

րանձաւ ծայր կղզոյն», կառուցված է կղզի մեծ-մեծ քարերից, որոնք բացի կրաշագանակից, ամբարցված են եղև ճաւ հսկայական իկով երկաթե կապերով: Կղզու վրա կառուցում են ճաւ «շաւմարանս մեծամեծս և յամբարանոցս, միանգամայն և տունս պանծոց և զինուց և ասպաղինաց անհուն բազմութեանց»¹:

Պալատից ոչ պակաս շքեղ էր Աղթամարի եկեղեցին (տխտ. VII ա), որ զարդարված էր հսկայակալ քանդակներով և որմնանկարներով²:

Չնայած ջրի կոհակներին և ալիքների բնական պատնշին, կղզու շուրջը պարիսպ է կառուցվում, որի հիմքերը դրվում են ջրի մեջ լցված քարերից գոյացած և ջրից 5 կանգուն վեր բարձրացած ամբարտակների վրա: Պարիսպը շուրջանակի ընդգրկում էր կղզին «իբր ձիարշաւանօք հինգ»: Պատմիչը նկարագրելով պարիսպը՝ ասում է. «և պարիսպն է հրաշակերտ, ահեղակերտ, բարձրաբերձ լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ, անկիւնաւոր խորանանման տախտակաձև յինքեան ունելով դահոյք զբօսանաց, յորում հանդերձ որդուլք և ազատակոյտ զօրօք միշտ ուրախանայր արքայ»³:

Կղզու վրա գտնվող քաղաքը թե պաշտպանութեան և թե, մանավանդ, մատակարարման համար պետք է ապահով նավահանգիստ ունենար: Քաղաքի բնակչութիւնը, նրա շինարար վարպետները շարունակելով քաղաքի պարիսպը լճի մեջ՝ ընդարձակ պատնեշ են կառուցում՝ նրա մեջ առնելով լճի մի հատվածը, ասլա դնելով «զորունս ահաւորատեսս հաստահեղոյսս և բենոապինդս» բազմաթիւ նավերի «խաղաղ և անքոյթ նաւահանգիստ» են դարձնում:

Պատմիչը այս շինարարութիւնը ավելի դժվարին ու բարձրարվեստ է համարում,

1 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն, էջ 482—483:

2 Նույն տեղում, էջ 484—487:

3 Նույն տեղում, էջ 479:

բան Վանա ժայռի վրա ուրարտական (ավանդաբար Շամիրամին վերագրվող), փորածո սենյակները կամ Վարագա լեռան ստորոտում Շամիրամի ջրանցքի համար կառուցված ամբարտակը⁴:

Աղթամար քաղաքի կառուցումը մի տիպիկ օրինակ է, թե ինչպես թագավորները «մարդահարկ»-ի եղանակով, այսինքն ժողովրդի բազմութիւնը աշխատանքի հանելով՝ բերդեր և քաղաքներ էին կառուցում:

Աղթամարը փոքրիկ թագավորական քաղաք էր, իբրև այդպիսին էլ նրան հիշատակում է Կիրակոս Գանձակեցին⁵: Աղթամարը հետագայում էլ մնաց մի փոքրիկ քաղաք, որտեղ նստում էին Արծրունի իշխանների շառավիղները, անգամ սելջուկների նվաճումներից հետո: Թովմա Արծրունու շարունակողի ասելով՝ մինչև 1121 թ. Աղթամարում նստում էր Աբղլմեսէ Արծրունին⁶:

Այս և հետագա ժամանակներում Աղթամարը զարգացման պայմաններ չունեւր և որպէս քաղաք, համարյա այլևս չի հիշատակվում, այլ երևան է գալիս իբրև կախկոպոսական և հետո կաթողիկոսական ավան, այսինքն կրօնական կենտրոն:

Հաղավակեալ: Ծ-րդ դարի կեսերին մոտ Հաղամակերտը հիշվում է իբրև Արծրունիների ոստան⁴ և հավանաբար բերդ էր, ինչպէս հիշատակում է Շապուհ Բագրատունին⁵: Բայց նույն Ծ-րդ դարի վերջերին Հաղամակերտը անվանված է քաղաք հենց նույն հեղինակների մոտ⁶:

10-րդ դարի սկզբներին Հաղամակերտում շինարարութիւն է կատարել քաղաքի

1 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն, էջ 479:

2 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն, էջ 77:

3 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն, էջ 512:

4 Նույն տեղում, էջ 197:

5 Շ ա պ ու հ Բ ա գ ր ա տ ու ն ի, Պատմութիւն, էջ 63:

6 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, էջ 333: Շ ա պ ու հ Բ ա գ ր ա տ ու ն ի, էջ 63:

տեր Գուրգեն Արծրունին և այդ կապակցութեամբ, ինչպես և այլ տեղերում Ռովմա Արծրունին Հաղամակերտը կոչում է քաղաք¹:

Ռովմա Արծրունու շարունակողը, որը քաղաքներին սովորաբար ավան անունն է տալիս, Հաղամակերտը մի տեղ կոչում է ավան², իսկ երկու տեղ՝ քաղաք³:

Հաղամակերտ քաղաքի մասին մեկ հասած տեղեկությունները վերաբերում են 9—11-րդ դարերին, որից հետո քաղաքը այլևս չի հիշատակվում: Ինչպես երևում է, գտնելվելով ոչ այնքան խիտ բնակչություն ունեցող ու ոչ շատ բերրի Մեծ Աղբակ գավառում և առևտրական ճանապարհներից դուրս, Հաղամակերտը թույլ զարգացած փոքրիկ բերդաքաղաք մնաց:

Վասպուրականի քաղաքներից մի քանիսի անուններն են մեկ հայտնի միայն և այլ տեղեկություններ չկան: Դրանք են Զարեվանդ քաղաքը, որի շինարարությունը կեղծ Շապուհ Բագրատունին վերագրում է Դերենիկին⁴, Վհրի քաղաքը՝ Կորճեքի Ըոնա գավառում⁵, Շահաստան քաղաքը՝ Անձևացյաց երկրում⁶, Կեցանը⁷, Մակուն, որը սովորաբար հիշատակված է իրրև բերդ, մի անգամ էլ քաղաք է անվանված⁸: Սրանք փոքր, չզարգացած քաղաքներ են եղել՝ ոչ մեծ դերով:

Վասպուրականի Սղերդ և Խիզան քաղաքների վերաբերյալ տեղեկություններ մեկ հասել են միայն 13-րդ դարից սկսած:

Որոշ դեր խաղում էին նաև Վասպուրա-

կանի գյուղաքաղաքներն ու խոշոր ավանները, որոնք տեղական նեղ նշանակություն ունեին: Հիշատակության արժանի են, մասնավորապես, Առեստավան գյուղաքաղաքը, որն հայտնի էր իր ձկնորսաբաններով և այդ պատճառով պարսիկները կոչել են՝ Բանդի-մահի¹: Արտաշիսյան ավանը՝ Վանից ոչ հեռու², Անգեղակոթ մեծ ավանը Կողովյաթում³, Մառական ավանը Ճուաշ գավառում, Կարմիր գետի վրա, որն Արծրունիների արքունի ձմեռանոցն էր 10-րդ դարում⁴ և ուրիշները:

4. ՏԱՐՈՆԻ ԵՎ ԾՈՓՔԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Վասպուրականի քաղաքների նման մանր քաղաքներ առաջացել էին նաև Տարոնում ու Ծոփքում: Տարոնում 10—11-րդ դարերում գոյացել էր հայկական ինքնուրույն իշխանություն, որը զարգանում էր իրրև առանձին տնտեսական և վարչական միավոր: Բնական է, որ արհեստների երկրագործությունից անջատման և քաղաքներում կենտրոնանալու, ասլրանքային արտադրության զարգացման պայմաններում, երբ դեռ հարևան գավառներն անգամ իրար հետ սերտ կապեր չունեին, ամեն մի գավառում պետք է առաջանային տեղական նշանակություն ունեցող փոքր քաղաքներ ու գյուղաքաղաքներ: Այդ տեղի էր ունենում Հայաստանի բոլոր նահանգներում ու գավառներում, և Տարոնը բացառություն չէր կազմում: Նույնը կարելի է ասել և Ծոփքի վերաբերյալ, որտեղ դեռևս 9—10-րդ դարերում ինքնուրույն փոքրիկ ամիրայություններ էին կազմավորվել:

Մուշ: Տարոնի կենտրոնն էր Մուշ քաղաքը: Մուշը հետո հղել է ավան, իսկ իրրև քաղաք, առաջին անգամ հիշատակվում է

1 Ռովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 411—412, 417:

2 Նույն տեղում, էջ 450:

3 Նույն տեղում, էջ 460:

4 Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, էջ 49:

5 Ռովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 416:

6 Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, էջ 51:

7 Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք, էջ 191:

8 Ռովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 389:

1 G. le Strange, The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1930, p. 115.

2 Ռովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 348:

3 Նույն տեղում, էջ 503:

4 Նույն տեղում, էջ 264, 407, 423:

9-րդ դարի կեսերին տեղի ունեցած անցքերի կապակցութեամբ: Արաբական Յուսուֆ ոստիկանը մտնում է Վասպուրական, ուր նրան հանձնում են հարկերը, ապա իր մտաւ կանչում Տարոնի տեր Բաղասարտ Բաղասատունն բարեկամութեան պատրվակով, բայց դրժելով իր խոստումը՝ կալանաւորում է նրան, իսկ ինքը արաբական զորքի հետ միասին գնում է ձմեռելու «ի Մուշ քաղաքին Տարօնոյ»¹: Ինչպես հայտնի է, նույն Մուշ քաղաքում էլ Յուսուֆը ստանվում է հաջորդ սարվա (850 թ.) դարնանը, քաղաքի եկեղեցու մեջ²:

Մուշը անվանված է նաև «քաղաքն Տարօնոյ»³:

Յուսուֆի և նրա զորքերի ջախջախման կապակցութեամբ Մուշ քաղաքը հիշատակում է և Տաբարին, անվանելով այն Տարոն քաղաք⁴, որ, հավանաբար, «Տարօնոյ քաղաք» հայկական ձևից է ծագում:

10-րդ դարի երկրորդ կեսին Տարոնը արդեն գրավել էին բյուզանդացիները, պահպանելով տեղական իշխանների դիրքերը: Այդ դարի 70-ական թվականներին ծագած՝ Վարդ Սկլերոսի ապստամբութեան ժամանակ առաջացած խառնակ դրուժյունից օգտվելով, իլաթի ամիրա Բատը հարձակվում է Տարոնի վրա, ռաբով և գերութեամբ, — ասում է պատմիչը, — անմարդացոյց դաւառն Տարօնոյ, յաւարի առեալ գրաղաքն Մուշ»⁵:

11-րդ դարում Տարոնում և Սասունում առաջացել էր առանձին հայկական իշխանություն, որի կենտրոնը հավանաբար Մուշ քաղաքն էր:

Աշմուշատ: Այդպես կոչվում էր Ծոփքի հին կենտրոն Արշամաշատ քաղաքի անու-

նով: Գտնվում էր Արածանիի ձախ ավին, կոչվել է նաև Շիմշատ¹: Ստրկատիրական հասարակութեան անկումից հետո Արշամաշատը երկար ժամանակ չի հիշվում: Միխայել Ասորին Աշմուշատը հիշատակում է 9-րդ դարի կեսերի անցքերի կապակցութեամբ: Բյուզանդական Թեոփիլոս կայսրը 937 թ. Մելիտինեի վրա հարձակվելուց հետո գրավում է նաև Աշմուշատը²: Դատելով այն բանից, որ կայսրը շատ գերի է վերցնում Աշմուշատից, կարելի է ենթադրել, թե նա քաղաք էր: Իրն-Սերապիոնը հիշատակում է Շիմշատը, իբրև կարևոր վայր Արածանիի վրա³:

Բալուն ավան, թերևս, բերդ է եղել դեռևս հնագույն ժամանակներում: Միխայել Ասորին նրա հիմնադրումը վերագրում է Սելևկոս թագավորին⁴:

Հետագայում Բալուն սոսկ բերդ էր և սրպես այդպիսին հիշատակված է Ստեփանոս Տարոնացու մոտ⁵: Հավանաբար բերդի կողքին սահպանվել էր նաև ավանը, որը քաղաք է դառնում 11-րդ դարում:

Հայաստանի վրայով Մելիտինե անցնող գլխավոր ճանապարհը Խարբերդում մի ճյուղ էր տալիս, որն անցնում էր Աշմուշատի (Շիմշատ) և Բալուի վրայով և գնում դեպի Երիզա, Արզնկա և Կարնո քաղաք: 1001 թ. այս ճանապարհով Մելիտինեից Բալուի վրայով Երիզա է անցել Վասիլ Բ. կայսրը⁶:

Խարբերդը գտնվում է Ծոփաց աշխարհում՝ Արածանիի ստորին հոսանքի մոտ,

¹ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ք ի, Պատմութիւն, էջ 276:

² Մ ի խ ա յ Է Լ Ա ս ո ր ի, Ժամանակագրութիւն, էջ 371:

³ G. le Strange, The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1930, p. 116:

⁴ Մ ի խ ա յ Է Լ Ա ս ո ր ի, Ժամանակագրութիւն, էջ 73:

⁵ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ք ի, Պատմութիւն, էջ 274:

⁶ Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 276:

¹ Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն, էջ 199:

² Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 202:

³ Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 200:

⁴ Բ. Ն ա յ ա թ յ ա ն ց, Արարացի մատենագրեր, էջ 97:

⁵ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ք ի, Պատմութիւն, էջ 192:

գետից քիչ հարսով: Խարբերդում, դեռևս 10-րդ դարում, արաբական փոքրիկ ամիրայություն էր գոյացել: Այդ հանդամանքը նույնպես, որպեսզի այդ բերդավանից առաջանա մի փոքրիկ քաղաք:

Ծովքում էին գտնվում նաև Խոզան, Չմշկածագ (նախկին Երոպոլիս) և Մեծկերտ քաղաքները, որոնց վերաբերյալ տեղեկություններ համարյա չկան: Մեծկերտը և Խոզանը հիշատակվում են Թեոփիլոս կայսրի (829—842) 837 թ. դեպի արևելք կատարած արշավանքի ժամանակ Հայաստանի տերիտորիայում գրավված կարևոր բնակավայրերի թվում¹:

Ուռհայեցին բացատրում է, թե Խոզանը անունով էր կոչվում գավառը, որի մեջ էր գտնվում և Չմշկածագ քաղաքը²: Ինչպես հրևում է Խոզանը, Չմշկածագը և Մեծկերտը եղել են փոքրիկ բերդաքաղաքներ:

Յակուտը Չմշկածագի մասին այսպես է ասում. «Բերդ և քաղաք Ամիթի և Մալաթիայի միջև»³: Այս քաղաքները հիշատակվում են 9—10-րդ դարերի անցքերի կապակցությամբ և, ինչպես հրևում է, հետագայում չզարգացան, ուստի և անհայտ մնացին:

Տարոնի և Ծովքի քաղաքները գավառական շատ սահմանափակ նշանակություն ունեին, նրանք դուրս էին նաև Հայաստանի վրայով անցնող գլխավոր ճանապարհներից, ուստի զարմանալի չէ, որ նրանք մեծ քաղաքներ չդարձան:

5. ՔԱՂԱՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի հարավի մարդախիտ և արգավանդ հովիտներով անցնում էր առևտրական գլխավոր ճանապարհների հարս-

վային ուղեգիծը, որի վրա և առաջ եկան Հարավային Հայաստանի գլխավոր քաղաքները:

Արաբական խալիֆայի քայքայման հետևանքով Հայաստանի տերիտորիայում⁴ նրա հարավում առաջացան արաբական մի քանի ինքնուրույն ամիրայություններ (կայսիկների, ութմանիկների), որոնք այս կամ այն չափով ճանաչում էին Բագրատունիների բերիշխանությունը: Աստիճանաբար այս ամիրայությունների կապը խալիֆայի հետ թուլացավ. խալիֆայի օգտին վճարվող յարկերը այժմ մտնում էին ամիրաների գանձարանը և մնալով երկրի ներսում, նույնպես նրա տնտեսական վերելքին, դրա հետ միասին և քաղաքների առաջացմանն ու աճին:

Այս պայմաններում Հարավային Հայաստանում առաջացան մի խումբ քաղաքներ, որոնց թվում կային և խոշոր ու բարգավաճ քաղաքներ, ինչպես՝ Նյիրկերտը, Խլաթը, Մանաղկերտը և Արճեշը:

Արճեշը, Սեբետը այս բնակավայրը հիշատակում է դեռևս 7-րդ դարի անցքերի կապակցությամբ⁵: Հերակլի արշավանքների ժամանակ Արճեշը երևան է գալիս իբրև հայտնի բնակավայր, թերևս բերդ⁶:

774—775 թթ. ասպտամբություն կապակցությամբ Ղևոնդ երեցը Արճեշն անվանում է՝ մի տեղ գյուղ⁷ և երկու տեղ ավան, նույնիսկ գյուղաքաղաք⁸: Այդ ժամանակ Արճեշը արարական զորքերի հենակետ ամրոց էր⁹: Այս փաստերը ցույց են տալիս, որ Արճեշը 8-րդ դարում բերդ և ավան է եղել:

774—775 թթ. ասպտամբության պարտությունից հետո արաբական խալիֆայից, իր դիրքերը Հայաստանում ամրապնդելու համար, զգալի թվով արար բնակչություն է

¹ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 144:

² Մ ա տ ր և ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, Ժամանակագրութիւն, էջ 19:

³ Յ ա կ ու տ, Յ, էջ 320:

¹ Ս ե ր և ո ս, Պատմութիւն, էջ 24:

² Նույն տեղում, էջ 94:

³ Ղևոնդ վարդապետ, Պատմութիւն, էջ 147:

⁴ Նույն տեղում, էջ 146, 151:

⁵ Նույն տեղում, էջ 146—147:

տեղափոխում Հայաստանի հարավային գավառները, դրանց թվում և Արճեշի գավառը:

Շապուհ Բագրատունուն վերագրված աշխատությունների մեջ, 10-րդ դարի սկզբներին Արճեշը հիշատակվում է իբրև գոյություն ունեցող քաղաք¹:

Ստեփանոս Տարոնացին 709 թ. անցրելի կապակցությամբ, հենվելով հին աղբյուրների վրա՝ Արճեշը անվանում է գյուղ², իսկ 720-ական թթ. անցրելի կապակցությամբ անվանում է քաղաք³, հավանաբար ելնելով իր ժամանակ (10-րդ դար) գոյություն ունեցող գրությունից: 10-րդ դարի վերջերին հայ-վրացական զորքերը ետ են մղում Ատրպատականի ամիրայի բանակը մինչև Արճեշ քաղաքը⁴:

Գ-րդ դարում, օգտվելով Արտաշիան խալիֆաթի թուլացումից, Բյուզանդական կայսրությունը առաջ է շարժվում դեպի արևելք, մեկը մյուսի ետևից գրավում է հայկական գավառներն ու քաղաքները: Նույն այդ ժամանակ բյուզանդացիները գրավում են նաև Արճեշ քաղաքն իր գավառով: Քաղաքը երկար շմնաց բյուզանդացիների ձեռքում:

Կոնստանդին Միրանաժինի ասելով, Արճեշը Գ-րդ դ. վերջերին, 10-րդ դարի սկզբներին ենթակա էր Բագրատունի թագավորների իշխանությանը⁵:

Քեռիրի: 8-րդ դարի առաջին կեսում Բերկրին էլ Արճեշի նման բերդ էր, ուր արարներ էին բնակեցված: Շապուհ Բագրատունին Արճեշը հիշատակելով իբրև քա-

ղաք, նույն տեղում Բերկրին անվանում է բերդ¹: Բովմա Արծրունին Գ-րդ դարի 50-ական թթ. անցրելի կապակցությամբ Բերկրին քաղաք է կոչում² և ասում է, թե քաղաքացիքն են ութմանիկները³:

Խլաթի, Մանազկերտի կայսիկները և Բերկրիի ութմանիկները Գ-րդ դարի երկրորդ կեսում փորթիկ ամիրայություններ էին կազմել, որոնք դեռևս Աշոտ իշխանաց իշխանի ժամանակ ենթակա էին այս իշխանին: Գ-րդ դարի վերջերին կայսիկների և ութմանիկների ամիրայությունները, ինչպես Բովմա Արծրունին է վկայում, ապստամբել էին Բագրատունի Ամրատ Ա թագավորի դեմ, ևսկայն Ամրատը ճնշեց նրանց ըմբոստությունը, վասալական կախման մեջ դրեց նրանց և հարկատու դարձրեց⁴:

Արծրունիների և Բերկրիի ամիրայության միջև պայքար էր գնում Ամյուկ անառիկ ամրոցի շուրջը, որին տիրել էին ութմանիկները: Գաղիկ Արծրունին այդ բերդը գրավեց⁵: Բերդը վերագրվեց անհաջող փորձից հետո ութմանիկները և Արծրունիները հաշտվեցին և խաղաղ ապրում էին կոզը-կոզքի:

Վասպուրականը բյուզանդական կայսրությանն անցնելուց հետո, այս նահանգի բյուզանդական կառավարիչ Կավասիլատը 1032 թ. հարձակվեց Բերկրի բերդաքաղաքի վրա:

Բյուզանդական զորքերը գրավեցին Բերկրին, իսկ քաղաքի նախկին տերերը, այլ ամիրաների օգնությամբ, հարձակվեցին նրա վրա, ջարդեցին բյուզանդացիներին և նորից հաստատվեցին քաղաքում⁶: Ասկայն դա շատ կարճ տևեց, հաջորդ,

1 Շապուհ Բագրատունի, Պատմություն, էջ 65, 72:

2 Ստեփանոս Տարոնացի, Պատմություն, էջ 102:

3 Նույն տեղում, էջ 116, 278:

4 Նույն տեղում, էջ 273:

5 Արիստակես Լաստիվերացի, Պատմություն, էջ 91:

6 Константин Багрянородный, Об управлении государством, «Известия» ГЛ. ИМК, вып. 91 М.Л. 1934, стр. 25

1 Շապուհ Բագրատունի, Պատմություն, էջ 65, 72:

2 Բովմա Արծրունի, Պատմություն, էջ 317:

3 Նույն տեղում, էջ 320:

4 Նույն տեղում, էջ 396:

5 Նույն տեղում, էջ 458—462:

6 Ըստ Սամվել Անեցու, դա տեղի է ունեցել 1030 թ. (Սամվել Անեցի, էջ 106):

1033 թ., բյուզանդական զորքերը նորից գրավեցին Բերկրին և տիրեցին նրան մինչև 1054 թ., երբ Տուղրիլ բեկը խլեց նրանցից Արճեշը և Բերկրին¹: Բերկրին ևս գտնվում էր Բագրատունի առաջին թագավորների իշխանության ներքո²:

Մանազկերտ: Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է, որը գոյություն է ունեցել առնվազն ուրարտական ժամանակներից սկսած: 4-րդ դարում անվանված է գյուղ³: Այդպես է կոչված նաև «Գիրք թղթոց»-ում 726 թ. Մանազկերտի ժողովի կապակցությամբ⁴:

Թեև նույն առիթով Միխայել Ասորիքն, որը հին աղբյուրներ է օգտագործել, Մանազկերտը անվանում է դյուղաքաղաք⁵, իսկ Ստեփանոս Տարոնացին՝ քաղաք⁶: Մանազկերտը քաղաքագյուղ է կոչված Հովհան Մամիկոնյանի մոտ⁷: Կարծում ենք, որ «գյուղաքաղաք» և «քաղաք» կոչումները արտահայտում են ավելի ուշ ժամանակի եղելությունը:

774—775 թթ. ապստամբությունից հետո Մանազկերտում արաբներ բնակեցվեցին կայսիկ ցեղից: Սրանց առաջնորդ Ջահապը 8-րդ դարի վերջերին հիմնեց Մանազկերտի ամիրայությունը:

Թովմա Արծրունին Մանազկերտը քաղաք է կոչում 9-րդ դարի 60-ական թթ. անցքերի կապակցությամբ⁸: Այնուհետև բո-

լոր աղբյուրներում Մանազկերտը հիշատակվում է իբրև քաղաք:

902 թ. Սմբատն իրեն հնազանդեցրեց Մանազկերտի ամիրային և հարկատու դարձրեց նրան¹: 9-րդ դարի վերջերին Մանազկերտի ամիրան թեև բավականաչափ զորեղացել էր և տիրում էր նաև Խլաթ, Բերկրի և Արճեշ քաղաքներին, բայց և այնպես ճանաչում էր Աշոտ Ա-ի սյուլեղերեն իշխանությունը: Կոնստանդին Ծիրանածինը այդ առթիվ գրում է. «Ապլկերտը ատրում էր Մանազկերտին և գտնվում էր իշխանաց իշխան Աշոտի, իշխանաց իշխան Սմբատի հոր, տիրապետության տակ: Այս իշխանաց իշխան Աշոտը Ապլվարտին տվեց նաև Ուլիաթ (Խլաթ), Արզես (Արճեշ) և Պերկրի քաղաքները, որովհետև վերոհիշյալ իշխանաց իշխան Սիմվատի հայրը տիրում էր արևելքի բոլոր հողերին»²:

970-ական թվականներին Մանազկերտը գրավեցին բյուզանդական զորքերը³, սակայն շուտով այստեղ հաստատվեց քրդական դինաստիա⁴: 10-րդ դարի վերջերին Մանազկերտը միացվեց Տառ-Կլարջենթի վրացական թագավորությանը:

Պատմիչի ասելով, երբ Դավիթ Կյուրապաղատը գրավեց Մանազկերտը, ապա նա «հանեալ արձակեաց զՏաճկաստանեայսն. և ինքն լնու զքաղաքն Հայ և Վրացի բնակչօք ընդ իւրով իշխանութեամբ»⁵:

Դավիթ Կյուրապաղատի մահից հետո (1001 թ.) նրա տիրույթների մեծ մասը, նաև Մանազկերտի զավառն իր կենտրոնում, անցավ Բյուզանդական կայսրությանը⁶:

10-րդ դարի վերջերին և 11-րդ դարի

¹ Մատթեոս Ունհայեցի, ժամանակագրություն, էջ 118:

² Константин Багрянородный, цит. сочинение, стр. 25.

³ Փավստոս Բուզանդ, Պատմություն, էջ 10, 271:

⁴ Գիրք թղթոց, էջ 223:

⁵ Միխայել Ասորի, ժամանակագրություն, էջ 339:

⁶ Ստեփանոս Տարոնացի, Պատմություն, էջ 103:

⁷ Հովհան Մամիկոնյան, Պատմություն Տարոնոյ, Երևան, 1941, էջ 217:

⁸ Թովմա Արծրունի, Պատմություն, էջ 361:

¹ Թովմա Արծրունի, Պատմություն, էջ 396:

² Константин Багрянородный, цит. соч., стр. 25.

³ Ստեփանոս Տարոնացի, Պատմություն, էջ 183:

⁴ Նույն տեղում, էջ 102:

⁵ Նույն տեղում, էջ 266:

⁶ Վարդան, Հաւարտման Պատմութեան, էջ 93:

սկզբներին Մանազկերտն ավելի աչքի էր ընկնում իր ամուր բերդով: Այլ Մովսիսը սին (10-րդ դ.) նկարագրում է Մանազկերտը իբրև մի ամուր բերդ, որը սակայն ունեւր շուկա¹. Հուդուդ-ալ-ալամում ևս այն կոչված է բերդ: Նույն 10-րդ դարավերջին մի ձեռագրի հիշատակարանում Մանազկերտը մերթ գյուղաքաղաք, մերթ քաղաք է անվանվում:

1054 թ. Տուղրիլ բեկը սրաշարելով քաղաքը և գործադրելով իր ժամանակի ռազմական տեխնիկայի բոլոր միջոցները, շկարողացավ վերցնել այն²:

1071 թ. սելջուկները Մանազկերտի տակ հաղթանակ տարան բյուզանդական զորքերի դեմ և սչ միայն վերցրին քաղաքը, այլև դրանից հետո ներխուժեցին Փոքր Ասիա:

Խլար: Հայաստանի հարավում առաջիկ վաղ առաջացած ֆեոդալական քաղաքներից մեկը Խլաթն է, որը իբրև քաղաք, առաջին անգամ հիշատակվում է 774—775 թթ. ապստամբության կապակցությամբ:

Արարական խալիֆաթը Հայաստանում բռնկված մեծ ապստամբութունը ճնշելու համար ուղարկում է երեսուն հազարանոց մի բանակ Ամր զորավարի գլխավորությամբ, որը Հայաստան մտնելով շարժվում է դեպի հյուսիս և գալիս է Խլաթ քաղաքը: Այստեղ քաղաքի իշխանն էր Բագրատունի Սահակի որդի Աշոտը, որը դիմում է Արճեղը պաշարած Արծրունի իշխաններին՝ միավորվելու թշնամու դեմ: Ուշագրավ է, որ այս անցքերի կապակցությամբ Խլաթը մի քանի անգամ քաղաք է անվանված³, Արճեղը մի անգամ՝ գյուղ, երեք անգամ՝ ավան և մի անգամ՝ քաղաքադոլու: Ապստամբությու-

նից հետո Խլաթը Բագրատունիներից անցավ արար Զահապյաններին:

Խլաթը Թովմա Արծրունու մոտ այլ կերպ չի անվանված, քան քաղաք⁴, մի դեպքում նշելով, որ քաղաքի մեջ ամրոց կար⁵, այսինքն քաղաքն ունեւր միջնաբերդ:

Խլաթի մասին շատ հաճախ են խոսում արարական հեղինակները: Բելաձորին (9-րդ դար) Խլաթը անվանելով քաղաք, ասում է, որ այն նվաճվել է հիջրեթի 20 թվականին⁶, Իբն ալ-Աթիրը (կամ Իբն ալ-Ասիր) Խլաթ քաղաքի դրավումը վերագրում է Իսդին⁴: Իբն ալ-Աթիրը, միաժամանակ վկայություն է թողել, թե հիջրեթի 112 թ. (730—731) խաղաքները արշավել են մինչև Մոսուլ: Հիշամ խալիֆը զորաբանակ ուղարկեց նրանց դեմ, որը մտավ Հայաստանի Արզն քաղաքը, ապա դրավեց Խլաթ քաղաքը, առաջ շարժվելով մինչև Պարտավ⁵:

Նույն հեղինակի ասելով, հիջրեթի 170 թ. (794—795) արաբ նոր ոստիկանը 20 օր պաշարեց Խլաթը⁶. կարելի է ենթադրել, որ քաղաքը դեռևս Բագրատունիների ձեռքին էր: Դեռևս 9-րդ դարում Խլաթում հաստատվում է կայսիկների ամիրայությունը:

Բերկրիի, Արճեղի և Մանազկերտի նման Խլաթն էլ ենթակա էր առաջին Բագրատունիների սյուլերեն իշխանությանը: Խոսելով Բագրատունի առաջին թագավորների մասին և անվանելով նրանց իշխանաց իշխան, Կոնստանդին Միրանաժինը գրում է. «Իշխանաց իշխանը նստում էր Մեծ Հայքում, Կարս քաղաքում և տիրում էր նաև վերոհիշյալ էրեք քաղաքներին՝ Բերկրիին, Խալիֆին և Արզեսին, ինչպես և Տիվիին (Դվին) Խեր-

1 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 198—199, 212, 260:

2 Նույն տեղում, էջ 198—199:

3 Բ. Խալիֆյանց, Արաբացի մատենագրի, էջ 74—75:

4 Նույն տեղում, էջ 127—128:

5 Նույն տեղում, էջ 133—134:

6 Նույն տեղում, էջ 140:

1 G. le Strange, The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1930, p. 115.

2 Արիստակես Լաստիվերոցի, Պատմութիւն, էջ 67—71:

3 Ղևոնդ վարդապետ, Պատմութիւն, էջ 145—146:

տին (Հեր) և Սալմասին»¹: Նույն հեղինակի մի այլ վկայությունից պարզվում է, որ այդ գրությունը տեղի է Աշոտ Ա-ից մինչև Աշոտ Բ-ի ժամանակները: Կոնստանդին Միրանաժինը գրում է. «Սկսած վերոհիշյալ իշխանաց իշխան Աշոտից, Միմվատի հորից և Աշոտ Երկրորդի, մագիստր Ապասակի պապից, մինչև իշխանաց իշխան Աշոտ Երկրորդի կյանքի (օրերը), այս երեք քաղաքները (Բերկրին, Խլաթը և Արճեշը — Բ. Ա.) գտնվում էին իշխանաց իշխանի տիրապետության ներքո և հարկը նրանցից ստանում էր իշխանաց իշխանը. բայց և Մանազկերտ քաղաքը Ապահունիք, Հարք և Կուրի նահանգով գտնվում էր նույն իշխանաց իշխանի իշխանության և տիրակալության ներքո»²:

Խլաթի տեղագրության, բնության, նրա բնակչության կազմի, մասամբ և զբաղմունքների մասին մեզ հասել են որոշ, թեև աննշան տեղեկություններ:

Ալ-Մովաղդասին ասում է, թե «Ախլաթը (Խլաթ) հովտի մեջ է, ունի հրաշալի այգիներ, նրա շուրջը հողե ամրություններ կան, գլխավոր մզկիթը հրապարակի վրա է, [քաղաքի] միջով գետ է անցնում»³:

Աբու-Ֆեղան ևս վկայում է, որ Խլաթը մի զաշտի մեջ է տեղավորված, ունի բազմաթիվ մրդաստաններ, շատ վտակներ են հոսում այնտեղից, բայց մի քանիսն են միայն մտնում ներս... Նրա տարածությունը հավասարվում է Դամասկոսի տարածությանը⁴:

Նասիր Խոսրովը, որը 1046 թ. եղել է Խլաթում, վկայում է, որ «Ախլաթ քաղաքում խոսում են երեք լեզվով՝ արաբերեն, պարսկերեն և հայերեն, իմ կարծիքով սրա համար էլ քաղաքը կոչվում է Ախլաթ (խառը)»:

1 Константин Багрянородный. Цит. сочинение, стр. 25.

2 Նույն տեղում, էջ 26:

3 СМОМПК, вып. XXXVIII, стр. 10.

4 Օգտվում ենք Հ. Նալբանդյանի ձեռագրից:

Առևտուրն այստեղ պղնձե դրամներով է կատարվում...»¹:

Յակուար, օգտվելով ավելի հին աղբյուրից, հիշատակում է Խլաթի՝ աղահանքերից դանձվող հարկերը, ասելով, երբ Իպո իբն-Ղանինը գրավեց Բիթլիսը, հասավ մինչև Խլաթ, հարկ դրեց նրա ու նրա աղահանքերի հորերի վրա²:

Բաղեշ: Սեբեոսը 7-րդ դարում հիշատակում է Բաղեշի բերդը³: Արաբական հեղինակները ևս վկայում են, որ նա 7-րդ դարում գոյություն ունեցող հայտնի բնակավայր էր, որը Բելաձորու ասելով նվաճվել է հիջրեթի 20 թվականին⁴: Իբն ալ-Աթիրը Բաղեշի (Բիթլիսի) գրավումը վերագրում է Իպոին⁵:

850 թ. ապստամբության ժամանակ Բաղեշի տեր Մուսա իբն-Չուրարը գործակցեց էր Բագարատ Բագրատունուն և Խուլթի ապստամբներին: Բուղան Հայաստան մտնելով ձերբակալեց Չուրարին⁶:

9-րդ դարի կեսերին տեղի ունեցած անցքերի կապակցությամբ Թովմա Արծրունին Բաղեշը անվանում է «շահաստան»⁷, նշանակում է այն արդեն քաղաք էր դառել: Կարելի է այն հանգամանքը, որ այս վկայությունը հաղորդում է ժամանակով անցքերին մոտ և իրադեկ Թովմա Արծրունին: 10-րդ դ. Բաղեշը քաղաք է անվանվում: Ալ-Մովաղդասու ասելով Բիթլիսը գտնվում էր մի խորը ձորում՝ եզերված երկու գետակներով, որոնց միացման մոտ տեղադրված էր նա: Քաղաքը ուներ քարե ամուր բերդ⁸:

Արզն: Իբրև բնակավայր Արզնը հիշա-

1 Насыр-и Хусрау. Сафарнаме, стр. 38.

2 Յակուար, 1, էջ 526:

3 Սեբեոս եպիսկոպոս, Պատմութիւն, էջ 142:

4 Բ. Խալաթյանց. Արաբացի մատենագրեր, էջ 74—75:

5 Նույն տեղում, էջ 127—128:

6 Նույն տեղում, էջ 65—75:

7 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 187:

8 G. le Strange. The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1930, p. 116.

տակվում է մեր թվ. առաջ 6-րդ դարին վերաբերող առասպելների մեջ¹: Խորհնացին և 7-րդ դ. Աշխարհացույցը Արզնը հիշատակում են իբրև դավառ²: 7-րդ դարում Արզնը կարևոր բնակավայր էր, և նրա մեջ կայրսկոպոսական աթոռ էր հաստատված³:

Բերաձորին Խլաթի և Բիթլիսի հետ միասին Արզնն էլ քաղաք անվանելով ասում է, որ այս քաղաքները արարները գրավեցին հիջրեթի 20 թվականին⁴: Իբն ալ-Աթիրը Արզնը քաղաք է անվանում 730—731 թթ. խաղարական արշավանքի կապակցությամբ⁵:

9-րդ դարի կեսերին Արզնում գոյություն ունեւր արարական իշխանություն, որը միացած հայ իշխանություններին ապստամբում է խալիֆի դեմ:

Հայկական աղբյուրներում ոչ մի վկայություն չկա այն մասին, որ Արզնը քաղաք եղած լինի 7—9-րդ դարերում, ուստի թվում է, թի արարական աղբյուրների վկայությունները, որտեղ Արզնը, նաև Բաղեշն ու Խլաթը, քաղաք են կոչվում 7—8-րդ դարերում, ելնում են այդ հեղինակների ժամանակների՝ 9—10-րդ դարերի գրությունից:

1046 թ. Նասիր Խոսրովը Բիթլիսից (Բաղեշից) Արզն անցնելով որոշ տեղեկություններ է տալիս այդ քաղաքի մասին: Նա ասում է, որ Արզնը «Գեղեցիկ և շին քաղաք էր, հոսող ջրով և այգիներով, ընտիր ծառատաններով և շուկաներով: Այնտեղ պարսից ազար ամսին (նոյեմբեր) 200 ման խաղողը մեկ գինարով էին վաճառում: Այս խաղողը կոչում են ոխլ արմանուշ»⁶:

1 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն, էջ 77, 83: Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 36:

2 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Պատմութիւն, էջ 116: Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, Մատենադրութիւն, էջ 349:

3 Գիրք թղթոց, էջ 218:

4 Բ. Խ ա լ ա թ յ ա ն ց, Արարացի մատենագրեր, էջ 74—75:

5 Նույն տեղում, էջ 133—134:

6 Н а с ы р - и Х у с р а у, Сафарнама, стр. 39.

11-րդ դարի 80-ական թթ. Արզնը դրսևնրվում էր հայ իշխանների ձեռքին և այս քաղաքն է այցելում Անիից փախած Բարսեղ արքեպիսկոպոսը, որը դրանից առաջ (1081 թ.) կաթողիկոս էր ձեռնադրվել Անիում¹: Քիչ հետո կաթողիկոսական աթոռը հաստատվում է «ի Ծովքն Արզնու: Եւ ապա յետոյ փոխեցան ի Հոռմկլայն»²:

11-րդ դարից սկսած այս քաղաքը շարդացավ, այլ քայքայվեց՝ տեղի տալով Բաղեշին, Նիրիկերտին, մանավանդ Խլաթին:

13-րդ դարի առաջին երրորդում Յակուտը Արզնի մասին գրում է, որ ճշանավոր քաղաք է Խլաթի մարդում, որն ունի ամուր բերդ և անցյալում Հայաստանի ամենաժողկյալ շրջաններից մեկն էր կազմում, իսկ այժմ տեղեկանում եմ, որ հետզհետե ավերակների է վերածվում³:

Յակուտը հիշատակում է, թե այս քաղաքից գիտնական մարդիկ են ծագում և մասնավորապես հիշում է Յահյա իբն-Մահմեդ Արզնեցուն, որը գրականագետ, գեղեցկագիր գրիչ, ձայնանշանագիր, ճարտասան, բերական և բանաստեղծ է եղել: Նա էլ վկայում է, որ Արզնը արարները գրավել են հիջրեթի 20 թվականին (640) և հաշտությունն են կնքել քաղաքի բնակիչների հետ⁴:

Արձկն: Իբրև գյուղ Արձկեն հիշատակվում է դեռևս 5-րդ դարում⁵: Որպես այգույիսին, նա հանդիպում է նաև 10-րդ դարի հեղինակների մոտ, բայց 5—6-րդ դարերի անցքերի կապակցությամբ և նախորդ հեղինակների տեղեկությունների հիման վրա⁶:

Կարելի է ենթադրել, որ Արձկեն ևս, ինչ-

1 Գ ա ր ե գ ի ն Ա կ ա թ ո ղ ի կ ո ս, Յիշատարանը, էջ 420:

2 Նույն տեղում, էջ 422:

3 Յ ա կ ու տ, 1, էջ 205:

4 Նույն տեղում, էջ 205:

5 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Պատմութիւն, էջ 146:

6 Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն, էջ 82: Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 76, 81:

պես միջնադարյան Հայաստանի քաղաքների մեծագույն մասը, քաղաք է դարձել 9—10-րդ դարերում:

Շապուհ Բագրատունին թվիկով մի շարք քաղաքներ, Արձեշից հետո և Մանազկերտից առաջ, հիշատակում է և Արծկե քաղաքը¹:

10-րդ դարի վերջերին վերագրվող մի հիշատակարանում նշվում է, թե Արծկեն իր աթոռով (եպիսկոպոսական) մտնում էր Ադթամարի թեմի մեջ²:

Արծկե քաղաքը գտնվում էր Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին՝ լճի մեջ մտնող մի հրվանդանի վրա և ուներ ամուր բերդ: Արիստակես Լաստիվերոցին պատմում է, որ սելջուկ Տուղրիլ բեկը 1054 թ. չկարողանալով գրավել Մանազկերտը՝ վերացնում է քաղաքի պաշարումը և «երթեալ՝ հանդիպի քաղաքի միջոց, որ կոչի Արծկէ, որ է ի մէջ ծովուն Բզնունեաց, և ունի մօտ յինքն բերդ ամուր և անառիկ. և քաղաքացիքն յայս ապաստարան եղեալ ի ծովն և յամրոցն յանհոգս կային: Իսկ արիւնարբու գաղանն ծանծաղ տեղի գտեալ ի ծովուն, եթէ առաջնորդութեամբ ուրուք, և եթէ իւրեանց հնարագիտութեամբն, մտին ի քաղաքն. և սուր ի վերայ եղեալ կոտորեցին զամենեպին. և առեալ զգերին և զկապուտ քաղաքի՞ն, ելին ի տեղոջէն»³:

Ինչպես տեսնում ենք, Արծկեն մի փոքրիկ քաղաք է եղել իր բերդով և նշանակալից զարգացման չի հասել: Սելջուկների կողպուտից ու գերեվարությունից հետո, հավանաբար, քաղաքը վերականգնվել է:

Նվիրկերտ (Մուհարդին): Հին Տիզրանակերտի տեղ միջին դարերում գոյանում է նիրկերտ քաղաքը, որը մատենագրության մեջ հայտնի է նաև Մարտիրոսյուսի կամ

¹ Շ ա պ ու հ : Բ ա գ ր ա տ ու ն ի, Պատմութիւն, էջ 72:

² Գ ա ր ե գ ի ն Ա. Կ ա թ ո ղ ի կ ո ս, Յիշատակարանք, էջ 191:

³ Ա ր ի ս տ ա կ ե ս Լ ա ս ա ի վ ե ր ո յ ի, Պատմութիւն, էջ 71:

Մարտիրոսաց քաղաք, Մուհարդին կամ Մայաֆարկին անուններով:

Հովհաննես կաթողիկոսի մի վկայության համաձայն Մարտիրոսաց քաղաքը դեռևս հնում մեծորոպոլիտոսի կենտրոն էր¹: Ուրեմն Մարտիրոսյուսը կարևոր բնակավայր էր, որը Պրոտոպոլիտոսի ասելով՝ գրանրվում էր Հայաստանի՝ Բյուզանդիային անցած մասում, սահմանի վրա²:

Հուստինիանոսի վարչական ռեֆորմներից հետո Մարտիրոսյուսը դարձավ Չորրորդ Հայքի կենտրոնը³, որտեղ դուքս էր նստում: Հովհաննես կաթողիկոսը մի տեղեկութուն է պահպանել, որտեղ ասվում է. թե Մորիկ կայսրը «զչորրորդն կոչեցեալ Հայք՝ յորում մայրաքաղաք Մարտիրոսաց պօլիս՝ այսինքն նիրկերտ... գրէ ի դիւան արքունի»⁴: Բերևս սա նշանակում է, թե Չորրորդ Հայքը կայսրի տիրույթն է հայտարարվել ու միացվել է նրա կալվածներին:

Հուստինիանոսի ժամանակ կառուցվում է Մարտիրոսյուսի ամուր պարիսպը, որը 40 ոտնաչափ բարձրություն և 12 ոտնաչափ հաստություն ուներ⁵:

726 թ. Մանազկերտի ժողովին, որն ուղղված էր հերձվածողների դեմ, մասնակցում էր նաև նիրկերտի եպիսկոպոսը⁶:

Բեկաձորին և իրն ալ-Աթիրը Մարտիրոսյուսը կամ Մայաֆարկինը հիշատակում են արարական արշավանքների ժամանակ գրավված քաղաքների թվում⁷: Յակուար ասում է, թե «արաքները գրավելով քաղաքը

¹ Հ ո Վ հ ա ն ն ե ս Կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն, էջ 63:

² Procor. De bello pers. I, 9, p. 42, 1, 21, ip. 107.

³ Н. А д о н ц, Армения в эпоху Юстиниана, стр. 168, 173.

⁴ Հ ո Վ հ ա ն ն ե ս Կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն, էջ 88:

⁵ Н. А д о н ц, Армения в эпоху Юстиниана, стр. 142.

⁶ Գ ի ր ր Թ ղ թ ո յ, էջ 224:

⁷ Բ. Խ ա լ ա թ յ ա ն յ ց, Արարացի մատենագրեր, էջ 72, 127—128:

նրա բնակիչներից 50 հազար դինար տուրք վերցրեցին: Ամեն շաբաթաճառ մարդուց առան շորս կամ երկու դինար, երկու կաֆիզ (կապիճ) ցորեն, մեկ մոզու յուղ, մեկ մոզու քացախ, մեկ մոզու մեղր: Պայման դրվեց նաև, որ բնակիչները երեք օր հյուրասիրեն անցորդ մուսուլմաններին և նրանց բնակության համար առանձին թաղամաս հասկացնեն և տասանորդ դրվի բնակչության ինչքի վրա»¹:

Իբն-Հաուքալը Մայաֆարկինը հիշատակում է իբրև հարավային Հայաստանի կարևոր քաղաքներից մեկը²:

Նիրկերտը եղել է արաբական ամիրայության կենտրոն և, իբրև այգպիսին, հիշատակվում է 10-րդ դարի վերջերին և 11-րդ դարի առաջին կեսում³: 10-րդ դարի վերջերին բյուզանդացիները ուժեղացնում են ձնշումը Նիրկերտի և Խլաթի ամիրայության վրա: Այդ է պատճառը, որ 11-րդ դարի սկզբին ամիրա Բատի մահվանից հետո նրան փոխարինած Աբուամար ամիրան բռնության մեջ հեռացրեց քաղաքում բնակվող արաբներին «մինչև ոչ մնալ Տաճիկ ի Նիրկերտ. այլ հայ և ասորի բնակէր ի նմա»⁴, և դարձավ բյուզանդական Վասիլ Բ կայսրի վասալը:

Սակայն Բյուզանդիան չկարողացավ իր դերիշխանությունը ամրապնդել Նիրկերտի և Խլաթի ամիրայության վրա:

Նիրկերտի, նրա կառուցվածքների բազմաթիվների, շուկաների վերաբերյալ վերին աստիճանի կարևոր տեղեկություններ է հագորդում Նասիր Խոսրովը:

Նասիր Խոսրովը նշում է, որ Խլաթից 28 փարսախ անցնելով, «մենք հասանք (Մայաֆարկին) 1046 թ. նոյեմբերի 23-ին ուրբաթ օրը: Այդ ժամանակ ծառերի տերևները

¹ 3 ա կ ու ա, 4, էջ 703:

² СМОМПК, VIII. XXXVIII, стр. 94.

³ Ս ա ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 192, 193, 247, 267: Մ ա տ ր և ո ս Ու ռ հ ա յ ց ի, Փամանակագրութիւն, էջ 59, 60, 62, 132, 209:

⁴ Ս ա ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 267—268:

դեռ կանաչ էին: Քաղաքն ուներ մի մեծ սլարիսպ կառուցված սպիտակ քարից, յուրաքանչյուր քարը մոտ 500 ման և յուրաքանչյուր հիսուն դաղի վրա մի աշտարակ էր կառուցված նույն սպիտակ քարից, իսկ պատերի ծայրին ամբողջ ատամներ են դրված, որ կարծես վարպետը հենց այսօր է իր գործը վերջացրել: Այս քաղաքը արևմուտյան կողմից մի դարբաս ունի մեծ քարե կամարով, իսկ դուռը պատրաստված է երկաթից առանց փայտի: Քաղաքն ունի մայր մզկիթ, որը կիև ուղեհը նկարագրել, կարող է շատ երկարել, բավական է ասել, որ միայն նրա լվացատունը ունի 40 առանձին սենյակ և ջրի երկու մեծ առու անցնում են բոլոր սենյակների միջով, մեկը բաց է գործածության համար, իսկ մյուսը ծածկված է դետնի տակ, որը կեղտերն է տանում և մաքրում հորերը:

Շահրիստանից (բերդաքաղաքից) դուրս կան իջևաններ, շուկաներ և բաղնիքներ ու մի այլ մայր մզկիթ, որտեղ նույնպես ուրբաթ օրերը աղոթք են անում:

Հյուսիսային կողմից կա մի այլ արվարձան, որը կոչվում է Մուհապսա, ու նույնպես քաղաք է շուկաներով, մայր մզկիթով և բարեկարգ բաղնիքներով: (Քաղաքի) էմիրը Մայաֆարկինից շորս փաբսախ հետև մի քաղաք է կառուցել, որը կոչվում է Նասիրիկ»⁵:

Նիրկերտում պահպանվել են հին և միջնադարյան պարիսպների մնացորդները (տխտ. VIII ա):

Այդպիսիները թույլ են տալիս պնդելու, որ Նիրկերտում առավել զարգացած են եղել մետաղագործական արհեստները՝ ալդ նահանգում դանվող երկաթի, պղնձի և կապարի հանքերից ստացվող հումքի հիման վրա, շինարարական արհեստները, կավագործությունը, այգեգործությունն ու դինեգործությունը, մեղվաբուծությունը:

Հայնի, Անհիլ, Առդնի: Նիրկերտից դե-

⁵ Насыр-и Хусрау, Сафарнамэ. стр. 40—41.

պի հյուսիս-արևմուտք՝ Մելիտինե տանող ճանապարհից քիչ հյուսիս գտնվում էր Հանի կամ Հանի բերդաքաղաքը: Յակուտի աշխարհագրական բառարանում Հանի անվան համար ասվում է. «Ծանոթ մի քաղաքի անուն է Դիարբեքիրում, որտեղ երկաթի հանք կա և արտահանվում է դեպի ուրիշ երկրներ»¹: Տավրոսյան լեռներում գտնվող այս փոքրիկ քաղաքը առևտրական ճանապարհից դուրս էր և կթի քաղաք էր դարձել, ս.պ. շնորհիվ իր երկաթի հանքերի:

Նիբիեբրաից Մելիտինե տանող ճանապարհի վրա, Հանիից քիչ դեպի հարավ-արևմուտք գտնվում էր Անհիլ (հին Անգլ) քաղաքը, իսկ սրանից ոչ հեռու նույն ճանապարհի վրա քիչ դեպի հարավ-արևմուտք Արզնի քաղաքը կար: Սրանք երկուսն էլ փոքրիկ քաղաքներ էին և հետագայում էլ չզարգացան: Արզնին պղնձահանքի է ունեցել: Բերևա այդ հանքերն է հիշատակում Յակուտը Հարնակ անվան տակ²:

Հայաստանի տեղիտորիայում 9—10-րդ դարերում առաջացել էին նաև Հեր և Սալմաստ քաղաքները, որոնք դարձել էին փոքրիկ ամիրայությունների կենտրոններ: Սըրանք, ինչպես տեսանք վերևում, սկզբում կնթակա էին Բագրատունիներին, բայց հետո ավելի կապվեցին Ատրպատականի, քան Հայաստանի հետ, բայց բնակչության զգալի մասը մնում էին հայերը:

Հերը (կոչվել է նաև Խոյ) Հայաստանի և Ատրպատականի սահմանադիր վրա զբաղվող քաղաք էր, որը 9-րդ դարի վերջերին և 10-րդ դարի առաջին քառորդում կնթակա էր Բագրատունի թագավորներին. Կոնստանդին Միրանաժինը Բագրատունի առաջին թագավորներին անվանելով իշխանաց իշխան ասում է, թե իշխանաց իշխանը նստում էր Մեծ Հայքում՝ Կարսում և բացի Բերկրի, Խլաթ և Արճեշ քաղաքներից տիրում էր «նաև» Տիվինին (Դվինին), Խերտին (Հեր) և Սալմաստին... քանի որ վերոհիշյալ իշ-

խան Ասոտին (Աշոտը) տիրում էր Արևելքի բոլոր հողերին»³: (Խոսքը Հայաստանի Արևելքի մասին է—Բ. Ա.):

Թովմա Արծրունին ու Շապուհ Բագրատունին (կեղծ Շապուհ), խոսելով 9-րդ դարի վերջերի և 10-րդ դ. սկզբների անցքերի մասին, Հերը անվանում են քաղաք⁴: Դա մի փոքրիկ բերդաքաղաք էր և ուներ ամուր պարիսպներ⁵: Ուռհայցեու մի վկայությունից երևում է, որ 10-րդ դարի վերջերին Հերը ինքնուրույն ամիրայության կենտրոն էր, ուներ ամուր պարիսպներ և երկաթե դուռ, իսկ զնդախաղի հրապարակը՝ «մայտանն» գտնվում էր «արտաքոյ քաղաքին Հերայ»⁶:

Հեր քաղաքն ուներ պարտեղներ և ծառաստաններ, 1020 թ. սկզբներին Վասիլ Բ կայսրը շարժվելով Հերի վրա «հրամայեց զօրացն կոտորել զծառաստանիս քաղաքին: Իսկ սր քաղաքին իշխանն էր, աղաչէր հարկօք պաշակել զթագավորն և կալ նմա ի հնազանդութիւն»⁵: Բայց դա մի էպիզոդ էր: Քաղաքը փաստորեն Ատրպատականի հետ սերտորեն կապված մի ամիրայության կենտրոն էր և արդեն դուրս էր գտնվում հայկական իշխանությունների սահմաններից:

Հետագայում ևս Հերը գտնվում էր Աաըրպատականի կազմում, ուստի Յակուտը խոսելով Խոյի (Հեր) մասին ասում է, թե դա քաղաք է Ադրբեջանում, խիստ բարեբեր և պողառատ: Արտադրում է «խավիա (Խոյի) կոչվող կերպասները»⁶: Այս վկայությունից երևում է, որ Խոյում (Հերում) արտադրվող գործվածքները հայտնի էին:

¹ Константин Багрянородный. Об управленни государством. «Известия» ГАИМК, вып. 91, М.-Л., 1934, стр. 25.

² Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 365, Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, էջ 67, 69, 71.

³ Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, էջ 68.

⁴ Մասթեոս Ուռհայցի, Ժամանակագրութիւն, էջ 31—33.

⁵ Արիստակես Լաստիվերոցի, Պատմութիւն, էջ 18.

⁶ Յակուտ, 2, 502.

¹ Յակուտ, 2, էջ 188.
² Նույն տեղում, էջ 246.

Սալմաստը նույնպես քաղաք է դառնում 9—10-րդ դարերում: Հերի նման սա էլ բերդաքաղաք էր: 9-րդ դարում դառնվում է Վասպուրականի Դերենիկ իշխանի տիրապետության ներքո¹: Իր իրավասությունը Սալմաստի վրա Դերենիկը պատճառաբանում էր նրանով, թե «Հարքն իմ դրին հիմքն պարսպիցն զնայո»²: Նույն հեղինակը Սալմաստն անվանում է քաղաք³: Թովմա Արծրունու շարունակողը նույնպես Սալմաստն անվանում է քաղաք⁴: Առաջին Բագրատունիների ժամանակ Սալմաստը ենթակա էր նրանց իշխանություն, ինչպես Հերը և մյուս քաղաքները⁵:

Հուդուդ ալ-ալամ աշխարհագրական երկրում Սալմաստը բնութագրվում է իբրև մի փոքրիկ շեն ու կանաչավարդ քաղաք, որտեղ արտադրում են ընտիր շալվարբանդներ (զոտիներ)⁶:

Իբն ալ-Աթիրը պատմում է մի դեպք, որից երևում է, որ 10-րդ դարի կեսերին էլ Սալմաստը գտնվում էր Հայաստանի կազմում: Նրա ասելով Ատրպատականի՝ ծագումով քուրդ Դայում ամիրան ապստամբած լինելով խալիֆաթի դեմ հիշբեթի 341 թ. (952—953) փախչում է Հայաստան և հաստատվում Սալմաստում⁷: Հավանաբար նույն տոհմի ձեռքին էլ մնաց Սալմաստը, քանի որ ալ-Մուկադդասին (985 թ.) ասում է, թե Սալմաստին տիրում են քրդերը⁸: Ինչպես

¹ Շ ա պ ու Ն Բ ա գ ր ա տ ու ն ի, Պատմութիւն, էջ 47:

² Նույն տեղում, էջ 64:

³ Նույն տեղում, էջ 69:

⁴ Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն էջ 460:

⁵ Константин Багрянородный, Ист. соч. стр. 25.

⁶ Հ. Փ ա փ ա զ յ ա ն, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարարելությունների մասին (10-րդ դար), «Տեղեկագիր», № 5, 1953, էջ 73:

⁷ Բ. Խ ա յ ա թ յ ա ն ց, Արարացի մատենագրեր, էջ 146:

⁸ СМОНПН, вып. XXXVIII, стр. 10.

Հերը, Սալմաստն էլ այդ ժամանակներից սկսած և հետագայում գիտվում էր իբրև Ատրպատականի կազմի մեջ գտնվող քաղաք:

Ալ-Մուկադդասին նկարագրում է Սալմաստը, իբրև Ադրբեջանի քաղաքներից մեկը ասելով, թե գեղեցիկ քաղաք է, ունի լավ շուկա:

Յակուտը Սալմաստի մասին գրում է. «Նշանավոր քաղաք Ադրբեջանում. նրա և Հայաստանի միջև երկու օրվա ճանապարհ կա, իսկ նրա և Թավրիզի միջև՝ երեք օրվա: Այժմ այդ քաղաքը մեծ մասամբ ավերված փիճակի մեջ է գտնվում»¹:

6. ՔԱՂԱՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Արարական խալիֆաթի թուլացման և բայբայման ժամանակաշրջանում Հայաստանի արևմտյան մարզերը շաղատագրվեցին, այլ դարձան բյուզանդական ազբեսիաֆի զոհ:

10-րդ դարի 40-ական թվականներին բյուզանդական զորքերը գրավեցին Կարին քաղաքը, որով ամրացրին իրենց իշխանությունը վերոհիշյալ մարզերում:

Պետք է նշել, սակայն, որ ֆեոդալական հասարակության զարգացման ընթացքը այդ մարզերում դնում էր իր հոմնով: Նույն պատճառները, որոնք ընկած էին քաղաքների առաջացման հիմքում, Հյուսիսային և Հարավային Հայաստանում՝ գործում էին նաև երկրի արևմտյան մարզերում, ուստի այստեղ էլ առաջ էին եկել մի շարք քաղաքներ, որոնք գտնվում էին խիտ բնակեցված, տնտեսապես կարևոր դավառներում և առևտրական գլխավոր ճանապարհների հյուսիսային նույն ուղեգծի վրա, որի վրա գտնվում էին Դվինը, Անին և Կարսը, ուստի նրանցից մի քանիսը բավականաչափ մեծ քաղաքներ դարձան:

¹ Յ ա կ ու տ, 3, էջ 120:

Կարնո Բաղաթ (Կարին, Ռեոդոսուպոլիս, Աբգրում): Հայաստանը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև բաժանվելուց հետո բյուզանդական մասում Ռեոդոս Բ կայսրի ժամանակ (408—450) հիմնադրվում է Կարնո քաղաքը, որը ի պատիվ կայսրի, կոչվում է Ռեոդոսուպոլիս: Խորենացու վկայությամբ այստեղ ամրոց էր կառուցվել¹:

Անաստաս կայսրի ժամանակ (491—518) այս ամրոցը ավելի է ընդարձակվել², ըստ երևույթին, այս ժամանակ ամրոցը քաղաք և Արևմտյան Հայաստանի կենտրոնն է դառնում: Քաղաքի ամրությունները անառիկ շէին և պարսկա-բյուզանդական ընդհարումների ժամանակ պարսկական զորքերը հեշտությամբ գրավում էին այդ քաղաքը: Հուստինիանոս կայսրի ժամանակ (527—565) Կարնո քաղաքն էլ ավելի է ընդարձակվել և ամրացել, դառնալով Բյուզանդական կայսրության անառիկ հենարանը: Իբրև բերդաքաղաք, Կարինը բազմիցս հիշատակված է Սեբեոսի մոտ, 6—7-րդ դարերի ռազմական անցքերի կապակցությամբ³: Շապուհ Բագրատունին ասում է, թե Հերակլ կայսրը վերականգնեց Կարին քաղաքի պարիսպը, որը քանդել էր պարսկական խորյան զորավարը⁴:

Բելաձորին վկայում է, թե 7-րդ դարի կեսերին Կարնո քաղաքը գրավում են արաբները՝ Հաբիբ իբն-Մասլամա զորավարի զլխավորությամբ և քաղաքում բնակեցնում են Մուսավիայի ռազարկած 1000 արաբներին իբրև կայազոր՝ տալով նրանց հողաբաժիններ⁵:

1 Մ ո վ ա ե ս Խ ո Ր Ե Ն ա ց ի, Պատմութիւն, Տփղիս, 1913, էջ 338—339:

2 Н. А д о н и ц, Армения в эпоху Юстиниана, стр. 143.

3 Ս Ե Բ Ե Ն Ս Ե Վ Ի Ս Կ Ո Վ Ո Ս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 27, 52, 53, 54, 55, 77, 78, 80, 81, 98, 141, 142, 152, 153:

4 Շ ա պ ո ս Վ Ն Բ ա գ ր ա տ ու ն ի, Պատմութիւն, էջ 9:

5 Բ. Խ ա լ ա թ յ ա ն ց, Արարացի մատենագրեր, էջ 38:

8-րդ դարի կեսին բյուզանդացիները Եդուվելու խալիֆաթի ներսում ծագած ալըստամբուլյունից և դահակալական կոնվենրից, գրավեցին Կարինը և քանդեցին նրա պարիսպները, սակայն մի քանի տարի անց արաբները նորից ետ գրավեցին և ամրացրին քաղաքը¹: Արաբների դեմ հայերի 774—775 թթ. ապստամբության ժամանակ Կարինը հիշատակված է իբրև արաբների խոշորագույն հենակետը Հայաստանի արևմուտյան մասում, ուր մեծ կայազոր կար²:

838 թ. բյուզանդական զորքերը նորից պաշարեցին քաղաքը և քար նետող մեքենաներով խարխուլեցին նրա պարիսպը: Դրանից հետո, Մուսախիմ Բիլլահ խալիֆը կարգադրեց ամրացնել քաղաքի պարիսպը և այդ դործի համար 500 հազար դիրհեմ ծախսվեց³: Կարինը մնում է արաբների ձեռքում մինչև 10-րդ դարի 40-ական թվականները, երբ այն գրավեցին բյուզանդական զորքերը⁴ և նորից դարձրին իրենց հենակետ: Ստեփանոս Տարոնացիին Կարինի առումը դնում է 949 թվականին և վերագրում է Չմշկիկ զորավարին՝ Հովհաննես Չմշկիկի պապին: Չմշկիկը, ասում է պատմիչը, հաղթելով արաբներին՝ «պատեաց զխաճղակ քաղաքին և փլույց դարձրաբերձ աշտարակս նորա և էառ դքաղաքն»⁵:

10-րդ դարի վերջին Ատրպատականի էմիր Մամլունը փորձ արեց գրավել Կարինը, բայց հաջողություն չունեցավ⁶:

Կարին քաղաքը 10-րդ դարի կեսերին ավերվելով, ինչպես երևում է, չէր վերաշինվել: Միայն 1018 թ. Վասիլ Բ կայսրը Հայաստանի բնակիչների ձեռքով վերա-

1 Բ. Խ ա լ ա թ յ ա ն ց, Արարացի մատենագրեր, էջ 41: Նաև Ղ և ո ն դ վ ա Ր զ ա Վ Ե տ, Պատմութիւն, էջ 129: Ս տ Ե փ ա ն ո ս Տ ա Ր ո ն ա ց ի, էջ 132, 142:

2 Ղ և ո ն դ վ ա Ր զ ա Վ Ե տ, Պատմութիւն, էջ 139, 142, 148:

3 Բ. Խ ա լ ա թ յ ա ն ց, Արարացի մատենագրեր, էջ 41:

4 Լ և ո, Հայոց պատմութիւն, հատ. Բ, էջ 593:

5 Ս տ. Տ ա Ր ո ն ա ց ի, Պատմութիւն, էջ 179:

6 Նույն տեղում, էջ 270:

կանգնում է քաղաքը և նրա պարիսպները: Լաստիվերոցին պատմում է, թե կայսրը «մարդահարկ արկան է յերկրիս. և ժողովեալ բազմութիւն մարդկան՝ սկիզբն առնէ վերըստին շինելոյ զԹէոդուսովիս»¹: Քաղաքի այս վերաշինութեանը նախորդող ժամանակաշրջանը նկատի ունի 11-րդ դարի բյուզանդական հեղինակ Միքայել Ատտալիատեսը ասելով, թե Թեոդոսուպոլիսը թողնված էր ու լքված²: Քաղաքի վերաշինութեանից հետո Լաստիվերոցին Կարինն անվանում է քաղաք³, ամուր քաղաք⁴, կամ մեծ քաղաք⁵:

Քաղաքն ուներ անառիկ միջնաբերդ (տխտ. VIII ք):

Դժբախտարար աննշան են տեղեկութունները այն կարևոր հարցի վերաբերյալ, թե ի՞նչ արհեստներ էին զարգացած այս քաղաքում: Արարական հեղինակները միաբերան նշում են Կարին քաղաքի (Կալիկալայի) զարգացած գորգագործությունը, ասելով նույնիսկ, թե «Կալիկալայում մի տեսակ գորգ են պատրաստում, որն իր անունով կոչվում է խալի»⁶:

Դատելով մի շարք ալյալներից, կարելի է պնդել, որ Կարին քաղաքում զարգացած է եղել մետաղագործությունը, մասնավորապես զինագործությունն ու ոսկերչությունը, որով քաղաքը հռչակված էր և հետագայում: Մետաղագործության զարգացմանը նպաստում էին պղնձի և ոսկու օգտագործելի հանքերի առկայությունը՝ նրանից ոչ հեռու:

Արծն: Դվինից և Անիից Տրապիզոն անցնող բանակ առևտրական ճանապարհի վրա, Կարինից քիչ հյուսիս-արևմուտք առաջացել էր Արծն մեծ քաղաքը: Վարչական

կենտրոն և ամրոց չլինելով Արծնը 11-րդ դարից առաջ չի հիշատակվում, սակայն դա չի նշանակում, թե այս քաղաքը 11-րդ դարում է առաջանում: Արծն քաղաքի առաջացման ժամանակը պետք է համարել 10-րդ դարը: Արծնը առավել արագ աճեց մահալանդ 10-րդ դարի կեսերից մինչև 11-րդ դարի սկիզբները, երբ Կարին քաղաքը ավերված էր, իսկ բնակչությունը փոխադրվել էր Արծն: 11-րդ դարում Արծնը արդեն մեծ համբավ ուներ:

Արծն քաղաքի մասին տեղեկություններ հաղորդում են հայկական և բյուզանդական պատմիչներն ու ժամանակագիրները: Արիստակես Լաստիվերոցին, որը ինքն էլ Արծնում ապրել է, խոսելով Պետրոս կաթողիկոսի Անիից հեռացվելու մասին ասում է. «Եւ ելեալ հայրապետին գայ ի մեծանիստ և ի շահաստան քաղաքս մեր...»¹: Քիչ հետո ավելի մանրամասն խոսելով Արծնի մասին Լաստիվերոցին գրել է. «Հոյակապ և ականաւոր էր ամենայն աշխարհաց, իբրև քաղաք, որ ի վերայ լերինն կայցէ. և ժով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր... Արդ սա յառաջինսն՝ մինչդեռ բարեացն առատութեամբ պսակեալ էր, ամենայն ինչ ըստ մտի էր սորա. և նման իմն էր նորահարսն կնոջ, որ գեղոյն վայելչութեամբ և զարդոցն պայծառութեամբ ցանկալի գոլ ամենեցուն... Եւ իբրև ակն մի պատտական լուսադեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենևին զեղեցիկ, բոլորովին զարդարուն»²: Արիստակես Լաստիվերոցու այս ծաղիկեցրած գովերգության մեջ մենք տեսնում ենք, որ Արծնը մեծ և վաճառաշահ քաղաք է եղել:

Գովելով իր հայրենի քաղաքը, Լաստիվերոցին նրա առումը և ավերումը սելջուկների ձեռքով ներկայացնում է քրիստոնեական իդեոլոգիայի համեմատ՝ իբրև աստ-

¹ Արիստակես Լաստիվերոցի, Պատմութիւն, էջ 8:

² Attaliata, ed. Bonn, 1853, p. 148, Տե՛ս Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դդ., էջ 12:

³ Արիստակես Լաստիվերոցի, Պատմութիւն, էջ 44, 67, 85:

⁴ Նույն տեղում, էջ 83:

⁵ Նույն տեղում, էջ 113:

⁶ Յակոբ, 4, էջ 19:

¹ Արիստակես Լաստիվերոցի, Պատմութիւն, էջ 43:

² Նույն տեղում, էջ 53:

վածային պատիժ նրա բնակչության մեղքերի: Իսկ որո՞նք են այդ մեղքերից զլսավորները. պարզվում է, որ այս վաճառաշահ քաղաքում արծաթասիրությունը ավելի հարդի է եղել, քան աստվածասիրությունը, դարգացած է եղել վաշխն ու սոկոսը, տարածված՝ խաբեությունն ու նենգությունը շուկայում՝ առևտրի ժամանակ, սովորական է եղել կաշառքը, դատավորները դատել են կաշառակերությունը, անգամ եկեղեցական պաշտոններն էլ կաշառքով են ձեռք բերվել, ով խարում էր ընկերոջը, պարծենում էր իր իմաստովյամբ, ով հափշտակում էր ուրիշի ինչքը, ասում էր, թե ես հզոր եմ. աղքատ ու տնանկ մարդկանց տներն ու հողերը, անշարժ գույքը մեծատուններն էին հափշտակում, տարածված էր կանանց «զարդասեր լկտովիւնն» և այլն¹:

Կաստիվերոցի՞ն հիշատակում է նաև բազաքի վաճառափողոցները, նրբափողոցները և ընդարձակ սրահները²:

Մատթեոս Ուռհայեցին Արծնը անվանում է հոշակավոր և բազմամբոխ քաղաք «անթիւ բազմութեամբ լցեալ զարանց և զկանանց և տնհամար շափս ոսկույ և արծաթոյ»³:

Քաղաքի բազմամբոխ և բազմամարդ լիւնելու մասին է խոսում Ուռհայեցու այն վկայությունը, թե սելջուկները քաղաքը վերցնելով կոտորեցին նրա ամբողջ բնակչությունը, թվով տասնհինգ բյուր կամ 150 հազար մարդ, «սրոյ անցուցին զամենայն քաղաքն իբրև զբիրս հնգետասան»⁴: Նույնպիսի շափազանցված թվեր Արծնի բնակչության մասին, ինչպես կտեսնենք, բերում է նաև բյուզանդական ժամանակագիր Կեդրենոսը: Եթե Անիի մասին ասվում է, թե այս քաղաքը հազար ու մի եկեղեցի ուներ, ապա Արծնի մասին էլ ասվում է, թե սել-

ջուկների առման ժամանակ, ութ հարյուր եկեղեցի պատարագ էին անում¹:

Ուռհայեցին ևս կաստիվերոցու նման ասում է, թե Արծն քաղաքի հարստությունները՝ ոսկին, արծաթը, նաև դիպակները անթիվ, անհամար էին. «Այլ զոսկույ և զարծաթոյ և զդիպակաց աւելորդ է ասել, վասն զի ոչ արկանի ընդ գրով»²:

Հայկական աղբյուրների վկայությունները հաստատում են բյուզանդական հեղինակները, որոնք խոսում են այդ խոշոր քաղաքի մասին 1048 թ. սելջուկների կողմից վերցվելու և ավերվելու կապակցությամբ: Խոսելով Թեոդոսուպոլսի և Արծնի մասին, Միքայել Ատտալիատեսը գրում է, թե բյուզանդական կայսրը «հասավ Թեոդոսուպոլիս, որը լքված էր և դարձել էր անբնակ, այն պատճառով, որ նրա մոտ էր գտնվում շատ հարմար դիրք ունեցող Արծն քաղաքը (πολιτεία), որտեղ տեղափոխել էին իրենց բնակությունը նրա բնակիչները: Եվ նա (Արծնը) դարձավ մեծ գյուղաքաղաք (χωρὸς πολίς), լի մեծ քանակությամբ բազմապիսի ապրանքներով, որ բերում էր Պարսկաստանը, Հնդկաստանը և մնացած Ասիան: Ահա այդ քաղաքը, խոսքս Թեոդոսուպոլսի մասին է, մի քանի տարի առաջ վերականգնելված և ամրացված էր խրամով ու պարիսպներով, թուրքերի անվստահելի հարկավանության պատճառով, որոնց հարձակումից Արծն քաղաքը (πολιτεία) մեծ կոտորածի զոհ դարձավ և գրավվեց»³:

Գեորգիոս Կեդրենոսը, իր ժամանակագրության մեջ նույնպես խոսում է Արծնի մասին, նշելով նրա բազմամարդ և վաճառաշահ քաղաք լինելը և ֆևարագրելով նրա կործանումը սելջուկների ձեռքով:

«Արբամիոսը (Իբրահիմ) շահնդիպելով հոռոմների զորքին, գալիս է, այսպես կոչված,

¹ Արիստակես Կաստիվերոցի, Պատմություն, էջ 53—54:

² Նույն տեղում, էջ 57:

³ Մատթեոս Ուռհայեցի, Պատմություն, էջ 102:

⁴ Նույն տեղում, էջ 103:

³ Մատթեոս Ուռհայեցի, Պատմություն, էջ 103:

² Նույն տեղում, էջ 103:

³ Attaliata, ed Bonn, p. 148.

Արծեն (τ, Ἄρτζε): Արծեն մարդաշատ գյուղաքաղաք է (*χωρὸπολις*) և բազմահարուստ: Քանի որ այստեղ բնակվում էին տեղացի վաճառականներ, ինչպես նաև ասորիների, հայերի և այլ ժողովուրդների [առևտրականների] ոչ փոքր բազմություն¹, նրանք իրենց հույսը դնելով իրենց բազմություն վրա, չհամաձայնվեցին ապրել պարսպներից ներս այն ժամանակ, երբ Թեոդոսուպոլիսը հարևան էր նրանց, որը մեծագույն քաղաք էր (*μεγίστη πόλις*) և ուներ չգոր ու անառիկ պարիսպ, և շնայած, որ Կեկավմենոսը նամականքով և՛ սպառնաց և՛ խնդրեց (այդ անհ): Նրբ թուրքերը (*Ἰσὺρζων*) հասան և ձեռնարկեցին գործք (քաղաքի պաշարումը), Արծեի մեջ գանձվողները փակելով ճանապարհները և բարձրանալով տների տանիքները, քարերով, փայտերով և աղեղներով դիմադրում էին հարձակվողներին, և նրանք կովեցին ամբողջ վեց օր: Նրբ այդ լուրը հասավ ստրատեգներին (գորավարներին), Կեկավմենոսը կողմնակից էր և խնդրում էր դուրս գալ և բախվել թուրքերի հետ, որոնք իրենց ուշադրությունը դարձրել էին պաշարման վրա, և շնասել իդուր ժամանակ կորցնել, սպասելով կիպարիտի անհուսալի օգնությունը և շթողնել, որ հարմար առիթը անցնի, որին հեշտ չի լինի կրկին հանդիպել: Դրան հակառակվում էր Ահարոնը ասելով՝ ոչինչ պետք չէ ձեռնարկել թագավորական ցանկունքյանը հակառակ, և նա մնում էր հանգիստ: Իբրահիմին հայտնի չէր իրերի ընթացքը և շարժանալով շարունակել քաղաքի պաշարումը և անտեսելով հարստու-

թյունն ու ավարը, հրամայում է հրդեհել տները: Թուրքերն անմիջապես վառելով շահերը և դուրավառ նյութ, նետում են տների վրա: Նրբ կրակը բռնկվեց ամենուրեք և բարձրացավ հսկայական հրդեհ, ապա արձնեցիք շարժանալով դիմաճալ կրակին և նետերի հարվածներին, դիմեցին փախուստի: Ասվում է, թե սպանվեցին շուրջ 150 հազար մարդ, ոմանք՝ դարձան դաշույնի հարվածներին, ոմանք՝ կրակին: Նրբանք իմանալով, որ պարտվելով պիտի կոտորվեն (մորթուվեն) իրենց կանանց և երեխաներին նետում են կրակի մեջ: Այսպիսով, Արծեի գրավումից հետո, Իբրահիմը գտնում է շատ ոսկի, գնք և այլ պիտանի բաներ ինչ կրակից չէր անպետքացել և ձեռք ձգելով շատ ձիեր ու լծկաններ և իրեն ժողովուրդը դիմելով ինչպես պետք էր, վերադարձավ՝ փնտրելով հուռոմների ուժերը (գորքը)²:

Այս անցքերի մասին խոսում են նաև հայ պատմիչները: «Եւ քաղաքացիքն,— ասում է Մատթեոս Ուռհայեցին,— տեսալ զգորս աշխարհեացն միաբան ի պատերազմ ելեալ, և խմբեցաւ շուրջ զեղերօք քաղաքին սաստիկ և ահաւոր պատերազմ. և եղև զվեց ժամ աւուրն զմիմեանս կովիէին և արեամբ լցաւ անդաստանքն, վասն զի ոչ գոյր տեղի փախստեան և ոչ օգնական, միայն զմահն ունէին յոյս. և ի բազմութենէ անօրինացն ձանձրացան զօրքն քաղաքին և ի փախուստ դարձան. և այլազգիքն սրով յարձակեցան ի վերայ քաղաքին և սաստիկ կոտորածով առ հասարակ ի ներքոյ սրոյ անցուցին դամենայն քաղաքն իբրև զբիւրս հնգետասան»³, կատարվեցային, որ այս անցքերին ակաճատեսն է եղել³, պատմում է, թե արևը ծագե-

¹ Georgius Cedrenus, Historiarum compendium, tom II, Bonnæ, 1839 p. 577—578.

² Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 102—103:

³ Կատարվեցային ասում է, թե նկարագրում է քաղաքի կործանումն ու ավերումը Վեր աշօք մերովր տեսաք և բնդ փորձ շարեացն անցար զայն միայն զբեցար...» (Լաստիվերացի, էջ 57):

լուն պես սելջուկները հարձակվեցին քաղաքի վրա, ապա հաղթահարելով նրա պաշտպանների համառ դիմադրությունը մասնաճակատներ և սուր դնելով կոտորեցին ամենքին: Սելջուկները քաղաքը մատնեցին սրի ու հրի, իսկ բարձրացած քամին նպաստեց քաղաքի հրդեհի զմայնը: «Նաև օդոյ,— ասում է կաստիվերացին,— ձեռնտուութիւն եղև կործանական աւուրն. զի հողմ ուժդնակի շնչեցեալ՝ բորբոք արկանէր հրատին, մինչև ծուխն ծառայեալ յերկինս հասանէր. և ցնցուղք լուսոյ հրատին՝ յաղթէր ճառագայթից արեգականն: Անդանօր էր տեսանել տեսիլ ողորմագին և վարհուրակաճ յոյժ, զի ամենայն քաղաքն լի էր զիսկամբք անկեղծն. վաճառափողոսք և նրբափողոսք և ընդարձակ սրահք: Իսկ զայրեցելոցն ո՛վ կարիցէ բերել զհամար. քանզի որք ի սրոյ շողալոյ փախստական եղեալ՝ ի տունս ուրեք ի թագստի եղեն, ամենեքեան նորա հրայրեացք եղեն»¹:

Քաղաքը հիմնահատակ ավերվեց և հրդեհի զվեց, սրից և հրից զերծ մնացած բնակչությունը, ինչպես կաստիվերացին է պատմում՝ գերի տարվեց²:

Հայկական և բյուզանդական աղբյուրները խոսելով այս մեծ քաղաքի մասին նշում են, որ նա առևտրի խոշոր կենտրոն էր, իսկ արհեստագործության մասին լռում են: Բայց դա սովորական է այդ աղբյուրների համար: Առանց պեղումների և վիմակական արձանագրությունների որոշ տեղեկությունների, մենք ոչինչ չէինք իմանա նաև Անիի արհեստների մասին:

Տարօրինակ չպետք է թվա և այն, որ Արծնի մասին աղբյուրները լռել են մինչև նրա ավերվելը 1048 թ. և միայն այդ կապակցությամբ են խոսում:

Սելջուկներն, իհարկե, կողոպտեցին այդ մեծ ու հարուստ քաղաքը: Իրն ալ-Ասիրը

պատմելով Իրրահիմ Սանալի՝ Արծնում և նրա շրջակայքում մղած պատերազմների մասին՝ ավելացնում է, որ սելջուկները այդ շրջանները զրավեցին, կողոպտեցին, առանամեն ինչ և գերի վերցրին ավելի քան 106 հազար մարդ:

Նրանք վերցրել էին այնպիսի մեծ քանակությամբ գրաստներ, ջորիներ, ավար և գույք, որն անկարելի էր հաշվի առնել: «Ասում են, որ ավարը տարել էին 10,000 սալլի վրա և որ ավարի այս թվի մեջ էին 19,000 վահաններ»³:

Այս հակայական ավարի զգալի մասը վերցված էր Արծնում: Մատթեոս Ուռհայեցին էլ վկայելով Արծնում սելջուկների վերցրած ավարի մասին նշում է, որ քաղաքի քորեպիսկոպոս Դավթակի գանձարանը զրավելով՝ տարան քառասուն ուղտերի վրա բարձած⁴:

Սելջուկների այս ավերումից հետո Արծնը այլևս երբեք չվերականգնվեց: Այսպիսով, Արծն մեծ քաղաքը մոտ մեկ և կես դար տևող կարճատև կյանք ունեցավ:

Մանանադի գավառում, որը Արևմտյան Հայաստանի մասն էր կազմում, կային մի քանի բնակավայրեր, որոնց անունները կապված է թոնդրական շարժման հետ: Դրանցից հիշենք ամենից առաջ Շիրի բերդաքաղաքը⁵, Ջերմ քաղաքագյուղը⁶, Բազմողբյուր ավանը⁷, Կոթեր ավանը⁸:

Կարին քաղաքի մոտերքում էր գտնվում Հավճիչ բերդը, որը միաժամանակ կոչված է քաղաք⁹, բայց թվում է, թե այստեղ քա-

1 Из Тарих ал-Камиль Ибн ал-Асиря, перев. П. Жузе. Баку, 1940, стр. 116.

2 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 103:

3 Արիստակես Լաստիվերացի, Պատմություն, էջ 101:

4 Նույն տեղում, էջ 105:

5 Նույն տեղում, էջ 103:

6 Նույն տեղում, էջ 105:

7 Նույն տեղում, էջ 4, 82—83:

¹ Արիստակես Լաստիվերացի, Պատմություն, էջ 56—57:

² Նույն տեղում, էջ 57:

զաք բառը դործածված է հին իմաստով, որ նշանակում էր պարսպապատ բնակավայր:

Վրաց Բագրատունիների պահանխատ Արտանուջի, երբեմն էլ Կարնո քաղաքի և Արծնի հետ սերտորեն կապված էին նաև Ուխտյաց քաղաքը (Օլթի), Գոմաձոր գյուղաքաղաքը Բասենում:

Կարնո քաղաքից և Արծնից Տրապիզոն տանող ճանապարհի վրա գտնվում էր Բարերը: Արիստակես Լաստիվերոսցին Բարերը անվանում է բերդաքաղաք¹: Բարերդի մասին Յակուտը գրում է. «Մեծ ավան և գեղեցիկ քաղաք էրգրումի նահանգում Հասատանի հողի վրա»²:

Երզնկա: 10-րդ դարում քաղաք է առաջանում նաև Եփրատի ափին՝ հին հայկական Երիզա ավանի տեղում: Ստեփանոս Տարոնացին խոսելով 1001 թ. Վասիլ Բ կայսրի արևելք շարժվելու մասին, ասում է, թե նա «Գայ հասան է ի դաւառն Արշամունեաց ի քաղաքն Երիզա»³:

Մատթևոս Ուռհայեցու վկայությամբ 1045 թ. երկրաշարժ է եղել, որի ժամանակ «Քաղաքն, որ Երզնկան (այլ օրինակում Եղնկան) կոչի փլաւ առ հասարակ»⁴:

Երևի այս երկրաշարժի ժամանակ քաղաքը ողողվել է ջրով, որի առթիվ Միխայել Ասորին ասում է. «Յայսմ ժամանակի ընկըմեցաւ Եղնկայ քաղաքն Հայոց ջրով և մնաց միայն տուն մի...»⁵:

Երզնկան ավելի աճում և զարգանում է հետագայում: Լաստիվերոսցին պատմում է Եկեղեցաց գավառի կենտրոն հանդիսացող քաղաքի, նրա առման, ավերման մասին՝ սելջուկների ձեռքով: Դա, անշուշտ, Երզնկան էր: Սելջուկները դիշերով հարձակվելով քա-

ղաքի վրա, կոտորում են բնակիչներին. առավոտյան դիտողի առջև սարսափելի տեսարան էր ներկայանում «լհրապարակս լի դիակամբք տեսանել, և զտունս և զընդարձակ սրահս և զնրբափողոցս և զցանդս այգեաց. և զրեթէ ամենայն սահմանք քաղաքին ներկեալ էր արեամբ կոտորելոցն... Իսկ սնօրինացն լցեալք և յագեցեալք աւարան, իւր հարեալ քաղաքին, առեալ զգերի և զկապուտ գաւառին դարձան անդրէն»¹:

Կամախ: Երզնկայից հարավ արևմուտք՝ Եփրատի ձախ ափին, Անի ամրոցը կենտրոն ունենալով՝ առաջանում է Կամախ քաղաքը: Կամախը Բելաձորին հիշատակում է իբրև ամրոց²:

Հետագայում Կամախը քաղաք է դառնում: 1155 թ. Կամախի վրա հրոսակային հարձակում գործելով այն կողոպտում է Սերաստիայի ամիրան³:

Յակուտը իր աշխարհագրական բառարանում Կամախի մասին ասում է. «Քաղաք Ռումի երկրում... Նրա և Երզնկայի միջև մեկ օրվա ճանապարհ է»⁴:

Ինչպես երևում է աղբյուրների վկայություններից, Կամախը ոչ մեծ բերդաքաղաք էր Արևմտյան Հայաստանում՝ Եփրատի ափին:

7. ՔՍՂԱՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ֆեոդալական քաղաքի առաջացման բավականաչափ բուռն պրոցեսը բնորոշ էր ամբողջ Մերձավոր Արևելքին և մեծ թվով քաղաքներ առաջացան այս աշխարհամասի բոլոր երկրներում:

Հայաստանի քաղաքները այս կամ այն չափով կապված էին Մերձավոր Արևելքի

1 Արիստակես Լաստիվերոսցի, Պատմութիւն, էջ 65:

2 Յակուտ, 1, էջ 437:

3 Ստեփանոս Տարոնացի, Պատմութիւն, էջ 276:

4 Մատթևոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 97:

5 Միխայել Ասորի, Փամանակագրութիւն, Իրուսաղէմ, 1871, էջ 394:

1 Արիստակես Լաստիվերոսցի, Պատմութիւն, էջ 84—85:

2 Բ. Խալաթյանց, Արաբացի մատենագրեր, էջ 76:

3 Հայոց նոր վկաները, էջ 15:

4 Յակուտ, 4, էջ 304:

շատ երկրների, մանավանդ, հարևան երկրների քաղաքների հետ, ուստի քաղաքների և քաղաքային կյանքի դարգացման ընդհանուր միջավայրը իր հիմնական գծերով պատկերացնելու համար անհրաժեշտ է մի քանի խոսք ասել հարևան երկրների մասին:

Մի շարք աչքի ընկնող քաղաքներ առաջացել էին Աղվանքում կամ, ինչպես անվանում էին արաբները՝ Առանում: Առանի ամենանշանավոր քաղաքը 9—10-րդ դարերում՝ Պարտավն էր, որի մասին մեծ գովեստներով են խոսում մի շարք արաբ հեղինակներ: Ալ-Իսթահրին խոսելով Պարտավի մասին ասում է. «Սա մեծ քաղաք է, մի փարսախից ավելի երկարություն և լայնություն ունի, առողջարար է, ծաղիկած և շատ առատ՝ ցանքերով և մրգերով: Իրաքում և Խորասանում Ռեյից և Խսպահանից բացի չկա այլ ավելի նշանակալից, ավելի ծաղկուն և տեղանքով ու հողերով ավելի գեղեցիկ քաղաք, քան Պարտավը»: Ապա գովելով Պարտավի պիստակը, շագանակը և հոնը, ալ-Իսթահրին շարունակում է՝ «Պարտավից մեծ քանակությամբ մետաքս են արտահանում: Շերամորդերին կերակրում են թթենիներով, որոնք ոչ ոքի չեն պատկանում: Մեծ քանակությամբ մետաքս ուղարկում են Պարսկաստան և Խուզիստան»¹: Ալ-Իսթահրին խոսում է նաև Պարտավի կիրակնօրյա շուկայի մասին, ասելով. «Պարտավի այն դռան մոտ, որը կոչվում է Քրդերի դուռ, ալ-Կյուրկի անունով շուկան է, մեծությամբ մի քառակուսի փարսախ. այնտեղ ժողովորդը հավաքվում է ամեն կիրակի և դալիս են այստեղ մարդիկ բոլոր երկրներից, նույնիսկ Իրաքից: Այս շուկան մեծ է Կյուրկի շուկայից»²:

Նույն տեղեկությունները կրկնում են նաև մյուս հեղինակները: Ալ-Մուկադդասին գովում է Պարտավի ծածկի տակ գտնվող շուկաները, տների գեղեցկությունը³, իրն-Հաու-

ջալը Պարտավն անվանում է Ումմուր-Ռան՝ Առանի քաղաքամայր, որի մեջ կան մի քանի շուկա, կարավանատներ և բաղնիքներ⁴:

10-րդ դարում Գանձակում հաստատվեցին Շեղդադյանները. շուտով մայրաքաղաքը Պարտավից Գանձակ փոխադրվեց և Պաշտավը կորցրեց իր նշանակությունը: Յակուտի ասելով 13-րդ դարում Պարտավի բնակչությունը այնքան էր նվազել, որ հավասարվել էր մի գյուղի բնակչության⁵:

Առանի մյուս խոշոր քաղաքը՝ Գանձակը, հիմնվել է 9-րդ դարի կեսերին, իբրև արաբների ռազմական հենակետ⁶: 11-րդ դարում Գանձակը գերազանցեց Պարտավին, դառնալով խոշոր կենտրոն և Ագրբեջանի մայրաքաղաքը, ինչպես նա կոչված է Յակուտի մոտ⁷:

Առանի նշանակալից քաղաքներն էին նաև Բայլահանը (Փայտակարան, հետագայում Օրան-Կալա, որի պեղումներն այժմ կատարվում են), վարդանակերտը Բայլահանից 7 փարսախ հեռավորության վրա՝ Արաքսի աջ ափին, Շամքորը, Շամախին, Շիրվանը, Դերբենդը, Կապադակը, Բաքուն, որտեղ նավթի հանքեր կային, որոնցից ամեն մեկը օրական 1000 դիրհեմի եկամուտ էր տալիս⁸:

Շիրվանի նավթի աղբյուրները և աղահանքերը հիշատակում են և մյուս արաբ հեղինակները⁹:

Առևտրական ճանապարհներով Հայաստանի քաղաքները կապված էին Պարտավի, Գանձակի, Դերբենդի հետ, և սրանց վրայով առևտրական կարավանները անցնում էին հյուսիս՝ դեպի Բուլղար և Կիևյան Ռուսիա:

1 СМОМПК, вып. XXIX, стр. 86—87.

2 Յակուտ, 1, 558.

3 Մուկասիս Կադանկատվացի, Պատմութիւն, էջ 378:

4 Յակուտ, 2, էջ 132:

5 Յակուտ, 1, 177. СМОМПК, вып. XXXVIII, стр. 31.

6 Մորթման, Հատուածք Պատմութեան Հայաստանի, Կ. Պոլիս, 1874, էջ 38:

1 СМОМПК, вып. XXIX, стр. 7—9.

2 Նույն տեղում, стр. 9.

3 Նույն տեղում, էջ 7—8:

Բազմաթիվ քաղաքներ առաջացել էին Վրաստանում, որոնց թվում աչքի էին ընկնում Տփղիսը, Մցխեթը, Արտանուջը, Արդահանը, Դմանխին, Կոտատիսին, Սուխումին, Սև ծովի ափի մյուս նավահանգիստները, որոնց կողքին կային և այլ մանր քաղաքներ:

Դեռևս 9-րդ դարում Տփղիսում հաստատվել էր արաբական ամիրայություն և միայն Դավիթ Դ-ը 1121 թ. վերջ դրեց այդ ամիրայությանը և Տփղիսը դարձրեց վրացական միացյալ պետության մայրաքաղաք:

Տփղիսի մասին ալ-Իսթահրին ասում է, թե նա «իսրր է Բաբ ուլ-Աբվաբից (Դերբենդից)»¹։ Նրա շուրջը կա կավակերտ երկու պարիսպ երեք դարասով: Քաղաքը շատ ծաղկուն է և հարուստ... Նրա մեջ կան բազմաթիվ... և ջուրը նրանց մեջ տաք է ստանց կրակի»²:

Իբն-Հաուքալը ևս խոսում է Թիֆլիսի հարստության սուստության և մթերքների դների էժանության մասին³:

Կարևոր կենտրոն էր Արտանուջը, որը 9—10-րդ դդ. վրաց Բագրատունիների նշատավայրն էր: Սրա վրայով ճանապարհը տանում էր դեպի Սև ծովի նավահանգիստները: Իսկ այս վերջիններիս դերը առևտրի մեջ մեծ էր:

Հայաստանի քաղաքների կապը Իրանի, Միջին Արևելքի և Հնդկաստանի հետ տեղի էր ունենում Ատրպատականի քաղաքների վրայով կամ նրանց միջնորդությամբ:

Ատրպատականի կենտրոնը Արդաբիլն էր, որից բացի, իբրև խոշոր քաղաքներ ալ-Իսթահրին հիշատակում է Մարաղան և Ուրմիան: Վերջինիս մասին ասվում է, թե «առողջարար քաղաք է. առատ մթերքներով և գնեքը նրա մեջ էժան են»³:

Խոսելով Մարաղայի մասին, Յակուտը ասում է, թե Աղբրեջանի ամենահռչակավոր և մեծ քաղաքն է, ունի արվարձաններ, գեղեցիկ հուշարձաններ և շենքեր, դպրոցներ, մենաստաններ⁴:

Ատրպատականի աչքի ընկնող քաղաքներից էին նաև Ռավրիդը, Մարանդը, Դեհարականը՝ Ուրմիա լճի արևելյան ափին, որտեղ հանվում էր բարձրորակ մարմար⁵, Դաբարվանը և ուրիշները:

Արաբական հեղինակները 10-րդ դարի երկրորդ կեսից սկսած Ատրպատականի քաղաքների շարքին են դասում նաև Խոյը (Հեր), Սալմաստը, որոնք իրենց գավառներով արդեն մտնում էին Ատրպատականի կազմի մեջ⁶: Ատրպատականի քաղաքները Առանի քաղաքների համեմատությամբ 9—10-րդ դարերում դեռևս փոքր և ավելի թույլ զարգացած քաղաքներ էին: Թվով էլ այստեղ ավելի քիչ քաղաք կար, քան Հյուսիսային Աղբրեջանում, որ իրավացիորեն նշել է Վ. Բարտոլդը⁴:

Միջագետքի խոշոր քաղաքներն էին Մարդինը, Մոսուլը, Ամիդը, Ուռհան (Եդեսիա): Սրանցից վերջին երկուսում մեծ թվով հայ բնակչություն կար: Միջագետքի քաղաքների վրայով Հայաստանը կապված էր Իրաքի, Սիրիայի և Արաբական թերակղզու քաղաքների հետ:

Բազմաթիվ քաղաքներ կային Եփրատից արևմուտք. Կապադոկիայում, որոնց բնակչության թվում հայերը զգալի տեղ էին զբաղում, իսկ մի քանի քաղաքներում գերակշռում էին: Դեռևս միջին դարերում Եփրատից արևմուտք ընկնող առանձին քա-

¹ СМОНПК, вып. XXIX, стр. 11—15.

² Նույն տեղում, էջ 89:

³ Նույն տեղում, вып. XXIX, стр. 5. См. также сведения Масуди, СМОНПК, вып. XXXVIII, стр. 84.

¹ Յակուտ, 4, էջ 476:

² В. Бартольд. Историко-географический обзор Ирана, СПб. 1903, стр. 149.

³ Ал-Истахри, СМОНПК, вып. XXXI, стр. 5. Ибн ал-Факих, СМОНПК, вып. XXXI, стр. 9.

⁴ В. Бартольд. Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925, стр. 61.

դաքններ դիտվում էին իբրև հայոց քաղաք-
ներ: Դրանցից հատկապես պետք է նշել
Մելիտինեն (Մալաթիա): Հին Կապադով-
կիայի այս նշանավոր քաղաքը միջին դա-
րերում դարձել էր արհեստների և առևտրի
խոշոր կենտրոն: Քաղաքի բնակչության
թվում հայերը գերակշռում էին դեռևս 6-րդ
դարում, որ նշել է Պրոկոպիոս Կեսարա-
ցին: Արարական տիրապետության ժամա-
նակաշրջանում Մելիտինեն կորցրել էր քա-
ղաքի նշանակությունը և ուղղմական հենա-
կետ էր արաբների ձեռքին: 10-րդ դարում
բյուզանդացիք դրավելով համարյա ամայի
քաղաքը, այնտեղ բնակեցրին հայեր և
ասորիներ: Շուտով Մելիտինեն շինացավ և
ընդարձակվելով դարձավ աչքի ընկնող քա-
ղաք: Խոսելով 980-ական թթ. դեպքերի մա-
սին Ուռհայեցի Մելիտինեն անվանում է
«մայրաքաղաք»¹:

Ուռհայեցին պատմում է, թե 1056 թ.
սելջուկները դրավելով Մելիտինեն, կողոպ-
տեցին և հեռացան՝ տանելով իրենց հետ
մեծ թվով ավար և գերիներ, որոնց ազատեց
Տարոնի Թոռնիկ իշխանը: Այս անցքերի կա-
պակցությամբ ժամանակագիրը որոշ ուշա-
դրով տեղեկություններ է հաղորդում քա-
ղաքի մասին: Ուռհայեցին գրում է, թե
թշնամին «դնայր և հասանէր մինչև ի հըռ-
չակաւոր քաղաքն և յանուանին, որ կոչի
Մելիտինի, վասն զի ի բազում ժամանակաց
մատնած էր քաղաքն Պարսից՝ թէ անչափ
է հարստութիւն ոսկւոյ և արծաթոյ՝ ահանց
և մարգարտաց և դիպակաց: Եւ էր քաղաքն
անսպարիսպ»²: Անսպարիսպ քաղաքի բնակ-
չությունը փախուստի է դիմում, թշնամինե-
րը տեսնելով «հիանային (զարմանային)
ընդ բազմամբոխութիւն քաղաքին, զի էին
որպէս դաւաղ ծովու անթիւ բազմութեամբ»,
ասում է Ուռհայեցին³:

Մի քանի քաղաքներ էլ առաջացել էին
Կոբր Հայքում: Փոքր Հայքը երկար ժամա-
նակ մտնում էր Բյուզանդական կայսրու-
թյան տերիտորիաների մեջ, իսկ սելջուկնե-
րի տիրապետությունը հաստատվելուց հե-
տո՝ Իկոնիայի սուլթանությանն անցավ:

Փոքր Հայքի առավել աչքի ընկնող քա-
ղաքն էր Սերաստիա՞ն (Սվաղ): Փոքր Հայ-
քում հայ բնակչությունը միշտ էլ գերակշռ-
ում էր և նրա թիվն ավելի մեծացավ, երբ
Վասպուրականից զգալի թվով բնակչություն
Սենեքերիմ թագավորի հետ գաղթեց այս
քաղաքը և նրա գավառները, որոնք Սենե-
քերիմն ստացել էր 1021 թ. կայսրությանը
զիջելով Վասպուրականը:

Սերաստիան առևտրական գլխավոր ճա-
նապարհի հանգուցակետ էր, որտեղից մի
ճանապարհ տանում էր դեպի Սև ծովի նա-
վահանգիստները և այստեղից Ղրիմ, իսկ
մյուսը՝ դեպի Կեսարիա, այստեղից էլ Կի-
լիկիա կամ Իկոնիա և Միջերկրական ծովի
ափերը:

Սերաստիան արհեստագործության և
առևտրի խոշոր կենտրոն էր: Նա ան-
սպարիսպ խոշոր քաղաք էր դեռևս 11-րդ
դարում, երբ այն դրավեցին սելջուկները:
Նկարագրելով այդ դեպքերը՝ Ուռհայեցին
քաղաքը անվանում է, «բազմամբոխ և նշա-
նաւոր»²: Ուռհայեցին պատմում է, թե քա-
ղաքն անսպարիսպ էր և այնքան մեծ, որ
վեց հարյուր (այլ օրինակում՝ հարյուր)
եկեղեցի կար նրա մեջ³: Սելջուկները
հարձակվելով քաղաքի վրա՝ «անողորմ և
անխնայ կոտորեցին զայնքան բազմութիւն
քաղաքին և անթիւ և անհամար աւարաւ և
զերութեամբ արանց և կանանց, մանկունս
և աղջկունս վարէին ի գերութիւն և այն-
չափ գանձս ոսկւոյ և արծաթոյ, աւանց
և մարգարտաց և դիպակաց յափշտա-

1 Մ ա տ թ հ ո ս Ու ռ հ ա յ Ե ց ի, ժամանակագրու-
թիւն, էջ 39:

2 Ն ու յ ն տեղում, էջ 128:

3 Ն ու յ ն տեղում, էջ 129:

1 Յ ա կ ու տ, 4, էջ 304:

2 Մ ա տ թ հ ո ս Ու ռ հ ա յ Ե ց ի, ժամանակագրու-
թիւն, էջ 133:

3 Ն ու յ ն տեղում, էջ 135:

կեալ հանին ի Սեբաստիոյ, և վասն զի տունն եղև նա Հայոց թագաւորացն»¹: Սելջուկները կողոպտեցին, ավերեցին և հրկիզեցին քաղաքը «և սակաւ ժամ մի եղև Սեբաստիա իրրև զխուզ մի այրեցեալ հրով»²:

Փոքր Հայքի քաղաքներից էր և Նիկոպոլիսը, որի անունով կոչվում էր և գավառը: Նիկոպոլիսի գավառում գտնվում էր Խամ քաղաքը, որտեղ 1223 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում ասված է. «Գրեցաւ... ի գաւառիս Հայոց Նիկոպոլիս... ի քաղաքն Խամ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի...»³:

Երզնկայից հյուսիս դեպի Սեբաստիա տանող ճանապարհի վրա գտնվում է Ծատախ. հին Սաաւլա քաղաքը, որը միջին դարերում շատ փոքր դեր էր խաղում: Երզնկայի մոտերքում էին գտնվում մի քանի խոշոր ավաններ, զրանց թվում Թիլ, Սուլենաշեն և Կոթեր ավանները:

Ունենալով մեծ թվով հայ բնակչութուն, այս քաղաքները միաժամանակ կապված էին Հայաստանի միջնադարյան քաղաքների հետ ու կամուրջ էին հանդիսանում Հայաստանի և բյուզանդական կայսրության երկրների մեջ կատարվող աշխույժ առևտրի համար:

Խոշոր նշանակութուն ունեին Սև ծովի հարավային ափի խոշոր նավահանգիստները՝ Սինոպր, մանապլանդ Տրապիզոնը, որոնց վրայով առևտուր էր կատարվում Արևմտքի, և առավելապես Հյուսիսի, այսինքն Կիևյան Ռուսիայի և նրան հարևան երկրների հետ:

Այսպիսով, Հայաստանը ինչ որ կզզի չէր կազմում, այլ շրջապատված էր զարգացած և իր ժամանակի համար տնտեսապես և կուլտուրապես առաջավոր երկրներով: Հա-

յաստանի քաղաքները տարանցիկ առևտրով կապված էին հարևան երկրների քաղաքների հետ և սրանց վրայով անցնող տարանցիկ առևտրի ճանապարհներով նաև Իրանի, Միջին Ասիայի, Հնդկաստանի, Միջագետքի, Իրաքի, Արաբական թերակղզու, Ստորիքի, Կիլիկիայի, Փոքր Ասիայի, Բյուզանդական կայսրության միջերկրածովյան ավազանի, Կիևյան Ռուսիայի, Բուլղարի և այլ երկրների քաղաքների հետ:

8. ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄԻ ՔԱՆԻ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համառոտ կերպով գծելով յուրաքանչյուր քաղաքի առաջացման և զարգացման ընթացքը, նպատակ ենք ունեցել բացահայտել Հայաստանի ֆեոդալական քաղաքի առաջացման և ձևավորման ընդհանուր պատկերը 9—11-րդ դարերում, գտնել այդ զարգացման օրինաչափությունները և որոշել դրահանգումների դալ:

Առաջին ուշադրով հանդամանքն այն է, որ ֆեոդալական հասարակութան զոչսոցման և նրա զարգացման առաջին շրջանում (վաղ ֆեոդալիզմ) քաղաքների թիվը Հայաստանում շատ ավելի փոքր էր, քան ստրկատիրական հասարակության ժամանակաշրջանում: Ստրկատիրական հասարակության կործանման հետ անկում ապրեցին և անհետացան այդ ժամանակաշրջանի շուրջ երկու տասնյակի հասնող քաղաքները և գյուղաքաղաքները: 5-րդ դարից մինչև 9-րդ դարի առաջին կեսը Հայաստանում առաջացան ու զարգացան ընդամենը երեք քաղաք, երկրի երեք տարբեր կողմերում, առավել արդավանդ ու խիտ բնակչութուն ունեցող տարբեր նահանգներում՝ Դվինը Հյուսիսային Հայաստանում (Արարատյան դաշտում), Կարնո քաղաքը կամ Թեոդոսուպոլիսը Արևմտյան Հայաստանի Բարձր Հայք նահանգում և Նիքիերտը կամ Մուֆարդիքը հարավ-արևմտյան Հայաստանի Աղձնիք նահանգում: Դրանք հիշյալ ժամա-

¹ Մատթեոս Սեբաստացի, Ժամանակագրություն, էջ 134:

² Նույն տեղում, էջ 135:

³ Գարեգին Ա Կաթողիկոս, Յիշատակարանք, էջ 382:

նակամիջոցում միանգամայն ինքնամիտփ կենտրոններ էին և իրար հետ տնտեսական շահագրգռանք թույլ կապեր ունեին, թեև Դվինը և Կարինը գտնվում էին առևտրական միևնույն մեծ ճանապարհի վրա, իսկ Դվինից Նիրկերտ գոյութունն ուներ Արտաշատ—Տիգրանակերտ հին ճանապարհը:

9—10-րդ դարերի արարական հեղինակները՝ Հայաստանում, մանավանդ նրա հարավում հիշատակում են մի շարք քաղաքներ ղեռես 7—8-րդ դարերի անցքերի կապակցությամբ, սակայն ղժվար չէ նկատել, որ դրանցից Մուֆարդինը կամ Մաչաֆարկինը (հնում Տիգրանակերտ), և Նախճավանը Արաքսի ափին պահպանվել էին հնից, բայց դադարել էին արհեստագործության և առևտրի կենտրոն լինելուց, հետևապես բառի բուն իմաստով քաղաք չէին: Արարական հեղինակները տալիս են նաև մի քանի նոր առաջացած քաղաքների անունները՝ Արղն, Բաղեշ, Խլաթ, Մանազկերտ, Արճեշ և այլն, սակայն այստեղ էլ տարակույս չկա, որ հեղինակները նկատի ունեին կամ արարական ռազմական հեռակետերը, որոնք ղեռես քաղաք չէին դարձել, կամ էլ ելնում էին իրենց ժամանակաշրջանում 9—10-րդ դարերում եղած վիճակից, երբ հիշյալ կետերը արդեն քաղաք էին դարձել: Ֆեոդալական հասարակության հիմքում բնկած փակ բնատնտեսությունը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, կարեւոր է սակ, համապարփակ բնույթ ուներ, ապրանքային արտադրությունը աննշան չափերով էր կատարվում և խիստ սահմանափակ ղեր էր խաղում:

Արտադրողական ուժերի պրիմիտիվ աստիճանի վրա գտնվելու և ղանդաղ ղարդացման, ինչպես նաև արտադրության միանգամայն սպառողական բնույթի հետևանքով արհեստային արտադրությունը հիմնականում միացած էր երկրագործության հետ, տնային բնույթ էր կրում և արհեստավորները սպասարկում էին տվյալ տնտեսության կամ տվյալ բնակավայրի

սահմանափակ պահանջմունքը: 5—9-րդ դարերի վերոհիշյալ երեք քաղաքային կենտրոնները (Դվին, Նիրկերտ, Կարին), միաժամանակ վարչական և ռազմական կենտրոններ էին, այն էլ ոչ թե առանձին ֆեոդալական իշխանություն, այլ պարսկական, (սպա արաբական) և բյուզանդական տերությունների համար: Դրանցից փաստորեն միայն Դվինն էր արհեստագործության և առևտրի խոշոր կենտրոն, իսկ մյուս երկուսը ավելի շուտ վարչական, մանավանդ ռազմական կենտրոններ էին:

Երկրի արտադրողական ուժերը ղարերի ընթացքում, թեև ղանդաղ, բայց ղարգանում էին, նկատելիորեն կատարելագործվում էին աշխատանքի գործիքները, փայտե արորի կողքին սկսում են գործադրել երկաթե մեծ խոփ ունեցող գութանը, անցկացվում են նոր ջրանցքներ, ընդարձակվում և բարելավվում է այգիների և տեխնիկական կուլտուրաների մշակությունը, կառուցվում են մեծ թվով ջրաղացներ, ձիթհաններ, աճում է պահանջմունքը արհեստային արտադրանքի նկատմամբ, բաղմանում են արհեստային արտադրանքի տեսակները, կատարելագործվում է արհեստագործության տեխնիկան, արհեստավորները ավելի և ավելի հմտանում են իրենց գործի մեջ, խորանում է աշխատանքի հասարակական բաժանումը, առաջանում են արհեստագործության նորանոր ձյուղեր, որոնք կոչված էին բավարարուելուց, տալու բնակչության և նրա տնտեսության աճող և աստիճանաբար բաղմակողմանի ղարձող պահանջմունքներին: Այժմ ավելի մեծ թվով արհեստավորներ իրենց արհեստը օժանդակ ղրագմունքից ղարձնում են սպրտատի միջոց, միաժամանակ ղարդացած արհեստների բաղմակողմանի արտադրանքի ավելի մեծ թվով սպառողներ ղտնելու համար արհեստավորները ղիմում են ղեպի խոշոր բնակավայրերն, ավաններն ու քաղաքները: Խորանում է աշխատանքի հասարակական բաժանումը արհեստը անջատվում է երկրագործություն-

նից և կենտրոնանում է քաղաքներում: Ահա այս պայմաններում խոշոր գյուղերն ու ագարակները ավաններ են դառնում, իսկ ավանները և ավան ունեցող բերդերը՝ գյուղաքաղաքներ, բերդաքաղաքներ և քաղաքներ:

Այս պրոցեսը Հայաստանում տեղի է ունենում 9-րդ դարում, իսկ ավելի ինտենսիվ կերպով 10-րդ դարում. ձևավորվում է ֆեոդալական քաղաքը: Միջնադարյան Հայաստանի ֆեոդալական քաղաքները, բացառությամբ մի քանիսից, առաջացել են 9—11-րդ դարերում:

Պարզվում է, որ Հայաստանում 9—11-րդ դարերում, բացի մինչ այդ գոյություն ունեցող երեք քաղաքներից, առաջացել և դարգացել են 42 քաղաք, 23 գյուղաքաղաք և շատ ավաններ, որոնցից մոտ 30-ը աղբյուրներում հիշատակված են իբրև ասավել խոշորները:

Այսպիսով, ֆեոդալական քաղաքների թիվը Հայաստանում 2—3 անգամ ավելի էր ստրկատիրական հասարակության ժամանակների քաղաքների թվից:

Արևմտյան նվորսայի, Ռուսաստանի և Առաջավոր Ասիայի միջնադարյան քաղաքների պատմությունը ցույց է տալիս, որ ֆեոդալական քաղաքը առաջացել և դարդացել է ստրբեր ձևերով ու նդանակներով, օրինակ՝ ստրկատիրական հասարակության ճղնաժամի և վաղ ֆեոդալիզմի սկզբնական ժամանակաշրջանում քայքայված քաղաքներից, ֆեոդալական բերդերից կամ գղջակներից, խոշոր սաղմական հենակետներից, գյուղական համայնքի կյանքով սպրոզ խոշոր գյուղերից ու ավաններից, առևտրաարհեստավորական ավաններից, որոնք գտնվում էին առավել կարևոր և խիտ բնակեցված երկրագործական գավառներում, ցամաքային և ջրային ճանապարհների հանդուցակետերում, նավահանգստային վայրերում և այլն:

Կարող է թվալ, թե Հայաստանի միջնադարյան մի շարք քաղաքներ նույնպես առա-

ջացան հին քաղաքներից, վերջիններիս վերակենդանացման շնորհիվ, համենայն դեպս մի քանի քաղաքներ առաջացան նախկինների տեղում: Այդպիսին են եղել, օրինակ, Վանը, Նփրկերաը (նախկինում Տիգրանակերտ), Շիմշատը (նախկինում Արշամաշատ), Նախճավանը, Վաղարշակերտը, Բալուն, Կամախը և մի քանի գյուղաքաղաքներ, սակայն դա ինդրի երևութական կողմն է: Իրականում յուրաքանչյուր քաղաքի պատմության համառոտ տեսությունը շարադրելիս մենք տեսնում ենք, որ հին քաղաքները ամայացել էին և լավագույն դեպքում նրանց տեղում պահպանվել էր նույնանուն (կամ այլ անունով) մի բերդ կամ ավան, իսկ ավելի հաճախ բերդը և ավանը միասին: 5-րդ դարից մինչև 9-րդ դարի սկզբները նախկինում հայտնի այդ քաղաքները (նաև Արտաշատը) այլևս քաղաք չէին և նկատելի դեր չէին խաղում արհեստային արտադրության և առևտրի բնագավառում: Հին քաղաքների տեղում պահպանված ավանների ու բերդերի քաղաք դառնալն, ըստ էության չէր նշանակում, թե հին քաղաքները վերակենդանացան: Այս քաղաքները փաստորեն հրենների տեղում գոյացած նոր քաղաքներ էին, ուստի նրանց առաջացման պատճառներն ու պայմանները նույնն էին, ինչ որ բոլորովին նոր առաջացած քաղաքներին: Միայն թե նպաստավոր էր այն հանգամանքը, որ այստեղ դարերով պահպանվում էին բերդը և ավանը զգալի թվով բնակչությամբ և քաղաքային յրոշ տրադիցիաներով ու արտոնություններով:

Հայաստանի միջնադարյան քաղաքների մեծագույն մասը առաջացել է բերդ ունեցող ավաններից՝ բերդավաններից, բերդերի առջև փոված ավանների աճի ու արհեստագործության ու առևտրի կենտրոն դառնալու շնորհիվ: Ավելի արագ աճում ու քաղաք էին դառնում մանավանդ այն բերդավանները, որոնք գտնվում էին առևտրական ճանապարհների վրա և հանդիսանում էին (կամ ժամանակի ընթացքում դառնում էին) ֆեո-

դաշական մանր ու մեծ իշխանությունների կենտրոններ: Նման ձևով են քաղաք դարձել հին քաղաքների տեղում պահպանված բերդավանները՝ Վանը, Նիրկերտը, Նախճավանը, Աշմուշատը, Կարինը, Վաղարշապետը, Բալուն, Կամախը: Նույն եղանակով առաջացան ավելի մեծ թվով նոր քաղաքներ՝ Անին, Կարսը, Կապանը, Արճեշը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշը, Արշնը, Մուշը, Խարբեղը, Ոստանը, Հաղամակերտը, Աղթամարը և մի շարք այլ փոքր քաղաքներ ու գյուղաքաղաքներ: Հայտնի է, որ թվարկված քաղաքները հանդիսացել են կենտրոններ Շիրակի, Կարսի կամ Վանանդի, Բագրատունյաց թագավորների, Վասպուրականի, Արծրունյաց թագավորների Սյունյաց իշխանների, որոնք նույնպես թագավորի տիպոս ձևով բերեցին, Տարոնի և այլ իշխանների ու Հայաստանի հարավում գոյացած արարական ամիրայությունների:

Քաղաքների առաջացումը ֆեոդալական բերդավաններից ոչ մի չափով չի նշանակում, թե քաղաքներն առաջացել են ֆեոդալների ջանքերով կամ ձեռնկերպությամբ: Ուշագրավ է, որ քաղաք դարձան ֆեոդալական այն բերդերը, որոնց կից կար քիչ թե շատ նշանակալից բնակավայր, մանավանդ ավան և որոնք գտնվում էին զարգացած երկրագործական դավառի կենտրոնում (այդ պատճառով էլ դառնում էին ֆեոդալական իշխանության կենտրոն): Այստեղ առևտրի և արհեստների կենտրոնացման ու զարգացման հնարավորություններ ավելի կային: Բացի այդ, անընդհատ ընդհարումների, ասպատակությունների և պատերազմների պայմաններում բերդերի մոտ կենտրոնացած առևտրա-արհեստավորական բնակչությունը վտանգի դեպքում պաշտպանվում էր, ասպատան գտնելով բերդի պարիսպների ներսում: Քաղաքական քիչ թե շատ զորեղ իշխանությունների առկայությունը կարևոր էր նաև կարավանային ճանապարհների ապահովության համար և այս դեպքում ֆեոդալական իշխանության կենտրոնը դառնում էր

նաև առևտրական կարավանների հաճախման վայր ու հանգրվան, բերդավանում աստիճանաբար կենտրոնանում էր արհեստավորական և առևտրական զգալի բնակչություն, որն անընդհատ աճում էր գյուղական արհեստավորության և ճորտությունից քաղաք փախչող գյուղացիության հաշվին: Այդ բանին խոշոր չափով նպաստում էր քաղաքների հին ժամանակներից պահպանվող ստատուտը՝ «ըստ պայմանի քաղաքականաց» արտոնությունները, դրանց տարածվելը բերդավանների վրա, ինչպես և ավաններում առևտուր անելու իրավունքը, որոնց մասին խոսվեց վերևում: Արհեստավորների, առևտրականների մոտ սև աշխատանք կատարելու, քաղաքում կատարվող շինարարության, ինչպես և քաղաքացիների հողերի պարտեզների վրա մշակություն անելու հույսով քաղաքներում հաստատվում էին նաև ընչազրկվող շինականները: Բացի այդ քաղաքի ունեւոր խավերը սլահում էին ոչ մեծ թվով ստրուկ և կիսաստրուկ աղախիմներ ու ծառաներ: Այս եղանակով բերդավանը աստիճանաբար աճելով դառնում էր արհեստագործության և առևտրի կենտրոն, անջատվում էր գյուղից, առևտրական կապերով կապվում իր գավառի հետ և ձևավորվում իբրև ֆեոդալական քաղաք, հանդիսանալով սովորաբար ֆեոդալական խոշոր տիրույթի կենտրոն: Ֆեոդալի նստոցը՝ նախկին բերդը դառնում էր առաջացած քաղաքի միջնաբերդը, իսկ քաղաքի համար կառուցվում էր նոր պարիսպ: Ժամանակի ընթացքում քաղաքն ընդարձակվում էր նաև պարիսպներից դուրս և հարկ էր լինում կառուցել նաև ավելի ընդարձակ պարիսպ, իսկ նախկին պարիսպների մեջ մնացած քաղաքը դիտվում էր իբրև հին քաղաք, ինչպես Անիում Աշոտի պարիսպների ներսում գտնվող մասը:

Միանգամայն բնորոշ է, որ երբեք քաղաք չդարձան ֆեոդալական այն բերդ-գյուղաները, որոնք հիմնվել էին լեռների ծերպերին, լեռնանցքների մոտ, կտրված արգավանդ ու մարդախիտ գավառից և ունեին զուտ

ուազմական, պաշտպանական նշանակու-
թյուն: Նման բերդերի թիվը միջնադարյան
Հայաստանում բավականաչափ մեծ է եղել:

Երկու-երեք փոքրիկ քաղաք կամ գյուղա-
քաղաք առաջացել էին շնորհիվ տվյալ վայ-
րի բնական հարստությունների օգտագործ-
ման: Դրանց թվին էր պատկանում Արղնին,
որը առաջացել էր Նիրկերտից ոչ հեռու
գանձող երկաթի, պղնձի և կապարի հանքերի
օգտագործման հիման վրա, ուստի արարա-
կան ու հետագա թուրք-թաթարական, պարս-
կական աղբյուրներում հայտնի է Արղնի-
Մազեն (հանքավայր) անունով: Այդպիսին
էր Կողբ գյուղաքաղաքը, որն առաջացել էր
այնտեղի շատ հարուստ ու բարձրակ ազա-
հանքերի մշակման շնորհիվ: Նման գյուղա-
քաղաքների թվին մենք դասում ենք նաև
Առեսա ավանը՝ Վանա լճի ափին և Կոթը՝
Սևանա լճի ափին, որոնք աճել, գյուղաքա-
ղաք էին դարձել շնորհիվ այնտեղի հարուստ
ու խոշոր ձկնարանների օգտագործման: Այս
վայրերում հին ժամանակներից սկսած զրա-
նրվել են արբայական խոշոր ձկնորսարան-
ներ:

Իր առաջացման առանձնահատկություն-
ներով ուրույն տեղ է գրավում Արծն քաղա-
քը: Սա բերդ չի եղել, ոչ էլ բնական հա-
րստություններով է հայտնի դարձել, ան-
գամ հայտնի չի, թե սկզբում այստեղ բնա-
կավայր եղե՞լ է, թե՞ ոչ: Երբ 940-ական
թվականներին Կարնո քաղաքը ավերվում և
չքվում է, ապա այստեղի արհեստավորա-
կան և առևտրական բնակչությունը բնա-
կություն է հաստատում Կարինից ոչ հեռու
առևտրական ճանապարհների մի այնպիսի
հանգուցակետում, որտեղից ճանապարհնե-
րը տանում էին Բաբերդի վրայով Տրասի-
դոն, Կարսի վրայով՝ Անի—Դվին—Նախճա-
վան, Սեբաստիայի վրայով՝ դեպի արևմուտք,
Արտանուշի վրայով դեպի Սև ծովի ափերը և
վրացական այլ քաղաքները: Վաղարշակե-
րտի վրայով՝ դեպի Մանազկերտ—Արճեշ և
հարավային ուղեգծի այլ քաղաքները: Այս-
պիսով՝ Արծնը, կարելի է ասել, հիմնվեց

իրև առևտրա-արհեստավորական բնակ-
չության հավաքատեղի, որը շէր պատկա-
նում Ֆեոդալ սենյորին, այլ անպարիսպ
ազատ քաղաք էր: 50—100 տարվա ընթաց-
քում այստեղ կուտակվեց արհեստավորների
և առևտրականների մի հսկա բազմություն
և 11-րդ դարում նրա բնակչության թիվը
անցավ հարյուր հազարից:

Աղբյուրները թույլ են տալիս պարզելու,
թե այս քաղաքներից որոնք են համեմատա-
բար ավելի վաղ առաջացել, որոնք՝ ավելի
ուշ, որոնք ավելի արագ են աճել, որոնք՝
դանդաղ. քաղաքներից շատերի առաջացման
ժամանակը ավելի որոշակի է, մյուսներինը՝
նվազ որոշակի: Ըստ այդմ ցույց տրված քա-
ղաքներն ու գյուղաքաղաքները կարելի է
բաժանել չորս խմբի.

ա) Քաղաքներ, որոնց առաջացումը ըս-
կերպով է 9-րդ դարում, բայց ձևավորումը
տեղի է ունեցել 10-րդ դարում: Այդպիսի
քաղաքների թիվը հասնում է 20-ի, գյուղա-
քաղաքների թիվը՝ 6-ի:

բ) Քաղաքներ, որոնք որոշակի կերպով
առաջացել և ձևավորվել են 10-րդ դարում:
Նման քաղաքների թիվը հասնում է 10-ի,
գյուղաքաղաքների թիվը՝ 11-ի:

գ) Քաղաքներ, որոնք առաջացել և ձևա-
վորվել են 10—11-րդ դարերում: Դրանց թի-
վը հասնում է 8-ի, գյուղաքաղաքների թիվը՝
5-ի:

դ) Քաղաքներ, որոնք որոշակիորեն ա-
ռաջացել և ձևավորվել են 11-րդ դարում,
ընդամենը՝ չորս քաղաք և մեկ գյուղաքա-
ղաք:

Այսպիսով, 9-րդ դարի հանդիսացել է
գյուղից Բաղաբի անջատման սահմանաբա-
ժանման, իսկ 10-րդ դարը՝ Հայաստանում
ֆեոդալական Բաղաբի առաջացման ամենա-
բուռն ժամանակաշրջանը: Քաղաքների թի-
վը 10—11-րդ դարերում անցնում է 40-ից,
իսկ գյուղաքաղաքների թիվը 20-ից և 30-ի
չափ էլ խոշոր ավաններ կային:

Սկզբնաղբյուրների տվյալների հիման
վրա կազմել ենք քաղաքների առաջացման

Միջնադարյան Հայաստանի քաղաքներն ու գյուղաքաղաքները ըստ առաջացման ժամանակի

Մինչև 9-րդ դարը	9—10-րդ դարերում	10-րդ դարում	10—11-րդ դարերում	11-րդ դարում	12—13-րդ դարերում
Քաղաքներ Գլին Կարնո քաղաք Նիրիկերտ	Քաղաքներ Նախճավան Կասպան Վան Հաղամակերտ Արճիշ Քերկրի Մուշ Նյալի Քաղիշ Արզն Արծկե Հևր Սալմասա Մանազկերտ Վհրի-քաղաք Շահաստան Զարեվանդ Զմշկածագ Մեծկերտ Նողան Գյուղաքաղաքներ Քաղարան Նրազգավորք Գառնի Նրամ Հողս Քարաունջ	Քաղաքներ Անի Կարս Վաղարշակերտ Սիսական (Սիսա ջան) Արծն Նրզնկա Ոստան Աղթամար Աշմուշատ Նարբերք Գյուղաքաղաքներ Մրեն Տեկոր Կողբ Արգինա Նղեղիս Սիսավան Կոթ Թալին Արուճ Առեստ ավան Վաղարշապատ	Քաղաքներ Անհիլ (Անգեղ) Հանի (Հայնի) Մակու Շիրի Քարերք Կամախ Քղիմար Կեցան Գյուղաքաղաքներ Զերմ Գումաձոր Արզնի Մանկագոմ Գատվան	Քաղաքներ Լոռն Քալու Քջնի Սուրմարի Գյուղաքաղաքներ Կաղզվան	Քաղաքներ Նրևան Կեչուր Նիղան Սղերք Գյուղաքաղաքներ Անգեղակոթ Կարբի Աշտարակ Մժնկերտ
3 քաղաք	20 քաղաք 6 գյուղաքաղաք	10 քաղաք 11 գյուղաքաղաք	8 քաղաք 5 գյուղաքաղաք	4 քաղաք 1 գյուղաքաղաք	4 քաղաք 1 գյուղաքաղաք

պատկերը ցույց տվող մի տախտակ, որը և մեջ ենք բերում:

Հայաստանի քաղաքների պատմությունից պարզվում է, որ քաղաքները սովորաբար շրջափակվում էին պարսպով, բացառությամբ էր կաղմում Արծն մեծ քաղաքը: Իսկ գյուղաքաղաքները, ընդհանրապես, աճելով բերդի կողքին, պարսպ չէին ունենում:

Գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ տերմինը այս իմաստն է ունեցել, քանի որ նրա բուն քաղաքային բնակավայրը կամ քաղաքացող ավանը դանվում էր պարսպից դուրս և գյուղերի նման անպարսպ էր: Իսկ քաղաքը, թեկուզ և փոքր լիներ, սովորաբար պարսպ էր ունենում: Վաղարշակերտը, Մակուն, Հաղամակերտը, Աղթամարը և այլն 10—11-րդ դարերում հազիվ թե ավելի մեծ լինեին Գառնիից, բայց քաղաք էին կոչվում,

որովհետև պարսպ ունեին իրենց շուրջը, թեև կարող էին միջնաբերդ չունենալ:

Այս տեսակետից բնորոշ են և բյուզանդական աղբյուրների տեղեկությունները Արծն մեծ քաղաքի մասին: Կեղբենուսը նրշելով, թե Արծնում այնքան մեծ բազմություն կար և բնակիչները այնքան շատ էին թվով, որ վստահ լինելով (իրենց ուժի վրա) չէին ուղտում ապրել պարսպների մեջ և ավելացնելով, թե սելջուկները կոտորեցին 150000 մարդ Արծնի բնակիչներից, այնուամենայնիվ այս մեծ քաղաքը անվանում է գյուղաքաղաք (χωροποιος), որովհետև անպարսպ էր¹: Նույն կերպ վարվում է և Միթալել Ատտալիատեսը, որը անվանում է Արծնը χωροποιος²:

¹ Cedreni, ed. Bonn, p. 577.

² Attalibta, ed. Bonn, p. 187.

Գյուղաքաղաք և քաղաքագյուղ տերմինները հոմանիշներ էին և երբեմն գործածվել են միևնույն բնակավայրի համար: Այսպես, օրինակ, Գեղարքունիքի Կոթ բնակավայրը Գրիգոր Սուխանի թողած արձանագրության մեջ կոչված է քաղաքագյուղ¹, իսկ Ստեփանոս Օրբելյանի մոտ անվանված է գյուղաքաղաք², բայց Օրբելյանը բերելով Գրիգոր Սուխանի արձանագրությունը, պահպանում է «քաղաքագյուղ»³ տերմինը: Կողբը Հովհաննես կաթողիկոսի մոտ, մի տեղ կոչված է գյուղաքաղաք⁴, մի տեղ՝ քաղաքագյուղ⁵, մի այլ տեղ էլ դաստակերտ⁶:

Սակայն դա այդպես է եղել 9—10-րդ դարերում. հետագայում սովորական է դառնում «գյուղաքաղաք» տերմինը, իսկ «քաղաքագյուղ» տերմինը գործածությունից, կարելի է ասել, դուրս է մղվում:

10-րդ դարից հետո «քաղաքագյուղ» տերմինի գործածության միայն երկու դեպք է մեզ հայտնի, իսկ 9—10-րդ դարերից՝ տաս դեպք: «Գյուղաքաղաք» տերմինի գործածությունը մասսայական բնույթ է կրում, բազմիցս հանդիպում է 9—10-րդ դարերում, բայց շատ ավելի հաճախ է գործածված 11—13-րդ դարերում:

Մի քանի փոքր քաղաքների և գյուղաքաղաքների համար՝ Կողբ, Կաղզվան, Աղթամար՝ գործածված է նաև «դաստակերտ» տերմինը, որ նշան է նրանց արքունական պատկանելության:

Ըստ զարգացման մակարդակի, երկրագործությունից անջատման աստիճանի և խոշորության, Հայաստանի 9—11-րդ դարերի քաղաքային կենտրոնները կարելի է բաժանել շորս խմբի.

ա) Մեծ քաղաքներ, որոնց աղբյուրներն-

1 Վիմական տարեգիր, էջ 4:

2 Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Ա Ն, Պատմութիւն, էջ 180:

3 Նույն տեղում, էջ 177:

4 Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն, էջ 78:

5 Նույն տեղում, էջ 194:

6 Նույն տեղում, էջ 293:

րում արվում են «մեծ և հռչակաւոր» կամ «քաղաքամայր» անունները: Իհարկե, դրանք «մայրաքաղաքներ» էին սոսկ դավառական, առավելագույն դեպքում նահանգական մասշտաբով:

Այս մեծ քաղաքները արհեստագործության և առևտրի առավել խոշոր կենտրոններ էին, որոնց բնակչության մեծագույն մասը կազմում էին արհեստավորները, առևտրականները և առհասարակ քաղաքի միջին ու ստորին խավերը: Երկրագործական զբաղմունքը այս քաղաքներում համեմատաբար փոքր դեր էր խաղում:

10—13-րդ դարերում Հայաստանի մեծ քաղաքներն էին Անին, Դվինը, Կարսը, Արծնը, Կարնո քաղաքը, Երզնկան, Արճեշը, Վանը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշը, Նիրկերտը:

Վերևում առանձին քաղաքների զարգացման հարցը քննելիս տեսանք, որ Դվինը և Անին ունեին 70—100 հազար բնակչություն, Արծն քաղաքի մասին որոշ չափազանցումներով ասվում է, որ սա ուներ նույնիսկ 150 հազար բնակչություն: Երզնկան զիջելով ամենախոշոր քաղաքներին՝ ուներ 40—50 հազար բնակչություն, իսկ Երզնկային զիջող խոշոր քաղաքների բնակչության թիվը համեմատական տվյալների հիման վրա կարելի է որոշել շուրջ 15—25 հազար: Այսպիսով, խոշոր քաղաքների բնակչության թիվը, բացի 3—4 քաղաքից, տատանվում էր 15—25 հազարի միջև:

բ) Միջին մեծության քաղաքները ևս արհեստագործության և առևտրի կենտրոններ էին, բայց ավելի սահմանափակ զավառական մասշտաբով և ավելի փոքր դերով: Արբանյց մեծ մասը բերդաքաղաքներ էին:

Այս տիպի քաղաքների բնակչության զբաղմունքի մեջ, եթե երկրագործությունը և արհեստագործությունը համազոր չէին, ապա դժվար է ասել, թե դրանցից որն էր գերակշռում: Համեմայն դեպս երկրագործությունը քաղաքի բնակչության զբաղմունքի մեջ խոշոր տեղ էր գրավում: Այդ հարցի՝ յուրաքանչյուր քաղաքի համար առանձին և

կոնկրետ ուսումնասիրութիւնը դժբախտաբար անհնարին է, փաստական նշութի բացակայութեան պատճառով:

10—11-րդ դարերում Հայաստանի միջին մեծութեան քաղաքների թիւին պատկանում էին Լոռն, Նախճավանք, Կապանք, Կամախք, Մուշք, Ոստանք, Բերկրին, Արզնք, Արծկեն, Աշտուշատք, Խարբերք և այլն:

Այս միջին մեծութեան քաղաքների բնակչութեան թիւը որոշելն ավելի դժուար է: Այդ անելու համար ելակետ ենք ունեցել հինագիտական ավյալները և համեմատական մեթոդը: Միջին մեծութեան քաղաքների բնակչութեան թիւը, անշուշտ շատ ավելի նվազ էր առավել խոշոր քաղաքների բնակչութեան թիւից, ուստի երբ այդ համեմատութեամբ որոշում ենք միջին մեծութեան քաղաքների թիւը, ապա 7—8 հազարից մինչև 10—12 հազար անբնական չի թվում: Դա հաստատում է նաև այն հնագիտական զիտողութիւններով, որ կատարված են Լոռն քաղաքի ավերակների և բռնած տարածութեան վրա:

Չորագետի և Միսխանա գետակի միացմամբ կազմված այն եռանկյունի հրվանդանը, որը դարավանդի կողմից փակված է պարսպով, այնքան ընդարձակ է, որ այստեղ կարող էր ապրել շուրջ երկու հազար բնակիչ: Սակայն քաղաքի հիմնական մասը գտնվել է այս պարսպից դուրս, դարավանդի լայնացող մասում և այս մասն էլ պատած է եղել նախորդ պարսպից մոտ մեկ կիլոմետրը հեռու կառուցված պարսպով: Քաղաքի այս մասում կախող էր ապրել 4—5 հազար և ավելի բնակչութեամբ՝ մանավանդ որ միջնադարյան քաղաքների պարսպից ներս այգիներ և խոշոր պարտեզներ չէին լինում և տները կառուցված էին շատ խիտ, կարելի է ասել՝ իրար կպած:

Այս երկրորդ պարսպով էլ քաղաքի սահմանները չէին սպառվում և նրա թաղերը փոքրում էին ոչ միայն երկրորդ պարսպից դուրս, այլև Չորագետի և Միսխանա գետակի մշուս ամբիւրն և այդ թաղերի մնացորդներն այսօր էլ նկատելի են բավական

նաչափ ընդարձակ տարածութեան վրա: Այդ թաղերի կամ արվարձանների հին կամ քիչ ավելի ուշ ժամանակների անունները պահպանվել են, թեև այժմ որոշ թաղերում բնակչութեան չկա, իսկ մշուսներում գյուղեր են առաջացել, նոր անուններով: Դրանք հյուսիսից՝ Աղշահարը (սպիտակ քաղաք), Միսխանա գետակի աջ ամբիւրն, արևելքից՝ Դարմանաթաղը, Միսխանա գետակի ձախ ամբիւրն, բազմաթիւ հին բնակարանների և շէնքերի մնացորդներով հանդերձ, հարավ-արևելքից՝ Ամրակիցք՝ քաղաքի միջնաբերդի դիմաց Չորագետի աջ ամբիւրն և հարավից՝ Աշխահանք, դարձյալ Չորագետի աջ ամբիւրն: Այս թաղերում ևս կարող էր բնակվել 2—3 հազար բնակիչ: Քաղաքի և նրա թաղերի կամ արվարձանների հետ կապ պահպանելու համար երկու գետերի վրա եղել են բազմաթիւ կամուրջներ: Հուշարձանների պահպանութեան Ստեփանավանի շրջանի լիադոր Հ. Մանուկյանը գտել է երկու կամուրջի հետքեր Չորագետի վրա և վեց կամուրջի հետքեր՝ Միսխանա գետակի վրա: Լոռն քաղաքի ընչազուրկ բնակչութեան մի մասն էլ ապրել է քաղաքին կից ձորերում գտնվող շուրջ 370 այն այրերում, որոնք այս կամ այն չափով հարմարեցված են եղել բնակչութեան համար:

Այսպիսով, Լոռն, որը միջին մեծութեան քաղաքների թվում ամենաբնորոշներից էր, կարող էր ունենալ շուրջ 8—10 հազար բնակիչ:

գ) Փոքր քաղաքները ավելի մեծ թիւ էին կազմում: Դրանց տնտեսութեան մեջ գլխավոր տեղը բռնում էր երկրագործութեանը, այգեգործութեանը, մասամբ և անասնապահութեանը, իսկ արհեստներն ու առևտուրը երկրորդական տեղ էին գրավում և նրանց դերը սահմանափակ էր ու ստորագաս: Նրանց արհեստագործութեանն ու շուկան սպասարկում էին շատ փոքր տերիտորիայի սահմանափակ պահանջմունքը: Փոքր քաղաքների բնակչութեան թիւը կարող էր տատանվել 3—6 հազարի միջև:

Այս փոքրիկ քաղաքները, սովորաբար կոչվում էին բերդաքաղաք, որովհետև նրանց փոքրաթիվ բնակչությունը տեղավորված էր լինում բերդի ներսում, որից դուրս արվարձաններ չէին լինում: Առհասարակ իբրև ֆեոդալական հասարակություն համար բնորոշ երևույթ, պետք է ընդգծել, որ ֆեոդալական քաղաքների մեծագույն մասը (բացառությամբ խոշոր քաղաքների). մնում էին չգարգացած, երկրագործությունը նրանց բնակչության զրադմունքի մեջ մեծ տեղ էր բռնում, ուստի երկրագործությունից նրանք գեոևս թույլ էին անջատված և հակադրությունը գյուղի ու քաղաքի միջև դեռևս շատ սուր բնույթ չէր կրում:

դ) Փոքր քաղաքներից քիչ էին տարբերվում գյուղաքաղաքները, որոնց մեծ մասի անտեսության մեջ երկրագործությունը, այգեգործությունն ու անասնապահությունը ավելի քան գերակշիռ դեր էին կատարում: Արհեստագործությունը գյուղաքաղաքներում շատ ավելի սահմանափակ բնույթ ուներ: Գյուղաքաղաքների բնակչության թիվը կարող էր տատանվել 2—5 հազարի միջև: Եթե փոքր քաղաքների բնակչությունը ապրում էր գերտզանցապես պարսիսպների ներսում, ապա գյուղաքաղաքների բնակչությունը ապրում էր պարսպներից դուրս, ամրոցի առջև փոված ավանում:

Փոքր քաղաքների և գյուղաքաղաքների բնակչության մոտավոր թիվը որոշելիս մեր ելակետներն են եղել ոչ միայն համեմատական մեթոդը, հնագիտական ավյալները, այլև այն մի քանի թվական ավյալները, որոնք, այնուամենայնիվ, աղբյուրներում պահպանվել են: Այսպես, օրինակ, Վարդան Արևելցիքն ասում է, որ 1160 թ., երբ Ելտկուզ աթաբեկը հրկիզեց Մրենի ամրոցը, ապա այդտեղ ողջակիզվեց չորս հազար մարդ: Ռալինում, 8-րդ դարի երկրորդ կեսում, երբ նա սոսկ խոշոր ավան էր և դեռ գյուղաքաղաք չէր դարձել, Հովհաննես կաթո-

ղիկոսի ասելով՝ սպանվել է 700 մարդ և գերի է տարվել 1200 մարդ: Ուշագրավ վրկայություն կա և Աշնակի մասին, որը ալյուրներում գյուղաքաղաք չի անվանված և խոշոր ավան է եղել: Ելտկուզ աթաբեկի 1160 թ. նույն արշավանքի ժամանակ հրկիզվել է նաև Աշնակը և Սամվել Անեցու ասելով՝ այստեղ այրվել է մոտ 5000 մարդ¹:

Եթե անգամ ընդունենք, որ վտանգի պահին բերդերն էին հավաքվում մոտակա գյուղի բնակիչները, այնուամենայնիվ այս թվերը բնորոշ են, քանի որ այստեղ ժամանակակից պատմիչները նշում են միայն սպանվածների և գերի տարվածների թիվը, իսկ ամբողջ բնակչությունը դրանից ավել պետք է լինել: Մեջբերված թվերին չեն հակասում նաև Գառնիում կատարված հնագիտական դիտողությունները: Միջնադարյան գյուղաքաղաք Գառնին բռնել է մոտավորապես նույն տարածությունը, ինչ այժմյան համանուն գյուղը, բայց բնակեցված է եղել անհամեմատ ավելի խիտ, քան այժմ և անշուշտ ավելի մեծ թվով բնակչություն ուներ, քան այժմյան գյուղը, օրի բնակչության թիվը մոտ 3000-ի է հասնում:

9—11-րդ դարերում առաջացած քաղաքների միայն մի մասը աճելով ու զարգանալով դարձավ արհեստագործության ու առևտրի խոշոր կենտրոն, իսկ մյուս, թիվով ավելի մեծ մասը մնաց չզարգացած փոքր քաղաքի վիճակում: Դրա զլխավոր պատճառն այն էր, որ քաղաքները զարգանում էին նաև ուրալ անտեսության պայմաններում, երբ ապրանքային արտադրությունը առավելապես սպառողական նպատակներ էր հետապնդում, երբ նրա նկատմամբ հղած պահանջմունքը, թեև աճում էր, բայց ֆեոդալիզմի պայմաններում սահմանափակ բնույթ ուներ: Այս պայմաններում զարգացման ավելի մեծ հեռանկարներ ունեին գերազան-

¹ Հովհաննես կաթողիկոս, Պատմություն, էջ 136:

² Սամվել Անեցի, Ժամանակագրություն,

¹ Վարդան, Հաւարդան պատմութեան, էջ 127, էջ 138:

յապէս այն քաղաքները, որոնք գտնւում էին այն գլխավոր առևտրական ճանապարհների վրա, որոնք անցնում էին Հայաստանի առավել խոշոր տնտեսական նշանակութունն և խիտ ազդաբնակչութունն ունեցող գավառներով, որտեղ և առաջ էին եկել ֆեոդալական խոշոր իշխանութիւններ, խոշոր քաղաքային կենտրոններով:

Անտառրկելի փաստ է, որ Հայաստանի խոշոր քաղաքները գտնւում էին առևտրական ճանապարհների վրա, բայց առևտրական ճանապարհները և տարանցիկ առևտուրը ոչ թէ առաջացրին այդ քաղաքները, այլ նպաստեցին նրանց աճին ու զարգացմանը: Փաստ է և այն, որ երբ առաջացան Անի և Կարս քաղաքները, որոնք սկզբում առևտրական ճանապարհների գլխավոր ուղեգծից դուրս էին, ապա շուտով դեպի այդ քաղաքները ձգվեց գլխավոր ճանապարհների ուղեգիծը:

Այսպիսով, առևտրական գլխավոր ճանապարհները իրար հետ էին կապում տնտեսական կարևոր դեր խաղացող տարրեր երկրները, իսկ միևնույն երկրի միջով անցնելիս նրանք ձգվում էին տնտեսապես առավել կարևոր, ավելի խիտ բնակչութունն ունեցող գավառների միջով և կարող էին տատանումներ տալ նոր, կարևոր տնտեսական ու քաղաքական գավառների ու կենտրոնների առաջացման համեմատ:

Խոշոր նշանակութունն ունեն և ճանապարհների ապահովութեան հարցը, որը մեծ մասամբ կախված էր սուլյալ ժամանակի քաղաքական իրադրութիւնից: Քիչ թէ շատ խոշոր և կայուն թագավորութիւնների և իշխանութիւնների առկայութիւնը ապահովում էր առևտրական ճանապարհների անվտանգութիւնը և կարավանների անխափան անց ու դարձը:

Առևտրական ճանապարհներից դուրս գտնւող տնտեսական ինքնամիտփ միավորներ կայացնող գավառներում կարող էր առաջանալ միայն մեկ, քիչ թէ շատ խոշոր, քաղաքային կենտրոն, որը, սակայն, կարավանային ճանապարհների վրա գտնւող առավել խոշոր կենտրոնների նման չէր կարող աճել: Այդպիսի տեղական կենտրոններից էին Վանը՝ Վասպուրականում, Մուշը՝ Տարոնում:

Միևնույն նահանգում կամ ընդարձակ գավառում ավելի մանր ինքնամիտփ տնտեսական շրջանների գոյութեան հետևանքով կարող էին առաջանալ մի քանի մանր քաղաքային կենտրոններ, փոքրիկ քաղաքներ, բերդաքաղաքներ և գյուղաքաղաքներ, որոնք, սակայն, արագ աճի և զարգացման հեռանկար չէին ունենում և մնում էին փոքրիկ, շղարգացած վիճակում: Այդպիսիք էին Վասպուրականի, Սյունիքի, Տարոնի և Ծոփքի քաղաքներն ու գյուղաքաղաքները, ինչպես և այլ նահանգների մանր քաղաքներն ու գյուղաքաղաքները: Դրանք կոչված էին բավարարելու տեղական սահմանափակ շուկայի պահանջմունքը:

Ֆեոդալական հասարակութեան արտադրողական ուժերի, մանավանդ արդյունաբերութեան զարգացման ցածր մակարդակը, բնական տնտեսութեան տիրապետութիւնը և երկրի նահանգների տւ գավառների միջև քիչ թէ շատ սերտ տնտեսական կապերի բացակայութիւնը, հանդիսանում էին այն գոլխավոր պատճառները, որոնց հետևանքով առաջանում էին ավելի մեծ թիւով փոքրիկ ու շղարգացած քաղաքներ, բերդաքաղաքներ ու գյուղաքաղաքներ և շատ ավելի փոքր թիւով խոշոր քաղաքային կենտրոններ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ X ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XI ԴԱՐԻ ՍԿԶՐԻՆ



- Պ Ա Յ Մ Ա Ս Ս Վ Ա Ր Ն Շ Շ Ա Ն Ն Ե Ր**
- Սահմաններ**
- Անկախ պետությունների
 - Վասալ պետությունների
 - ▨ Վասալ թագավորությունների
 - ▨ Ինքնուրույն մարզեր
 - Առևտրական ճանապարհներ
 - Ուղղոր քաղաքներ
 - Քաղաքներ
 - Փոքր քաղաքներ
 - Գյուղաքաղաքներ

Մասշտաբ

կմ 25 0 25 50 75 100 125 կմ

Վաղված է ՍՏ Երեւանի քարտեզի հիման վրա

ԱՐԿԵՍՏՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
IX-XIII ԴԱՐԵՐՈՒՄ





ՄԵՏ Ա. Գ. Ա. Գ. ՈՐ ԾՈՒԹ Յ ՈՒ Ն

Արհեստներն անցել էին զարգացման շատ երկար տւղի, մինչև որ կենտրոնացան ֆեոդալական քաղաքներում, ուր նրանք ավելի բարձր զարգացման հասան: Դա հետևանք էր երկրի արտադրողական ուժերի աճի, տնտեսության զարգացման, մանավանդ, երկրագործությունից արհեստների անջատման և արտադրության ինքնուրույն բնագավառ դառնալուն: Զարգանում, փոփոխվում է արհեստագործության տեխնիկան, կատարելագործվում են արհեստավորական գործիքները, աճում է արհեստավորների փորձը և հմտությունը: Այժմ արհեստներն սպասաբեկում էին երկրի տնտեսության և բնակչության կենցաղի ավելի բազմազան և առավել ընդարձակված սպահանջները: Քաղաքի ու գյուղի բնակչության աճող պահանջարկի համեմատ՝ աճում է արհեստավորական արտադրանքը, բաղմանում են նրա տեսակները: Արհեստային արտադրանքը հետըզհետե սկսում է դուրս գալ պատվերով կատարվող արտադրանքի նեղ շրջանակներից և շուկայական արտադրանքի բնույթ ստանալ: Բացի զարգացող ներքին շուկայի պահանջմունքը բավարարելուց, արհեստային արտադրանքի որոշ տեսակները ավելի

մեծ շափերով դառնում են Արևելքում վաղուց գոյություն ունեցող և այժմ ավելի ընդարձակվող տարանցիկ առևտրի առարկա:

Այս ամենի հետևանքով արհեստագործությունը ոչ միայն ընդարձակվում, այլև նկատելիորեն առաջադիմում է: Նախկին հիմնական արհեստները զարգանալով լայնորեն ճյուղավորվում են, առաջացնելով նորանոր ինքնուրույն արհեստներ և մասնագիտություններ: Առաջ են գալիս բոլորովին նոր արհեստներ: Բնական է, որ ձեռնարկելով միջնադարյան արհեստների պատմության ուսումնասիրությանը, հետազոտողը չի կարող սահմանափակվել նրանց վերաբերյալ մատենագրական և հնագիտական փաստերի մեջքերումնիրով, այլ պարտավոր է դրանց մերլուծությամբ վեր հանել այն տեղաշարժերն ու փոփոխությունները, որոնք տեղի էին ունեցել արհեստագործության և նրա տեխնիկայի մեջ: Դա իր հերթին պահանջում է արհեստները քննարկել ըստ առանձին բնագավառների, տալով վերջիններիս զարգացման կոնկրետ պատկերը: Արհեստները խմբավորելիս ելակետ ենք ունեցել մայր արհեստները, նրանց ճյուղավորումները և դրանց փոխադարձ կապերը:

Քաղաքներում զարգացած արհեստագործությունն մեջ առաջին տեղը պատկանում էր մետաղագործությանը, նրա բազմաթիվ ճյուղերով հանդերձ: Մետաղագործությունն էր տալիս երկրագործների և արհեստավորների ամենակարևոր գործիքները, զինվորների զենքերը, կենցաղային շատ իրեր և պերճանքի բազմազան առարկաներ: Մետաղագործության դերը տնտեսության մեջ, ռազմական գործում և կենցաղում շարժական մեծ էր:

Հայաստանը հնագույն մետաղագործության երկիր է և մետաղագործական արհեստները անցել էին զարգացման մի ուղի, որն հազարավոր տարիներով էր հաշվվում, բայց կենտրոնանալով միջնադարյան ֆեոդալական քաղաքներում, նրանք ավելի բարձր զարգացման հասան:

ՆՅն առաջ մետաղագործական հիմնական արհեստները՝ դալքերությունը, պղնձագործությունը և ոսկերչությունն էին, ապա այժմ դրանցից անջատվում են արհեստի նոր ճյուղեր, ինչպես և միևնույն արհեստի մեջ տարբեր տեխնիկական և տեխնոլոգիական եղանակների կիրառման գծով մասնագիտացած արհեստավորների խմբեր, որոնք փաստորեն ինքնուրույն արհեստավորներ էին:

Մետաղների հանույրը: Մետաղագործ արհեստավորներին հասնելուց առաջ, մետաղները պետք է հանվեին հանքերից և անջատվեին հանքաքարից: Այդ աշխատանքը կատարվում էր հանքավայրում: Մետաղների հանքերը, ըստ ամեն մետաղի անվան կոչվում էին երկաթախառն, պղնձախառն կամ պղնձախառն, կապարախառն, ոսկեխառն և այլն¹: Բայց աղբյուրներում հանքերը երբեմն կոչվում են նաև բով², որովհետև հանքա-

1 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, Պատմութիւն, էջ 38, Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, Պատմութիւն, էջ 256, Եւրոպիոս, Պատմութիւն, 2, 13, 15:

2 Մ ո վ ս ս ս Խ ո թ ր ն ա ց ի, Պատմութիւն, էջ 103, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 204:

վայրում հանքաքարը բովում (ջեռացնում) էին և մետաղը անջատում նրանից:

Մետաղների հանույթով իհարկե դարբները, զինագործը կամ պղնձագործը չէր զբաղվում, այլ կային հատուկ մարդիկ, որոնք կոչվում էին հանքահատք, (որպես կոչվում էին և հանքերը), կամ հանքագործ, ընդհանուր անունով, իսկ յուրաքանչյուր մետաղ հանույ, հանքաքարից անջատողը իրեն հատուկ անունն տներ. օրինակ՝ երկաթախառն կամ երկաթախառն, կապարախառն, պղնձախառն¹ (պղինձ հանողներ), ոսկեխառն²:

Ինչպես տեսանք առաջին գլխում մեքերված մատենագրական վկայություններից, Հայաստանը հարուստ էր մետաղի օգտագործվող հանքերով, որը հաստատվում է նաև հնագիտական տվյալներով: Գուգարքում, Սյունիքում և այլուր հնագետները և երկրաբանները հայտնաբերել են երկաթի և պղնձի հնագույն բովեր, որոնց մոտ դոյացել են խարամի մեծամեծ զանգվածներ: Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ մետաղահանքը ուրիշ տեղ չեն փոխադրել և նրանից մետաղ հանելու համար մշակել են տեղն առ տեղը՝ հանքին մոտիկ բով-հնոցում³:

1 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, Պատմութիւն, էջ 38, Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, Պատմութիւն, էջ 256, Եւրոպիոս, Պատմութիւն, 2, 13, 15:

2 Մ ի խ ա ց ե լ Ա ս ո թ ի, Ժամանակագրութիւն, էջ 17:

3 Հանքից մետաղ ստանալու տեխնիկան հնում շատ պարզ էր. օրինակ երկաթահանքը, որից երկաթ ստանալն ավելի դժվար էր, բան պղնձահանքից պղնձ ստանալը, լցվում էր բովի կամ հնոցի մեջ, որոշ տեսակի փայտերից պատրաստված ածուխի վրա, ապա փուրսի միջոցով օդ էր տրվում և դրա շնորհիվ կրակը բորբոքվում էր, ջերմաստիճանը բարձրանում, թմխական ռեակցիա էր տեղի ունենում, որի շնորհիվ երկաթօքսիդը կորցնում էր իր թթվածինը և խմորի նման զանգվածով նստում հնոցի հատակին: Այս ձևով ստացված երկաթը պատրաստ էր օգտագործման համար, բայց պահանջում էր երկար ժամանակի ընթացքում կռել, որպեսզի խտանա և մակերեսի խարամը հեռանա:

Երկաթը հանքից անջատելու համար հարկավոր էր 700—800 աստիճան ջերմություն, իսկ հալելու համար՝

1. ԴԱՐՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՃՅՈՒՂԵՐԸ

Դարբնություն: Սա հին մայր արհեստներից է և սկզբնապես դարբին էին համարվում առհասարակ երկաթից և պղնձից ամեն աեսակի իրեր, առարկաներ պատրաստող վարպետները, որոնք կոչվում էին «դարբին պղնձոյ և երկաթոյ»: Առասպելական Քուրբելի մասին ասվում է՝ «Եւ էր ճարտարապետ դարբին պղնձոյ և երկաթոյ»¹, բայց դա վերաբերում է շատ հին ժամանակներին: Դեռևս Հին Հայաստանի քաղաքներում պղնձագործի և երկաթագործի արհեստները իրարից անջատվել էին և 5-րդ դարի հայ մասնագետության մեջ մի կողմից դարբին անվան տակ հավասարապես հասկացվում էր և երկաթագործը և պղնձագործը, մյուս կողմից՝ երկաթագործը կոչվում էր «դարբին երկաթոյ»², կամ պարզապես դարբին³, իսկ պղնձեղեն իրեր և առարկաներ պատրաստողը որոշակիորեն կոչվում էր «պղնձագործ»⁴: 10—13-րդ դարերում երկաթագործությունը և պղնձագործությունը այնքան էին իրարից հեռու, որ երբեք դարբին կամ այլ քնդհանուր տերմինով չէին կոչվում. դարբինը երկաթագործն էր, իսկ մյուսը միշտ կոչվում էր պղնձագործ⁵:

9—13-րդ դարերում, ինչպես կտեսնենք, դարբնությունից անջատվել էին նաև զինագործությունը, փականագործությունը, սպյտարությունը և արհեստի այլ ճյուղեր:

1500—1600 տարիներն էին ժամանակներում չէին կարող այդքան բարձր ջերմություն ստանալ, հետևաբար չէին կարողանում երկաթը հալել:

Պղինձը, ոսկին, արծաթը, անագը, կապարը և արծիքը հանքաքարից անջատելու համար ավելի ցածր ջերմաստիճան էր պահանջվում, քանի որ այդ մետաղները ավելի դյուրահալ են:

1 Մենդոց գիրք, Գ, 22:

2 Թագաւորաց գիրք, Ա, գլ. ԺԴ, 19:

3 Մովսես Խորենացի, Պատմություն, էջ 192, Եզ 28, 254:

4 Մխիթար Գոշ, Առակներ, էջ 122, Եզ 254:

5 Մխիթար Գոշ, Առակներ, էջ 122:

Դարբնի աշխատանքի վայրը՝ դարբնոցն ունենում էր մի շարք հարմարանքներ, որոնցից գլխավորներն էին քուրան, փուբսը, սալը կամ վնդանը, գեղարանը, զանազան մեծություն ունեւեր և կռաններ, ունելիճներ¹, ջրի տաշտեր և այլն:

Քուրան կամ հնոցը այն կրակարանն էր, որը հարմարության համար պատրաստվում էր հատակից 70—80 սմ բարձրությամբ աղյուսաշար պատվանդանի վրա, ունենում էր ձագարի ձև, որտեղ լցված ածուխի մեջ դրվում էր ջեռուցանելիք երկաթը: Քուրան նեղ անցքերով կապված էր փուբսի հետ և վերջինիս օգնությամբ մղվող օդով էր բորբոքվում: «...Որպէս դարբին մի որ փքովը կայծականս արծարծանէ և յառաջ բերէ անօթս ի դործ»²: Ներսես Շնորհալին հիշատակում է դարբնի տապ հնոցը, որը բորբոքվում էր փշմամբ³:

13-րդ դարի հեղինակ Կարապետ Սասնեցին ևս հիշատակում է երկաթի հալոցը նկատելով, որ ամենաբարկ կրակը այստեղ էր ստացվում⁴:

Դվինի կենտրոնական թաղում կատարված պեղումների ժամանակ բացվել են մի դարբնոցի մնացորդները⁵:

Դարբնոցի կարեորագույն հարմարանքներից էր սալը, որի վրա կռում, կոփում էին քուրայում շիկացած երկաթը:

Երկաթը կռելու համար գործածվում էին տարբեր մեծության մուրճեր, սկսած թեթև մուրճից մինչև կռանը և ամենամեծ մուրճը, որը ուռն էր կոչվում: Հին դարբնոցներում ևս գործածական էին ունելիճները և խարտոցները: Դեռևս Ղազար Փարպեցին հիշա-

1 Համապատասխան բառեր տես նշԲ:

2 Եսայի, ՄԴ, 16:

3 Ներսիսի Շնորհալուց, Բանբ չափաւ, Վինեակի, 1831, էջ 58:

4 Կարապետ Սասնեցի, Նիրողեան յաղագս վարուց և մահուան սուրբ վարդապետին Մեսրոպայ, Վաղարշապատ, 1897, էջ 49:

5 Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 46:

տակում է դարձնի մի շարք գործիքներ տակելով, թե ճշգրտութիւն դարձնաց գործելովք (գործիքներով) արուեստաւորութեան իւրեանց, սալիւք և ուսամբք, կուսնօք և խարտոցովք, խարտել և կարել ի բաց հանել ղերկաթսըն»¹: Թովմա Արծրունին էլ հիշատակում է դարբնի արքանն ու կուսնը²: Ուսում աշխատողի համար հին գրականութիւնը պահպանել է ուսնած կամ ուսնավոր տերմինը³:

Դարբնի սալի վրա արվում էին անցքեր, գրվում էին հարմարանքներ, որոնք թույլ էին տալիս երկաթը կտրել, ծակել և որոշ ձև տալ շիկացած երկաթը նրանց վրա դնելու և կռելու միջոցով: Այդ եղանակով էին պատրաստվում, օրինակ, կտր կամ քառանիստ կողերով, մի կողմից կորնթարդ, իսկ մյուս կողմից հարթ իրերը, երկաթե խողովակներն ու կիսախողովակները, սրպիսիք գտնվել են Անիում և Դվինում⁴: Իհարկե խողովակը պատրաստելիս նրա երկու եզրերը իրար մոտեցնում էին մուրճի լրացուցիչ հարվածներով և զոդում պղնձի կամ այլ զոդիչների օգնութեամբ:

Հնարավոր է, որ դարբնոցում օգտագործվելիս լինի գեղարանը կամ մամլակը, քանի որ դա լայնորեն գործածվում էր հյուանութեան մեջ:

Սալի անիվի գոդերը աղնղնաձև կուրացնելու, ինչպես և երկաթի թիթեղները կիսախողովակի պես ծռելու համար հավանաբար գործածվել են նաև կարծր քարից հատուկ սալեր, որոնց վրա համապատասխան փոսեր կամ ակոսներ էին արված երկաթը ծեծելով կաղապարելու համար: Այդպիսի սալերը միջին դարերից պահպանվելով հասել են մինչև 20-րդ դարը:

Մետաղագործութեան պատմութեան մեջ խաշորագուն նշանակութիւն է ունեցել պողպատի ստացումը շիկացման և ջրի մեջ ընկելովնու կամ մխելու եղանակով: Հնոցում ուժեղ փուքսի միջոցով առաջացնում էին այնպիսի ջերմութիւն, որի վրա շիկացված երկաթը սրողպատ էր դառնում: Դա նշանակում է, որ ստացվում էր այն աստիճան լարձը ջերմութիւն, որ ածխածինը միանում էր երկաթի հետ և առաջացնում պողպատ, իսկ ջրով մխելը ալէլի կարծրացնում էր ստացված պողպատը: Շիկացած երկաթի իրը, մանավանդ նրա սուր կտրող կամ ծակող մասերը սառը ջրի մեջ կծկվում կարծրանում էին: Այս գործողութիւնը հնից ի վեր կոչվել է մխել¹:

Պահանջվող բարձր ջերմաստիճանը ըստանալու համար շիկացումը կատարվում էր կաղնու ածուխը ուժեղ փուքսով բորբոքելու միջոցով: «Որպէս նետք հլօրի, զի մխելայ կայծակամբ կաղնուք»²: Դարբնները, մանավանդ գինագործները և դանակագործները պատրաստի իրերը մխում էին, ինչպես այդ երևում է ալքիմիական ձեռագրերից, նաև նաև կեղևի հյութի մեջ, այդ դեպքում իրը ալէլի էր կարծրանում, մանավանդ, երբ նա սրողպատից էր:

Երկաթը ծակում էին շիկացած վիճակում դնելով սալի վերին մակերեսին արված անցքի վրա և օգտագործելով մի կողմում սրածայր, մյուս կողմում հարթ մուրճեր կամ ծակիչներ: Մուրճի կամ ծակիչի սուր ծայրը, որը պողովատիկ էր լինում, դնում էին երկաթի վրա և կռնով հարվածելով նրա վերին տափակ գլխին ծակում էին երկաթը: Այս եղանակով էին բաց անում մուրճերի, ուրագների և այլ գործիքների կոթառ անցքերը:

Դարբնութեան մեջ մինչև մեր օրերը պահպանվել են աշխատանքի շատ հին մեթոդներ, հին ծագում ունեցող գործիքներ և տեր-

¹ Ղ ա զ ա ր ֓ ա ր պ ե ց ի, Պատմութիւն, Թիֆլիս, 1907, էջ 198:

² Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն, Թիֆլիս, 1917, էջ 63:

³ ՆՃԲ:

⁴ Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 160:

¹ Տե՛ս ՆՃԲ, մխել բառը:

² Գիրք Սաղմոսաց, ճժԹ, 4:

միններ, որոնք թույլ են տալիս վերականգնել միջնադարյան դարբնության պատկերը:

Դարբնության տեխնիկայի մեջ ամենասովորական և տարածված եղանակը երկաթը շիկացնելը և կռելու միջոցով ցանկացած իրը պատրաստելն էր: Շատ խոշոր նշանակություն ունի զօլը կամ՝ զօղելը, այսինքն՝ երկու կտոր երկաթ կամ երկաթն ու պողպատը իրար կպցնելը, որի գյուտը վերագրվել է Գլավլիոս Քիացուն¹: Զողված են եղել Գաունիում գտնված մի եռաժանի և Դվինի միջնաբերդում գտնված բահը, իսկ նույն տեղում գտնված երկաթն խողովակի երկացնությանը նկատվում է զողման համար օգտագործված պղնձի կարը²: Զողը կատարվում էր շատ բարձր ջերմաստիճանի տակ եռ տալու և զողիչ նյութի օգնությամբ պողպատը պատրաստված գործիքի կտրիչ մասին միացնելու կամ պարզապես մետաղե իրերի կտորները իրար կպցնելու եղանակով: Զողելու համար խորե զողիչ օգտագործում էին գյուրահալ մետաղ կամ հանք, իսկ արպես օժանդակ նյութ՝ բարակ, որոշ տեսակի ավազ կամ մանրացրած ճալաքարը (գայլախազ): Նման եռ քարի սար կար Մանանաղի գավառում³ և Արծրունիքի մոտերքը⁴: Զողելը երբեմն պարզապես կոչվել է եռուցանել, որը իբրև անքակտելի միացման պատկերավոր արտահայտություն գործածել են կրոնական գործիչները⁵:

Զողելը խոշորագույն նշանակություն ունեցավ դարբնության արհեստի մեջ: Երկաթից՝ բարձր ջերմաստիճանի տակ նրա հետ անխառն միացնելու եղանակով ստացված

պողպատը դրվելով եկաթե գործիքի կտրիչ մասի վրա, մեծապես բարձրացնում էր նրա որակը և դիմացկունությունը: Գութանի կամ արտրի շողած խոփը, բահը, բրիչը, քարտաշի ու քանդակագործի գործիքները ոչ միայն վատ էին կտրում, այլև շուտ ծռվում ու մաշվում էին: Զողելու տեխնիկան մետաղագործության պատմության մեջ բացառիկ նշանակություն տնեցող երևույթ էր: Նրա դերը շարժական մեծ է եղել նաև դիմագործության մեջ:

Հայաստանի դարբինները զողելու եղանակով պատրաստել են նաև երկաթե խողովակներ, որպիսիները գտնվել են Անիում՝ Բագրատունիների պալատում և Դվինի միջնաբերդում՝ 10—11-րդ դարերին պատկանող շերտերում⁶: Այդ բանում Հայաստանը կանխել է Արևմտյան Եվրոպային, որտեղ երկաթե խողովակներ ավելի ուշ են պատրաստել: Անիում երկաթե խողովակները բացվել են 1908 թվականին. նրանք անցնում էին Բագրատունիների պալատի պատի սվաղի տակով դեպի դահլիճի զովացնող շատրվանը²:

Դարբինները երկաթից պատրաստում էին երկաթագործական գործիքներ՝ գութանի և արտրի խոփեր, բահ, դերանդի, մանգաղ, նղան, սայլի երկաթե մասերը, դարբնի սալ, կռաններ, մուրճեր, ունելիներ, կացիններ, բրիչներ, մի խոսքով արհեստավորների գործածած բոլոր տեսակի երկաթե և պողպատե գործիքներ. շենքերի և շինարարության վրա

1 Վ. Արրահամյանը այդ խողովակների առթիվ գրում է, թե «Դարբնոցում երկաթից ձուլման միջոցով պատրաստում էին ջրատար փոքր ու մեծ խողովակներ» (տե՛ս նրա «Արհեստները Հայաստանում IV—XIII դդ., էջ 53): Սա պարզապես թյուրիմացություն է, քանի որ երկաթը ձուլելու համար անհրաժեշտ ջերմությունը (1500°, 1600°) միջնադարյան Հայաստանում չէին կարողանում ստանալ, իսկ վերահիշյալ խողովակները պատրաստված են պղնձե զողիչով զողելու եղանակով:

2 И. Орбели, Баян и скоморох XII в. (Памятники эпохи Руставели), Ленинград 1938, стр. 164.

1 ՆՀՔ, զօղել բառը:

2 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 160:

3 Ա Ր Ի Ս Տ Ա Կ Լ Ա Լ Ա Ս Ի Վ Ե ր տ ց Ի, Պատմութիւն, էջ 103:

4 «Ազգագրական հանդէս», հատ. Ե, էջ 21:

5 «Որք միանգամայն հաղորդ, եմք միմեանց... և սիրով առ իրեարս եռուցեալք» (Յոհ. Իմաստասիրի ատենաբանութիւնք, էջ 13):

պետք եկող մետաղե մասերը՝ ձողեր, վանդակներ, դռների օղեր, ամեն տեսակի գամեր, կենցաղում գործածվող ամեն տեսակի երկաթե իրեր՝ շամփուր, խաչերկաթ, տաշտաքեր և այլն:

Այսպիսով, երկաթը և նրանից գործիքներ, իրեր առարկաներ պատրաստելու հետ կապված արհեստները, մասնավորապես դարբնավայրերը խաղում էին խոշոր դեր՝ ինչպես գյուղի, նույնպես և քաղաքի տրնտեսության մեջ:

Երկաթը շատ լայն գործադրություն է ունեցել Հայաստանում: Թոժմա Արծրունու մի վկայությունից երևում է, որ Աղթամարի պալատական շենքի վրա ծախսվել է 80 տոննայից ավելի երկաթ: Թոժման խոսելով այդ շինարարության մասին, ավելացնում է. «Պատմեաց մեզ և հաւատարիմ յստիկան մի ի գործավարաց քաղաքին, հթէ հմուտ ի շինուած տաճարին երկաթ լսէրս իբրև ճռ (200 հազար) և հաւաստալէս ճշմարտութեամբ նուազեաց զասելն, քան թէ առատութեամբն յաւելեաց ի բազումս...»¹: Երկաթի գործածության սովորական լինելու մասին է խոսում նաև միջնադարյան մի խաղի ժամանակ ասվող հետևյալ քառյակը.

«Ձայտ իբրտ որ պահել ջանաս,
Այդ երկաթ է հա՛ն երևան.
Կարծես թէ (մեն) դո՛ւ տնիս,
Ձայտ ունի ամեն շինական»²:

Մեծ քանակությամբ երկաթե իրեր գրունրվել են Անիի և Դվինի պեղումների ժամանակ: Դվինի կենտրոնական թաղամասում մայր տաճարից ոչ հեռու 1938 թ. բացված դարբնի հին արհեստանոցի նկուղում կար երկաթե գործիքների մի կույտ, և սրա մեջ նկատվում էին բահ, (տխտ IX ա) կացին, կեռ ծայրով երկաթե ձողեր, երկաթե սկուտեղ, մեծադուրս գամեր և շղթայի մնացորդ-

ներ³: Ինքը դարբնոցը ունեւր աղյուսաշար բարձր հատակ՝ 3,5×3,5 մետր չափերի. հատակի կենտրոնում պահպանվում էր այն փոսը (0,6×0,6 չափերի), որտեղ ամրացված է եղել զնդանը: Որ դա դարբնոց է եղել, երևում է վերոհիշյալ մետաղյա իրերից, դարբնոցի մնացած հատկանիշները չեն պահպանվել: Դարբնոցը վերարդրում է 12—13-րդ դարերին:

Գութանի խոփեր գտնվել են Դվինում, Զվարթնոցում և Անիում: Բացի արորի սովորական թեթև խոփից, եղել են վեցկե, այսինքն երեք զույգ եղով աշխատող ծանր արորի կամ թեթև գութանի խոփեր, որոնց թվին են պատկանում Դվինում, Զվարթնոցում և Անիում գտնվածները: Զվարթնոցի խոփը գտնվել է 9—10-րդ դարերի շերտում⁴: Անիում գտնվել է նաև մեծ կամ ծանր գութանի խոփ, որի հետ միասին նաև գութանի ձևիչը⁵: Սա արդեն վկայում է երկաթագործության խոշոր առաջադիմության մասին, քանի որ մեծ խոփ և ձևիչ ունեցող գութանը աշխատում էր 6—10 լուծ եղների միջոցով և հողը խորը կտրելով շուտ էր տալիս:

Վաղուց ի վեր շատ հայտնի էին գերանդին ու մանգաղը, որոնց նմուշները կամ բեկորները գտնվել են Անիի և Դվինի պեղումների ժամանակ⁶: Բահը, որ Հայաստանում շատ տարածված գործիք է եղել, հայտնի է դեռևս ուրարտական ժամանակներից և գտնվել է Կարմիր-բլուրում: Այն քանդակված է նաև Աղթամարի տաճարի վրա, խաղուղի այդի մշակելու մի տեսարանում, վերջապես, ինչպես հիշատակվեց, գտնվել է Դվինի միջնաբերդում և կենտրոնական թաղում: Ուշագրավն այն է, որ ինչպես Կարմիր-բլուրի, նույնպես և Աղթամարի, Դվինի բահերը պատկանում են ամուր, քիչ կորնթարդ ու

¹ Կ. Ղ ա ֆ ա դ ա ռ յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 48, 154:

² Նույն տեղում, էջ 156:

³ И. О р б е л и, Каталог Ангийского музея. стр. 115.

⁴ Նույն տեղում, էջ 115:

¹ Թ ո ժ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմություն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 482:

² Մասենադարանի ձեռագիր № 1770, էջ 383ր:

սրածայր, թափչակավոր բահի այն տիպին, որն համարյա անփոփոխ պահպանվում է Հայաստանի դյուղերում մինչև այսօր և որը պատրաստում են միայն դարբինները:

Դվինում գտնվել են նաև փայտահատի մեծ ու փոքր կամ սովորական կացին (տխտ. IX բ): Առաջինի երկարությունն է կտրիչից մինչև կտթատեղը 24 սմ, բերանը շատ լայն չէ, իսկ երկրորդի երկարությունն է 14 սմ, բերանի լայնքը՝ 9,5 սմ¹: Նույն քաղաքի պեղումների ժամանակ հայտնաբերվել են զուսնազան տիպի և մեծություն դամեր, դրանց թվում նաև կղմինդրը շենքերի ծածկի փայտե ձողերին ամրացնելու խոշոր գլխով մեծ դամեր²: Այստեղ գտնվել են նաև ուրագ (տխտ. IX գ), դռների փակերի երկաթե մասեր, կեռեր, ձողեր և այլ իրեր³: Շատ գործածական էին հող փորելու քլոմպները, որոնք կոչվում էին փետատ⁴, որ ցուլց է տալիս, թե հնում կացինը և քլոմպը միևնույն գործիքն էին և հետո իրարից անջատվեցին:

Միջին դարերում ամրոցների դռները պատրաստում էին փայտից և պատում էին երկաթե հաստ թիթեղով կամ դռան վրա հազնում էին միմյանց կից՝ հաստ դամեր. դամերի ծայրերը դուրս էին գալիս դռան երկու երեսներից և ծեծելու միջոցով տափակացված կամ կլորացված էին լինում, մանավանդ դրսի կողմից: Սովորաբար այս դամերը դեռևս դարբնոցում պատրաստելիս բնական էին մեծ, կլոր գլխիկ: Այդպիսին են եղել նաև Անիի դռները, որոնց մնացորդները հայտնաբերվել են 1907—1910 թթ. Կարուց (Կարսի) կոչվող դռան պեղումների ժամանակ⁵:

Երկաթից պատրաստում էին նաև ճրագ-

ներ, պուտուկ, որի մեջ, ինչպես երևում է Ագաթանգեղոսի վկայությունից, կապար էին հալում⁶:

Դվինում կաթողիկոսական պալատի պեղումների ժամանակ գտնվել է անզամ երկաթից պատրաստված մի ջահ, որի վրա կաշին քսան երկաթե օղեր՝ ապակե թասերը նրանց վրա դնելու համար⁷: Գտնվել են նաև ջահի վրա ամրացվող երկաթե ճրագներ, իսկ նման ամբողջական ջահ, փոքր ինչ ավելի ուշ ժամանակի (14—15-րդ դդ.) պահվում է Պետական թանգարանում:

Պահպանվելով մեղ է հասել մի երկաթե մեծ խաչ (տխտ. X ա): Նրա ուղղահայաց թևերի բարձրությունը կազմում է 46 սմ, իսկ հորիզոնական թևերի փռվածքը՝ 35 սմ, ունի կոթառ 15 սմ երկարությամբ, որը միանում է խաչի ցածի թևի հետ, խնձորակի օգնությամբ: Այս խաչը հնագիտական տվյալներով միանգամայն համապատասխանում է Աշոտ Բ-ի ժամանակներին և ըստ ավանդության ծառայել է իբրև զորքի առջևից բարձր կոթունի վրա և դրոշի հետ միասին տարվող զինանշան, զորքին ողևորելու համար:

Դարբնությունը մեծ հմտություն և ֆիզիկական ուժ պահանջող ծանր աշխատանք էր: Դարբինները մեծ համակրանք էին վայելում, որն իր արտահայտությունն է դրտել Մխիթար Գոշի առակներում, որտեղ դարբինը և պղնձափորժը վիճելով առաջնության մասին, դիմում են ծերերի ատյանին. «և նոքա մեծարդոյ ցուցին զերկաթագործ ասելով, թե հասարակաց օգտակարն պատուական է»⁸:

Դարբինն ու դարբնությունը ժողովրդի մեջ ունեցել են լավ համարում: Բնորոշ է, որ 1222 թ. Անիից ոչ հեռու գտնվող Մադասրերդում, անեցիների կողմից արաբերենից հայերեն թարգմանված և շատ բանում

1 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 157:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում, էջ 160:
4 Պրոֆ. Մ. Ա. Բ. Ղ յ ա ն, Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտոնիներ, Երևան, 1940, էջ 60:
5 И. Орбели. Развалины Ани. стр. 39.

1 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Պատմություն, էջ 69:
2 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 46:
3 Մ խ ի թ ա ր Գ ո շ, Առակներ, էջ 122:

հայացված երազահանում ասվում է. «Ձինյ երկաթ որ լինի, և ընկնի ի դարբնի սարուածէն՝ դամենն բարի է»¹, աճնուհետև՝ «...հանց ասեն թէ դարբին տեսանես յերագի՝ մեծ մարդ է, թե ինքն [երագ տեսողը] դարբնութիւն ասնէ՝ գանձ գտանէ. թէ լինի դարբին, զմարդու բանն յատեանն կատարէ...»²: Մի ձևագրի հիշատակարանում կարդում ենք. «Տէր աստուած ողորմեսցի ի գաւառապետին՝ Մովսէս դարբնի, որ սարուծիկն մեր զուգէր և այլ զինչ տանս պետք էր անտրտում աշխատէր և ոչ յապաղէր այլ սրաօք խորհրդով գործէր: Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուին ՈՂԲ (1223) ի դաւառիս Հայոց Նիկոպոլիս... ի քաղաքիս որ կոչի Խաւմ»³:

Հմտություն պահանջող և ծանր արհեստ լինելով, դարբնությունը հաճախ նկատելի կկամուտներ էր բերում նրանով զբաղվողներին և որոշ դեպքերում դարբինը զիրքի տեր մարդ էր համարվում քաղաքի ոչ ազնվական՝ սամիկ բնակչության շարքում:

Խժկոնքի եկեղեցու պատի վրա հիշատակված Կոնդեր դարբինը զգալի կարողություն պետք է ունենար, որպեսզի Արզուման հրոնավորի հետ միասին այդ եկեղեցուն նվիրեր. «երկու գուռն, տներ»⁴: 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում ևս խոսվում է նվիրատու դարբինների մասին, որ պետք է քացաւորել նրանց ունեցած կարողությամբ և հասարակական որոշ զիրքով:

Գարբնության մասին մեջ բերված նյութերը, իհարկե, հեռու են ամբողջական լինելուց, քանի որ դարբնության արտադրանքից մեզ հասած նմուշները և զրավոր տեղեկությունները նրանց մասին սակավ են, բայց դրանք էլ բավարար չափով ցույց են տալիս, որ դարբնությունը բազմակողմանի արհեստ էր ու բազմազան արտադրանք էր

տալիս, անգամ հաշվի չառնելով այն ճյուղերը, որոնք արդեն անջատվել էին նրանից:

Գարբնությունից անջատված այդ երկաթագործական արհեստներին էլ կամենում ենք անդրադառնալ:

Երկաթե գործիքներ պատրաստող դարբիներ: Իհարկե սովորական դարբիններն էլ, մանավանդ նրանցից առավել հմուտները, պատրաստում էին բազմաթիվ ու բազմազան գործիքներ, սակայն միջին դարերից մեզ հասած մի շարք գործիքներ, ինչպես և բազմաթիվ այլ գործիքների օգնությամբ պատրաստված իրերը հիմքեր ևն տալիս են թագրելու, թե երկաթե, մասնավորապես պողպատե գործիքներ պատրաստող դարբիները, արհեստավորների առանձին խումբ էին կազմում և նրանց արհեստը կատարելագործվելով անջատվել էր սովորական դարբնությունից:

Այս գործիք պատրաստող արհեստավորները, որոնք միջնադարյան Ռուսիայում և այլ երկրներում էլ առանձին արհեստավորներ էին, արտադրում էին ամեն տեսակի գործիքներ, առաջին հերթին պանազան արհեստավորների՝ փակամագործների, պղնձագործների, ոսկերիչների, հյուանների, քանդակագործների, կաշեգործների և մյուսների համար: Արհեստագործության առանձին նյութերն այնքան էին առաջ զնացել, նրանց մեջ գործածվող գործիքներն այնքան էին կատարելագործվել, որ պահանջվում էին հատուկ հմտություն և մասնագիտություն ունեցող արհեստավորներ, որպեսզի կարողանային դրանք արտադրել:

Գառնիում գտնվել է 8—9-րդ դարերի մի ձեռնուրագ (տխտ. X բ), իսկ Դվինում հյուանի ձեռնուրագ գտնվել է կիսամշակ վիճակում (տխտ. IX դ): Այստեղ հայտնաբերվել են նաև դրեր (նկ. 9), երկաթ կտրելու և ձակելու սումպաներ պողպատե կտրիչներով¹: Ժամանակակից մկրտաններից ոչըն-

¹ Մատենադարանի ձեռագիր, № 695, էջ 204:

² Նույն տեղում, էջ 219:

³ Գարբնի Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 832:

⁴ Վիմական տարեգիր, էջ 55:

¹ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 157:


չով շեն տարբերվում Դվինի միջնաբերդում վեց մետր խորությունից գտնված մեծ ու փոքր մկրատները¹ (տխտ. XI ա): Այստեղ հայտնաբերվել են նաև սղոցի բեկորներ: Քար և փայտ մշակելու (ծակելու) դրեր,



Նկ. 9. Երկաթե դուր, Դվին, ՊՊԹ:

այս դործիքները միջնադարյան քաղաքներում արտադրված բազմազան դործիքների մի աննշան մասն են կազմում, բայց նրանք էլ ցույց են տալիս, որ դործիք պատրաստելը դարձնի սովորական աշխատանքից տարբեր մի արհեստ էր, որը պահանջում էր հատուկ մասնագիտացում և ավելի նուրբ աշխատանք:

Փակաճագործություն: Խնչպես բերդերի, նույնպես և բակերի, շենքերի դռները փակվում էին սողնակաձև փականով: Դրանք կարող էին լինել փայտից, բայց մետաղից էլ էին պատրաստվում: Այդ փակաների բանալիները մեծ մասամբ մետաղից էին պատրաստվում և հրբեմն ունենում էին



Նկ. 10. Երկաթե մանգաղ, Անի, ՊՊԹ:

մանգաղներ (Նկ. 10) և այլ դործիքներ զբաղեցրել են նաև Անիում²:

Գտնվում գտնվել են նաև սակերչի մուրճիկ՝ երկաթե կոթով, մետաղե իրերի վրա գծագիր զարդեր անելու երկաթե գրիչ, ունիլի, սափորիկի տեսք ունեցող մետաղե իրեր ձուլելու վաղապար և այլ երկաթե դործիքներ:

Պեղումների ժամանակ հայտնաբերված

շատ բարդ ձևավորում, որպեսզի դուռն այլ բանալիներով չկարողանան բաց անել: Բրոնզե մի խոշոր բանալի գտնվել է Դվինում, կաթուղիկե եկեղեցու մոտ: Սա ունի 21 սմ երկարություն, շրջանաձև գլուխ բրոնզեյու համար և երկու իրարից հեռու դասավորված ատամ՝ փակելու և բացելու համար¹:

Քաղաքային կյանքի զարգացման, զրամական շրջանառության մեծացման, դանձ և պերճանքի թանկարժեք իրեր կուտակելու

¹ Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին բազարը և նրա պեղումները, էջ 160:



² И. Орбели. Каталог Анийского музея, стр. 110.

¹ Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին բազարը և նրա պեղումները, էջ 168, նկար 149 գ:

հետ միասին ավելի ու ավելի մեծանում է բնակարանի, կուղպակի, պահեստի և սրանց ներսում պահվող սնդուկների, գլորոցների ու այլ հարմարանքների համար հատուկ կողպեքների պահանջը: Դրան համեմատ էլ զարգանում է փականագործությունը: Առաջ

պատկանում են 11—13-րդ դարերին (նկ. 11):

Անիի վերոհիշյալ երազահանում փակահագործը կոչված է «կողպայաբարա», և կողպայքարարությունը դիտվում է իբրև դարբնությունից անջատ և ինքնուրույն արհեստ¹:



նկ. 11. Մեաղե կողպեքներ (Անի, № 1548), ՊՊԹ:

են գալիս մետաղե զսպանակավոր փոքրիկ կողպեքները, որոնցից մի քանի նմուշներ գտնվել են Անիում: Դրանք պատրաստված են երկաթից կամ բրոնզից: Բնորոշ է, որ անգամ այն դեպքում, երբ կողպեքի արտաքին մասերը պատրաստված են բրոնզից, ապա ներսի մասերը լինում են երկաթից, կամ նույնիսկ պողպատից: Այդպիսին է, օրինակ, Անիի հյուրանոցի հարավային զահլիճի դռան մոտ գտնված բրոնզե զարդալուծ կողպեքը: Գաղիկի տաճարի հարավային դռան մոտ գտնված կողպեքը ամբողջովին երկաթից է: Դա սովորական տիպի կախովի կողպեք է¹:

Անեցիների զարգացած գեղադիտական ճաշակը այս կողպեքների վրա էլ իր զրոշմն է դրել: Բրոնզից ձուլված կողպեքներ են հայտնաբերված, որոնք ներկայացնում են ձիու, կատվի, առյուծի, անգամ մարդու փոքրիկ արձանիկներ²: Ժամանակով դրանք

Վանակագործություն: Դարբնությունից անջատված, առանձին արհեստների թվին էր պատկանում նաև դանակագործությունը: Դանակի պահանջը մեծ էր թե՛ կենցաղում, թե՛ տնտեսության և թե՛ արհեստագործության մեջ, այնպես որ դանակագործի արհեստը ինքնուրույն զարգացման պայմաններից զուրկ չէր նաև զուտ տնտեսական առումով:

Դանակ պատրաստող արհեստավորը կոչվում էր ուղղակի դանակագործ կամ էլ գանկրար³:

Իբն-ի Բատուտայի տեղեկություններից երևում է, որ Սերաստիայում (Սվաղ) 14-րդ դարում զոյություն ունեւր դանակագործների կրայություն³:

Անիի, Դվինի և Գառնիի պեղումների ժամանակ գտնվել են երկու տիպի դանակների՝ ծալվող և շծալվող (նկ. 12, 13 և ախտ. XI ր): Առաջիններն ունենում են 8—10 սմ

¹ И. Орбели, Каталог Анийского музея, стр. 98.

² Չ. Արրահամյան, Արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1946, էջ 47, նույնի Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., էջ 54—55:


¹ Մատենադարանի ձեռագիր, № 695, էջ 220 ա:

² Ժ. Գաբի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, 1950, էջ 366—370:

³ Իբն-ի Բատուտա, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 25:



Նկ. 12. Դանակի երկտիկ լեզվակ, Դաոնի, ՊՊԹ:



Նկ. 13. Երկավիկ դանակ, Անի, ՊՊԹ:

երկարութեան լեզվակ և սպիտակ ոսկորից կամ եղջյուրից պատրաստված կոթ, որի մեջ ծալվում է լեզվակը (նկ. 13): Նման օրինակներ գտնվել են մանավանդ Անիում¹: Հանդիպում են նաև փայտե կոթ ունեցող ծալովի դանակներ²: Իսկ շճալիղ դանակները լեզվակի հիմքի մոտ ունենում են ոչ թե մեկ, այլ երկու և ավելի անցքեր և կոթին միացված են լինում անշարժ կիրպով:

Պայտարություն: Դարբնությունից անջատված և միանգամայն ինքնուրույն ար-

հեստ էր պայտարությունը: Անիում գոյություն ունեւ պայտարների հատուկ շարք կամ թաղ, որը կոչվում էր «նալանդնոց»¹: Անիի երազահանում «նալանդը» հիշատակված է իբրև ինքնուրույն արհեստավոր²: Այդ քաղաքի պեղումների ժամանակ մեծ քանակությամբ պայտեր ու պայտի մեխեր են գտնվել՝ կարսի կոշիկով դարպասի մոտ, սլարսալից ներս:

Պայտարները պատրաստում էին եզամբ, ձիու և ավանակի պայտեր, ինչպես և այդ պայտերի մեխերը: Պայտը պատրաստում

¹ Н. Орбели, Каталог Аннийского музея, стр. 110.


² Նույն տեղում, էջ 112—113:

¹ Վիմական տարեգիր, էջ 78:

² Մատենադարանի ձեռագիր, № 695, էջ 219ր:

էին երկաթը կռելով թիթեղ դարձնելու և մկրատներով կտրելու եղանակով, ապա պատրաստի պայտի վրա դամերի համար անցքեր էին բացում մետաղե ծակիչով:

Լ նաև Անիում, Գվինում և Գառնիում պեղումների ժամանակ հայտնաբերված մեծ թվով ամեն տեսակի պայտերի ու դամերի առկայությունից (նկ. 15): Եզան, ձիու և



Նկ. 11. Պայտարի տաշիչ, Գառնի, № 150, ՊՊԹ:



Նկ. 15. Երկաթե պայտեր, Գվին, ՊՊԹ:

Պայտարի արհեստանոցում, ինչպես դարբնոցում լինում էին սալ կամ զնդան, մուրճեր, ունեխիներ, մկրատ և այլ գործիքներ, սակայն պայտարի զնդանը և մուրճերը սովորաբար փոքր չափսերի են լինում:

Անասունները պայտելուց առաջ նրանց սմբակները կամ կճղակները մաքրում ու տաշում էին հատուկ գործիքներով. մաքրելու համար գործածվում էր դանակաձև գործիքը, իսկ տաշելու համար՝ կիսամանդաղաձև տաշիչը, որից մի օրինակ դտնվել է Գվինում 1949 թ., մի օրինակ էլ Գառնիում 1951 թ. (նկ. 14, տխտ. XII ա): Հայաստանի պեա լեոնային երկրում բանող անասունները առանց պայտի աշխատել չէին կարող, և նրանց պայտերն էլ շատ շուտ մաշվում էին, ուստի պայտար արհեստավորների բավականաչափ մեծ կարիք էր զգացվում, և նրանց թիվը զգալի էր: Այդ բանը երևում

ավանակի պայտեր դտնվել են հնագիտական շատ վայրերում, դրանց թվում նաև Ադրբեջանի Գանձակ քաղաքում¹:

2. ԶԻՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մարտական զենքերի արտադրություն: Զինագործությունը համեմատաբար ավելի վաղ, քան երկաթի մշակման հետ կապված մյուս արհեստները, անջատվեց դարբնությունից և ինքնուրույն արհեստ դարձավ՝ իր սեփական ենթաճյուղերով հանդերձ: Միխայել Ասորու ժամանակագրության մեջ այդ արհեստը դիտված է իբրև առանձին արհեստ և կոչված է զինագործություն²:

¹ И. М. Джафарзаде, Историко-археологич. очерк старой Ганджи, стр. 84.

² Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, «Եւ այս եղև պատճառ զինագործութեան» (էջ 17):

Հայկական զորքերը գործածել են ղենքի շատ տեսակներ¹ և հանդերձանք, զրահ ու նման այլ արհեստական պաշտպանական միջոցներ, իսկ դա հնարավոր էր արհեստագործության և առաջին հերթին մետաղագործության իր ժամանակի համար բարձր զարգացման պայմաններում:

Միջնադարյան Հայաստանում զորքի տեսակները կազմվում էին ըստ ղենքի տեսակների, որի վերաբերյալ բավականաչափ առատ տեղեկություններ կան հայկական մատենագրական աղբյուրներում: Սակայն սովյալ դեպքում մեզ հետաքրքրողը ոչ թե ռազմական տեխնիկան է ու արվեստը, այլ զինագործությունը իբրև մի կարևոր արհեստ իր բազմակողմանի արտադրանքով, որը դրսևորվել է ղենքի բազմաթիվ տեսակների մեջ, ուստի վերջիններից սկսելով կարելի է սարգել արհեստագործության սովյալ ճյուղի պատկերը:

Աղբյուրների հիման վրա Վ. Աբրահամյանը կազմել է միջնադարյան Հայաստանի զորքերի գործածած ղենքերի տեսակների մոտավորապես հետևյալ ցանկը.

1. պարաստիկ
2. նետ ու աղեղ
3. նիզակ (դեղարդ)
4. տեգ
5. սուր, թուր, սուսեր
6. սվին
7. շերտ
8. սակր
9. վաղր
10. մուրճ
11. մկունդ
12. ճիկո (ճկուռ)
13. վարոց

¹ «Միջնադարյան Հայաստանի ղենքերի տեսակները» խորագրով հատուկ ուսումնասիրություն ունի Վ. Աբրահամյանը, տպագրված Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ»-ի 2-րդ հատորում, Երևան, 1949, էջ 37—98: Տե՛ս նաև նույն հեղինակի «Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.» աշխատությունը, Երևան, 1956, էջ 66—85:

14. վահան

15. սաղավարտ

16. ամեն տեսակի զրահներ

17. պարիսպ քանդող և քար նետող մեքենաներ

18. հրձիգ նյութեր:

Այս ցուցակի մեջ թվարկված ղենքերից մի քանիսի, այն է՝ սարսատիկի, նետ ու աղեղի, պարիսպ քանդող և քար նետող մեքենաների մասին խոսվելու է իրենց տեղում, իսկ մնացածները մետաղագործական արտադրանք էին կազմում և կբնարկվեն այս բաժնում:


Բերված ցուցակից պարզ երևում է, որ զինագործը կամ սլեհարարը, ինչպես կոչված է նա Անիի երազահանում, գործունեության լայն ասպարեզ ուներ: Նույն այդ ձևագրից երևում է, որ նետ պատրաստող վարպետը տարբեր էր սլեհարարից և հիշատակված է իբրև առանձին արհեստավոր նետար՝ անունով:

Ձինագործության խոշոր կենտրոնները բաղաճներն էին, մանավանդ Դվինը և Անին: Դեռևս 770-ական թվականներին Դվինը աչքի էր ընկնում զինագործությամբ և զինանոցներով: Այստեղ էր, որ զինեց իր ջոկատը Արտավազդ Մամիկոնյանը, որն այնուհետև հարձակվելով արաբական հարկահանների վրա, Կոմայրիում կոտորեց նրանց: Այդ առթիվ Ղևոնդ երեցը գրում է. «Եւ սկիզբն բանիս այսօրիկ լինէր ի ձեռն Արտաւազդայ, որ էր ի տանէ Մամիկոնէից. որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին՝ կազմութիւն. մեծ առնէր զօրաց իւրոց. և ստանայր անդ զէնս և անօթս պատերազմի, և վառէր զինքն զրահիւք և սաղաւարտիւք և ամենայն սպառազինութեամբք...»²:


Դվինի և Անիի խոշոր զինագործական կենտրոններ լինելը ավելի պարզ երևան է գալիս պեղումների ժամանակ այս քաղաք-

¹ Մատենադարանի ձեռագիր № 695, էջ 219 ր:

² Ղ և ո ն դ վ ա ր դ ա պ ե տ, Պատմութիւն, էջ 138:



Նկ. 16. Նևաի ծայրեր, Անի, Գլին, Պղթ:



Նկ. 17. Նևաի ծայրեր. Գառնի, Պղթ:

ներում՝ հայտնաբերված բազմազան զինքերով:

Ամենամասնաձևական գործածության զինքերից մեկն էր նեա ու աղեղը: Աղեղը պատրաստում էր առանձին արհեստավոր, իսկ նետերը կռում էր մետաղագործ արհեստավորը՝ նետրարը: Պատրաստի նետերի ծայրերը, այնուհետև ամրացվում էին փայտի կամ եղեգնի վրա: Անիի, Դվինի և Գառնիի պեղումների ժամանակ հայտնաբերվել են մեծ քանակությամբ նետի երկաթե ծայրեր (նկ. 16), դրանք շատ բազմազան են թե՛ ձևով ու մեծությամբ և թե՛ գործածության նպատակով: Կ. Ղաֆաղարյանը Դվինում գտնված նետերի սլաքները, ըստ նրանց ձևի, բաժանում է վեց խմբի, այն է՝ ճանկավոր, եռանիստ ակոսավոր, տերևաձև տավաղ, կոնաձև քառանիստ, սրածայր երկարավուն և տձև կամ անկանոն սրածայր¹: Այս տարբերությունները հետևանք են ոչ միայն այն բանի, որ Դվինում գտնվել են տեղականի հետ միասին, նաև թշնամու արձակած նետերի ծայրեր, այլև այն բանի, որ տեղում էլ տարբեր գավառներում տարբեր ձևի նետասլաքներ էին պատրաստվում. կարևոր էր նաև այն հանգամանքը, որ տարբեր նպատակի համար, տարբեր ձևի և մեծության սլաքներ էին օգտագործվում: Օրինակ, դրահը ծակելու և ոչ դրահապատ գինվորի մարմնի մեջ խորը վիրք բաց անելու համար տարբեր տիպի նետածայրեր էին գործադրվում²: Տարբեր են նաև Գառնիում գտնված նետածայրերը (նկ. 17):

Նետածայրերից շատերը, օրինակ՝ Անիի միջնաբերդի հյուսիս-արևմտյան կողմում Բազրատունիների պալատի պատերի տակ գտնված 500 նետածայրերի մեծագույնը մասը, ինչպես նկատել է ակադ. Հ. Օրբելին, պատկանել են միջնաբերդի վրա հար-

ձակված թշնամուն¹: Հատուկ և երկարատև ուսումնասիրությունը միայն կարելի է պարզել, թե Հայաստանում հայտնաբերված միջնադարյան սլաքներից որո՞նք են տեղական և ի՞նչ ձևեր ու առանձնահատկություններ ունեն դրանք, ի՞նչ փոփոխություններ են կրել ժամանակի ընթացքում և որո՞նք են օտարների: Նման աշխատանք զեռես չի կատարված:

Միջին դարերում սովորություն կար նաև գործածելու թունավոր սրբ. սերսես Ծնորհալին նետի մասին հանելուկում գրում է.

«Օձն փայտ է թևաւոր,
Տուտն երկաթ է թունաւոր,
Նա թռչելով խոցէ ի խոր,
Զով հարկանէ մեռնի բոլոր»²:

Թեև հայկական զորքերը անուն էին հանել իբրև քաջ և զիպով նետածիղմեր, բայց նրանք նեա աղեղից ավելի գործածում էին նիզակն ու սուրը: Հետևակը, մեծ մասամբ, զինված էր լինում նիզակով, իսկ հեծելազորը՝ սրով և երկար նիզակով, կար և ճոճ նիզակ, որը գործածվում էր մոտիկ տարածությունից թշնամու վրա նետելու համար:



Հետևակը գործածում էր մի քանի տեսակի նիզակ. սովորական նիզակը կոնաձև էր և ուներ կոթառի խողովակաձև անցք, վերջավորվում էր հավասարաչափ նեղացող սուր ծայրով: Գուցե սրանք էին մկունչ կոչվող բոլորատեղեքը: Այդպիսի նիզակի ծայրեր գտնվել են Դվինում: Կային և գեղարդաձև նիզակի ծայրեր, որոնք ունենում էին խողովակաձև կոթառ և ձգված տերևաձև կամ երկարով շեղանկյունու տեսք ունեցող ծայր: Դվինում գտնվել է մի խոշոր նիզակի ծայր, որն ունի խողովակաձև կոթառ և համարյա զուգահեռ կողերով, մասսիվ և երկարով ծայր, որը վերջում միմիայն եռան-

1 Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 161—162:


2 Նույն տեղում:

1 И. Орбели, Каталог Анни́ского музея, стр. 95.


2 Մատենադարանի ձեռագիր № 7703, էջ 96 ա:



Նկ. 18. ա, բ, գ) նիզակի ծայրեր, Գվին (№ N 135, 123), դ) Լրկաթի գրահի շերտեր, ՊՊԹ:



Նկ. 19. նիզակի ծայր հեծյալների ձևուց վայր
 քերելու հարմարանքով, Անի, ՊՊԹ:



Նկ. 20 և 21. Նիդալենների ծայրերը, հեծյալների հարվածելու և ձիուց վայր բերելու հարմարանքով, Դվին, ՊՊԹ:

կյոնածև սրվում է խոցելու համար (նկ. 18 ա):

Հեռակազմ հեծելազորի դեմ կռվելու համար գործածում էր հատուկ ձևի նիզակներ: Գրանցից մեկը գտնվել է Անիում և խոցող սրածայրի կողքերից ունի երկու դեպի ետ ծոված կեռ (նկ. 19), որոնցով կարելի էր հեծյալին բռնել և քաշելով ցած զորքի ձիուց¹: Դվինոմ գտնվել է մի խողովակաձև նիզակի ծայր, որը կողքից ունեցել է սակր, որի ցածի ետ ծոված ծայրը ծառայում էր նույն նպատակին (նկ. 20), ինչպես և նույնատիպ մի այլ զենք (նկ. 21):

Գեղարդաձև կամ տերևաձև նիզակներին շատ նման են տեղի ծայրերը, այն տարբերությամբ, որ սրանք անհամեմատ փոքր են և նեղի սլաքների նման կոթի վրա ամրացվել են իրենց երկար ու բարակ ոտքով: Տեղերը ծառայում էին ոչ շատ հեռու տարածություն վրա ձևարով նետելով թշնամուն հարվածելու համար: Պատմիչների մոտ տեղը հաճախ կոչված է աշտն: «Հեռի զաշտեսն արձակեալ, որպէ՛ս ի թռիչս սրաթև հասուց»²: Աշտեն շատ գործածական էր մանավանդ որսի ժամանակ: «Բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազտեացն, որ ի մայրիսն... Ե՛հար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն...»³:

Նետելու ավելի ծանր զենք էր նաև ուռմբը կամ ըռումբը⁴:

1 Կեռերով երկաթն զենք գործածել են նաև քաղաքների պարիսպների վրայից կռվող զորքերը: Հաստիվերտցին պատմում է թե Մանազկերտի պաշարման ժամանակ սելջուկ զորավարներից մեկը, որը քաջ մարդ էր, փորձում է պարսպից ներս մտնել, բայց մտանալով պարսպին հանկարծ սայթառում բնկնում և և նրանք ուժերը թի վերայ պարսպին էին, ձգեալ զճանկ երկաթի՝ կալան զնա և քարշեալ ձգեցին ի ներքոյ պարսպին» (էջ 69): Մանազկերտցիների զենքը կոչվել է պարզապես ճանկ, իսկ Անիում գտնված կեռերով նիզակը կարելի է անվանել ճանկավոր նիզակ:

2 Մ ո վ ս ս ս Ն ո թ ե ն ա ջ ի, Պատմութիւն, էջ 107:

3 Թ ո վ մ ա Ա թ թ ու ռ ն ի, Պատմութիւն, էջ 201—202:

4 Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ ե ջ ի, Ժամանակագրութիւն, էջ 269:



Նկ. 22. Սուր, Անի:

Հեծելազորի հիմնական զենքը սուրն էր: Զենքի այս հատուկ տեսակը հեծելազորին, նրա արագաշարժությունը հետ միասին, դարձնում էր մի անհարկու ուժ պատերազմի

դաշտում: Սուրբ երկսայրի մի զենք էր, որով հատում-կտրում էին, իսկ ծայրով՝ խոցում¹: երկաթյա մի սուր գոնովել է Անիում՝ Բագրատունիների պալատի նկուղում (նկ. 22): Սրա երկարութունը 0,96 մետր է, լայնքը գաստակի մոտ 9 սմ, իսկ ծայրի մոտ 5 սմ: Հայաստանում առավել տարածված էր հենց այս տիպի ուղղաձիգ, լայն, դեպի ծայրը քիչ նեղացող շեղբով սուրբ: Թշնամու զինվորներին հատելով ոչնչացնելու նույն դերը կատարում էր և թուրը², որը կտրում էր միայն մի կողմից, իսկ մյուս կողմից բուր³ էր լինում:

Միջնադարյան Արևելքում, մասնավորապես արաբական աշխարհում, կարողանում էին բարձրորակ պողպատից սրեր և դաշույններ ձուլել: Արդյոք նման սուրբ նկատի ունենալով չէ՞ որ Շնորհալին ասում է, թե «է սրած վեր հայելի»³:

Գործածակա՞ն էր նաև սուսերը⁴, որը նեղ և երկար շեղբով սուր ծայրով զենք էր, որով խոցում էին թշնամուն: Սրան մոտ էր օվինը, որը լինում էր երկսայրի, բայց գործածվում էր առավել լայն սուր ծայրով խոցելու համար, երբեմն մոտիկ աեղից նետելով⁵:

Մատենագիրները միշտ նշում են, որ այդ զենքերը պողովատիկ էին, փայլատակում էին լույսի տակ, իսկ իշխանավորների սուրն ու սուսերը ունենում էին ոսկեպատ, ախանակապ դաստակ և պատյան:

Ուսհայեցին, օրինակ, խոսում է վասակ Պահլավունու պողովատիկ թրի մասին, որի մի հարվածով քաջ զորավաճը կտրում է իր ախոջանի սաղավարար և գլուխը երկու կես է անում⁶: Այս պողովատիկ սրերը, թրերն

ու սուսերները պատրաստվում էին հատուկ տեխնիկայով, բարձրորակ մետաղից, այն է՝ պողպատից և դրա շնորհիվ է, որ կարողանում էին կտրել թշնամու սաղավարտն ու զրահը:

Սրերով մարտի մի տեսարան պատկերված է Մշո Առաքելոց վանքի փորագիր դռան ճակատին: Այստեղ, ինչպես պեճաք էր սպասել, սուրբ կրողները հեծյալ զինվորներ են:

Հատուկ զենք էր նաև շեճաք: Դվինում գտնված մանգոլաձև, կարող բերանով զեպի դուրս զենքը՝ հավանաբար պատմիչների հիշատակած շերտն է: Սա հետևակի զենք էր հագցված երկար կոթի վրա, որից բանելով զինվորը թշնամուն հարվածում էր երկու ձևերի ուժգնությամբ: Որ շերտը հետևակի զենք էր, երևում է նաև Դվինում գտնված օրինակի կարիչի ցածի կեռաձև հարմարանքից, որով թշնամուն կարելի էր քաշելով վայր զլորել ձիուց:

Գործածական զենքերի թվին էր պատկանում սակրը: Սա թեթև լայնարևրան կացնի աեսք ունեւր. կարիչ բերանը լինում էր մեկ կամ երկու կողմից: Մովսես Խորենացին հիշատակում է կացինը և երկրբրան սակրը²: Սակրը նույնպես հետևակի զենք էր, որը գործածվում էր երկու ձևերով հարվածելով կարելու համար: Սակրը կարող էր նաև մի կողմից ունենալ հատուկ բերան, իսկ մյուս կողմից սրածայր մուրճի նմանոց հավելված կոտուց: Այսպիսի կոցավոր սակր «ըզսակր կոցուտր՝ քարհատաց» հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը Լիտարիտ Օրբելյանի զենքերի թվում:

Ստիրին մոտ էր նաև նրա զերը կատարող, բայց հավանաբար ավելի ծանր վաղրը: Ստեփանոս Օրբելյանի նույն վկայության

¹ Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ջ ի, Պատմութիւն, էջ 33, 36:
² Փ ա վ ս ա ո ս Բ ու Ղ ա ն դ, Պատմութիւն, էջ 209, Ուսհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 14:
³ Ն ե ր ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Բանբ շափու, էջ 582. X: 7703 ձևագրում (էջ 97բ) «է սրած րան զհայելի»:
⁴ Փ ա վ ս ա ո ս Բ ու Ղ ա ն դ, էջ 209, 275: Խ ո Ր Ե ն ա ջ ի, էջ 36:
⁵ Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ջ ի, էջ 107:
⁶ Մ ա տ Թ Խ ո ս Ուսհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 14:

¹ Կ. Ղ ա ֆ ա գ ա Ր Յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 164:
² Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ջ ի, Պատմութիւն, էջ 290: Տե՛ս նաև Փ ա վ ս ա ո ս Բ ու Ղ ա ն դ, էջ 239:


մեջ ասվում է, թի կիպարիտը կախել էր «և զվաղըն ահազին ի ներքոյ բարձիցն իրրև զուռն դարբնաց»¹: Վաղրավորներից կազմվում էին այն ծանրազեն ջոկատները, որոնք հարձակվում էին թշնամու զրահավորված զորքի վրա և կտրատում էին կամ ջարդոտում նրանց զրահները, ոչնչացնում նրանց: Այս տեսակետից բնորոշ է Հովհաննես Դրասխանակերտցու մի վկայությունը: Նա ասում է. «Իսկ յնշանել արուակելին՝ փայլատակունք ի մերկապատեան վաղակաւորացն բազմութենէ հատանէին, և ի սաղաւարտացն, և ի թիկնապահ և ի լանջապահ պղնձի տախտակացն և ի պահպանակացն բարձից և բաղկաց»²:

Հին և միջնադարյան Հայաստանում կաշին սակրավոր և վաղրավոր կամ վաղակավոր հատուկ զորամասեր: Վաղրի կտրիչին հակադիր մասը, հավանաբար, բուլթ և մասսիվ էր, որ Օրբելյանը այն նմանեցնում է դարբնի ծանր մուրճին—ուռնին: Սակրի և վաղրի նման ու նրանց դերը կատարող զենք էր նաև ճիկոր: Ուռհայեցին վկայում է, թի Ապլղարիպ Արծրունին հետապնդելով Հեր քաղաքի ամիրային մինչև քաղաքի դուռը, որից ներս մտնելով ամիրան փակվում է պարսպի մեջ, իր «պողովատ ճկուղն հարկանէր զերկաթի դուռն քաղաքին և պատառեալ զերկաթն և յայն դեհն անցուցանէր, որ և անել մնաց ճկուռն մինչև ցալսօր ժամանակի»³: Ուրեմն ճկուռի բերանը սակրի պես լայն պետք է լիներ, որպեսզի հանել չկարողանային:

Թվարկված բոլոր զենքերն էլ բարձրորակ պողպատից էին պատրաստված կամ զրոփի (զողած) բերան ունեին, որի շնորհիվ և զործածվում էին թշնամու զինվորների

զրահը կտրելու, ապա և նրանց ոչնչացնելու համար:

Իբրև զենք օգտագործել են նաև մուրճը, որով հարված էին հասցնում տխույանի սաղավարտին, ճկելով սաղավարտը, փշրելով նրա գանգը կամ երբեմն սաղավարտը իջնում էր մինչև թշնամու զինվորի աչքերը և այդ եղանակով զրկում էր նրան մարտունակությունից, ուստի հեշտությունը կարելի էր ոչնչացնել նրան սրով, նիզակով կամ այլ զենքով:



Նկ. 23. Դաշույններ, Գառնի, ՊՊԹ:

Անձնական գործածության մշտական զենք էր դաշույնը, որը լինում էր երկսայրի և միասայրի: Հավանաբար միասայրի կեռ երկար դաշույնն էր որ կոչվում էր նրան⁴: Անիում, Դվինում և Գառնիում 9—13-րդ դարերի շերտերից գտնված դաշույնները փոքր են ու միասայրի (Նկ. 23, տխտ. XII բ): Ըստ երևույթին երկսայրի դաշույնները ավելի հին են եղել և բացարձակապես տիրա-

¹ Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Ա Ն, Պատմութիւն տանն Սիսական, էջ 375:

² Հ ո վ հ ա ն ն ե ս Կ ա թ ո ղ ի Կ ո ս Դ ր ա ս ի տ ն ա կ ե ր տ ց ի, Պատմութիւն, էջ 390:

³ Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ Ե ց ի, Ժամանակագրութիւն, էջ 33:

⁴ Փ ա վ ս տ ո ս Բ ու Վ ա ն Կ, էջ 209, 239, 244:

պեւտող էին բրանցի և վաղ երկաթի ժամանակաշրջանում, իսկ հետագայում դաշուջնի շեղրին կայունութուն է արվել և հարմարեցվել է մի կողմով կարելու ֆունկցիային: Պեղումների ժամանակ հայտնաբերված դաշուջններից շատերը այնքան փոքր են, որ նրանց կարելի է շիտթել դանակի շեղրի հետ, բայց նրանք չեն ծաղվել, այլ խրվել են պատյանի մեջ, ինչպես և մեծ դաշուջնները: Ահա այս փոքրիկ դաշուջններն են, որ ազբուրներում կոչվում են դաշնակ կամ դաշունակ¹:

Պատերազմի ժամանակ ռամիկներից հավաքագրվող հեռուստիկ մեծ մասամբ դինված էր լինում վարոցով: Դա հաստագլուխ մահակն էր, որի վրա ամրացված էին լինում դամեր, կամ մետաղից պարաստվում էր վարոցի ծայրի գունդը իր բազմաթիվ սուր ցցվածքներով և հազցվում փայտե կոթի վրա: Ժողովրդին մտաշելի զենքի այս տեսակն է, որ մտել է «Սասնա ծռեր» վեպի մեջ զուրգ կամ լախտ անվամբ:

Ձենքի շատ բազմազան տեսակներ պատկերված են 13—15-րդ դարերի ձեռագրերում, որոնց վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնի միջնադարյան ազգական արվեստի պատմաբանը:

Վահան, զրահ, սաղավաւտ պատրաստելը: Թշնամուն ոչնչացնելու հատու զենքերի կողքին միջնադարյան Հայաստանում շատ տարածված էին նաև անձնական պաշտպանական միջոցները—վահանը, սաղավաւտը և զրահը: Վահանավոր հետևակ զորքերը, հարկ եղած դեպքում խիտ շարքերով կանգնելով, վահանափակ պարիսպ էին կազմում մնացած զորքերին պաշտպանելու համար: Հովհաննես Դրասխանակերտցին Սահակ իշխան Բագրատունու մասին ասում է, թե նա «հրամայէր հետևակամարտ զընդին վահանափակ լինել, որ տեսութիւն իմն

¹ «Հայոց նոր վկաներ», Վաղարշապատ, 1903, էջ 131:

բերէր յինքն որպէս զանպարտելի պարիսպ»¹:

Սաղավաւտը հայերի մոտ ունի սովորական սրածայր կոնի տեսք, ծածկում էր նաև մարտիկի քիթը, իսկ կողքերից և ետևից ունենում էր հարմարանք երկաթե հյուսածո ցանց ամրացնելու համար, որպեսզի ազգմիկի վիզը պաշտպանված լիներ սրի կամ թրի հարվածից:

Զրահը լինում էր տարբեր տեսակի: Տվյալ դեպքում թաղիքե-կաշվե զրահները մեղ չեն հետաքրքրում, քանի որ խոսքը վերաբերում է մետաղադործութանը: Մետաղե զրահը կարող էր պարաստված լինել առանձին մասերից, որոնք իրենց անուններն ունեին՝ րիկնապանակ, լանջապանակ, բազպան (ձեռքերի համար), զանգապան (կոնքերի համար), սունապան (ոտքերի սրբունքների համար), անգամ օլ ոտիցն կամ մոյլ (ոտերին հագնելու համար)²: Կային և ամբողջական զրահներ հագնելու համար, որ կոչվում էին զրահ (բարբառով զրեհ): Եւ զ կամ Եւ զան, ջօրան³:

Այդպիսի զրահի վերաբերյալ խոսվում է Վարդան Այգեկցուն վերագրվող «Աղուէս և զրեհ» առակում: «Աղուէսն էգիտ զրեհ մի և կարծեաց, թէ Ազամայ պատմուծայն է, զոր կորուս. զի գրեալ էր, թէ լուսաւոր էր. և զգեցաւ զնայ յամառնային ժամանակն. և զրեհն ջերմացեալ այրէր զնայ. և զգեցաւ զնայ ի ձմեռնային ժամանակն. և մտէր. և հանեալ կանկեաց զնայ և սկսաւ ջուր արկանել ի նմայ. զի կարծեաց թէ ջրոյ աման է. և ոչ յցաւ ջրով, և բարկացեալ էարկ զնայ ի ծով խորու և ասէ, թէ երթ ի կորուստ. զի կարի անպիտան ևս. ոչ ևս զգեստ ամուսն և ոչ ձմառն և ոչ աման ջրոյ. սալսյ

¹ Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս Դ ր ա ս ի ա ն ա կ ե ր ա յ ի, Պատմութիւն, էջ 390:

² Թ ո վ մ ա Ա թ ժ ր ու ն ի, Պատմութիւն, էջ 220, Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն, էջ 390:

³ Մ ա ա թ Ե ո ս Ու լ ա հ ա յ Ե ի, ժամանակագրութիւն, էջ 426, 12, 47—48, 137:

կարծեմ, թէ փոքր եւս յորովայնամոլ և արբեցող մարդոյ, որ անկուշտ լինի»¹:

Պարզ է, որ այս գրահը մետաղից ամբողջական ձևով էր պատրաստված և լուսավոր էր, այսինքն մետաղից լինելով փայլատալիւմ էր: Աշխատավոր ժողովրդին (այգիւսը, ինչպէս ճիշտ նկատել է ակադ. Հ. Օրբելին, ժողովրդի սիմվոլիկ մարմնացումն է) գրահը բոլորովին էլ պետքական բան չէր՝ ոչ ամուսն զգեստ էր, ոչ ձմուսն և ոչ էլ ջրի աման, այլ անկուշտ մարդու փորի էր նման: Այստեղ նուրբ երգիծանք կա, ուղղված ֆեոդալների սպամամոլութեան և գրահը կրողների դեմ:

Նման ամբողջական գրահ նկատի ունի Ներսես Շնորհալին, երբ գրում է.

«Ի կարուակէ հանճարեղին,
կարեալ կապալ գանձաշելին,
Ձնիւթն ի բարէն կակղացուցին,
Ասեղն սալ էր գարբընին»²:

Զրահները սովորաբար պատրաստվում էին պղնձե ձուլ տախտակներից, կամ երկաթե տերեւաձև սեղմնեռների իրար վրա նստող շերտերից (նկ. 18 դ) — շերտավոր գրահ: Պատրաստվում էր նաև հաստ մետաղե լարից խիտ ցանցի նման հյուսված գրահը, որը կոչվում էր վերտ³: Սա հազնում էին զգեստների վրայից իբրև շապիկ: Վերտը կամ վիրտը և ընդարձակ մետաղե տախտակներից մասեր ունեցող գրահները պատրաստում էին նաև երկաթից: Ուռհայեցիին վասակ Պահլավունու մասին ասում է, թէ «զգեհնոյր զգեստ երկաթապատ...»⁴:

Վերջապէս տեղեկութուն կա, որ ձիերի առավել խոցելի մասերը ևս պատում էին գրահով: Թովմա Արծրունու պահպանած այդ վկայութունը, ճիշտ է, վերաբերում է

Բուղայի գլխավորած արաբական դորքերին, սակայն հեղինակը գրահի առանձին մասերը բուն հայկական տերմիններով թվարկում է այնքան վարժ ու սովորական ձևով, որ չի կարելի կասկածել, որ ձիու տարբեր մասերի այդ գրահները գործածվել են և Հայաստանում: Ահա Թովմայի այդ վկայութունը. «...և զհրիվարսն և զհեծեալս նոցա զինեալ սպառազինօք, շոնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապահս ի շորս կողմանս, ձգեալ և լանջանցն զէն, և բարձավիղ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փոնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ, և զնիս երիվարացն երկաթապատ պնդեալ, այլ և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ զրգեալ ըստ փորոյն շափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցոցանեն»¹:

Զիտ երկաթե մի գիմակալ, ընդելուզված բրոնզե բուսական զարդերով, գտնվել է Աւանա լճում, ավին մոտ ծանծաղ մասում²:

Բազմաթիվ ու բազմատեսակ զենքերի և զրահների արտադրութունը մետաղագործ արհեստավորների բավականաչափ ստվար քանակ էր պահանջում: Դրանց բոլորին մինքս դնում ենք զինագործ կամ սյեհարար արհեստավորների անվան տակ, սակայն 10—13-րդ դարերում հազիվ թէ նրանք բոլորը տեղավորվեին մի արհեստի մեջ: Իհարկի նրանց մեջ ևս աշխատանքի բաժանումը պետք է, որ զգալի չափով խորացած լիներ, համեմայն դեպս հատու զենքեր պատրաստող զինագործները, զրահարարները, նետարարները արդեն միևնույն արհեստավորները չէին և ինքնուրույն ճյուղերի մեջ համախմբված վարպետներ էին: Դրանցից անջատ էին նաև երկաթից կամ այլ մետաղ-

1 Ն. Մ ա ու, Փողովածոյր առակաց վարդանայ, մասն Բ, էջ 95:

2 Մատենադարանի ձեռագիր № 7703, էջ 97ա:

3 Մ ո վ ս հ ս խ ո թ ե ն ա ց ի, Պատմութիւն, էջ 230:

4 Մ ա տ թ ն ո ս Ու ռ հ ա յ ն ց ի, Փամանակագրութիւն, էջ 12:

1 Թ ո վ մ ա Ա թ ծ թ ու ն ի, Պատմութիւն, էջ 220:

2 Զիտ այս գիմակալը վ. Արրահամյանը թյուրիմացաբար համարել է մարդու՝ ուղմիկի գեմքը պաշտպանելու միջոց (տե՛ս «Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.», Երևան, 1956, էջ 83—84:

ներից խիտ ցանցավոր հյուսածո վիրտ պատրաստող վարպետները:

Վերնախավի, մանավանդ թագավորների, թագավորազուներնրի և իշխանների զենքերը մշակվում էին հատուկ խնամքով, իսկ զենքերի դաստակները, պատյանները, ձիերի սարքերը դարդարվում էին ոսկով, արծաթով ու թանկագին քարերով և այդ ամենը արվում էր բարձր արվեստով ու մեծ հմուտությամբ: Ուրեմն, միայն զինագործները չէին կարող սպասարկել զորքերի և իշխանհրամանատարների սպառազինման պահանջները, այդ գործին մասնակից էին դառնում նաև պղնձագործները, ոսկերիչները, ակնագործները, կաշեգործները, թամբագործները, թաղեգործները և այլ արհեստավորներ:

3. ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Պղնձահանքերով հարուստ Հայաստանում պղնձագործության արհեստը զարգացման բազմադարյան տղի անցնելով, առավել բարձր աստիճանի հասավ միջնադարյան քաղաքներում: Պղնձագործները իրեր, առարկաներ պատրաստելու համար դործածում էին ինչպես մարտի պղինձը, նույնպես և նրա ու այլ մետաղների համաձուլվածքները՝ բրոնզը, արուշրը: Նրանք իրենց արտադրանքով սպասարկում էին բնակչության անասնական, կենցաղային պահանջները, այլև հոգում էին եկեղեցական սպասների պահանջը:

Պղնձագործներին արտադրում էին պղնձ կամ բրոնզե ամեն տեսակի ու մեծությամբ կաթսաներ, ջրամաններ, լիասեր, գավաթներ, ափսեներ, կանթիկներ կամ աշտանակներ, պալատներում անուշահոտ խրնկեր ծխելու խնկարաններ, ճրագներ, կողպեքներ, կահույքի պղնձ կամ բրոնզե մասեր, գոտիներ, կանաչի բազմազան զարդեր՝ մանյակ, ապարանջան, ականջոզեր, մատանիներ, ասեղ, քորոց, մատնոց, զարդերի պահպանման համար տուփեր և այլն: Պատ-

րաստվում էին նաև եկեղեցական սպասների բուրվառներ, սկիհներ, ծնծղաներ, մոմակաշներ, մասուեքի տուփեր, խաչեր, ջահեր և բազմաթիվ այլ իրեր ու անոթներ:

Թվարկված իրերի մեծագույն մասի օրինակները հայտնաբերվել են Հայաստանի միջնադարյան քաղաքների, մանավանդ Անիի պեղումների ժամանակ, մյուսները հայտնի են հայ և արար մատենագիրների պահպանած տեղեկություններից: Այսպիսով, պղնձագործները, ինչպես երկաթագործները, գործունեություն լայն ասպարեզ ունեին: Պատահական չէ, որ Անիում պեղված սակավաթիվ արհեստանոցներից մեկը պղնձագործի է պատկանել՝ իսկ գտնված պղնձեղենի թիվը վերին աստիճանի մեծ է: Պղնձե մանր իրերի արտադրության արհեստանոց հայտնաբերվել է նաև Դվինի միջնադարում:

Պղինձը կամ բրոնզը հեշտ ձուլելի և դուրամշակ լինելով, պղնձագործներին ընձեռնում էր մի շարք տեխնիկական հարմարություններ, ինչպես ամեն ձևի ու տեսակի անոթներ և իրեր պատրաստելու, նույնպես և դրանք զարդարելու տեսակետից: Այդ հանդամանքը միաժամանակ թույլ էր տալիս զործադրել պղնձի մշակման տեխնիկական ու տեխնոլոգիական բազմաթիվ եղանակներ, որոնք անհնարին էին երկաթը մշակելիս:

Պղնձից և բրոնզից իրեր պատրաստելու գլխավոր եղանակներն էին կույր, դրվազելը, դրոշմելը և ձուլելը: Դրանց օգնությամբ կարելի էր դեղարվեստորեն մշակված իրեր ստանալ, որոնք լրացուցիչ վերապրվ գարդարվում էին, փորագրվում:

Վե՛րջու եղանակով պղնձագործը պատրաստում էր բոլորովին հարթ իրեր, կամ որևէ իրի առանձին մասերը՝ պղնձի հարթ տախտակից կամ թիթեղից, ապա կորացնելով և պահանջված ձևը տալով, ծայրերը և եզերքները դողում կոցնում էր իրար և ստանում պահանջվող իրը: Կարելի է ասել, որ

1 И. Орбели. Каталог Анийского музея, стр. 107.

պղնձից անոթներ ու առարկաներ պատրաստելու այս եղանակը ամենասովորականը և տարածվածն էր: Ամենօրյա գործածութեան պղնձե կաթսաները, ջրամանները, թասերը և այլ իրեր պատրաստում էին այս եղանակով:

Սովորաբար պղնձե պարզ իրը կամ ավելի բարդ իրի առանձին մասերը, որոնք հարթ էին, դժագրում էին թիթեղի վրա, ապա կտրում մկրատով, վարժ վարպետները առանց գծագրութեան էլ կտրում էին պարզ իրը կամ նրա առանձին մասերը: Եթե իրը պատրաստվում էր ավելի հաստ պղնձե տախտակից, ապա գծագրելով իրը տախտակի վրա, կտրում էին մկրատով կամ պողովատիկ կտրիչի օգնութեամբ; մուրճով հարվածելով կտրիչի գլխին:

Կռելու եղանակով պատրաստված բազմաթիվ իրեր, անոթներ գտնվել են Անիում: Այստեղ, Առաքելոց եկեղեցում, 1909 թ. գտնվել է կռելու եղանակով պատրաստված մի փոքր կաթսա (տխտ. XIII ա), մի թաս առանց զարդերի և բոլորովին հարթ մակերեսով: Մի այլ թաս, որի շուրթերը քիչ ծուծ են դեպի ներս և մի տեղով պահպանվել է շուրթին կպցված անցքավոր ունկը, հավանաբար ունեցել է երեք ունկ թասը կախելու համար², (Թերևս անվարդ բուրվառ է եղել): Հանդիպում են նաև պղնձե ափսեներ³: 1908 թ. գտնվել են մի քանի պղնձե սափորիկների բեկորներ, դրանցից մեկի բազմաճիւստ վիզը առանձին է պատրաստված եղել և կպցվել սափորիկին: 1905 թ. Գագիկի առճարում գտնվել է պղնձե մի բաց ափսեաձև անոթ, հատակին կպցրած երեք ոտքերով. այս անոթի մեջ անուշահոտ նյութեր են այրել⁴:

Անիում հայտնաբերվել են կոածո կաթսաների, թասերի, սափորիկների և այլ իրերի, ինչպես և պղնձե խողովակների բազմա-

թիվ օրինակներ: Կռելու եղանակով են պատրաստված Անիում գտնված մի քանի ջահեր, որոնց մասին կխոսվի իր տեղում: Նույն անխնիկայով է պատրաստված Անիում հայտնաբերված պղնձե խաչերի մի մասը: Գտնվում գտնվել է պղնձե կոածո ճրագ:

Կռելու եղանակով իրեր պատրաստում էին մաքուր պղնձից առանց խառնուրդի, իսկ պղնձը շուտ էր օքսիդանում և փշանում, ուստի նրանից պատրաստված իրեր քիչ են պահպանվել:

Դրվագելու եղանակով իրեր պատրաստում էին պղնձի ավելի բարակ թիթեղից: Դրանք սովորաբար լինում էին դեպի դուրս ունեցիկ կամ շատ ուռուցիկ պատկերներ ունեցող իրեր և անոթներ կամ բոլորաձև սքանափ իրեր, որոնք պատրաստվում էին երկու եղանակով: Բրոնզե, քարե կամ փայտե կաղապարի վրա դնելով պղնձի բարակ թիթեղը մուրճով ծեծում էին, մինչև որ ընդունի կաղապարի ձևը, երբեմն այսպիսի իրը պատրաստում էին երկու փեղկից և իրար միացնում: Այս դեպքում ստացվում էր սնամեջ իր: Մյուս եղանակն այն էր, որ պղնձի թիթեղի վրա զծագրում էին ստացվելիք պատկերը կամ վարդը, ապա թիթեղի ներսի երեսից մուրճի մանր հարվածներով արտաքին երեսին դուրս էին բերում գծագրված պատկերը կամ վարդը: Դրվագած թիթեղներից պատրաստում էին թասեր, մատուցների տուփեր և այլ առարկաներ:

Անիում գտնված պղնձե մի թիթեղի կողքի վրա զրվագումով հանված են ոչ շատ ուռուցիկ ձվաձև պատկերներ¹: Նույն տեխնիկայով են մշակված երկու մոմակալներ կամ ավելի շուտ աշտանակներ, որոնց մոմակալ խողովակի վրա ամրացված է երկու կիսադնդերից և դրանք միացնող գոտուց բաղկացած մի ոչ այնքան խոշոր գունդ²: Վերին կիսագնդի վրա շրջանակների մեջ զրվագված են վարդյակներ, իսկ դոտու

1 И. Орбели, Каталог Анни́ского музея. стр. 68.

2 նույն տեղում, էջ 71:

3 նույն տեղում, 72:

4 նույն տեղում, էջ 70—71:

1 И. Орбели, Каталог Анни́ского музея. стр. 67.

2 նույն տեղում, էջ 86:

վրա, որը գրողոված է խշտակի և խափշակի օգնությունը, ձգվում է շղթայի պես հյուսվող ալիքաձև դժերի երկու շարք, սրոնց միջև անցնում է ուղեֆի կետերով կազմվող գոտի: Գոտու վերևի և ներքևի եզրերն ըրր վարդարված են մանրիկ ուղեֆի կետերից բաղկացած շուրջանակի անցնող գծերով (տխտ. XIII բ): Բ. Ա. Ռիբակովը նշում է, որ առասական մետաղագործները գործադրել են գրվազման երեք ձև՝ ա) նկատներով մանր գրվազում, բ) հարթ գրվազում և գ) ուղեֆի գրվազում¹: Այդ բոլոր ձևերն էլ միջնադարյան Հայաստանի մետաղագործները կիրառել են: Երբեմն գրվազումը դուգակցվում էր փորագրության հետ:

Այս տեխնիկայով է պատրաստված Անիում գտնված մի ջրաման-սափոր: Սրա առանձին մասերը գրվազված են առանձին առանձին, ապա միացված իրար հետ (տխտ. XIII գ): Շուրթի վրա ամրացված է դեպի վեր բարձրացող և աղեղնաձև առաջ թեքվող ծորակ, պատրաստված երկու կտորից. ծորակի ցածի մասը հարթ է և ծածկըված բուսական օրնամենատով: Վիզը պատրաստված է մի կտորից և իր վրա վերին մասում կրում է արաբական երկու բառ, միջին մասում եռանկյունի պատկերներ և ցածի մասում մեանդր: Վիզը ջրամանին միացած է մի ուռուցիկ գոտիով: Ջրամանի փորի վերին մասը պատրաստված է առանձին²: Սրա վերին եզրերի վրայով շուրջանակի անցնում է արաբերեն տրձանագրություն, որ ամանի տիրոջը մաղթում է «և հպրություն, և հաջողություն, և կարողություն, և երջանկություն, և բարեխեղություն»³: Այս տրձանագրության տառերը փորագրված են և լցված երկնագույն մասսայով: Արձանա-

1 Б. А. Рыбаков, Ремесло древней Руси, стр. 281.

2 նման ջրաման գտնվել է նաև Իրանում և թվագրվում է 12-րդ դարով (տե՛ս Ernst Kühnel, Islamische Kleinkunst, Berlin, 1925. S. 142, Abb. 108.

3 И. Орбели. Каталог Ангийского музея, стр. 69.

գրություն տակից անցնում է հարթ գոտի, որից ցած մի ոչ լայն գոտի, որի վրա բուսական օրնամենաների մեջ պատկերված է գաղանների վազք: Գաղանների թվում կան հովազ, առյուծ, վազր, կենդանիներից՝ եղնիկներ և այլն:

Անոթի կենտրոնական մասը պատրաստված է առանձին: Սրա վրա կենտրոնում արված է մի վահան, որի վրա պատկերված է բուսական օրնամենա և երկու եղնիկ վահանի աջից ու ձախից կանգնած հերալդիկ ձևով և գլուխները դեպի ետ ծուած: Ամբողջ կոմպոզիցիան բավականաչափ դինամիկ է և բարձրարվեստ: Այս վահաններից բուսական օրնամենատով կազմված մի ժապավեն անցնում է դեպի աջ և ձախ ու ծայրերին վերջավորվում է մեկական շրջանակով, որոնցից մեկի մեջ պատկերված է հինգ բաղ, մյուսի մեջ՝ հինգ կենդանի կամ գաղան: Ջրամանի փորի ներքևի մասը առանձին է պատրաստված և իր վրա սնի երկու հյուսածո գոտի: Հատակը, ինչպես և լայն կանթը առանձին կտորից են պատրաստել և կայքեր:

Դրոշմագարդելու եղանակը նույնպես կիրառվել է պղնձագործության մեջ: Դրոշմելու համար գործածում էին կամ մետաղե հարթ գրոշմը, որի վրա գնելով պղնձի թերթը, վրայից՝ արձիձ, մուրձի հարվածով ալյ թերթի վրա տպում էին գրոշմի վրայի զարդը և կամ գրոշմը լինում էր ձողաձև նկատի ծայրին և գնելով զարդավոր ծայրը պղնձե թերթի վրա, մյուս ծայրին հարվածում էին մուրձով և գրոշմը տպում թիթեղի վրա: Այս տեխնիկան, իհարկե, ավելի բնորոշ է ասիերչության համար, սակայն գործադրվել է նաև պղնձագործության մեջ:

Վերևում նկարագրվեց մի մոմակալ-կանթեղ, որը պատրաստված է գրվազման եղանակով և լրացուցիչ կերպով զարդարված խշտակի և խափշակի օղնությունով: Նույն վարպետի ձեռքով և նույն գործիքներով է պատրաստված նաև Անիում գտնված մյուս մոմակալ-կանթեղը:

Անիում և Անբերդում դանված են մի քանի կախովի կանթեղներ, որոնց համարյա քնդաձև փորի վրա արված է դրոշմազարդ բուսական օրնամենտ: Այս անոթները պատրաստված են տուանձին թիթեղներից և կըղցրված իրար: Առանձին թիթեղից է կաղմված կանթեղի վիզը՝ դեպի դուրս լայնացող պտակով, մի այլ թիթեղից պատրաստված է համարյա գնդաձև դրոշմազարդ փորը, երրորդ թիթեղը միացված է փորի ներքևի մասից և ունի ճիշտ վզի տեսքը, միայն լայնացող մասով դեպի ցած է դրված և զրան ամրացված է շորորդ թիթեղը, որը ծառայում է իբրև հատակ: Այս ձևի կանթեղները, որոնք պատրաստվում էին նաև ձուլելու եղանակով, շատ տարածված են եղել և 12—14-րդ դարերի ձեռագրերի մանրանկարներում հաճախ են պատկերված՝ շենքերի կամարաձև տառադներին լարերով կամ շղթայով կախված վիճակում¹: Անիում դրոշմված և Պետական պատմական թանգարանում պահվող երկու այգուխի կանթեղներից մեկը (№ 1314) ունի 15,5 սմ բարձրություն և 10,2 սմ բերանի բացվածք, վրան արված է ռճավորված բուսական օրնամենտ, որը տերևալիսաձև անընդհատ ճյուղի տեսքով դաստորում է անոթը: Դրոշմազարդը շատ էլ սրուշ չէ, թեև լրացուցիչ կերպով մշակված է փորագրությամբ:

Դրոշմազարդեր դրված են նաև խաչերի, մասունքի տուփերի և այլ իրերի վրա: Անիում դրոշմվել են դրոշմազարդ պղնձե կոճակներ, մատանիներ և այլ մանր իրեր²:

Զուլման եղանակը պղնձագործության մեջ գործադրվող շատ տարածված եղանակներից մեկն էր: Պեղումների ժամանակ հայտնաբերված պղնձեղեն իրերի մեծագույն

¹ Իրանում և Եգիպտոսում նման ծխարան կանթեղներ հանդիպում են ամրացված իրար հետ և գրված և ոտտանի պատվանդանի վրա (ան՝ս A Survey of Persian Art, vol. VI pl. 1263 D, նաև Ernst Kühnel Islamische Kleinkunst, Berlin, 1925. S. 140.

² И. О р б е л и. Каталог Анийского музея, стр. 107.

մասը ձուլածո է: Դա բնական է, քանի որ դրանք, սովորաբար, ոչ թե մաքուր պղնձից են, այլ բրոնզից, որը լավ է պահպանվում: Անգամ զուտ պղնձից ձուլված իրերը ավելի լավ են պահպանվել, քան դրվագվածները, որովհետև ավելի մասսիվ են լինում:

Միջնադարյան Հայաստանի քաղաքների արհեստավորները ձուլել են ամեն տեսակի իրեր՝ սկսած բրոնզե ասեղներից ու քորոցներից, մինչև հսկայական մեծություն կաթսաներն ու դանդերը, սկսած ամենապարզ իրերից մինչև բարդ քանդակավոր և ծավալային արձանի տեսք ունեցող իրերը:

Պղնձե կամ բրոնզե իրեր ձուլելը, որ կատարվում էր կաղապարի օգնությամբ, հնագույն ժամանակներից ի վեր շատ տարածված և սովորական տեխնիկա էր, որը մինչև միջին դարերը հասնելը, ավելի բաների հարկադարձաբար ուղի էր անցել: Բնական է, որ դրականության մեջ էլ կաղապարով ձուլելը կոանով կռելու հետ միասին հիշատակվում է իբրև շատ հայտնի երևույթ: Մատենադարանի մի ձեռագրում կարդում ենք. «որպէս պղնձեղէնն ի հուր հալեալ և թափեալ ի կաղապար ինչ՝ կերպարանի և ձև առնու: Զնոյնն և ցեղ մի այլ պղնձեղէն ծեծեալ կոանովն առանց հալելոյ զնոյն կերպն և զձեն առնու»¹: Իսկ Ներսես Շնորհալիս կաղապարի մասին գրում է.

«Կամ կաղապար հրահալեաց՝

Որ զբնութիւնն ոչ տայ ինքեանց,

Միայն զձեքս քանդակեալ

Նւ քանդակա ենթակայեալ»²:

Բացի կաղապար հայկական տարածված տերմինից, հայ վարպետները գործածել են նաև դարձնակ տերմինը, որը եկել է պարսկա-արաբական աշխարհից: «Ոչ կոանա կոփելով ձևացոյց զօձն, այլ հրով հալեալ արկ ի դարձնակ զի ձևացի անտի ի նմանութիւն օձին» — ասված է մի գրվածքում³:

¹ Մատենադարանի ձեռագիր № 2527, էջ 11ա, բ:

² Ն ե ռ ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Բանք չափաւ, էջ 177:

³ Ն շ Թ, դարձնակ բարբ:

Անիում հայանաբերված պղնձեղենի շատ նմուշներ այժմ պահվում են Պետական պատմական թանգարանում: Դրանք ձուլված են մեծ մասամբ փայտե մոդելից հանած կաղապարով: Կան և այլ եղանակով ձուլվածներ:

Ամենապարզ կաղապար պատրաստվում էր քարից կամ կավից, որի վրա փորագրված էին այն իրերը, որոնք պետք է ձուլվեին: Ապա ձուլ պղինձը կամ բրոնզը լցնում էին այդ կաղապարի մեջ և ստանում պահանջվող ստարկան: Այսպիսի միափեղկ կաղապարների մեջ է թափված, օրինակ, պղնձե խաչերի զգալի մասը: Զուգածո խաչերի թևերը ունենում են դնդիկներ, կամ սովորական եռարդրոջը (10—13-րդ դդ.). բացի այդ, նրանցից շատերը վարդաբլուրի են լինում տարածված մի զարդով՝ շրջագծերով, որոնց կենտրոնում կետ է դրված, իսկ ելերքները ունենում են նուրբ հյուսվածքածեղ զարդ: Խաչերի բազմաթիվ օրինակներ կան, որոնք ձուլումից հետո զարդարված են փորագրի օրնամենաով, նաև սրբապատկերներով, կամ նրանց վրա փակցված են մետաղե բազուկ կամ քառանկյունի բներ, խանկադին քարեր պուրպանելու համար. երբևէն էլ լրացուցիչ զարդարման այս երկու եղանակները կիրառված են միաժամանակ միևնույն իրի վրա: Խոշոր բները օգտագործվել են նաև մասունքներ պահելու համար: Քիչ շեն այնպիսի խաչերը, որոնք կրկնակի պատեր ունեն և գործածվել են միաժամանակ իրրև խաչ և իրրև մասունքի տուփ:

Ավելի բարդ կամ տարողութուն ունեցող իրերի ձուլումը կատարվում էր մոդելի օգնությամբ, որը կարող էր լինել կավից, փայտից և մոմից: Փայտից կամ կավից պատրաստված մոդելը ներկայացնում է ձուլվելիք իրի օրինակը, որից պատրաստում էին կավե կամ գիպսե կաղապարը, փայտե մոդելը հետացնում էին և կաղապարի մեջ ձուլում նրա օրինակը:

¹ И. Орбели, Каталог Анийского музея, стр. 91.

Մոմե մոդելը գործածվում էր ավելի բարդ և նուրբ իրերի ու զարդերի պատրաստման համար: Այս դեպքում վերցնում էին հատուկ կավ, որին խառնում էին ավաղ սև փոքր քանակությամբ ձյուլ՝ ստացվում էր փխրուն, բայց իրար կաշող մասսա. սրանից պատրաստում էին ձուլվելիք իրը, ամբայցնում մի ձողի (ոտքի վրա), ապա պատում մոմի շերտով՝ պահանջվող թանձրությամբ: Մոմի երևան կարելի էր անել ուղածըղ ամենանրբին քանակը, փորագրությունը, որից հետո մոմաշերտը պատում էին լավ մշակած կավով և շրթացնում: Մինչև մետաղը լցնելը կաղապարը տաքացնում էին և հաշված մոմը կաղապարի վրա թողնված անցքից հեռացնում: Կաղապարի վերևից թողնում էին երկու անցք՝ մեկը ձուլված մետաղը լցնելու համար, իսկ մյուսից դուրս էր դալիս օդը: Կցված մետաղը բռնում էր մոմի տեղը: Սառչելուց հետո ձուլված իրը հանելու համար սովորաբար պետք էր լինում կավե կաղապարը ջարդել, հեռացնել: Ներսի կավե մոդելի տաքը նույնպես պետք էր հեռացնել, իսկ նրա բռնած տեղում անցք էր մնում (ասենք սալուրի կամ այլ անոթի բերանը, որտեղ և հարմարեցվում էր ոտքը) և այս անցքից որևէ ձողով քանդելով հեռացվում էր ձուլված իրի մեջ մնացած փուխը մասսան: Մոմե մոդելով և նրա վրա պատրաստված կավե կաղապարով սովորաբար կարելի էր ձուլել միայն մի իր, ուստի այս եղանակը, որը Հայաստանում հայտնի էր գեոևս բրոնզի դարից և ուրարտական ժամանակներից, միջին դարերում մեծ գործադրություն չգտավ, շատ աշխատանք պահանջելու և թանկ նստելու պատճառով:

Մոմե մոդելով է պատրաստված Անիում գտնված մի բրոնզե ջրաման, որը համարյա գնդաձև է (տխա. XIV ա), քիչ երկարով, դեպի ցած փոքր ինչ նեղացող, ունի երեք կարճ ոտքեր նմանեցրած փղի ոտքերին, գեղեցիկ կոր ծորակ, նեղ վիզ և լայն կանխ, որի վերևում վեր ցցվող տերևաձև հավելված

կա¹: Ջրամանը բուլբուլին հարթ է, անպարզ, բարձրությունը է 26 սմ: Մոմե կաղապարով ձուլված առարկայի սքանչելի օրինակ է Շիրվանում (Ադրբեջան) 1206 թ. պատրաստված ջրամանը, որը ներկայացնում է կավի սնամեջ արձան՝ ծծող հորթով² (ախտ. XIV բ): Նույն տեխնիկայով է պատրաստված 12-րդ դարի մի խնկարան, որը հովազի տեսք ունի:

Անիից ծագող մի աշտանակի հենակը ունի ձուլածո ոտքեր և դժադիր վարդեր: Դա երեք ոտքերի վրա հենվող մի կիսաշրջան է ուռուցիկ մասով դեպի վերև և ունի վիզ, որի վրա ամրացվում էր աշտանակը: Այդ հենակի բարձրությունը 18 սանտիմետր է, տրամագիծը լայն մասում՝ 25 սմ, դեպի դուրս փռվող եզրին վերին մասի գոտու վրա և վզին կան ոճավորված բուռական օրնամենաներ, քուֆի դրություն հետ զուգակցված, եզրերին և վերջին մասի գոտու միջև ընկնող հարթություն վրա հատ հատ արված են բուռական տերևներ, վարդակներ և ծաղիկներ: Անիում գտնվել է նման մի այլ հենակ ևս:

Մոմե մոդելով հանած կաղապարը որոշ դեպքերում կարելի էր պահպանել և նրանով իրեր ձուլել մեկից ավելի անգամ, սակայն միայն պարզ իրեր: Այս դեպքում կաղապարը բազկացած էր լինում երկու կամ ավելի փեղկերից: Մոմե մոդելի օգտագործումը բնորոշ էր պատվերով կատարվող անհատական արտադրության համար, իսկ երբ քաղաքները վարդացան և պահանջվում էր արտադրել շուկայի համար, այլևս մոմե մոդելով իրեր համարյա թե չէին ձուլում:

Միջնադարյան Հայաստանի քաղաքներում ձուլված բարդ իրերը քիչ բացառությամբ պատրաստվել են կավե կամ փայտե

մոդելի օգնությամբ, որոնցից հանվող կաղապարը սովորաբար բազկացած է լինում մի քանի մասից: Փայտե կամ կավե մոդելի օգնությամբ հանված կաղապարով իրը ձուլել կարելի էր բազմիցս:

Նման կաղապարների մեջ ձուլված իրերի թիվը մեծ է եղել: Դրանց բազմաթիվ օրինակներ գտնվել են Անիում: Ստորև բերում ենք մի քանիսի նկարագիրը:

Պղնձե պնակ (ՊՊԹ, № 1336). բարձրությունը 7 սմ, բերանի բացվածքի տրամագիծը 20,5 սմ, համարյա ուղղահայաց պատերով, հատակը քիչ ինչ կոնաձև, դրսից բուլբուլին հարթ, իսկ ներսից կրկնագիծ շրջանակներով կալմվող շորս գոտի ունի:

Բրոնզե ափսե. ունի երեք կարճ ոտքեր, ներսից հատակին ուղտի կամ այլ կենդանու պատկեր¹, շուրջը հայերեն արձանագրություն, սակայն անընթեռնելի, դեպի դուրս ծավող շուրթի եզերքը ալիքաձև է, ինքը շուրթը բաժանված է 20 հատ 3/4 շրջանաձև պսակաթերթի, որոնց ծայրերը կազմում են ալիքաձև եզերքի քսան աղեղները, սրանք իրարից բաժանված են մեկական սրածայր տերևով (ախտ. XV ա): Պսակաթերթերի վրա կան շրջանակների մեջ առնված վարդեր, ընդամենը տաս տեսակի վարդ, այն է՝ խաչ, թևերի արանքում, կոկոններ, մանրիկ շրջանակներ՝ կենտրոնում ռելեֆ մակերեսով, պտղաբերած ծառ (ոճավորված), վարդյակ ութ պսակաթերթով, բուռական օրնամենու սրտաձև կոկոնով, սուր ծայրով դեպի ցած, ծաղկի քնարաձև կտրվածք՝ մեջը վարսանդը, թռչուն, գլուխը ծռած դեպի ետ, իսկ երկար պոչը տարած դեպի գլուխը, երկու այլ թռչուններ: Այս ափսեի վարդերը շատ նմանություններ ունենին հայկական վարդարվեստում 10—11-րդ դդ. ճարտարապետության, մանրանկարներում ու խեցեգործության մեջ հանդիպող պատկերների հետ: Մեղ թվում է,

¹ И. Орбели, Каталог Ангийского музея, стр. 68.

² М. М. Дьяконов, Ширванский водолей 1206 г. (Памятники эпохи Руставели, стр. 249).

¹ И. Орбели, Бронзовая курильница XII в. в виде барса (Памятники эпохи Руставели, стр. 297).

որ շուրթի զարդերը զրված են ձուլելուց հետո գրոշմելու եղանակով: Գտնվել են նաև բրոնզե ձուլածո ճրագներ (տխտ, XV բ):

Այս սովորական տիպի կաղապարով են ձուլված նաև Անիի կանթեղներն ու բուրվառները: Կանթեղներից մեկը (ՊՊԹ, №1316) գտնվել է Գազիկի տաճարում 1905 թ. ունի 10 սմ բարձրություն, բերանի բացվածքը 11,5 սմ է: Կանթեղը համարյա դնդաձև է, ունեցել է երեք ունկ կախելու համար և երեք փոքր ունկեր առաջինների միջև, սակայն առանց անցքի (տխտ, XVI): Կանթեղի վրա բարձր ունկի պատկերներ կան ավետարանից, այն է՝ Քրիստոսի ծնունդը, մկրտությունը, խաչելությունը և հարությունը: Պատկերները կտպիա են. գործին շեն օգնել նաև նրանց զգեստների վրա մետաղե զրնով արված գծիկները: Հատակի վրա դրսից սեղևի կերպով պատկերված է տիրամայրը, կամ Քրիստոսը գահաձգքի վրա¹:

Մի այլ կանթեղ (ՊՊԹ, № 1265) ճիշտ նույն շափերի և նույն ձևի է, բայց ունի պատկերներն արված են բարձր արվեստով: Այս կանթեղի վրա պատկերված են Քրիստոսի ծնունդն ու մկրտությունը, Մարիամը, գինվորներ, կանաչք, հրեշտակներ: Կանաչք պատկերված են տեղական շատ հետաքրքիր տարազով՝ սրածայր գլխարկներով, սրածայր կոշիկներով, ծնկներից ներքև երևում են կանանց վարտիկների փողերը, որը նույնպես բնորոշ է տեղական տարազի համար (տխտ, XVIII բ): Կանթեղի եզերքին զրնով փորագրված է բուսական օրնամենտ, իսկ հատակին դրսից պատկերված է Քրիստոսը գավազանը ձեռքին, շուրջը ունի բուսական օրնամենտ: Կան կանթեղների ուրիշ օրինակներ ևս:

Ճիշտ այս կանթեղների նման են, բայց նրանից մի քանի անգամ փոքր՝ բուրվառները, որոնք ձուլման և զարգարման տեխնիկայով ոչնչով չեն տարբերվում կանթեղներից: Գազիկի եկեղեցու մեջ է գտնվել

բուրվառներից մեկը (ՊՊԹ, № 1321, տխտ, XVII ա), սրա վրա պահպանվել են երեք ունկերին անցկացրած շղթաները, որոնցից մեկի վրա ամրացված է մի բրոնզե բոժոժ: Ինքնուրունկ պատկերները (ավետում, ծրնունդ, մկրտություն և խաչելություն, իսկ հատակին՝ տիրամայրը գահաձգքի վրա) արվեստով վերևում նկարագրված կանթեղների համեմատությամբ միջին տեղ են գրավում: Եզերքներին փորագրված է ոչ խոր բուսական օրնամենտ¹: Կան բուրվառների այլ օրինակներ ևս:

Բրոնզից և պղնձից ձուլել են ամեն տեսակի իրեր, որոնք մեկ առ մեկ թվելն անհրենարին է: Հաճախ դրանք կատարված են բարձր արվեստով: Անիում՝ Գազիկի տաճարում և Աշոտի պատերի մոտի մի սենյակում գտնվել են ինչ որ իրի ոտքեր, որոնք վերելվում տանն կատվի նմանող կենդանու մարմնի կեսը և գլուխը²: Քաղաքի տարբեր մասերում միևնույն կաղապարով ձուլած այս իրերի գտնվելը խոսում է ոչ թե անհատական պատվերով, այլ շուկայի համար, նույն կաղապարով բազմապատիկ անգամ կառարվող արտադրության օգտին:

Անեցիների գեղագիտական ճաշակն իր արտահայտությունն է գտել նաև սովորական գործածության մանր իրերի ձևավորման մեջ: Օրինակ, բրոնզից ձուլված են քուրոցներ, որոնց ծայրերը վերջավորվում են թռչունների և այլ կենդանիների պատկերներով: Շատ են գտնվել ասեղներ, սանդերքի մատեր, շյուղեր, թելը կոկիլու հիշուներ, կոճակներ և այլ իրեր:

Մեծ է բրոնզե ձուլածո բոժոժների թիվը: Բրոնզից ձուլել են նաև կնիքներ: Այդպիսի կնիքներ ունենին քաղաքի պաշտոնյաները, մասնավորապես տամղադարները, նաև կուղապատերները, պահեստատերերը և ուրիշները: Անիում գտնվել է մի շրջանաձև

¹ И. Орбели, Каталог Анниского музея, стр. 84.

² նույն տեղում, էջ 69—70:

¹ И. Орбели, Каталог Анниского музея, стр. 85.

կնիք, որով հավանաբար կուզապահները կամ պահեստներն էին կնքում¹:

Բրոնզե և պղնձե իրեր գտնվել են նաև Դվինում. օրինակ՝ ձուլածո առյուծաձև կաճիկերով կաթնաս, հավանքի դաստակ, փաքրիկ ձևավոր թաս, որը մինիատյուր ձևով կրկնում է խաչաձև եղերք սենեցող կաթնասների տիպը, խնկարանի վերին մասը, բանալի, կոճակներ, բոժոժիկներ, գլալներ, սպարանջաններ, մատանիներ, ախանջի օղեր և այլն²: Սրանք մեծ մասամբ ձուլածո են:

Բնակչության, մասնավորապես վերնախավի կենցաղում, անտեսակիան զանազան նպատակների համար, ինչպես և արճևատավորների մոտ լայն զործադրություն ունեին մետաղե հավանքները: Դրանք ձուլվում էին բրոնզից և ունենում էին տարբեր մեծություն. կարող էին անպարզ կամ շքեղ զարդարված լինել: Երկու բարձրարվեստ հավանք 1936 թ. ախաղ. Հ. Օրբելու գլխավորած պեղումների ժամանակ գտնվել է Պահլավունիների պլյակ Անբերդում, որը սերտորեն կապված էր Անիի հետ: Հավանքներից մեկը զարդարված է եղան գլխով, որի ճիշտ նըմանը գտնվել է միջնադարյան Խերամեխում: Մյուսը՝ ձուլումից հետո շքեղորեն զարդարված է գրիչով կատարված փորագրություն: Այս հավանքի վրայի փորագիր զարդերը շատ բնորոշ են 12-րդ դարի հայկական և այսպես կոչված «սելջուկյան» արվեստի համար: Հավանքը բազմանիստ է: Նրա 12 նիստերից յուրաքանչյուրի վրա փորագրված է բարդ բուսական օրնամենտ, որը սովորական է այդ էպոխայի քարե կառուցվածքների քանդակազարդման համար: Նիստերից յուրաքանչյուրի ցածի մասում քանդակված է որևէ գազան և բոլորը միասին կազմում են գազանների վաղը ներկայացնող գոտի, իսկ վերևում փորագրված է արարերին արձանագրություն, որը փաս-

տորեն մեկ ու կես բառի վեց անգամ կատարված կրկնությունն է, զուրկ որևէ իմաստից և ակնհայտորեն քանդակված է արաբերեն շիմացող վարպետի ձևորով իբրև զարդ: Հավանքի վերին եղերքով անցնում է հյուսածո ժապավեն, որի վրա շորս տեղով կտոր շրջանի մեջ խաչ է փորագրված³:

Անբերդում գտնվել են բրոնզե ձուլածո այլ իրեր, դրանց թվում երեք ոտքերի վրա կանգնող մի մինիատյուր կաթնաս կամ թաս, նման Դվինի թասին: Դրանք հավանաբար գործածվել են զեղադործության մեջ: Ավելի ուշագրավ են Անբերդի բաղնիքում գտնված բրոնզե կարճ խողովակները, որոնց վրա հավանաբար միացվում էին բաղնիքի նույնպես բրոնզից պատրաստված ծորակները⁴, իսկ ջուրը զեպի ծորակները գալիս էր երկաթե խողովակների միջով:

10-րդ դարում Հայաստանի պղնձագործները սկսում են ձուլել մեծ զանգեռ: Մինչ այդ, զանգերն օգտագործվում էին առավելապես իբրև ուղտերի և այլ կենդանիների վզից կախվող զարդ-համայլի, քիչ էին արտադրվում և ունենում էին փոքր չափսեր: Իսկ սկսած 10-րդ դարից զանգեր դրվեցին եկեղեցիներում և փողոցից փողոց անցնելով ու կոշնակներով բնակչությանը եկեղեցի հրավիրելու կարգը փոխարինվեց նույն բանը մեծ զանգի հետև տարածվող զոզանջով անելու կարգով:

Գրիգոր Նարեկացուն վերագրվող մի տողում, որը տաճարաշինության գովք է, հիշատակվում են կառուցված տաճարի վրա դրված զանգերը, իսկ Ներսես Շնորհալու ժամանակ եկեղեցու զանգերը սովորական երևույթ էին, որոնց և նա նվիրել է իր հանելուկներից մեկը:

Դժբախտաբար մեզ տեղեկություններ չեն հասել, թե ինչ մեծություն զանգեր էին ձուլվում: 19-րդ դարի վերջին Հաղարծի-


¹ И. Орбели, Каталог Ангийского музея, стр. 114.

² Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 165:

³ И. Орбели, Бани и скоморох XII в (Памятники эпохи Руставели, стр. 165—166).

⁴ Նույն տեղում, էջ 166:

նում գտնված մեծ կախաչի հետ միասին եղել է և մի զանգ 33 կիլոգրամ քաշով¹: Անիի համար բնորոշ օրնամենաներով զարդարված մի զանգ 40 կիլոգրամ քաշով եղել է Փոթի-Քուվաչիսի նահանգում, որի լու-



նկ. 21. Բրնձեղ զանգ, Անիի համար բնորոշ զարդերով սանկարը սաանալով հրատարակել է ակադեմիկոս Հ. Օրբելիճ:² 1910 թ. (նկ. 24): Այնուամենայնիվ կարելի է ասել, որ այնպիսի խոշոր զանգեր, որպիսիք ձուլվում էին Մոսկվայում ու Պսկովում 15—16-րդ դարերում (100—500 փթանոց)¹, Հայաստանում չեն ձուլվել:

¹ Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 369:

² И. Орбелин, Колокол с аниийскими орнаментальными мотивами XII—XIII века. ЗВО, том XX. отд. оттиск, стр. 1—17.

Քաղաքներում զանգերը, հավանաբար, օգտագործվել են նաև օրվա ժամերը ազդարարելու համար: Այս դեպքում նրանք, ինչպես երևում է կողմնակի վկայություններից, կախվում էին քաղաքի պարսպի վրա, կամ սրևէ բարձր աշտարակից և հատուկ մարդիկ արևի ժամացույցի ցուցումների համաձայն ժամ առ ժամ հնչեցնում էին զանգերը, ազդարարելով ժամանակը: Շնորհալու վերևում հիշատակված հանելուկում ասվում է՝

«Երկու եղբարք միմեանց նման,
Որք են շարեալ ի մի գերան,
Երբ զմահապարտ են ի կախման,
Ժամ է ի ժամ զազազակ բառնան»²:

Գծվոր թե այս վկայությունը կարելի լինի հասնակալ այն իմաստով, որ զանգերը միայն եկեղեցու արարողություն ժամերն էին իմաց տալիս: Քաղաքներում օրվա ժամերը ազդարարելու մասին այլ վկայությունները նկատի ունենալով, զանգերի ժամն ի ժամ ազդողակ բառնալը, ինչպես բնագիրն էլ է այդ բանը թույլ տալիս, պետք է հասկանալ օրվա ժամերը հնչեցնելը, մանավանդ քաղաքներում դրա պահանջը զբացվում էր քաղաքի դարպասների և շուկայի բացման ու փակման, արհեստավորների կուղտակների բացման, աշխատանքի սկիզբը, ինչպես և բանթողի ժամը ազդարարելու համար:

Մեծ թվով եկեղեցիների, առևտրական կարավանների և քաղաքների այլ պետքերի համար զանգեր պատրաստելու գործով պետք է որ զբաղված լինեին որոշ թվով պղնձագործ արհեստավորներ:

Հայաստանի պղնձագործները ձուլել են նաև խոշոր կաթսաներ: Ինչպես վերևում ասվեց, պղնձագործները պղնձի հարթ թիթեղից կռելու եղանակով պատրաստում էին կաթսայի առանձին մասերը ապա միաց-

¹ Сб'ю В. А. Богусевич, Литейный мастер Михаил Андреев, Новгородский исторический сборник, вып. II, стр. 87, 94.

² Մատենագրության ձեռագիր № 6045, էջ 190ա:

նում իրար, սակայն նույն եղանակով, բրոնզե կաթսաներ պատրաստել չէր կարելի: Վերջիններս ձուլվում էին փայտից, կամ կավից պատրաստված հատուկ մոդելից հանած կաղապարի մեջ և պահանջում էին մեծ վարպետություն, մանավանդ, նրանցից շատերը ունենում էին զարդեր, ձևավորված շուրթեր ու ոտքեր և ամբողջական ծավալային արձան ներկայացնող կանթեր:

Հայաստանը, Վրաստանը և Ադվանքը ունեցել են զարդացած կաթսայադրժուկյուն և ամեն երկիր ուներ կաթսայի՝ իր մշակած ձևը: Ուշագրավ է, որ Դադասանում պահպանվել են կաթսաների հին օրինակներ և տեղական բնակիչները, ինչպես նրջում է ակադ. Հ. Օրբելին, կաթսաների առանձին տիպերին տվել են «շիրվան-էշըկ» (շիրվանական կաթսա), «խաչ-էշըկ» (հայկական խաչ բառից) և «գյուրջի-էշըկ» (վրացական կաթսա) անունները¹: Խաչաձև են կոչվել կաթսաները այն պատճառով, որ նրանց շուրթերը չորս կողմից, բավականաչափ լայն շերտով դուրս էին բնկնում և կաթսայի բերանի փուլածքին տալիս էին խաչի տեսք: Այս խաչաձև կաթսաները արտադրվել են ոչ միայն Հայաստանում, այլև Ադվանքում, հնարավոր է նաև Վրաստանում: Խաչ բառը, որը հայերենից անցել է վրացերենին, ազդերբեջաներենին, պարսկերենին, քրդերենին, չի կարող կաթսաների միայն հայկական ծագման ապացույց լինել: Անդրկովկասի երեք ժողովուրդների դարավոր հարևանությունը, շփումները, բարեկամությունը և դաշինքը իրենց բարերար ազդեցությունն են սնուցել նաև նրանց կուլտուրական փոխադարձ շփումների դրժում և նպաստել են այս երեք ժողովուրդներին իրենց սեփական կուլտուրաները կերտելու մեջ ընթանալ համաբայլ և շոշափման շատ կետեր են առաջացրել նրանց ինքնուրույն, բայց և իրարից ոչ մի

պատնեշով շանջատված կուլտուրաների միջև:

Խաչաձև կաթսաների երկու տիպեր են կոչվել՝ մեկը բաց, կիսազնդից քիչ պակաս կաթսան, որի եզերքի խաչի թևերից մեկի կենտրոնում արված է լինում կտուցը՝ հեղուկը դատարկելու համար, իսկ մյուսը՝ ավելի փակ, գնդի մոտ 3/4 մասը կազմող կաթսան, որը կտուց չի ունենում: Երկու տիպերն էլ ունենում են երեք ոտք:

Բաց տիպի կաթսաները, ինչպես նշում է ակադ. Հ. Օրբելին, միշտ միաձուլյ են, իսկ փակ տիպի կաթսաներից հնագույններից մասն է միայն միաձուլյ, իսկ վերի նեղացող մասը շուրթերի և կանթերի հետ միասին ձուլվում էին առանձին և ապա միացվում: Ավելի ուշ ժամանակի փակ կաթսաները սովորաբար միաձուլյ են լինում:

Փակ տիպի մի հսկայական կաթսա 19-րդ դ. վերջին դաճվել է Հադարծին վանքի սեղանատան պատի տակ: Դա Կովկասում դաճված կաթսաներից ամենամեծն է և կըշռում է մոտ 350 կիլոգրամ (տխտ. XVII): Նրա եզերքի ետ ծոված շուրթի վրա շուրջանակի զետեղված է հեռեկալ հայերեն արձանագրությունը:

Ի. ք. ՈՁԱ. Ես Զոսիմա Բահա մեղապարտ անձամբ ստացա զՌքս յարդեանց իմոց. մխարանես էտուն ինձ ի տարին .Ա. Ժամ զորգա զաւրավար տաւնին²,

Կաթսան ռնի չորս կանթ, որոնք ներկայացնում են առյուծի փոքր, բայց ամբողջական արձաններ, որոնց համար հավանաբար պատրաստված են եղել առանձին կաղապարներ և ձուլելիս դրվել են կաթսայի կաղապարի վրա: Ոտքերը ձևավորված են, սսես կոշիկ հագած լինեն և վերևում ազդեանաձև ճյուղ տարով միանում են կաթսայի հիմքին երկու տեղով. այդ արված է, իհար-

¹ И. Орбели, Албанские рельефы и бронзовые котлы XII—XIII вв. (Памятники эпохи Руставели, стр. 307).

¹ И. Орбели, Албанские рельефы и бронзовые котлы XII—XIII вв. (Памятники эпохи Руставели, стр. 308—309).

² Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 369:

կէ, ոչ այնքան դեղեցկութեան, որքան զի-
մացկունութեան համար:

Արձանագրութեանց երեսն է, որ կաթ-
ուան ձուլված է 1232 թվականին Զոսիմա
քահանայի պատվերով, իսկ թե ով է եղել
այս նշանավոր կաթսան ձուլող վարպետը,
Հաղարծնի վանքում է այն ձուլվել, թե՛ այլ
տեղում, դժբախտաբար մեզ հայտնի չէ:
Բայց հայտնի է, որ այդպիսի խոշոր կաթ-
սաները եղակի շէն եղել, նրանք օգտագործ-
վել են վանքերում, միաբանութեան ընդհա-
նուր ճաշը պատրաստելու համար, արհես-
տագործութեան մեջ, այլև գրվել են բազ-
նիքներում ջուր տարացնելու համար: Նման
մի մեծ կաթսա, օրինակ, գրված է եղել Ան-
րիբդի բաղնիքում¹:

Բրոնզից, իհարկէ, ձուլել են նաև փոքր
և պակաս շքեղ, նույնիսկ բոլորովին ան-
զարդ կաթսաներ: Մի այդպիսի համարյա
դնդաձև և կափարիչով ծածկվող բրոնզե
կաթսա բոլորովին սղորկ մակերեսով և
հարթ հատակով գտնվել է Անիում և այժմ
պահպանվում է Հայաստանի պետական
պատմական թանգարանում (№ 1318):

Ձանազործուրյունը և աշտանակաշինու-
րյունը պղնձագործութեան մի ճյուղն էր:
Եկեղեցիներում, թե աշխարհիկ ֆեոդալների
ու մեծատունների պալատներում ջահը սո-
վորական գործածութեան իր էր: Նա շքե-
ղութեան էր տալիս շէնքերի դահլիճներին և
իբրև փարթամութեան իր՝ գործածվում էր
հոգևոր և աշխարհիկ իշխանների բարքե-
րով սահմանված պահանջի (էթիկետի) հա-
մաձայն:

Ջահագործութեան հետ սերտորեն կապ-
ված էր նաև աշտանակաշինութեանը: Եթե
ջահը կախվում էր դահլիճի առաստաղից և
լուսավորում դահլիճը, ապա աշտանակը
գրվում էր հատակին, դահլիճի այս կամ այն
մասում և լրացնում էր լուսավորութեան և
կահավորման շքեղութեան պակասը:

Ջահերը պատրաստվում էին թե՛ ձուլելու
և թե՛ կռելու եղանակով, կամ էլ այդ երկու
եղանակների զուգակցությամբ:

Անիում գտնվել են մի քանի ջահեր:
Դրանցից ամենապարզը հարթ շրջանաձև
ժապավեն է, որի վրա արված են ինը լայն
անցքեր ապակե թասերը դնելու համար:
Ձուլածո ժապավենի վրա վերևից երեք ունկ
է արված, որոնց հետ միանում էին ջահը
կախելու շղթաների ծայրերը: Ջահը կախում
էին առաստաղից, թասերի մեջ յուղ լցնում,
պատրուցդ դնում և վառում: Ջահի այս աի-
պը շատ սովորական է եղել Անիում¹: Բայց
եղել են ավելի բարդ աիպի ջահեր: Երկու
այդպիսի ջահ՝ մեծ և փոքր 1906 թվ. դրա-
նըվել է Անիի Գաղիկի տաճարում — մեծը՝
տաճարի կենտրոնում, հատակի վրա փլա-
տակների տակ ընկած, փոքրը՝ նույն տա-
ճարի բեմում:

Փոքր ջահը ավելի պարզ կառուցվածք է
ունեցել, նա բաղկացած է պղնձի հարթ թի-
թեղից կտրված երկու հավասարաչափ շրջա-
նակներից, որոնք իրար հետ միացված են
պղնձի բավական բարակ խողովակով մե-
կը վերև, մյուսը ցերքև և կազմում են ջահի
հիմնական մասը: Այս երկու շրջանակներն
էլ զարդարված են դրվազմամբ արված մեծ
ու փոքր կետիկներով, վերևի շրջանակի
կենտրոնում ամրացված է օղ՝ ջահը կա-
խելու համար: Վերին շրջանակին իրենց
թաթերով միանում են ութ փոքր շրջա-
նաձև, մեջտեղում լայն անցքով թիթեղ-
ներ, որոնց վրա գրվում և ամրացվում էին
ապակե թասերը, ներքևի շրջանակի վրա
նույնպես ամրացված են ութ շրջանակներ
ալելի երկար թաթերով և ավելի հաստ թի-
թեղից: Այս 16 շրջանակները ևս զարդար-
ված են դրվազմամբ: Ներքևի ութ շրջանակ-
ներին ամրացված են եղել պղնձե լարեր,
որոնց կախվող երկու ճյուղերին ամրացվել
են պղնձե թիթեղից կտրված և դրվազմամբ

¹ И. Орбели, Баян и скоморох XII в. (Памятники эпохи Руставели, стр. 164).

¹ И. Орбели. Каталог Анийского музея, стр. 78.

զարդարված 16 մահիկներ, որոնք ծառայել են իբրև զարդ¹: Ուրեմն, փոքր ջահը ունեցել է 16 լույսի կետ:

Մեծ ջահը 20 մետր երկարությամբ ունեցող 192 օղից բաղկացած շղթայով կախված է եղել Գազիկի տաճարի դմբեթից և գտնվել է տաճարի կենտրոնում՝ փուչ եկած դմբեթի քարերի տակ, տրորված վիճակում: Այս ջահը պղնձագործ արհեստավորի մի հնարամիտ ու նշանավոր ստեղծագործություն է, որի նկարագիրը բերում ենք, օգտը վեկով ահադ. Հ. Օրբելու աշխատությունից²:

Ջահը պատրաստված է պղնձից: Նրա հիմնական մասն է պսակը, որը պղնձե լայն թիթեղյա շրջանակ է 69 սմ տրամագծով, 13 սմ բարձրությամբ, զարդարված է դրվագումով կատարված արծիվներով և առաստղաձև կենդանիներով, որոնք առնչված են 12 կարված ցանցիկն շրջանակների մեջ: Ջահը կախված է պղնձե երեք զույգ ժապավեններից, որոնք վերևում միանում են կախելու օղի հետ, որից ամրացված է եղել շղթան: Այս օղի տակ շուրջանակի դասավորված են եղել վեց հենակներ, որոնց լայն անցքերի մեջ ագուցված է եղել մեկական ապակյա թաս-ճրագ: Հենակների թափերը զարդարված են դրվագումով: Ջահի պսակի վերին եզրերին ամրացված են եղել երեսուն այդպիսի հենակներ, ստորին եզրը ութ հենակներով բաժանված է հավասար մասերի, որոնց կենտրոնում ամրացված են ութ ավելի երկար թափեր, որոնց վրա ամրացված է ութ թռչուն, հավանաբար աղավնիներ, որոնք իրենց փռված թևերով կարծես ճախրում են ջահի շուրջը: Դրվագումով պատրաստված այս թռչունների վրա արված է երեք անցք՝ երկուսը թևերին, մեկը պոչին, որոնց մեջ ագուցված են եղել ապակե

թասերը, բացի այդ, ամեն թռչունի կտուցից կախված է եղել երկուական փոքրիկ շղթա, իսկ սրանց ծայրերին ամրացված մեկական հենակ, ավելի մեծ ապակե թասի համար: Վերին օղի տակ ամրացված է մի ձող, որից պղնձե երկու զույգ ժապավենների օգնությամբ կախված է ջահի փոքր պսակը, առնչված մեծ պսակի մեջ: Այս փոքր պսակը հորիզոնական դիրք ունեցող մի պղնձե շրջանակ է, որն իր շուրջն ունի ութ հենակ ապակե ճրագների համար, երկու զույգ հենակներ էլ ամրացված են եղել կախիչ ձողի վրա: Այսպիսով մեծ ջահի մեջ ստացվում է մի այլ փոքր ջահ, որը պսակի եզրերից դեպի մեծ ջահի պսակի վերին եզրերը ձգվող վեց շառավղաձև ժապավեններով ամրացված է եղել մեծ ջահի հետ: Փոքր ջահի պսակի կենտրոնից իջնում է մի կարճ ձող, որի վրա ամրացված են երկու զույգ հենակներ թասերի համար, իսկ ձողի ցածր ծայրին ամրացված է եղել պղնձե թիթեղից պատրաստված մի ցանցիկն զամբյուղ ապակե մեծ դամբարի համար: Այս մետաղե զամբյուղի ստորին եզրերից կախված են եղել հավանաբար վեց փոքրիկ թռչուններ, որոնցից պահպանվել են երկուսը, բաց նրանց հետ միասին գտնվել են վեց հենակներ: Թռչունները միանգամայն նման են վերևում նկարագրվածներին և նույնպես կրել են երկուական ճրագ թևերին, մեկը պոչին, մեկական ավելի մեծը կտցին (տխտ. XIX):

Շնորհիվ հնարամիտ կերտվածքի, այս այնքան էլ մեծ ծավալ շունեցող ջահը կրել է մի շատ խոշոր դամբար զամբյուղի մեջ, ութ խոշոր և վեց միջակ լամպ, 72 փոքր ճրագ, 12 ավելի փոքր և 18 մանրիկ ճրագ, որոնք բոլորը միասին կազմում են 117 լուսատու կետ: Այս ճրագները պատրաստված են եղել դուչնզուչն ապակուց՝ սպիտակ, փիրուզագույն, դեղին, վարդագույն և այլն և ունեցել են գնդիկով վերջացող ոտք, որով և ամրացվել են հենակ-

1 И. Орбели, Каталог Анийского музея, стр. 44—45.

2 Նույն տեղում, էջ 39—43:

ների անցքերի մեջ¹: Գույնզգույն ապակուց պատրաստված 117 լամպերը և ճրագները ջահի վառված վիճակում նրան տալիս էին բացասիկ շքեղություն:

Անիի այս նշանավոր ջահը իր առանձնահատկություններով և արվեստով ժամանակակից է Գաղկաշեն տաճարին, որի գրմբեթից կախված է եղել և կարող է թվազրվել 11-րդ դարի սկզբով:

Ինչպես երևում է, նման ջահերը Հայաստանում 10—11-րդ դարերում տարածված են եղել: Սանահնի վանքին վերաբերող ձեռագրում (Քոթուկ) խոսվում է այդ վանքի կաթողիկե և աստվածածին եկեղեցիները զարդարող երկու ջահերի մասին, որոնցից մեծը ունեցել է 112 կանթեղ, իսկ փոքրը 40 կանթեղ: Մեջ ենք բերում այդ ջահերը վանքին նվիրող Տաշիր-Չորպետի Գուրգեն թագավորի անունից գրված համապատասխան, վկայությունը.

«Ես Գուրգեն թագաւոր Շահնշահի որդի Աշոտոյ Ողորմածի ազգէ Բագրատունի... ետու առնել ի հալալ գոյից իմոց ջահ մի, ունելով յինքեան կանթեղս ճ՝ (100) և երկոտասան (12), զի սրպէս հոլովելով արեգակն ի ծիրանոյ երկնից և զգէմս ի յերկիր ունելով և պայծառացուցանելով զսա՝ ըստ նմին արեւնակի և ջահս այս ճախր առեայ ի գմբեթ կաթողիկէիս եւ ոչ զդէմս ի վայր դարձուցանելով և կամ հեղով զձէթն, այլ ի պայծառութիւն և ի լուսաւորութիւն սր կաթողիկէիս: Եւ ապա շափաւոր ջահ մի այլ անուն սրբոյ բառասնիցն ունելով յինքեան կանթեղս ըսա թուոյ նոցա: Եւ այդ բերելով զնմանութիւն լուսնի... և ջահս այս պայծառացուցանէ գաւթ զսուրբ Աստուածածնիս և զսր կաթողիկէիս Սանահնոյ ի ծնողաց իմոց գերեզմանատանս Բագրատունեաց...»²:

Պղնձից և բրոնզից պատրաստում էին նաև այլ տիպի ջահեր և կախովի դամբարներ: Վերջիններս լինում էին դրվագված կամ ձուլածո: Չահագործությունը, ինչպես երևում է, զարգանալով անջատվել էր պղնձագործի սովորական արհեստից: Դժվար է պատկերացնել, թե կաթսաներ և նման իրեր պատրաստող պղնձագործը կարող էր միաժամանակ վերևում նկարագրված ջահերը և զամբարները պատրաստել: Ուշագրավ է, որ լեզուն էլ պահպանել է ջահի հետ կապված մոտ 50 բառ, որոնց թվում նաև «ջահագործություն» հին բառը, որը նույնպես կարող է կողմնակի ապացույց լինել այն բանի, որ այդ արհեստը պղնձագործության ինքնուրույն բնագավառ էր դարձել:

Չահեր, մանավանդ զամբարներ (տխտ. XX) պատրաստելուն շատ մոտ էր աշտանակագործությունը: Թերևս զամբարագործությունը և աշտանակագործությունը պարպում էին նույն արհեստավորները, մանավանդ Վայնի և այնպիսի ջահեր, զամբարներ, որոնք չէին կախվում, այլ դրվում էին որևէ պատվանդանի՝ «ջահաբնի» կամ «ջահակալի» վրա: Այս դեպքում ջահը նման էր լինում աշտանակին: Աշտանակը սովորաբար ունենում էր երեք ոտք և բուն, որի ծայրին նրա հետ միասին ձուլված էր լինում մեկ կամ մի քանի զամբար: Ներսես Շնորհալին հիշատակում է «եւթնալոյս աշտանակ»³: Աշտանակները բացի լուսավորություն տալուց, կարող էին օգտագործվել նաև անուշահոտ յուղեր ու խնկեր վառելու համար:

Անբերդի պեղումների ժամանակ բազմաթիվ գտնվել է երկու եռոտանի աշտանակ, որոնց բունը խողովակ է կազմում, իսկ գլխի թասի վրա պահպանվել են այլուցքի մնացորդներ²:

Աշտանակաշինությունը կամ աշտանա-

¹ Н. Я. Марр, О раскопках и работах в Ани летом 1906 г. Петербург, 1907, стр. 46—48.

² Մատենադարանի ձեռագիր № 3031, էջ 26ա—27ա

³ Ներսես Շնորհալի, Բանք շափաւ, էջ 56:

² И. Орбели, Бани и скоморох (ПЭР, стр. 166).

կագործությունը զարգացած էր մանավանդ Հայաստանի այն քաղաքներում, որոնց մոտիկ պղնձի հանքեր կային: Այդպես էր, օրինակ, Երզնկան, որտեղ պատրաստված աշտանակների մասին վկայություններ է պահպանել Իրն-ի Բատուտաճ: Սա այցելած լինելով Երզնկան, ասում է, թե այդ քաղաքում «կան պղնձի հանքեր, որով շինվում են ամաններ և «բայսուս»-ներ, որ հիշեցինք. դրանք նման են մեր աշտանակներին»¹: Իրն-ի Բատուտայի աշխատությունից քաղած հատվածների թարգմանիչ պրոֆ. Հ. Աճառյանը ծանոթագրություններ է կցել այդ հրատարակությանը, որոնցից մեկի մեջ այս «բայսուս»-ների առթիվ ասում է, թե դրանց անունը ծագում է պարսկերեն փիսուս բառից և նշանակում է աշտանակ՝ կազմված փիճ (ճարպ) և սուզ (այրել) բառերից: Գործածական է նաև Մշո դավառում և Սալմաստում. վերջին տեղում փսուս ձևով: Այնուհետև հաղորդում է, թե Իրն-ի Բատուտան արաբերեն ընդգրկում նկարագրում է փիսուսը, որը մի պղնձյա աշտանակ է երեք ոտքով, ծայրին ունի պղնձե ճրագ, մեջտեղը պատրուցի խողովակ, կողքին էլ զրված են լինում պատրուցը շտկելու մկրատներ²: Ինչպես Իրն-ի Բատուտայի հիշատակած չիրախիները, Հայաստանում կային նաև լայն լայց կամ ջանալոյց, իսկ արձանագրություններում նաև լուսարար կոչվող մարդիկ, որոնց պարտականությունն էր վառել ջահերն ու ճրագները, հետևել, որ ճրագը կանոնավոր լուսավորեն, ուղղել պատրուցը, ավելացնել յուղը:

Պղնձից պատրաստվում էին բազմազան այլ իրեր և գործածության առարկաներ, որոնց մի առ մի յիվարկումը հնարավոր է: Շատ տարածված էին պղնձե սկուտեղները, մատուցարանները, տապակները, ջրամաններն ու հիդոսկի շափերը: Մի ձեռագրում

հիշատակված «կարմիր» և «դեղին» պղնձե (բրոնզե) իրերի թվում հանդիպում են սուրահին, ճրագիլը (թերևս աշտանակը), յաշտիշունն, տապակը, փառը, հավանքը և ավելացվում է, թե այդ ամենը հաճախ է, այսինքն գործածության իր³:

Դվինում և Անիում հայտնաբերվել են նաև պղնձե զարդեր պատրաստող պղնձագործի արհեստանոցներ: Դվինում, ինչպես հիշատակվեց, արհեստանոցը հայտնաբերվել է միջնաբերդում: Այստեղ գտնվել է նաև պղնձագործի փոքրիկ հալոցը հրակայուն կավից, պատրաստի մանր զարդերի նմուշների հետ միասին²:

Անիում արհեստանոցը եղել է հյուրանոցի կողքին գտնվող մի սենյակում: Այստեղ ևս պղնձագործը պատրաստել է մանր իրեր և զարդեր: Արհեստանոցում գտնվել են քարե երկու հալոցներ, պղնձօքսիդի մնացորդներով և բարձր ջեռուցման հետքերով, մի փոքրիկ հալոց հրակայուն կավից և մեծ քանակությամբ պղնձի կտորտանք: Արհեստանոցում գտնվել են պղնձյա դամբեր, զանազան օղեր, գլխի քորոց, թիթեղից զրվազված ուլունք, թանկագին քար ագուցանելու պղնձե բուն, ինչպես լինում է խաչերի և դրբերի կազմերի վրա, դեղատի բորոցներ, զգեստի և գլխի հարդարանքի վրա ամրացվող զանազան ձևի մարդյակներ և այլ զարդեր, որոնցից մեկի վրա որսկան շահ, արձանիկ է ձուլված³:

Նման մանր իրեր, զարդեր պատրաստելը պղնձագործական արհեստի մի այլ փնքնուրույն ճյուղ էր, որը բավականաչափ մոտիկ էր սովորականին:

12—13-րդ դարերում պղնձագործությունն անխնիկան նկատելիորեն առաջադիմել էր: Պղնձագործության մի շարք ճյուղերի, նրանց

1 Իրն-ի-Բատուտա, քաղցից և թարգմանեց
Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 31:

2 Նույն տեղում, էջ 44:

1 Մատենագարանի ձեռագիր № 695, էջ 202բ—203ա:

2 Կ. Ղ ա Ֆ ա դ ա ռ յ ա ն, Դվին քաղաքը և նրա սկզբնականները, էջ 167:

3 И. Орбелн. Каталог Анийского музея. стр. 107—108.

տեխնիկայի և արտադրանքի մեծ բազմա-
զանության հետ միասին, արհեստագործու-
թյան այս բնագավառում արտադրությունը
գուրս էր գալիս պատվերով առանձին իրեր
պատրաստելու շրջանակներից և ստանում
էր շուկայական արտադրության բնույթ, երբ
միևնույն կազմապարտվ, միևնույն իրը ար-
տադրվում էր բազմաթիվ անգամ: Այդ երե-
վույթը նկատելի է ոչ միայն պղնձեղեն
առարկանների բազմազանությունից ու առա-
տույթունից, այլ, մանավանդ, նրանց պատ-
րաստման տեխնիկայի մեջ գործադրվող նոր
մեթոդներից: Հին ժամանակներում անհա-
տական արտադրության համար պատվիրա-
տուի պատվերով իրեր արտադրելիս օգտա-
գործվող մոմե մոդելի գործադրությունը
նվազագույնի է հասնում, կարելի է ասել
պահպանվում է իրեն բացառիկ երևույթ:
Չուլմամբ իրեր պատրաստելու տեխնիկայի
մեջ տիրապետող է դառնում այնպիսի կա-
զմապարտի գործադրությունը, որով կարելի էր
կրկնել ավել իրի արտադրությունը, որքան
որ անհրաժեշտ լիներ:

Իհարկե, միևնույն կազմապարտվ ձուլված
իրերը նման էին լինում, սակայն վարպեա-
ները կարողանում էին նրանց մեջ բազմա-
զանություն մտցնել տարբեր օրնամանանի-
րի փորագրությամբ և լրացուցիչ մասեր ու
մանրամասնություններ նրա հետ միացնելու
միջոցով:

Բրոնզե կաթսաների կենդանակերպ կան-
թերը պատրաստվում էին լրացուցիչ կազա-
պարների օգնությամբ: Բուն կաթսայի մո-
դելի, հետևաբար և կազապարի վրա, օրի-
նակ Հազարձինի կաթսայի մոդելի վրա,
առլուծի արձանիկներ ներկայացնող կան-
թերը շինելու, սակայն նրանք առանձին
մոդելից հանած կազապարներ են սմնեցել,
որոնք դրվել են բուն կաթսայի կազապարի
կողերին այնպես, որ ձուլելիս նրանք ստաց-
վեն կաթսայի հետ միաձուլյ: Նման առլու-
ծի կանթ է դրված նաև Շիրվանում ձուլ-
ված կովի և հորթի արձան ներկայացնող
վերևում հիշատակած ջրամանի վրա, ըստ

որում ջրամանը պատրաստված է մոմի, իսկ
կանթը փայտի մոդելից հանած կազապա-
րով:

Վրաստանում 13-րդ դարում պատրաստ-
ված մի բրոնզե դամբարի վրա հանդիպում
է թե՛ փորագրությամբ լրացուցիչ մշակումը,
և թե՛ լրացուցիչ կազապարների օգտագոր-
ծումը, որը նկատել է Հ. Օրբելին: Դա մի
դամբար է, նման Անիի՝ վերևում նկարա-
դրված դամբարներին, ունի երեք ունկ կա-
խելու համար, շուրթի վրա դրիչով փորա-
գրված է հյուսածո դարդ, դրանից ցած ունի
դուրի, որը այիքաձև գալարվող բուսական
ճյուղ է իր տերևներով: Դամբարի կողքե-
րին շորս կողմից ուղղանկյուն շրջանակների
մեջ կան լուսապսակ ունեցող պինձրների
պատկերներ, որոնք սկզբնապես փորագր-
ված են եղել դամբարի փայտե մոդելի վրա,
սրանց միջև կան ևս շորս սեղիք պատկեր-
ներ: Դրանք ամենից առաջ՝ շորս վիսլյու-
ների արանքում ազատ մնացած տարածու-
թյան ուղիղ կենտրոնում շին դրված, բացի
այդ, նրանցից երեքը կնոջ (Տիրամոր) պատ-
կերն է, իսկ մեկը տղամարդու (Քաբրիել
հրեշտակապետի կամ սուրբ Գեորգի) պատ-
կերը, մինչդեռ նրանք պետք է իրար հաջոր-
դին և երկուսը լիներ կնոջ, իսկ երկուսը
տղամարդու պատկեր: Ինչպես երևում է
վարպետը լրացուցիչ կազապարները դամ-
բարի մաշր մոդելով հանած կազապարի վրա
դնելիս շփոթվել է և Տիրամոր մի պատկե-
րը ավելորդ կերպով դրել է տղամարդու
պատկերի փոխարեն: Փայտյա նույն մոդե-
լի վրա այլևայլ լրացուցիչ կազապարներ
դնելով կամ նույնիսկ նույն կազապարները
տարբեր ձևով դասավորելով, պղնձագործ
վարպետները կարողանում էին իրենց ար-
տադրանքի միօրինակ լինելուց խուսափել
և տալ տարբեր պատկերներով դարդարված
իրեր:

1 М. М. Дьяконов, Ширванский водо-
лей 1206 г. (ПЭР стр. 249).

2 И. Орбели, Грузинская лампада с
арабскими надписями (Памятники эпохи Рус-

Պարզ է, որ լրացուցիչ փորագրման, մասնավանդ լրացուցիչ կաղտապարների դնելու եղանակով պատրաստվող իրերը, ինչպես իրավացի կերպով նշել են ակադ. Հ. Օրբելին և Մ. Դյակոնովը, անհատական պատվերով չէին կատարվում, այլ արտադրվում էին շուկայի համար: Ծովայի համար արտադրության անցնելը սուաշացրել է որոշ չափով մասսայական արտադրության հարմարեցված տեխնիկա:

Այս դամբարի վրա կան նաև գրչով փորագրված այլ դարդեր և արաբական գրություն, բայց դրանց կողքին կան վրացական չորս տառ: Առանց քրիստոնեական պատկերների և վրացերեն տառերի, այս դամբարը, որ գտնված է Խլաթում, անշուշտ, կհամարվեր արաբական, պարսկական կամ սելջուկյան, սակայն քրիստոնեական պատկերները և վրացերեն գրերը նրա վրացական ծագումը անկասկած են դարձնում: Ուրեմն, «սելջուկյան» համարվող դարդը ինչպես և արաբական գրությունը միշտ չէ, որ կարող են որոշել տվյալ իրի արարական, պարսկական կամ սելջուկյան ծագումը: Նույն երևույթը, ինչպես նշեցինք նկատվում է Անրերդի հավանքներից մեկի վրա, որտեղ արաբական մեկ ու կես բառը փորագրված է իրեն զարդ արաբերեն չիմացող վարպետի ձեռքով, նույն հավանքի վրա գտնվող խաչերի կողքին¹: Արաբական գրերի նմանողու-

թյամբ ստեղծված դարդեր հանդիպում են նաև հայկական ձեռագրերում, ինչպես և, կավի ու դիպսե առարկաների վրա, որոնք պատրաստող վարպետների մեծ մասը, արաբերեն չի իմացել:

Զարգածների մեջ երևան եկող այս կամ այն մոտիվի, այլև արաբական ու պարսկական գրության առկայությամբ իրերի և նրանց պատրաստող վարպետների վերագրումը այս կամ այն ժողովրդին խիստ անվստահելի բան կլիներ: Անհրաժեշտ է իրի, նրա նյութի, ձևի, պատրաստման տեխնիկայի, զարդի բազմակողմանի վերլուծություն, որպեսզի իրի պատկանելությունը ճիշտ որոշվի, մասնավանդ պետք է հաշվի առնել Արևելքի մի շարք երկրների զարդարվեստի մեջ այս կամ այն էպոխայում եղած ընդհանուր գծերը, որոնք դժվարացնում են ռեսումնախորդի գործը, մասնավանդ, ավելի աչքի են բնկնում առարկաները և նրանց զարդարանքները մակերեսորեն դիտելիս: Այդպես են վարվել եվրոպական մի շարք դիտնականներ (Յ. Սորթիգովսկին, Շարլ Դիլը, Ա. Պոպը, Զառեն), որոնք հայկական, վրացական, աղվանական կամ ազրբեջանական ծագում ունեցող մի շարք հուշարձաններ համարել են «իրաքական», «բյուզանդական», «սելջուկյան»:

Անագապատում (Կլայեկեր): Պղնձե ամանները ռեռես հին ժամանակներից սկսած պատում էին անագով, հակառակ դեպքում նրանք ժանտոտում էին և օգտագործման համար անպետք դառնում: Որ այդ արհեստը դոյություն է ունեցել, ամեն կասկածանքից դուրս է: Անիում գտնվել են պղնձյա անագապատ անոթներ՝ երկու թաս Առաքելոց եկեղեցու բակում² և մեկը Գաղիկի տաճարում³: Դրանք պատկանում են րադ. 1937. ցր. 44—47. նման երևույթները վկայում են վերնախավի և՛ քաղաքային բնակչության կուլտուր-կենցաղային բնույթների և ճաշակի միջև եղած ընդհանուր գծերի առկայությունը:

¹ И. Орбели. Каталог Анийского музея, стр. 67.

² նույն տեղում, էջ 72:

табелн, стр. 284—287). Ակադեմիոս Հովսեփ Օրբելին ենթադրում է փայտե մողելի օգտագործման հեռեկայ ձևը. մետաղագործը նախ փայտե մողելի օգնությամբ պատրաստում էր կավի կաղապար, որը լցվում էր մոմով, ապա մոմն ֆիզուրան միացվում էր հիմնական մողելին և կատարվում ձուլումը: (М. М. Дьяконов, Бронзовые водоей 1206 г. н. э. III Международный конгресс по иранскому искусству и археологии. Москва-Ленинград, 1939, стр. 47.)

¹ Կաշգարում ևս գտնվել է նման մի առարկա՝ բրոնզե ավան նետտրական հաղորականների խաչի, հաղորդման թասի պատկերներով, գաղանների վազրի ներկայացնող պատկերներով և արաբական բարեմադրական արձանագրությամբ (տե՛ս А. Якубовский и й. Культура и искусство Востока. Ленин-

ուչ ուշ քան 13-րդ դարին և ցույց են տալիս անագապատման արհեստի գոյութունը միջնադարյան Հայաստանում: Ենթադրել կարելի է, թե անագապատումը հայտնի էր ավելի հին ժամանակներից: Անագին ծառայել էին դեռևս բրոնզե դարում, իսկ նա դժվար օգտագործելի մետաղ չէ, թեև դժվարագյուտ է:

Ալքիմիական ձևադրերում անագի օգտագործման և նրա օդնությունը համաձուլվածքներ ստանալու մասին հաճախ է պատմվում: Կլայեկ արաբական ծագում ունեցող բառը, հավանաբար, վաղուց է մտել հայերենի մեջ և անագով պղնձեղենը պատելը կոչվել է կլայեկել, իսկ արհեստավորը կլայեկարար, կամ կլայեկիչ, հետագայում աղբրեջաններին տառադարձությանը՝ կլեկչի ձևով մտել է հայերենի բարբառների մեջ:


նուրբով ստացված մետաղով և իդեալական կերպով հղկում էին: Արծաթե հայելու մասին մի ձևադրում (Անիի երազահան) ասվում է. «Թէ հայելին արծաթ լինի...»¹ և այլն:

Պեղումների ժամանակ հայելիներ թեև սակալ, բայց գտնվում են: Գառնի ամրոցում, օրինակ, գտնվել են արծաթապատ հայելիներ մեր թվականության առաջին դարերի դամբարաններում, իսկ բրոնզե հայելիներ առանց արծաթապատման, հայտնաբերվել են ամրոցի միջնադարյան (12—13-րդ դդ.) շերտում: Գրանք 12—15 և տրամագծով մետաղե շրջանակներ ևն հարմար բռնակով, որի վրա, ինչպես և հայելու հակառակ կրեսին լինում են կաղապարի մեջ ձուլելու եղանակով ստացված դարդեր²:

1951 թ. աշխատանքների ժամանակ Գառ-



8cm



Նկ. 25. Բրոնզե հայելի, Գառնի (N 7965/108). ՊՊԲ

Հայելի պատրաստելը: Հայելին դործածության մեջ էր հին ժամանակներից և ոչ միայն վերնախավի, այլև քաղաքի միջին դասի բնակչության կենցաղում: Հայելիները պատրաստում էին մետաղից, սովորաբար բրոնզից, բայց արտացոլող երեսը պատում էին արծաթով կամ արծաթի խառ-

նիում գտնված երկու հայելիներից մեկը ունի ռելեֆ վարդեր (նկ. 25): Ապակե հայել-

1 Մատենադարանի ձևադիր N 695, էջ 205ր.

2 Բրոնզե հայելիներ ետևի կողմում ռելեֆ վարդերով գտնվել են նաև Միջագետքում և Թվագրվում են 12-րդ դարով (Ernst Kühnel, Islamische Kleinkunst Berlin, 1925, S 137, Abb. 101—102.

լինելու պեղումների ժամանակ չեն գտնվել և գրականություն մեջ էլ նրանց մասին հիշատակություն չկա:

4. ՈՍԿԵՐՉՈՒԹՅՈՒՆ

Ոսկերչությունը նույնպես հնագույն արհեստներից մեկն է: Մարդը սկսել է ասկին օգտագործել բրոնզից առաջ, պղնձի հետ միասին: Կիրովակահանում 1948 թ. բացված գամբարանում, որը պատկանում է մեր թվ. առաջ երկրորդ հազարամյակի կեսերին, գտնվել է ոսկե թաս, վրան՝ դրվագված վեց առյուծ, հետագա ժամանակների գամբարաններում, Կարմիր-բլուրում և այլուր նույնպես ոսկեղեն իրեր գտնվել են: Մեր թվ. առաջ առաջին դարերում Հայաստանում պատրաստվել են Անահիտի մարդահասակ տսկիձուլյ արձաններ¹: Ոսկուց և արծաթից պատրաստված թասերը, դավաթներն ու ամեն տեսակի զարդերը սովորական էին Արաաշխյան և Արշակունյան արքունիքներում և նրանց ժամանակի վերնախավի կենցաղում պահվել, ինչպես երևում է Բախուր Բ-ի մեղհասած արծաթե թասից, զարդարված էին լինում զանազան պատկերներով, իսկ աղբյուրները վկայում են, թե ոսկյա զարդերը սովորաբար ընդելուցված էին լինում մարդարիտներով, թանկարժեք քարերով: Դա երևում է նաև Տիգրան Բ-ի դրամների վրա հանդիպող թաղի պատկերից:

9—10-րդ դարերում ոսկերչության զարգացումը նոր թափ է ստանում, քանի որ դրա համար ստեղծվել էին ավելի նպաստավոր պայմաններ: Արհեստները, առևտրի, քաղաքի ու քաղաքային կյանքի զարգացման հետ բնակչության վերնախավի կենցաղում լայնորեն թափանցեցին պերճանքի առարկաները: Ֆեոդալները ոսկեղեն ու արծաթեղեն իրերով զարդարում էին իրենց պալատներն ու դպրակները, կահույքը, սեղանի կարասին, իրենց զգեստները և ձիա-

տարրերը: Արհեստավորները պատրաստում էին բազմազան կանացի զարդեր: Ոսկեղեն արդ ու զարդը սկսում են գործածել, նաև որպես զանձ կուտակել՝ մեծատունները: Եկեղեցիին անգամ այլևս չէր բավարարվում համեստ կահկարասիով. եկեղեցական ըսպանները՝ մասունքի տուփերը, գրքերի կալմերը, խաչերը, սկիհները և այլ իրերը մասամբ պատրաստվում էին ոսկուց և արծաթից: Եկեղեցիներին ֆեոդալների տված նրվերների թվում խոշոր տեղ էին բռնում ոսկեղեն և արծաթեղեն իրերը: Այս ամենը նպաստավոր նախադրյալներ էին ստեղծում ոսկերչության և նրա տեխնիկայի զարգացման համար, որը տեղի էր ունենում արհեստագործության ընդհանուր վերելքի և զարգացման պայմաններում:

Ոսկուց պատրաստված կամ ոսկեզարդ իրեր և առարկաներ շատ հաճախ են հիշատակվում մատենագրական աղբյուրներում և նվիրատվական արձանագրություններում: Դրանի պեղումների ժամանակ զբաղվել է զղալի քանակությամբ ոսկեղեն:

Ավելորդ չենք համարում մեջ բերել մի քանի վկայություն աղբյուրներից: Սյունյաց Գրիգոր Սուփան իշխանը 901 թ. Մաքենոցաց վանքին նվիրել է մեծադին իրեր, նաստում է. «անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք»²:

Սյունյաց Սուփա աիկինը 936 թ. Գնդվանքին նվիրել է մեծածախ սպասներ, իսկ Նաչիկ կաթողիկոսը Արդինայի վանքը զարդարել է «ի զարդ ոսկույ և արծաթոյ և ամենայն զարդու պայծառութեան շահաբորբոք լուսաւար անոթոց»³: Կաւորանիդե թագուհին ևս Անիի մայր տաճարը (կաթողիկեն) զարդարել է «ի զարդ ծիրանածաղիկ ոսկեթեկ նկարապործ անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անոթոց և բազմապայծառ լուսատու անոթոց վայելչութեամբ»³: 1196 թ. Հասիճա

1 Վիճական տարեգիր, էջ 5:

2 Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց Ի, Պատմութիւն տիեզերական, էջ 185:

3 Նույն տեղում, էջ 256:

1 Ա զ ա թ ա ն դ և զ ո ս, Պատմութիւն, էջ 409—410:

վանքին նվիրել են ոսկե խաչ և տուփ: 1232 թ. գրված մի ձեռագրում ոմն պարոն Խուցես մականվամբ, որն «էր առաջնորդ և հիմն քաղաքին (Անուշ)» հիշատակվում է մեծ պարոն Խոռազի գրել տված ավետարանի կազմը ոսկով և արծաթով դարգարել տալու կապակցությամբ¹: Սանահին վանքին դրքեր, խաչ և գործվածքներ են նվիրել համարյա նույն ժամանակամիջոցում: Հիշատակվում է նույն վանքին Զաքարյանների վասալ Վաչե Վաչուռյանի նվիրած ոսկիտուփ ավետարանը²: Կախաբերի որդի Քուրդը 1244 թ. Կեչառուքի վանքին նվիրել է ոսկե պահարան³: Նման օրինակների թիվը մեծ է, բայց հազիվ թե կարիք լինի դրանք բոլորը մեջ բերել:

Ոսկերչության մեջ կիրառվում էր բազմազան տեխնիկա⁴, որի տարբեր եղանակների քննարկումը կարևոր է այս արհեստի դարգացման աստիճանը և պատկերը պարզելու տեսակետից. ուստի առանձին-առանձին կիսոսենք այդ եղանակներից ամեն մեկի մասին:

Զուլելու համար պործածվում էր կալի հալոցը կամ կթխան (նկ. 26): Զուլման տեխնիկայի մասին խոսվեց վերևում պղնձադործության կապակցությամբ, ցույց տրվեց ձուլման տարբեր եղանակների, քարե, կավե կաղապարի մեջ թափելու, մոմե և փայտե մոդելներից կաղապար ստանալու և իրերը նրանց մեջ ձուլելու մասին: Ոսկերչության բնագավառում բոլոր այդ մեթոդները կիրառվում էին, բայցի դրանից, դարձադրվում էր նաև մետաղի մոդելի և հողի կաղապարի տեխնիկան, որը սլահպանվելով

1 Գ ր ե գ ի ն Ա Կ ա թ ո ղ ի կ ո ս, Յիշատակարանք, էջ 891—893:

2 Վիմական տարեգիր, էջ 52:

3 Վիմա՝ան տարեգիր, էջ 87:

4 Ոսկերչության տեխնիկային առանձին հոդված է նվիրել Վ. Արրահամյանը, որտեղ քննարկում է ձուլման, կռելու, գրվազման, հյուսելու, սևադադառման և արծնապատման տեխնիկան, սկսած հին ժամանակներից մինչև մեր օրերը: Տե՛ս «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ,

մինչև մեր օրերն է հասել: Ոսկերիչները վերցնում էին բրոնզե կամ փայտե հատուկ ձևով պատրաստված երկփեղկ շրջանակը, որն ունենում էր 6—8 սմ բարձրությամբ հատակ շունեցող տուփի տեսք լայն բացվածքով, շրջանակներից մեկի կողքից լինում էր անցքավոր ունկ, իսկ մյուսի համապատասխան մասում ելուստ, այնպես, որ փեղկերը իրար վրա դրվելով, միանում էին: Արհեստավորը շրջանակներից ցածինը լըցնում էր սովորական մաքուր կավով, հետք փոքր քանակությամբ կարածյուլթ խառնած, որպեսզի կավը սեղմելիս իրար կպչի, բայց և պահպանի իր փխրոճությունը: Կավով լըցված շրջանակի վրա դրվում էր իրի մոդելը, սեղմվում, որպեսզի ցածի երեսը տպվի կավի վրա, այնուհետև տեղադրելով շրջանակի վերին փեղկը այն ևս լըցվում էր կավով, որը ծածկում էր մոդելը: Կավը լավ սեղմելուց հետո փեղկերն անջատվում էին, մոդելը հանվում և կավի մեջ մնում էր մոդելին համապատասխան դատարկ տարածություն, որը փոքրիկ անցքով միացվում էր կաղապարի կամ շրջանակի ձապարածե շուրթին և այստեղից լըցվում էր հալած ոսկին, որը սառչելով ընդունում էր ճիշտ և ճիշտ մոդելի տեսքը: Կաղապարները անջատելով և փխրոճ կավը քանդելով, նրա միջից հանվում էր պատրաստի կարգը: Փոշու պես մանր և ձյուլթի շնորհիվ լավ բռնող կավը թույլ էր տալիս ձուլել բավականաչափ նուրբ կարգեր: Միայն թե այս եղանակով կարելի էր պատրաստել մանր կարգեր՝ սպարանջաններ, ականջի օղիք, մատանիներ, զլխի և կրծքի կախիչ կարգեր և այլն: Սափորածե փոքրիկ կախիչի կաղապարի վերին մի փեղկ գտնվել է Գառնիի միջնադարյան շերտում:


Դրվինի պեղումների ժամանակ գտնվել են կաղապարի օգնությամբ պատրաստված

1952, № 12: Տե՛ս նաև նույնի «Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.», Երևան, 1956, էջ 139—156:

1 Նույն տեղում, էջ 141—142:

մի շարք իրեր, ինչպես, օրինակ, փոքրիկ ոսկե խաչ, մի քանի աղանջի օղեր և այլն: Նույն տեխնիկայով են պատրաստված Դվին քաղաքի տերիտորիայի վրա 1936 թ. կուլտանտեսականների դատած հինգ ոսկե ապարանջանները (ՊՊԹ, № № 1372, 1375, 1376,

ծաթեղեն իրեր, որի առթիվ իր թողած արձանագրության մեջ նա ասում է. «Արծաթե-նիսն, որ ես տուի խաչաւք, դրաւք, մասամբք, նշխարաւք, պատուական ծովածոյ ամենայն սպասուք ի հանդերձ երևելի դարդուր...»¹:



Նկ. 26. Ոսկերիչի հալոց և գդալներ, Դվին, ՊՊԹ:

1377, 1383. տխտ. XXIV ա), աղանջի օղերը և ուլունքները¹: Ապարանջաններից երկուսը ունեն սղորկ մակերես և օձադուլի ծայրեր, որոնք միանում են սողնակով, երեքը դալարուն են, նման Դվինում և մյուս վայրերում առատորեն գտնվող ապակե ապարանջաններին²: Դվինում գտնվել են և արծաթյա ձուլածո իրեր և դարդեր, թեև փոքր թվով:

Չուլածո ոսկեղեն իրերը հիշատակված են նաև աղբյուրներում: Օրինակ, Գանձասարի վանքի շինությունների թվում գտնված տոհմային հանդստարանին (գամբարան-եկեղեցի) Ջալալ Դավլա Հասանը 1240 թ. նվիրել է կալվածքներից բացի նաև ար-

թ. Ա. Ռիբակովը պարզել է, որ հին Ռուսիայում կիրառել են մետաղե իրեր ձուլելու չորս եղանակ. ա) ձուլում կոշտ (առավելապես քարի) կաղապարի մեջ, բ) ճկուն կաղապարի մեջ (կավ, ավազ, հող), գ) մոմե մոդելով, պահպանելով կաղապարը և դ) մոմե մոդելով առանց կաղապարը պահպանելու²:

Այս բոլոր ձևերն էլ Հայաստանի ոսկերիչներին և պղնձադործներին հայտնի են եղել: Հարթ կամ ոչ շատ ուղեք իրերը ձուլում էին քարե կաղապարով:

Չուլածո ոսկե և արծաթե իրերը սովորական են եղել նաև Վրաստանում: 10-րդ դարից պահպանվել է Դավիթ Կյուրապաղա-

¹ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 172:

² Նույն տեղում, էջ 176:

¹ Վիժական տարեգիր, էջ 81:

² В. А. Рыбаков. Ремесло древней Руси, стр. 145.


ալի խաչը, որը գրվագված է, սակայն ներ-
քևում ունի զնդածև պատվանդան ձուլածո
ֆիգուրներով: Վրացական ձուլածո իրերից
աչքի է ընկնում Մարտիկի խաչը (11-րդ
դ.), որի վրա փակցված են նույնպես ձու-
լածո բարձրարանդակ սրբապատկերներ¹:

Կռելու եղանակով ոսկուց և արծաթից
կարելի էր ստանալ հարթ իրեր, գործադրե-
լով միայն կռանը, մուրճը, մկրատը և կըս-
րիչը: Ափսեհները, թասերը, զավաթները և
նման այլ իրերն ու անոթները պատրաստ-
վում էին առավելապես կռելու տեխնիկա-
յով: Ոսկերիչը առանձին-առանձին պատ-
րաստում էր անոթի կողերը, շուրթերը, հա-
տակը, կանթը, եթև կափարիչ կար՝ կափա-
րիչը, ապա դրանք բուրբը կպցնում էր
իրար²:

Հարթ, անզարդ, կամ պատրաստելուց
հետո փորագրված իրերի մեծագույն մասը
արտադրված է կռելու եղանակով: Կռելով
ու մկրատով կարելու միջոցով պատրաստ-
ված արծաթյա խաչեր դասվել են Անիում,
այլ տեղերում, ինչպես և հանդիպում են
Մատենադարանի ձեռագրերի հին կաղմերի
վրա, օրինակ՝ Ձեռ. № № 4867 և 5647:

¹ Իրվագված տեխնիկան զարգացել է կռե-

լու տեխնիկայից: Իրերը գրվագելու համար
նախ հարկավոր էր դրանք կռել: Միջին դա-
րերում գրվագում սակելով հասկացել են
առավելապես փայտից, մասամբ և այլ նյու-
թերից պատրաստված իրերը ոսկե կամ ար-
ծաթե բարակ թիթեղներով պատելու տեխ-
նիկան: Այժմ գրվագում տերմինը գործած-
վում է ավելի լայն իմաստով: Դա ոսկեր-



Նկ. 27. Ոսկերիչի մուրճ, Գուսնի (№ 1964/182), ՊՊՊ:

չովյան և արծաթագործության մեջ ամենից
ավելի կիրառվող այն տեխնիկան է, երբ
փոքրիկ մուրճով (Նկ. 27) հարվածելով ոս-
կու կամ արծաթի թիթեղի ներսի երեսին
արված զծագիր պատկերի կամ զարդաձևի
վրա, արտաքին երեսին ստանում ենք այդ
պատկերը ռելիեֆ ձևով: Իսկ եթե անհրաժեշտ
է դրսի երեսին ստանալ ոչ միայն ռուտցիկ,
այլև փոս ընկնող զարդ, կամ եթե հարկ
էր լինում դրսից էլ մշակել գրվագվող պատ-
կերները, կամ զարդերը, ապա գործադրում
էին կրկնակի գրվագում, այսինքն գրվագում
էին թե՛ դրսի և թե՛ ներսի երեսից: Շատ
հաճախ գրվագված պատկերները լրացուցիչ
մշակում էին մետաղե գրիչով կատարված
փորագրություն: Այժմ էլ Հայաստանի ոս-
կերիչները գործադրում են գրվագման տեխ-
նիկան, և հետաքրքրական է, որ նրանք
մուրճի հարվածներով ոսկե թիթեղի երեսի

1 Ш. Я. Амранашивили, История грузинского искусства, Москва, 1950, стр. 215—216.

2 Հայ ոսկերիչները սերդեկ-սերունդ պահպանելով
մեղ են հասցրել անոթների առանձին մասերը իրար
հետ կպցնելու մի հին, պարզ, բայց ուշագրավ եղա-
նակ՝ զա ճրագի բոցի օգտագործումն է, բայց ճրագի
բոցը թույլ է և եթև իրը բռնես նրա վրա՝ կմտտվի և
ահա, ոսկերիչները գտել էին մի պարզ եղանակ, այն
է՝ մետաղե մի բարակ խողովակով փշում էին ճրագի
բոցի վրա՝ առաջացնելով ուժեղ հոսանք, որի շնորհիվ
բոցը բարբոթվելով ստանում էր կապույտ գույն,
բարձրանում էր նրա ջերմաստիճանը, բացի այդ, փշե-
լով կարելի էր բոցը ուղղել ուղածք սեղը, ինչպես
այդ արվում է այժմ հատուկ սարքի (բոցամուղ)
միջոցով: Ճրագի վրա խողովակով փշելու եղանակը
պահպանվել է նույնիսկ մինչև մեր օրերը և նույն
ոսկերիչը փոքր գործերի համար երբեմն չի օգտագոր-
ծում ավելի կատարելագործված հարձարանքները, այլ
գիմում է այդ հնամենի միջոցին:

դուրեկան տեսքը շփոխութեամբ, շփուցանելու համար, հարվածովով մակերեսը պատում են ձյութով, մի տեխնիկա, որը հավանաբար դալիս է շատ հին ժամանակներից:

Դրվագումը իրոք շատ հին տեխնիկա է: Հայաստանում դրվագված հնագույն ոսկե իրը գտնվել է Կիրովականի մեծ դամբարանում և պատկանում է վաղ բրոնզի շրջանին: Ոսկե դեղեցիկ թասի վրա պատկերված վեց առյուծները կատարված են դրվագման եղանակով: Այսպիսով, դրվագումը ձուլման տեխնիկայի նման առաջանալով հնագույն ժամանակներում, պահպանվել է մինչև մեր օրերը:

Միջին դարերում դրվագման եղանակով պատրաստում էին ոսկեպատ փայտյա գահույճներ, խաչեր, մասունքի և այլ տուփեր (գլխոցներ), քշոցներ, թասեր, անոթներ, ձիասարքի սրոշ մասեր և այլ իրեր:

Դվարգված էին լինում սովորաբար ոսկեզարդ գահույճները: Թովմա Արծրունին պատմում է, թե ֆեոդալները սգալով Գուրգեն Արծրունու մահը ասում են. «Ո՛ր է բարեժալիտ շրթանցն ժպտումն, որ բազմերանդ բազմականս ոսկեզարդ գահույճն միշտ զմեզ ուրախարարն զմայլեցուցանէր բաժակա՞»: Թովման հիշատակում է, թե մի ազանդավոր Ռշտունիքում գիշերով մտնում է եկեղեցի և վերցնելով փայտից պատրաստված ու արծաթով պատած խաչը, ժայռին խփելով ջարդում է: Զարգված խաչը հանձնում են մի իսկերչի վերանորոգելու, որը «նորոգեալ նորացոյց... փայտ խաչին... պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան գառաջինն»¹, իսկ փայտը արծաթով պատելիս դրվագում էին:

Գրիգոր Նարեկացին ևս հիշատակում է ոսկեզեն գահույճը. իր տաղերից մեկը նա սկսում է այսպես՝

«Մայլքն ի շանէին ի լեռնէն ի Մասեայ
Եւ ի վերայ նորայ՝ գահույճ ոսկեղէնք,

1 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 429:

2 Նույն տեղում, էջ 392—393:

Եւ ի վերայ նորայ աթուր արկեալք
Եւ ի վերայ նորայ՝ բեհեղ ծիրանի»¹:

«Ոսկեզեն գահույճ»-ները սովորաբար լինում էին փայտից՝ դրվագված ոսկու թևերով:

Իսկ Ներսես Շնորհալին հիշատակում է. «յանփուտ փայտից պատեալ ոսկին»²: Մլքեթյանը հիշատակարաններից մեկում տվյալ կա այն մասին, որ դրքի նորոգման ժամանակ՝ կազմը զարդարվել է «արծաթապատ նկարակերպ զարդերով», որը պատրաստել էր Սիմեոն կազմողը³: Ոսկեպատ և արծաթապատ կազմեր հիշատակվում են բազմաթիվ այլ ձեռագրերի հիշատակարաններում, որոնք մի առ մի թվելու հարկ չկա:

Դրվագման տեխնիկայով պատրաստված արծաթե ոսկեզրած երկու հնագույն տուփ՝ մեզ հաջողվեց գտնել էջմիածնի վանքի պահոցում: Դրանք այժմ ցուցադրված են վանքի թանգարանում:

Այդ տուփերից մեկի վերին երեսի վրա, որի շափերքն են 20,5×31 սմ վերևի մասում դրվագված է սստծու պատկերը՝ բազմած գահույճին և երկու կողմից կանգնած են մեկական հրեշտակ (տխտ. XXI ա), կենտրոնական մասում դրվագված է սուրբ Ստեփանոսը բուրվառը ձևերին, իսկ սրա կողքերին՝ ձախից և աջից կանգնած են Պետրոսը և Պողոսը համապատասխան մակագրութուններով: Տուփի ցածի մասում եղել են մի քանի պատկերներ, որոնցից միայն մեկն է պահպանված (հավանաբար դա նվիրատուի պատկեր է): Թիֆեղի պոկված տեղում մասամբ մնում է պատկերների տակ լցված ձյութը: Դա արվում էր, որպեսզի ուռուցիկ պատկերները լավ պահպանվեն:

Երկու դրվագված պատկերների ա-

1 Մատենադարանի ձեռագիր № 3498, էջ 286ր:

2 Ներսես Շնորհալի, Բանք շափաւ, էջ 31:

3 Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք, էջ 110:

ռանձհատկություններից, արվեստից, ինչպես և պատկերների կողքին արված մականդրությունների հնատիպությունից, այս տուփը կարելի է թվագրել 10—11-րդ դարերով, այսինքն Բագրատունյաց ժամանակաշրջանով:

Տուփը ժամանակի ընթացքում այն ատիճան մաշվել է, որ ՉԾԱ (1302) թվականին նորոգվել է, ըստ որում նորոգողը սրբապատկերները պահպանելու նպատակով տուփի երեսը ամրացրել է փայտե տախտակի վրա, իսկ ետևի երեսին փակցրել է արծաթե նոր թիթեղ, որի վրա թողել է հետևյալ արձանագրությունը.

Յիշեայ Բ՝ Ա՞՞՞՞ զս
շխատողս և ևն
ոգողս քր նշխարաց
ս և գեորագվն ոսկի
Բիչս. րվականորի հայ
ո: Չ: Ծ: Ա: ԱղօրԲ յիշ
եցէ՛ք գժառաս

Մյուս տուփը, որի մակերեսի չափերն են $17,5 \times 24,5$ սմ, նույնպես ամրացված է տախտակի վրա (տխտ. XXI ր): Այս տուփի վրա դրվագված են միայն Պետրոս և Պողոս առաքյալների պատկերները համապատասխան մակագրությամբ: Տուփի վրա դրվագված պատկերները արվեստով, մասնավորապես իրենց համեմատաբար ավելի երկարովի ձևով տեսքով քիչ ինչ տարբերվում են նախորդ տուփի վրա եղած պատկերներից և կարող են թվագրվել 11—12-րդ դարերով:

Ոսկերչության արվեստից մեզ հասած նմուշների մեջ բացառիկ տեղ է գրավում այսպես կոչված «Խոտակերաց սուրբ նշանի» պահարանը, որը նույնպես կատարված է դրավդման եղանակով և մշակված մետաղե գրիչով: Պահարանի վրայի արձանագրության մեջ ասվում է, թե այն պատրաստվել է Պոռ իշխանի թու և Հասանի որդի Էաչի պատվերով 1300 թվականին: Պահարանը

արծաթից է՝ ոսկեչրած, նրա երկարությունն է 42 սմ, լայնքը 26,5 սմ և հաստությունը 4,2 սմ: Ունի երկու դուռ, որոնք բացվում են կամարի տակ. պահարանը քանդակներով զարդարված է դրսից, ներսից և կողքերից: Դռների կամարի վերևում կրկնադիժ գեղեցիկ բեկորեկվող և կողքերում փոքրիկ անկյունաձև հավելվածներ հենեցող մի մեդալիոնի մեջ պատկերված է ամենակալ Հիսուսը չորեքկերպյան աթոռի վրա բազմած և ավետարանը ձեռքին: Աթոռի աջից պատկերված են մարդ և արծիվ, իսկ ձախից առյուծ և եղ: Այստեղ մարդը մորուր ունի, հակառակ այն բանի, որ ըստ կանոնի պետք է լիներ անմորուր կուսական պատկերով: Հիսուսի դեմքը ձգվածությամբ ու թավ մորուրով արևելյան արտահայտություն ունի, նա հագել է պարեգոտ, տեղական տարազին բնորոշ նեղ թևքերով: Ըղգեստը նստած դիրքին համապատասխան նուրբ ծալքեր է կազմել (տխտ. XXII):

Կամարից աջ ու ձախ, պահարանի վերին անկյուններում պատկերված է մեկական հրեշտակ ձեռքներին խաչագավազան՝ պարզած դեպի Հիսուսը: Հրեշտակների պատկերները երկարովի են ձգված, որ բնորոշ է այդ ժամանակաշրջանի համար և նկատելիորեն թեքված են դեպի Հիսուսը: Սրանց զգեստները նուրբ ծալքավոր են, ոտքերին կան անկրունկ կոշիկներ: Հրեշտակների պատկերներից ազատ մնացած ամբողջ ֆոնը ծածկված է շատ նուրբ ոճավորված բուսական օրնամենտներով: Կամարի պսակի վրայով անցնում է երկտերև բողբոջների շարքը նման 7-րդ դարի շենքերի վրա հանդիպող քանդակներին, բայց այստեղ խիստ ոճավորված է: Պահարանի դռների վրա ամբողջ հասակով պատկերված են ձախից՝ Գրիգոր Լուսավորիչը, աջից՝ Հովհաննես Մրկըրտիչը, սրանցից ձախ և աջ դռների կողքերի պարակալների վրա տիրամոր և Հովհաննես ավետարանիչի ավելի փոքրադիր պատկերներն են գտնվում: Բոլոր պատկերների գլխավերևում գեղեցիկ շքանակների

մեջ ունեցի տառերով գրված են նրանց անունները:

Պահարանի ցածի մասում, դռնակից ներքև պատկերված է երեք անդրի՝ Պողոսը և Պետրոսը անկյուններում և իշխան էաչը կենտրոնում՝ ճիշտ նույնալիսի շրջանակի մեջ, ինչպես Հիսուսը. նա երկու ձեռքերը բարձրացրել է աղոթողի տեսքով: Իշխանի զգեստավորումը ազգագրական կարևոր նշանակություն ունի. ամսոս միայն, որ նա պատկերված է մինչև գոտին: Մեզ հասել է և նրա քանդակը քարի վրա, որտեղ նա պատկերված է ամբողջ հասակով: Պահարանի վրա էաչը գլխին ունի կիսադնդաձև, եզերքները դեպի վեր ծալվող գլխարկ, զգեստը պինդ գրկում է մարմինը և կրծքի վրա ունի ձեռագործ վարդեր, թևքերը շատ նեղ են: Իշխանից աջ և ձախ երկտող ունեցի արձանագրության մեջ հիշատակվում է նրա անունը և նշվում է պահարանի պատրաստման թվականը: «Սուրբ նշան տերունական դու էաչոյ լեր օգնական թվ. 2ևԹ»:

Դռնակների եղբրքներով անցնում է բուսական օրնամեններով կազմվող շրջանանակ: Դռնակները բաց անելով ներսի հարթության վրա տեսնում ենք մի խաչ, ծալքերում երկճյուղ թևերով, թևերի հանդիպման կենտրոնում և ուղղահայաց թևի վրա ընդելուղած են քարեր: Ներսի ամբողջ հարթությանը, որը կազմում է խաչի փոնը, ծածկված է փոքրագրությամբ կատարված ուրբուն բուսական օրնամեններով՝ արմավիկներով և հնդասերև ճյուղերով, որոնք կատարված են մեծ ճաշակով ու նրբությամբ (տխտ. XXIII): Խաչի ցածի թևից ներքև մի ձևավորված կիսաշրջանի մեջ պատկերված են դեմ դիմաց նստած երկու եղջերուներ, որոնք գլուխները դեպի ետ են թեքել և ուտում են իրենցից վերև գտնվող տերևները:

1 Գ. Վ. Հո վ ս ե փ յ ա ն, Խոտակերաց Ս. Նշան, մի նմուշ ԺԳ դարու հայ ոսկերչության: Հրատարակութիւն «Գեղարուեստ» հանդեսի, Թիֆլիս, 1912, էջ 2:

երկու եղջերուների արանքում նույնպես բուսական օրնամենա է արված:

Դռնակների վրա ներսի երեսից պատկերված են Միքայել և Գաբրիել հրեշտակապետները ձեռքերին մեկական խաչագավազան, պատկերների գլուխները հակված են դեպի ներս. սրանց նուրբ ծալքավոր զգեստները հասնում են մինչև ստրքերի թաթերը, Թուշնաթևերից մեկը բացված ու փռված է դեպի վերև, մյուսը կախված է ներքևում: Պատկերների ետևում ազատ մնացած տեղում մեծադիր ունեցիներով գրված են նրանց անունները և արված բուսական օրնամենա, որն զբաղեցնում է նաև պատկերների ոտքերից ցած մնացած ազատ տարածությունը: Դռնակները երկող շրջանակների վրա անցնում է լանցետների շարքը՝ զուգակցված եռատերև ճյուղերի հետ:

Ջարդարված են նաև պահարանի կողքերը. մի կողքին՝ 13-րդ դարի ձեռագրերի լուսանցքների համար բնորոշ իրար միահյուսվող տերևներ ու բողբոջներ են պատկերված, իսկ մյուս կողքին՝ իրար փաթաթվող երկու ճյուղերով կազմված շրջագծերի մեջ՝ հնգատերև ճյուղն է հանդիպում:

Միջնագարջան ոսկերչությանից մեզ հասած, իր արվեստով աչքի ընկնող այս օրինակը նախորդ երկու տուփերի և կիլիկյան մի երկու օրինակների՝ Կոստանդին կաթողիկոսի պատվերով կատարված պահարանի և գրքի կազմի, կիլիկյան ճանապարհորդական ջրամանի հետ միասին թույլ են տալիս դադափար կազմելու 9—13-րդ դարերի գրականության և արձանագրությանների մեջ հիշատակված բազմաթիվ տուփերի, կազմերի, խաչերի և եկեղեցական սպասների մասին:

Դրվագման տեխնիկան շատ զարգացած է եղել նաև վրացական ոսկերչության մեջ, որից շատ ուշագրավ նմուշներ են պահպանվել: Առանձնապես աչքի են ընկնում այն արծաթե տախտակները, որոնք գահույքի մասեր են եղել և թվագրվում են 10—11-րդ

գարեբով¹: Կրօնագման սեյեֆը աչտակց գե-
 ևս բարձր չէ: Կրօնագումը շատ բարձր ար-
 վեստի հասավ 12-րդ դարի երկրորդ կեսին և
 13-րդ դարի՝ սկզբներին՝ օպիզարյան դարո-
 ցում Բեկա և Բեշքեն Օպիզարցիների մոտ,
 որոնց աչքի ընկնող գործերից են Անչիսխե-
 թի սրբապատկերների շրջանակը և Յկորաս-
 թավյան ավետարանի կազմը²:

Կրոնվելու եզանակով հաճախ պարզա-
 բուն կամ լրացուցիչ մշակում էին կոստոս,
 ձուլածո և զրվագլած սակե և արծաթե իրե-
 րը: Հատուկ մետաղե ձուլի՝ նկատի ծալքի
 ցածի տափակ մակերեսին գտնվող ձուլա-
 ծոս զարդերը հանում էին սակե և արծաթե
 առարկաների վրա, և այդ պրոցեսը կոչվում
 էր դրոշմել կամ առատպել³: Նկատով զրոշ-
 մելու դեպքում մուրճով (նկ. 27), հարվա-
 ծում էին նկատի վերին գլխին և դրոշմում
 նրա վրա հղած զարդը: Ավելի մեծ մակե-
 րեսի վրա զարդեր դրոշմելու կամ առա-
 տպելու համար գործածում էին հարթ
 մակերեսով ձողեր. դրանցից այն ձողը, որի
 վրա լինում էր քանդակազարդը, կոչվում էր
 խշտակ, իսկ մյուսը, որ լինում էր բողբոջի
 հարթ և իր վրա ընդունում էր մուրճի հար-
 վածները, կոչվում էր խափշակ: Այս երկու
 տերմինները իրենց ձևով շատ հին են թվում:
 Ոսկե կամ արծաթե թիթեղը դրվում էր խշտա-
 կի վրա, իսկ նրա վրա դրվում էր խափշակը և
 մուրճով հարվածելով սրա վրա սակերիչը
 խշտակի վրայի զարդը տպում էր սակե կամ
 արծաթե թիթեղի վրա: Որպեսզի զարդը լավ
 և սեյեֆ ստացվի, սակե կամ արծաթե թի-

թեղի վրա գնում էին արձիճ, իսկ խափշակը
 արձիճի վրա: Փափուկ արձիճը խափշակի
 վրա իջնող հարվածներից ձկում էր ոսկու
 թիթեղը և խորը կերպով մտցնում խշտակի
 խորաքանդակ զարդի փոսիկների մեջ:

Խշտակի և խափշակի օգնությունը հան-
 ված զարդերը սովորական են ոչ միայն ոս-
 կե և արծաթե, այլև պղնձե իրերի և առար-
 կաների վրա: Նման զարդեր կարելի է տես-
 նել վերևում նկարազրված 10—11-րդ դարե-
 րի մասնատուփերի, Անիում գտնված մի
 մոմակալի, ինչպես և ավելի ուշ ժամանակ-
 ների ձեռագրերի կազմերի վրա. նրանց ան-
 կյուններում փակցվող ավետարանիչների
 կենդանակերպ պատկերները կրող եռան-
 կյունաձև թիթեղների եզրերին: Այս փաս-
 տերը անառարկելի են պարծնում խշտակի և
 խափշակի գործածությունը հնում: Ինչպես
 այդ տեխնիկան, նույնպես և խշտակ, խափ-
 շակ հին տերմինները պահպանվելով հա-
 սել են մինչև մեր օրերը, մասնավորապես
 սակերչության մեջ անուն հանած վանեցի
 վարպետների շրջաններում⁴:

Հայ սակերիչներին հայտնի էր նաև խըշ-
 տակի և խափշակի օգնությունը տարողու-
 թյուն ունեցող իրեր պատրաստելու եղանա-
 կը: Այս եղանակը հավանաբար գործածվել
 է Անգրկովկասի բոլոր երկրներում և շատ
 հին ժամանակներից սկսած: Դա մի յուրա-
 հատուկ տեխնիկա է, որը պահպանվել է
 մինչև մեր օրերը:

Բրոնզից ձուլվում էր շատ մասսիվ մի
 մայր կաղապար, որի ներսի մասը ունենում
 էր ճիշտ այն ձևը, ինչպիսի իր պետք է պատ-
 րաստվեր, ասենք թասի նման: Բրոնզից
 ձուլվում էր նաև մի այլ կաղապար, որի մեջը
 լիքն էր լինում, իսկ արտաքին մակերեսը

¹ Г. Н. Чубинашвили, К вопросу о характере грузинской чеканки грани X и XI вв. «Ars Georgica», т. 2, Тбилиси, 1948, стр. 178—180.

² Ш. Я. Амранашвили. История грузинского искусства, стр. 219—223.

³ Որպես մոմ ստատպելով չինքեան զգիր մատան-
 օտյն (Դ ավիթ Ա ն հ ա ղ թ, Սահմանք իմաստասիրու-
 թեան, տե՛ս (Կորին վարդապետի, Մամբրէ՛ վերծա-
 րողի և Դավիթ Անյաղթի մատենագիտութիւնը, Վեհե-
 սիկ, 1833, էջ 193):

⁴ Խշտակ և խափշակ տերմինների մասին մեզ
 տեղեկություններ է տվել այժմ Երևանում բնակ-
 վող վանեցի աչքի ընկնող սակերիչ Վ. Հացագործյա-
 նը, որը այդ եղանակով պատրաստել է արծաթե թա-
 սեր:

յրիվ համապատասխանում էր մայր կաղապարի ներսի ձևին և հագնում էր նրա մեջ¹, այսինքն արտարուստ նման էր պատրաստվող իրին, բայց մեջը դառարկ չէր: Ոսկերիչը սակու կամ արծաթի շրջանաձև բարակ թիթեղը կրակի վրա տաքացնելով, դնում էր մայր կամ էդ կոշիկ կաղապարի վրա, իսկ թեթի վրայից դնում էր արու կոշիկ կաղապարը և մուրձի ուժեղ հարվածների շնորհիվ ոսկե կամ արծաթե թեթին տալիս էր կաղապարի ձևը: Պարզ է, որ դա չէր կարելի միանգամից անել և ոսկերիչը ոսկե կամ արծաթե թեթիը կամ կիսապատրաստ իրը մերթ ընդ մերթ տաքացնում էր և նորից կրկնում գործողությունը, մինչև որ իրը լըրիվ պատրաստ լիներ, այսինքն լրիվ շափով ընդուններ կաղապարի ձևը: Այս եղանակով պատրաստված ոսկե և արծաթե թասերը իրենց վրա մուրձի հարվածների հետքեր չեն կրում, ուստի նրանց մակերեսը շատ դուրեկան խավրած տեսք է ունենում: Մեզ հաջողվեց պարզել, որ էդ ու արու կաղապարները ևս հնում կաշվի են խշտակ կամ խափշակ:

15-րդ դարի մի ձեռագրում խշտակ բառը գործածված է տարողություն ունեցող ամանի կամ թասի իմաստով², որպիսին էր ոսկե կամ արծաթե իր պատրաստելու մայր կաղապարը: Խշտակի կամ խափշակի օգնությամբ պատրաստվող իրերը կարող էին զարդարվել զրվագրմամբ, փորագրությամբ և այլ եղանակով կատարված զարդերով:

Մեզ թվում է, թե Անդրկովկասում զրտնըված այն հնագույն թակե և արծաթե իրերը, որոնք պրոֆ. Գ. Թավաձեի կարծիքով պատրաստված են վրայտե պտտվող կաղապարի վրա, իրոք, կարող էին պատրաստված լինել այս եղանակով:

Հյուսելու եղանակը: Ոսկերիչները պատ-

րաստում էին նաև հյուսածո իրեր ու դարդեր: Ոսկերիչը, նախ պետք է ոսկուց թելեր ստանար դրա համար նա օգտագործում էր մետաղի մի տախտակ, որի վրա լինում էին տարբեր արամաչափի, բազմաթիվ անցքեր, սկսած լայնից մինչև չափավանց նեղը, որը կարող էր մագանման բարակ թելեր տալ: Ոսկին կրակի վրա տաքացնելով ծայրը անցկացնում էին ամենալայն անցքի միջով ու ունելիով բռնելով ամբողջ ուժով քաշում էին մինչև որ անցքերի միջով անցնելով ստացվեր երկար ձող, ապա նորից տաքացնելով անցկացնում էին հաջորդ ավելի նեղ անցքի միջով և այդ կրկնում էին մինչև որ ստացվեր ամենաբարակ ոսկեթել: Բազմաթիվ անցքեր ունեցող մետաղե տախտակը, որով թելեր էին ստանում կոշվում է կորգան, որը հնից եկող բառ է³: Ստացված թելը մի տակ, կամ ավելի հաճախ կրկնակի ոլորած, հյուսում էին և դրանով պատրաստում ոսկի հյուսածո իրեր, զարդեր: Սովորաբար բացի հյուսելուց, թելերը զալարում էին և այդ եղանակով ստանում ամեն տեսակի մանր զալարուն զարդեր, վարդակներ, տերեններ, երկրաչափական ձևեր, ապա կտրելով դրանք մկրատով ճրագի օգնությամբ կպցնում էին պատրաստվող իրի կմախքի վրա: Մեծ իրերի վրա վարպետները կարող էին հարյուրավոր, նույնիսկ հազարավոր այդպիսի առանձին պատրաստված մանրիկ զարդեր կպցնել:

Հյուսածո զարդեր Հայաստանում պատրաստել են հնագույն ժամանակներից ըսկըսած: 1952 թ. Սիսիանի շրջանում պատահաբար բացված դամբարաններից մեկում, նախքան մեր թվականության 4—3-րդ դարերի իրերի հետ խառը գտնվել են նաև ավելի վաղ շրջանի՝ 7—6-րդ դարերի ոսկի հյուսածո զարդեր: Միջին դարերում ոսկե հյուսածո իրեր և զարդեր պատրաստելու տեխնիկան շատ սովորական է եղել: 1939 թ. Գվինի միջնաբերդում կատարվող պեղում-


1 Այս կաղապարն ևս տեսել ենք Վ. Հացագործյանի մոտ: Իսկ նրա հիշատակությունը գտել 15-րդ դարի մի ձեռագրում:

2 Ասվում է հեղուկ նյութը լից մեկ խշտակի մեջ, Մատենադարանի ձեռագիր № 9098, էջ 238բ:

3 նշբ, Կորդան բառը:

ների ժամանակ գտնվեց սակե հյուսածո մի մանյակ, որը սակերչություն արվեստի մի նշանավոր սակեգծագրման է (տխտ. XXIV բ), Մանյակի բավականաչափ լայն ժապավենը հյուսված է լարերից, նրանից

բը, թե թելերով հյուսածո կամ ցանցիկե իրեր պատրաստելը բնորոշ է եղել հայկական սակերչությանը¹: Իրոր միջնադարից մեղասակ են զգալի թվով սակե և արծաթե հյուսածո իրեր:



Նկ. 28. Սակե հյուսածո սպարանջան, Գվին (№ 1745), ՊՊԹ:

կախված են հարչուր գարձյալ հյուսածո կարճ շղթայիկներ, իսկ սրանց չորաբանչյուրի ծայրին ամբացված է մեկական գնդիկ¹: Ոսկերչական նուրբ աշխատանքով կատարված այս մանյակը (կշիւր 46 գրամ), Դվինում գտնված միակ հյուսածո սակե դարը չէ: 1936 թ. Այգեստանի կոլանտեսականների գտած դանձի սպարանջաններից մեկը (նկ. 28, № 1745) նույնպես հյուսածո է: Նույն դանձին են պատկանում նաև երկու հյուսածո խոշոր սկանջի օղեր (ՊՊԹ, № № 1379, 1385) պատրաստված վերին աստիճանի նուրբ աշխատանքով, (որոնք ունեն և ձուլածո կախիչներ) սկանջի մի քանի փոքր օղեր, որոնց ներքևի մասում գրված են հյուսածո գեղեցիկ գարդեր, ինչպես և սակե հյուսածո ուլունքներ²:

Դվինի այս նյութերը նկատի ունենալով, Կ. Ղաֆաղարյանը հայտնում է այն կարծի-

Հատիկներով զարդարելը սակե իրեր պատրաստելու մի այլ եղանակ էր: Հատիկները պատրաստում էին առանձին, ապա կրակի օգնությամբ կպցնում պատրաստվող իրի վրա: Հատիկներ պատրաստելու համար բակերը կտրատում էին մանրիկ կտորների և եթե քիչ քանակությամբ էր հատիկ հարկավոր, փոքրիկ աղյուսի վրա անմիջապես հալում էին ճրագի բոցը վրան ուղղելով: հալվելով լարի փոքրիկ կտորը գնդիկ էր դառնում ու սառչում: Իսկ, եթե մեծ քանակությամբ և տարբեր չափի գնդիկներ էին հարկավոր, ապա վերցնում էին տարբեր հաստության լարեր ու կտրատելով լցնում էին հարցի մեջ, հաջորդաբար մի շերտ ածուխ և մի շերտ սակե թելերի կտորտանքներ մինչև որ հալոցը լցվեր, ապա հալում էին կրակի վրա. այնուհետև հարցի պարունակությունը գատարկում էին ջուր լցված անոթի մեջ,

¹ Կ. Ղաֆաղարյան, Գվին բաղարը և նրա պեղումները, էջ 172:

² Նույն տեղում, էջ 177—178:

¹ Կ. Ղաֆաղարյան, Գվին բաղարը և նրա պեղումները, էջ 178:

տծուխը հեռացնում, իսկ ոսկու հատիկները անջատելով պահում էին անհրաժեշտության գեպըրում գործածելու համար: Ոսկու նրբագույն լարից շատ փոքրիկ կտորներ կարատելով կարելի էր ծայր աստիճան մանրիկ հատիկներ պատրաստել: Տասնյակ, հարյուրավոր, նույնիսկ հազարավոր նման հատիկներ կայցնելով, զոդիչ նյութերի (առավելապես բորակի) օգնությամբ պատրաստում էին ոսկե հատիկավոր զարդեր, որոնք արտակարգ գեղեցկություն են ունենում:

Հատիկավոր ոսկե երկու տեսիլի օղ գտնվել է Կարմիր-բլուրում և պատկանում է 7-րդ դարին մեր թվ. առաջ¹: Հատիկներով զարդարված են Սիսիանում գտնված ոսկե կախիչները: Գառնիում գտնված տականջօղերը (պահվում են Պետական պատմական թանգարանում) զարդարված են նույն եղանակով, թեև այստեղ հատիկների գործադրությունը շատ զուսպ է: Միջին դարերում այդ եղանակը կիրառվել է սահմանափակ չափերով: Դրա օգնությամբ զարդարված են Դվինում գտնված ապարանջանների օձազլխի ձև ունեցող օղերը²:

Փորագրությունը ոսկերչության մեջ հաճախ կիրառվող եղանակներից մեկն էր: Զուլածո, կաածո և այլ տեխնիկայով պատրաստված ոսկե և արծաթե իրերը շատ հաճախ զարդարում էին մետաղե զրչի կամ խաղիչի օգնությամբ կատարվող փորագրություններ: Նման երկաթե զրչի մի օրինակ գտնվել է Գառնիում: Այս եղանակով կարելի է փորագրել ամեն տեսակի զարդեր ու պատկերներ, նաև անել մակագրություններ: Փորագրությունը է զարդարված խոտակերպ սք. նշանի տուփի ներսի մասը, սրբ ներկայացնում է բարձրարվեստ բուսական օրնամենա և երկու՝ դեմ առ դեմ նստած եղջերուներ:

Դվինում 1936 թ. գտնված ոսկե իրերի

¹ В. Б. Пнотровский, Кармир-блур I, стр. 83.

² Կ. Ղ ա ֆ ա դ ա ռ յ ա ն, Դվին բազարը և նրա պեղումները, էջ 176, նկ. 152:

գանձի ապարանջաններից մեկի սոզնակավոր փակի շրջանաձև վահանի վրա, հատիկավոր շրջանակի մեջ փորագրված է ինչ որ դազանի, թերևս առյուծի, գլուխն ու առջևի մասը երկու ոտքերով¹: Փորագրիս զարդեր կարելի է տեսնել ձուլելու, կռելու, դրվաղելու և այլ եղանակներով պատրաստված շատ իրերի վրա:

Հայ ոսկերչները գործադրել են մի տեսիլ-նիկական միջոց, որը շատ հազվագյուտ է: Դա եկարի ֆոնի հեռացումն է: Պատրաստելով նման իրեր, ոսկերիչները ոսկե կամ արծաթե թիթեղի վրա գծագրում էին այն պատկերները կամ զարդերը, որոնք պետք է ստացվեին թիթեղի վրա, դրվագում էին դրանք, ապա հեռացնում նրանց ֆոնը կտրիչներով կտրելու եղանակով: Այսպիսով, ստացվում էր համատարած ծաղկազարդ կամ այլ պատկերներով զարդարված ցանց-կեն թիթեղ, որով կազմում էին զրքերը կամ պատրաստում տուփերի կախարիչները:

Նման զարդեր պահպանվել են Մատենադարանի 17—18-րդ դարերի մի քանի ձեռագրերի կազմերի վրա, (տե՛ս օրինակ՝ 1685 թվ. № 6789 ձեռագրի կազմը, իսկ ավելի հները մեկ հայտնի չեն: Սակայն, նկատի ունենալով, որ նկարի ֆոնի հեռացումը, օրինակ, ջնարակած կավե անոթների վրա հանդիպում է դեռևս 10-րդ դարում, իսկ արծաթե իրերի զարդերի ֆոնը հեռացնելը սկզբունքով դրան նման է, կարելի է ենթադրել, թե հայ ոսկերիչները այդ տեխնիկան միջին դարերում ևս գործադրել են:

Ոսկե իրերը շատ հաճախ զարդարում էին թանկագին քարերով, նույնը անում էին իհարկե նաև արծաթե իրերի նկատմամբ: Այս տեխնիկան հայկական հին աղբյուրներում կոչված է քնդիլուզանիլ²: Հայ մատեն-

¹ Կ. Ղ ա ֆ ա դ ա ռ յ ա ն, Դվին բազարը և նրա պեղումները:

² Ղ ա զ ա թ Փ ա ռ պ ե ց ի, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1904, էջ 10: Ե ղ ի շ Ե, Պատմութիւն Վարդանանց, Տփլիս, 1904, էջ 197—198: Մ ո զ ս ե ս Կ ա ղ ա ն Կ ա տ վ ա ց ի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 200:

նապրումը մեջ տարբեր ժամանակներին վերաբերյալ կարելի է դասել տասնյակի վիպյություններ, որտեղ խոսվում է ոսկեղեն և արծաթեղեն իրերի վրա թանկագին և գույնըղղուց քարեր ազդեցանելու մասին. այդպիսի առարկաները կոչվում էին ընդելուզյալ, ականակապ, ականակուռ: Նման իրեր, սպասներ, խաչեր, դրքերի կազմեր, տուփեր շատ են հիշատակված մատենագրական աղբյուրներում, ձեռագրերի հիշատակարաններում և վիմական արձանագրություններում. մենք կսահմանափակվենք, բերելով միայն մի երկու վիպյութուն:

Ստեփանոս Օրբելյանը ասում է, թե Սյունյաց Սոգոմոն կախկուպոսը 10-րդ դարի կեսերին «ասյ կազմել խաչ յոսկուց ի մեծարհեստ ճարտարաց, և զարդարէ մե՛հագին ակամբք և մարդարտով... և դրէ ի վիբայ զիրն անուն...»¹:

Ներսես Շնորհային էլ գրում է. «Ոսկի ձուլս կռեցին խաչանման, յականցն շափելից ցուցեալ զնա զարմանագան»²:

Գլխում գտնվել են մատանիներ, որոնք զարդարված են փրսուլյա ակներով: Մատենագարանի ձեռագրերի կազմերի վրա հանդիպում են առանձին խաչեր, որոնք ընդելուզված են ակնեղենով, իսկ ավելի ուշ ժամանակներից (16—17-րդ դդ.) պահպանվել են ընդելուզված ամբողջական արծաթյա կազմեր: Մեծ թվով ալյուրիսի դրքեր և խաչեր կան էջմիածնի վանքի թանգարանում և պահպանվում:

Ընդելուզումը շատ հին ժամանակներից է կիրառվում (սկսած բրոնզե դարից): Ընդելուզված է եղել Տիգրանի թագուհի Բարեր պուլիսի օղեր գտնվել են Գառնիում, իսկ 5-րդ դարի մատենագրության մեջ ոսկեղեն, արծաթեղեն, զարդերը հիշատակվում են համարյա միշտ իրեն ընդելուզված դարերը:

Ոսկեգոծելու, ոսկեջրելու և արծաթաջրելու

¹ Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Յ Ա Ն, Պատմութիւն տանն Սիսական, էջ 215:

² Ն Ե Ի Ս Ե Ս Շ Ն Օ Ր Հ Ա Յ Ի, Բանք շափու, էջ 246:

լու և զանազան նույնպես լայնորեն կիրառվել է ոսկեջրելու և արծաթագործության մեջ:

Ոսկեգոծելը ժողովրդական բարբառում կոչվում է նաև ոսկեջրել: Սակայն, բացի ոսկեջրելուց, կար ոսկեգոծման մի հատուկ տեխնիկա, երբ ոչ մետաղե իրերը՝ փայտ, ոսկոր, կաշի, մաղաղաթ, ապակի և այլն ծածկում էին ոսկե փոշու շերտով կամ տակու վարադով՝ թե՛ կրակի օդնություն (օրինակ ապակու վրա) և թե՛, մանավանդ, կրպցընոզ նյութերի ու կոկիչի օդնությունը:

Հին հայկական մատենագրության մեջ ոսկեջրելու և արծաթաջրելու համար գոյություն ունեւր հաճախել հատուկ տերմինը, բնական կարելի լինեւր ոսկեջրելը կամ արծաթաջրելը տարբերել ոսկեգոծելուց և արծաթագոծելուց, որոնք կարող էին ավելի լայն իմաստով գործածվել: «Նւ զրաժակս և զըմպելիս արծաթեղենս քանդականս յոսկի համակեալս»:

Իրերը ոսկեջրելու կամ արծաթաջրելու համար նախ պատրաստվում էր ոսկեջուրը կամ արծաթաջուրը: Ալքիմիական ձեռագրերում պահպանվել են ոսկեջուր պատրաստելու մի քանի կերպեր, բայց զբանցից ամենահիմնականը ոսկին անդիլի մեջ լուծելն էր և այն ևզանակով ոսկեջուր կամ ոսկու վարազ ստանալը, որը ալքիմիական ձեռագրերում անվանված է «ոսկի հալել»:

15-րդ դ. մի ձեռագրում պահպանվել է «Երաւ վասն ոսկոյ հայելոյ», որը մեջ ենք բերում ամբողջովին:

«Յառաջն առ զոսկին կամ հնդի, կամ մըսբի, կամ ֆլորի, և ծեծէ, քան զտերեւի և կրտրատէ մկրատով վերայ թղաթի, և քան զիր կըշեռն Զ ժիպակ լից ի վերայ և դի'ր յոսկերչի բուտակն, որ եռա, զեզ որ եռա, զու քար(շ)է զինքն ի կրակի եզքն, որ հովանայ սակաւ մի, և զաղաթեալ ալ դիր, որ եռա և հան ի դուրս. Գ հեռ արա, ապա դիր ամանով ջուր ապակի չեղի, ոչ խիստ, և դիր մաղա-

¹ Ս ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա յ ի, Պատմութիւն, էջ 182:

դաթ ի ջուրն և լից ի վերայ մագաղաթին, որ ի ջուրն կայ. ապա առ ի ձեռնդ և տես թէ կակուզ է վերդ վեղ նա աղեկ է. ապա լից ինքդ ի նոր աթլաս կտաւ, քամէ որ սնդիկն ելանէ, ապա առ զինքդ ի յայն կտան, և դիր ի հետ իւրն ժ քան զինքն լեւած ծծումբ, և ծրարէ զինքդ ի սերտ մագաղաթ կամ ի սանկափաշկուլ ի մօին դեհն և ոչ ի մազին. խիտս պինդ կապէ, որ շէնէ և զինքդ մագաղաթովն արորէ ձեռաքդ օր մի. և յորժամ բանաս գտնուս զինքդ սև փոշի, որպէս մուր. ապա լից զինքդ ի յսակերչին բոթակին, և զիր ի վերայ գործելոյ կրակին, և փշէ այնչափ մինչև ծուխն սպիտակ ծիրանի գառնայ, ապա հան և լից ի վերայ մառնառին և հար քաջ քաջ. ապա ժողովէ և լից ի յապակի աման և լուս յիստակ կրաջրով, յորով անգամ, որ յիստակի ամենն և յորժամ կամենաս գրել՝ ամղ արկ և գրէ, և այդ սակոյն զիրն. և յորժամ շորանայ դու մահակովն կոկե. և վաւրանի ջրովն ի յոսկին խառնէ որ կարմիր դա»¹:

Ճիշտ է, մեջբերված վկայությունը վերաբերում է ձեռագրերի մանրանկարները ոսկեղօծելու համար պատրաստվող վարազին, բայց նրանով կարելի էր ոսկեղօծել նաև փայտը, կաշին, նաև ապակին և արծաթը, իսկ այս դեպքում վարազը կամ ամաղգամը քսելուց հետո պետք էր ոսկեջրովը կամ ոսկեղօծվող իրը տաքացնել մարմանդ կրակի վրա:

Անց հասած ոսկեջրված իրերի թվին են պատկանում էջմիածնի վերևում հիշատակված մասնատուփերը, Խոտակերաց սուրբ նշանը և նրա աուփը, մեծ թիվ են կազմում Նետագայի ձեռագրերի ոսկեջրած կազմերը, խաչերն ու աուփերը:

Գործնական խոշոր նշանակություն ունեւր դանագան մետաղներից համաձուլվածքներ ստանալը. օրինակ՝ արծաթի և պղնձի որոշ հարաբերություն խառնելով ստանում էին ոսկեգույն ձուլվածք, որից իրեր և տար-

կաներ էին պատրաստում: Ալքիմիկոսներն ստանում էին նաև արծաթագույն համաձուլվածք: Այս դեպքում պղնձին կամ բրոնզին մեծ քանակությամբ կապար էին խառնում, կամ արծաթ էին խառնում կապարի հետ, կամ էլ պղնձ էին խառնում արծաթի հետ: Ուշագրավ է, որ ոսկեգույն ու արծաթագույն համաձուլվածքներից պատրաստված իրեր և զարդեր պահպանվել և մեզ հասել են, մանավանդ Մատենադարանի ձեռագրերի կազմերի վրա փակցրած վիճակում, որպիսին են խաչելություն գորելեֆ արձանիկները, կոստղերը և կազմերի որոշ մասերը:

Այս կամ այն մետաղին նմանող ձուլվածքը կոչվում էր այդ մետաղի դուռը կամ նրա դուռը մտնող, այսինքն նրա տեսքն ընդունող մետաղ: Այսպիսի «գոներ» կարող էին լինել ոչ միայն մետաղների, այլև ուրիշ նյութերի համար: Ալքիմիական ձեռագրերում շատ են նման դաներ պատրաստելու եղանակները կամ «կերպերը»: Մեր թեմայի աեսակետից կարևոր է բերել մի քանի օրինակ սկու (ծածկանունը՝ արեգակ) և արծաթի (ծածկանունը՝ լուսին) դաներից:

«Դուռն արեգական: Առ Դ մթխալ արեգակն և Դ մթխալ սնտիկ, Դ մթխալ կէքարի աղ, Դ մթխալ կարիճ գեղին [ծծումբ]. սղկ զիրենք պահուռ լեղով Գ օր սղկելով խմցունելով և խորովելով, և զիր զիրենք ի կթիսս մի ապիկի և ամբացոյց զխուփն. և զիր ի պուտուկ մի որ լինի ի մէջն փոշի, և ամբացոյց զխուփն պուտուկին և զիր ի վերայ կրակին ի տամս Գ օր և Գ զիշեր: Հան և աեսանես կապած (այսինքն թվարկված նյութերը միացել են իրար). և առ իւրմէ Ա մի ի վերայ ԽԴ լուսնի (1:44) ելանէ ապրիկ [ոսկեգույն մետաղ] և պահէ լաւ»¹:

Ալքիմիկոսները գիտեին ոսկեգույն մետաղ պատրաստել տարրեր նյութերից ալիետայ նպատակներով օդառազործելու համար: Արանք իրարից ապրերվում էին նաև արժեքով: Եթե վերևում բերված օրինակում ոս-

¹ Մատենադարանի ձեռագիր N 573, էջ 238բ—239 ա:

¹ Կ. Ղ ա ֆ ա ղ ա բ յ ա ն, Ալքիմիան պատմական Հայաստանում, էջ 102:

կեղույն մեռազ ստանալու համար, այնու-
մեհնայնիվ ոսկին գործածվել է, ապա մշուս
դեպքերում՝ շէր գործածվում: Ահա մի այդ-
պիսի օրինակ.

«Ռուռն արեգական: Առ թուլիա [ցինկի
օքսիդ] Ա. բաժին, արծիւ [մկնդեղ] կէս բա-
ժին և քան զինքն զաճ և քան զինքն շապ-
ազա զիրեանքն և շաղաղէ կաթրանով և
խորովէ զինքն զիշեր մի, որ այլի և ոհա-
նայ [սեանա]. ձգէ իւրմէա ի վերայ զօհա-
լին [արճիճ]՝ լինի արեգակն»¹:

Ոսկեղույն մետաղներ ստանալու եղա-
նակները բաղմամբիվ են: Նույնը կարելի է
ասել, նաև արծաթագույն ձուլվածքներ
ստանալու մասին: Ստորև բերում ենք երկու
օրինակ տարբեր ձևազարկից: «Առ. Ժ. արամ
սպրիկ հլաչեկ, արամ և կէս սլզինձ, նոյն-
պէս և սնտիկ արամ և կէս, զաա ի միմեանց
հալէ գոսսա և լից զերկոսինն ի վերայ
սլզինձին՝ լինի արծաթ»²:

Համաձուլվածքների գույնը կաշունայնե-
լու և որակը բարձրացնելու համար ալքիմի-
կոսները, երբեմն մի շարք լրացուցիչ գոր-
ծադրությունների կին զմում: Օրինակ՝

«Ռուռն լուսնի: Առ սնդիկ և լից երկաթի
շերեփ ի կրակն, և լից ի վերայ այսիւ ազն
կարճով [ծծմբով], նայ կապի սնդիկ: Առ
իւրմեն Ա և ձգէ ի վերայ Ժ կրաչեկի կշանէ
լուսին: Եւ թէ կրացուցիր գանդիկն իւղովս
[նշատրի իւղով՝ թապիթով] շատ երկուով՝
հայ կրանայ, սլզի և ձգէ զԱ ի վերայ Լ մուշ-
թարոյ [սնազի]՝ կշանէ լուսին զեղեցիկ»³:

Կաշին և ալկիլի պարզ կերպեր, օրինակ.

«Եթէ որ զխաթիայն [ցինկի օքսիդը] ի
եռացեալ սրինձն արկանէ նա՝ կարմրութիւն
ի դեղնութիւն դարձուցանէ» (այսինքն սլզին-
ձը սսկեղույն է դառնում):

«Եւ եթէ զառիկ [մկնդեղ] ի եռացեալ

¹ Կ. Ղ ա ֆ ա գ ա ր յ ա ն, Ալքիմիան պատմական
Հայաստանում, էջ 92:

² Մատենագարանի ձեռագիր N 4298, էջ 220,
Բառացի նույնը գանում ենք ձեռագիր N 3409, էջ
104ր:

³ Կ. Ղ ա ֆ ա գ ա ր յ ա ն, Ալքիմիան պատմական
Հայաստանում, էջ 78:

սլզինձն արկանեն՝ զկարմրութիւն ի սպիտա-
կութիւն դարձուցանէ, թէպէտ և սակաւ մի
սպականէ. և գնոյն ապականութիւնն բժըշ-
կել՝ իմաստնոցն է»:

«Եւ սակաւ մի կլաչեկ, զբազում մանրու-
նըս սլզինձի ի սպիտակութիւն փոխէ, թէպէտ
և յոյժ չորացուցանէ»:

Եթե մետաղների միայն գույնն էին փո-
խում, իսկ ստրուկտուրան, բազադրուկցանը
և այլ հատկութիւնները նույնը թողնում,
ապա դրա համար գործադրում էին շատ
պարզ միջոցներ: Օրինակ.

Արծաթը սսկեղույն ներկելու համար ձվի
զեղնուցը մարմարե տախտակի վրա կամ
հավանքի մեջ լավ արորելու կամ ծեծելու
եղանակով ստացված ձկնը քսում էին վրան
և բավակաճանաչափ գիմացելուն զեղին գույն
էր ընդունում⁴:

Պեղումներով հայտնաբերած նյութերի
մեջ ևս կան սսկեջրած և արծաթաջրած
իրեր: Անիում գանվել է կրկաթի մասանի,
որի ական տեղ զբված է սլզինձ սլզուանկյուն
շաքանակ առյուծի պատկերով և այդ շրը-
ջանակը սսկեղուցով է²: Նույն տեղում
հայտնաբերվել են նաև արծաթաջրած թա-
սեր³, ինչպես և սկանջի օդ⁴:

Ոսկեղուցումը, սսկեջրումը և արծաթա-
ջրումը և սսկեղույն և արծաթագույն ձուլ-
վածքներ ստանալը կուլված էին փոխարի-
նելու թանկագին մետաղներից զարդեր
պատրաստելուն և սպասարկում էին նաև
բազարի, ինչպես և դշուղի միջին կարողու-
թյան խաթի բնակչության պահանջարկը: Բու-
լբուրովին քնշագուրկ բնակչությունը զարդեր
հազվադեպ էր գործածում, այն էլ էժանա-
ղին զարդեր՝ աղակուց, սլզինձից, կրկաթից:

Միջին դարերում գործադրվել է նաև
սևաղը, որը սսկերչության մեջ ալժամ ամե-
նատարածված և էֆեկտիվ ակնինիկական

¹ Մատենագարանի ձեռագիր N 8446, էջ 79ա:

² И. О р б е л и Каталог Аншійского музея,
стр. 103.

³ Նույն տեղում, էջ 67 և 72:

⁴ Նույն տեղում, էջ 104:

միջոցներից մեկն է: Մատենագրական աղբյուրները և ոսկե իրերի գլուխորը ցույց են առելիս, որ սևադելու տեխնիկան Հայաստանում հայտնի է եղել վաղուց: Դեռևս Մովսես Խորենացու, ավելի ուշ Գրիգոր Մաղիստրոսի մոտ հանդիպում է «ղրահնանիկոն» բառը, որը բացատրվում է իբրև արծաթի վրա կիտած միհնե կամ սևադ: Սևադի կիրառման անստորկելի ապացույցը մենք ունենք 10—11-րդ դարերից: Դա մի արծաթե մատանի է, որը գտնվել է Դվինի միջնաբերդի առավել խորը շերտից և նախընթաց է սևադելու եղանակով¹:

Սևադելու տեխնիկան հետևյալն է. նախ պետք էր պատրաստել սևադը, որի բաղադրություն մեջ մտնում էին արծաթի, արծիձի, կարմիր պղնձի փոշի կամ մանր խարտուր, ծծումբ, պտտաշ, բորակ և սովորական աղ: Այս խառնուրդը կազմելով որոշ հարաբերություններ ստանում էին փոշու զանգված, որը բացում էին ջրով աչնպես, որ փոքր ինչ մածուցիկ լինի, ապա դրանով պատում էին արծաթե անոթի կամ զարդի նախօրոք փորագրված մասերը կամ պատկերը և արծաթե իրը դնում էին բովի վրա, տաքացնում այն աստիճան, միհնե սր սևադը հալվելով ամուր կաշում էր արծաթե իրին. դրան օգնում էր իրի վրա արված փորագրությունը: Սևադած պատրաստի իրը սանեցնելով, մետաղե դրիչով կամ դանակով ուղղում էին զարդի կամ պատկերի եզրերը և եթե սևադը տարածվել էր փորագրությունից դուրս՝ ավելորդ մասը հեռացնում էին քերելու եղանակով: Սևադել կարելի է նկարի ֆոնը կամ նրա գծադիր փորագրությունը, առաջին դեպքում ստացվում է զարդի կամ պատկերի ու ամբողջ իրի ֆոնի սև և արծաթագույն հրանգնեթի գույակցություն. երկրորդ դեպքում գույների խաղը ավելի շքեղ է լինում, սրովհետև սևի և արծաթագույնի գույակցությունը ստացվում է նաև բուն զարդարված մակերեսի վրա:

¹ Կ. Ղաֆաղարյան, Դվին բաղաբը և նրա սկզբումները, էջ 73:

Մատենագրանի ձևագրերում պահպանվել են «սավատ բոնելու կերպեր»: Մի ձևագրում աչք վերնագրի տակ բերված է սևադը բանելու, այսինքն պատրաստելու տեխնիկայի և դործադրելու ընդարձակ ու ամբողջական նկարագրությունը: Աչք ձևագրում կարգում ենք. «Նախ ա՞ն մեկ մսխալ խալաս արծաթ և 6 մսխալ կարմիր պղինձ, հինգ մսխալ արծիձ, բայց արծաթն որքան շատ լինի, այնքան ավելի լավ սավատ էլինի: Ն. գուն յառաջ պղինձն և արծաթն ի միասին լավ հալէ, և ետոյ արծիձըն քիչ քիչ ցիկ (ձգիր) հալածիտ մեջն, միհնե բուրն ի միասին հալվին սու միանան, ետո (բուխն) այսինքն կըծիճն կրակից մի քիչ հեռացուր և հինգ հատ մէկ մէկ մատնաչափ քուքուրթ առ և մէկ մէկ ցիկելով կըճճին մեջըն հինգ հատն ալ ուտեցուր հալած արծաթիտ պղնձին և արծիճիտ. և դործէլով (ածուխով) լավ խառնէ, որ բուրն ի միասին միանան և ետոյ լից մէկ փոս բանի մէջ կամ մէկ խշաակի մէջ, և որ պաղի առ կոտոէ և կրկին հալէ, կրկին դործէլով խառնէ և այսպէս երեք անգամ արտ և վըրայ չորս անգամին լավ բարակ ծէծէ և վեց անգամ տաք ջրով լըվայ, և ետոյ առ մէկ բաժիթ թլնէթիտ, որ է թանուբար (ոսկեբորակ) և չորս. բաժին լավ բորայ, էրկուսն միատեղ կիէ և լից ծեծած սավասիտ վրայ. և ինչ տալանք որ կամիս սավատ անել, նախ լավ լըվայ և սավատն լից զալամով փորած տեղերուտ մէջն և բռնէ կրակին վրա որ քիչ չորանա և ապա բռնէ քուրային վերայ և զօւ կրակով հալեցուր այն լըցած սավատ և թող որ սառի, ետոյ խատակ ջրով լըվայ և ըռանակ երեսն և կրկին լըվայ կամ ֆոշայէ, կրակով չորացու և քիչ շինած բորաջրից հաւասար վըրան քրսէ և կրկին կրակին վերայ բռնելով հալեցու և խաղացու սավատն. ետոյ շըպէ և կրկին երեսն խառնէ կամ ըռանակ և կարելի է որ երեսըն պաղի տեղ (տեղ) ծակծակ էկած լինի, այն տեղն դալամով խտակէ և սավատ լից և կրակի վե-

րայ հայկոսը, կրկին շրպէ և բռնատէ և սպազ գրեաշն արայ և ուրախացիր»¹:

Հայ սակերիչները թեև սակալ, բայց գործածել են նաև արծնապատումը (էմալ): Ապակու վրա էմալով կատարված նկարներ հանդիպում են Անիի ու Գլխի պեղումների ժամանակ գտնված 12—13-րդ դդ. նմուշների վրա, իսկ արծնապատ մետաղ այդ դարերից մեզ չի հասել: Արծնապատ արծաթի հնագույն նմուշները, սրոնք մեզ հայտնի են, պահպանվել են Մատենդարանի ձեռագրերի արծաթե կազմերի վրա և դրանք 15—16-րդ դարերից սվելի վաղ օրինակներ չեն: Այնուամենայնիվ նրանք ցույց են տալիս, որ արծնապատման տեխնիկան, մանավանդ ցանցավոր արծնապատումը (перепорочная эмаль), Հայաստանում գործադրվել է թեև նվազ չափով, քան հարևան վրաստանում և Բյուզանդական կայսրության մեջ, սրտեղ այն տարածված է եղել, հասնելով բարձր զարգացման: Վրացական ցանցավոր արծնապատ իրերի լավագույն նմուշներից է, այսպես կոչված, Խախուլի Տիրամոր պատկերի տուփը, որը պատրաստված է Գելաթիում 1125—1154 թվականների միջև²:

Ոսկերչությունը հին Հայաստանում զարգացած և հմտություն պահանջող արհեստներից մեկն էր: Իզուր չէ Ներսես Շնորհալին ոսկերչին անվանում «կարի դիտուն» արհեստավոր: Ոսկերիչները պատրաստում էին բազմապան իրեր, առարկաներ և զարդեր: Ոսկերիչը տեղ է գտել նաև ժողովրդական սիրալին երգերի մեջ: Օրինակ, սիրուհուն նվիրված մի գտվում ասվում է.

«Դու բարձր ես բերդի նման,
Հուն ի քո վերայ շանցանի:
Ոսկի կայ ի քո միջին,
Ոսկերիչն ի ներս կրանի.

Մառայ սակերչին մեռնիմ,
Որ սակին ի բան կու տանի¹:

Ոսկուց և արծաթից իրեր պատրաստելու և դրանք զարդարելու համար կիրառվում էր տեխնիկական ավելի քան 15 եղանակ, այն է՝ մոմի մոդելի, քարե, կավե և հողե կաղապարների օգնությամբ ձուլելը, կռելը, դըրվագելը, դրսշմելը, առանց ձուլելու խըշտակի մեջ թիթեղից իրեր պատրաստելը, թելերով հյուսելը, հատիկներով զարդարելը, փորագրելը, ընդլուծանելը, ոսկեզօծելն ու ոսկեջրելը կամ արծաթաջրելը, ոսկեզույն և արծաթագույն համաձուլվածքներ ստանալը, սևադելը և արծնապատելը: Այս բազմապան տեխնիկական եղանակների գործադրությունը վկայում է ոչ միայն ոսկերչության արհեստի բարձր զարգացման, այլև նրա մեջ աշխատանքի բաժանման, խորացման մասին: Պարզ է, որ միևնույն արհեստավորը ոչ միայն չէր կարող ոսկուց և արծաթից իրեր պատրաստել, հմտություն ցուցաբերելով ոսկերչության տեխնիկայի բոլոր ճյուղերում, այլև դրանցից մի քանիսի բնագավառում: Ոսկերչության տեխնիկայի բազմազանությունը և արհեստավորների բարձր հմտությունը, առաջ էին բերել ոսկերիչ արհեստավորների մի քանի իրարից տարբեր և ինքնուրույն մասնագիտություններ:

Ոսկուց և արծաթից իրեր պատրաստելու տեխնիկայի մի քանի տեսակները հարմարեցվել էին շուկայում տարբեր կարողության գնորդների պահանջի սպասարկմանը, այդպիսին էին, օրինակ, կռելը, դրսշմելը, քարե կամ կավե կաղապարով ձուլելը և ոսկեջրելը: Մոմե մոդելով իրեր պատրաստելը տեղի էր տվել փայտե մոդելով հողե կաղապարի մեջ ճիշտ է պակաս նուրբ, բայց բավականաչափ բարձրարժեքա իրերի արտադրությունը:

Ավարտելով մետաղագործությունը նվիր-

¹ Պրոֆ. Մ. Արևիկյան, Գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1940, էջ 138:

¹ Մատենագրանի ձեռագիր № 9098, էջ 238ր
² Ս. Я. А м и р а п а ш в и л и, История грузинского искусства, стр. 124.

ված գլխի շարադրությունը, կարելի է անել հետևյալ համառոտ եզրակացությունները.

ա) Մետաղի հանույթով և մշակմամբ միջնադարյան Հայաստանը հանդիսացել է մետաղագործության կենտրոններից մեկը: Մետաղագործները այստեղ ոչ միայն լրիվ շահով բավարարել են երկրի բնակչության սնտեսական, ազդմական, կենցաղային և այլ պահանջները, այլ և մետաղները և նրանցից պատրաստված արտադրանքը արտահանել են երկրից դուրս, որը նշված է արական տղբյուրներում:


բ) Մետաղագործությունը 9—13-րդ դարերում հիմնականում կենտրոնացել էր քաղաքներում: Գյուղերի, ֆեոդալական զրգյակների և վանքերի մետաղագործ արհեստավորները երկրորդական դեր էին խաղում և ստիպված էին իրենց տեղը հետզհետև դիջել քաղաքի մետաղագործներին:

գ) Մեծացել էր բնակչության պահանջը մետաղե արտադրանքի նոր տեսակների նկատմամբ, զարգացել էր մետաղագործությունը, նկատելիորեն առաջադիմել էր նրա տեխնիկան: Այդ ամենը նպաստում էին աշխատանքի բաժանման խորացմանը, որի

շնորհիվ մետաղագործական հիմնական արհեստները ճյուղավորվել էին, առաջ էին եկել մետաղագործության բազմաթիվ նոր ճյուղեր, մասնաճյուղեր, որոնք անջատվելով մայր ճյուղերից ինքնուրույն արհեստներ էին դարձել:

դ) Մետաղագործները 12—13-րդ դարերում սկսել էին արտաշքել առավելապես շուկայի համար, դրան համապատասխան փոփոխվել էին մետաղե իրերի արտադրության մի շարք տեխնիկական միջոցները՝ հարմարեցվելով իրերի, արդեն ոչ թե անհատական և եզակի, այլ շուկայական և բազմապատիկ արտադրության պահանջներին: Նման միջոցներ էին մանր իրերը հողով լցվող երկվեղկ կաղապարի մեջ ձուլելը, փայտե և կավե մոդելի օգտագործումը նույն իրը բազմիցս ձուլելու համար, խոշոր իրերը ձուլելիս փայտե կաղապարով հանված դետալների մոդելների կցումը, տակեջրելը, արծաթաջրելը և սկեգույն և արծաթագույն համաձուլվածքներ ստանալը, որոնցից պատրաստում էին կենցաղային գործածության առարկաներ, մանավանդ վարդեր:





ՉՈՐՐՈՐԳ ԳԼՈՒԽ

ՔԱՐԻ ԵՎ ՓՄՅՏԻ ՍՇԱԿՈՒՄ, ՇԻՆԱՐՍԻԱԿԱՆ ՍՐՀՆՍՏՆԵՐ

1. ՔԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը շատ հարուստ է իբրև շինանյութ ծառայող և զանազան իրեր սրտաբաստելու համար գործածվող քարերով: Պատահական չէ, որ հայկական ճարտարապետության մեջ քարը բացառիկ տեղ է զբաղեցրել: Կարելի է ասել, թե հայկական ճարտարապետությունը քարի ճարտարապետություն է: Քարը նշանակալից դեր է կատարել նաև՝ նրանից զանազան ամուսնական ու կենցաղային կիրառություն անեցող հարմարանքներ, իրեր և սուարկաներ նյութատեսչու գործում: Միանգամայն բնական է, որ Հայաստանում դարդապատ են եղել քարի մշակման հետ կապված մի շարք արհեստներ, ինչպես օրինակ՝ քարհատություն, բարտաշություն, որմնադրություն, քարակափություն և քանդակագործություն: Այս տերմինները որոշ չափով պայմանական են, ստովհեան մեկը մյուսի իմաստով կամ մեկը մյուսի փոխարեն հաճախ են գործածվել: Ամենից ավելի բնագնացը էին Բարգաթե և Բարգաթուրյուն տերմինները, որոնք գործածվում էին քարի մշակման բոլոր հյուսիս

ու արհեստների համար, անգամ Տրգատ ճարտարապետան էլ կոչվել է քարգործ¹: Սակայն քարի մշակման հետ կապված տարրեր արհեստներ գոյություն ունեին, թեև երբեմն ոչ խիստ սահմանափակված: Կեղտն նույնպես անդրադարձնում է այդ իրողությունը, տարրեր, բայց իբրև խիստ շանջատված տերմինների առկայությամբ:

Քարը շինարարության մեջ կամ այլ նպատակով օգտագործելու համար, ամենից առաջ պետք էր դանել պահանջվող քարի տեղը, քարհանքը կամ, ինչպես միջին դարերում էր սովոր, Բարհաար²: Այնուհետև հարկավոր էր քարը կարել բարհատում, իսկ այդ գործով զբաղվող արհեստավորը նույնպես կոչվում էր բարհատ: «Մայրցյ քարահատս հատանել զբարինս կոխածոյ: Ետուն

¹ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա յ ի, Պատմություն, էջ 251:

² «Ձի ի կապանս և ի բարհատս գրաբր կենսո իւրեանց ծախսցին» (ՆԶԲ բարհատ բառը), տե՛ս նաև Վիճական տարեգիր, էջ 58:

արծաթ քարահատացն և հիւսանցն»¹։ Հաղարծին վանքի սեղանատան վրա թողնված մի արձանագրութեան մեջ ասված է. «Քրիստոս Աստուած ողորմեսցի Աբասաձորոյ քարահատնոյն, որ զտներոյս տեղս հատին»²։ Այս Աբասաձորը «Քջնոյ նահանգի» հայտնի հանքավայրն է, որտեղի հանքահատները, որպէս փորձված քարահատներ հրավիրվել են հուշարձանի սեղանատան և այլ շէնքերի տեղի ժայռերը հարթելու և հիմքերը ժայռի մեջ փորելու համար։ Նույն բառը գործածվում էր և՛ հանքի, և՛ արհեստավորի համար։ Բնորոշ է, որ քարը հատող գործիքը՝ մուրճը ևս կոչվում էր քարհատ։ Սակայն, առկա է տարբեր դաղափար արտահայտող նույն տերմինի որոշ տարբերակում՝ քարահատ (արհեստավոր), քարհատ (քարհանք) և քարհատ (գործիք)։

Քարահատ արհեստավորները սովորաբար վրադվում էին միայն քարը կտրելով, այս կամ այն պատվիրատուի համար, որից և ստանում էին իրենց վարձը։ Սակայն նրանք երբեմն քարը կտրում էին անկախ պատվիրատուից և վաճառում հուշնիսի նախօրոք տաշելուց, մշակելուց հետո։ Դրա վերաբերյալ, մենք ուղղակի վկայություն ենք գտնում Վարդան Այգեկցու առակներից մեկում, որտեղ կարդում ենք. «Քարգործ մի ելլուժի անուն կարէր և շինէր ամեն ար Բ քար, Ա քարի գինն ի տուն խարճէր և զԱ աղքատաց բաշխէր»³։ Ուրեմն այս ելլուժին միայն քարհատութեամբ չէր պարտպում, այլև մշակում էր քարը և վաճառում։ Տեքստի շարունակությունից երևում է, որ նա եկեղեցի, խան (իջևան) և կամուրջ էլ է շինում (ինչպէս պետք է հասկանալ մյուս քարգործների հետ միասին) և կոչվում է ոչ թե քարահատ,

այլ քարգործ։ Եսա բնորոշ է, թե ինչ է շինում քարգործը, սակայն տվյալ դեպքում ուշադրութեան պետք է դարձնել այն հանգամանքի վրա, որ նա քարը կտրում, մշակում և վաճառում էր, այդ եղանակով վաստակելով իր տան վրա կատարելիք օրվա ծախսը։ Դա արդեն մի երևույթ էր, որը հետեանք էր մի կողմից՝ քաղաքների զարգացման, նրանց մեջ կատարվող համեմատաբար ընդարձակ շինարարութեան, մյուս կողմից՝ քաղաքներում, առևտրի և զբոսայգիական շրջանառութեան մեծացման, երբ արհեստավորը հնարավորութեամբ էր ստանում պատվերից անցնել շուկայի համար արտագրելուն։

Կային և քարգործներ, որոնք ոչ քար էին կտրում, ոչ էլ պատ շարում, այլ պարտպում էին քար տաշելով և կոչվում էին քարտաշ, քարակոփ, թեև այս տերմինն էլ քարգործ լայն իմաստով էր գործածվում⁴։ Քարտաշ վարպետները որմնադիր վարպետների հետ միասին խմբեր կազմած շրջում էին քաղաքից-քաղաք վայրից-վայր շինարարութեան կատարելու համար։ Առավել հմուտ և շնորհալի քարտաշ վարպետները ոչ միայն տաշում, այլև բանդակում էին քարերը՝ շինքի տարրեր մասերի զարգարման համար։ Հայաստանում, սրտեղ բացառիկ նշանակություն թանկ քարի ճարտարապետությունը, քարտաշների շատ մեծ պահանջ կար և այդ արհեստով զբաղվողների թիվը մեծ էր։

Որմնադրույուն։ Ամեն քարտաշ պատ շարել չէր կարող։ Եթե նկատի ունենանք եկեղեցիների հոյակապ քարտաշեն ճարտարապետությունը, ապա պարզ կլինի, որ աշտեղ աշխատել են արհեստավորներ, որոնք մեծ հմտություն են ունեցել պատ շարելու. որմնադրութեան մեջ և զրադվել են միայն այդ արհեստով։ Կա գաղատոս որմաշէն տերմինը⁵։ Եինարար վարպետների թվում որմնա-

¹ Փիլոն, Գիրք խնդրոյ և յուժմանց. «Տեսակն կենաց նտանաց» ճառք, Վարք հարանց ԺԳ (տե՛ս նշՔ. քարհատ բառը)։

² Արձանագրութեանը մեկ տրամագրել է Հոս. Ջանփոլադյանը։

³ Փողովածույր առակաց Վարդանայ, հատ. Բ, էջ 179։

⁴ Տե՛ս նշՔ և Գ. Թաղավորաց ԺԲ, 12։

⁵ Փա վ ս տ ո ս Բ ու զ ա ն զ, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 289։

գիրնեկր, մտնտփանդ առտփել փորձաժաները,
աժազ վարպետներ էին շամարլում, նրան-
ցից մեկը լինում էր շինարարների տվյալ
խմբի աժազ վարպետը, որին իբրև աչյ
խմբի պետի, գեկավարի ենթակա էին մյուս-
ները:

10-րդ և հետագա դարերում արդեն կա-
յին Մանվելի և Տրդատի պես խոշորագույն
ու նրանցից նվազ հայտնի ճարտարապետ-
ներ, որոնք անձամբ ոչ բար էին տաշում, ոչ
էլ պատ շարում և եթև քանդակում էին իրենց
կառուցելիք շինքերի մողեղները կամ կա-
տարում էին այլ բարձրարվեստ քանդակ-
ներ, ապա հանդես էին գալիս որպես ար-
վեստագիտներ: Մակայն լավագույն որմնա-
գիրքները կամ գլխավոր վարպետները երբե-
մըն իրենք էին և՛ նախագծում, և՛ կառու-
ցում, կամ, առնվազն, ընդօրինակում կան-
գուն որևէ շենք:

Գրիգոր Նարեկացուն վերագրվող մի բա-
նաստեղծություն մեջ նկարագրված է շինա-
րարություն պրոցեսը, թեև խոսքը վերաբե-
րում է Սողոմոնի առասպելական տաճարի
շինությունը, որն իբրև թև կառուցում են
էրկնքից իջած հրեշտակները, բայց կասկած
չկա, որ Նարեկացին նկարագրել է իր ժա-
մանակի՝ ուսել շինարարական պրոցեսը,
որը նա կարող էր գիտել իր բնակված Վաս-
պուրականում: Որոշ կրճատումներով բերում
ենք այդ բանաստեղծությունը.

Գովասանություն Սողոմոնի տաճարին¹

Զօրքն ի վերուստ իջեալ առ Սողոմոն
արբայն,

Շինէին զտաճարն.

Ղրկէին զքարըն,

Բերէին զվէմըն:

1 Գրիգոր Նարեկացու այս բանաստեղծությունը տպագրված է Ա. Զոպանյանի «Հայ էջեր»-ում (էջ 59—60), սակայն դերագասում ենք բերել ներկա աժելի հաջող բնագիրը, որը մեզ տրամադրել է Աս. Մնացականյանը, բաղերով Մատենադարանի № 2933 նձագրից:

Արձանագրեալ փայտիցն զողացաւ երկիր,
Շարմեցան լերինք,

Հռչակեցան բարձունք,

Պատառեցան արձանք,

Ի ձայնէ ուռնայղղրոյ ճայլմանցն...

Ի վերնակառն սեմոցն՝ զվարսն հատանլին,

Ի ներքնակառն սեմոցն՝ զնուշն քանդակէին,

Ոսկեխաղաց առնէին զարծաթապատ բեռսն

Ի լծակէ ի լծակն:

Շողանման շարէք զսողոմոնական

Կամարակապ կապէք ի կողակէ ի կողակ,

Հաւ թիթղունս տոնիր զայն

մարդարտաշարերն:

Մասնէք Քիրամն ի տուն տէրոճական,

[Տեսանէք] զարդ զամենայն զոմոցն՝

Ըզշողն և զշուշանն, ըզյուրդանն և զծիրանին,

Եւ զբեհեզն և զբոցազոյն կարմիրն:

Ո՞ւմ նրման փն երկինքն,

Ո՞ւմ նրման են խորանքն,

Ո՞ւր նրման են մարդակ[ք]ն,

Ո՞ւմ նրման են սլասկն,

Ո՞ւմ նրման են սիւնքն,

Ո՞ւմ նրման են գերանքն,

Ո՞ւմ նրման են խարխախքն

Կամ ում վայել է տաճարն...

Ե ոյակքն խոյանըման և սիւնքն բեռապլինտ,

Խարխախն մարբարտահատ,

Հիմունքն անդնդահատ թաղմամբ,

Գուռն և մուտըն գեղեցկատեսիլ

Երկիրն ծիրանագոյն որպէս ծովու նրման:

Քանի՞ թիւ խորամացն,

Քանի՞ թիւ կամարացն,

Քանի՞ թիւ կողակացն,

Քանի՞ թիւ վարագուրացն,

Քանի՞ թիւ կանթեղացն,

Քանի՞ թիւ զանկակացն:

Հազար թիւ խորանացն...

(մշուսներն էլ հազար)

Եւ բիւր մի զանկակացն:

Ահա շինեցաւ տաճարն,

Կատարեցան գործքն,

Էտլմեցան զոմնակքն

Զարթարեցան տեսակքն

Եւ տունս աստուծոյ կոչեցաւ

Կարգեցան, ըստաստորքն մեծի
սրբոյ տաճարին.

Բաշէին գրաբերն,
Ճոխային ճախարակըն,
Դղբրդայր տաճարն,
Ճիշէին ծիծեռնիքն,
Հընչէին զանկակքն,
Եւ ցնծայր Սողոմոնն արքայն
Երգս ի բարձունս
Երգէին նուագելով...»¹:

Քարագործի աշխատանքը մեծ հարգանք էր վայելում. Եկրսես Շնորհալին մեղվի մասին իր համեմատելով քարագործի աշխատանքը իմաստուն գործ է համարում.

«Զերդ ըղբարագործ է այլ իմաստուն,
Հրաշից ծագկանց շինէ իւր տուն»²:

Եթե նկատի ունենանք քաղաքների, բերդերի, վանքերի, կամուրջների, իջևանների ժամանակի համար բավականաչափ ծավալուն շինարարությունը 10—13-րդ դարերում, ուր կատարվում էր գերազանցապես քարով, ապա պարզ կլինի, որ քարտաշություն ու սրմնագործության արհեստները շատ տարածված և զարգացած պետք է լինեն և նրանցով շատերն էին զբաղվում:

Կային սրմնագիրներ, որոնք ավելի հըմաացել էին սրբատաշ քարերից մոնումենտալ և քանդակազարդ շենքեր, պարիսպներ, դղյակներ, իջևաններ, կամուրջներ, բաղնիքներ, հյուրանոցներ և այլ նման շինություններ կառուցելու մեջ: Այս կարգի վարպետները տոավել վաստակ, եկամուտ և արգանց ունեցող վարպետների թվին էին պատկանում: Մյուսները շենքեր էին կառուցում ճեղքված և կոպիտ մշակված (սչ սրբ-

բատաշ) քարերից: Նման շենքերը բնակության համար ավելի հարմար էին, քան ներսից էլ սրբատաշ սառը քարից կառուցված շենքերը: Եթե նրանք պատկանում էին ֆեոդալական վերնախավին կամ այլ մեծատուններին, ապա ներսից սվազվում էին դրով, կամ գաճով, զարդարվում էին դիպսե կամ ալբեստրե զարդերով, որմնանկարներով, գորգերով, փորագիր փայտով և շքեղ էին լինում, իսկ ընչազարկ բնակչության բնակարանները սվազվում էին կավով, մեծ մասամբ միայն ներսից:

Ծիշտ է, Հայաստանը քարի ճարտարապետության երկիր է, սակայն քարից աղբյուր դաշտավայրերում, օրինակ Արարատյան դաշտավայրում, ինչպես ցույց են տալիս Դվինի պեղումները, շենքերը, այլև քաղաքների պարիսպները կառուցվում էին տապալեպակա աղյուսից, մանուկանդ հում աղյուսից և կավից: Ուրեմն սրմնագործության մասին մեր ասելիքը թերի կլինի, եթե ՀՏի շատակեինք աղյուսից և կավից պատ շարող և շենքեր ու բերդեր կառուցող սրմնագիր արհեստավորներին:

Եկնքը, նայած շինանյութի կամ կառուցվածքի, լինում էր քարակերտ, քարաշեն, աղյուսաշեն, կավակերտ, կավաշեն: Ճարրի տեսակի և տարբեր ձևով մշակված քարից, աղյուսից և կավից շինությունների տեխնիկայի, նրանց կառուցվածքի, ծածկի և հարգարման եղանակների մեջ զգալի տարբերություններ կան: Նկատի ունենալով այդ տարբերությունները և շինարարների խմբերի կազմավորման հանգամանքը, կարելի է ենթադրել, թե սրբատաշ կանոնավոր ձևի և խաչոր քարից, ամուսաշ կամ կոպիտ տաշված քարերից, աղյուսից և կավից շենքեր կառուցելու արհեստները սրմնագործության առանձին ճյուղերն էին կազմում, որոնցով զբաղվում էին արհեստավորների տարբեր խմբեր: Առավել հարգի և եկամտաբեր էր սրբատաշ քարերի սրմնագործությունը, այնուհետև աղյուսի և ամուսաշ կամ կիսատաշ քարի սրմնագործությունը. նվազ հարգի

¹ Մատենագարանի ձեռագիր № 2939, էջ 438ր—439ա:

² Ե ե ռ ո ս Ե ն ո Ր հ ա լ ի, Բանբ շափաւ, էջ 575: 1912 թվին հրատարակված հայերեն տպագիր զրբում, էջ 31: «Երեց քարգործ և իմաստուն, հրաշից ծագկանց շինէ իւր տուն»: Ձեռագիր № 7703, էջ 90ա—նույնպես «Երեց քարգործ և իմաստուն»:

էր կազմի սրմնադրութիւնը: Վերջինս տարածված էր դաշտավայրերում և սոպասարկում էր բնակչութեան ազրատ խավերին, լինէր Գլինում հանդիպում են կապից (մոյրայով) կառուցված, ներսում կրով սվազած, գիպսե դարդերով հարդարված բավականաչափ շքեղ շէնքեր, որոնք սլատկանել են ունեւոր դասի մարդկանց և նույնիսկ կառուցվել են քաղաքի միջնաբերդում՝ գլխավոր բլրի ստորոտում:

Քանդակագործութուն: Ինչպէս վերևում նշվեց, մուս և շնորհայի քարաաշէները կամ քարգործները իրենք էլ կատարում էին քանդակները, սակայն ուսումնասիրելով մարդկանց, կենդանիների ու թռչունների մեղ հասած հարչութեամբ սլատկերաքանդակները, ինչպէս և 12—13-րդ դարերի համար բնորոշ բուսական ու երկրաչափական քանդակները դժվար չէ համոզվել, որ քանդակագործութիւնը առավելապէս ինքնուրույն զբաղմունք էր դարձել և սլատկանում էր ոչ այնքան արհեստներին, որքան արվեստների բնագավառին: Ազլիմարի տաճարի (տխտ. XXVI) ու պալատների, Անիի Գագիաշէն տաճարի, Մայր տաճարի, Առաքելոց, սր. Գրիգոր, Բաղդասեղի եկեղեցիների, սլատկի պալատի, Անիի խանապարների, Հոռոմոսի վանքի ժամատան առաստաղի քանդակները (տխտ. XXVII XXVIII) սոսկ արհեստավորների գործեր չեն: Գժբախտաբար այդ և հման շատ հոյակապ գործեր քանդակողներից բնակի անուններն են մեղ հասել:

Բացի շէնքեր վարդարելուց, քանդակագործները իրենց տաղանդը գործադրել են նաև մի բնագավառում, որը շատ բնորոշ է Հայ ստանին. խոսքը վերաբերում է խաչքարեր քանդակելուն (տխտ. XXIX): Միջնադարից հետո Հայաստանում, մասնավաճառ 9-րդ դարից մինչև 17-րդ դարը քանդակվել և կանգնեցվել են հազարավոր բարձրարվեստ խաչքարեր, որոնք հանդիպում են երկրի բոլոր կողմերում ու անկյուններում. նրանք այնքան շատ են, որ ոչ մի կերպ հնարավոր չէ ճիշտ հաշվառման ենթարկել: Խաչքարերը

լինէ իրենց վրա կրում են քրիստոնէական սիմվոլ-խաչը ու եղել են գերեզմանաքարերի ամենատարածված տիպերից մեկը և հիշատակ նշարձանի միակ տիպը, սակայն նրանց քանդակագործական ձևավորման մեջ ամենալայն շախիւրով իր արասհայտութիւնն է գտել բուն ժողովրդական քանդակագործական արվեստն ու ճաշակը, դա, մասնավաճառ, վերաբերում է այն խաչքարերին, որոնց վրա շինն զանազան ավետարանական սլատկերներ, կամ սրբապատկերներ: Սակավ չեն այն գեպքերը, երբ սրբապատկերները զրված են լինում խաչքարի մի անկյունում կամ քիվի վրա և բոլորովին կորչում են առատ ու ճոխ երկրաչափական քանդակների մեջ: Այս խաչքարերը աչքի են ընկնում նրանով, որ նրանց ոճի միասնութեան մեջ տրված է տարատեսակ վարդերի մի այնպիսի բաղմազանութիւն, որ միևնույն քարի վրա քանդակված տասնյակ, երբեմն հարչութեամբ մանրամասնութիւններից ոչ մեկը մշուսին չի կրկնում: Հայկական խաչքարերի քանդակները, իրավ զարմանք և հիացմունք առաջացնող գործեր են: Նրանցից առավել աչքի ընկնողները արվեստի զուգորդումն են, իրենց քանդակի նրբութեամբ անկրկնելի նմուշներ: Այս խաչքարերը քանդակող վարպետները, բացի քարգործ ընդհանուր անունը կրելուց, կոչվում էին նաև Բանդակիչ¹, գծող², կազմիչ կամ կազմող³:

Քարակոփութիւն: Արհեստավորի աշխատանքի պրոցեսը ցույց տվող քարակոփութիւն բառը սլարգապէս նշանակում է խփելու, հարվածելու միջոցով, քարը տաշել, մշակել, կոկել և գործածվել է քարգործ լայն իմաստով: Տվյալ դեպքում քարկոփ անբմիւնը մենք օգտագործում ենք ավելի նեղ և հասուկ իմաստով, նկատի ունենալով,

1 Տե՛ս նշի:

2 Վիմական տարեգիր, էջ 18:

3 Նույն տեղում, էջ 35, 88:

այն արձևատավորներին, որոնք բարերից
զանազան հարմարանքներ, իրեր և առար-
կաներ էին պատրաստում:

Քարը Հայաստանում մեծ դործածություն
է ունեցել ոչ միայն շինարարություն, այլև
տնտեսությունն որոշ ճյուղերի և բնակչու-
թյան կենցաղի մեջ: Հատուկ քարերից
պատրաստում էին ձիթանի պտավազ շքե-
ջանաձև քարը, նրա տակի տաշտաձև կա-
լաքարը, ջրադացի քարերը, երկանքները,
լոսելու սալաքարերը, սափղը և սանդաքա-
րերը և այլն:

Միջին դարերում դեռևս պահպանվում էր
նաև օրսիդաքարից նեախի ծայրեր պատրաս-
տելու սովորությունը: Դվինի միջնադարյան
շերտերում այդպիսի սլաքներ գտնվել են:
Շատ ավելի սովորական էր քարի սրոցներ
կամ հեռաններ պատրաստելը: Քարից պատ-
րաստել են նաև պահեստ-թաքստոցներ,
խցերի և բնակություն հարմարեցրած քա-
րայրի դռներ, ջրմուկի խողովակներ, որոնց
մեջ երբեմն հազցրել են կալե խողովակնե-
րը¹, որպեսզի նրանք դիմանան ջրի մեծ
ճնշմանը, երբ ջուրը շատ բարձր տեղից ի-
ջեցվելով ցած, մեծ ճնշման տակ պետք է
բարձրացվեր դեպի վեր: Քարի հսկայական
տրամաշափի խողովակներ պատրաստվել են
նաև ջրադացների համար, աճալիսի ան-
փայտ դավառներում, ինչպիսին էր, օրի-
նակ, Շիրակը, որտեղ մինչև օրս էլ պահ-
պանվել են 12—14-րդ դարերի և ավելի ուշ
ժամանակների քարե նավեր² պատրաստ-
ված Արթիկի տուֆից: Անիի պալատական
շենքերում, խանապարհերում և բաղնիքնե-
րում զրված են եղել քարե ավազաճաներ,
որոնց հանդիպում ենք նաև կոռե քաղաքի
բաղնիքում: Պեղումների ժամանակ դեռ-
նրվել են նաև քարե տաշտեր ու պնակներ:

Քարից պատրաստում էին նաև գրա-
տախտակներ: Ամեն աշակերտ ունենում էր

գրատախտակ, սրբ դասի ժամանակ կախում
էր վզից և վրան գրում գրաֆիտով:

Շնորհալի՞ն խոսելով ուսման մարին
ասում է.

«Գի՞մն դանէ բեզ բիւր բարի:
Կրելով զիմաստն ի տախտակի,
Ձնա արկ ի թոյզ պարանոցի,
Որ պատուական է քան դոսկի»³:

Քարակուփության վերաբերյալ արձևա-
տ էր նաև շենքերի տանիքների ծածկի կղմին-
դրի նման քարե սալեր պատրաստելը և
նրանցով մոնումենտալ շենքերի տանիքները
ծածկելը: Քարի կղմինդրաձև սալերով շեն-
քերի տանիքները ծածկելը, տանիքից անձ-
րկաջուրը հեռացնող քարե նավեր դնելը
Հայաստանում սկսած 10-րդ դարից այն
աստիճան տարածվեց, որ համարյա բոլո-
րովին դուրս մղեց կղմինդրե ծածկը:

Շատ տարածված սովորություն էր նաև
պալատների, եկեղեցիների բակերը, նույ-
նիսկ որոշ փողոցները քարե սալերով պա-
տելը՝ սալահատակելը: Այդ աշխատանքը
կատարում էին քարդործ արհեստավորները:

Տարբեր մասնագիտության քարագործ
վարպետները, քարտաշները, որմնադիրնե-
րը, տանիքը կղմինդրաձև սալաքարերով
ծածկողները, քանդակագործները իրար միա-
նալով շինարարների առանձին խմբեր էին
կազմում և համատեղ ստեղծագործական
աշխատանքով իրար հետ կապված, դեկա-
վար ունենալով «երկեց քարգործին» կամ վար-
պետազլխին, բերդեր քաղաքներ, վանքեր և
այլ շենքեր էին կառուցում, դրա համար
շրջելով քաղաքից քաղաք և վայրից վայր:
Հիմքեր կան կարծելու, որ 10—11-րդ դա-
րերում Անիի քարագործ վարպետների խմբ-
երի շրջադասության շառավիղը 80—100
կիլոմետրի էր հասնում և սահմանափակվում
էր Շիրակի ու Բաղրատունյաց մյուս վասալ
թագավորությունների շրջանակներով, իսկ
13-րդ դարի առաջին քառորդում քարագործ
վարպետների խմբերի շրջադասության շա-

¹ Թ ո ռ ո ս Թ ո ռ ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայ ճար-
տարապետության պատմության, և, էջ 334:

³ Ն ե ռ ո ս Ն Շ ն ո ռ հ ա լ ի, Բանր շափտ, էջ 342:

ուսվյալը տվելի է մեծանում և հասնում է Չաքարչանների տիրույթների սահմաններին: Հայ քարագործ վարպետները շրջում և շինարարություն էին կատարում նաև սելջուկյան էմիրություններին պատկանող քաղաքներում, առանձին դեպքերում իրենց անունները թողնելով կառուցած շենքերի վրա, ինչպես Գալուստ ճարտարապետը, որը կառուցել է Կոնիայի Ինճե միրնարելի մեդրեսե կոշվող շենքը 1251 թ. կամ մի այլ հայ ճարտարապետ, որը շինել է Ալայեդղինի մզկիթը նույն Կոնիայում¹:

Շինարար վարպետներին կամ նրանց խմբերին բերդերի կամ պալատների ու այլ խոշոր շենքերի կառուցման համար երկրի դանազան կողմերից հրավիրում էին թագավորները, իշխանները, կամ հոգևոր պետերը: Արհեստավորների խմբերը ի մի հավաքվելով, իրականացնում էին այդ խոշոր շինարարական ձեռնարկությունները: Այս տեսակետից վերին աստիճանի հետաքրքրական են Թուփա Արծրոնու նկարագրությունները, որ նա թողել է Աղթամարում կատարված շինարարության վերաբերյալ:

Աղթամարում կատարվող շինարարության հաջող ընթացքի մասին խոսելով, պատմիչը դա բացատրում է նրանով, որ Գաղիլի արքունիքում մեծ թվով անլանի վարպետներ էին հավաքվել. «Եւ քանզի էին ի դրան արքունի դոսմարեալք արուեստաւորք բազումք, արք պառուսաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրք, ոքք ոչ վրիպէին առնել զոր խորհէր արքայ, այլ ըստ հրամանին վաղվաղակի և դործն առնոյր զկատարումն»²: Եթե հիշենք, որ Գաղիլը կարճ ժամանակամիջոցում կառուցել է տալիս մի փոքրիկ, բայց շատ բարեկարգ քաղաք, իր փողոցներով, հրապարակներով, շքեղ քանդակազարդ և նկարազարդ շենքերով, պուրակներով ու ծաղիկառօցներով, պարսպա-

պատով ու նստվահանդատով, տպա պարզ կլինի, որ այստեղ հավաքվել էին իրավ բազմաթիվ ու տարբեր մասնագիտության արհեստավորներ, որոնցից շատերը անվանի ու պատվական մարդիկ էին և աշխատում էին հռչակավոր Մանվել ճարտարապետի ղեկավարությամբ:

Կլզուս վրա կառուցված այդ քաղաքից պահպանվել է միայն՝ Աղթամարի տաճարը, որով կարելի է պատկերացում կազմել, թե որպիսի բարձրարվեստ ճարտարապետական հուշարձաններ ու որպիսի աչքի ընկնող քանդակներ են ստեղծագործել վասպուրականի քարագործները:

Ավելի հոյակապ էին Անիի պարսպաները, աշխարհիկ ու կրոնական շենքերը, նրանց վրայի քանդակները, որմնակարները, այդ քաղաքում մոտ երեք դարերի ընթացքում այնքան ջերմեռանդությամբ, տեքնաջանությամբ ու վաստակով աշխատած հարյուրավոր արհեստավորների աշխատանքի այդ նշանավոր հուշարձանները: Առհասարակ, եթե կամենայինք նշել, թե միջնադարյան Հայաստանի արհեստավորներից ովքեր են թողել քանակով ամենից ավելի և արժեքով ամենից մեծ ժառանգություն, ապա պետք կլիներ մեծագույն հարգանք մատուցանել քարագործ վարպետներին ու նրանց աշխատանքը ղլխավորող ճարտարապետներին:

Գրիչ-արձանագիր: Միջնադարյան Հայաստանում շատ սովորական երևույթ էր ճարտարապետական կառուցվածքների վրա դանազան արձանագրություններ թողնելը: Այդ արձանագրությունների բովանդակությունը շատ բազմազան է. կան հասարակական-տնտեսական այս կամ այն հարցը կարգավորելու առնչությամբ թողնված արձանագրություններ, հարկերին վերաբերող, ինչպես և շինարարական, նվիրատվական, ռազմական, քաղաքական և այլ ընդլայն շատ արձանագրություններ, քիչ չեն նաև իբրև հիշատակ թողնված արձանագրությունները (տխտ. XXX): Դրանց բովանդա-

1 Թ ո Ր Ո Ս Թ ո Ր ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայ ճարտ. պատմ., Ա., էջ 180:

2 Թ ո Վ մ Ա ր ծ Ր ո Ն ի, Պատմութիւն, էջ 481:

կուլթյունը մեր թեմային չի վերաբերում և ավյալ դեպքում մեզ հետաքրքրողը այն հարցն է, թե ովքեր էին այդ արձանագրու- թյունները փորագրում: Պարզ է, որ ամեն մարդ չէր կարող քարի վրա արձանագրու- թյուն փորագրել: Կային հատուկ մարդիկ՝ արհեստավորներ, որոնք հաճախ հիշատակ- ված են իրենց իսկ փորագրած արձանա- գրութիւնների վերջում, կոչելով իրենց գրչը¹:

Սեզ հասել են հազարավոր արձանա- գրութիւններ, հետևաբար կարելի է ենթա- դրել, թե կային որոշ թվով գրիչ-արհեստա- փորներ: Սրանք գրադեո քարագործներ էին, որոնք փորագրում էին արձանագրութիւնը կամ ներկով և այլ նյութերով պատի վրա դժելուց հետո կամ տրաֆարետային տա- ուերի օգնութեամբ (պատահում է, որ տրա- ֆարետը դրված է շրջված միճակում և տառը նույնպես շրջված է լինում, նման բացառիկ դեպքերում գրիչը կարող էր անգրագետ լի- նել):

Գրիչները տուֆի, սակավ նաև բազալտի վրա մետաղե գրչով փորագրում էին երբեմն վերին աստիճանի ընդարձակ արձանագրու- թյուններ համարյա միշտ գեղեցիկ գրու- թյամբ, իսկ երբեմն էլ արձանագրութիւնը կատարվում էր հատուկ գեղագրութեամբ, անգամ ունեւթ շքեղ գրերով, ինչպես հան- դիպում է Հառիճա վանքի վրա: Գրիչ-արձա- նագիրները իրենց աշխատանքի համար բա- վականաչափ լավ վարձատրութիւն էին ստանում և հասարակութեան մեջ որոշ դիրք ունեին: Դրանով պետք է բացատրել, որ բու- վանդակութեամբ շատ կարևոր մի շարք ար- ձանագրութիւնների վերջում մեկ երկու տող էլ ավելացնում է ինքը գրիչը, հիշատակելով և իրանունը: Դրա շնորհիվ մեզ հասել են 10—13-րդ դարերի ավելի քան երեք տաս- նյակ գրիչների անուններ: Օրինակ, Գառնիի արձանագրութիւններից մեկում, որտեղ խոսվում է հարկերի վերացման մասին, վեր- ջում ավելացված է. «Սարգիս գրիչս պաղա-

տիմ, վատնողս Կանձոյն յիշել մաղթիմս¹: Գրիչների անունների հիշատակութիւնը ար- վելի հաճախ է Անիի և նրա շրջակայքի ու- շարձանների արձանագրութիւնների մեջ:

2. ՇԻՆԱՐԱՐԱՐԱԿԱՆ ԱՅԼ ԱՐԷՆՍՏՆԵՐ

Կրագործուրյուն և գանագործուրյուն: Շինարարութեան հետ կապված արհեստ էր նաև կրագործութիւնը: Մոնումենտալ շեն- քերը, լինելին դրանք քարից թե թրծած աղ- յուսից, կառուցվում էին կրաշաղախով: Քա- րե շենքերի մեջ կրաշաղախը ավաղի և քա- րի թավականաչափ մեծ բեկորների հետ մա- ծուցված կազմում էր պատի հիմնական զանգվածը, իսկ քարերը ծառայում էին պա- տի երեսպատման համար²: Պարզ է, որ հա- զարավոր շենքերի կառուցման համար հար- կավոր էր հսկայական քանակութեամբ կիր և նրա արտագրութեամբ շատ կրագործ ար- հեստավորներ էին զբաղվում: Հնում կիրը կոչվել է բուռ³ բարեկական ԽԱՆ, ասորա- կան ԲԱՆԱ նույնիմաստ բառից, բայց ավելի դործածական է եղել մանավանդ միջին դա- րերում կիր բուռ⁴, որից և կրագործութիւն⁵ տերմինը:

Կիրը ստացվում է կրաքարից, որը Հա- յաստանում առատորեն հանդիպում է շատ վայրերում: Կրաքարը հնոցում մեծ ջերմու- թյան տակ այրելուց հետո՝ գործածութիւն- նից առաջ, լցնում էին հատուկ փոսում՝ կրագրում կամ կրակալում և հանգցնում

1 Արձանագրութիւնը փորագրված է Գառնիի հե- թանոսական տաճարի մուտքի պարակալի վրա:

2 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճար- տագրագիտութեան պատմութեան, հատ. Ա, էջ 136— 137:

3 Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասի- րութեան (տի'ս Կորին վարդապետի Մամբրէի Վերծա- նողի և Դավթի Անյաղթի Մատենագրութիւնք, Վենե- տիկ 1833, էջ 202):

4 Մովսէս Խորենացի, Ա 16, էջ 52: Հով- հաննէս կաթողիկոս, Պատմութիւն, էջ 251, Թովմա Արծրունի, էջ 481:

5 Տե՛ս նշ՞ք, կրագործութիւն բառը:

1 Վիմական տարեգիր, էջ 48, 74 և այլուր:

էին՝ վրան չուր լցնելով: Այս եղանակով ստացված կրափոշին օգտագործվում էր շինարարութեան մեջ այլևայլ նպատակներով: Եթե անհրաժեշտ էր ունենալ բոլորովին մաքուր կրափոշի, ապա ընտրում էին լավ կրաքար, հնոցում այրում էին ավելի բարձր ջերմաստիճանի տակ և հանդեպնելուց հետո էլ անցկացնում էին մաղով՝ քարերից ու ավազից ազատելու նպատակով:

Ավաղաբարդութուն: Անտառ կամ կոպիտ տաշված, ինչպես և կավակերտ շենքերը երբեմն սվաղում էին կրով: Հաճախ սվաղել են նաև մոնումենտալ շենքերի սրբատաշ շարվածքը ներսից և այդ սվաղի երեսը լավ կոկեղով որմնանկարներ են արել: Կրի և տեղակոտային աղյուսների համադրութեամբ ստեղծում էին երկրաշափական մոտիվներ, մաճաճվորապես աստղեր, բազմանկյունիներ, որոնցով հարդարում էին շենքերի մուտքերը և այլ մասերը: Այս երկրաշափական պատկերները լցվում էին կրով: Կիրը (կրաշուրը) օգտագործվել է անտառ քարից շինված և կավակերտ շենքերի ներսը սպիտակացնելու համար:

Շենքը հաճախ սվաղում կամ ծեփում էին դաճով: Գաճը նույնպես կոչվում էր բուռ, իսկ գաճագործը՝ բուռագործ: Գաճը պատրաստվում էր մի տեսակ կրաքարից կամ հողից (ծծմբաթթվային պարոմնակոլեթյամբ), դարձյալ կրակի վրա այրելու և մանրացնելու եղանակով, նայած թե ինչ բազադրութեւններ էր պարունակում մշակվող կրահողը, նա կարող էր տալ գաճ կամ գիպս: Կոկ մակերեսով սվաղ ստանալու համար գաճը նույնպես, ինչպես կիրը անցկացնում էին մաղով:

Կրից և գիպսից կամ ալեբաստրից Անիում և Դվինում պատրաստում էին հատուկ դարպեր՝ շենքերը ներսից հարդարելու համար: Այդ դարպերը արվում էին երկու եղանակով՝ փորագրութեամբ և կաղապարով թափելու միջոցով: Դվինում կաթողիկոսական պալատի պեղումների ժամանակ բացվեցին փորագիր գիպսի շատ բեկորներ: Շենքի ներ-

սում եղել է մի մեծ խորշ, որի կողքերից բարձրացող գիպսե կիսասյուները իրենց խոյակների վրա կրել են խորշի նույնպես գիպսե կամարը (տխտ. (XXXI): Սյուները, նրանց խոյակները, ինչպես և կամարը զարդարված են փորագրութեամբ կատարված բուսական մոտիվներով¹, Դվինի միջնաբերդում հայտնաբերվել են փորագրված ու դուրեկական երկնագույն ցերեզմաններ կամ գիպսե բազմաթիվ բեկորներ, որոնցով զարդարված են եղել այստեղ երբեմնի կանգուն պալատական շենքերի դահլիճները: Դվինում և Անիում հայտնաբերվել են նաև պատուհանի գիպսե լուսանցուցներ²:

Անիի միջնաբերդում Բագրատունիների պալատի դահլիճները զարդարված են եղել նաև կաղապարի մեջ թափված գիպսե կամ ալեբաստրե զարդերով: Վեց պսակաթերթ ունեցող ալեբաստրե վարդակները կապված են եղել տախտակի վրա, որը ամրացվել է դահլիճի պատին՝ ն.լ.թ.ից³: Բացի վարդակներից, նույն պալատի ներքին հարկում հայտնաբերվել են հովհարաձև զարդեր: Անիում հայտնաբերվել են նաև վեցթևանի աստղեր և բազմանկյուններ կազմող պատուհանի վանդակ (տխտ. XXXII):

Կայն կիրառութեւն է ունեցել կաղապարի մեջ թափված կենդանիների, գազանների վազքը պատկերող զարդը: Գազանները լինում էին ուղեֆ, իսկ նրանց ֆոնը երբեմն ներկվում էր⁴: Նման ուղեֆ գազանների շարքով զարդարում էին շենքերի ներսում գտնվող խորշերը և քիվերը:

Գազանների վազքը ներկայացնող գիպսե ուղեֆների բազմաթիվ բեկորներ գտնվել են Դվինի միջնաբերդում: Դրանք իրական և երևակայական գազաններ են՝ առյուծներ՝

¹ Կ. Ղ ա ֆ ա ղ ա թ յ ա ն, Դվին բազաբը և նրա պեղումները, էջ 121:

² Նույն տեղում, էջ 127—128:

³ И. О р б е л и, Каталог Аннийского музея. стр. 8.

⁴ Նույն տեղում, էջ 22, 24: Նաև Թ. Թ ո թ ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայկական ճարտարապետութեան պատմության, հատ. Ա, էջ 376:

անթև, թևավոր և լուսկերով, նաև եղնիկներ, այլ կենդանիներ և թռչուններ: Գլխինի միջնաբերդի բլրի շուտիւ-արևմտյան ստորտաում բացված շենքում մի խորշ եզերված է եղել գիպսե զարդերով, որն ամբողջանում է (նկ. 29): Խորշի երկու ուղղահայաց կողերին և վերին հորիզոնական մասի վրա բավականաչափ բարձր ուղիֆով պատկերված է գաղանների վազքը, իսկ խորշի վերին կիսաշրջանի և գաղանների վազքը ներկայացնող ուղղանկյուն շրջանափակի միջև, այսինքն խորշի վերին երկու անկյուններում փակցված են եղել նույնպես բարձր ալեֆով կառարված թևավոր առյուծներ՝ մարդու գլխով, ամեն անկյունում մեկ հատ: Գիպսի ֆոնի վրա կա նուրբ բուսական օրնամենա: Առյուծների մարդկային դեմքերի վրա աչքերը դրված են եղել ապակուց և թագի վրա էլ գիպսի մեջ ագուցվել են դուչնդոսյն ապակիներ¹:

Դվինի միջնաբերդում հայտնաբերված ձուլածո գիպսի օրինակների մեջ, քիչ չեն վարդյակների և երկրաչափական այլ զարդերի ալեֆները: Քաղաքի ունևոր խավի բնակարաններում դրվել են կաղապարի մեջ թափված քիվեք, որոնց վրա արաբատառ ալեֆ մականդրություններ կան: Պրանք երբեմն ընթեռնելի, երբեմն էլ անընթեռնելի են լինում: Վերջին հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ Դվինի հայ և այլազգի, բայց նույն խավին պատկանող բնակիչների կենցաղի մեջ նկատելի մերձեցում կար և արաբատառ արձանագրության նմանեցված զարդերը դրվում էին նաև հայ բնակիչների տներում. զարմանալի չէ, որ մի բնակարանում, որտեղ բացվել էին գիպսե քիվերի բեկորներ արաբատառ արձանագրությունների նմանեցրած զարդերով, դռնվեց նաև մի փոքրիկ խաչ:


¹ Գիպսե զարդերի մասին տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 129—132, նաև Н. М. Токарский. Архитектура древней Армении, Ереван, 1946, стр. 299—300.

Գիպսից կամ ալեբաստրից պատրաստում էին նաև այլ իրեր ու առարկաներ, որոնք դործածվում էին իրբե դարդ: 1906 թ. Անիում գտնվել է ալեբաստրից պատրաստված մի սափորիկ:

Ելնեյով Դվինի նյութերից, ճարտարապետ Ն. Մ. Տոկարսկին ենթադրություն է արել, թե այս քաղաքում կային գիպսե զարդեր պատրաստելու հատուկ արհեստանոցներ, որոնք իրենց արտադրանքը վաճառում էին նոր տուն կառուցող կամ հնրը նորուզող ունևոր բնակիչներին¹: Կ. Ղաֆադարյանը այն կարծիքին է, թե ձուլման կաղապարներ ունեին շինարար վարպետները, որոնք գիպսե քիվեքը և այլ զարդերը ձուլում էին շինարարության վայրում: Թե մեկ և թե մյուս դեպքերը չպետք է բացառվեն, բայց, ինչևէ, գիպսե զարդեր թափելու կաղապարներ ամեն մարդ շէր կարող ունենալ, իսկ եթե նկատի առնվի այդ զարդերի բարձր արվեստը, ապա կարելի է ասել, որ գիպսագործ վարպետները հմուտ արհեստավորներ էին, որոնց արտադրանքը գեղարվեստական նշանակություն էր ստացել: Այն հարցը, թե հայեր էին այս գիպսագործ արհեստավորները կամ այլազգիներ, երկրորդական նըշանակություն ունի: Պետք է ենթադրել, որ նրանց թվում կային և հայեր և այլազգիներ, որոնք կողք կողքի, համերաշխ ու քրրոհաշան աշխատանքով սպասարկում էին քաղաքների բնակչության կենցաղում նկատելի տեղ գրավող սլահանջը, մասնակցելով շենքերի հարդարման գործին:

Որմնանկարիչ արհեստավորներ: Որմնանկարչությունը կիրառվել է ոչ միայն եկեղեցիներում ու պալատներում, այլև Անիի և այլ քաղաքների բնակելի շենքերում: Հարուստ դասերին պատկանող բնակիչները իրենց բնակարանները զարդարում էին, բացի գիպսե, փորագրված փայտե և այլ զարդարանքներից, նաև հատակին փռվող կամ

¹ Н. М. Токарский, Архитектура древней Армении, стр. 302.



Նկ. 29. Կաղապարով թափված գեղան զարդերով, խոր, Գլին Աերակազմությունը Լ. Սաղաւանի (Տե՛ս Կ. Ղ. ա Փ ա գ ա ր տ ճ, Գլին բաղարը և նրա պեղումները, էջ 111):

պատերիս փակցվող դուրգերով, ինչպես և դիպակով և ընտիր ծածկոցներով: Միջին խավի բնակիչները բավականանում էին ավելի հասարակ ծածկոցներով ու կապերով, բայց սրանց համար ավելի սովորական էր բնակարանների պատերը ծածկոցների նմանող որմնակարներով զարդանելը: Անխում, պեղումների ժամանակ, հուճախ են հանդիպել սովորական և պարզ որմնակարների մնացորդներ ու շքեղ բնակարաններում, հետևաբար այս քաղաքում պետք է որմնակար կատարող արհեստավորների թիվը զգալի լիներ: Այդ արհեստավորները տարբեր գույնի ու որակի ֆերիկրով տարբեր արվեստով ու վարձատրույթամբ նկարազարդում էին բնակարանների սյուտերը, իհարկե վարձը տիրոջից ստանալով իրենց ծախսած նյութերի և կատարած աշխատանքի համեմատ: Որմնակարների զարդերը մեծ մասամբ բուսական մոտիվներ էին ու ծաղկազարդեր: Դրանք կատարվում էին հավանաբար երկու եղանակով՝ ազատ նկարչությամբ և տրաֆարետների օգնությամբ: Բնորոշ է, որ պատերը որմնակարներով զարդարող արհեստավորները կոչվում էին նկարիչ, մի տերմին, որը պահպանվել է բնդհուպ մինչև 19-րդ դարը: Գործածվել է և շապարար կամ շպարար՝ բառը, որ նշանակում էր ծեփող-նկարող: Այս նկարիչներից լավագույնների աշխատանքը գեղարվեստական ստեղծագործությունն էր հանդիսանում, որի վերաբերյալ գաղափար կազմել կարելի է ոչ միայն Թովմա Արծրունու նկարագրությունից, այլև որմնակարչության մեզ հասած օրինակներից: Պահպանվել է 12-րդ դ. վերջերին 13-րդ դ. սկզբներին ապրող Սարգիս Փառչկյան նրկարչի անունը, որը նկարազարդել է Անիի Փրկչի եկեղեցին, այդտեղ թողնելով և իր խնդանկարը²: Որմնակարներով զարդար-

ված էին նաև Անիի Բաղդադեկի և ս. Գրիգորի տաճարները (տխտ. XXXIII):

Արվեստին վերաբերող հարցերը ներկա աշխատության մեջ քննարկության առարկա չեն հանդիսանում: Այստեղ հարկ է միայն նշել, որ թեկուզ ինչ արհեստի դժով էլ վերցնելու լինենք, արվեստի առաջացման և զարգացման տեխնիկական իրական հիմքերը գտնում ենք արհեստի մեջ:

Զբմուղի շինություն: Հայաստանի մի շարք քաղաքներում, ինչպես ամբողջ Մերձավոր Արևելքի բազմաթիվ քաղաքներում, բնակչությանը խմելու ջուր մատակարարելու համար, կառուցվում էր ջրմուղ: Զուր բերելը կամ ջրմուղ անցկացնելը հայերեն վրմակա՞ն արձանագրություններում հիշատակվում է քանիցս: Անիի և Դվինի պեղումները թույլ են տալիս լավագույն կերպով գաղափար կազմել միջնադարյան ջրմուղի մասին: Զրմուղը կառուցվում էր կավե խողովակներով կամ փողրակներով, որոնց մի ծայրը լայն էր լինում, մյուսը նեղ. մի փողրակի նեղ ծայրը մտցվում էր մյուսի լայն ծայրի մեջ և հենվում մի քանի սանտիմետր ծայրից դեպի ներս ընկած շրջանաձև սյուսկի կամ էլուստի վրա, ապա միացվում կրաշաղախով: Զուրը վերցվում էր մոտակա, անգամ հեռավոր աղբյուրներից (Անիում 12 կիլոմետր հեռավորությունից) և կավե լայն խողովակներով բերվում էր քաղաք, որտեղ ճյուղավորվելով բաժանվում էր նրա թաղամասերի վրա: Զրմուղի ճյուղավորությունները կառուցվում էին ավելի նեղ փողրակներով: Ուշագրավ էր այն տեխնիկան, որով գլխավոր գծից բաժանվում էր ջրմուղի ճյուղը. դրա համար փողրակի ծայրը մտցվում էր հատուկ ձևով պատրաստված կարասի մեջ, որից ծայր էին առնում ջրմուղի երկու ճյուղեր: Նույն ձևի կարասները երբեմն դրվում էին ոչ միայն ճյուղավորության, այլև ջրմուղը մաքրելու համար: Այդ դեպքում դեպի գետնի տակ թաղած կարասը

1 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե յ ի, էջ 349: Տե՛ս նաև ՆՀԲ, նկարիչ բառը:
 2 Թ ո ռ ո ս Թ ո ռ ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայ ճարտարագետության պատմության, հատ. Ա, էջ 166:

1 վիճակա՞ն տարեգիր, էջ էջ 2, 19, 27, 39 և այլն:

մուտք ունենալու համար նրա կողքից կլոր սայով փակվող անցք էր թողնվում, որը հարմարություն էր տալիս ջրմուղը մարդի- լու ավազից, տիղմից և խանդարումներից: Անհում գլխավոր փողոցի վրա հայտնաբեր- վել են մի քանի նման անցքեր:

Ջուրը վերցնելով բարձր տեղից (սարի լանջից) քանքանագործները կարողանում էին ջրմուղը կամ նրա ճյուղերը իջեցնել ձո- րերը, և մեծ ճնշման տակ բարձրացնել ձո- րի մյուս ափը: Որպեսզի կավե փողրակները դիմանային նման ճնշման, նրանք հազը- վում էին քարե փողրակների մեջ և ամրաց- վում կրաշաղախով: Եթե ջուրը մղվում էր ու մեծ ճնշման տակ, կավե փողրակները առնում էին միայն կրաշաղախի մեջ:

Դվինում ևս եղել է ջրմուղի բավականա- չափ ընդարձակ ցանց:

Թովմա Արծրունու մի վկայությունից երևում է, որ ջրմուղը կառուցել են նաև քա- րից՝ առանց կավե փողրակների: Հեղինակը դրվատելով Գագիկ Արծրունու կատարած շի- նարարությունը Վանում, ավելացնում է. «Այլ և պատկանաբար իմաստունքնաձր պատրաս- տեաց ջրմուղ ներքսագոյն երկրի ի քարանց տաշելոյ փողոցս դնացից ջրոյն կազմեալ, դալ իջանել յելից և ստորուտէ լերիմն Վարա- դայ առշեղեալ ի հարաւոյ ի հիւսիսի, ի խա- դալ ընդլայնանիստ զողածև դաշտականայ- սըն, ելանել ի դագաթն Ամրական անձաւին ցթօսնուլ նովաւ առ վճարումն բաւականու- թեան, ըստ մասանց պիտոյից օժանդակու- թեան քաղաքայարդար ապարանից թաղա- տրական աադատի իւրոյ ձևուակերտին, հօրն յաւելադրելով շինուածս իւր»²:

Ջրմուղի վրա քաղաքներում կառուցվում էին վերերկրյա աղբյուր-ծորակներ, որոնք կոչվում էին միլ: Մի այդպիսի միլ 1036 թ. կառուցել է Ասլղարիպ մարզպանը Անիի

Փրկչի եկեղեցու առջևի հրապարակում¹: Այսպիսով, ջրմուղ անցկացնելը և նրա վրա հսկելը, մարքելն ու վերանորոգելը բավա- կանաչափ բարդ գործ և ինքնուրույն արհեստ էր հանդիսանում, որով զբաղվում էին առանձին արհեստավորներ:

Ամփոփելով քարագործության և շինա- բարակամ ալլ առհաստների վերաբերյալ եղած նյութերը, կարելի է եզրակացնել.

1. Հայաստանը իրրև լեռնային երկիր, վերին աստիճանի հարուստ լինելով շինա- նյութ ծառայող բազմատեսակ քարերով, ինչպես այժմ. հնում էլ եղել է քարի ճար- տարապետության երկիր, թեև հարթավայ- րերում, որոնք երկրի շնչին մասն էին կազ- մում, ավելի տարածված է եղել աղյուսի և կավի ճարտարապետությունը, մասնավաճող բնակարանային շինարարության մեջ:

2. Քարը խոշոր դեր է կատարել ոչ միայն շինարարության գործում, այլև տնտեսու- թյան առանձին ճյուղերում, բնակչության կենցաղում իրրև նյութ դաճազան հարմա- րանքներ՝ ձիթհանի, ջրաղացի, երկանքի քա- րեր, տաշտեր և բազմազան այլ իրեր ու առարկաներ պատրաստելու համար:

3. Քարի ունեցած նշանակության և խա- դացած դերին համապատասխան զարգացած են եղել քարի մշակման և քարագործության բնագավառին պատկանող մի քանի արհեստ- ներ՝ քարհատությունը, քարտաշությունը, որմնադրությունը, քանդակագործությունը, քարափորությունը: Քարակոփությունն իր հերթին ճյուղավորված էր առանձին մասնա- գիտությունների՝ չաղացի, երկանքի քարեր, ձիթհանի ու այլ քարեր կամ քարե իրեր պատրաստելու մասնագիտությունների: Որմնագրությունը նույնպես ճյուղավորված է եղել, տարբեր արհեստավորներ էին քարի, աղյուսի և կավի որմնագիրները:

4. Զարգացած է եղել քանդակագործու- թյունը, որի լավագույն վարպետների ստեղ-

1 Թորոս Թորամանյան, Նյութեր հայ ճար- տարապետության պատմության, հատ. Ա, էջ 334:
2 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 406:

1 Ալիշան, Շիրակ, էջ 82—83, Վիճական տա- րեգիր, էջ 19:

ծագործութեանը գերաձևելով արհեստը՝ արվեստ էր դարձել, բայց քանդակագործութեանը որպէս բավականաչափ տարածված ըզբաղմունք, իր հիմնական մասով պատկանում էր քարագործական արհեստների թվին: Քանդակագործներից բացի կային գրիչ-արհեստավորներ, որոնք զբաղւում էին և պարտպում էին շենքերի վրա արձանագրութեաններ փորագրելով:

5. Երկարարութեան մեջ լայն շափերով գործածվել են կիրը և գաճը, իսկ շենքերի ներսի հարդարանքների համար նաև գիպսը կամ ալեբաստը: Միջին կարողութեան բրնակչութեան կենցաղում, մանավանդ ֆեոդալների ու մեծատունների մոտ տարածված է եղել շենքերը որմնանկարներով նկարազարդելու սովորութեանը, ինչպէս և գիպսն ձուլածո ու փորագրի գորգեր փակցնելը: Այս ամենին համապատասխան քաղաքներում՝ եղել են կրագործ և գաճագործ կամ բրնագործ, ծեփող կամ ավաղող, կաղապարներով գիպսն զարդեր թափող և որմնանկարներ անող (նկարիչ, շապրար) արհեստավորներ: Քաղաքներում ջրմուղ անցկացնելու և նորոգելու համար կային առանձին արհեստավորներ:

6. Երկարար և քանդակագործ արհեստավորները իրենց զարավոր քրտնաջան աշխատանքով և ճարտարապետների ղեկավարութեամբ ստեղծագործել և խողել են խոշորագույն արժեք ներկայացնող կուլտուրական ժառանգութեան:

3. ՓԱՅՏԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Փայտը նույնպէս շատ խոշոր դեր է խաղացել շինարարութեան, բնակչութեան անտեսութեան և կենցաղի մեջ: Ուստի միանգամայն բնական է, որ բնակչութեան բաղմոզան պահանջները սպասարկելու համար վաղուց ի վեր առաջ էին եկել ու միջնադարյան քաղաքներում բարձր զարգացման հասնել փայտամշակութեան հետ կապված մի շարք արհեստներ՝ առաղծագործու-

թյունը, երկրաբարծական գործիքների արտադրութեան արհեստը, սայլաշինութեանը, կառագործութեանը, զանազան դազգասների ու սարքերի շինութեանը, կահույքի արտադրութեանը, նավաշինութեանը և փայտի գեղարվեստական փորագրութեանը:

Հայաստանը անտառներով շատ հարուստ էր եղել, թեև միջին դարերում որոշ տեղերում անտառներ եղել, բայց հետագայում ոչնչացել են: Ալ-Խաֆահին, օրինակ, վկայում է, թե Արարատի լանջերին ընդարձակ անտառներ կային, որտեղ աճում էին 20 թղաչափ շրջագիծ ունեցող ծառեր¹: Իսկ նույն 10-րդ դարի «Հուղուղ-ալ-ալամ» կոչվող աշխարհագրական երկում հիշատակութեան կա ոչ միայն Արարատի լանջերի անտառների մասին, այլև ասվում է, թե այստեղից վառելիքայտ էին ստանում Արմենիայի շատ քաղաքներ²:

Երկարարութեան և զանազան այլ նպատակների համար Հայաստանում բավարար չափով փայտ կար, իսկ որոշ շրջաններ շինափայտ և կահույքի բարձրորակ փայտանյութ էին արտահանում երկրից դուրս: Այդ առթիվ որոշ վկայութեաններ են պահպանել արարական և ասորական աղբյուրները: Ակադ. Հ. Մանանդյանը, օգտվելով Տոմաշևիցի, բերում է ասորական մատենագիր Բար Հերրայտաի վկայութեանը այն մասին, թե երբ Ամիգի եկեղեցին այրվեց, Տարոնի տեղ Աշոտ Բագրատունին, որը 9-րդ դարում տիրում էր Տարոնի մեջ մտնող Սասունի և Խուլթի անտառապատ սարերին, իր երկրից շինափայտ նվիրեց՝ Ամիգի եկեղեցին վերականգնելու համար³: Իրն ալ-Ֆակիհը վկայում է, թե Հայաստանից ձեռք էին բերվում հսկայական հաստութեան ծառեր, կարևոր էր

¹ Օգտվում ենք «Արարական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատութեան ձեռագրից, որ սպագրութեան է պատրաստել Պատմութեան ինստիտուտի աշխատակից Հ. Նալբանդյանը:

² Худуд ал-алам, 32 б—33 а.

³ Я. А. Манандян, О торговле и городах, 1930, стр. 158.

մանավանդ ընկույզի ծառը, որի փայտից կահույք էին շինում:

Անտառում փայտը կարում էին փայտահատները, կամ փայտահարները՝ իրենց կացիներով, որոնք կոչվում էին փայտատ², ապա գերանները բերում էին քաղաքները և այլ բնակավայրերը, նրանցից տախտակներ և գանաղան հաստության ու երկարության ձողեր քաշում: Տախտակ քաշելը կատարվում էր հատուկ սղոցների միջոցով, որոնք միջին դարերից պահպանվելով հասել են մինչև մեր օրերը և կոչվում են խիղար կամ խզար՝ խզող կտրող հայերեն բառից:

Կեղեցի մաքրված և կողերից տաշված դերանները դնում էին շինարարության մեջ գործադրվելու, իսկ տախտակներն ու գանաղան հաստության ձողերը, անցնում էին հյուանների ձեռքը՝ ամեն տեսակ իրեր և առարկաներ պատրաստելու համար: Հյուաններն աշխատում էին մի շարք գործիքների օգնությամբ. դրանք էին՝ տարբեր մեծության կացիները, տապալները, ուրաղները (ձեռնուրագ, ոտնուրագ), սղոցները, կոկիչները (ոանդա), ծակիչ—գալիկոնները կամ շաղափները³ դրերը, մուրճերն ու թակերը, ճախարակներն ու մամլակները, սրոնց հիշատակությունները բազմիցս գտնում ենք հայ հին դրականության մեջ: Գլխի պեղումների ժամանակ, ինչպես տեսանք, դրանք մնում են ուրաղներ, դրեր, սղոցի բեկորներ և այլ գործիքների մնացորդներ: Հյուանոցում գրվում էր այն փայտյա սեղանաձև հաստոցը (դագդագ), որի վրա յինում էին այլևս ոչ հարմարություններ՝ մշակվող փայտը հենելու, մամլակով կամ ճախարակով ամրացնելու, ծակելու, դժելու և այլ նպատակների համար: «Հիւսաց մամուլս» կամ ճախարակները հիշատակված են դեռևս Ագաթանգեղոսի մոտ⁴: Կար երկու տեսակի ճախարակ՝ մեկը փայտե պատտակալը հարմարանք էր, մամուլ կամ դելարան, որով տախտակը մամլելով ամրացնում էին հաստոցին ապա մշակում, մշուսը անիվովոր ճախարակն էր (չարխը) որով մշակում, հղկում էին կահույքի ոտքերը և այլ բնութան մասերը և պատրաստում ճախարակաքաշ իրեր և առարկաներ: Այս ճախարակը Հայաստանում գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից սկսած, համեմայն դեպս ուրարտական ժամանակներից ոչ ուշ, քանի որ Կարմիր-բլուրում գտնվել է խառատի հաստոցով կամ ճախարակով տղորկ մշակված մի փայտե սափորիկ¹:

1038 թ. մի ձեռագիր ավետարանում, որը գրվել է Տարոնում, նկարված է սեղան խաչափայտերով և ճախարակի վրա հղված ոտքերով²: Հղկող ճախարակը հիշատակված է նաև Գրիգոր Մագիստրոսի թղթերում³: Տասնյակ մեծաղև նուրբ գործիքներ կային փայտը քանդակելու համար:

Փայտի մշակման և նրա տեխնիկայի մասին ասվածը իհարկե վերաբերում է քաղաքներում զարգացած արհեստներին, իսկ գյուղի սուօրյա պահանջները բավարարող վարպետները աշխատում էին կոպիտ գործիքներով՝ տապալներով, ուրաղներով, սղոցներով, դրերով և այլ սարք գործիքներով:

Ատաղձագործություն: Շինարարություն հետ սերտորեն կապված արհեստ էր ատաղձագործությունը: Ատաղձագործ վարպետը պատրաստում էր շենքի բոլոր փայտյա մասերը՝ ծածկը, դռներն ու լուսամուտները: Եթե նկատի ունենանք, որ քարե կամարակապ-թաղակապ ծածկ ունենում էին միայն մոնումենտայ, մեծ մասամբ կրոնական շենքերը, ապա սարք կլինի, ատաղձագործական արհեստի կիրառության ասպարեզի ընդարձակությունը: Բնակելի շենքերը թե՛

1 «Փայտահատ» և «փայտահար» բառերը տե՛ս նշբ:

2 նույն տեղում:

3 Մատենադարանի ձեռագիր № 7703, էջ 103 ու:

4 Ա. գ ա թ ա ն գ և զ ո ս, Պատմութիւն, էջ 64:

1 Б. В. Пнотровскнй. Кармир-блур I, стр. 34, рис. 14.

2 Մատենադարանի ձեռագիր № 6201, էջ 7ա:

3 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 9 և 232:

դյուզում և թե՛ քաղաքում ծածկվում էին գե-
րաններով, իսկ քաղաքի ունևոր բնակիչների
աների առաստաղը լինում էր տախտակա-
մած, մի սովորություն, որը Հայաստանում
հանդիպում է դեռևս ուրարտական ժամա-
նակներում: Միջին դարերից ևս նման ծած-
կեր հայտնի են. օրինակ՝ Անիի Բագրատու-
նիների պալատի առաստաղը եղել է տախ-
տակամած և պատած դիպսե դարդերով ու
գունանկարներով: Ատաղձագործը բացի
շենքերի ծածկերից, դռներից, լուսամտանե-
րից, պետք է պատրաստեր նաև դեպի բակը
նայող պատշգամբը, որը նույնպես հայտնի է
շատ հին ժամանակներից: Պատշգամբների
մասին խոսում է, օրինակ, Նդիշեն¹:

Պատշգամբները կամ սրահները երբեմն
քանդակազարդ էին լինում, իսկ Նդիշեի վը-
կայություն մեջ խոսվում է նկարուն պատշ-
գամբների մասին: Քանդակազարդ և նկա-
րուն պատշգամբ ասելով պետք է հասկա-
նալ, որ փորագրված քանդակազարդ են
եղել պատշգամբի փայտե մասերը, իսկ
նկարվում էր ներս ընկած պատը:

Ատաղձագործները կարող էին մտնել շի-
նարարների խմբերի մեջ, նրանք երբեմն
իրենք էլ փորագրում էին շենքերի փայտյա
խոյակները, պատշգամբի առանձին մասե-
րը և դռները:

Հիսոռաի մանկությունը վերաբերող մի
պարսկահայտն թարգմանական գրվածքում
Հովսեփը ներկայացված է որպես հյուան,
որը հանձն է առնում շինել «ապարանս դե-
ղեցիկս, վերնատուն մի բարձր» և նրա մեջ
«գահոյս աթոռս և բազմականս, դրունս» և
դարդարել դրանք «նկարօք քանդակելալ վա-
յելչութեամբ. և զսինազուլսս նորա... յա-
մենայն կերպարանս ի նմանութիւն կենդա-
նեաց և զկոփ և զտաշ նորա սրբաբերս...»:
Հովսեփը համաձայնվելով անել այս ամենը
խնդրում է իրեն տալ փայտ «և արս զօրատ-

րս և գործակալս և հմուտ արուեստի, որ
դիտեն առնել տաշ և կոփ զոր ցուցից նոցա.
և զամենայն ինչ պարտական առնել»¹:

Այստեղ աշխատանքի բաժանումը դեռ-
ևս շատ սահմանափակ է, փորձված վար-
պետը կատարում է ամեն ինչ, իսկ մյուսնե-
րը պետք է օգնեն նրան տաշ և կոփ անելով:

Գրիգոր Մագիստրոսը, երբ բյուզանդա-
կան կայսրության Արևելքի կուսակալն էր,
իր փեսա Թոռնիկ Մամիկոնյանից, որն իշ-
խում էր Սասունի վրա, սեղան շինելու փայտ
է խնդրում: Ուրեմն պետք է ենթադրել, թե
Սասունի լեռներում ինչ որ լավորակ փայտ
կար, որից կահույք էին շինում: Այս կա-
պակցությամբ Մագիստրոսը հիշատակում
է ծառերի վերաբերյալ մի քանի հին առաս-
պելներ, ապա խոսում է Աղվանից աշխար-
հում աճող գի կոչվող ծառի մասին, որից
կառուցված շենքերը նա տեսել է Աղվան-
քում և նկարագրում է Մար դյուլի տաճա-
րը, որը կառուցված էր գի ծառից. «յորմէ,—
ասում է նա,— սինս ոչ սակաւս հօրսս և
ստտարս ի կոչարանում անդ տեսեալ մեր և
գերանք գերակատարք և երկայնածիւք, որ է
վկայարանս սրբոյն Յակոբայ. ամինայն
կահք տաճարին գերակայ տախտակք և խո-
յակք և խարիսխք, և թակազակք և զդրոնսս
և զսեամս հանդերձ բարաւորօք և ներքոյ
զատակս կազմեալ ի միոջէ ծառէ յայնմանէ
վիոյն գոլ ասէին. զնա և զայսս ոմանս ի
նոյն աշխարհին ընդարձակագոյնք սրահք և
միոջոցք յայնմ տաճարի տեսալ մեր, որ
դրեթէ այսպիսի ոչ այլ ուրէք, բայց միայն
ի թագաւորեալ քաղաքին»²:

Փայտաշեն եկեղեցի կառուցել են նաև
Հայաստանում, օրինակ՝ Նոր Գետիկում
(Գողթվանք՝ Դիլիջանի մոտ): Այդ առթիվ
Կիրակոս Գանձակեցին վկայում է, թե Նոր
Գետիկում «շինեցին եկեղեցի մի զեղեցկա-

¹ Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական
ճարտարապետության պատմության, հատ. Ա, էջ 144:

² Նդիշե Պատմություն, Տիփսիս, 1904, էջ 181:

¹ Թանգարան հայկական հին և նոր դպրութեան
Բ, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1898,
էջ 190:

² Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 221:

չէն փայտակերտ»¹։ Այդ վանքի արձանագրութիւններէրց մեկում կարդում ենք.

«Ես Մխիթար հիւան միաբան և աշխատող այս եկեղեցւոյ ի մանկութենէ մինչ ի ծիրութիւն, շինեցի զտունս աղավթից... իմով որդեցելովս Յովհաննիսի և ստացայ ինձ յիշատակ Բ սւր պատարագ»²։ Հավանաբար այս Մխիթարն է կառուցել նոր Գետիկի փայտակերտ եկեղեցին։

Փայտից երկրագործական գործիքներ սլաւոնացեալը։ Երկրագործական փայտյա գործիքներէ մեծ մասը պատրաստում էին գյուղական հշտաները, սակայն քաղաքի բնակչութեան զգալի մասն էլ շարունակում էր զբաղվել գյուղատնտեսութեամբ։ Ուստի քաղաքում երկրագործական փայտյա գործիքների պահանջը բավականաչափ մեծ էր և համապատասխան արհեստը չէր կարող քաղաքում չզարգանալ։ Ավելին, 10—13-րդ դարերում քաղաքի արհեստավորները կատարելագործելով իրենց աշխատանքը, մերցում էին դժուր արհեստավորների հետ, իրենց արտադրանքի բարձր որակով, ինչպես և մատչելի գներով, հետևաբար կարող էին իրենց պատրաստած գործիքների մի մասը վաճառել շրջակա գյուղերի բնակիչներին։

Փայտից պատրաստում էին բազմաթիւ երկրագործական գործիքներ, օրինակ, մեծ փոցիս՝ արտերը փոցխելու համար (մանգեռ), ձեռքի փոցիս՝ մարգերը փոցխելու, ինչպես և հնձած արտից հասկերը հավարելու համար, տափան, եղաններ, լծասարք, և այլ գործիքներ ու սարքեր։

Վերևում հիշատակված պարտկանոն գրքվածքում պատմվում է, թի Հիսուսին ուղեկցող Հովսեփը մի քաղաքում հանդիպում է ոմն ներկարար Իսրայելի, որի հարցին, թի

ինչ արհեստի է դիտակ, նա պատասխանում է, թի դիտե «հիւանութեան, փայտակտութեան, լուծ, հարթ, սայլ և այլ ևս զինչ պետոյ իցէ ումեք գործ։ Ասէ Իսրայել. բարիութ ասացեր, տեղիս դիւրին է և քաղաքամէջ, և ամենայն շահ և վաճառ յի. և այլ բաղում ինչս որ ըստ կամաց քոց իցէ»¹։

Կահագործորչուն։ Փայտ մշակող արհեստավորներից ոմանք պատրաստում էին տնային բազմազան կահույք՝ սեղաններ, աթոռներ, գահույքներ, գահավորակներ, պատգարակներ, բազմոցներ, նաև ստվորական գործածութեան այնպիսի հարմարանքներ ու իրեր, որպիսիք են վանազան պահարանները, հացահատիկի, ալյուրի փեթակները, սնդուկները, արկղերը, խմորի և այլ տաշտերը, փայտե զանազան իրերը։ Կահույք պատրաստող արհեստավորները հավանաբար կոչվել են կահագործ, թեև պետք է ասել, որ այս տերմինը հանդիպում է հետագայում։ Կահույք պատրաստողները իրենց արտադրանքը զարդարում էին քանդակներով, ներկերով, կաշվով և դիպակներով։ Բազմոցների հայկական ծիրանածաղիկ և սակեթել ծածկոցները, ինչպես վկայում են 10-րդ դարի հայ և արաբացի մատենագիրները, մեծ հռչակ են վայելել։

Կահագործները, կրթման զարմանալի, մանրակրկիտ աշխատանքով այնպիսի գոհարներ են ստեղծագործել, որ նրանց այդ աշխատանքը առասպելական բնույթ ստանալով մտել է առաջնների մեջ։ Վարդան Այգեկցու մոտ կարդում ենք. «Ասի յաւակաց թէ ի Բաղդադ քաղաքն հիւս մի ճարտար արուեստիւ երեք ամ աշխատեալ և ի յամբրաւի կտէն սեղան մի յիրեար ձեղաց զանազան յօրինուածովք, որ տ՛չ էր տեսեալ ական մարդոյ այնպիսի ինչ»²։

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն. էջ 199.

² Հ. Ա. Ջանփուլագյան, Մխիթար Գոշը և նոր Գետիկի վանքը, Աշխատութիւններ Հայաստանի Պետական Պատմական թանգարանի, հատ. Ա, 1948, էջ 161.

¹ Թանգարան հայկական հին և նոր դարութեան, Բ, Անկանոն դիրք նոր Կոտակարանաց, Վենետիկ, 1898 — էջ 206.

² Ժողովածոյք առակաց Վարդանայ, հատ. 2, էջ 239—241.

Այնուհետև ասվում է, թե հաղարից մի հյուան նման սեղան չէր կարող շինել: Արմավի կորիզից զանազան անօրինակ օրնամենաներով սեղան շինելը, այն էլ երեք տարվա ընթացքում, իրավ առակ-աղբաս պել է, սակայն նա վիհայում է այն բանի մասին, որ մի կողմից վարպետները իրենց աշխատանքի նման զուլս գործոցներ ստեղծելով ցուցադրում էին իրենց շնորհքը և անուն էին վաստակում, որպեսզի շատ պատվիրատուներ ունենան, մյուս կողմից նրանք բարձր վարպետության հասնելով սպասարկում էին վերնախավի պահանջները, նրանց համար պերճանքի շքեղ իրեր ստեղծագործում՝ մեծ վարձատրություն ստանալու ակնկալությամբ: Բնորոշ է, որ առակի մեջ ոչ մի հիշատակություն չկա, թե սեղանը պատրաստվել է որևէ իշխանավորի պատվերով: Բնդհակառակը առակից երևում է, որ հյուանը հռչակ ձևով բերելու համար է այդ ծանր աշխատանքը կատարել:

Փայտե սարքեր շինելը: Հյուանները պատրաստում էին սայլ, կառք, փայտե դուխան և բազմապիսի սարքեր, որոնք գործածական էին տնտեսության, արհեստագործության մեջ, կենցաղում, ռազմական գործում և այլ բնագավառներում: Հյուանը ամենից առաջ պիտք է ունենար իր սեփական գազգահը, որն ինչպես տեսանք վերևում, բավականաչափ բարդ հարմարանք էր և հյուանները մըշտատակա ջանում էին որքան հնարավոր է կատարելագործել այն: Հյուանները պատրաստում էին նաև ջուհակի դազգահը, գորգագործի տորքը, զանազան անիվավոր սարքեր, ճախարակներ՝ մանկու, սրելու, ծանրությունների բարձրացնելու և այլ նպատակների համար: Ճախարակագործ հին տերմինի գոյությունը թերևս ցույց է տալիս, որ ճախարակագործությունը հյուանությունն առանձին մի ճյուղ էր դարձել: Հյուանները պատրաստում էին ջրազացի նավեր, անիվներ, և այլ սարքեր:

Միջին դարերում փայտից պատրաստում էին նաև որոշ ռազմական մեքենաներ և

սարքեր, որոնք հայտնի էին մանդլին, էշ, բարան, փիլիկոն (կամ փիլիկուան), բաղիսար, նետակալ, քարընկեց և խոյ անուններով: Էշ կոչվող գործիքը անվավոր տախտակամած էր, որի տակ մտած զինվորները մոռեցնում էին այն պարսպին և սաշտուպանված նրա տակ՝ փորող գործիքներով փորում էին պարսպի հիմքերը և նիզերով խարխլում պարիսպը: Ռազմական այս հարմարանքը հորենացու մոտ համարված է հունական (հռոմեական), որը Շապուհ Բ հույն գերիների միջոցով գործադրել է Տիրբանակերտը գրավելու համար:

Խորենացին գրում է. «Եւ Յոննացն մատուցեալ մեծաւ բռնութեամբ յեցուցին ի պարիսպն զկոչեցեալ էշսն: Եւ է այս գործի մեքենայից անուաւոր, երից երից արանց մղելով տարեալ, և ի ներքուստ կացնովք և սակիօք երկրբանովք և կոցաւոր մրճովք փորել զհիմունսն: Եւ նդախարխար արարեալ զայն... որմունքն քակեալ ընկեցին...»: Խոյը հարվածելով պատերը քանդող մեքենա էր (таран), իսկ բարանը, փիլիկուանը, բաղիսարը, քարընկեցը մեծ-մեծ քարեր նետող գործիքներ էին, որոնցով ոչ միայն մեծ հարվածներ էին հասցնում բերդի պաշտպաններին, այլև քանդում էին պարիսպները: Արիստակես Հաստիվերտցին նկարագրելով Մանազկերտի պաշարումը սելջուկների կողմից, ասում է, թե սելջուկները «մեքենայա կանգնեալ, այնու պատերազմէին: Իսկ երէց ոմն ի մերոցս հնադոյն տնելով զաւուրըս, որ յոյժ տեղեակ էր արուեստին, և սա իւր կանգնեալ փիլիկուանն. և լինէր յորժամ նոքա քար եղեալ ի պարսատիկս մեքենային և ձգէին ի քաղաքն, երէցն զիւր քարն դէպ ուղիդ նոցա քարին արձակէր, որպէսզի զիպեալ քար երիցուն ի քար անօրինացն, ի վերայ խրեանց ընկնուոյր»:

Սելջուկները մի ուրիշ մեքենա են պատ-

1 Մ. Խորենացի, Պատմություն, էջ 290:

2 Արիստակես Հաստիվերտցի, Պատմություն, էջ 69:

բաստում, որը նախորդից ավելի դորեզ էր. «Ապա ա՛յլ պատերազմական գործի պատ- բասահալ, դոր ինքեանք բարան կոչէին, որ յոյժ ա՛ռադին էր, դոր սաէին, թէ շորս առ- բիւր սպասաւորք էին նորա, որք վարարանսն քարշէին, և վախտուն լիար քար եղեալ ի պարսատիկան՝ ի քաղաքն ձդէին. և առաջի նորա պարիսպ կանգնեցին ի բամբակի բե- ռանց և յայլ բազում կարասույ, զի մի՛ քար էրիցուն հասցէ ի նա՛: Նույն անցերը նը- կարադրելով Ուռհայեցին ասում է, թե այս մեծ բարանը Վասլի (Վասիլ Բ կայսրի) շի- նել տվածն էր 15 ստիլի (օղ, թերևս ձգելու պարանները կապելու համար) ունէր «ասա- տոր ու դարմանալի» էր²: Այս բարանը բերդի պաշտպաններից մեկը հրկիպել է նետելով նրա վրա «պատրաստեալ հուր նաւթիւ և ծծմրով և արկեալ յաման ապակեղէն»³:

Մի տեղեկութիւն էլ հաղորդում է Ռա- շիդ-ադ-Դինը, ասելով Մայաֆարկինի պա- շարման ժամանակ (1258—1260) քաղաքում կար քար նետող վարպետ, որն իր մեքենայի բարերը նետում էր մոնղոլների վրա՝ անվը- բեպ: Մոնղոլներն էլ ունէին մի վարպետ և երկու մեքենաներից նետված քարերն իրար էին զիպղում⁴:

Ուրեմն՝ թե բարանը և թե փիլիկանը քար նետող մեքենա էին, և եթե նրանց մեջ տար- բերութիւն կար, ապա դա այն էր, որ Վասլի կոչված բարանը շատ մեծ էր և զրված էր դաշտի մեջ, իսկ հայ երեցի շինած փիլի- կուանը՝ պարսպի աշտարակի վրա⁵: Բայց

1 Արիստակես Լաստիվերացի, Պատմութիւն, էջ 69:

2 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակա- գրութիւն, էջ 119—120:

3 Արիստակես Լաստիվերացի, Պատմութիւն, էջ 70, Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 120—121:

4 Рашид-ад-Дин. Сборник летописей, т. III, стр. 55.

5 Բարանի և փիլիկուանի քար նետող մեքենա լի- նելու վերաբերյալ տարակույս չի կարող լինել. սա- կայն Վ. Աբրահամյանը սխալվում է, երբ միայն բա- բանն է աչպիսին համարում, իսկ փիլիկուանն էլ էջից տարբերվում է «միայն նրանով, որ բռնդելու

մի այլ գեպրում փիլիկուանը գործադրել են Գանձակի վրա հարձակվող մոնղոլները, որոնք «մարանչէին ընդ նմա բազում մեքե- նայութ... Ապա փլուցին զպարիսպ քաղա- քին փիլիկուանօք յամենայն կողմանայ»¹:

Մանգոլիոն տերմինը գործածվել է մեքե- նա-հարմարանք ընդհանուր իմաստով կամ այն աշտարակների համար, որոնք մոտեց- վում էին պարսպին և բացի նետածիգ մար- տիկների համար իրրև աշտարակ ծառայե- լուց, ունենում էին և քար նետելու հարմա- րանք: Հավանաբար աչպիսին էր և «նետա- կալ»-ը²:

Դվինի միջնաբերդում պեղումների ժա- մանակ հայտնաբերվել են պարսաքարեր և 15—25 կիլոգրամ կշռող բոլորովին կլար քարերի կույտեր, որոնք անկասկած բարան- ներով նետվող ուժաբարեր են կղել³: Հյուս- ները պատրաստում էին և զանազան անիվա- վոր սարքեր: Առաքել Սյունեցին գունդ բառի շտուգարանութիւն կապակցութեամբ հիշում է մի շարք անիվավոր սարքեր: «Թսկ այլ զըն- դական արհեստք ամենայն գնդաձև մարմ- նով առնէ զգործս իւր և գնդական ասի՝ որ- պէս սայլն, որ հոլովի շարժմամբ և ջահրի գունդն և գունդն գուղանին և ջրաշաղպին կունդն և քարն»⁴:

Հյուսները հմտացել էին իրենց արհես- տի մեջ, և ցուցաբերում էին մեծ շնորհք և հնարամտութիւն:

Փայտե կենցաղային իրեր պատրաստելը: Փայտե տաշտ, սնակ, գլալ, շերեփ և այլ իրերը կենցաղի մեջ շատ տարածված էին, մանավանդ անտառաշատ վայրերի ու սար-

գործիքը հարմարեցված է եղել իրին՝ մեքենայի վրա (Արհեստները Հայաստանում, էջ 80), Վ. Աբրահամ- յանը հավանաբար նկատի ունի таран կոչվող մեքե- նան, որին նման էր մեր աղբյուրների խոլը:

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 222:

2 «Մանգոլիոն» և «նետակալ» բառերը տե՛ս ՆՀԹ:

3 Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 165:

4 Մատենադարանի ձեռագիր № 7550, էջ 79 ա:

վոր բնակչութեան կենցաղում: Տապարից, ուրագից, սղոցից, դուրից բացի գողալ, շերեփի, պնակ և նման այլ իրեր շինելու ժամանակ գործածվում էին նաև այլ գործիքներ. պրանցից ամենակարևորն էր կոր, համարյա կիսաշրջան կազմող մի եզրից սուր գործիքը, որը քերելով փորում էր գողալի, շերեփի կամ պնակի մեջը: Փայտից շինում էին նաև որոշ խաղալիքներ կամ խաղատախտակներ:

Իրեր, առարկաներ շինելու համար, հավանաբար շատ օգտագործվել է կոկոնաբերների ազգին պատկանող փիճի ծառը, որը երևում է այդ ծառին ներսես Շնորհալու նըվիրած հետևյալ հանելուկից:

«Ծառ մի կայ լեռնաբնակ,
Զերդ մոմեղէն է ինք շիտակ,
Յուրմէ ելնէ տաշտ ու պնակ,
Թի ու սեղան ու պարզոճակ»¹:

Փայտից պատրաստել են և զանազան այլ իրեր, նաև փայտե խաչեր: Դրանցից մի բարձրարվեստ գործ, այսպես կոչված, «Ամենափրկիչ» փայտե խաչը Քրիստոսի խաչելութեան ռելիֆ պատկերով հասել է մեզ և պահպանվում է էջմիածնում:

Նավաշինություն: Հայաստանը ծովափնյա իրկիր չէ, սակայն նրա տերիտորիայում, բացի Սևանա լճից, գտնվում էին նաև վանա, մասամբ Ուրմիա կամ Կապուտան լճերը: Դրանցից Սևանա լիճը ունի 1416 քառ. կիլոմետր մակերես և 45 մետր միջին խորություն՝ միանգամայն հարմար նավարկութեան համար: Զրային ուղիներով իրար հետ էին կապվում լճի ափին գտնվող տարբեր գավառակները, որտեղ կառուցված էին մի բանի նավահանգիստներ:

Այստեղ շատ վարդաքաճ էր ձկնորսությունը: Լճի հարավային և հարավ-արևելյան ափերին կային մի շարք ձկնորսարաններ:

Վանա լիճը ունի 3733 քառ. կիլոմետր

մակերես, միջին խորությունն է 16 մետր և նավարկությունն ու ձկնորսությունը Վանա լճում ավելի էին զարգացած: Զրային ուղիները իրար հետ էին կապում լճի ափին գլուխը մի շարք գավառներ և նրանց քաղաքները (Վան, Ոստան, Աղթամար՝ Աղթամար կղզու վրա, Արճեշ, Խլաթ և ուրիշները):

Ուրմիա լիճը ամենախոշորն է, ընկած Հայաստանի և Հարավային Ադրբեջանի միջև. նրա մակերեսը կազմում է 5775 քառ. կիլոմետր, ամենամեծ խորությունը 15 մետր, միանգամայն նավարկելի է: Նա իրար հետ էր կապում ոչ միայն Հայաստանի մի բանի գավառները, այլև ջրային ճանապարհը կտրում էր լճի լայնությունը և կազմում Իրանի, Հարավային Ադրբեջանի և Հայաստանի վրայով անցնող միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհի մի ճյուղ:

Այս լճերի վրա գործում էին ոչ միայն ձկնորսական մակույկներ, այլև մարդ և բեռներ փոխադրող բավականաչափ խոշոր նավեր ու լաստեր: Հայկական աղբյուրները (Թովմա Արծրունի, Հովհաննես կաթողիկոս, Ստեփանոս Օրբելյան) հաճախ են հիշատակում Վանա և Սևանա լճերի վրա կատարվող նավարկությունը: Օրբելյանի ասելով Սևանի վրա լողում էին բազմաթիվ նավակներ, դրանց թվում և «սրավար» նավակները¹ (հավանաբար առագաստանավեր): 10—13-րդ դարերի հայկական ձեռագրերում նավեր շատ հաճախ են պատկերված: Դրանք տարբեր ձևի ու տարրեր տիպի են լինում, սկսած հասարակ մակույկներից վերջացրած բավականաչափ խոշոր առագաստանավերով: Վանա և Ուրմիա լճերի առագաստանավերի մասին հիշատակություն կա մատենագրական աղբյուրներում:

Յակուտը վկայում է, թե Ուրմիո լճի վրա ուշիույժ նավարկություն էր տեղի ունենում: Նա ասում է. թե ինքը անձամբ հիշրեթի 617 թ.

¹ Մատենագրանի ձեռագիր № 6045, էջ 178 ր

¹ Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Կ Ա Ն, Պատմութիւն, էջ 189:

(1220—1221) այդ լճով ճանապարհորդել է դեպի Խորասան: Լճի լայնքը կարելի էր կտրել անցնել մի դիշերով մեջ, իսկ շուրջը նավով պատույտ կատարելը տևում էր շուրս օր¹: Բնական և, որ նավարկության ու ճեղքնորսության համար պետք է նավեր պատրաստվեին, հետևաբար լճափնյա քաղաքներում և այլ բնակավայրերում պետք է պարտապին նավաշինության: Իհարկե, նավաշինությունը պետք է զարգացած լիներ լճափնյա՝ նավահանգիստ ունեցող քաղաքներում կամ նրանց մոտերքը, բայց մեզ հասած տեղեկությունները, որ հստակում է Յակուտը, վերաբերում են միայն Ուրմիա լճի մեջ գտնվող մի կղզու վրա տեղադրված գյուղերին: Յակուտը ասում է, թե այդ կղզու վրա կար շուրս գյուղ, որոնց բնակիչները նավեր էին շինում², նավ շինող արհեստավորները կոչվում էին նավակառույց³, իսկ նավաշինությունը՝ նավարարություն⁴:

«Քանզի նախ և առաջին նաւակառույցն առնու զընդհանուր փայտ. և ապա ի խնդիր դայ, եթէ ո՞ր փայտ պատշաճ գոյ ողնափայտ լինել և ո՞վ է որ քեզի դոյ պատշաճ»⁵,

Նավաշինությունը միանգամայն ինքնուրույն արհեստ էր և զարգացած էր լճափնյա քաղաքներում ու ավաններում: Բացի նավերից, շինում էին նաև լաստեր:

Փայտի գեղարվեստական փորագրություն: Միջնադարյան Հայաստանում շատ զարգացած էր ինչպես քարի, նույնպես և փայտի գեղարվեստական փորագրությունը: Փորագրվում էին շենքերի պատշգամբները, դռները, պատուհանները, սյուների խոյակները, տնային կահույքը, եկեղեցական իրերը և այլն:

1 Յակուտ, գիրք Ա, էջ 513:

2 Նույն տեղում, էջ 513:

3 Խորենացի, Պատմութիւն, գիրք Ա, գլ. Դ, էջ 73:

4 Կորիւն վարդապետի, Մամբրէի վերծանողի և Ղաթի Անյաղթի մատենագրութիւնք, էջ 151:

5 Նույն տեղում, էջ 152:

Միջին դարերից մեզ հասել են փորագիր իայտի մի քանի բացառիկ նմուշներ: Պետական պատմական թանգարանում պահվում է մի գրակալ, որի պատրաստման թիվը չկա, բայց համեմատելով մյուս օրինակների հետ կարելի է չկասկածել, որ դա վաղ ժամանակի՝ ոչ ուշ 10-րդ դարի գործ է (տխտ. XXXIV ա): Օրնամենտներն այս գրակալի վրա Սեանի եկեղեցում գրված 9-րդ դարի խոյակների քանդակներին են նման: Անիից ծագող մի գրակալի (№ 73) վրա (տխտ. XXXIV բ) նշված է պատրաստման տարեթիվը ՈԺ (1161): Մի այլ գրակալի վրա (№ 171) փորագրված արձանագրությունից պարզվում է, որ այն 1272 թ. է պատրաստվել և իրոք ունի այդ ժամանակաշրջանին բնորոշ քանդակներ, մասնավորապես այնպիսիները, որոնք հիշեցնում են Դվինի միջնաբերդի պալատական շենքի տերակոտային զարդարանքը (տխտ. XXXIV գ): Գրակալի վրա փորագրված են նաև նուան ճյուղեր, բուսական այլ օրնամենտների և խաչի քանդակներ, իսկ խաչը հենված է առուծի մեջքին արևի սկավառակ հիշեցնող մի շրջանակի վրա: Փորագրությանը զարդարված փայտի մնացորդներ գտնվել են նաև Անիում Բագրատունիների պալատի ավերակներում: Մի օրինակի վրա քանդակված են նուրբ վարդյակներ¹: Նույն պալատում հրդեհից փրկվելով մնացել են փայտյա կամարների բեկորներ, դրանցից մեկի վրա քանդակված է դիշատիչ թռչուն, որը հոշոտում է իր ճիրաններում բռնած փոքր թռչունին, իսկ տեսարանի համար ֆոն է ծառայում բուսական օրնամենտը: Մի այլ կամարի բեկորի վրա քանդակված է հովազ, իսկ կամարի եզերքով անցնում է մանր վարդաքանդակներից բաղկացած երիզը²:

Բագրատունիների պալատի փլատակներ-

1 Н. Я. Марр, Ани, Ереван, 1939, стр. 201.

2 И. Орбели, Каталог Анийского музея древностей, стр. 7.

րի մեջ գտնվել են նաև փայտյա տախտակների մի բանի մնացորդներ, որոնց վրա նկարներ են արված ներկերով¹։

Քորամանյանը գրանք համարում է սլավոն վերանորոգության ժամանակի, այն է՝ 13-րդ դարի գործ²։

Փայտի վրա դեղարվեստական փորագրության մեղ հասած նմուշների մեջ բացառիկ տեղ է գրավում Մշո Առաքելոց եկեղեցու դուռը (չափերն են 2,02×1,42), որը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Արևմտյան Հայաստանից փոխադրվեց Անդրկովկաս և այժմ Պետական պատմական թանգարանի սևիականությունն է կազմում։ Այս դռան (տխա. XXXV) վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը.

Թ. ՇՂԳ. Ես տւ Քորոս և Գրիգոր ևս Դուկաս գծ»³։

Ուրեմն, դուռը 1134 թվականին է փորագրված՝ Տեր Քորոսի, Գրիգորի և Դուկասի ձեռքով, որոնք արվեստի մի հոյակապ գործ են ստեղծել։ Դռան շրջանակի ճակատին քանդակված են Տրդատ Գ-ը ձի նստած, Գրիգոր Լուսավորիչը, որը նիզակահար է սնում իր նժույզի սոփերի տակ տրորված վիշապին և երեք այլ պատկերներ՝ երկուսը հեծյալ, մեկը հեռիտան. վերջինս շեփոր է հնչեցնում։ Շրջանակի երկու ուղղահայաց կողմերին՝ դռան պարսկալիների վրա, բուսական նուրբ օրնամենտների մեջ, քանդակված են բազմաթիվ իրական և առասպելական կենդանիներ ու զաղաններ, զրանց թվում ձիեր, էջ, փիղ, ցուլ, առյուծներ, վագրեր, մարդագլուխ թռչուններ և այլն։ Այս լայն շրջանակից ներս գտնվում է երկրորդ շրջանակը, որի վրա փորագրված են

մարդարտաշարեր և բուսական օրնամենտներ, որոնք աչքի են ընկնում իրենց նրբություններ ճաշակավոր զուգորդումներով։ Բուն դուռը երկփեղկանի է, յուրաքանչյուր փեղկի եզրերն երով անցնում է նույնպիսի մարդարտաշարերով ու բուսական ավելի նուրբ օրնամենտներով զարդարված շրջանակ, որի մեջ դռան մակերեսին քանդակված է շորսական բազմանկյունի (ութանիստ) զուգորդված երկրաչափահան, ու բուսական օրնամենտների հետ։ Ամեն մի քաղմանկյան կենտրոնում քանդակված է մի ութ թևանի աստղ, որի կենտրոնը բռնում է ութ պսակաթերթ ոմեցող մի վարդյակ։

Փորագրության աչքի ընկնող օրինակ է Սեանի Առաքելոց եկեղեցու 1176 թվականը կրող դուռը. (տխա. XXXVI ա), որի վրա թողնված արձանագրությունից հայտնի է դառնում նրա փորագրող Հովհաննես հյուանի անունը։ «Ի թուականին Հայոց Որն (1176) նորոգեաց դուռն սուրբ եկեղեցոյն հրամանաւ իշխանաց իշխանին Քրդին և ձեւամբ Յոհանէս հիւսան»⁴։

Դռան վրա քանդակված են խաչ և երկրաչափական նուրբ օրնամենտներ։

Մեղ է հասել նաև Տաթևի մի եկեղեցու դուռը, որը նորոգել է Տեր Հայրապետ քանդակագործ հյուանը, 1253 թվականին⁵։

Փայտի վրա մարդկանց պատկերների փորագրության նշանավոր կոթող է Հավուց Թառի «Ամենափրկիչ» կոչվող Քրիստոսի խաչելության քանդակը (տխա. XXXVI բ)։

Բերված օրինակները ոչ մի կասկած չեն թողնում, որ փայտի զեղարվեստական փորագրության լավագույն նմուշները նույնպես գերաճել էին արհեստի շրջանակները և արվեստի նշանավոր ստեղծագործություններ էին։

Փայտամշակության արհեստների միջև աշխատանքի բաժանման վերաբերյալ որոշ

¹ И. Орбелн, Каталог Анниіского музея древностей, стр. 8—9.

² Քորոս Քորամանյան, Նյութեր հայ ճարտ. պատմ., հ. Ա, էջ 350:

³ С. Тер-Аветисян, Резная дверь 1134 г. из окрестности города Муша. Известия Кавказского историко-археологического института, том. III, Тифлис, 1925, стр. 129—132.

⁴ Վիմական տարեգիր, էջ 32:

⁵ Ա լ ի շ ա ն, Սիսական, էջ 236, Ազդարական հանդես, Գ, էջ 142:

սեղեկություններ ևն պահպանվել 11-րդ դարի հայ մատենագիրների մոտ: Այդ տեսակետից վերին աստիճանի բնորոշ և խիստ արժեքավոր են Գրիգոր Մագիստրոսի թղթերում հանդիպող տեղեկությունները:

Պետրոս կաթողիկոսին դրած իր մի նամակում Գրիգոր Մագիստրոսը խոսելով ուսման, կրթության մասին ասում է, թե նախանհրաժեշտ է բնական գիտությունները սովորել, բազմակողմանի իմացություններ ձեռք բերել, հմտանալ չորս գիտությունների՝ մաթեմատիկայի, աստղաբաշխության, բժշկության և փիլիսոփայության մեջ, ասլանցնել աստվածաբանության ուսումնասիրությանը, «ինչպես հյուանները, որոնք գիտակ են իրենց արհեստին, սկզբից մայրին կամ անտառը չեն շտապում փայտ կտրելու, որովհետև դրանով ուրիշ մարդիկ են պարապում և ուրիշներ, որոնք հարթում և սղուցում են, ապա ծայրագույն (արհեստավորները) ճախարակներով և այլ գործիք-հարմարանքներով (գործարանօք) գեղապանծորեն հարդարում են դրանք (պատրաստելով) դահավորակներ, աթոռներ և նման ուրիշ հարմարանքներ»¹:

Մագիստրոսն այստեղ նկատի ունի այն հանգամանքը, որ ծայրագույն վարպետը, այսինքն իր արհեստի մեջ շատ հմտացած վարպետը միանգամից չի ստացվել, այլ երկար քրտնաջան աշխատանքով է տիրապետել իր արվեստի բարձրագույններին և անցնելով աշխատանքի և վարպետության տարբեր աստիճաններով, այլևս անցած աստիճանների հասարակ աշխատանքով չի զբաղվում: Մեզ համար առավել կարևոր է այն, որ Մագիստրոսը պարզ նշում է փայտամշակության արհեստի երեք հաջորդական աստիճաններ, որոնցով զբաղվում էին տարբեր արհեստավորներ՝ փայտահատներ, փայտը սղոցող հարթողներ և ճախարակների ու այլ հարմարանքների օգնությամբ աշխատող բարձրորակ ու բարձրարվեստ

վարպետներ: Փայտահատները կապ չունեին մյուս հյուանների հետ, իսկ փայտը սղոցող հարթողները և ամենահմուտ վարպետները որոշ դեպքերում կարող էին միևնույն արհեստանոցի տարբեր որակի և տարբեր աշխատանք կատարող արհեստավորներ լինել:

Միջնադարյան հեղինակները սովորություն ունեին տալու այս կամ այն բառի, տերմինի ստուգաբանությունը, երբեմն հաջող, երբեմն անհաջող և մեծ մասամբ սխալատիկական: 15-րդ դարի առաջին կեսի փիլիսոփա Առաքել Սյունեցու մոտ հանդիպում է հյուան բառի ստուգաբանությունը, բըր, յըբան էլ սխալատիկական լինի, դուրկ չէ հետաքրքրությունից, յուտի ամբողջությամբ մեջ ենք բերում:

«Հարց: Ի՞նչ ստուգաբանի հիւանն անուշըն: Պատասխանի: ԺՁ են հատկութիւնք նորա. նախ՝ զի զգիտութիւն արհեստին հիւսեալ է ընդ միտան: Երկրորդ՝ զի զգայարանսն և զանդաման հիւսեալ է ընդ հարմարութիւն գործոյն, որով կատարէ զգործն: Երրորդ՝ զի զկատարումն գործոյն հիւսեալ է յերեակայութիւն իւր այսինքն զձեռագործոյն: Չորրորդ՝ զի զշա(ր)ժուածս ձեռացն հիւսեալ է ընդ իւրաքանչիւր գործեաց արհեստին՝ սղոցին, ուրագին և այլոցն: Հինգերորդ՝ զոր ինչ ձեացուցեալ էր իմաստն, զայն գործով հիւսեաց ենթակայն: Վեցերորդ՝ հիւան որպէս թէ սնեալ էր ի վարժումն արհեստին: Եւթներորդ՝ զի զանազան գործս գործարանացն հիւսեաց ի մի ենթակայն: Ութերորդ՝ զ(ի) հիւսէ զզանազան փայտն և մին աթոռ կազմէ, կամ շահրա և այլն: Իններորդ՝ զի ամենայն ազգ փայտ հիւսին ի գործ նորին: Տասներորդ՝ սնուցանէ զփայտն յարմարումն իւրաքանչիւր գործոյն: Մետասաներորդ՝ հիւան զի հասոյց զարհեստն ի կատարումն զոր ինչ առնէր: Երկուտասաներորդ՝ զի հասոյց և հոսեաց և ցրու-

¹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 9:

¹ «Հարց» և «Պատասխանի» բառերը, որոնք պետք է գրվեին կարմիր թանաքով, չեն գրված:

Լաց զտաշուածք փայտին որոշելով ի լնին: Չորեքտասաներորդ՝ զի յառաջմեն մինչ ի հուսկ վերջին փայտն ամենքն պիտան(ի)ն նմա ի շինուածն տանց և այլոցն: Հնգետասաներորդ՝ հիւսն զի ի վերայ շինուածոյ նորին հոսեն զգարմանն և հողն, վեշտասաներորդ՝ հիւսն զի յետոյ ենթակայ գործ նորա հոսի և փոխի և ապականի և գործն ընդ նմին կորնչի»¹:

Հեղինակը, թեև հշուան բառը բխցնում է հշուանի և հոսել բառերից, որ միալ է, բայց և տալիս է արհեստի պատկերը և բնորոշումը: Ըստ այդմ հշուանի արհեստի իմացությունը կապված է մտքի հետ և սահանջում է մտավոր աշխատանք, քանի որ հշուանը իրականացնում է այն, ինչ մտացի որոշում է, ուստի նա երևակայությամբ պատկերացնում է գործի ավարտը և պատրաստի իրը, բայց հշուանությունը պահանջում է նաև ֆիզիկական աշխատանք, ուստի առանց վարժություն ձեռք բերելու և իր ձեռքերն ու ոտքերը գործիքներին և սահանջող աշխատանքին հարմարեցնելու և վարժեցնելու, նա ոչինչ անել չի կարող, մանավանդ, հշուանը իր արհեստի մեջ միավորում է տարբեր տիպի աշխատանքներ: Ահա ունենալով այս հատկությունները հշուանը փայտից պատրաստում է աթոռ, ճախարակ, տոռն և այլն. ամեն փայտ կարող է պետք գալ հշուանին, բայց նա պարտավոր է յուրաքանչյուր գործի համար ընտրել հարմարագույն փայտանյութը:

Արհեստի նման պատկերացումն ու բնութագրությունը միջին դարերում ուշադրավ է, մանավանդ շեշտվում է նրա մտավոր կողմը:

Ածխագործություն: Դարրինները, սլողընձագործները, ոսկերիչներն ու այլ արհեստավորներ գործածում էին մեծ քանակությամբ ածուխ: Բարածխի գործածության

մասին ոչ մի տեղեկություն չկա, ընդհակառակը, ալքիմիական ձեռագրերից հայտնի է, որ գործածվում էր փայտի ածուխը՝ գործելին, որով վարսվաները գործ էին կատարում: Ածուխ պատրաստելով զբաղվում էին հատուկ արհեստավորներ, որոնք կոչվում էին անձուղագործ¹:

Ածխի որակը կախված էր ոչ միայն հըմուտ պատրաստելուց, այլև այն քանից, թե նրա համար ինչ փայտ էր ընտրվում: Ածխագործները լավ գիտեին, թե ինչ փայտից, ինչ որակի և գործածության ինչ նպատակի համար պետք էր ածուխ պատրաստել: Սովորաբար ածուխը պատրաստում էին քաղաքներից դուրս և փոխադրում քաղաք՝ վաճառելու համար:

Ամփոփելով մեր խոսքը փայտամշակության մասին, պետք է աննք հետևյալ եզրակացությունները.

1. Փայտամշակությունը բնակչության տնտեսության և կենցաղի մեջ շատ խոշոր դեր էր կատարում:

2. Փայտամշակությունը զարգանալով ճյուղավորվել էր բազմաթիվ ինքնուրույն արհեստների, դրանք էին՝ փայտահատությունը, առաղձագործությունը, երկրագործական գործիքների շինությունը, սայլ, կառք, փայտե հաստոցներ և սարքեր շինելը, կահագործությունը, գդալ, շերեփ, տաշտ, պնակ և նման տնային իրեր շինելը, նավաշինությունը, փայտի զեղարվեստական փորագրությունը, որը մասամբ արվեստի բնագավառին էր պատկանում և ածխագործությունը:

3. Փայտամշակությունը 10—13-րդ դարերում զարգացել էր այն աստիճան, որ իր հիմնական ճյուղերով դարձել էր քաղաքային արհեստ և կենտրոնացել էր քաղաքներում, սակայն գյուղերում ևս կային զգալի թվով հշուան-արհեստավորներ:

¹ Մատենագրարանի ձեռագիր № 1849, էջ 96 բ—97 ա:

¹ Մատենագրարանի ձեռագիր № 1402, էջ 32բ:



ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

1. ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կավագործությունը միջնադարյան Հայաստանում ամենատարածված և զարգացած արհեստներից մեկն էր: Կարելի է ասել, որ ուրիշ ոչ մի նյութից պատրաստված ամանեղենը և իրեղենը այնպիսի լայն կիրառություն չունենր դյուղի և քաղաքի բնակչության կենցաղում, ինչպես կավե ամանեղենը: Եվ դա հասկանալի է, ոչ մի նյութ այնքան մատչելի ու հեշտ մշակելի չէ, որքան կավը:

Կավից պատրաստում էին ամեն տեսակի ու չափի ամանեղեն և իրեր՝ սկսած փոքրիկ աղաթասերից ու իլիկների գլխիկներից, վերջացրած հսկայական կարասներով ու մետաղաձուլական հալոցներով: Նրանք խոշոր դեր էին խաղում բնակչության ոչ միայն կենցաղի, այլև արտադրության բաղաձախում ու բաղաձախան պահանջները բավարարելու գործում: Կային տարբեր մեծության ու ձևի անոթներ, հեղուկ նյութեր, ինչպես օրինակ, յուղ, ձեթ, բանջարեղեն թփոններ, ռուպ (դոշաբ), և այլն լցնելու և պահելու համար: Իսկ առանց դինու կարասների շէր կարելի պատկերադրել դինու արտադրությունը և

պահելը: Բաղաձախվ մեծ ու փոքր ամանների կային չոր նյութերի՝ հացահատիկների, ալյուրի, ձմեռվա սաշար ձավարների (կորկոտների), լոբու, սիսեռի, ընկույզի, չորացրած մրգեր պահելու համար: Այս նպատակին ծառայող անոթները սովորաբար ավելի լայնաբերան էին լինում:

Ավելի մեծ թվով ու բաղաձախ ամաններ կային ամենօրյա գործածության՝ ճաշ կիկելու, ջուր տաքացնելու, լվացք անելու, խմելու ջուրը պահելու, կթելու (կովկիթ), մերելու համար, ինչպես և սեղանի ամանեղեն՝ սնակներ, ափսեներ, թասեր, աղաթասեր և այլն: Կավից պատրաստված ամանային գործածության հարմարանքներ և իրեր էին նաև թոնիրները, ձեթի ճրագները, բնակարանների զամբարները, հեղուկ նյութերի շափերը և այլն:

Կավից պատրաստում էին նաև արտադրական նշանակություն ունեցող հարմարանքներ, անոթներ և իրեր՝ մետաղի հալոցներ, բրուտի դուրգեր, խնոցիներ, արհեստավորների տաշտեր և այլ անոթներ:

Շինարարական արվեստը ևս մեծապես օգտավոր էր կավագործության արտադրանքից: Ճիշտ է, Հայաստանը հնուց ի վեր առավելապես քարի ճարտարապետության երկիր է, սակայն հազվագյուտ չէին և աղյուսաշեն շենքերը: Արտադրվել է նաև ծածկի կղմինդր, շենքերը դրսից և ներսից դարդարելու շքաղյուս, տերակոտային աղյուսիկներ, ինչպես և քաղաքներին ջուր մատակարարող ջրմուղների կավե փողոսիկներ (գոնդեր): Վերջապես հիշատակության արժանի է, որ կավից պատրաստել են նաև համայնիկներ, ուլունքներ և մանկական խաղալիքներ:

Այս թուղցիկ և դեռևս ոչ լրիվ ցուցակն անգամ տարակույս չի թողնում այն մասին, թե տրալիսի խոշոր դեք և նշանակություն ունեւր կավագործությունը միջնադարյան Հայաստանի բնակչության կենցաղի և տնտեսության մեջ:

Սակայն ընդհանրապես կավագործության և կավագործական արտադրանքի բննարկումը դուրս է դալիս մեր թեմայի շրջանակներից և մեր խնդիրն է պարզել, թե ինչ տեղ է գրավել բրուտի արհեստը քաղաքի արհեստների թվում, որպիսի՝ արտադրողական-տեխնոլոգիական առաջադիմություն է ունեցել և ինչ շափով է նպաստել քաղաքի արտադրության ու շուկայի զարգացման գործին:

Կավագործությունն էլ մյուս արհեստների պես, սկսած 9—10-րդ դարերից կենտրոնանում է առավելապես քաղաքներում: Իհարկե դղյակներին և վանքերին կից գործատներում կավագործությունը չի ընդհատվում, սակայն նկատելիորեն կորցնում է իր նշանակությունը և աստիճանաբար տեղի է տալիս քաղաքային արտադրությանը: Դրան նպաստեց մանավանդ այն արտադրական առաջադիմությունը, որը կապված էր բազմաթիվ նյութերի, զանազան տեխնոլոգիական հնարքների ու բարձր հմտության գործադրության, արտադրական դժվարությունները հաղթահարելու հետ: Նպաստեց նաև

արտադրության ու սպառման բնույթի մեջ տեղի ունեցած զգալի փոփոխությունը, որի մասին կխոսվի իր տեղում:

Ինչ վերաբերում է կավագործական արհեստին գյուղում, ապա այն իհարկե, չընդհատվեց, սակայն այժմ ավելի մեծ շտապերով, քան առաջ տարբերվում էր քաղաքի կավագործական արհեստից և սպասարկում էր գյուղի բնակչության առանձին պահանջները, արտադրելով միայն հասարակ (առանց ջնարակի) և ցածրորակ ամանեղեն ու իրեր:

Քննարկվող արհեստը հայ հին դրականություն մեջ հայտնի էր մի քանի անուններով՝ կավագործություն¹, խեցեգործություն², և բրուտի արուեստ, դրանց համապատասխան այդ արհեստով պարապողն էլ կոչվում էր՝ կավագործ, խեցեգործ և բրուտ³: Ամենից ավելի գործածական էր բրուտ անունը:

Գործածվում էին տարբեր տեսակի կավեր՝ կարմրավուն, դեղին, մուգ մոխրագույն և սպիտակ կավ՝ հախճապակե ամանեղենի արտադրության համար: Նշված գույնի կավերն էլ ունեին իրենց երանգավորումները և տարբերվում էին նաև որակով: Դվինի կավն, օրինակ, ավելի բաց կարմիր էր, խիտ և թրծելիս ավելի կարծր ու դիմացկուն էր դառնում, քան Անիի բրուտների գործածած ավելի մուգ կարմիր ու համեմատաբար կոպիտ կավը: Անիի այսպես կոչված «սնդկամանների» կավը ավելի մուգ մոխրագույն է, քիչ ինչ կանաչին տվող և թրծելուց հետո ավելի կարծր, քան Դվինի ավելի բաց գույնի և համեմատաբար պակաս կարծր կավը: Դվինում «սնդկամաններ» են պատրաստել նաև դեղնավուն կավից, որը գործածվել է և այլ ամանեղենի ու աղյուսի արտադրության համար:

1 Սուրբ գիրք, Իմաստութիւն Սողոմոնի ժէ, 7, Յոհանն Ոսկերբրան Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի Բ, 14:

2 Կիւրեղ, Կոշումն ընծայութեան ժԳ:

3 Սբ. գիրք Ղևտ. ԺԱ 33, Նոսայի Լ 14: Այս և հաջորդ բառերը տես Հայկազյան նոր բառգրքում:

Կավը ալքիմիական որոշ ձեռագրերում կոչված է «հող բրտոց», ըստ որում հիշատակվում է «կարմիր կամ սպիտակ հող բրտոց»¹: Ժողովուրդը կավին տալիս էր և այժմ էլ տալիս է բրտին անունը: Ամենից ավելի գործածական էր կավ անունը: Բաց գույնի լավորակ կավը Արարատյան դաշտի բնակիչներն այժմ էլ անվանում են կավճին:

Ամենբարձրորակ ամանների արտադրության համար լավագույն կավը կառլինն է՝ «ճենահողը», որից սլատրաստվում է ճենապակին, որը ալգուես՝ շինական ապակի կոչվել է շինական ծագման համար: Կառլինը որևէ խառնուրդից ազատ միանգամայն մարուր կավն է, որն առաջացել է կրկրոբանական վաղ շրջաններում և հանդիպում է բարձր սարահարթերում կամ ծովերի հատակներին, որտեղ տարվել է սառցադաշտերի վրա հաստ շերտով նստած լինելով:

Հին ժամանակներից ի վեր Հայաստանը հայտնի էր իր մի տեսակի կարմրորակ կավով, որը հայտնի էր «հայկա», իսկ արարների և պարսիկների մոտ «թին արմանի» անունով²: Արար աշխարհագիր Իդրիսին էլ վկայում է, թե Հայաստանում մի լճի ափին հատուկ տեսակի կավ էին հանում, որից սլատրաստված ջրի շքեղ կժերը արտահանվում էին Իրաք, Ասորիք, Եգիպտոս, որտեղ նրանք վաճառվում էին բարձր գներով³: Վերջին ժամանակներս էլ հայ կավագործները գիտեին, որ Մշո դաշտում կա բարձրորակ կավ: Ժողովրդի մեջ հայտնի է բաց գույնի բարձրորակ կավը՝ կավճինը, ինչպես և կարմրավուն կավը՝ գաղճինը: Տարբեր տեսակի ու դանազան նստակների համար ընտրվում էր կավի այս կամ այն տեսակը: Ըստ որում կավագործները նկատի էին ունենում նրա գույնը, մաքրությունը (օրգա-

նական նյութերի և ավազի ու մանր քարերի պարունակության շահը), այլև դարավոր փորձով գիտեին նրա հատկությունները՝ թրծելու ժամանակ:

Կավը ընտրելուց հետո, պետք էր հատուկ ձևով մշակել ու նախապատրաստել, նրանից ամանեղեն պատրաստելու համար: Այսպիսով կավագործի աշխատանքը սկսվում էր կավի հանքը ընտրելուց:

Քաղաքի, երբեմն և գյուղի կավագործները սովորաբար կավը հանելուց անմիջապես հետո չէին օգտագործում, այլ լցնում էին մի ցուրտ տեղ, որպեսզի կավը «ցուրտ ուտեր»: այնուհետև կավը մաքրվում էր քարերից և այլ ավելորդ պարունակություններից, որի համար դործադրվում էին զանազան միջոցներ և եղանակներ՝ ծեծում կամ աղում էին, մաղում մանր մաղով⁴, ապա ջրով բաց անելով կոխում էին ռաբրով, որը մի երկարատև ու ծանր աշխատանք էր, որի կատարողը կոչվում էր կավակոխ, իսկ ինքը աշխատանքը կավակոխություն⁵: Հաճախ մեծ մեծ դեղերով կամ հատուկ ամանների կավամանների մեջ կավը դնում էին նկուղներում և հնացնում էին ամիսներով, երբեմն էլ տարիներով:

Մանրահատիկ կավ ստանալու համար, քաղաքի կավագործները կիրառում էին հատուկ տեխնիկական եղանակ: Մանրացրած չոր կավը լցնում էին հաղորդակից տաշտերի կամ գետնի մեջ փորված և սալերով պատած փոսերից առաջինի մեջ, վրայից բաց թողնում հոսող ջուր և կավը խառնում էին, որպեսզի լուծվի ջրի մեջ, լուծված կավը ջրի հոսանքով տարվելով, նստվածք էր տալիս հաջորդ տաշտերի կամ փոսերի մեջ: Այսպիսով կարելի էր ստանալ հաջորդաբար

¹ Տե՛ս Կ. Ղ. ա Ֆ ա դ ա ր յ ա ն, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940, էջ 63:

² ՆՀԲ, Հայկառ բառը:


³ Н. Я. Марр, Ани, Ереван, 1939, стр. 237, прим. 165а.

⁴ «Հայեր յերկիր և տեսանէր կուժ մի նոր, զի կայր անգր կաւագործ մի հող մաղնալ...»: Տե՛ս Թանգարան հայկական հին և նոր դպրութեան Բ. Անկանոն գիրք նոր կտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 37:

⁵ «Ի քսաներորդի երկրորդի ամին Մովսէսի սկսան դիսվակոխութիւնն որդիրն Իսրայէլի», Վարդան, Պատմութիւն, էջ 18:

ավելի ու ավելի մանրահատիկ կավի նըստ-
վածքներ, որոնք դործադրվում էին տարբեր
ամանեղեն արտադրելու համար: Նման եղա-
նակով ստացված մանրահատիկ կավե ա-
նոթներ շատ հաճախ են դտնվել Դվինում,
Անիում և Դառնիում:

Մշակված կավից ամանեղեն պատրաս-
տելու տարբեր եղանակներ կային: Դրանցից
առաջինը և հնագույնը՝ ամանեղենը պար-
զպակա ձևերով պատրաստելն էր: Այս եղա-
նակով պատրաստված կավամանները Հա-
յաստանում հայտնի են էնեոլիթյան բնա-
կավայրերից սկսած հետագա ամբողջ ժա-
մանակամիջոցում: Կավե ամանեղեն պատ-
րաստելու համար դեռևս շատ վաղ ժամա-
նակներից մարդիկ սկսում են օգտագործել



Նկ. 30. Բրուտի դուրս սկավառակ. (Դվին,
N° 1906) 35, ՊՊԲ:

նաև մի երկրորդ կատարելագործված միջոց՝
բրուտի անիվը կամ դուրգը: «Բրուտի լմեալ
դկակուղ կան՝ դնէ ի վերայ դրդան և ստեղ-
ծանէ անօթ»¹: Դուրգի վրա պատրաստված
ամանները աչրի են ընկնում իրենց համա-
չափ ձևերով: Հայաստանում դուրգի վրա
պատրաստված ամաններ հանդիպում են
դեռևս մեր թվականությունից առաջ՝ երկ-
րորդ հազարամյակի կեսերից սկսած:

Բիև ձևերով առանց դուրգի ամանեղեն
պատրաստելու տնայնագործական եղանակը
միշտ էլ պահպանվել է, բայց քաղաքային
կավագործությունը լայնորեն կիրառում էր
դուրգը: Դա մի պատվով հարմարանք է,
բրի վերևի մասում գտնվում է հորիզոնա-
կան դրուլթյամբ դրված սկավառակը 20—
35 սմ տրամագծով, որպիսի կավե օրինակ-
ները գտնվել են Դվինում (նկ. 30): Սկա-
վառակը միացվում է առանցքի հետ, իսկ
վերջինիս ներքևի ծայրը միացվում է դարձ-
յալ հորիզոնական դիրք ունեցող ու ավելի
մասսիվ քարե թափանիվին: Առանցքի ստո-
րին ծայրը մետաղից է լինում, որը հենվում
է դարձյալ մետաղե փոսիկավոր հենակի
վրա: Ամաններ պատրաստելու համար վերց-
նում են անհրաժեշտ քանակությամբ
կավը, տալով նրան դլանի ձև և դնում
են դուրգի սկավառակի վրա, ապա
նստելով դուրգի շուրջը պատրաստ-
ված դաղգահին այնպես, որ ձախ ոտ-
քը ունենա ստորին թափանիվից քի:
բարձր հինարան, և աջ ոտքի ութմիկ
հարվածներով (այնպես որ հարվածը
շփվում ամեցնում է թափանիվի վերին
մակերեսով) պտտեցնում են թափա-
նիվը, իսկ երկու ձևերով կավին տա-
լիս են ուլած ձևը: «Բրուտ՝ որ նստիցի
ի գործ իւր, շրջիցէ ոտիւք իւրովը
վզուրդն»²:

Դուրգի կամ բրուտի ճախարակի մասին
մի վերին աստիճանի ուշագրավ վկայություն
կա 10-րդ դարի վերջերի կամ 11-րդ դարի
բանաստեղծ Վարդան Անեցու մի պոեմում,
որտեղ գտնում ենք հետևյալ երկու տողը.

«Եւ զհամատարած լարն վիճակի,
Որով շարժէ զճախարակ բրտի»²...

Այստեղ կարևորն այն է, որ Անեցի բա-
նաստեղծը ասում է, թե բրուտի ճախարակը
պտտեցվում էր լարով, այսինքն փոկով:

¹ Տե՛ս նշԲ, գուրգն բառը

² Տե՛ս նշԲ, գուրգն բառը

² Բաղմավէպ, 1919, էջ 167:

Այս տեխնիկական շատ հետաքրքրական միջոցը զգալի չափով կհեշտացնեն վարպետի դործը, կմեծացնեն նրա աշխատանքային հնարավորությունները:

Գուրգի վրա կարելի էր պատրաստել սկսած ամենափոքր անոթներից մինչև մոտ մեկ մետր բարձրությամբ անոթները, իսկ ավելի խոշոր տուճերն ու կարասները պատրաստվում էին՝ ստորին մասը դուրգի վրա, իսկ վերին մասը՝ ձեռքով: Գուրգի վրա պատրաստված ստորին մասը վերցնելով դնում էին դետոնի, ապա ձեռքով շարունակում էին պատրաստել վերին մասը. դրա համար նախօրոք վերցնում էին փոքր զընդերով կավը, նրան տալիս դանի ձև և պատրաստում այսպես կոչված պատուլջը, որը նայած պատրաստվող անոթի մեծության և պատերի հաստության, կարող էր բարակ կամ հաստ լինել: Պատրուլջը դնելով ամանի վերին թերի մասի եզրին, ձեռքով տալիս էին նրան պատերի ձևը, օգտագործելով նաև փայտե կամ մետաղե բերիչը և թրջած սպունդը կամ պարզապես թաց լաթը:

Սպունդի կամ թաց լաթի օգնությամբ էր քսվում նաև անգորը, որի լուծույթը փոքր տաշտով լինում էր բրուտի կողքին: Անգորի օգնությամբ հասարակ ամանեղենին տրվում էր դուրեկան բաց գույն, կամ ուղած այլ գույնը: Ամանեղենը կոկեղու համար օգտագործվում էին կավից պատրաստված և թրթած կամ ուղղակի քարե կոկիչներ, որոնք կոչվում էին բրե: Վարդան Այգեկցու առակներից մեկում պատմվում է, թե գայլը անասուն էր փախցրել և շները հետապնդում էին նրան. գայլին ամենից ավելի նեղում էր բրուտի շունը և գայլը դառնալով նրան ասում է. «Ով նզովեալ բրուտի շուն, ասա՛ ինձ, թե քեզ ի՞նչ կուտանիմ՝ զյո՞ւրքն, թե քերո՞ցն, թե զքե՞ն՞, որ կոյ կոկեն զպուտուկն»¹: Գառնիի պեղումների ժամանակ

դտնվել են աման կոկեղու մի քանի քարե կոկիչներ:

Ամաններ և իրեր պատրաստելու երրորդ եղանակը կակուղ կավը կաղապարով մամլելն է: Կավից կամ քարից պատրաստվում էին միափեղկ կամ երկփեղկ կաղապարներ, որոնց մեջ մամլում էին կակուղ կավը՝ նրան տալով ուղած ձևը՝ և պատրաստելով կավե արձանիկներ (տերակոտային արձանիկներ), ռելիեֆ դարդեր ունեցող ամաններ, իրեր և այլն: Այս եղանակով պատրաստված արձանիկներ Հայաստանում հայտնի են այսպես կոչված հելլենիստական ժամանակաշրջանից և գտնվել են հին Վաղարշապատում, Գառնիում և այլուր:

Միջին դարերում այս եղանակով պատրաստում էին շքադրուաներ և փոքրիկ ձևավոր, այսպես կոչված տերակոտային աղյուսիկներ:

Խեցեղենի արտադրության մեջ կարևոր տեղ էր դրավում նաև թրծումը: Թրծելուց զգալիորեն կախված էր խեցու կարծրությունը, գույնը: Վատ թրծած ամանների խեցու միջուկը մուգ գորշավուն, անգամ թուխ էր լինում, խեցին ոչ շատ կարծր, բայց միջին դարերում արդեն գիտեին շատ լավ թրծել և հին ժամանակների համար սովորական թուխ միջուկով խեցեղենը հաղվագյուտ երկվույթ է դառնում:

Թրծերու միջոցին էին երևան գալիս ջնարակած խեցեղենի գույները, որոնք տրվում էին մետաղական թթվուղների (օքսիդների) օգնությամբ, այդ եղանակով անոթների վրա արվում էին գույնզգույն զարդեր ու պատկերներ: Լավ թրծելիս ջնարակը կարող էր ողորկ լինել և կուտակումներ ու ճեղքեր չտալ:

Պարզ է, որ թրծելը մեծ հմտություն և փորձ էր պահանջում¹:

Հասարակ խեցեղենը թրծելիս անհրաժեշտ էր լինում ջերմությունը հստոցում հասցրնել մինչև 700—850 աստիճանի: Զնա-

¹ Ժողովածոյր առակաց Վարդանայ, հատ. 2-րդ, էջ 108:

¹ А. Л. Яковсон, Средневековый Херсонес, стр. 116.

րակած ամանեղենը, եթե պատած էս անդու-
րով, թրծվում էր երկու անգամ՝ մի անգամ
անդորով պատելուց հետո, այս դեպքում
պետք էր 800—850 աստիճան ջերմություն և
երկրորդ անգամ՝ ջնարակով պատելուց հե-
տո, այս անգամ հարկավոր էր ջերմությունը
հասցնել մինչև 900 աստիճանի¹:

Հնոցի կրակը միանգամից չէր հանդը-
վում, այլ աստիճանաբար էր նվազեցվում
կրակի բարկությունը և աստիճանաբար սա-
ռեցվում հնոցը: Ջնարակած խեցեղենը թըր-
ծելիս թրծող վարպետը հնոցի մեջ մտցնում
էր երկու տեսակի գաղի հոսանք՝ թթվածնի,
կրակը բորբոքելու համար և ածխածնի
(ածուխի միջոցով) մետաղական օքսիդների
գույները վերականգնելու համար:

Խեցեղեն թրծելու հնոցները լինում են
հորիզոնական և ուղղահայաց: Միջնադար-
յան Հայաստանի քաղաքներից մեկ հասած
հնոցները ուղղահայաց են, միայն Դվի-
նի միջնաբերդում բլրի գագաթին բացված
հնոցը հորիզոնական է: Կ. Ղաֆաղարյանը
նշում է, որ խոշոր շափերի մի կտրածև ուղղա-
հայաց հնոց Դվինի հնադիտական արշավա-
խումբը հայտնաբերել է քաղաքի միջնաբեր-
դից շատ հեռու հարավային թաղամասում²:
Տողերիս գրողին, նույն թաղամասում, քա-
ղաքի պարսիպների տակ հայտնի է ևս եր-
կու հնոց շատ խոշոր շափերի՝ 3—5 մետր
արամագծով, բոլորակ հատակագծով և ուղ-
ղահայաց պատերով: Այս հնոցները մինչև
1939 թ. նկատելի էին Վերին Արաշատի մոտ
այգիների միջով անցնող պարսպապատի
տակ. նրանք ունեցել են կտր աշտարակի
տեսք, քանի որ հենված էին պարսպապա-
տին, դրա շնորհիվ էլ պահպանվել էր հնոցի
պատի կեսը, որը կիսաշրջան էր կազմում և
երևում էր, որ հնոցները բավականաչափ
բարձր են եղել, մոտ հինգ մետր գուցե և
ավելի. հավանաբար նրանք երկհարկանի են

եղել և ունեցել են դմբեթաձև ծածկ, ծխնե-
լույզ-անցքով:

Բարձր դմբեթավոր հնոցներում, որոնք
բնորոշ էին միջին դարերի համար, կարելի
էր ստանալ հասարակ, մանավանդ ջնարա-
կած խեցեղենը թրծելու համար անհրաժեշտ
բարձր ջերմություն: Այդ է պատճառը, որ
քաղաքում արտադրված խեցեղենը լինում է
լավ թրծված և խեցիմ ալելի հին ժամա-
նակներիմ բնորոշ հում մնացած մուգ գու-
շավուն միջով չի ունենում:

Հին հայ գրականություն մեջ հնոցը կամ
քուրան շատ հաճախ հանդիպող բառ է և
նշվում է, թե հնոց ոճնեին, ոչ միայն դար-
բիններն ու ոսկերիչները, այլև կավագործ-
ները կամ խեցեղագործները. «Ոչ միայն ոս-
կերչաց մանկանց են քուրայք, այլև խեցե-
գործաց», կամ «Քուրայ է ոչ միայն այնու-
ցիկ՝ որ ղհրահայելի նիթս գործեն», այլև
անոցիկ, որ անօթս խեցեղէնս առնեն»¹: Ու-
շաղթով է, որ հնոցը պատկերվել է կամա-
րակապ դմբեթավոր. «Որպէս թէ կամարա-
կապք ի ձև հնոցի...»²:

Դվինի հնոցների մեջ պահպանվել էին
կավե թրծած ձողեր՝ պատած կանաչ ջնարա-
կով: Այս ձողերն ունեին 4—5 սմ տրամա-
ցիծ, 40—60 սմ երկարություն, մի ծայրը
հարթ կտրվածքով, իսկ մյուս ծայրը՝ սրած:

Խեցեղենի թրծման միջնադարյան հնոց-
ների մասին պարզ պատկերացում կարելի
է կազմել հին Թբիլիսիում 1948—1949 թթ.
Կուրի կամուրջի մոտ, կավագործական ար-
հեստանոցների հետ միասին, թրծման 7 հը-
նոցների բացվելու շնորհիվ: Վերջիններս
բաղկացած են երկու հարկից: Ստորին
հարկը, որտեղ վառվում էր կրակը, շարված
է գետաքարերից, ունի տանձաձև տեսք (հա-
տակագծում) և սլաքաձև կամարով վառա-
բանի բացվածք: Վերին հարկը բոլորակ է.
Ֆրա պատերին ամրացված են եղել ցցեր.
որոնց ծայրերից Տ ձևի կեռերի օգնությամբ
կախվել են կճուճները՝ կանթերից, իսկ վե-

1 Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա
պեղումները, էջ 236—237:

2 Նույն տեղում, էջ 236:

1 ՆՁԲ, ոսկերիչ և քուրայ բառերը:

2 ՆՁԲ, հնոց բառը:

րևում դրվել են թրծվելիք պնակները: Վերին հարկը աղյուսաշար է: Ցցերը ինչպես ենթադրում են, շարված են եղել պատերին 4—5 խիտ շարքերով¹:

Զնարակած ամաններ թրծելու համար դործադրված կավե ձողեր, նրանց վրա կպած տարբեր դուչնի ջնարակի մնացորդներով գտնվել են և հին Գանձակում: Դրանք ոճն են 15—30 սմ երկարություն և 4—5 սմ արամադիժ՝ հասա ծայրից: Գանձակում գտնված մի ավելի մեծ դանաձողի վրա (երկարությունը 50 սմ) կպած մնացել են սպիտակախեցի ամանի մնացորդներ, փորուղազույն և կանաչ ջնարակով²:

Հայաստանի և Վրաստանի կավադործական հնոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ձողերը ամրացվում էին հնոցի պատերին կամ բաժանմունքների (հարկերի) հատակին արված հատուկ փոսիկների մեջ և նրանց վրա հադցվում էին թրծվելիք ջնարակած խոշոր անոթները: Այդպիսով, հարմարանք էր ստեղծվում ոչ միայն հնոցում թրծելու համար խոշոր քանակությամբ ամանեղեն դարակու, այլև այն բանի համար, որպեսզի բերանով դեպի ցած դրվող անոթները հատակից մի փոքր բարձր լինեն, հնոցի տապը նրանց մեջ ուղղելու և, որ պլաստիկ է, ջնարակը հալվելիս դեռնին շիպչելու նպատակով:

Հայնարերան փոքր անոթները, թասերը, պնակները, նման այլ ամանեղենը հնոցում դասավորվում էր մեկը մյուսի վրա ուղղահայաց դիրքով, բայց որպեսզի նրանք իրար չկպչեն և լավ թրծվեն, մեկը մյուսից բա-

ժանվում էին եռոտանի հենակներով (տխտ. XXXVII ա): Դրանում գտնվել են բազմաթիվ նման հենակներ, այլև ջնարակած թասեր ու պնակներ, որոնց ներսից երևում է եռոտանու ռաքերի ծայրերի տեղերը: Դրանում գտնված եռոտանի հենակն իր շափերով համապատասխանում է նույն տեղում գտնված մի մեծ պնակի վրա մնացած հետքերին: Նման եռոտանիներ գտնվել են նաև Գառնիում, Գանձակում³:

Դվինի հարավային թաղում կողք-կողքի գտնված երկու հնոցները և նույն թաղում երրորդի առկայությունը ուշագրավ է: Դրանք պատահաբար պահպանված հնոցներ են նույն թաղում եղած բազմաթիվ հնոցներից: Նրանց իրար մոտ գտնվելու հանդամանքը թույլ է տալիս ելրակացնելու, որ ա) Դվինի հարավային թաղը եղել է քաղաքի հիմնական կավադործական թաղը, որտեղ ջնարակած խեցեղեն են արտադրել: Այդ թաղը գտնվել է քաղաքի այն մասում, որը ընկնում էր Արտաշատ տանող ճանապարհի վրա, իսկ Արտաշատից ոչ հեռու գտնվում են Յուվայի կավահանքերը: բ) Այդ հնոցները միայն մի վարպետի կամ մի արհեստանոցի շին պատկանել, որովհետև առանձին վարպետը միայն ամիսների ընթացքում կարող էր արտադրել այնքան խեցեղեն, որքան տալում էր հնոցը: Անկասկած այդ հնոցները օգտագործվել են ընկերովի, մի քանի վարպետների կամ արհեստանոցների ընդհանուր կարիքների համար: Դրա մասին են վկայում նաև հնոցների խոշոր չափերը: Բացի այդ, պարսպապատի մեջ հնոցներ կառուցելու փրավոմքը հազիվ թե արվեր մի վարպետի: Նման իրավունք կարող էին ձեռք բերել մի խումբ վարպետներ, ավելի շուտ նրանց կազմակերպությունը՝ համաբարությունը, այն էլ այդ համաբարությանը պատկանող թաղամասում: Ուրեմն քաղաքի պարսպին հենված մի քանի խոշոր հնոցների կողք կողքի գոյությունը կարող է նաև արհեստավորական

¹ В. В. Джанаридзе. Ук. соч., стр. 208. Յուվա գյուղի կավադործները պահպանելով հնամենի արհեստները, այժմ էլ կառուցում են ճիշտ նկարագրված ձի հնոցներ, ճապր ստորին հարկից վերև անցնում է հարկամիջյան հատակին թողնված բազմաթիվ և համաշափ դասավորված անցքերի միջոցով, իսկ վերին հարկը ունենում է դմբկի տեսք՝ բաց երդիկով, որտեղից դուրս է գալիս ձուլը և ավելորդ սապր:

² И. М. Джафарзаде. Ук. соч. стр. 72—73.

³ И. М. Джафарзаде, Ук. соч. стр. 98.

ընկերությունների կամ համաքարությունների գոյությունն անուղղակի փաստարկ համարվել:

9—13-րդ դարերում Հայաստանի քաղաքներում զարգացող կալվազործությունը հենվում էր երկար դարերի փորձի և հմտության վրա: Սակայն միջնադարյան բրուտանիւրը խոշոր չափով զարգացրին կավե ամանների և իրերի արտադրություն տեխնոլոգիան և ձեռնարկեցին խեցեղենի նոր տեսակների՝ ջնարակած ամանների, հախճապակու արտադրությունը: Դրա շնորհիվ Հայաստանի կալվազործությունը նշանավոր տեղ է զբաղում Մերձավոր Արևելքի կալվազործության պատմության մեջ և մի քանի դարով կանխում է, օրինակ, հախճապակու արտադրությունը Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում:

Միջնադարյան Հայաստանի քաղաքների կալվազործությունը կարելի է բաժանել չորս հիմնական ճյուղերի՝

1. Հասարակ կամ առանց ջնարակի խեցեղենի արտադրություն.

2. Ջնարակած խեցեղենի արտադրություն.

3. Հախճապակու արտադրություն.

4. Շինարարական խեցեղենի՝ աղյուսի, կղմինդրի ջրատար փողրակների կամ պուզգրի և շրապուսի արտադրություն: Այս հիմնական ճյուղերի քննության ընթացքում էլ ցույց կարվեն նրանց բազմաթիվ ենթաճյուղերը և վերջիններիս առանձնահատկություններն ու նշանակությունը՝ քաղաքի տնտեսության մեջ ու շուկայում:

2. ՀԱՍԱՐԱԿ ԿԱՄ ԱՆՋԱՐԱԿ ԽԵՅԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հասարակ ենք անվանում այն խեցեղենը, որը պատած չէ ջնարակով: Այս խեցեղենի շատ տեսակները, ինչպես կտեսնենք, բոլորովին էլ «հասարակ» չեն և աչքի են ընկնում իրենց նրբությունը և շքեղությունը:

Դվինի հասարակ խեցեղենը, ըստ կավի որակի և ամանների դործածության ձևի,

Կ. Ղաֆադարյանը բաժանել է երեք խմբի. առաջին խմբի մեջ նա դնում է կոպիտ ամանեղենը՝ դեղնաշիկագույն կավից պատրաստած, որը կրակի վրա չեն դրել, երկրորդ խմբի մեջ դասում է մոխրագույն կամ քիչ կարմրավուն խեցի ունեցող ամանեղենը՝ որը դրվել է կրակի վրա. երրորդ խմբի մեջ՝ դեղնաշիկագույն կավից, նրբին դավեր և սավորիկներ ջրի համար: Իհարկե, նման բաժանումը շատ ընդհանուր է և չի սպառում Դվինի, ինչպես և Անիի հասարակ խեցեղենի տեսակները, ինչպես կավի մշակման, նույնպես և ամանեղենի արտադրության ու դործադրության տեսակետից: Միջնադարյան խեցեղենը շատ հարուստ է ու բազմապիսի:

Պեղումների ժամանակ ամենից ավելի հանդիպում են հասարակ կավե կճուճներ: Կճուճ մենք անվանում ենք այն խորը, լայնավոր, հարթ կամ ավելի հաճախ կոնուսձև հատակով ու լայն բերանով անոթները, որոնք օգտագործվել են կրակի վրա դնելու, ճաշ եփելու, ջուր, կաթ տաքացնելու և նման այլ նպատակներով: Բնական է, որ կճուճները կամ նրանց խեցիները պեղումների ժամանակ գտնվում են ծխից և թափված ճաշի այրուցքից սևացած վիճակում: Կճուճներին հաճախ տալիս են նաև պուտուկ անոցներ, որը հանդիպում է Վարդան Այրեկցու մի առակում:

Կճուճները սովորաբար լինում են երկկանթանի, որ հարմար է տաք հեղուկով լի ամանը բռնելու, կամ թոնրի տակը իջեցնելու ու հանելու համար: Հանդիպում են և կճուճներ, որոնք ունեն մի կանթ կամ անկանթ են, դրանք առավելապես օժանդակ դեր էին կատարում՝ դրվում էին թոնրի կամ օջախի վրա հիմնական ամանների կողքին, ինչպես և ծառայում էին տանտիրուհու ձեռքին ամենօրյա փորձածությունների որոշ նյութեր

1 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 207:

2 Ժողովածույր առակաց Վարդանայ, հ. Բ, էջ 208:

ու միերքներ ժամանակավորապես պահելու համար:

Անիի, Դվինի և Գառնիի պեղումների համանակ գտնված հասարակ անների և անզարդ ամանների թիվը մեծ է: Գտնվել են սկսած ջուր խմելու փարչերից, մինչև կիսակարասներ և խոշոր կարասներ, որոնք դարձավել են ամեն տեսակ պաշարների՝ չոր ու հեղուկ նյութեր պահպանելու համար: Կիսակարասները ունենում էին 80—150 լիտր տարողություն:

Հեղուկ և չոր նյութեր պահելու ամենախոշոր ամանները կարասներն էին, որոնք ունենում էին 300-ից մինչև 1500 լիտր տարողություն: Կարասները հիմնականում ծառայում էին դինու խմորման և պահելու նպատակին, սակայն հնում սովորություն կար կարասներում պահել նաև հացահատիկ:

Ամենադործածական և տարածված կավե ամաններից էր կուժը, որը ծառայում էր ջուր փոխադրելու, աղբյուրից, առվից ջուր բերելու, հնձվորների և առհասարակ հանդավորներին ջուր տանելու և տանը ջուր պահելու նպատակներին:

Մասսայական գործադրություն ունեին սեղանի կավե ամանեղենը՝ պնակները, թասերը, ափսեները, մեծ քրեղանները (տխտ. XXXVII բ) կանխավոր բաժակաձև փոքր փարչերը, աղաթասերը և այլն, որոնք Դվինի և Անիի պեղումների ժամանակ ամենից ավելի հաճախ և համեմատաբար լավ վիճակում գտնվող կավե ամաններն էին:

Գյուղական բնակչությունը համարյա բացառապես գործածում էր նման հասարակ ամանեղեն՝ պատրաստված սեփական արտադրությամբ, իսկ քաղաքում սեղանի հասարակ կավե ամանեղեն գործածում էին աղքատ խավերը. միջին կարողության բնակիչները գործածում էին առավելապես ջնարակած ամանեղեն, իսկ իշխաններն ու մեծատունները՝ առավելապես հախճապակե և մետաղե ամաններ:

Կավից պատրաստում էին նաև լվացքի

մեծ տաշտեր, կովկիթներ, պանիր մակարգելու, կաթը պահելու փոքր տաշտեր, որոնց բեկորները նույնպես գտնված են Անիում, Դվինում և Գառնիում:

Հայաստանում գերազանցապես կավից էին պատրաստում մածուկից կաքաղ հարելու խնոցիներ կամ ձձումներ¹: Կավե ձձումը այնքան սովորական բան էր, որ Նիրսես Շնորհալին հատուկ հանելուկ է նվիրել նրան.

«Շինեցին զնա ի հողէ,
Յօրինեցին ի կրակէ,
Հառին ի կուռըն փայտեղէն
Նւ խոցեցին ի յաջ կողէն,
Նւ շատք արբին յուր արենէն»²:

Նման ձձում գտնվել է Կարմիր-բլուզի միջնադարյան շերտում (տխտ. XXXVII գ):

Կավից պատրաստվում էին բազմազան անոթներ զուտ արտադրական կիրառություն համար՝ արհեստավորների տաշտեր (օր. կաշեգործի, կոշիկագործի տաշտեր), հալոցներ, մետաղներ հալելու համար, փոքր հալոց-կթխաներ՝ փոքր քանակությամբ մետաղներ հալելու համար: Սրանք ընտրվում էին հրակայուն կավից և թրծում էին մեծ ջերմության տակ: Ալքիմիական ձևապատկերում խոսվում է կավից պատրաստվող հատուկ անոթների մասին, որոնք երբեմն դրվում էին մեկը մյուսի վրա հեղուկ նյութեր թորելու կամ ներքևի՝ կրակի վրա դրվող անոթից վերևի անոթի մեջ ջերմ գոլորշիները բարձրացնելու և այնտեղ ապակե անոթների մեջ լցրած նյութերը կրկար ժամանակ տաքացնելու համար: Վերջին կարգի անոթների միջոցով կատարվող գործողությունը կոչվում էր բաղաճիխ դնել: Վերևի ամանի համեմատաբար նեղ հատակը ունենում էր անցքեր և

¹ Միայն լեռնային անառոտ շրջաններում, ամառը կթու անասունները սար տանող բնակիչներն էին փայտե խնոցիներ գործածում:

² Մատենադարանի ձևապատկեր № 7703, էջ 104ա—104բ:

մտնում էր ներքևի լայնաբերան ամանի շուրթերի մեջ: Կավից պատրաստվում էին ամեն տեսակի անոթների, կարասների և թոնրի խուփեր:

Հետաքրքրական է, որ կավից պատրաստել են նաև բրուտի դուրդի սկավառակներ: Երկու այդպիսի սկավառակ, ինչպես նշվեց, գտնված է Դվինի պեղումների ժամանակ: Դրանք վերևում լայն և հարթ 20 սմ սրամագիծ ունեցող սկավառակներ են, որոնք դեպի նեղրև 12 սմ երկարող առանցքակալ ունեն. սրա ներքևից լինում էր այն անցքը, որի մեջ հաղնում էր առանցքը, իսկ սա միացված էր լինում ներքևի թափանիվի հետ: Այս սկավառակները ծառայել են որպես բրուտի դուրդի սեղան և բնականաբար պետք է թրծած լինեին¹:

Անիում, մշտավանդ Դվինում հաճախ են կավե ճրագների գյուտերը: Դրանք տաքեր ձևի են լինում. ամենահասարակ և առավել տարածված ձևը սովորական թասածև ճրագըն է, շուրթի մի կողմը նավի պես երկարացրած՝ պատրուչի համար: Քիչ չեն հանդիպում և փոքրիկ թեյամանի տեսք ունեցող մի կանթավոր և ծորակավոր ճրագներ, որոնց պատրուչի անցքը լինում է ծորակի վերևից: Այս ճրագները սովորաբար ունենում են հարթ հատակ, առանց ստրի, սակայն առանձին դեպքերում ոտքը բավականաչափ բարձր է լինում և գեղեցիկ ձևավորված: Կան այնպիսի ճրագներ, որոնք ներքևից դանաձև ոտք ունեն, որը անց էր կացվում պատին ամրացված ճրագկալի վրա սրած անցքի մեջ, որով նա ապահովված էր լինում ճրագկալի կամ վերջինիս թաթի վրայից սահել, ընկնելու վտանգից:

Քացի սովորական ճրագներից, կավից պատրաստում էին առատաաղից կախելու կամ սենյակում սրեկ բարձր տեղ դնելու հարմարեցված ջահեր, որոնք ունենում էին բազմաթիվ թասեր՝ ձեթ լցնելու և վառելու

համար: Այսպիսի կավե ջահեր գործածվում էին հավանաբար քաղաքի առևտրա-արհեստավորական բնակչության քիչ թե շատ կարող խավի տներում՝ հանդիսավոր առիթներով: Անիում գտնված է նման մի ջահ, որը սակայն թերի է: Այնուամենայնիվ երևում է, որ ջահն ունեցել է թասերի վերին և ներքին շարքեր: Պահպանված է հավանաբար ջահի մի քառորդ մասը, որի վրա վերևի շարքում մնում է երեք, ներքևի շարքում՝ չորս թաս, իսկ ամբողջ ջահի վրա կարող էր լինել ինը թաս՝ վերին շարքում, տասերկու թաս՝ ներքևի շարքում, ընդամենը քսանմեկ լուսատու կետ:

Վերջապես նշենք, որ հասարակ կավից պատրաստում էին թոնիրներ: Անիում, Դվինում և Գառնիում պեղումների ժամանակ հաճախ մի ոչ մեծ սենյակում բացվում է երկուսից չորս թոնիր, մի հանգամանք, որը չէր կարող չգրավել պեղող հնագետների ուշադրությունը: Թոնիրների շատությունը բնորոշ է 13—14-րդ դարերում, ինչպես նաև հետագայի համար: Գառնիի պեղումները պարզեցին, որ այստեղ թոնիրների մի մասը բոլորովին էլ օջախ-թոնիր չէ, այլ թոնրածև ամբար՝ հացահատիկի, մասնավորապես ալյուր պահելու համար, մի սովորություն, որը պահպանվել է Գառնիից երեք կիլոմետր հեռավորության վրա՝ ձորի հանդիպակաց ափին գտնվող Սարալանջ գյուղում: Պետք է ասել ընդհանրապես, ազգագրական նյութերը, շնորհիվ գյուղերում կավե ամանեղենի մինչև օրս շարունակվող լայն գործածության, թույլ են տալիս լրիվ կերպով պարզելու Անիի և Գառնիի պեղումների ժամանակ առատորեն հայտնաբերվող խեցեղենի այս կամ այն նպատակով կիրառությունը, հետևաբար և նրանց դերն ու նշանակությունը բնակչության տնտեսության և կենցաղի մեջ: Պարզ, անզարդ խեցեղենը, ինչպես տեսնում ենք, մասսայական գործածություն ունի: Իզուր չէ, որ Ներսես Շնորհալին տանձի մասին իր հանելուկում

¹ Կ. Ղ ա ֆ ա գ ա ռ յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 233:

բրուտի արհեստը համարում է «խիստ պիտանի».

«Բըրուտ մի կայր խիստ պիտանի,
Զկուժըն զուզեաց թուխտ ու նուլի,
Խառնեաց ի նա դեղ հիւանդի,
Խըճեբն ու մեղր ի մէկ տեղի»¹:

Կավագործութեան պատկերը ավելի լրիվ բացահայտելու, նրա մեջ կիրառվող տեխնիկական հղանակները պարզելու տեսակետից խոշոր նշանակություն ունի նաև անոթների և իրերի պատրաստման ու զարդարման տեխնիկական առանձնահատկությունների հաշվառումը, մանավանդ տարբեր կիրառություն ունեցող անոթները տարբեր ձևերով էին պատրաստվում և զարդարվում:

Սովորական կավից անգարդ և աննիլ խեցեղեն: Այն խեցեղենը, որը պատրաստվում էր սովորական կավից, առանց զարդերի ու շէր էլ ներկվում, ամենատարածվածն էր հասարակ խեցեղենի մեջ: Այս ամանները, եթե մեկը մյուսից տարբերվում են գույնով, խեցու կարծրությունը կամ փխրունությամբ, սպա դա հետևանք է կավի ընտրության, մշակման և թրծման: Ըստ այդմ հանդիպում են կարմիր, վարդագույն, բաց դեղնավուն կամ կարմրավուն, ավելի բաց գույնի, նաև մոխրավուն խեցիներ: Երբեմն նույն ամանի՝ բարակ կրակի ազդեցությանը շնթարկված կողը լինում է կարմրած, իսկ մյուս մասերը բաց-խավրած գույնի: Վատ թրծված ամանների խեցու միջուկը մուգ մոխրավուն և փուխր է լինում:

Անգորով պատած հասարակ խեցեղեն: Դվինում և Անիում պեղումներով հայտնաբերված խեցեղենի շատ հարուստ հավաքածուների մեջ համեմատաբար սակավ թվով կան և այնպիսիները, որոնք պատած են անգորով: Իրուտը անոթները պատրաստելուց հետո նրանց մակերեսին քսում էր մի այլ, սովորաբար բաց գույնի նուրբ

մշակված և ջրի մեջ լուծված կավի շփոթ: Այս եղանակով պատրաստված անոթը շտրացնելուց հետո թրծվում էր և ունենում էր դուրեկան, բաց-խավրած (МАТОВЫЙ) ֆոն: Անգորով պատած են սովորաբար փոքր շափերի նուրբ խեցի ունեցող անոթները, բայց պատահում են նաև անգորով ծածկված կժերի, նույնիսկ կարասների բեկորներ:

Կան և այնպիսի անոթներ, որոնք մշակված են ներկի և անգորի դուրակցությամբ: Դվինում գտնված է մի կանթանի, նեղ վիղ ունեցող անոթ (№ 1906/230), օրի նուրբ խեցին շեղակի շերտերով մեջընդմեջ ներկված է բաց գույնի անգորով և դուրեկան կազմիր ներկով, որը փայլեցրած է: Կարմիր և բաց գույնի այս շերտերը վերից և վարից առնված են զուգահեռ գծերով կազմված ժայպեկանաձև գոտիների մեջ: Անոթի ոտքը հռանկյունիների նման գծազարդեր ունի, իսկ հռանկյունիների կենտրոնում նույնպես հռանկյունի թափանցիկ մեկական անցք է արված: Սա մի շքեղ անոթ է, որը կարող էր զարդարել ամեն մի բնակարան:

Երբախեցի անոթներ: Դվինում գտնվել են բարակ և նուրբ խեցիով ամաններ և դրանց բեկորները՝ պատրաստված հատուկ տեխնիկայով ստացվող մանրահատիկ կավից: Իսկ առավել մանրահատիկ կավերից պատրաստված ամանները փոքր են լինում, դրանք փարչեր են, թասեր, մինյատյուր, գավեթ, պուլիկներ, ամենախոշորը 2—3 լիտր տարողությամբ սափորիկներ: Սրանք հաճախ պատած են լինում անգորով, կամ ներկված գունավոր հողի շերտով, սպա փայլեցված:

Դվինի միջնաբերդում նման խեցեղենի շատ օրինակներ են գտնվել: Դրանցից մի քանիսը ամբողջական են կամ վերականգնվում են ամբողջով: Այս անոթները լրացուցիչ կերպով ներկված և հղկված լինելու շնորհիվ շատ շքեղ են երևում¹: Դվինի

¹ Ն եր ս ս Շ ն ո Ր հ ա լ ի, Բանք շափաւ, էջ 583:

¹ Կ. Ղ ա ֆ ա դ ա Ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 186—189 (նկ. 162—164):

վերջին երկու-երեք տարվա պեղումների շնորհիվ այս տիպի ամանների թիվը մեծացել է (տխտ. XXXVIII):

Ներկված և հղկված (փայլեցված) խեցեղեն: Հասարակ խեցեղենի մեջ Անիում, մանալանդ Դվինում, հաճախ լինում են այնպիսիները, որոնք թրծելուց առաջ ներկված են հողե ներկերով և հղկված-փայլեցված՝ թրծելուց հետո: Այդպիսի հղկված մեծ թասեր գտնվել են նաև Անբերդի և Գառնիի պեղումների ժամանակ: Ներկը մեծ մասամբ կարմրավուն է, կան նաև բաց և մուգ շագանակապունջ և դեղնավուն երանգները: Մեծ թվով փայլեցրած ամաններ գտնվել են Դվինում: Ներկած և թրծելուց հետո փայլեցրած մի պոպիկի դոտու վրա թաց ժամանակ մի որևէ իրով լախ շեղ գծեր են արված (№ 1906/158): Վերից վար արագորեն ճընշելու հետևանքով քերված կավի մի մասը կուտակվել է շեղ գծերի ցածի մասում և


անփույթ չէր լինի: Այս կարգին պատկանող անոթներն ոճնկում են բավականաչափ կարծր խեցի, պատրաստված լավ մշակված կավից: Հղկումը կատարվում էր կոկիչ բարի միջոցով (նկ. 31): Երբեմն այս անոթներին, առավելապես նրանց պսակներին տրվում էր այս կամ այն կենդանու կամ նրա գլխի ձևը: Կ. Ղաֆաղարյանը նշում է, որ Դվինում գտնվել է նույնիսկ մարդու մարմնի ձև ունեցող մի հասարակ անոթ¹:

Գծազիր, փորագիր, ներկված ու վերադիր զարդերով խեցեղեն: Անիում, Դվինում և Գառնիում պեղումների ժամանակ հայտնաբերված խեցեղենի մեջ զգալի տեղ են դրավում թաց կավի վրա դժագրելու, փորագրելու, վերագիր զարդեր անելու և անոթի պատերը ներճկելու եղանակով զարդարված իրերն ու առարկաները: Սովորաբար գծագրին արվում էր սրածայր իրով, դեռևս թաց կավի վրա, (տխտ. XXXIX ա), հազվադեպ պատահում են և այնպիսի անոթներ, որոնք գծագրված են թրծելուց հետո: Զրի կժերի և այլ անոթների վրա լինում են նաև սանրի ատամների օգնությամբ գծագրված ալիքավոր գոտիներ: Ամանների գոտիները կամ պսակները հաճախ զարդարվում էին խորաքանդակ շեղ գծերով: Երբեմն էլ անոթների վրի վրա կամ պսակի եզրին փորագրված են լինում խորը ընկած եռանկյունաձև կամ սեպաձև պատկերների շարքեր:

Դվինի և Գառնիի խեցեղենի թվում կան այնպիսիները, որոնք գոտևորված են անոթի փորի ուռուցիկ մասում՝ դրսից ներս սեղմելով ստացված ներճկված զարդերով (տխտ. XXXIX բ): Այս տիպի խեցեղենը Գառնիում հանդիպում է 9—10-րդ դարերի շերտում (նկ. 32):

Սովորական է հղել նաև վերագիր զարդը, կարասների և այլ անոթների վրա ուռուցիկ գոտիներ, գնդիկներ ու կոճակներ, ինչ-


¹ Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 186:



Նկ. 31. Բրուտի բարե կոկիչ, (Գառնի, № 1905)
180, ՊՊԹ:

այդպես էլ թրծել են այս պոպիկը: Դա նշան է, թե նման անոթները նախատեսված էին շուկայի համար և վաճառվում էին էժան գնով, հակառակ դեպքում մշակումը այդպիսի շտապողական ձևով կատարված և

պես և երկրաչափական ու կենդանական պատկերներ հաճախ են հանդիպում (նկ. 33), (տխտ. XLI ա): Եթե վերագիր գնդիկներն ու կոճակները բնորոշ են Դվինի Ց—Չ-րդ դարերի խեցեղենի համար, ապա վերագիր կենդանական պատկերները ավելի հանդիպում են Անիի, ժամանակով 10—11-րդ դարերին պատկանող, կաթասների վրա: Ուտուցիկ գնդերով կարասները շատ ավելի երկարատև գործածություն են ունեցել:



Նկ. 32. Սափորի բեկոր ներձկված զարդով, (Գառնի, № 1966) 119, ՊՊԹ:

Դրոշմազարդ խեցեղեն: Անիի, մանավանդ Դվինի և Գառնիի պեղումների ժամանակ գտնվել են դրոշմազարդ խեցեղենի բազմաթիվ նմուշներ, դրոշմված առավելապես բոլորակ կնիքների, մասամբ և զլանաձև կնիքների միջոցով: Այդպիսի վարդեր հանդիպում են բազմաթիվ ամանների խուփերի և կարասների վրա: Բոլորակ կամ շրջանաձև կնիքով դրոշմը դնում էին սեղմելու եղանակով, իսկ զլանաձև կնիքով դրոշմում էին կնիքը թաց կավի վրա գլորելու միջոցով:

Դրոշմազարդ անոթները սպիտակավուն բաց գույն ունեն, երբեմն էլ լինում են բաց դեղնավուն, պատահում են կարմրա-

վուն ներկված դրոշմազարդ անոթներ: Բացի կարմիր փայլեցրած դրոշմազարդ կաթասներից, մնացած դրոշմազարդ անոթները փոքր չափեր ունեն, մեծ մասամբ սլուլիկներ, փարջեր և գավեր են, կան և զգալի թվով դրոշմազարդ «սնդկամաններ» և խուփեր: Սրանց վրա դրոշմը մանր երկրաչափական զարդն է, որը զրված է լինում անոթի մակերեսի վրա կամ խիտ կերպով բռնում է այդ մակերեսի զգալի մասը: Դրոշմազարդ խեցեղեն՝ զանազան երկրաչափական կենդանական պատկերներով հայտնաբերվել է նաև հին Գանձակում²:

Բացի կլոր կամ զլանաձև դրոշմներից, գործադրվել են նաև մետաղե կաղապարաձև դրոշմներ, որոնք ազուցվում էին նոր պատրաստված և դեռևս թաց անոթի վրա և ճնշելով անոթի վրա արտատպում էին կաղապար-դրոշմի վրա եղած օրնամենուր, մի այդպիսի լայնաբերան զավ գտնվել է Դվինում 1946 թ.³ (տխտ. XLI ա), իսկ ճիշտ դրա նմանը գտնվել է Միջագետքում և թվագրվում է 13-րդ դարով⁴:

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասներ: Հաճախ հասարակ խեցեղեն անոթները վարդարում էին զանազան եղանակներով՝ կամ ներկում էին և փայլեցնում հրդեհելու միջոցով: Երբեմն էլ դրոշմված, ներկված և փայլեցված են լինում միևնույն ամանները:

Այդ կարգի ամաններից աչքի են ընկնում Անիում, Դվինում և Գառնիում հայտնաբերված գոտեզարդ կարմրավուն փայլեցրած

1 Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, Դվին բազարը և նրա պեղումները, էջ 198:

2 И. М. Джафарзاده, Историко-археологический очерк старой Ганджи, Баку, 1949, стр. 69—71.

3 Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, Դվին բազարը և նրա պեղումները, 192 էջի կենտրոնի նկարը:

4 Ernst Kühnel, Islamische Kleinkunst, Berlin 1925, S. 82 նաև A Survey of Persian Art vol V pl. 555. Միջագետքը և Ասորիքը կաղապարով զարդարված խեցեղենի վաղ օրինակները ևս տալիս են. տե՛ս նույն տեղում:

կարասները, որոնցից գտնվել են բազմաթիվ օրինակներ և շատ բեկորներ: Այս կարասները կարմիր գույնով ներկելուց, լրծելուց հետո փայլեցված են հղկելու-կոկելու միջոցով. փորի ամենաուռուցիկ մասում կամ դրանից քիչ վերև ունենում են ամանի շուրջը պատվող երկու ուռուցիկ զուգահեռ դծերի մեջ առնված 2—5 սմ լայնությամբ դասի, որը վարդարված է լինում կենդանիների, մանավանդ այծերի, գաղանների, թռչունների, մարդկանց և այլ պատկերներով: Կարասների բարձրությունը 0,50—0,70 սմ մեջ է տատանվում, փորի լայն մասի արամագիծը՝ 0,40—0,50 սմ միջև, գոտուց դեպի ներքև կարասը ավելի նեղանում է: Գոտեղարդ կարասները լինում են երկու տիպի՝ անկանթ, ավելի երկարով (ամենից բարձրները սրանք են), նեղ բերանով: Սրանք կիսով չափ թաղվում էին գետնի մեջ և նրանց մեջ լցվում էր որևէ բան՝ պահելու համար: Երկրորդ տիպին են պատկանում կանթավոր, ցածրագիր, լայնափոր ու լայնաբերան կարասները, որոնք ունենում են հարթ հատակ և հարմար են սեղանի վրա դնելու համար¹:

Այս երկրորդ տիպի կարասների շուրթերը մյուսներից ավելի հաստ են, դեպի դուրս լայնացող, պսակի ստորին մասում հանդիպում են ուղեֆատամնավոր կամ սեպաձև փորաքանդակ զարդեր, Ձևավորված են, երբեմն զարդարված նաև այս անոթների կանթերը, որոնց թիվը 2—6-ի է հասնում:

Կարմրավուն փայլեցրած կարասների գոտիները զարդարել են երեք եղանակով, առաջին՝ թաց կավի վրա արված գծազարդով. երկրորդ՝ գաղանների ուռուցիկ վերագիր պատկերներով: Այս երկու եղանակները բնորոշ են Անիի կարասների համար, իսկ Դվինում և Գառնիում համարյա չեն հանդիպում: Երրորդ եղանակն է՝ կարասները զրոշմելու միջոցով զարդարելը, զրոշմներն էլ լինում են փոքր ինչ ուղեֆ և բոլորովին հարթ մակերեսով, գլանաձև կամ շրջանաձև: Կարաս-

ների այս տիպը, որ բնորոշ է Դվինի համար, գտնվել է նաև Գառնիում: Դվինի կարասներից շատերի գոտուց դեպի վեր երեք-չորս ժապավենաձև զարդեր ձգված են լինում դեպի շուրթը, անցնելով կանթերի միջև զրանրվող մակերեսով, երբեմն էլ կանթերի արանքում գոտուց վեր դեպի շուրթը ձգվող ժապավենի փոխարեն լինում է երկրաչափական պատկեր՝ բույս անկյունով իրար կպած երկու եռանկյունի, որոնց մակերեսի վրա կավի թաց վիճակում սուր ծայր ունեցող իրով փորվածքներ, խորաքանդակ կարճ դծիկներ են արված:

Դվինի մի շորս կանթանի կարասի գոտու (№ 1847/180) վրա զրոշմված են այծերի հարթաքանդակ պատկերներ: Վերջիններիս միջև կա կենաց ծառ, սակայն այծերը դեպի ծառը չեն դարձած, այլ գլուխներով կանգնած են դեպի հակադիր կողմը: Իրար դեմ են գալիս զրոշմի գլանի փովածքի ծայրերի այծերը, որոնք իրարից բաժանված են ուղղահայաց սանդիսաձև զարդերով: Այծերի ճիշտ նույն տիպի պատկերներով զրոշմված գոտու բեկորներ գտնվել են Գառնիում¹:

Դվինում գտնված կարմիր փայլեցրած զրոշմազարդ կարասները հրատարակել է Կ. Ղաֆաղարյանը²: Դվինի վերջին տարիների պեղումների շնորհիվ նման կարասների թիվը մեծացել է: Պատահում են այնպիսի կարասներ, որոնց զրոշմազարդ գոտին ծածկված է բաց գույնի կավի լուծույթով՝ անգոյրով: Չներկված գոտիները ավելի բնորոշ են Դվինին, իսկ Անիում հաճախ կարասի գոտին էլ ներկված է լինում նույն կարմիր գույնով:

Կարասների գոտիների վրա զարդերը արված են զրոշմների միջոցով, որոնք ունեցել են գերազանցապես գլանի ձև, 2—5 սմ եր-


¹ В. Аракелян, Гарни I, Результаты работ археологической экспедиции Института истории АН АрмССР, 1949—1950, стр. 74—75.

² Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 186—187.

¹ Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 188.

կարուձյամբ և 10—20 սմ շրջագծով, ու պարզ երևում է նրանցով կատարված դրոշմների փոփոխությունը (տխտ. XLI բ, գ):

Կան նաև շրջանաձև կամ բոլորակ կնիքներով դրոշմված կարասներ (տխտ. XLII): Անիում գտնված մի կարասի վրա ունի կերպով դրոշմված է հեծյալ, հետևից հետոսն, որի բարձրացրած ձևերում ինչ որ



Նկ. 33. Կարասի բեկոր վերադիր զարդով, Գառնի, ՊՊԹ

դործիք կա, հեծյալի և սրա միջև մի շրջանակ կամ անիվ է երևում, բացի այդ, նույն կարասի վրա դրոշմված են երեք զույգ առյուծ, որոնք զույգ զույգ կանգնած են դեմ առ դեմ, նաև արագիլներ ու շներ¹: Անիում գտնվել են նաև այլ կարասի բեկորներ՝ մարդկանց, դրանց թվում և աղտոթղի ատարով մարդու, եկեղեցու, ծառերի, այծերի, թռչունների, արևի սկավառակի (կամ նույնը նշանավորող մարդկանց դեմքերի), եղնիկների, գայլերի և այլ պատկերներով, ինչպես և երկրաչափական զարդերով, որոնք երբեմն կատարված են լինում բավականաչափ բար-

ձրք արվեստով և զուրկ չեն դինամիկայից¹: 1910 թ. տեղումների ժամանակ Անիում գտնվել է կարասների վրա դրոշմ անելու մի գլանաձև կնիք:

Դվինի կարմրավուն կարասների գոտիների վրա արված դրոշմներից են պարող մարդկանց (թերևս ծիսական պար է), կենդանիների, գաղանների, թռչունների պատկերներ և երկրաչափական օրնամենտներ: Գառնիում հայտնաբերված կարասների բեկորների վրա նույնպես հանդիպում են եղնիկներ, գայլեր, ձիեր, այծեր, դրանց թվում այծերը իրենց սլերով, սիրամարդ, ծառեր, մարդկանց բոլորակ դեմքեր, երկրաչափական օրնամենտներ և բոլորաձև կնիքներով դրված դրոշմներ (տխտ. XLIII):

Բացի կարասների գոտիներից, նրանցից գեպի շուրթը ձգվող ժապավեններից ու կանթներից, դրոշմներ դրված են լինում նաև դառուց վերև այս ու այնտեղ, բայց ոչ թե գլանների, այլ բոլորակ կնիքների միջոցով: Դրանք առավելապես երկրաչափական զարդեր են՝ վարդյակներ, աստղեր և այլ պատկերներ: Անիում գտնված մի կարասի բեկորի վրա կտր կնիքով դրոշմը տպված է բոլորակ կավի վրա, որը փակցված է կարասին ունի մեղալիտնի ձևով (№ 100): Սրա վրա պատկերված է թևերը բարձրացրած արծիվ, որի կատարումը աչքի է ընկնում բարձր արվեստով և դինամիկայով: Նույն բեկորի վրա հանդիպում ենք հինգ շրջանակներով կազմվող խաչի (մի շրջանակը կենտրոնում, մյուս չորսը կազմում են թևերը), ինչպես և թաց կավի վրա փորագրված երկարաձիգ խաչի², նույն այդ բեկորի վրա կան և երկնագույն պաստալից սպուցված դեղիկներ, որոնք մետաղների ըն-

¹ Տե՛ս օրինակ, Գ. Чубинов, Декоративно-убранство античных карасов (опыт классификации) «Христианский Восток», т. V, вып. I, СПб., 1916, стр. 24—29.

² Այս արձանիչ բեկորը ցուցադրված է Պետական պատմական թանգարանի Անիին հատկացված սրահում:

¹ Н. Я. Марр, Ани, Ереван, стр. 201.

վելուզանկուու կամ ակնեղենով դարդարելու տեխնիկան են հիշեցնում:

Մեծ թվով կենաց ծառերի, պտղաբերող ճյուղերի, ծնող զույգերի (ծնող զույգ թուռններ, կենդանիներ, նաև մարդիկ) առկայությունը իրենց պտուղների, ձագերի և երեխաների հետ միասին թույլ են տալիս ենթադրելու, թե կարասների վրա հանդիպող մոտիվների զգալի մասը կապված է պտղաբերության, բերրիության և առատության վերաբերյալ ժողովրդական ըմբռնումների և պատկերացումների հետ¹:

Կարասների և այլ խեցեղենի վրա հանդիպող զարդերի և պատկերների բովանդակության հարցը ինքնուրույն հետաքրքրություն է ներկայացնում, սակայն դեռևս հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել: Գ. Զուբինաշվիլու վաղուց արտահայտած այն տեսակետը, թե այդ զարդերը ղեկորատիվ են և կապվում են մոտավորապես կուլտուրայի հետ², քննադատության չի դիմանում:

Անիի և Դվինի պեղումներով հայտնաբերված կարասների կամ նրանց բեկորների վրա հանդիպում են նույնպես դրոշմելուեղանակով արված հայերեն արձանագրություններ: Անիի մի կարասի գոտու վրա շուրջանակի կրկնված է հղել մի ինչ որ արձանագրություն, որից դտնված բեկորի (№ 57) վրա կարդացվում է Գրիգոր անունը, մյուս բեկորի (№ 21) վրա մի այլ բառի կամ անվան վերջին երեք տառերը (...ԱՆԴ): Դվինից ծագող մի կարասի պսակի շուրջը ռելեֆ գրելով կրկնված է Ստեփան անունը:

Կ. Ղաֆաղարյանի կարծիքով այս գոտեզարդ և փայլեցված լայնաբերան շքեղ կարասները ծառայել են որպես հանդիսավոր

¹ Այս մոտիվների բովանդակությունը բացահայտել է Ա. Մնացականյանը իր «Հայկական գարդարվեստ. հիմնական մոտիվների ծագումն ու զաղափարական բովանդակությունը», Նրևան, 1955 թ., աշխատության մեջ:

² Г. Чубинов, Декоративное убранство анийских карасов, стр. 29.

ձաշկերույթների և խնչույթների ժամանակ սեղանի վրա դրվող պինու ամաններ, որոնցից սեղանակիցները դինին վերցնում էին ու խմում իրենց թասերով:

Կարասների գոտիների վրա դրոշմելու պատկերից յուրաքանչյուրը մի մոտիվ կամ պատկեր է ներկայացնում, մի կարասի վրա ամբողջ գոտին զարդարում էին կամ միևնույն կնիք-գլանի կրկնվող դրոշմներով, կամ երկու և ավելի պատկերի մոտիվների կամ սյուժեների զուգակցությամբ, ինչպիսին էր Անիի վերևում նկարագրված կարասներից մեկի զարդը: Դրոշմազարդ սյուժեներից շատերը, հավանաբար, գալիս են հին օսմանակներից և սերտորեն կապվում են հայերեն ձեռագրերում և ճարտարապետական հուշարձանների վրա հանդիպող զարդամոտիվների հետ: Հետևաբար կարասների նշանակության հարցի լուծմանը կարող են խոշոր շափով նպաստել նրանց վրա հանդիպող զարդամոտիվներն ու սյուժեները: Նկատի ունենալով, որ այդ մոտիվների մեջ գերակշռում են ախպիսիները, որոնք կապվում են բուսական և կենդանական աշխարհի, նաև մարդկանց պտղաբերության ժողովրդական ըմբռնումների վերին սատիճանի ընդարձակ շրջանակների հետ, կարելի է ենթադրել, թե լայնաբերան գոտեզարդ կարասները հատկապես գործածվել են ծնող զույգերին իրար հետ կապող հարսանեկան հանդեսների կամ առհասարակ հանդիսավոր ձաշկերույթների ժամանակ իրրե պինու կարասներ, իսկ նեղ բերան կարասները կիսով չափ թաղվելով հողի մեջ և դանազան, մրթեքներով լցվելով պահվել են բնակարաններում՝ նշանավորելով օջախի շենությունը:

Կարմիր փայլեցրած գոտեզարդ կարասները տարածված են ևղել համարյա ամբողջ Անդրկովկասում և գտնվել են Դվինում, Անիում, Գառնիում, Դմանիսիում, հին Գանձապետում, Օրանկալայում և այլ վայրերում:

¹ Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 188:

Գծապարզ ու վերադիր զարդեր ունեն միայն Անիի և Գառնիի կարասները: Տարբեր վայրերի այս կարասները իրարից տարբերվում են նաև խեցիով: Դմանիսիի կավը իր կարմիր գույնով և հատիկավոր կառուցվածքով ավելի մոտ է Անիի կավին, Դվինի կավը բաց կարմիր է, իսկ Գանձակիձը, ինչպես և Գառնիինը՝ միջին տեղ են գրավում Դվինի, Անիի և Դմանիսիի կավերի նկատմամբ:

Գոտեպարզ կարասների ժամանակի հարցը գրականության մեջ արդեն քանիցս բարձրացված է: Դրոշմապարզ կարասներին նվիրված իբ հոդվածում Գ. Չուբինաշվիլին կարասներից ավելի հնագույնները համարում է վերադիր սելեֆի զարդեր ունեցողները և նրանց ժամանակը համարում է 13-րդ դարը, իսկ դրոշմապարզ գոտի ունեցող կարասները վերագրում է ուշ միջնադարին և դասում է, թե 13-րդ դարից հետո մեծ հրեանքից, իսկ նրանց զարդերը համարում է փոխառված՝ Արևելքից¹: Բ. Շելկովնիկովը առարկելով այդ տեսակետի դեմ, գտնում է, որ դրոշմապարզ կարասները պատկանում են 12-րդ դարի վերջերին և 13-րդ դարի սկզբներին²: Իսկ Կ. Ղաֆազարյանը գոտեպարզ կարասների ժամանակը համարում է 9—12-րդ դարերը³: Գոտեպարզ կարասների ժամանակը որոշելիս, իհարկե, պետք է հաշվի առնել այդ կարասների գտնվելու տեղն ու հանդամանքները, սրանց հետ միասին նույն շերտում գտնվող շատ այլ նյութերի ժամանակը, կարասների զարդերը, դժագիր, վերադիր զարդի և դրոշմի կիրառությունը խեցեղենի մյուս տեսակների վրա և զբանց ժամանակը (դրոշմապարզի մասսա-

յական կիրառությունը բնորոշ է 12—14-րդ դարերին) և այլ անուգամանքներ: Ըստ այսմ կարելի է կարասների ժամանակը, իհարկե, ուշ միջնադարը չհամարել, սակայն և շահամանափակել 9—12-րդ դարերով կամ 12—13-րդ դարերի սահմանադրությամբ: Այդ կարասները ավելի երկարատև կյանք են ունեցել և մինչև այժմ հայտնի եղածների ժամանակը բռնում է 10—13-րդ դարերը: Գ. Չուբինաշվիլին իրավացի է, որ Անիի կարասներից հնագույնները վերադիր սելեֆի զարդեր ունեցողները պետք է լինեն, սակայն իրավացի է նրանց ժամանակագրության հարցում, ինչպես և այն հարցում, երբ նրանց վրա հանդիպող զարգամոտիվները օտարամուտ է համարում: Դվինում դրոշմապարզ կարասների բեկորներ գտնվել են 11-րդ դարի շերտերում, սելջուկյան արշավանքներին նախադրող շրջանի համար բնորոշ իրերի և 11-րդ դարի բյուզանդական դրամների հետ հետևաբար սելեֆի զարդեր ունեցողները պետք է առաջացած լինեն 10—11-րդ դարերում:

Չվածե անոթներ: Անիում և Դվինում հայտնաբերվել են մեծ թվով (միայն Դվինում հարյուրից ավելի)¹ ձվածե անոթներ, որոնց երբեմն «սնդկաման» անունն են տալիս: Դրանք սֆերակոնաձև, համարյա ձվածե դեպի ներքև նեղացող և վերին աստիճանի նեղ անցքավոր, կարճ վզով, խիստ մասսիվ խեցի ունեցող անոթներ են, մինչև 25 սմ բարձրությամբ: Անիի այս տիպի անոթները խնամքով զարդարված են գծագիր կամ սելեֆի զարդերով (տխտ. XLIV) ինչպես նաև պատրաստի, բայց դեռ թաց անոթների մակերեսին ագուցվող կաղապարների ճնշումով արված նուրբ զարդերով (տխտ. XL ք): Երբեմն էլ զարդարումը կատարված է բոլորակ կնիքներով դրոշմելու եղանակով: Պատա-

1 Г. Чубинов, Декоративное убранство анийских карасов, стр. 29—33.

2 Б. А. Шелковников, Художественная керамика двинских раскопок («Տեղեկագիր» ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի № 4—5, 1940, էջ 181—182, տե՛ս նաև «Керамика и стекло из раскопок города Двина», стр. 26.

3 Կ. Ղաֆազարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 197:

1 Դվինի ձվածե անոթները ուսումնասիրել և հրատարակել է Հո. Զանփուդյանը: Տե՛ս Աշխատությունների Հայաստանի Պետական պատմական թանգարանի, հատ. III, էջ 147—167, նաև «Советская археология», 1958 № 1, стр. 201—213.

հում են օրինակներ, որոնց վրա գծադար-
պը, ռելեֆ վարդը և գրոշմը համադրված
են միմյանց: Դվինի «սնդկամանների» պար-
զերը զուսպ են և նրանց մեջ տիրապե-
տողը դրոշմազարդն է: Կան այնպիսիները,
որոնց վրա կավի թաց ժամանակ ապուցված
են հախճապակու նմանվող մասսայի փոք-
րիկ բեկորներ (ինկրուստացիա): Դրոշմա-
զարդ և հախճապակու բեկորներով ընդե-
լուցված (ինկրուստացված) ձվաձև անոթներ
և այլ խեցեղենի բեկորներ գտնվել են և հին
Գանձակում¹: Դվինի և Անիի մի քանի ձվա-
ձև անոթների զգալի մասը պատած է բաց
գույնի անգորով: Կան այնպիսիները, որոնց
վրա թրծելուց հետո մետաղե իրով գծված են
ինչ որ նշաններ, երբեմն հայերեն և տառի
ձևով: Ենթադրում են, թե դա կարող է տա-
րողություն կամ ամանում պահվող նյութի,
զուցն և նրա քանակի նշանը լինել²: Անիում
հայտնաբերված ձվաձև անոթների թվում
կան կանաչ շնարակով ծածկվածներ³:

Ձվաձև անոթների ձևից երևում է, որ
նրանք պատրաստված են դուրզի վրա: Նը-
րանց կավը տարբերվում է Անիում և Դվին-
ում ամենից ավելի դործածված կարմրա-
վուն կավից: Դվինի անոթների կավը մոխ-
րավուն-կանաչավուն է⁴, մասամբ դեղնա-

վուն, իսկ Անիինը ավելի մուգ մոխրագույն-
կանաչավուն: Ձվաձև անոթները թրծված են
մեծ ջերմության տակ: Անիում գտնված է
թրծելու ժամանակ առաջացած խոտան, նը-
րանց խեցին աչքի է ընկնում իր կարծրու-
թյամբ: Մերձավոր Արևելքի խեցեղենի ու-
սումնասիրող Բ. Շելկովնիկովը Անիի ա-
նոթների խեցին, ըստ կարծրության, բաժա-
նում է երեք խմբի, ըստ որի առաջին խմբին
պատկանում է Անիի ամենամեծ սնդկամա-
նի բեկորը, որի կարծրությունը զիջում է
Մոսսի կարծրության տախտակի 4—5-րդ
հանքաքարի սպաթի և ապատիտի կարծրու-
թյանը. երկրորդ խմբի խեցիների կարծրու-
թյունը զիջում է նույն տախտակի 6—7-րդ
հանքաքարերի՝ դաշտային սպաթի և կվարցի
կարծրությանը. երրորդ խմբի խեցիները
նույն տախտակի 7-րդ հանքաքարից՝ կվար-
ցից էլ կարծր են: Դվինի ձվաձև անոթների
մի մասի խեցին պակաս կարծր է, քան
Անիինը: Դվինի անոթները Անիի օրինակ-
ներից տարբերվում են նաև այն բանով, որ
ավելի պակաս չափով են դարգարված դա-
նազան ռելեֆ դարդերով⁵:

Անիում ձվաձև անոթները հայտնաբերվել
են զլխավոր փողոցի վրա, բյուզանդական
տիրապետության ժամանակաշրջանի (1045—
1064) կուլտուրական շերտից անմիջապես
ներքև, հեռաբար նրանք կարող էին ար-
տադրված լինել 11-րդ դարի կեսերից ոչ ուշ.
մի քանիսն էլ գտնվել են 12—13-րդ դա-
րերի հյուրանոցի մոտ: Դվինում ձվաձև ա-
նոթները գտնվել են գերազանցապես միջ-
նաբերդում, ինչպես 10—11-րդ դարերի,
նույնպես և 12—13-րդ դարերի շերտերում:
Համարյա նույն դարերով են թվագրվում
նաև Միջին Ասիայում գտնված նույնատիպ
անոթները: Ուրդենշում, օրինակ, նրանք

¹ И. М. Джафарзاده, Историко-археологический очерк старой Ганджи, стр. 69—71.

² Н. Я. Марр, Ани, Ереван, 1939, стр. 203.

³ И. Орбели, Каталог Аниийского музея древностей, стр. 122.

⁴ Դվինից 7 կմ հեռավորության վրա գտնվող Յուվա գյուղը շատ հայտնի է իր կավագործական արհեստա-
նոցներով: Յուվա մեր այցելության ժամանակ պար-
զեցիներ, որ այստեղի շատ բաց, փոքր ինչ վարդագույն
կավը, որը շատ կարծր խեցի է տալիս, ավելի բարկ
կրակի տակ և սովորականից ավելի երկար թրծելու
դեպքում՝ տալիս է Դվինի «սնդկամաններին» գույնու
և կարծրությամբ միանգամայն նման խեցի: Յուվայի
կավը, որը մշտապես թաց է, ունի մանրիկ հատիկներ
և առանց լրացուցիչ մշակման պատրաստ է օգտա-
գործման համար, չէր կարող հայտնի չլինել դվինցի-
ներին:

⁵ Б. А. Шелковников, Художественная керамическая промышленность средневековой Армении («Известия» Арм ФАН-а. 1942, № 3—4 стр. 15—16.

⁶ Կ. Ղաֆաղարյան, Դվին բազարը և նրա պեղումները, էջ 204:

գտնվել են քաղաքի հողապարսպի վրա և քաղաքի ներսում 12—13-րդ դդ. շերտում¹։

Երկարատև և մեծ վեճերի առարկա է հանդիսացել այն հարցը, թե ինչ նպատակի համար են օդտազործել այդ անոթները։ Ոմանք կարծում են, թե դրանք անոթներ են, որոնցով «Տունական կրակ» էր նետվում պաշարված բերդերի և քաղաքների վրա՝ այնտեղ հրդեհ առաջացնելու նպատակով և անվանում էին ձեռքի հրձիգ սուժր։ Մյուսները համարում էին ձիթաճրագ, անապատներում ճանապարհորդողների ջրի աման, շինքի քիվերի և այլ մասերի զարդ և այլն։ Այժմ ավելի ընդունված է այն տեսակետը, թե դրանք օդտազործվել են անուշահոտ յուղեր և սնդիկ պահելու, մանափանդ այդ նյութերը հեռու տեղեր փոխադրելու համար²։ Թերևս այդ անոթների մի մասը օդտազործվել է նաև ոսկերիչների կողմից օդտազործվող ամալգամներ պահելու համար։

Չի կարելի չնշել այն վրասուրը, որ ջարդված անոթների բեկորների ներսի կողմից նկատվում է, որ նրանք ինչ որ մետաղական մուգ գույն են ընդունել, որ կարող էր նրանց մեջ լցված սնդիկից առաջանալ, իսկ սնդիկը մեծ կիրառություն է ունեցել միջնադարյան մետաղագործության, հատկապես ոսկերչության մեջ, օդտազործվել է նաև այլ նպատակներով։ Չվաճե անոթների կարծր և մասսիվ խեցին ու բերանի շափաղանց նեղ անցքը հարմարություն են տալիս այդ շարժուն հեղուկ մետաղը պահելու համար։

Վերևում շարադրվածից կարելի է եզրակացնել, որ հասարակ կոշվող խեցեղենի արտադրությունը բազմահարուստ է, ոչ միայն ամանեղենի տեսակներով ու նրանց տիպերով, այլև նրանց արտադրության ձևե-

րով ու եղանակներով, զարդերի բազմազանությամբ։

Շատ կարևոր նորույթ էր խեցեղենը դրոշմելու տեխնիկան, որը Արթուր Պոպի իրավացի կարծիքով վերցված է մետաղագործությունից¹։

Ավերի կարևոր է այդ տեխնիկայի առաջացման ժամանակի և պատճառների հարցը։ Իրանական դրոշմազարդ խեցեղենի առաջին նմուշները, որոնք գտնվել են Խուզիստանում, Արթուր Պոպը լվազրում է 8—9-րդ դարերով²։ Նույն դարերով է նա լվազրում նաև կաղապարի օդնությունը՝ զարդարված խեցեղենի առաջին նմուշները, որոնք ծագում են Շոշից (Սուզա) և գերազանցապես Ասորիքից³։

Հայաստանում կաղապարի օդնությամբ զարդարված խեցեղենի առաջին օրինակները գտնվել են Անիում։ Դրանք սելեֆ զարդեր ունեցող ձվաձև անոթներ են (անդկամաններ) և էամանակով դրանք պատկանում են 10—11-րդ դարերին։ Ինչ վերաբերում է դրոշմազարդ խեցեղենին, ապա մեր կարծիքով Հայաստանում հայտնաբերված ամենավաղ նմուշները 11-րդ դարից այն կողմը չեն անցնում։

Դրոշմելը գյուրացիում էր խեցեղենի զարդարման գործը և կապված էր նրա մասսայական արտադրության հետ, իսկ վերջինը իր հերթին կապված էր միջնադարյան քաղաքի զարգացման և ապրանքային արտադրության աճի հետ, երբ խեցեղենը ևս ավելի լայն շափերով առ ու ծախքի առարկա է դառնում։ Անիի նյութերը ցույց են տալիս, որ կաղապարով զարդարելու տեխնիկան փոքր ինչ նախորդել է դրոշմելու տեխնիկային, իսկ վերջինս Իրանում ևս 9—10-րդ դարերից ավելի վաղ չէր կարող առաջանալ⁴։

¹ А. Ю. Якубовский. Развалины Ургенча «Известия» ГАИМК 1931, т. VI, вып. II, стр. 28.

² Հ. Ա. Ջանփոլադյան, նշվ. աշխ., էջ 159—165։

¹ Arthur Upham Pope, Ceramic Art in islamic times. A history. See A Survey of Persian Art., vol. II p. 1471—1472.

² Նույն տեղում։

³ Նույն տեղում, հատ. V, տախտակ 567։

⁴ Նույն տեղում, էջ 1471—1472։

3. ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՅՆԳՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի միջնադարյան բաղաձայնների կազմագործության մեջ բացառիկ նշանակություն է ունեցել ջնարակած խեցեղենի արտադրությունը: Քաղաքի կազմագործության ու նրա զարգացման սրտցեսի պատմությունն առնելիս, ուսումնասիրողը պարտավոր է ամենից ավելի հենվել ջնարակած խեցեղենի հայտնաբերված հարուստ նյութների վրա, Դրանք ցույց են տալիս որ տեխնոլոգիական առաջադիմությունը կազմագործության բնագավառում 9—10-րդ դարերում հանգեց բազմաթիվ մետաղական օբյեկտների օգնությամբ տարբեր գույնի ու կրանդի և բազմազան օրնամենաներով զարդարված բարձրարվեստ ամանեղենի, այլև սպիտակ կավից արվեստի առաջնակարգ գործեր ներկայացնող հախճապակու արտադրությանը:

Թեև կրք է սկսվել ջնարակած խեցեղենի արտադրությունը Հայաստանում դեռևս ըստույզ պարզված չէ: Այդ արվեստը հայտնի է եղել հին Եգիպտոսում, Աքեմենյան Պարսկաստանում, հելլենիստական աշխարհում, նաև առաջին դարերի Վրաստանում: Հայաստանում ևս ջնարակած խեցեղենի նմուշներ գտնվել են ուրարտական Թեյշեբախի բաղաձայնում (Կարմիր-բլուր), Գառնիի անտիկ շերտում և Սևանի ափին: Միջնադարյան ջնարակած խեցեղենի գյուտերը առայժմ 9-րդ դարից ավելի հեռավոր ժամանակները չեն անցնում¹: Անիի, Դվինի, Անրեբլի և

Գառնիի, ինչպես և Վրաստանի և Ադրբեջանի քաղաքների (Դմանխիսի, Թբիլիսիի, հին Գանձակի, Օրան-Կալայի) պեղումներով հայտնաբերված ջնարակած խեցեղենը վերին ստիլանի հարուստ է ու բազմապիսի:

Ջնարակած ամանեղենը ալքիմիական ձևազարդում կոչվում է ապիկած¹ (ապիկի=ապակի բառից), ժողովրդի մեջ ընդունված է կոչել նաև չինի աման, շիրա տված ամաններ, կանաչիկներ (կանաչ գույնից) և այլն: Այժմ հայագիտական գրականության մեջ գլաղուրած ամանեղենը կոչվում է ջնարակած:

Ջնարակը կամ գլաղուրը պատրաստվում էր հետևյալ կերպ. ապակու նմանող ավալը կամ հանքաքարը—գալխազը, հատուկ բովերում բարձր ջերմաստիճանի տակ բովում էին մինչև որ ընդունեն բոլորովին սպիտակ գույն, ապա սառեցնում էին սառը ջրով, որի հետևանքով հանքաքարը մանրանում էր կամ խիստ ճաքճքում: Շիկացրած և ջրով սառեցրած այս զանգվածը փխրուն էր լինում և հեշտությամբ կարելի էր աղալ կրկանքներով, մանրել սալի վրա, կամ ծեծել սանդղերում²: Աղացած զանգվածին խառնում էին ավյալ ջնարակի համար անհրաժեշտ բովիական նյութեր՝ մետաղական օբյեկտներ, ապա նորից շիկացնում մինչև որ հալվեր, նորից սառեցնում էին, կրկին մանրացնում, որքան կարելի է մանր և այս մանրիկ փոշին ջրով բաց էր արվում և ստացվում էր ջնարակի թանձր լուծույթ³: Ջնարակվելիք անոթը նախօրոք ծածկում էին սպիտակ անգո-

¹ Միջին Ասիայում ևս միջնադարյան ջնարակած խեցեղենի արտադրությունը սկսվում է 8—9-րդ դարերում և մասնաշաղկան բնույթ է ստանում 10-րդ դարում: Տե՛ս II. H. Вактурская, О раскопках 1948 г. на средневековом городе Шемаха-Кала Туркменской ССР. Археологические и этнографические работы Хорезмской экспедиции 1945—1948 гг. под редакцией С. П. Толстова, Т. А. Жданко, Москва, 1952, стр. 182—184, Также С. П. Толстов, По следам древнехорезмской цивилизации, Москва — Ленинград, 1948, стр. 236.

¹ Կ. Ղաֆաղարյան, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940, էջ 64, 72, 92 և այլն:

² Թբիլիսիում նման սանդղեր գտնվել են կավագործական արհեստանոցների մոտ կվարցի և դաշտաչին սպաթի հետ միասին, Տե՛ս В. В. Джапаридзе, Художественная глазурованная керамика Грузии XI—XIII вв. «Советская археология», XVII, 1953, стр. 208.

³ Ծ. К. Кверфельдт, Керамика Ближнего Востока, Ленинград, 1947, стр. 20—21

բով, թրծում, ապա ծածկում ջնարակով՝ ջնարակի մեջ ընկղմելու և հանելու միջոցով կամ վրձինով քսելով, այնուհետև շորացած ամանը կրկին թրծվում էր և ուժեղ կրակի ներգործությամբ ջնարակը հալվում էր, անոթը պատում ապակու պես սղորկ, միաժամանակ փայլուն շերտով:

Ջնարակը լինում էր անգույն և գունավորված, վերջինս էլ բաց խավրած, կանաչ, կապույտ, դեղին, շագանակագույն, նարնջագույն, վարդագույն, կարմիր—դինեգույն և բազմաթիվ այլ երանգավորումներով: Գույներն ստացվում էին թրծելիս, նայած թե ինչ մետաղական օքսիդ է գործածված տրվյալ ամանը ծածկող ջնարակի մեջ: Անիլի և Դվինի ջնարակած խեցեղենի վերին աստիճանի հարուստ գույներն ու երանգները ցույց են տալիս, որ բրուտներն օգտագործել են համարյա բոլոր ճնարավոր մետաղական օքսիդները և ստացել են ուղած գույնի ջնարակ: Գործադրվել է թափանցիկ և անթափանցիկ ջնարակը: Վերջինս ստացվում էր կապարի միջոցով և լինում էր սպիտակ, փոքր ինչ դեղնավուն կամ կանաչավուն:

Մերձավոր Արևելքի խեցեղենի ուսումնասիրող է. Կվերֆելդը իր «Керамика Ближнего Востока» աշխատության մեջ տալիս է մետաղական օքսիդների միջոցով ջնարակած ամանների գույների ստացման մի տախտակ, որը մեջ ենք բերում ամբողջությամբ:

«Մեկաթի օֆսիդը միավորվելով արճիճի կամ բորակաթթվի հետ տալիս է դեղնավուն-մանուշակագույն երանգ:

Մարգանեցի օֆսիդը արճիճի հետ տալիս է կմուգ-շագանակագույն-մանուշակագույն երանգ:

Մարգանեցի օֆսիդը միավորվելով բորակաթթվի հետ տալիս է մանուշակագույն երանգ:

Մարգանեցի օֆսիդը միավորվելով նատրիումի հետ տալիս է մանուշակագույն-կարմիր երանգ:

Մարգանեցի օֆսիդը կալիումի հետ տա-

լիս է մանուշակագույն-երկնագույն երանգ:

Մարգանեցի օֆսիդը միավորվելով երկաթի հետ տալիս է մուգ շագանակագույն վառ երանգ:

Կոբալտի օֆսիդը կալիումի հետ տալիս է վճիտ կապույտ գույն:

Կոբալտի օֆսիդը միանալով նատրիումի և արճիճի հետ տալիս է կապույտ-մանուշակագույն երանգ:

Կոբալտի օֆսիդը ցինկի և նեֆելինային սիենիտներից ստացված մեծ տեղատվություն ունեցող կավահողի հետ տալիս է կանաչավուն-երկնագույն երանգ:

Կոբալտի օֆսիդը միանալով կավահողային անթափանցիկ ջնարակի հետ տալիս է երկնագույն-կապույտ երանգ:

Պղնձի օֆսիդը միանալով արճիճի և բորակաթթվի հետ տալիս է անփայլ կանաչ գույն:

Պղնձի օֆսիդը միանալով կոբալտի հետ տալիս է երկնավուն կանաչ գույն:

Պղնձի օֆսիդը անագի հետ տալիս է փրուզագույն երանգ:

Պղնձի օֆսիդը նատրիումի հետ տալիս է բաց-երկնավուն կանաչ երանգ:

Պղնձի օֆսիդը նրա գույնը վերականգնող թրծումով (երբ հնոցում ջնարակը հալելու մոմենտին ամխածնի հոսանք էր մտցվում հնոցը) տալիս է կարմիր գույն:

Փրոմի օֆսիդը տալիս է խոտի, կամ կանաչ-դեղնավուն երանգ:

Փրոմի օֆսիդը անագի հետ տալիս է վարդագույն կարմիր երանգ:

Արծաթի օֆսիդը արճիճի հետ տալիս է դեղին և նարնջագույն երանգ:

Ուրանի օֆսիդը բորակաթթվի հետ տալիս է վառ դեղին երանգ:

Սսկին կամ իրիդումը տալիս են բաց վարդագույն երանգ¹:

Միջնադարյան հայկական քաղաքների ջնարակած խեցեղենի գույներից դատելով կարելի է տեսնել, թե թվարկված օքսիդները

¹ Թ. Կ. Кверфельдт, Керамика Ближнего Востока, էջ 23—24:

այստեղ գործադրվել են լայն շափերով, համարյա առանց բացառությունների:

Իզուր չէ, որ վարպետ արհեստավորներին, մասնավորապես բրուտների հնարագիտությունը դարձանք էր առաջացնում անգամ իր ժամանակի կրթված շրջաններում: 12-րդ դարի հեղինակ Սարգիս Շնորհալին դարձանքով գրում է. «Ահա և բրուտն զբեկեալ անօթս ստեղծանէ՝ վերստին նորոգելով և սըռով (գաղտնի հնարագիտությամբ)՝ հողն ոսկի երևեցուցանէ և արծաթ, և երկաթ, և պղինձ, և ևս ապակի...»¹: Այստեղ մենք պարզ ահնարկ ենք տեսնում տարբեր գույնի ջնարակների ստացման մասին:

Բացի հախճապակուց, մնացած խեցեղենը պատրաստվում էր այնպիսի կավից, որ թրծելիս աղյուսի կամ կարմիր գույն էր ընդունում: Շատ սակավ հանդիպում են նաև դեղին և մոխրագույն խեցի ունեցող անոթներ: Զնարակով պատած է լինում անոթը միայն ներսից կամ հակառակը՝ միայն դրսից և ավելի հաճախ, թե ներսից, թե դրսից: Ինչպես կտեսնենք ջնարակն էլ լինում էր թափանցիկ և ոչ թափանցիկ: Վերջինս սակավ է օգտագործվել, պատահում է նաև կիսաթափանցիկ ջնարակ:

Անգորթի վրա նկարագարված խեցեղեն: Որպեսզի ջնարակի գույները վառ երևային, անհրաժեշտ էր շեղոքացնել սովորական կավի թրծման շնորհիվ երևան եկող աղյուսակարմիր գույնը: Այդ նպատակով պատրաստի, բայց դեռևս չթրծված անոթի մակերեսը պատում էին կրաշվոթի սպիտակ շերտով՝ անգորթով:

Այս անգորթի վրա գունավոր ջնարակը կամ նրանով արված վարդերը երևան էին գալիս իրենց բնական վառ գույներով:

Զնարակած խեցեղենի ավելի վաղ նմուշները անգորթով պատած, բայց դեռևս չթրծած անոթի անգորթի վրա գունավոր ջնարակ-

կով զարդարվածներն են: Երբեմն ջնարակը բավում էր դեռևս թաց անգորթի վրա:

Թաց անգորթի վրա կանաչ և դեղին գույնի ջնարակով նկարագարված խեցեղեն հայտնաբերվել է Դվինի, համեմատաբար վաղ շերտերում (Ռ. Ռ. 1617/83, 1917/25), ինչպես և էջմիածնի-Զվարթնոց հին բնակավայրում: Սպիտակ կամ բաց վարդագույն ֆոնը կազմում է այս խեցեղենի երբորդ գույնը, որով ստեղծվում է այն տպավորությունը, թե անոթները բազմագույն են: Թաց անգորթի վրա նկարուն խեցեղենը շատ փայլուն չի լինում, ընդհակառակը ոմնենում է խամրած տեսք:

Դվինի և էջմիածնի-Զվարթնոցի համար բնորոշ են այս տեխնիկայով զարդարված թասերն ու պնակները, որոնց օրնամենտները ներկայացնում են կանաչ և դեղին ոչ այնքան կանոնավոր շրջանակների ու կիսաշրջանակների և տարբեր գույնի շերտերի զուգակցությունը: Երբեմն էլ դեղին շերտերի վրա դրված են լինում խաղողի հատիկի մեծությամբ կանաչ հատիկներ կամ կանաչ ֆոնի վրա են դրված լինում նման դեղին հատիկներ (տխտ. XLV ա):

Թաց անգորթի վրա նկարուն խեցեղենը Դվինում հայտնաբերվել է միայն պեղումների 11-րդ տարում, երբ պեղվում էին միջնաբերդի ավելի վաղ շերտերը, իսկ Զվարթնոցը ավերվել է 10-րդ դարում, որից հետո այնտեղ կյանք չի եղել, ուստի ջնարակած խեցեղենը արտագրվել է տաճարի կործանումից առաջ: Այս փաստերը, ինչպես և նկարագրվող տիպի խեցեղենի հետ միասին հայտաբերված այլ նյութերը թույլ են տալիս թաց անգորթի վրա նկարուն խեցեղենը թվագրել 9-րդ դարով: Ուստի կարծում ենք, թե սխալ է վարվում Արթուր Պոպը, երբ պարսկական նուշնատիպ խեցեղենը թվագրում է 10—11-րդ դարերով: Ավելի ճիշտ է գնահատել էրնատ Կյուհնեյը, որը Միջագետ-

¹ Սարգիս Շնորհալի, Մեկնություն Եօթանյ թղթոց կաթուղիկեաց, Կ. Պոլիս, 1826, էջ 190:

¹ A Survey of Persian Art, vol. V pl. 563 A, B, pl. 621.

րի նուշնատիպ խեցեղենը թվագրում է 9-րդ դարով¹։

Անիում գտնված մի թասի (№ 305) և Դվինում գտնված երկու թասի (№ № 1917/314, 1794/516) դարձերը, ինչպես երևում է, նույնպես կատարված են թաց անդորի վրա։ Անիի թասի բաց գույնի անդորի վրա մուգ շագանակագույն լայն դժերովնը կարված է մի շեղանկյուն, որը բռնում է թասի ամբողջ մակերեսը ներսից, շեղանկյան կողմերին նկարված են համակենտրոն շրջանակներ, իսկ սրանց միջև ու կողքերին՝ եռանկյունիներ՝ դժված դարձնազույն բարակ գծերով։ Թասի հատակի շրջագծի մեջ մուգ շագանակագույն լայն դժերով պատկերված է հրկու ծայրերում խարսխի տեսք ունեցող մի նշան։ Դվինի թասերը ևս ճիշտ նույն ձևը և նույն նշանն ունեն։ Սրանց օրնամենտը սակայն կորցրել է նախկին հատակովնը և ավելի խճողված է։ Նման օրնամենտները ավելի բնորոշ են Միջին Ասիայի համար և Հայաստանում երևան գալով 10-րդ դարում լայն կիրառություն չեն ստացել։

Նույն 9-րդ դարում ջնարակած խեցեղենի արտադրությունը ավելի է դարձանում։ Նկարը թաց անդորի վրա անկու փոխարեն, սկսում են անել անդորած և թրծած անոթի վրա և ջնարակելուց հետո կրկին թրծում են։ Բացի այդ, նկարը սկսում են ծածկել թափանցիկ ջնարակով, որի շնորհիվ անոթների մակերեսը ավելի ողորկ և փայլուն է դառնում։

Կրկնակի թրծումով և թափանցիկ, սովորաբար դռնավոր ջնարակով պատած խեցեղենը ունենալով նույնիսկ մի երանդ, կանաչ, շագանակագույն, դարձնազույն, կամ բաց գույն, շատ հաճելի էր, ուստի, դեռևս 9-րդ դարում արտադրվում էր և այդպիսի խեցեղեն։ Դվինի և Գառնիի 9—10-րդ դարերի շերտերում դուրեկան միագույն խեցեղենի դյուտերը եզակի չեն։ Ծիշտ է, հետա-

դարում ևս միագույն խեցեղեն արտադրվել է, անգամ այդպիսի խեցեղեն ավելի հաճախ է հանդիպում, սակայն այդ հանգամանքը չպետք է մեզ շփոթության մեջ գցի ավելի վաղ օրինակների դոյունության հարցում։ Կ. Ղաֆաղարյանը իրավացի է Դվինի միագույն խեցեղենի հին օրինակները թվագրելով 9-րդ դարով¹։

Դվինում՝ ստորին շերտում հայտնաբերվել են միագույն դուրեկան կանաչ անոթների շատ բեկորներ, այլև ամբողջական անոթներ՝ կճուճներ, հաստ պատերով կլոր տաշտ, որի շուրթերը վերևում լայնանում են բացվելով դեպի դուրս։ Ամենից ավելի աչքի է ընկնում միջին մեծության մի կճուճ № 1906/117), որը երեք կանթ ունի և կանթերի արանքում կճուճի վրա կպցրած երեք խուլ դեկորատիվ կանթեր։ Իսկական և խուլ կանթերի վրա փոքրիկ կիսադնդաձև սեղանի կոճակները միակ դարձերն են այդ կճուճի վրա։

Գառնիում հայտնաբերվել են այս ատիպի խեցեղենի բեկորներ միայն։

Ավելի աչքի ընկնող երևույթ էր բաղմագույն ջնարակով նկարադարձված և թափանցիկ ջնարակով պատած խեցեղենի արտադրությունը։

Տարբեր գույներով ստացումը միևնույն անոթի վրա արդեն հնադարվոր էր դարձնում խեցեղենի գեղարվեստական զարդարումը ու միայն երկրաչափական և բուսական մոտիվներով, այլև կենդանիների, թռչունների, մարդկանց պատկերներով և ամբողջ տեսարաններով։ Այսպիսով, առաջանում է ջնարակած գեղարվեստական խեցեղենը, որը շնորհիվ իր լայն կիրառական նշանակության, հետզհետե մասսայական արտադրության է վերածվում և դարերի ընթացքում առաջացնում է ժողովրդական արվեստի մի նոր և ընդարձակ ճյուղ։

Բ. Շեղանկյունիով իրավացի կերպով նըշում է, թե այս կարգի խեցեղեն գտնվել է

¹ Ernst Kühnel, Islamische Kleinkunst, Berlin, 1925 S. 76—78. Abb. 36—37.

¹ Կ. Ղաֆաղարյան, Դվին բաղաբը և նրա պեղումները, էջ 209.

Անիում, Դվինում, նաև Զվարթնոցում¹: Դվինի վերջին տարիների պեղումները շատ հարուստ նյութեր են տվել (տխտ. XLVI): Այստեղ գտնված մի թասի վրա (№ 1847/59). բաց գույնի անգորբի վրայից առանց գծադրության տրված է երանգների էֆեկտ առաջացնող դարձ կանաչ, դեղին, մանուշակագույն, շագանակագույն և մուգ-շագանակագույն, համարյա սև երանգների շերտաձև ճառագայթավոր և իրար հաջորդող զուգակցությամբ: Մի այլ մեծ և խոր թասի վրա տրված է գեղարվեստական բարձրարվեստ նկար: Բաց գույնի անգորբի վրա թասի հատակից մինչև շուրթը անցնող մեջընդմեջ կանաչ և մուգ շագանակագույն եռանկյունիների շնորհիվ նկարին տրված է ութ երկար պսակաթերթ ունեցող շքեղ ծաղկի տեսք, որի բաց գույնի պսակաթերթերի կենտրոնում՝ նրանց ամբողջ երկայնությունը անցնում է դուրեկան բաց երկնագույն մի շերտ: Ծաղկի պսակաթերթերը իրարից անջատող կանաչ և շագանակագույն երկարուկ սուր անկյուն եռանկյունիները երկու կողմից առնչված են կանաչները՝ մուգ շագանակագույն, իսկ շագանակագույնները՝ մուգ կանաչ գույնի երկրների մեջ: Եռանկյունիների ֆոնը համատարած կանաչ կամ շագանակագույն չէ, այլ գույների արանքից թափանցիկ ջնարակի տակ տեղ տեղ երկարուկ ու նեղ շերտերով երևում է բաց գույնի անգորբ (տխտ. XLVII):

1 Б. А. Шелковников. Керамика и стекло из раскопок города Двина. Уշխատություններ Հայաստանի Պետ. պատմական թանգարանի, հատ. 4, էջ 38. Его же, Художественная керамическая промышленность в средневековой Армени («Տեղեկագիր» ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի, № 3—4, 1942, էջ 20—22):

2 Այս տեխնիկայով և նույնպես ճառագայթավոր օրնամենտով, սպիտակ շերտերի վրա ցրված մուգ մանուշակագույն գծերով թաս գտնվել է նաև Միջագետքում և Պոսի կողմից թվագրվում է 8—9-րդ դարերով (A Survey of Persian Art, vol V pl. 570): Բ. Շելկովնիկովը Դվինում գտնված օրնակի վերագրում է միջագետքյան ծագում (տե՛ս Աշխատ

նույն տեխնիկայով պատրաստված թասեր հայտնի են նաև Անիից: Նրանցից մեկի բաց վարդագույն անգորբի վրա բուսական օրնամենտի միջև նկարված է գիշատիչ թռչուն, իսկ մի այլ թասի (№ 306) նույնպես բաց վարդագույն անգորբի վրա, ներսից նկարված է մի կնոջ պատկեր: Գլխարկը ընդգրկում է կնոջ գլուխը մինչև դեմքը և սնի կանաչ գույն, զգեստը վերին մասում դեղին է, միայն կուրծքն է կանաչ, շրջազգեստը կազմված է ուղղահայաց ներքև իջնող խոշոր շերտերից, որոնք հաջորդաբար ունեն սպիտակ, կանաչ և դեղին գույն: Նկարի եղևրքը դժգոհված չէ, այլ ներկված մանուշակագույն երկու, կինը ձախ ձեռքը կանթել է կողքին, իսկ աջ ձեռքում բռնել ինչ որ իր, հավանաբար հայելի: Կնոջ պատկերի կողքերին կանաչ ճյուղերի վրա նստած են թռչուններ, սեսս թև պատկերված է մի տեսարան ինչ որ հեթանոսի իրավադի նշում է Բ. Շելկովնիկովը²:

9—10-րդ դարերի նույնատիպ խեցեղեն գտնվել է նաև Զվարթնոցում, որը Բ. Շելկովնիկովի կարծիքով բերված է Դվինից³: Զվարթնոցի խեցեղենը սակայն շատ ինքնատիպ է, ինչպես անոթների ձևով՝ գերազանցապես ափսեներ (դունավ. տխտ. I), որպիսի և ոչ մի օրինակ չի գտնվել Դվինում, նույնպես և բուսական ռճավորված օրնամենտներով: Այդ ամենը նկատի ունենալով, կարելի է կարծել, որ միջին դարերում կրկին քաղաք դարձող Վաղարշապատը նույնպես կարող էր խեցեղենի իր սեփական արտա-

տություններ Հայաստանի Պետական պատմական թանգարանի, հատ. 4, էջ 100):

1 И. Орбели, Каталог Анкийского музея древностей, стр. 22.

2 Б. А. Шелковников, Художественная керамическая промышленность средневековой Армени («Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, № 3—4, 1942, էջ 22):

3 Б. А. Шелковников. Керамика и стекло из раскопок города Двина (տե՛ս աշխատություններ Հայաստանի Պետական պատմական թանգարանի», հատոր IV, էջ 38):

գրությունը ունենալ, հակառակ դեպքում պետք է ենթադրել, թե այդ խեցեղենը բերված է մի ինչ սր անհայտ կենտրոնից:

Անգորթի վրա արվող նկարը երբեմն եզրագծվում էր մուգ գույնի դժերով, սակայն առանց փորագրության, ուղղակի անգորթի վրա բարակ վրձինով քսվող ներկով. այս եղանակով նկարն ստանում է ճիշտ և սրուշակի եզրագծեր: Այդպես է նկարագրված Դվինում գտնված մի թաս (№1794/393), որի ներսի մակերեսի վրա անցնում են ութ կանաչ լայն շառավիղներ երկու կողմից եզերված շագանակագույն գծերով, թասի հատակին շառավիղների արանքում նկարված է ութ պսակաթերթ ունեցող բաց դարչնագույն վարդյակ, որի պսակաթերթերը ծայրերից եզերված են շագանակագույն գծով: Վարդյակի պսակաթերթերի միջև՝ դեպի թասի շուրթը ձգվում են ութ մեծ տերևներ, որոնք ստացվել են անգորթը շատ բաց կանաչավուն ջնարակով պատելու շնորհիվ: Այս խոշոր տերևների վերին ծայրերը կլորացված են և իրարից բաժանված, նրանց միջև արված դարձյալ շագանակագույն գծով եզրագծված և բաց դարչնագույն ջնարակով ծածկված կռանկյանիների օգնությամբ¹:

Նկարագրողում անգործով կամ նկարի ֆոնում անգործը հեռացնելու եղանակով: 1953—1955 թթ. Դվինի միջնաբերդում՝ 9—10-րդ դարերի շերտերում գտնվել են այնպիսի ջնարակած թասեր (№ 1907/109), որոնց վարդերը արված են սպիտակ անգործով և ծածկված թափանցիկ ջնարակով: Նույնպիսի մի թաս հայտնի էր և Զվարթնոցից: Սպիտակ անգործով կատարված նկարը մուգ գույնի ֆոնի վրա երևում է շատ ցալտուն (տխտ. LXV ր): Նկարագրողման այս եղանակը,

ավելի սովորական է եղել Վրաստանում և Ադրբեջանում¹, իսկ Հայաստանում ըստ երևվույթի լայն կիրառություն չի ստացել:

Դվինում՝ սկսած 1946 թվականից հողի ավելի խտրը շերտերից, որոնք վերաբերում են 9—10-րդ դարերին, հայտնաբերվում են նաև այնպիսի ջնարակած թասեր (№№ 1794/160, 1794/223, 1794/450, 1904/69), որոնց վրա հանդիպում է հյուսված պարանաձև կամ ժապավենաձև վարդ, այլև բուսական ու երկրաչափական օրնամենտներ, որոնք կատարված են ուրույն եղանակով՝ նկարի ֆոնում անգորթի հեռացումով: Բաց գույնի անգործ տեղ տեղ հեռացնելով կամ թողնելով ստացել են հյուսված պարանաձև կամ ժապավենաձև վարդը, որը ձայնակցում է 6—7-րդ և հետագա դարերի հայկական ճարտարապետական հուշարձանների (մասնավորապես սրանց քիվերի) վրա հանդիպող պարանաձև կամ կողովաձև հյուսվածքին²: Կան և բուսական օրնամենտներ, անգամ կենաց ծառեր, որոնք կատարված են նրանց ֆոնում անգործը հեռացնելու եղանակով: Անգործը նկարի ֆոնից հեռացնելիս թափանցիկ ջնարակը նստում է անմիջապես կարմիր խեցու վրա, որի հետևանքով բաց շագանակագույն կամ դարչնագույն է դառնում, իսկ նկարը մնում է դուրեկան սպիտակ գույնի (տխտ. XLVIII): Մի մեծ թասի շուրթի վրա նկարի ֆոնում անգործը հեռացնելու եղանակով նկարված է կենաց ծառ, որը երեք գույն հանդիպակաց տերևներ ունի, իսկ վերևում՝ շրջանաձև բողբոջ: Թասը ծածկված է բաց, փոքր ինչ դեղնավուն, թափանցիկ ջնարակով, անգորթի հեռացված տեղում ստացվել է դարչնագույն երանգ: Անգորթի շերտված տեղերը, այսինքն նկարը, սկզբի է երևում, որին օգնում է նրա բաց գույնը: Այս տեխ-

¹ Բազմագույն կերամիկա առանց գծադրի նկարով հայտնաբերված է և Իրանում, մասնավորապես Մադանգարանում (տե՛ս A Survey of Persian Art, vol. V, pl. 621) և թվագրվում է 10—11-րդ դարերում: Նման խեցեղեն տալիս է նաև Օրսն-կյան (Փայտակարանը):

¹ И. М. Джафарзаде, Историко-археологический очерк старой Ганджи, стр. 74—75. В. В. Джапаридзе, Ук. статья.

² Կ. Ղաֆադարյան, Դվին բազարը և նրա սկզբունքները, էջ 212:

նիկայով կատարված թասերի վրա տեղ-տեղ էլ քսված է լինում բաց կանաչ ջնաքակ անկանոն ձևով, կամ հատակից դեպի շուրթը անցնող ճառագայթների տեսքով: Դվինում գտնված մի թասի վրա անգորբ հեռացնելու եղանակով ստացվել է երեք շեղանկյունի պատկեր. նույն այդ թասի վրա ոչ այնքան կանոնավոր ձևով անցնում են ճառագայթաձև կանաչ շերտեր:

Դվինի տեղական թանգարանում պահվում են պեղումներից դուրս եկած այնպիսի թասեր, որոնց անգորբ հեռացնելու կամ անգործով նկարազարդելու եղանակով ստեղծվել է մուգ դարչնագույն ընդարձակ ֆոն, որի վրա ասես սպիտակ ծաղիկների կամ մարդարիտների նման սիւլված են տասնյակ ու հարյուրավոր բծեր, որոնք սպիտակ գույնի և նրանց ֆոնում անգորբ հեռացված լինելու հետևանքով սևեթ են երևում: Անգործի հեռացման եղանակով դարձել ստանալը առաջանալով 9-րդ դարի վերջերսում տեղ է մինչև 13—14-րդ դարերը, միայն թե սկսած 12-րդ դարից անգործի հեռացում կատարվում էր ոչ թե ընդարձակ շերտերով և մոնումենտալ նկարներ ստանալու նպատակով, այլ նեղ ու գալարուն շերտերով, ավելի շուտ գծերի ձևով խիստ ոճավորված կամ մանրացված բուսական ու երկրաչափական օրնամենտ ստանալու համար, երբեմն էլ ոչ թե ֆոնն է հեռացված, այլ նեղ գծերով անգործի հեռացնելով ստացվել է գծագիր դարդ: Այս եղանակով դարդարված իրանական խեցեղենը Պսոլը թվագրում է 11—12-րդ դարերով:

Անգործի հեռացումով նկարազարդված խեցեղենի վաղ նմուշներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են Դվինում, իսկ Անիում աչպիսիսները չեն հանդիպում և ինչպես երևում է անգործի հեռացման անխնիկան այս քաղաքում սկսել են կիրառել 10-րդ դարի վերջերից ոչ շուտ:

Անիում գտնված մի թասի վրա սպիտակավուն անգործ փերելու եղանակով ստաց-

վել է շուրս պսակաթերթի ունեցող ծաղիկ, որի բավականաչափ խոշոր պսակաթերթերի մեջ անդորի ֆոնը հեռացնելու եղանակով ստացվել է մեկական ճյուղ: Պսակաթերթերի վերին ծայրերի միջև ընկնող եռանկյունիների վրա արված է ոճավորված բուսական օրնամենտ: Այս թասը կարող է թվագրվել 12-րդ դարով:

Դժադիր զարդերով խեցեղեն: Դեռևս 10-րդ դարում երևան է դալիս թաց կավի վրա դժադրված, ապա անգործով և ջնարակով պատած խեցեղենը: Սկսած 11-րդ դարից, մանավանդ 12—13-րդ դարերում գծագրված և ըստ դժադրի տարրեր գույնի ջնարակով զարդարված խեցեղենը արբապետող է դառնում:

Դվինում 10-րդ դարի շերտում գտնվող միազույն ջնարակած անոթներից մի քանիսի վրա հանդիպող գծագիր օրնամենտը դեռևս շատ զտապ է: Օրինակ՝ պնակների վրա հանդիպում է շուրթի վրայով ներսից շուրջանակի անցնող կենտ կամ զույգ դիծ, որը արված է թաց կավի վրա անգործ քսելուց և յրժեկուց առաջ: Քանդակված գծի մեջ կուտակվելով ջնարակը ավելի հասա շերտով առաջացնում է նույն ջնարակի ավելի մուգ երանդը: Դվինում գտնված մի անկանթ լայնարևառն անոթի՝ կճուճի (№ 1906/122) վերին մասում դրսից թաց կավի վրա գծագրված է հյուսվող պարանաձև կամ, լավ է ասել, հյուսվող ժապավենաձև դարդ, ջնարակը մուգ կանաչ է, համարյա կիսաթափանցիկ, իսկ գծագիրը ավելի ևս մուգ կանաչ գույն ունի (տխտ. L դ): Դվինում գրտնըվել են նույն տեխնիկայով պատրաստված այլ անոթներ ևս. օրինակ՝ կճաձև կամ կուլիկի ձևի ծորակավոր կամ անծորակ անոթների բեկոսներ, որոնք ունեն մուգ կամաչ, բաց կանաչ և երկնագույն երանդ: Մի վրկարավիդ կճի (№ 1794/71) վրի ներքևի լայնացող սևեթ կերպով դուրս ընկած թասաձև մակերեսին՝ թաց կավի վրա արված է ավելի խորը փորագրություն՝ կետերի և գծերի զուգակցությամբ, ապա ծածկված է ջնարա-

1 A Survey of Persian Art. Vol. V, pl. 612.

կով: Նույն տեխնիկայով՝ եռանկյունաձև խորր զարդերով և կանաչ ջնարակով բնորոշ կանթով մի աման նույնպես ծագում է Դվինից:

Անհում գտնվել է նաև մի մուգ դարչնագույն կամ շագանակագույն թաս (№ 304), բրի ներսից շուրթի վրա անցնում է շրթած կավի վրա փորագրված շրջանաձև մի պիծ: Շուրթից քիչ ցած անցնում է այգալիսի կրկնագիծ գոտի, որի մեջ նույն եզանակով գծագրված է ութ պսակաթևերի ռմենցող վարդ: Պսակաթևերի վերին ծայրերի արանքում մնացող եռանկյունի մակերեսը սեղմված խորացված է՝ կենտրոնում թողնելով մեկական տանձաձև հարթաքանդակ պատկեր: Այս զարդը ինչպես կատարման տեխնիկայով, նույնպես և վարդի բնորոշ տիպով հարևան է թաց կավի վրա գծագրով զարդարված հախճապակե թասերի զարդերին:

Ըստ գծագրի բազմագույն ջնարակով զարդարված խեցեղեն: 10-րդ դարի վերջերին և 11-րդ դարի սկզբներին առաջանում է անդրի վրա գծագիր անելու և ըստ գծագրի տարբեր գույնի ջնարակով անոթները նկարազարդելու, ապա թափանցիկ ջնարակով պատելու տեխնիկան: Առաջանալով, մատնանշված ժամանակամիջոցում, այս տեխնիկան լայն կիրառվելու է գտնում 12—13-րդ դարերում, կազմելով այս ժամանակաշրջանի ջնարակած խեցեղենի զարդարմանը տիրապետող և բնորոշ եղանակը¹:

Ըստ գծագրի տարբեր գույնի ջնարակով զարդարելու տեխնիկան առաջացնում էր գույների հետաքրքիր զուգահեցություններ և շքեղություն էր մտցնում կավագործության մեջ: Այդ տեխնիկայով կատարված վաղ շրջանի անոթներից պետք է համարել Դվինում գտնված մի մեծ թաս: Սրա հատակին ներսից անդրի վրա արված ևն փորագիր անկանոն գծեր և նույնքան անկանոն կերպով զրված են տարբեր գույնի շերտեր: Հատակից անմիջապես վերև, թասի կողքին՝

ներսից անդրի վրա գծագրված է յոթ շրջանակ, իսկ սրանց մակերեսը բաժանված է մանր քառակուսիների և պատած. շագանակագույն թափանցիկ ջնարակով: Այս յոթ շրջանակներից վեր անդրի վրա գծագրված են յոթ ավելի խոշոր կիսաշրջաններ, որոնք կազմում են մեծ ծաղիկ պսակաթևերը, սրանք եզերքներից ներկված են կանաչ գույնով, իսկ կենտրոնում մնում է յայն սպիտակ շերտ, որի վրա գրված են 3—5 մուգ մանուշակագույն, համարյա սևին սըվող կետեր (ախտ. XLIX ա): Այս պսակաթևերից վերև, յուրաքանչյուր երկու պսակաթևերի միջև պատկերված է մեկական սրածայր մեծ տերև; որը հասնում է մինչև թասի շուրթը, ընդամենը յոթ այգալիսի տերև է գծագրված և պատած է բաց գույնի ջնարակով, որի վրա գրված է մեկական մանուշակագույն կետ: Սրածայր մեծ տերևների միջև թասի շուրթի ազատ մնացած տեղում արված են ալիքաձև զուգահեռ գծեր և այս ազատ մասը ծածկված է դարչնագույն ջնարակով: Ըստ փորագիր գծագրության զրված ներկերը, սակայն, զրվել են խառնելով նկարների հատակությունը: Այնուամենայնիվ ստեղծվել է գծագիր պատկերների ու երանդների շքեղ խաղ և այս թասը կարելի է համարել Դվինի ամենաբարձրարվեստ ջնարակած թասերից մեկը: Նույն տեխնիկայով է կատարված նաև Դվինի միջնաբերդում գտնված մի մեծ պնակ, որն ունի ավելի մանրացված գծեր և ճառագայթավոր զարդ՝ արված տարբեր գույնի ջնարակով: Նման այլ օրինակներ Դվինում շատ են գտնված և պատկանում են մեծ մասամբ 12—13-րդ դարերին:

Անհում, ընդհակառակը, գծագիրը և գունավոր նկարը իրար հետ համընկնում են խստիվ կերպով:

Անիի մի թասի վրա (№ 312) կանոն շագանակագույն և մուգ երկնագույն ճառագայթների մեջ, մուգ շագանակագույն թափանցիկ ջնարակով պատկերված է մի առյուծ (ախտ. XLIX բ), որի առջևի ոտերը

¹ Б. А. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина, стр. 51.

և զլսխը սրտակի շարված լինելու պատճառով շեն պահպանվել: Պնակի ետ ծալված շուրթի վրայով անցնում են բաց շագանակագույն, իրար զուգահեռ, երկու լայն շրջագծեր, իսկ դրանց միջև նկարված են շեղ ճառագայթներ: Մի այլ պնակի (№ 318) հատակին դեղին ջնարակով նկարված է ցուլ, որի առջևի ոտքերը և զուլսը նույնպես շիան: Ցուլի շուրջը խիտ բուսական օրնամենտ է արված և պնակի բաց ֆոնը երևում է միայն աեղ-սեղ փոքրիկ շերտերով, որոնց կենտրոնում դրված են մուգ շագանակագույն կետեր: Անիում հանդիպում են նաև այնպիսի թասեր, որոնց վրա պատկերված են արծիվ (№ 308) և այլ թռչուններ (տխտ. XLIX գ):

Ճիշտ նույն տեխնիկայով է կատարված Գվինում դանված մի պնակի (№ 1794/914) ներսի նկարը՝ արագիլ՝ կացին օձ:

Իրանում գտնված՝ ըստ գծագրի բազմագույն ջնարակով խեցեղենի վրա նույնպես հանդիպում են թռչունների և գազանների պատկերներ: Պոպը դրանք թվազրուում է 11-րդ դարով²:

Վ. Զախարիձեն, Վրաստանում գտնված ջնարակած խեցեղենը, ըստ կատարման տեխնիկայի, բաժանում է շուրս խմբի. ա) նկար սպիտակ անդորի օղնուկայմբ, բ) անգորով և ջնարակով պտտած, առանց նկարի, գ) անգորի վրա գծագրով վարդարված և ֆոնում անգորը հեռացնելու եղանակով նկարազարդված (выомчатая техника) խեցեղեն³:

Ջնարակած խեցեղենը վարդարելիս անդորի վրա դնում էին բծեր կամ թանձր շերտ, նկարում էին վրձիճով, փորագրում և այլն: Երբեմն էլ գործադրվում էին այս բոլոր եղանակները, կամ դրանցից մի քանիսը: Զարդարման այս տեխնիկայով են կատարված,

օրինակ, բուսական ֆոնի վրա՝ թռչունների (արծիվ) և գազանների (առյուծ և այլն) պատկերներով թասերը, որոնք գտնվել են Վրաստանի տարբեր վայրերում:

Ըստ գծագրովյան տարբեր գույնի ջնարակով նկարած գազանների և թռչունների պատկերները բուսական օրնամենտի գուղակցուկյամբ հանդիպում են Անդրկովկասի նաև այլ վայրերում, օրինակ՝ հին Գանձակում, Օրան-կալայում, Դմանխիում, Բբիլիսիում, Գուզարխիում, որը Ռուսուզանի (1222—1245) ամբոցն է եղել: Դրանք բուլսրն էլ խեցիով, մասամբ և ոճով իրարից տարբերվում են, հեռաբար միևնույն կենտրոնից շեն ծաղտւմ, այլ արտադրվել են Անդրկովկասի տարբեր քաղաքներում:

Յնրաջնարակային նկարազարդում: Դվինում, Գառնիում և այլ վայրերում հաճախ հանդիպում են թասեր և այլ ամաններ, որոնք վարդարված են անգորի վրա սովորաբար սև ներկով կատարված գծագրի նկարով, որը ծածկված է թափանցիկ ջնարակով: Այս տիպի վարդերը պարզ են, մեծ մասամբ դրանք գծագրեր են, մանր քառակուսիներ, երբեմն շախմատաձև դասավորուկյամբ, և այլ երկրաչափական պատկերներ: Սև գծագիրը պատած է լինում սովորաբար գունավոր, բայց թափանցիկ ջնարակով և դրա տակից երևում է ավելի մուգ, շատ հաճելի երանգավորում ունեցող գծագիրը: Այս տիպի խեցեղենը ավելի բնորոշ է 12—14-րդ դարերի համար:

Գառնիում գտնվել են ենթաջնարակային նկարազարդումով թասեր, որոնց նկարը ներկայացնում է հատակից մինչև թասի կզերքը, նրա դրսի կողմից բարձրացող մոտ մեկ սմ լայնքի շառավիղների շարքը, արված սև ներկով, իսկ ջնարակը մուգ երկնագույն է (տխտ. L ա): Կամ հակառակը, գծերն են բաց երկնագույն իսկ ֆոնը՝ սև: Այս խեցեղենը արտադրվել է սկսած 13-րդ դարի կեսերից և այդ պատճառով Դվին

¹ В. А. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина, стр. 54.

² А. Survey of Persian Art, vol. V pl. 607—610.

³ В. В. Джапаридзе, Ук. статья стр. 193.

¹ В. В. Джапаридзе, Ук. статья стр. 193.

նում բուրյուրովին չի նախընտրում, քանի որ Դվինը արդեն ավերված էր և բարձրորակ խեցեղենի արտադրությունն այստեղ ընդհատված:

Խեցեղենի արտադրության զարգացման հետ աստիճանաբար բողբոջանում են ջնարակած ամանների երանգավորումները, ինչպես և զարդարման ձևերը, փոփոխվում են դարձերը: Սելջուկյան նվաճումների ժամանակ ստացած հարվածներից հետո, տեղի ունեցող նոր վերելքի ժամանակ, այս զարգացումը 12-րդ դարի երկրորդ և 13-րդ դարի առաջին կեսերում իր գագաթնակետին է հասնում: Առաջացնելով երանգավորումների ու գեղարվեստական զարդարման եղանակների, մոտիվների խոշոր բազմազանություն՝ ջնարակած խեցեղենի արտադրությունը նոր, ավելի բարձր աստիճանի է հասնում: Անգորի վրա առանց փորագրության կատարվող բազմազան նկարների, նկարի ֆոնում անգորը հնոացնելու եղանակով կամ զուսպ դժագրությամբ բարձրարվեստ նկարների տեղը բռնում են և բացարձակ գերակշռություն ստանում ճոխ, հաճախ խճողված մանր ու ուրրուն փորագիր գծերով, ոչ այնքան բարձրարվեստ երկրաչափական զարդանկարները: Փորագրությունը բացարձակ տիրապետող է դառնում տարբեր գույնի ջնարակների զուգակցությամբ հանդերձ: Դա արդեն հետևանք էր կավագործության զարգացման այն նոր փուլի, երբ խեցեղենը արտադրվում էր մասսայաբար, առավելապես շուկայի և ոչ թե պատվիրատուի համար: Անիում և Դվինում հայտնաբերված 12—13-րդ դարերին պատկանող խեցեղենի քանակը աներևակայելի մեծ է: Զնաբաղված խեցեղենը իր մասսայական արտադրությամբ արդեն մրցում է հասարակ խեցեղենի հետ և սեղանի ու այլ ոչ շատ մեծ տարողություն ունեցող ամանեղենի արտադրության բնագավառում քաղաքներում գերակշռություն է ստանում հասարակ խեցեղենի արտադրությանը, նկատմամբ:

Զնաբաղված ամանեղենից ամենից շատ

նախընտրում են թասեր, սինակներ, ախտեներ, բիչ շին նաև դավաթներ, փարչեր, պուլկներ, կուլաներ, կան ճրագներ, աղաթասեր և այլ անոթներ ու իրեր: Ուշագրավ է այն հանգամանքը, որ արտադրված ամանեղենը պատկանում է այնպիսիների շարքին, որոնք ամենից ավելի էին գործածական առօրյա կյանքում, հետևաբար նրանց նկատմամբ մեծ պահանջ կար շուկայում: Իրենց արտադրությունը կազմակերպելիս այդ պահանջի հաշվառումը կավագործների կողմից ակնհայտ է: Դրանով պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ ջնարակած ամանեղենը միաժամանակ, թերևս նույն արհեստանոցում արտադրել են սկսած ամենաբարձր որակի անոթներից, մինչև ամենացածր որակները, առաջինները հասարակության բնույթ, երկրորդները՝ շուկայի խավերի պահանջների և զնոզունակության համեմատ: Զնաբաղված ամանները այնքան էին տարածված և այն աստիճան մտել էին լոնակչության կենցաղի մեջ, որ նրանց խեցիները գտնվում են Անիի և Դվինի թե՛ ունեղև և թե՛ շուկայի լոնակչության թաղամասերում ու լոնակարաններում, ինչ չի կարելի ասել հախճապակու մասին, որի գործածողները համարյա բացառապես ֆեոդալներն էին, մեծատունները և բարձրաստիճան հոգևորականությունը:

Այս ժամանակներում (12—13-րդ դարեր) ջնարակի կիրառությունը մեծ չափերի է հասնում: Վերին աստիճանի բազմազան մատիվներից գերակշռություն ստանում է գծազարդը, որի կողքին հաճախ հանդիպում են անճանաչելիության չափ ոճավորված բուսական մոտիվներ, մարդկանց, կենդանիների, գազանների, թռչունների, սողունների և ձկների պատկերներ, բայց բոլորն էլ, եթե չհաշվենք շնչին բացառությունները, արված են փորագրության տեխնիկայով:

Իրենք՝ երկրաչափական մոտիվները վերին աստիճանի բազմազան են: Ամենից ավելի հանդիպում են գալարվող կամ ծայրերում պտուտակաձև գծերը, սպիրալները,

շեղանկյունի, եռանկյունի, ստաղաձև և այլ երկրաչափական պատկերներ կազմող զարդերը, ուղիղ և պտուտակվող դժերի ամեն տեսակի զուգակցությունը, հյուսվածքը, շախմատաձև օրնամենտը, պնակների, թասերի շուրթերը ներսից զարդարող ուղղահասկաց և ներսից դուրսի կազմող հորիզոնական կես կամ մեկ սանտիմետր լայնությամբ ժայպակենները, համակենտրոն շրջանակները, ոճավորված վարդյակները, երբեմն 6 կամ 8 մեծադիր պտակաթերթերով վարդյակներ, որոնց պտակաթերթերը ևս ծածկված են լինում մանր դժազարդերով (ախտ. LI), եռանկյունի կամ բազմանկյունի բջիջների խմբերը և այլն: Այս փորագրի դժազարդերն այժմ կատարվում են առավելապես բաց գույնի ջնարակով պատած անդրի վրա: Երբեմն անգործ քերվում է մինչև բուն գունավոր խեցին, այս դեպքում դժազարդը ծածկվելով գունավոր կամ անգույն թափանցիկ ջնարակով, ավելի մուգ երանգ է ստանում: Անգործ վրա կատարվող դժազարդումը, հաճախ զուգակցվում է զարդանկարների դունավորման հետ՝ սովորաբար երեք գույնով, այն է՝ կանաչ, դեղնավուն-շագանակագույն և մանուշակագույն, բայց ավելի շատ լինում է առանց դրան:

Այսպիսով, կիրառական խոշոր նշանակություն ունեցող ջնարակած խեցեղենի արտադրության բնագավառը նաև ժողովրդական արվեստի բավականաչափ ընդարձակ բնագավառ է եղել, որը զարգացել է նույն ուղիներով և կրել է նույնպիսի փոփոխություններ, ինչ նկատում ենք արվեստի մյուս ճյուղերում, մանավանդ գեղարվեստական քանդակագործության մեջ:

Անիում, մանավանդ Դվինում արտադրված 12—13-րդ դարերի խեցեղենի հայտնաբերված նմուշների մեջ ամբողջական և բարձրարվեստ օրինակները քիչ չեն:

Ջնարակած խեցեղենի մեջ հանդիպում են այնպիսի նմուշներ, որոնք կրում են հայերեն կամ արաբերեն տառերով փորագրված արձանագրություններ: Անիում գտնվել

և կանաչ ջնարակով ծածկված մի թաս, որի ներսից անցնում է հորիզոնական կրկնակի դուրսի և գոտու վերևում ամբողջ շրջան կազմող հայերեն արձանագրություն, որի պահպանված բեկորների վրա կարդացվում է խոցադեղ անոմնը: Դվինում գտնված մի մեծ թասի վրա, որը ներսից և դրսից ծածկված է կանաչ ջնարակով, դրսի կողմից շուրջանակի անցնում է արաբատառ արձանագրություն:

4. ՀԱՆՃԱՊԱԿՈՒ (ՅԱՅԱՆՍԻ) ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հախճապակու արտադրության կուլտուրան առաջացել է Չինաստանում և այստեղից էլ երկար դարերի ընթացքում շարժվելով դեպի արևմուտք՝ տարածվել է Մերձավոր Արևելքի երկրներում, Բյուզանդիայում, մինչև որ 16-րդ դարում հասել է Արևմտյան եվրոպա:

Սամարյան 1910-ական թվականներին կատարված պեղումների նյութերը, որ հրատարակել է գերմանացի հնագետ Ջառեն, 1925 թ., ցույց են տալիս, որ հախճապակու արտադրությունը արաբներին հայտնի էր առնվազն 9-րդ դարում: Հախճապակի արտադրվում էր Իրաքում, Միջագետքում, Ասորիքում և այլ վայրերում:

Դվինում 1937 թ. գտնվել է հախճապակե մի թաս (№ 124 դ. 1938), բավականաչափ հաստ, ոչ շատ սալիտակ խեցիով, որը ծածկված է կաթնավուն անթափանցիկ ջնարակով: Սրա վրա, ինչպես նշում է Բ. Շելկովնիկովը¹, դեռևս թաց վիճակում կորալտով նկարված են թավ տերևակալած ճյուղեր: Թրծելուց հետո, շնորհիվ կորալտի, ստացվել է շատ դուրեկան նկար՝ շագանակենու պտղաբերած ճյուղ: Այսպիսի թասեր

¹ Б. А. Шелковников, Художественная керамика двинских раскопок (տե՛ս «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի № 4—5, 1940, էջ 192):

դանվել են Իրանում, Միաշգեհտքում և Ասորիքում: Առանց նրանց միջադեպքյան ծագում է վերագրում և թվագրում է 9-րդ դարով: Արթուր Պոպը համարում է առաջացած Իրանում ու այլ կենտրոններում և թվագրում է 9-րդ կամ 10-րդ դարով¹: Դվինի թասը և կորալտով կատարված նկարազարդումն ու նույնատիպ սիլուետային նկարներ ունեցող խեցիները գտնվել են կենտրոնական եկեղեցական թաղում 893 թ. երկրաշարժի ժամանակ ավերված շենքերի փլատակների տակ մնացած մի հորում, բարձրորակ ձուլածո ապակե թասի հետ միասին և կարող են պատկանել 9-րդ դարին: Բ. Շելկովնիկովը հակամետ է Դվինի թասին և բեկորներին միջադեպքյան ծագում վերագրել: Այնուհետև նա նշում է, որ թաց անթափանցիկ ջնարակի վրա գունանկար անելը, որ համարվել է եվրոպական վերածնության ժամանակաշրջանի վարպետների գյուտ, Մերձավոր Արևելքում հայտնի է եղել դեռևս 9—10-րդ դարերում²:

Դվինի և Անիի պեղումների ժամանակ գտնվել են մեծ քանակությամբ և բազմապիսի հախճապակե անոթներ՝ ամբողջացող կամ նրանց բեկորները, որոնք ցույց են տալիս, որ 10—11-րդ դարերում Հայաստանի քաղաքներում արտադրվել է այնպիսի բարձրորակ և բազմազան հախճապակի, որպիսին եվրոպան արտադրել կարողացավ 5—6 դար հետո:

Հայաստանի տեղական հախճապակու արտադրության պատկերը և տեխնիկան պարզելու նպատակով այդ հախճապակին կրնանք ըստ նրա տեսակների և դարգարման տեխնիկայի:

Փոխը խեցիով գծագարդ և ծակոտկեն ֆախնապակի: Դվինի և Անիի համար բնորոշ է բարակ խեցիով միագույն նուրբ հախճա-

պակու արտադրությունը: Սրա խեցին կարծր է և նրա վրա ազդում է Մոսսի կարծրության տախտակի երրորդ հանքաքարը (կալցիումը): Այսպիսի հախճապակուց պատրաստված անոթներն ունեն փորագիր գծադարձեր, որոնք կատարված են թաց կավի վրա շուրայնելուց և թրծելուց առաջ՝ ճնշելու կամ սեղմելու եղանակով և հարթաքանդակի սպալտություն են թողնում: Հաճախ անոթներն ունենում են, ծակոտկեն կամ ցանցկեն զարդեր, արված թաց կավի վրա որևէ բարակ ձողով անցքեր բացելու եղանակով: Այս անցքերը լցվելով թափանցիկ ջնարակով, լուսաթափանց են դառնում և առաջացնում են ցանցկեն զարդեր, զուգակցված գծադրելու կամ սեղմելու միջոցով ստացված լայն խորաքանդակների և հարթաքանդակների հետ (տխտ. LII): Այս կարգի անոթների վրա հանդիպում է «պ» նշանը, որը վարպետի նշանն է¹:

Անոթները միագույն են՝ սպիտակ-կաթնավուն, կապույտ, երկնագույն կամ փիրուզագույն, սակավ նաև մանուշակագույն, բոլորն էլ ծածկված թափանցիկ ջնարակով: Գույները վերին աստիճանի վճիտ են, մեղմ և հաճելի: Սպիտակ գույնը ստացվել է առաջի, կապույտը՝ կոբալտի, փիրուզագույնը՝ պղնձի, իսկ մանուշակագույնը՝ մարգանեցի օքսիդների գործադրության շնորհիվ: Գեղեցիկ է այս անոթների, մանավանդ թասերի ընդհանուր տեսքը (տխտ. LIII ա) ոչ բարձր օղակաձև ոտքի վրա հենված է դեպի վեր բուրձ անկյան տակ ուղիղ գծով լայնացող կողեր ունեցող թասը, որի առանց այն էլ ոչ հաստ խեցին դեպի շուրթը ավելի քան բարակ է: Միագույն նուրբ այս թոսերի ձևերը ասես կրկնում են ազնիվ մետաղներից պատրաստված թասերի ընդհանուր ձևերը, իսկ լուսաթափանց անց-

¹ A Survey of Persian Art, vol. V, pl. 573c.

² Б. А. Шелковников, Художественная керамика двинских раскопок. տե՛ս «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, № 4—5, 1940, էջ 194—195.

¹ Б. А. Шелковников, Художественная керамическая промышленность средневековой Армении, տե՛ս «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ, Հայկական ֆիլիալի № 3—4, 1942, էջ 25.

քերը կարծես թե փոխարինում են ազնիվ մետաղների վրա առատորեն ազդեցված թանկագին՝ քարերին, որսլիսի ընդելուզած բասալթը և առողջների մասին մատենագրական աղբյուրների տեղեկությունները բազմաթիվ են:

Այս ծակոտկեն հախճապակին գտնվել է Անիի միջնաբերդում 1064 թ. սելջուկների կատարած ավերածությունից փլատակների տակ, ինչպես և Դվինի միջնաբերդում նույն դարի և ավելի վաղ շրջանի կուլտուրական շերտերում. ուստի նրա ժամանակը ճիշտ որոշվում է 10—11-րդ դարերով: 12—13-րդ դարերի կուլտուրական շերտում նկարագրված հախճապակին չի հայտնաբերվել: Այս միագույն, փորագիր և ծակոտկեն հախճապակին եղել է շատ թանկարժեք և արժանավորվել է ֆեոդալական վերնախավի շրջաններում, որոնց պատվերով և արտադրվել է այն: Հետագայում այդ տիպի հախճապակին դուրս է մղվել նոր ճաշակին համապատասխանող զարդարոճ հախճապակու արտադրությամբ: Բաց կաթնավուն ֆոնով փորագիր և լուսաթափանց զարդերով հախճապակու արտադրությունը հանդիպում է հետագայում ևս, սակայն ինչպես կտեսնենք, արդեն կատարված է զարդարման այլ տեխնիկայով՝ գծազարդի և գոմանկարի գուգակցությամբ:

10—11-րդ դարերի լուսաթափանց ծակոտկեն հախճապակու խոտան հայտնաբերվել է Դվինում, որտեղ վերջին տարիների (1948—1956 թթ.) ընթացքում գտնվել են այդ խեցեղենի ավելի բազմաթիվ նմուշներ, քան Անիում: Ահա այս փաստերի հիման վրա Կ. Ղաֆազարյանը Անիին հատուկ համարված ծակոտկեն լուսաթափանց հախճապակու առտադրության կենտրոնը համարում է Դվինը¹: Սակայն Անիում այդ խեցեղենի գյուտերը հատուկ կենտ չեն, այլ բազմաթիվ և ոչ մի հիմք չկա միջնադարյան Հայաս-

տանի կավագործության երկու խոշորագույն կենտրոններից մեկը հանդիսացող Անին, որը արտադրում էր բազմատեսակ հախճապակի, շհամարել լուսաթափանց ծակոտկեն հախճապակու արտադրության վայրերից մեկը, մանավանդ որ Դվինի և Անիի հախճապակե անոթները թեև իրար մոտ են, բայց տարբերվում են իրարից խեցիով՝ Դվինի հախճապակու խեցին, ինչպես պարզել է Շելկովնիկովը, ավելի խիտ է, մեկ միավորով ավելի կարծր և փոքր ինչ վարդագույն:

Ունևոր խավերի համար արտադրված հախճապակյա թասերը և այլ անոթները միաժամանակ հաճախացել են դեղարվեստական բարձրարվեստ իրեր: Հաճախ նրանք զարդարված են գծազրկու եղանակով: Ամենից ավելի սիրված զարդը այստեղ եղել է վարդյակը: Դվինում և Անիում սովորական են հինդ, վեց և ամենից ավելի ութ պսակաթերթ ունեցող վարդյակները, զուգորդված բուսական օրնամենտի, շրջանների և լուսաթափանց ծակոտիների հետ:

Դվինի սպիտակ-կաթնավուն մի Լ. սսի վրա հանդիպում է ութ պսակաթերթով վարդյակ, որը առնված է շրջանակի մեջ, պսակաթերթերի ծայրերը կլորացված են և ներսնց արտնքում ստացվել է եռանկյունի պատկեր, որը սեղմելով փոս է զցված և զարդարված է լուսաթափանց ծակոտիներով: Սեղմելու միջոցով ձվածիր շրջանակներ կամ կիսաշրջանակներ են ստացված նաև պսակաթերթերի վերին լայն մասում՝ ամեն պսակաթերթի վրա մի հատ, որը կենտրոնում ունի երեքնուկի տերևի նման զարդ: Այս զարդը կամ ծաղիկը ռելեֆ է երևում, որովհետև ֆոնը սեղմելով իջեցված է և այս փոս ընկած տեղերում էլ արված են լուսաթափանց անցքերը: Այս բոլոր զարդերը կատարված են թաց կավի վրա, ապա ծածկված թափանցիկ ջնարակով:

¹ Կ. Ղաֆազարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 218:

¹ Արթուր Պոպը գծագիրը հախճապակու վրա թվագրում է 9—10-րդ դարերով (A Survey of Persian Art, vol. V թ. 183—184.)

Վարդյակների ստակների վերին մասում գրոշմված ծակոտկեն կամ սեղմված ծաղիկը երբեմն ունենում է ցողուն, որը պսակաթերթի կենտրոնով իջնում է դեպի թատհատակը կամ այդ զարդը փոխարինվում է կոբալտի կապույտ շերտերով ու ցայտքերով: Վեց կամ ութ պսակաթերթերով և զարդերի ճիշտ նույն մանրամասնություններով թասեր և պնակներ, ինչպես տեսանք պատրաստել են ոչ միայն սպիտակ, այլև կարմրավուն կավից թե՛ Դվինում և թե՛ Անիում: Հետաքրքրական է, որ թասի կամ պնակի սյա տիպը դուրս է եկել երկրից և հասել հեռավոր խերսոնես, որտեղ պիլոփնեթի ժամանակ միջնադարյան շերտում գտնվել է ութ պսակաթերթ ունեցող մեծ վարդյակով զարդարված մի ջնարակած պնակ, որի պսակաթերթերի վերին մասում տեսնում ենք նույն ոճավորված ծաղիկը, որից մի գիծ՝ ցողունը իջնում է դեպի հատակը: Միջնադարյան խերսոնեսի բաղամայս պեղումների արդյունքներն ուսումնասիրող Ա. Լ. Յակոբսոնը նշելով, որ թասերի կամ պնակների նման զարդերը բնորոշ են Հայաստանի խեցեղենի համար, շարունակում է. «Շատ հնարավոր է, որ խերսոնեսի վարպետները վերարտադրելով ակարագրված օրնամենտը կարմրակավ խեցեղենի վրա, ինչպես դա Հայաստանում էր արվում, ծանոթ էին Անդրերկրիկասի օրինակներին»¹:

Կարելի է ենթադրել, որ խերսոնեսում գտնված թասը պատրաստվել է 13—14-րդ դարերում, գաղթական անեցիների տարած թասերի օրինակով²:

Դվինում և Անիում գտնվել են նաև կապույտ, փիրուզագույն և մանուշակագույն թասեր՝ վարդյակներով ու ծակոտկեն զարդերով: Դվինի մի թասը ունի կապույտ գույն,

միայն ինչ պսակաթերթերով վարդ, պսակաթերթերի լայն մասում ծակոտկեն շրջանակ, իսկ վերին մասում, ծայրերի միջև բնորոշ եռանկյունիներ, որոնք թեև նույնպես կատարված են սեղմումով, բայց ծակոտկեն զարդեր չունեն:

Իվինից և Անիից հայտնի են նույն տեսակի կատարված, նույն բնորոշ շրջագույների (սպիտակ-կաթնավուն, կապույտ, փիրուզագույն և մանուշակագույն) թասեր: Արանց վրա վարդ չի պատկերված և դրա փոխարեն դժագրված է շուրջանակի անցնող լայն դոտի (Ֆրիլ), որի վրա գրոշմով սեղմելու եղանակով արված են բուսական օրնամենտներ, առավելապես երեք բլթակներով կտրտված, երբեմն անբնդհատ գալարվող տերևներ, լուսաթափանց անցքերի դուգակցություն: Կան և թասեր առանց լուսաթափանց անցքերի: Երբեմն թասերի լայն գոտու վրա բուսական օրնամենտի փոխարեն սեղմելու եղանակով արված են հարթ, բայց ռելեֆ թվացող շրջանակներ:

Թասերի լայն գոտին կամ Ֆրիլը ավելի բնորոշ է խորը թասերին կամ կիսատակառածև անոթներին, որոնց վրա գոտին սեղմված կամ դրոշմված է դրա կողմից և դարձյալ լինում է մեծ մասամբ բուսական օրնամենտ՝ լուսաթափանց ծակոտիներով շրջանակներ, երբեմն էլ ավելի մեծ շրջանակի վերին մասում փոքրիկ շրջանակ ծածկված լուսաթափանց ծակոտիներով: Դվինում գտնված տակառածև մի երկու անոթների (№ 1794/477) սպիտակ ջնարակի վրա տեղ-տեղ կոբալտով դրված են կապույտ մեծ բծեր:

Բացի վարդերից ու գոտիներից հանդիպում են նաև այլ կարգի զարդեր: Դվինի մի թասի վրա ներսի շրջանակի մեջ դժված է քառանկյունի դոգավոր կողերով մի պատկեր, որի կողերի և շրջագծի միջև մնացած երկարով ձվածիր մասերը ծածկված են բուսական օրնամենտով և լուսաթափանց ծակոտիներով: Ծակոտկեն հախճապակու

1 А. Л. Якобсон, Средневековый Херсонес (XII—XIV вв.) Материалы и исследования по археологии СССР, № 17, стр. 180.

2 Б. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина. Աշխատություններ ՀՊՊԹ., հատ. IV, էջ 43:

բեկոր գտնվել է հին Կանձակում, որտեղ սակայն այդ հախճապակին հազվագյուտ է¹:

Նկարագրված տիպի ծակոտկեն թվացող հախճապակի, ավելի կարծր խեցիով արտադրվել է նաև Իրանում և թվագրվում է 10—11-րդ դարերով²:

Սպիտակ-կաթնավուններից բացի հանդիպում են նաև երկնագույն ավսեններ: Իրանցից մեկը (Ձ 475, դ—1946) ամբողջական է, բերանի շրջագիծը 30 սմ, բարձրությունը 7 սմ, գտնվել է Դվինում: Սրա հատակին, թրծելուց առաջ, թաց վիճակում գծագրված է մի թևավոր առյուծ կնոջ դրվածակով. առյուծի շուրջը ազատ մնացած տեղերում արված է բուսական օրնամենս գծագրերու և սեղմելու միջոցով: Առյուծը և բուսական օրնամենսը առնված են շրջագծի մեջ, որոնցից վերև ավսենի մակերեսը մինչև եզերքը բոլորվին ազատ է թողնված և ասես կազմում է հարթ գոտի, ետ ծրված շուրթը զարդարված է կտրատված անընդհատ տերևով, որը շրջան է կազմում: Կնոջ գլխարկը կիսաշրջանի տեսք ունի և ծածկում է դեմքը մինչև հոնքերը: Գլխարկի վրա արված չորս զուգահեռական շարք կազմող փոսիկների շնորհիվ այն տպավորություն է ստացվում, թե կարծես գլխարկը դործված լինի: Կենդանիների, թռչունների և բուսական գծագիր պատկերներով փխրախեցի հախճապակին Ա. Պոպը թվագրում է 11—12-րդ դարերով³:

Հախճապակյա անոթները տարբեր են ոչ միայն չափով ու մեծությամբ, այլև ձևով, և ժամանակի ընթացքում նրանք մի շարք փոփոխություններ են կրել: Բացի թասից ու խորը կիսատակառած անոթներից, հանդիպում են նաև խոշոր ավսեններ, որոնց շուրթը 2—3 սմ. լայնությամբ թեք-

ված է դեպի դուրս: Դվինում գտնված մի մեծ փիրուզագույն ավսենի վրա (Ձ 1794/234) գծագրված է ներսի ամբողջ մակերեսը բլունող շորս պսակաթևերով ունեցող վարդ, որի պսակաթևերի միջից նրանց երկայնքով անցնում է մեկական լայն գիծ. պսակաթևերի միջև սեղմելու եղանակով նկարված են չորս վարդյակներ, որոնց վերևից և ներքևից մեկական կտրատված տերև կա: Դեպի դուրս ծոված շուրթի վրա շեղ գծեր են արված, փոս գծերի լայնությամբ շնորհիվ չփոսացվածները ունեն հեն երևում: Այս ավսենի զարդերը ձևափոխված են, ունեն թվացող հարթ, կլոր շրջանակները, որոնք հանդիպում են 10-րդ դարի և 11-րդ դարի առաջին կեսի թասերի դոտիների վրա, այստեղ վարդյակների են փոխարկված, իսկ ավսենների շուրթերի վրայի կտրատված եզրերով անընդհատ տերևը՝ շեղ գծերի. այնուամենայնիվ այս ավսեն ավելի հեռու է 12-րդ դարի վերջերի և 13-րդ դարի ճոխ գծագիր ունեցող խեցեղենից, քան 10-րդ դարի խոշոր ավսեններից, որոնց մասին կիսափի ստորև: Այս ավսեն պետք է թվագրվի 11-րդ դարով:

Նթն 10-րդ դարի համար բնորոշ են բոլորակ, ցած ոտքի վրա հենվող և դեպի վեր լայնացող ու բարակացող կողերով թասերը, ապա 11-րդ դարում երևան են դարչիս ավելի խորը, համարյա ուղղահայաց կողերով պնակները, որոնց եզրերը վերևում դեպի ներս և դեպի դուրս լայնացող պսակ են կազմում:

Կարճախեցի գծագիր հախճապակի: Դվինում հայտնաբերվել են մի քանի մեծ ավսեններ կամ մատուցարաններ, որոնք աչքի են ընկնում իրենց շքեղությամբ: Սրանք սպիտակ կաթնավուն միագույն են և ավելի կարծր խեցի ունեն, քան ծակոտկեն անոթները: Երբեմն բաց ֆոնի վրա տեղ-տեղ կորալտով ստացված դուրբիկան կապույտ գույնով բծեր կամ ցայտքեր են դրված, որոնք որևէ պատկեր չեն ներկայացնում, այլ բրուտը ձգտել է ստեղծել ընդարձակ բաց

1 И. М. Джафарзаде, Историко-археологический очерк старой Ганджи, стр. 78.
2 A Survey of Persian Art, vol. V, pl. 593c. 594Ac, 598.
3 նույն տեղում, pl. 597—602:

գուլչնի ֆոնի վրա այստեղ-այնտեղ վառ կապույտ գուլչնի ցայտքերով ստացվող էֆեկտ: Հիմնական դարձը սակայն սպիտակ ու կապույտ գուլչների խաղը չէ, այլ այս ավսեմատուցարանների վրա մեծ խնամքով և բարձր արվեստով կատարված դժագիրը:

Այս ավսեները պատկանում են ոչ ուշ քան 10 դ. և 11-րդ դարի առաջին կեսին, իսկ 12—13-րդ դարերի շերտերում չեն հանդիպում¹:

Դվինի այս տիպի ավսեներից երկուսը միադուլչն են՝ բոլորովին սպիտակ, յուրաքանչյուրի տրամագիծը՝ 37 սմ, բարձրությունը՝ 8,5 սմ, ոտքի բարձրությունը՝ 1 սմ, տրամագիծը՝ 8 սմ: Ներսից թաց կավի վրա գծագրված է բուսական և երկրաչափական զուսպ օրնամենտ, ապա սլատած թափանցիկ սպիտակ ջնարակով, որի տակից պարզ նկատելի է դժագիրը: Մի այլ, ավելի փոքր չափերի, այն է՝ 25 սմ, տրամագծով և 7 սմ բարձրությամբ ունեցող ավսեի (№ 1794/192) վրա գծագրված է երկար ու սուր եղջյուրներով մի ինչ-որ առասպելական թևավոր կենդանի, որի շուրջը գծագրված են ոճավորված բուսական օրնամենտներ՝ կտրտված տերևներով. նույնպիսի տերևների անընդհատ ժապավենը շրջան է կազմում ավսեի դեպի դուրս ծուլած եղերքի վրա:

Ավելի շքեղ է այն մեծ ավսե-մատուցարանը (№ 1794/473), որի բերանի բացվածքը, կտ ծուլած շուրթերն էլ հաշվելով՝ 37 սմ է, բարձրությունը՝ 8,5 սմ: Դեռ թաց կավի վրա փորագրված է ինչ որ առասպելական կենդանի կամ հրեշ, որն ունի երկու շատ երկար եղջյուրներ և թռչունի մարմին: Գծագրությունը կատարված է մեծ խնամքով ու զուգակցված սեղմելու եղանակի հետ: Հենց այս տիպիկայով էլ կատարված է բուսական օրնամենտը, որը բռնում է հրեշի շուրջը ազատ մնացած տեղերը: Ավսեի

դեպի դուրս ծուլած եղերքի վրա գծագրված է անընդհատ իրար հատող և շրջանակներ կազմող զուլդ պարաններից հյուսված մի դոտի: Ավսե-մատուցարանի ընդարձակագույն և շատ սպիտակ կաթնավուն ֆոնի վրա երեք տեղով կորալտով դրված կապույտ խոշոր և ցրված ցայտքերը առանձին շրեյուկուն են հաղորդում նրան (տխտ. LIII ք):

Երբևմն գծագիրը փոխվում է փորագրություն՝ առաջացնելով ուելեֆ և փոս ընկած գարգերի խաղ (տխտ. LIV):

Կիսաքափանցիկ հախճապակի: Դվինում և Անիում 10—11-րդ դարերում արտագրվի է նաև ճենապակու նմանեցված կիսաթափանցիկ հախճապակի: Այս երկու քաղաքների սելզման ժամանակ գտնվել են այնպիսի սպիտակ-կաթնավուն թասերի խնդիներ, որոնք շատ կարծր են, կիսաթափանցիկ և քիչ են տարբերվում ճենապակուց. խեղին գծագրված է թաց կավի վրա արված դանդիկ գարգերով, որոնք կատարված են ճնշման կամ սեղմելու եղանակով: Սրանք է Անիում գտնված կարծրախեցի և կիսաթափանցիկ մի թասի դեղարվեստական ձևավորումը, որի պահպանված բեկորի վրա երևում են յոթ ուելեֆ պսակաթերթերի ծայրերը և ասես թասը նստած է մի խոշոր ծագի մեջ: Թասի ներսում կա խաղողի որթի ոճավորված գալարվող գոտի, նույնպես գծագրված թաց կավի վրա¹:

Դվինում գտնվել է նույնպիսի կիսաթափանցիկ կարծր խեցի ունեցող մի թաս, որի դրսի կողմից ոտքից դեպի վեր մինչև թասի ²/₃-ը բարձրանում են համատարած ուելեֆ շեղ գծեր, իսկ վերին մասը բոլորովին հարթ է, ողորկ (տխտ. LV ք): Դվինում գտնված մի այլ թաս դրսից ունի վարից վեր անցնող ուելեֆ եղերք, որոնց օղնություն թասը բաժանված է պսակաթերթերի, իսկ սրանց վերին ծայրերը աղեղնաձև բոլորակ են և կազ-

¹ Արթուր Պոպը գծագիր գարգերով հախճապակին թվագրում է 9—10-րդ դարերով: A Survey of Persian Art, vol. V, pl. 183—184.

¹ Б. А. Шелковников. Художественная керамическая промышленность..., стр. 30—31.

մում են թասի շուրթը՝ տալով սրան ալիքա-
ձև տեսք, իսկ ամբողջ թասը ասես մազնու-
լիայի ծաղիկ լինի:

Ըստ Բ. Շելկովնիկովի, այս թասը բերված է Չինաստանից¹: Նման թաս գտնվել է նաև Իրանում և Արթուր Պոպը դա համարում է չինականի օրինակով տեղում պատրաստ-
ված իր, թվագրելով 10-րդ դարով²:

Ուշագրավ է, որ վարպետի նշանը հանդի-
պում է ինչպես կարծրախեցի, և երևակայա-
կան կենդանիների նկարներ ունեցող, նույն-
պես և կրտսթափանցիկ հախճապակյա ա-
նոթների վրա: Ավելին, Դվինում վերջին տա-
րիների ընթացքում գտնվել են նույնպիսի
կրտսթափանցիկ թասեր, որոնք նկարազարդ-
ված են ոսկեգույն զարդերով: Հետևաբար
զրանք արտադրվել են նույն կենտրոնում և
ավելի հավանական է Դվինում՝ միևնույն
արհեստանոցում:

Իրանում ևս հանդիպում է կրտսթափան-
ցիկ հախճապակի³, բայց որակով շատ պի-
ջում է հայկականին:

Դվինում և Անիում 10—11-րդ դարերում
պատրաստվել են նաև հախճապակյա այլ
թասեր, ափսեներ, խոշոր պնակներ, փար-
չեր, կճուճներ, գծապիր և դրոշմված, խորա-
բանդակ և այլ զարդերով: Նման կճուճները
ունենում են մինչև վեց զեղեցիկ ձևավորված
կանթեր

Ուսումնասիրելով Դվինի և Անիի 10—
11-րդ դարերի հախճապակի անոթները,
զժվար չէ նկատել, որ զրանք, նույնիսկ ընդ-

1 Б. А. Шелковников, Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья. «Советская археология» XXI, 1954, стр. 369.

2 A Survey of Persian Art. vol. V, pl. 589 A, c, տեքստը vol. II, p. 1504.

3 Ըստ երևույթին այս կրտսթափանցիկ հախճա-
պակին նկատի ունենալով, հոլանդական գիտնական
Հանրի Գալլաուն ենթադրում է, թե Իրանում 10-րդ
դարում արտադրել է ճենապակի (фарфор). Анри
Галлау, Существует ли фарфор в Иране в
средние века. См. III Международный кон-
гресс по иранскому искусству и археологии,
Москва-Ленинград. 1939. стр. 69.

հանուր ձևերով քիչ են կրկնում մեկը մյու-
սին, իսկ զարդերով վերին աստիճանի բազ-
մադան են: Անգամ այն դեպքում, երբ ընդ-
հանուր նկարը նույնն է, մանրամասնու-
թյունների մեջ այնուամենայնիվ տարբե-
րություններ կան: Այստեղից կարելի է անել
այն եզրակացությունը, որ Դվինում և Անիում
10—11-րդ դարերում հախճապակու արտա-
դրությունը թեև զգալի շափեր էր ընդունել,
բայց դեռևս առավելապես անհատական
պատվերի բնույթ էր կրում և շուկայական
արտադրություն չէր դարձել:

Փխրախեցի, վերադիր զարդերով հախ-
ճապակի: Դվինի համար բնորոշ է լայն գծե-
րով, խորաքանդակ զարդերով կապույտ
գույնի հախճապակին: Խորաքանդակ գծերի
լայնությունը շնորհիվ ֆոնը ունի տեսք ունի:
Ամենատարածվածն է սպիրալաձև և ներսում
ունի զարդերով խորաքանդակ շրջանաձև
զարդը: Զարդաքանդակը զուսպ է, գունավոր
կապից պատրաստված ջնարակած աման-
ների երկրաչափական մեծ մակերես ունե-
ցող և խճճված օրնամենտը այստեղ չի
հանդիպում, թեև արտադրությամբ նրանք
ժամանակակից են: Խեցու գույնն էլ, ի տար-
բերություն փրանական, միջին ասիական
հախճապակու, երկներանգ չէ, այլ դուրե-
կան միագույն է: Դվինում տիրապետում է
կապույտ գույնը, Անիում՝ երկնագույնը կամ
փիրուզագույնը:

Այս տիպի հախճապակին երբեմն ունե-
նում է վերադիր զարդեր: Բրծելուց առաջ
առանձին պատրաստված են մարդկանց դի-
մակներ և կայքված պատրաստի անոթի
վրա: Վերադիր զարդեր ունեցող հախճա-
պակի բացի Դվինից, որտեղ նա ամե-
նից շատ է գտնվել, հանդիպում է նաև
Անիում, որտեղ վերադիր դիմակներից բացի
գտնվել են նաև 16 սրակ ունեցող վարդ
լակներ: Նույն տիպի հախճապակի գտնված
է նաև Վրաստանի Դմախիսի և Աղբրեջանի
Դանձակ քաղաքներում: Վերադիր զարդ-
դիմակների թվում կան այնպիսիները, որոնք
թագակիր են (№ 1617/331), ամենատարած-

վածը դինվորականի բնորոշ գլխարկն է, որն ունի ահանջներ, կան և սրածայր դըլխարկներ: Մարդկանց դիմակներից մի քանիսն ունեն երկար մորուր:

Բաղի դիմակներից, հանդիպում է նաև պարանաձև ռեյեֆ հյուսվածքը և խոշոր կոճակաձև դարդը, որոնք նույնպես պատրաստվել են առանձին և կադվիյ թաց կավի վրա թրծելուց առաջ (տխտ. LVI):

Այս տիպի հախճապակին ամենուրեք, ուր նա հանդիպում է, հայտնաբերված է 12—13-րդ դարերի կուլտուրական շերտում և նրա արտադրության պատկանելը այդ դարերին, որևէ կասկածանք չի առաջադնում: Մերձավոր Արևելքի խեցեղենի լավագույն գիտակ Բ. Շելկովնիկովի կարծիքով այս տիպի հախճապակին հատուկ է Հայաստանին և բնդհանրապես Անդրկովկասին ու նրանից դուրս չի հանդիպում¹:

Նույն 12—13-րդ դարերում Դվինում և Անիում արտադրվում էր և այնպիսի հախճապակի, որի կապույտ կամ փիրուզագույն ֆոնը դարդարված էր լինում ավելի ևս մուգ շագանակագույն կամ մուգ կապույտ ներկով: Սրանց վրա երբեմն հանդիպում են մարդկանց պատկերներ:

Դվինում գտնված մի թասի երկնագույն կամ բաց փիրուզագույն ֆոնի վրա սև ներկով նկարված է մի սիրեն՝ կնոջ գլխով թըւշուն: Կնոջ գլխարկը հարթ է, այտերի կողքերից կախված են մազերի հյուսերը: Սիրենը բռնում է թասի մի շուրթից մինչև մյուսը (դուխը մի շուրթին, պոչը մյուս): Սիրենի կողքերին նկարված են ճյուղեր, կոկոններ և առջևը մի թռչուն, սսես ինչ որ հեքիաթային տեսարան է պատկերված (տխտ. LVII):

Արվեստով այս հախճապակին բավականաչափ մոտ է Սուլթանաբաղի շողուն խեցեղենին:

Դվինում և Անիում արտադրվել է նաև շողուն կամ ոսկեփայլ զարդերով հախճա-

պակի, համեմատաբար փուխը խեցիով:

Անեի միօնարեղի 11-րդ դարում սելջուկների ժամանակ ավերված շենոեոի փատակնեոի տակ մնադած մի հոտում ոտնով էն տեոտեան շոտուն խեոեոեոի մի թաս և մի օտնի առ բեկորներ: Թասի (№ 776) վրա նկարված է թռչուն կնոջ գլխով (սիրեն) կողոեոեո ծաղիկներով ու կոկոններով պրասակած (տխտ. LVIII): Կնոջ դեմոո եոկարուկ է, ձվածիր, իսկ րիթր մեծ, մեանոաման տարեեր իրանական պատկերեերի մանոո դեմոոծեոով կյոո դեմոեոեո: Կեսաոոո թեերով սիրենը ավելի դեմամեկ է եոտեական նուեաոեո սիրեններից և ավելի մոտ է եերսոնեսում գտնված մի սափորի վրա նկատած երկու սիրեններին¹:

Եթե տվյալ դեպքում դժվար է ասել, թե այդ սափորը ծագում է Հայաստանից, ապա բնդհանրապես Հայաստանից եերսոնես տարված խեոեղենի մասին, ինչպես տեսանք ուրիշ փաստեր կան²:

Դվինում նույնպես գտնվել են Ռեեի, Սուլթանաբաոի տեոյր հեղեոոո շոոուն հախճաատեե թասեր և ափսեներ, սափոր (տխտ. LVX), Մի թասի (№ 1794/496) կատուլո ֆոնի վրա նկարված է եոկու գուդ թռչուն (թութակ), որոնք կանգնած են դեմ առ դեմ, շրջանակաձև և սպիրայաձև իրար հատոո օրնամենու և եղեուե կոնի ձեի ինչ որ պատկեր: Դուրեկան կապուլտ ֆոնով ոսկեգուե նեաոով շոոուն հախճաատեակա թասեո և ափսեներ ու նրանց բեկորներոո Դվինում պատահական գյուտեր չեն, սակայն մասնոոոտեան ուսումնասիրության հարո է վերանականապես որոշել՝ դոանք տեոում են արտադրված, թե ներմուծված են, կամ որ ավելի համոտեոեո է մի մասը տեղական է, մյուսը՝ ներմուծված Իրանից:

¹ Б. А. Шелковников, Художественная керамическая промышленность в средневековой Армении, стр. 29—30.

² А. Л. Якобсон, Средневековый Херсонес (XII—XIV вв., стр. 180—181).

¹ Б. А. Шелковников, Художественная керамика двинских раскопок, стр. 189.

Շողուն կամ ոսկեփայլ հախճապակին Հայաստանում քիչ թե շատ լայն արտադրութուն չունեցավ, հավանաբար այն պատճառով, որ նրա արտադրութունը նոր էր սկսվել, երբ սելջուկները ավերեցին Անին ու Դվինը, ծանր հարվածներ հասցնելով արհեստներին: Արհեստագործութունը մոտ մի դար ետ մնաց մի շարք արհեստների բնագավառում, իսկ երբ տեղի ունեցավ անհատական պատվերով արտադրութունից անցումը շուկայի համար արտադրության, ոսկեփայլ խեցեղենի շրջադարձ արտադրութունը լայն բնույթ չստացավ, մասնավանդ որ շուկա հանվում էր իրանական շնդհատված և շատ առաջադիմած ոսկեփայլ խեցեղենի բարձրորակ արտադրանքը, որի հետ տեղական՝ մի դար խափանված արտադրութունը մրցել չէր կարող:

Բ. Շելկովնիկովը դառնում է, թե Իրանի բարձրորակ դեղարվեստական խեցեղենը այն աստիճան ողողել էր հայկական քաղաքների շուկան, որ տեղական արհեստանոցները ոչ միայն ոսկեփայլ, այլև առհասարակ հախճապակու շուկայական արտադրության շանցան, որով և բացատրվում է 12—13-րդ դարերի տեղական հախճապակու ցածր որակը՝ 10—11-րդ դարերի նույնպես տեղական և ներմուծված հախճապակու համեմատությամբ¹:

Այս տեսակետը որոշ ճշտումների և լրացումների կարիք է դրում: Ամենից առաջ չի կարելի ասել, թե Հայաստանի բրուտենը ընդհանրապես հախճապակու շուկայական արտադրությանը շանցան. դա վերաբերում է միայն ոսկեփայլ հախճապակուն: 12—13-րդ դարերի այլ տիպի տեղական հախճապակու գյուտերը Անիում և Դվինում այնքան շատ են, որ կասկա-

ծանք չի մնում, թե հախճապակին Հայաստանում արտադրվել է ոչ միայն անհատական պատվերով, այլև շուկայի համար: Բացի այդ, սխալ կլինեք 12—13-րդ դարերի հայկական հախճապակու ցածր որակը նախորդ շրջանի հախճապակու համեմատությամբ բացատրել այն բանով, թե Հայաստանի քաղաքների ընակիչները հախճապակու մասսայական արտադրության շանցան: Ընդհակառակը, արհեստագործության բնագավառում հատուկ է այն, որ մասսայական առտադրանքը պատվերով կատարվող անհատական արտադրանքի համեմատությամբ ավելի ցածրորակ դործեր է տալիս: Բացառություներ իհարկե լինում են, բայց խոսքը դրանց չի վերաբերում: 12—13-րդ դդ. տեղական հախճապակին համեմատաբար ցածր որակ ունեւ մասնավանդ Ռեյի ոսկեփայլ հախճապակու համեմատությամբ: Իսկ ընդհանրապես այնքան էլ ցածրորակ չէր, թեև փոխը խեցի ունեւ: Բայց դա պետք է բացատրել հենց շուկայական արտադրանքին անցնելու հանգամանքով, նկատի ունենալով, որ տեղական հախճապակին 12—13-րդ դարերում արտադրում էր ոչ այնքան արտաքին, որքան ներքին շուկայի համար, իսկ ներքին շուկայում էլ սպասարկում էր ոչ թե ֆեոդալական վերնախավի, այլ ոչ շատ ունեւոր միջին ֆեոդալների և քաղաքի ունեւոր խավի պահանջները, քանի որ ավելի ունեւոր վերնախավը շուկայից զնում էր իրանական ոսկեփայլ հախճապակի:

Հախճապակին ավելի սահմանափակ կիրառություն է ունեցել ոչ միայն հասարակ (անջնարակ), այլև կարմրակավ ջնարակած խեցեղենի համեմատությամբ: Հախճապակուց պատրաստվել են ավելի սահմանափակ տեսակի ամաններ և իրեր. այնուամենայնիվ հախճապակյա խեցեղենի տեսակները այնքան էլ փոքրաթիվ չեն: Պեղումների ժամանակ դտնվել են տարբեր չափերի ու ձևերի բաղմաթիվ թասեր, շատ մեծ ափսեներ ու մատուցարաններ, պնակներ, կճուճի

¹ Б. А. Шелковников, Художественная керамическая промышленность в средневековой Армении, стр. 31—32.

նմանող լայնաբերան ուղղահայաց բարձր վզով, վերագիր գիմակներով անոթներ, տաշտաձև և կիսատակառաձև անոթներ, լայնաժերան պուլիկներ, բարձր վզով նեղ-բերան կուլիկներ, բարձր ոտքի վրա հենվող կամ առանց ոտքի ճրագներ, աղաթասեր, ուլունքներ և այլ իրեր: Դվինում գտնված մուգ կապույտ հախճապակե մեծ անոթի ուղեքի գոտու մի բեկորից սրի հաստությունն է 1,5 սմ. երևում է, որ արտադրվել են նաև բավականաչափ մեծ հախճապակյա անոթներ:

Դվինի և Անիի պեղումներով հայտնաբերված հարուստ հախճապակին հնագիտական-պատմագիտական խոշոր արժեք ունի, մանավանդ միջնադարյան հախճապակու ելրուպական հավաքածուները մեծ մասամբ պատահականորեն են կաղմվել, և անգամ շատ նմուշների արտադրության տեղը հայտնի չէ, իսկ պեղումներով հայտնաբերածները սակավ են (Սամարրայի հախճապակին):

Ձևաբանական խեցեղենի և հախճապակու զարդարման եղանակներն ու առանձնահատկությունները: Ձևաբանական խեցեղենի, ալգակես էլ հախճապակու առանձին տեսակների մասին խոսելիս այս կամ այն չափով շոշափվեց նաև նրանց գունավորումների և դարդարման այլ եղանակների հարցը, սակայն առավել ամբողջական պատկեր կաղմելու համար ավելորդ չէր լինի թվարկել դարդարման տարբեր եղանակները, որոնք մոտավորապես հետևյալն են:

1. Պատրաստի, բայց չթրծած ամանը ծածկվում է բաց գույնի, անթափանցիկ ջնարակով և թաց ջնարակի վրա կտրաչափով արվում է նկարը, սրը երևան է դալիս թրծելու ժամանակ:

2. Թրծած ամանը ծածկվում է բաց գույնի անգորով և անգորի վրա մետաղական օքսիդով արվում է որևէ երանգի նկար, որը երևան է դալիս թրծելու միջոցին, ստացվում է մուգ գույնի նկար բաց գույնի ֆոնի վրա:

3. Բաց վարդագույն անգորի վրա մի բանի մետաղական օքսիդներով տարբեր երանգավորումներ տալը կամ բույսերի, ծաղիկների, կենդանիների, թռչունների և մարդկանց պատկերներ նկարելը: Նկարների եղրագծերը սովորաբար ներկում էին մուգ գույնով՝ մանուշակագույն կամ շագանակագույն, որպեսզի թրծելիս մետաղե օքսիդի գույնը չտարածվի:

4. Թաց կավի վրա արված փորագիր դժազարդ, որը լցվելով բաց գույնի ջնարակով, առաջացնում է նույն գույնի ավելի մուգ երանգ: Փորագրության խորը լինելու դեպքում դժերը ուղեքի են երևում:

5. Հախճապակու սպիտակ կավի վրա նրա թաց ժամանակ արված դժազարդ, որը երևում է թափանցիկ ջնարակի տակից:

6. Միագույն թափանցիկ ջնարակով (կաթնավուն-սպիտակ, կապույտ, երկնագույն կամ փիրուզագույն և մանուշակագույն) լուսաթափանց անցքավոր խեցեղենի արտադրություն, երբ կավի վրա թաց ժամանակ արված անցքերը կամ ճնշումով խեցու շատ բարակացած տեղերը լցվելով թափանցիկ ջնարակով, առաջացնում են լուսաթափանց ծակոտկենս զարդ:

7. Անգորի վրա կատարված կամ անգորը մինչև խեցին քերված փորագիր գծազարդ. որը լցվելով բաց գույնի թափանցիկ ջնարակով, առաջացնում է տարբեր երանգներ. նախած այն բանին, թե ի՞նչ գույն ունի կավը և թե ի՞նչ հաստության շերտով է նստում գունավոր թափանցիկ ջնարակը:

8. Անգորի վրա խորաքանդակ գծազարդ, բայց ծածկված ոչ թե թափանցիկ, այլ անթափանցիկ ջնարակով:

9. Նորաքանդակ գծագրի մեջ գունավոր ջնարակով (կանաչ, դեղնա-շագանակագույն, մանուշակագույն և այլն) դանազան ֆիրուզներ և պատկերներ նկարելը ըստ գծագրի:

10. Ենթաջնարակային սև գույնի զարդ թափանցիկ ջնարակի տակ:

11. Դրոշմելու կամ սեղմելու եղանակով

արված դարձեր, լաջն խոր ընկնող դժերով սպիրալներ, ծաղիկներ, վարդեր, բուսական դարձեր:

12. Բաց գույնի անգորը ծածկված թափանցիկ ջնարակով, նկարազարդված նկարի ֆոնում անգորի հեռացման եղանակով: Անգորը հեռացված տեղում ստացվում է ավելի մուգ, սովորաբար շագանակագույն կամ դարչնագույն երանգ: Կամ միայն նկարն է արվում անգորով:

13. Բաց գույնի ջնարակի վրա մուգ գույնի ջնարակի հաստ շերտով ուելեֆ դարձեր անելը:

14. Վերագիր դիմակների, վարդյակների, կոճակաձև և հյուսված պարանաձև դարձերի կպցնելը խեցեղենի վրա՝ թրծելուց առաջ թաց վիճակում:

Բ. Շելկովնիկովը խոսելով զարդարման տարրեր եղանակների առաջացման ժամանակի մասին, նշում է, որ թաց ջնարակի վրա կոբալտով նկար անելը Մերձավոր Արևելքում (նաև Հայաստանում) առաջացել է 9—10-րդ դարերում: Նույն ժամանակներում Հայաստանում առաջացել է նաև բաց վարդագույն անգորի վրա մետաղական օքսիդներով գունավոր նկարներ անելը, թրծելուց առաջ թաց կավի վրա փորագիր գծազարդեր անելը, որը նրա կարծիքով, կիրառվել է 10—11-րդ դարերում, մինչև սելջուկյան արշավանքները, իսկ անգորի վրա փորագիր գծազարդեր անելը առաջացել և կիրառվել է 12—13-րդ դարերում: Մեր կարծիքով 10-րդ դարում է առաջացել նաև նկարի ֆոնում անգորը հեռացնելու եղանակով խեցեղենը զարդարելու տեխնիկան:

Խեցեղենի զարդարման մեջ առանձնահատկություններ նկատվում են նախժայնյան ժամանակներից, որ քաղաքում է արտադրվել ավյալ խեցեղենը, ում պատվերով և ում ճաշակի համեմատ է արվել զարդարանքը,

կամ, եթե խեցեղենը արտադրվել է շուկայի համար, ապա բնակչության որ խավի պահանջներն են հաշվի առնված: Անիի խեցեղենի զարդերի մեջ մարդկանց, կենդանիների, թռչունների պատկերները սովորական են, իսկ Դվինում ընդհակառակը դրանք, համեմատաբար, սակավ են հանդիպում:

Դվինում ջնարակած խեցեղենի մետաղական թթվուղների միջոցով արված նկարները ասես ավելի անխնամ են կատարված, հստակ եզրագծեր չունեն և թրծելու ժամանակ ներկը հրվել է, տարածվել, երբեմն էլ գույները ասես խառնվել են՝ առաջացնելով երանգների խաղ, որը առանձին հմայք է տալիս խեցեղենին: Այս տեսակի խեցեղենի սքանչելի օրինակ է հանդիսանում Դվինի վերևում նկարագրված թասը, որտեղ մի շարք գույնի համադրված են վստահորեն և համարձակ:

Անիում ընդհակառակը, նկարիչները խստորեն հետևել են մուգ գույնի կամ փորագիր եզրագծերի մեջ նկար անելու պահանջին և ներկերը այդ եզրագծերից դուրս չեն գալիս: Վերևում նշվեց, որ տարբեր էր նաև Դվինում և Անիում դործածված կավի գույնը (Դվինում բաց կարմիր, իսկ Անիում ավելի մուգ կարմիր): Բացի այդ Դվինի գունավոր խեցի ունեցող ջնարակած ամանեղենի փորագիր գծազարդերը ծածկում են թասերի, պնակների համարյա ամբողջ մակերեսը, խեցեղենի գույները ավելի վառ են ու երփներանգ, իսկ Անիում թե՛ գծազարդը և թե՛ գույները ավելի զուսպ են, համեմատ ու ավելի հաճելի երանգներ ունեն: Անիի հախճապակու համար ավելի բնորոշ է երկնագույն կամ փիրուզագույն երանգը, իսկ Դվինի հախճապակու գույներից տիրապետողը կապույտն է, մանավանդ 12—13-րդ դարերում: Բ. Շելկովնիկովը նշում է այն համայնքը, թե Անիի խեցեղենը իր զարդերով ավելի մոտ է վրացականին և հյուսիսային իրանականին, իսկ Դվինի խեցեղենը իր առատ ու խճողված զարդերով ու վառ

1 В. А. Шелковников, Художественная керамика двинских раскопок, стр. 189.

գույններով ավելի մոտ է միջին-ասիական խեցեղենին¹:

Անիի և Դվինի ջնարակած խեցեղենի վրա հաճախ հանդիպում են արարատառ (արաբեղեն, պարսկեղեն) մակագրություններ, սակայն ինչպես զարդերի միջին-ասիական կամ հյուսիս-իրանականին մոտիկ ձևերը, այնպես էլ արարատառ մակագրությունները դեռևս չեն նշանակում, թե այդպիսի խեցեղենը հայկական քաղաքների, նույնիսկ հայ բրուանների արտադրությունն է: Նախ հայկական քաղաքներում ապրում էին նաև արաբ, պարսիկ և ադրբեջանցի բնակիչներ ու արհեստավորներ: Այնուհետև՝ ակադեմիկոսներ Ն. Մառը և Հ. Օրբելին իրավացիորեն նշել են, թե ամեն առարկա, որն իր վրա կրում է արաբական դիր կամ ոչ զուտ հայկական գիտվող զարդ, ամեն դեպքում չի կարող զբախց բերված կամ ուրիշների արտադրած առարկա համարվել, ինչպես չի կարելի հայ չհամարել Արբաս, Հասան, Արու-Սահլ, Արու-Ղամր, Քարիմադին, Սահմադին, Փահրադին, Զալալ, Մամքան և այլ ոչ հայկական անուններ կրող հայերին: Ն. Մառը իրավացի էր, երբ նշում էր, թե փշխող վերնախավն իր կենցաղով բավականաչափ մոտ էր պարսկական, արաբական, սելջուկյան, հետագայում նաև մոնղոլական ֆեոդալական վերնախավի կենցաղին, անգամ գործածական անուններով, զգեստներով, կենցաղային իրերով, ումանք էլ աշխատում էին նմանվել իրենից հզոր և տիրապետող օտար ֆեոդալներին:

Պատահական չպետք է համարել, որ արարատառ մակագրությունները և ոչ զուտ հայկական տեսք ունեցող զարդերը հանդիպում են բացառապես ջնարակած ամանեղենի և հասնապակու վրա (աննշան բացառությամբ), քանի որ այս պատվերով արտադր-

ված խեցեղենի գործածողները եղել են դերադանցապես քաղաքի վերնախավին պատկանող բնակիչները, իսկ հասարակ խեցեղենի վրա հանդիպում են միայն հայերին արձանագրություններ, հայկական արվեստի համար միանգամայն բնորոշ զարդեր և պատկերներ, նաև քրիստոնեական նշաններ ու սյուժեներ՝ խաչ, եկեղիցի և նրա առջև աղոթող պատկեր և այլն¹:

Սակայն իրավացի չէր Ն. Մառը, երբ Հայաստանի քաղաքներում արտադրված ոչ հայկական զարդեր և արարական ու պարսկական մակագրություններ կրող խեցեղենի անկախությունը բացատրում էր միայն ֆեոդալական վերնախավի կենցաղի ու ճաշակի մոտիկությունը՝ արաբա-պարսկական, սելջուկյան կամ մոնղոլական ֆեոդալական վերնախավի կենցաղին և ճաշակին: Եղել են նաև այլ պատճառներ, որոնք անտեսել չի կարելի: Առաջին և ամենաէական պատճառն այն էր, որ Հայաստանի քաղաքների բրուանները հայկական զարդեր ու մակագրություններ ունեցող խեցեղենի հետ միասին, արտադրելով նաև ոչ հայկական զարդեր, արարական ու պարսկական մակագրություններ կրող խեցեղեն, ևլնում էին շուկայի պահանջից: Պետք է նկատի ունենալ, որ այս կարգի խեցեղենը արտադրվել է առավելապես, նույնիսկ կարելի է ասել բացառապես, 12—13-րդ դարերում, երբ Հայաստանի քաղաքների արհեստավորները հենց այդ ժամանակ անցնելով շուկայական արտադրության, սպասարկում էին նաև սելջուկների, հետագայում մոնղոլների պահանջները. չի կարելի մոռանալ այն, որ Հայաստանի քաղաքներում բացի հայերից, կար նաև պարսիկ, արաբ, սելջուկ, իսկ 13-րդ դարում՝ նաև մոնղոլ բնակչություն: Սելջուկյան և մոնղոլ-թաթարական քոչվոր կամ կիսաքոչվոր նվաճողները սովորաբար արհեստով ու արհեստագոր-

¹ В. А. Шелковников, Художественная керамическая промышленность в средневековой Армении. («Известия» АрмФАН-и, 1942 № 3—3, стр. 34).

¹ Н. Я. Марр, XI-я анииская археологическая кампания, стр. 58—59, а также Ани Ереван 1939, стр. 81—82, 199.

ծությամբ չէին պարապում, մանավանդ քաղաքներում, այլ նրանց նվաճած դարավոր բարձր կուլտուրա ունեցող Միջին Ասիայի, Իրանի, Անդրկովկասի, Միջագետքի, Ասորիքի և Փոքր Ասիայի բնիկ ժողովուրդներն էին արհեստներով դբազվողները և այդ արհեստները զարգացնողները:

Հայաստանի քաղաքների կառավարածական արտադրանքը մասամբ արտահանվել է, սրպիսի հանդամանքը պետք է հաշվի առնելիք ամանեղենը զարդարելիս: նայած թե արտահանութունը դեպի որ երկիրն էր կատարվում: Վերջապես հայկական քաղաքների արաբ և սլարսիկ բնակչության մեջ ևս արհեստավորներ կային, մանավանդ Դվինում, որը երկար ժամանակ արաբների վարչական կենտրոնն էր, ապա արաբական կամ րելջուկյան (ծագումով քուրդ) Մանուչյանների վարչական կենտրոնը, թեև պետք է ասել, որ օտարազգի արհեստավորների թիվը Հայաստանի քաղաքներում այնքան էլ մեծ չէր: Այս տեսակետից բացառութուն էին կաղմում նվիրկերտը, Խլաթը, Մանաղկերտը և մի քանի այլ քաղաքներ, որտեղ ոչ հայ բնակչութունը և արհեստավորները զգալի թիվ էին կաղմում: Սակայն այդ քաղաքներից և ոչ մեկը հնագիտական ուսումնասիրության առարկա չի դարձել և մեր ճգնադրած հնագիտական իրերից և ոչ մեկը չի ծագում այդ քաղաքներից:

Վերևում ասվածից կարելի է եզրակացնել, որ Դվինի, Անիի և Հայաստանի քաղաքների բրուտները 12—13-րդ դարերում արտադրելով և՛ հայկական, և՛ ոչ հայկական ոճի ու ճաշակի խեցեղեն՝ սպասարկում էին շուկայի համապատասխան պահանջները:

Վարպետների նշաններ կավե ամանների վրա: Հնում շատ երկրներում ստվորութուն է եղել կավե ամանների վրա դրոշմել կամ ներկով գրել որոշ նշաններ: Ռուսական կավագործները իրենց դրոշմը թողել են ձեռքով պտտեցվող սկավառակով պտտրաստված կոպիտ ամանեղենի վրա, ըստ որում փորագրութունը արվում էր սկավառակի վրա և

ներա արտապութունը ստացվում էր անոթների հատակին: Ոտքով պտտեցվող դուրդի վրա պատրաստված ամանեղենի հատակին, ինչպես նշում է Ռ. Ռիբակովը, ուս վարպետները մինչև 11-րդ դ. նշաններ չեն թողել:


Խերսոնեսում ամանեղենի վրա գրված նշանները, Ա. Յակոբսոնի ասելով, մեծ մասամբ ցույց են տալիս տվյալ ամանի պատկանիութունը այս կամ այն տիրոջը, մանավանդ թանկարժեք ամանների վրա տիրոջ նշան դնելը սովորական երևույթ է եղել: Իրանական խեցեղենի վրա նույնպես հանդիպում են թե՛ վարպետների, և թե՛ պատվիրատուների նշանները: Երբեմն էլ ամանի տերը նշանը դնում էր թանաքով կամ ներկով շուկայում գնելուց հետո:

Հայաստանի միջնադարյան խեցեղենի վրա հանդիպում են և դրոշմված, և ներկերով գրված նշաններ: Բնորոշն այստեղ այն է, որ անոթների հատակին ներկերով գրված նշանները հանդիպում են հախճապակյա բարձրորակ և թանկարժեք իրերի վրա և զրժվար է ասել, դրանք վարպետների, թե պատվիրատուների նշաններն են: Միայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ պատվիրատուների անոթները Հայաստանում արտադրված խեցեղենի վրա հիշատակված են լինում ոչ թե հատակին, այլ առավել հայտնի տեղերում, երբեմն մի երկար տող կաղմող արձանագրության մեջ, կարելի է ասել, թե անոթների հատակին թողնված նշանները ավելի շուտ պատկանում են վարպետներին: Իրա օգտին է խոսում և այն փաստը, որ հաճախ այս նշանները ոճավորված կանոնիկ տեսք են ստացել և համարյա անընթեռնելի են: Բացի այդ, ջնարակած թասերի ու պնակների հատակին հաճախ հանդիպում են հատուկ ձևի բավականաչափ բարդ ուղեք գծադիր ունեցող արտապութուններ, որոնց

1 Б. А. Рыбаков, Ремесло древней Руси, стр. 75.

2 А. Л. Якобсон. Средневековый Херсонес, стр. 117.

խորաքանդակը եղել է դուրգի սկավառակի վրա, իսկ դրանք ուրիշ բան լինել չեն կարող, քան եթե ոչ վարպետների նշաններ:



Նկ. 34. Վարպետների նշաններ, ջնարակած պնակների հատակների վրա (Գառնի), ՊՊԹ:

Պետք է ասել, որ անոթների հատակին դուրգի սկավառակից դրոշմված նշանները հանդիպում են ավելի ուշ, այն է 12—13-րդ դարերի՝ շուկայի համար և ոչ պատվերով արտադրված կարմրակավ աճուրդների, մանափանդ թասերի ու պնակների վրա, որոնց արտադրությունը ավելի մասսայական է եղել: Ուրեմն, կասկած չի կարող լինել, որ դրանք վարպետների նշաններ են: Անիի, Դվինի և Գառնիի միջնադարյան խեցեղենի վրա վարպետների նշաններ հաճախ են հանդիպում և շատ բազմազան են լինում: Դրա հետ միաժամանակ նույն նշանը հանդիպում է մի քանի նույնատիպ պնակների վրա, որը

արդյո՞ք է այդ անոթների մասսայական արտադրության:

Վարպետների նշանները ամենից շատ հանդիպում են 13—14-րդ դարերում, այդ է պատճառը, որ Գառնիում, որն իր գոյությունը շարունակում էր Դվինի անկումից հետո էլ, վարպետների նշանների թիվը համեմատաբար ավելի մեծ է, քան Դվինում, որը կործանվեց 13-րդ դարի 30-ական թթ.: Թողնված նշանների ուսումնասիրությունը մի առանձին կարևոր թեմա է և դեռ սպասում է իր ուսումնասիրողին (նկ. 34):

5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

10—13-րդ դարերի քաղաքների կավագործության մեջ զգալի տեղ է դրավել նաև շինարարական խեցեղենի՝ աղյուսի, կղմինդրի, տերակոտային աղյուսների (ձևավոր մանրիկ աղյուսներ շենքերի ճակատները զարդարելու համար), շքաղյուսների և ջրատար փողակների (գունդերի) արտադրությունը:

Աղյուսի արտադրություն: Հայաստանում շատ հին ժամանակներից են սկսել աղյուս արտադրել: Դեռևս երրորդ հազարամյակի վերջերում մեր թվագրությունից առաջ, երբ Հայաստանի բնիկները քարե դարից նոր էին անցել մետաղի, այն էլ միայն պղնձի օգտագործմանը, շթրծած աղյուսից բնակարաններ էին կառուցում¹: Ուրարտացիները, ինչպես ցույց տվեցին Թոփրակ-կալեի (Վանի մոտ) և Կարմիր-բլուրի պեղումները, արդեն խոշոր շափերով օգտագործում էին շթրծած աղյուսը պալատական շինարարության մեջ: Զթրծած աղյուսը հնագույն ժամանակներից

¹ Նկատի ունենք Շենգավիթի էնեոլիթյան շրջանի աղյուսաշեն բնակարանները:

սկսած օգտագործվում է Արարատյան դաշտի և այլ դաշտավայրային գավառների բնակավայրային շինարարության մեջ:

Ճիշտ է, Հայաստանը քարի ճարտարապետության երկիր է և մոռումենտալ շենքեր կառուցվել են քարից, սակայն 9—13-րդ դարերում մի շարք քաղաքներում, մանավանդ Դվինում, հում և թրծած աղյուսից կառուցված շենքեր շատ կային: Հում աղյուսից կանգնեցնում էին նաև քաղաքների պարիսպներ (այգպիսիմ էին օրինակ Դվինի պարիսպները): 10—13-րդ դարերում թրծած աղյուսը սկսում են ավելի մեծ չափերով օգտագործել շինարարության մեջ, քան մինչ այդ (տխտ. LX ա): Եթե 5—7-րդ դարերի հայկական ճարտարապետության մեջ աղյուսով կառուցված մոնումենտալ շենք մինչև այժմ հայտնի չէ, ապա 12—13-րդ դարերում աղյուսով կառուցվել են նույնիսկ եկեղեցական շենքեր:

Աղյուսը ամենուրեք հավասարապես չի օգտագործվել: Եթե Անիում մոնումենտալ, անգամ սովորական ընակելի շենքերը կառուցվել են քարով և աղյուսաշեն շենքերը բացառությու են կազմել, ապա Դվինում բացառությու կազմել են քարաշեն շենքերը: Անգամ Դվինի միջնաբերդի պալատական շենքերը 8—13-րդ դարերում կառուցվել և քանիցս ավերվելուց հետո վերաշինվել են հում և թրծած աղյուսով: Դվինի քաղաքային պարիսպների մեջ գտնվող շահաստանում մինչև այժմ էլ երևում են 12—13-րդ դարերում թրծած աղյուսից կառուցված մնացորդներ: Աղյուս պատրաստող վարպետը աղյուսաբեկ անունով հիշատակված է կավագործի կողքին իբրև ինքնուրույն արհեստավոր. «որ ի կառագործին և յաղիաարկին կապեալ կային... և այժմ ստամանայ հրամայէ յաղիաարկի աշխատելո՛ւ»:

Չթրծած աղյուսը պատրաստվում էր գլուղներում, այլև քաղաքներում, առավելապես աղքատ ընակչության պետքերի համար, թեև

կան հում աղյուսից կառուցված պալատական շենքեր Դվինի միջնաբերդում: Թրծած աղյուսի արտագրությունը պահանջում էր ունենալ թրծելու հնոց, վառելիք և թրծելու արհեստի հմտություն: Դվինը եղել է աղյուսագործության խոշոր կենտրոն: Այդտեղ արտագրվել է կարմիր ու դեղին գույնի աղյուս: Աղյուսագործները կավե անոթեղեն չէին արտադրում, այլ զբաղվում էին միայն իրենց արհեստով: Աղյուսագործները կուտակում էին թրծած աղյուսը հնոցի մոտ, ուր և վաճառում էին իրենց արտադրանքը: «Աղյուսավաճառ» բառի գոյությունը միջնադարյան Հայաստանում չպետք է դիտվի որպես աղյուսագործից տարբեր և միայն աղյուսի վաճառքով զբաղվող մարդկանց առկայության ապացույց:

Կղմինդրի արտադրությունը: Կղմինդրի արտադրությունն էլ Հայաստանում հին պատմություն ունի, այն սկսվում է հելլենիստական, թերևս ուրարտական շրջանից: Գառնիի 1-ին դարի հեթանոսական տաճարը ծածկված է եղել կղմինդրով. նման ծածկ ունեին և Արտաշատի ու Տիգրանակերտի շենքերը: Ֆեոդալական Հայաստանում 4—10-րդ դարերի մոնումենտալ շենքերը, մանավանդ եկեղեցիները ծածկված են եղել կղմինդրով: Սկսած 10-րդ դարից կղմինդրի ծածկի փոխարեն, արվում է քարե ծածկ, ըստ որում քարերին տրվում է կղմինդրի տեսք:

10-րդ դարից հետո ծածկի կղմինդր միջնադարյան Հայաստանում քիչ է գործածվել: Այդ է պատճառը, որ Անիի, Դվինի և Գառնիի պեղումների ժամանակ կղմինդրը հայտնաբերվել է առավելապես 10-րդ դարի կամ ավելի վաղ ժամանակների կուլտուրական շերտերում:

Բայց նկատենք, որ Ֆրիկի մի տաղից երևում է, որ նրա ժամանակներում էլ կղմինդր և աղյուս արտադրում էին, այն էլ վաճառքի համար: Այդ տաղում պատմվում է, թե մարդու գանգի բեկորները աղբանոց են նետվում, ապա աղբը փրկե պարարտանյութ տարվում է դաշտը և այստեղից էլ մի

1 ՆՉԹ, աղիաարկ բառը:

վարպետ վերցնելով ողբ դանդի բեկորները՝ հետ միասին տանում է կղմինդր սլառատ-տելու.

«Տարաւ կղմինտըր, աղիւս շինեց,
խիստ խնդալի ծախու համար,
Զիս դըրամ եբեր ծախեց,
Քո պասուդ դարպասին համար...»¹:

Կղմինդրները լինում էին տարբեր, ոչ մի-այն իրենց չափերով, այլև ձևերով: Անմիջապես կղմինդրի ծածկը անելու համար դուր-ծաղրվում էին հարթ կղմինդրներ, երկու երկար կողերից ուղիղ անկյան տակ վեր բարձրացող եզրերով: Այսպիսով կղմինդրը լայն նավի տեսք ուներ և մի ծայրից բարակում էր ցածի շարքի նույնանման կղմինդրի վերին լայն մասի մեջ մտնելու համար (տխտ. LX): Կղմինդրը ծածկի փայտերին, ավելի հաճախ կրաշաղախի հետ միացվում էր երկաթե երկար գամերով, որոնց համար կղմինդրի կենտրոնում թողնու-վում էր անցք, բայց որպեսզի անձրևաջուրը այս անցքից ցած չիջներ, չէին բավարար-վում կրաշաղախով ծեփելով, այլ անցքի շուրջը անում էին բարձր, ուղիղ պսակայն-պես, որ անձրևաջուրը, ամենահորդ անձ-րևի ժամանակ էլ, չէր կարող ծածկել այդ պսակը և անցքից ցած թափվել:

Կղմինդրները վերից վար կազմում էին կողքերի բարձր եզրերով իրար կլամ շարքեր և որպեսզի կողք-կողքի դրված երկու կղմինդրների եզրերի արանքից անձրևա-ջուրը չանցնի, այդ եզրերը ծածկվում էին կիսախողովակի ձևի կղմինդրներով, որոնց ցածի ծայրը նեղ էր, և ծայրից քիչ դեպի վեր ուներ բավականաչափ բարձր ուղիղ պսակ. կղմինդրի բարակ ծայրը մտնում էր ցածի շարքի կղմինդրի վերևի լայն ծայրի մեջ և բարձր պսակը հենվում էր ցածի կղմինդրի վերի եզրին և ավելի ներքև չէր կա-

րող սահել, սակայն դրանով չլավարարվե-լով կղմինդրագործները կիսախողովակ կղմինդրները ներքևի հարթ կղմինդրների հետ միացնում էին կրաշաղախով:

Ծածկերի ճակատները պսակող կղմինդրները պատրաստվում էին եռանկյունաձև ճակատներով, որը վարդարված էր լինում մասերի կամ բուլթ գործիքի օգնությամբ թաց կավի վրա արված հովհարաձև կամ ծակոտ-կեն քանդակներով, որպիսի կղմինդրներ գտնվել են Դվինում, (տխտ. LXI): Բացի այս ձևով զարդարելուց, կղմինդրները սովորաբար ներկում էին կարմիր ներկով, երբեմն էլ կարմիր ֆոնի վրա ավելի մուգ ներկերով զարդեր՝ երկրաչափական պատկերներ դր-ծագրում: Կան կղմինդրներ, որոնց վրա հայերեն արձանագրություն է փորագրված, ինչպես Դվինում գտնված օրինակների վրա: Փողրակների արտադրություն: Քաղաք-ները ջրմուղով բերվող խմելու մաքուր ջրով ապահովելու համար անհրաժեշտ էր արտադրել ջուր բերելու փողրակներ, որոնք կոչվում էին ագուգայթ¹, ասորական ծագում ունեցող անունով: Միջին դարերում ջրմուղ ունեցել են նաև որոշ բերդեր:

Անին, Դվինը ունեին ջրմուղի բավականաչափ ծավալուն ցանց (տխտ. XLII ա): Կավե փողրակները օգտագործվել են նաև բաղնիքներում և այլ նպատակներով: Փողրակագործությունը մինչև 11-րդ դարը հավանաբար առանձին արհեստ չէր և նույն արհեստավորները արտադրում էին ինչպես կղմինդր, նույնպես և փողրակներ, մասնավաճ կղմինդրի որոշ տեսակները իրենցից ներկայացնում էին ճիշտ և ճիշտ փողրակի կեսը ընդերկայանակաճ կտրվածքով վերցրած:

Տերակոտային աղյուսիկների արտադրու-թյուն: Դվինի միջնաբերդի բլրի գագաթի պեղումների ժամանակ, դեռևս 1939 թ. բացվեցին 12—13-րդ դարերին պատկանող պատասխան շինքի մնացորդներ և Հայաստա-

¹ Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան 1941, էջ 201.

¹ Տե՛ս նշ՞ր, ագուգայ բառը:

նում առաջին անգամ այստեղ գտնվեցին շենքերի ճակատները զարդարելու տերակոտային աղյուսիկներ: Կրանք խիստ մանրիկ թրծած աղյուսիկներ են ուղղանկյուն, շնդանկյոճն, եռանկյոճի, ժապավենաձև, երկարուկ և այլ ձևերի, որոնք դասավորվելով երկրաչափական զանազան զարդեր են կազմում ցանցի ձևով, իսկ նրանց դասարկ մընացած արանքներում առաջանում են հընդամե աստղեր, բազմանկյունիներ և այլ երկրաչափական պատկերներ, որոնք սովորաբար լցվում էին կրաշաղախով, բայց կրաշաղախը աղյուսիկների մակերեսից փոքրը ինչ ցած էր մնում, այսպիսով աղյուսիկներով կազմվող պատկերները ռելեֆ էին լինում (տխտ. LXII Բ):

Այս տերակոտային աղյուսիկների արտադրությունը Հայաստանում հավանաբար սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանում թափանցած օտարամուտ երևույթ էր: Հայաստանում տարածում չգտավ նման աղյուսիկներով շենքերի ճակատները զարդարելու նույնպես օտարամուտ արվեստը և աղյուսիկների արտադրությունն էլ առայժմ հայտնի է միայն Դվինում, այն էլ խիստ սահմանափակ քանակությամբ:

Մատաղաճախի արտադրություն: Մքաղյուսով շենքեր զարդարելը նույնպես հայկական շինարարական արվեստին բնորոշ չէր, թեև տերակոտային եղանակով զարդարելուց ավելի հաճախ է հանդիպում: Հայաստանում առաջին անգամ 12—13-րդ դարերում է հանդիպում շքաղյուսը, որ գուցե և արտադրվել է տեղում: Սակայն դա նոր, օտարամուտ երևույթ էր և տեղում զարգացում չգտավ: Հայաստանում հանդիպում է երեք տեսակի շքաղյուս.

ա) Սովորական հաստության կարմրագույն կավից աղյուս, կրկնակի երկարության, պատած միագույն կանաչ ջնարակի հաստ շերտով զտնվել է Դվինում: Սա օգտագործվում էր հատակի համար:

բ) Երկու-երեք սմ հաստության աստղաձև շքաղյուս պատրաստված գոճնավոր

կավից և պատած ջնարակով ու զարդարված տարբեր գույնի զարդերով:

գ) Սպիտակ խեցիով՝ հախճապակու նման շքաղյուս՝ վեց կամ ութ թևանի աստղաձև, տարբեր գույնի ու երանգի (նաև ոսկեգույն) զարդերով ու պատկերներով (ձրկներ, թռչուններ). հանդիպում է նաև խաչաձև շքաղյուս, գտնվել է Անիում, Դվինում, Անբրդում, Գառնիում (տխտ. LXII դ): Նրանց ձևերը հիշեցնում են Ռեյի ու Վերամիսի տիպերը¹: Սրանց վրա երբեմն լինում է արարական մակագրություն կամ այդպիսի մակագրության նամանցումը (իմիտացիա): Ադրբեջանում ևս շքաղյուս արտադրվել է²:

6. ԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ապակեգործությունը Հայաստանում շատ հին պատմություն ունի: Ապակե ուլունքներ հանդիպում են անգամ երկաթեդարյան դամբարաններում, այլև ուրարտական Թեյշեթախի բերդաքաղաքում: Ապակի բարձրորակ անոթների արտադրություն ունեցել են սուրբկատիրության ժամանակաշրջանի հայկական քաղաքները, ինչպես դա պարզված է Գառնի ամրոցի պեղումներով:

Միջնադարյան ապակյա անոթեղեն և իրեր առատորեն գտնվել են Անիում և Դվինում, մասամբ էլ Գառնիում: Անիում հայա-նարերվել է նաև ապակու ձուլվածքը³, որն առաջացած է եղել ոչ թե հրդեհից կամ այլ պատճառներով, այլ ապակեձուլական հնոցում: Ապակու արտադրությունը Հայաստանի քաղաքներում սովորական երևույթ է եղել: Դա երևում է ոչ միայն պեղումների ժամա-

¹ А. Банк, Керамика из Дманиси и Херсонеса (Памятники эпохи Руставели, стр. 179).

² А. Крачковская, Изразцы мавзолея Пирхусейна. (III. Международный конгресс по иранскому искусству и археологии. Москва—Ленинград, 1939, стр. 112).

³ Н. М а р р, Краткий каталог Анийского музея, стр. 10.

նակ մեծ թվով հայանարևրված տեղական ապակու առկայությունից, այլև մատենագր-րական որոշ տեղեկություններից: Ուշագրավ է, որ օրինքով նախատեսված է եղել, ինչպես այդ տեսնում ենք Մխիթար Գոշի Գատաբուտ-նագրքում, որ մետաղների ու այլ հանածո-ների հետ միասին պետք է իշխաններին պատկանեին նաև ճրանց տիրույթներում գտնվող աղք, բորակը, նավթը, կուպը և ապակին¹, այսինքն ապակու հումքը: Եթե չլինեք ապակու տեղական արտադրությունը, շէր լինի և այս օրենքը: Ապակի արտադրել են նաև Կիրիկիայի քաղաքների հայ արհես-տավորները, մասնավորապես Սսում, որի վերաբերյալ հիշատակություն է պահպան-վել Կիրիկիայի ալքիմիական ձեռագրերում, որտեղ ասված է «աղէկն ի Սիս լինի: Ի Սիս որպէս աւազ կայ, կու հալեն և այնտեղ այլ կու շինեն շատ ոք»²:

Սարգիս Շնորհալին խոսում է հողից ապակի պատրաստելու մասին³:

Ապակեգործություն համար անհրաժեշտ էր ապակու հումք ծառայող ավազ, կամ գալլախաղ կոչված քարը, կամ օքսիդաքար, պոտաշ, որ ստացվում է բույսերից, նրանց այրելու եղանակով, որ հնում շատ հայտնի էր կալերար անոճով, կերակրի աղ, կիր, կապարի օքսիդ, որն ավելացնում էին հնո-ցում ավազը դյուրահալ դարձնելու համար:

Ավազից, գալլախաղից կամ օքսիդաքարից ապակի ստանալու համար քարը հա-տուկ բովերի վրա ջեռուցանելու և վրան սա-ռը ջուր լցնելու, ինչպես և ծեծելու եղանակով մանրացնում էին: Քանիցս բովելու և մանրելու եղանակով գալլախաղը դարձնում էին սպիտակ փոշի: Այդ պրոցեսը կոչվում էր տվյալ նյութի կրացնել⁴:

Կրացրած ավազը, գալլախաղը կամ օք-սիդաքարը հալում էին, հետք խառնելով պոտաշ, այլ նյութեր և ստանում ապակու հեղուկ զանգված, որից պատրաստում էին իրեր, առարկաներ:

Ապակու համար անհրաժեշտ ավազ, գալ-լախաղ և օքսիդաքար կա Հայաստանի շատ վայրերում: Գալլախաղով հարուստ էր մա-նավանդ Մանանաղի գավառի Պախրա լեռը, որի մի մասը, որտեղ գտնվում էր Բաղմաղ-բյուր ավանը, բաղկացած էր գերազանցա-պես գալլախաղից և այդ պատճառով կոչվում էր Գալլախաղուտ¹:

Եթե անհրաժեշտ էր ապակու՞ն տալ այս կամ այն գույնը, ապա ավելացնում էին համապատասխան գույն առաջացնող մե-տաղական օքսիդը:

Գծրախտաքար Հայաստանում պեղում-ներով հայտնաբերված ապակեղենի նմուշ-ների բաղադրության անալիզները չեն կա-տարված և այդ առթիվ որևէ բան ասել չենք կարող:

Ապակյա անոթների արտադրություն: Դվինում, Անիում և Գառնիում գտնված ապակեղենը շատ բազմազան է, անոթների տիպով, ձևերով, ապակու որակով, գույնե-րով, մշակման և զարդարման առանձնա-հատկություններով:

Պեղումների ժամանակ հայտնաբերված ապակյա անոթները, ըստ նրանց տիպերի, կարելի է բաժանել մոտավորապես հետև-յալ խմբերի՝ թասեր, վազեր, շշեր (մեծ և փոքր), երկարավիղ սափորիկներ (գրաֆին), զանազան սրվակներ, բաժակներ, գավաթ-ներ, զլանաձև լայնաբերան անոթներ (բան-կա) ապակե ճրագներ, զամբարներ և ջահի թասեր, պատուհանի հարթ ապակի, վերջա-պես ապակյա ապարանջաններ, մատանիներ և ուղեմեքներ: Այս ոչ լրիվ ցուցակից անգամ պարզ երևում է, որ ապակեղենը բնակչու-թյան, մանավանդ վերնախավի կենցաղի մեջ

1 Մ խ ի թ ա Ր Գ ո շ, Գատաստանագիրք, էջ 326:

2 Կ. Ղ ա Ֆ ա գ ա Ր Յ ա ն, Ալքիմիան պատմական Հայաստանում, էջ 125:

3 Ս ա Ր Գ ի ս Շ ն ո Ր հ ա լ ի, Մեկնութիւն Խօթանց թղթոց կաթողիկեայց, Կ. Պոլիս 1826, էջ 190:

4 Կ. Ղ ա Ֆ ա գ ա Ր Յ ա ն, Ալքիմիան պատմական Հայաստանում, էջ 141:

1 Ա. Ր ի ս տ ա կ Է ս Լ ա ս տ ի վ Է Ր տ ց ի, Պատ-մութիւն, էջ 103:

գործածական է եղել և շատ բազմապատկերառություն է ունեցել:

Ապակեղենի լավագույն օրինակները, ինչպես Անիում, նույնպես և Դվինում դա՛նըվել են միջնաբերդում, նաև Դվինի մայր տաճարի — ու կաթողիկոսարանի շուրջը: Ի դեպ, այս եկեղեցական թաղամասում գրտնըված ապակեղենը, Դվինում հայտնաբերվածների թվում, ժամանակով ամենահինն է և որակավ ամենաբարձրը: Այստեղ գտնվել է մի համարյա ամբողջական բաժակ, որը դրանաձև է, իսկ հենակ-սուղը գեղեցիկ շքեզանակաձև: Բաժակի ցածր կեսը զրսից զարգարված է գեղեցիկ ու լայն ակոսներով, (ախտ. LXIII ա), որոնք արված են փորագրությամբ, իսկ վերևի կեսի վրա կան աղեղներ: Մի այլ անոթի մեծ բեկորների վրա, փորագրության եղանակով նկարի ֆոնը հեռացնելու միջոցով, արված են մոնումենտալ բուսական օրնամենտներ (ախտ. LXII բ): Նույն այս թաղամասում գտնվել է մի վարդագույն ապակու բեկոր վրան նուան ուղեֆ ճյուղ (№ 1617/255) և մի այլ բեկոր, որը երկնագույն է և զարգարված է խաղողի ուղեֆ ողկույզով (№ 1905/94)¹: Եթե բաժակի, և ֆոնը հեռացրած ուղեֆ բուսական զարդով թասի բեկորի տեղական լինելը ըստույգ ապացուցելը դժվար է, որովհետև նման ապակի հանդիպում է Միջագետքում և Ասորիքում, ապա վարդագույն ապակու բեկորը, նուան ճյուղով և երկնագույնը խաղողի ողկույզով շատ նման են Զվարթնոցի քանդակներին, տեղական են և ուրիշ ոչ մի տեղ չեն գտնվել: Ժամանակով դրանք վերադրվում են 9—10-րդ դարերին: Նրանց ժամանակակից են նաև հորիզոնական կտրվածքով քառակուսի, այսինքն շորս հավասար կող ունեցող լայն վղով ու լայնացող շուրթով անոթները, որոնք նման են Սամարրա-

յում, Միջին Ասիայում և Եգիպտոսում գրտնըված նույն ձևի անոթներին, ունենում են շորս ուսք, որոնք հավելվածի ձևով դուրս են բերված հատակի շորս անկյուններից: Սրանք թվագրվում են 10-րդ դարով:

Դվինում գտնվել են բարձրորակ ապակու այլ բեկորներ ևս. դրանցից մեկի վրա կա բուֆի արձանագրություն կամ դրա նմանեցումը (իմիտացիա): 9—10-րդ դարերով է թվագրվում նաև Դվինում, Սամարրայում, Միջին Ասիայում, Իրանում, Հյուսիսային Կովկասում գտնված այն ապակեղենը, որն իր վրա ունի դուրս և ներս ձևված շրջանակաձև ու շեղանկյունաձև զարդեր:

Բյուզանդական մի աղբյուրում վկայություն կա, որ ապակեղեն է արտադրվել Բասենում. «Փասիանե կրկիրը (Փասա:աղի շօջա) գտնվում է Պերսարմենիայի շրջանում... Այստեղ լինում է հատկապես ապակի (ὄξλος τολύου εἰωմε γίνεσθαι; Ալք պատճառով, ով սր ապակի իրեբի (σχεσῶν ὄξλων) կարիք էր զգում, գնում էր այնտեղ. ձեռք բերելու»: Տրապիզոնի ս. Եվգենիոսի վանքի առաջնորդ Եփրեմը մարդ է ուղարկում «այնտեղ դնելու համար կանթեղներ ինչրան, որ հարկավոր էին (սրբի) տոնը պայծառացնելու համար»¹:

Հայաստանի քաղաքներում արտադրվող ապակեղենը աչքի է ընկնում նաև գույների ու զարդերի բազմազանությամբ: Պղտոր գույնով ցածրորակ ապակե կոպիտ անոթների կողքին հանդիպում է բոլորովին թափանցիկ և վճիտ, հաստ և նուրբ ապակեղեն, շատ հաճախ են կանաչավուն և դեղնավուն նուրբ անոթների կամ նրանց բեկորների գյուտերը: Դվինում և Անիում գրտնըվել են նաև մուգ կապույտ, երկնագույն, վաղդագույն, մուգ կարմիր կամ բարի գույնի, սև և այլ երանգների ապակեղենի բե-

¹ В. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина, տե՛ս «Աշխատություններ Հայաստանի Պետական պատմական թանգարանի», հատ. IV, էջ 18:


¹ Пападопуло Керамевс. Сборник источников по истории Трапезундской империи, СПб, 1897. стр. 107—108.

կորներ: Հովհաննես կաթողիկոսը հիշատակում է «գունակ գոծակ» ապակեղենը¹:

Իրենց ձևերով և կատարման տեխնիկայով վերին աստիճանի բազմազան են և ապակեղեն անոթների վրա հանդիպող զարդերը: Ավելի վաղ շրջանի (9—11-րդ դարերի) օրինակները աչքի են ընկնում բարձր որակով, լինում են հարթ կամ զարդարված ևն երկու եղանակով՝ կաղապարի մեջ ձուլելու շնորհիվ նրանց վրա հանվում են ելուստներ և խոր ընկած հորիզոնական դձեր, շերտեր կամ բարձրորակ, հաստ ու ամուրջ կամ գունավոր ապակու վրա մետաղյա գործիքներով արվում են զանազան քանդակների շրջանակներ, սպիրալներ, երկրաչափական այլ զարդեր (նկ. 35), ինչպես և բուսական օրնամենտներ, Երբևմն ֆոնը հեռացնելու հղանակով ստացվում են սելեֆ նկարներ: Նման անոթներն իհարկև անհատական և մեծ խնամքով մշակված արտադրանք են հանդիսանում: Ապակու զարդարումը փորագրությամբ բնորոշ է 9—10-րդ դարերին: Նույն ժամանակով է թվագրվում և իրանական փորագիր ապակիք²: Լինում էր և բյուրուփին հարթ ապակի:

Ավելի ուշ՝ 12—13-րդ դարերում ապակու արտադրությունը ընդարձակվում է և կորցնում իր անհատական բնույթը, սկընում են արտադրել առավել լայն քաղցր և նավուն կամ կանաչավուն երանգի ապակի, իսկ նախկին փորագրանդակ զարդերը տեղի են տալիս այլ տեխնիկայի օգնությամբ կատարվող զարդերին. անոթները պարաստելու ժամանակ նրանց վրա զրսից նույն գույնի կամ այլ երանգների հալած ապակուց ծոր տալով դնում են սելեֆ թելերով ու դնդիկներով կազմվող զանազան երկրաչափական կամ խիստ ոճավորված

բուսական օրնամենտներ, սրունք երբևմն բռնում են անոթի ամբողջ մակերեսը (տխա. LXIV բգ): Վերագիր զարդերը շատ բնորոշ են 12—13-րդ դարերի համար: Նույն ժամանակաշրջանում կիրառվում են նաև այլ գույնի ապակուց փորքիկ կիսաօգնաձև վերագիր կետեր կամ բծեր դնելը՝ ընդելուզանելը:



Նկ. 35. Փորագիր ապակու բեկորներ (Գառնի), ՊՊԹ:

Անխում գտնված անոթները շատ տարբեր են իրենց մեծությամբ: Կան 2—3 խորանարդ սանտիմետրից սկսած մինչև մի քանի լիտր տարողությամբ ապակյա անոթներ:

Պեղումների ժամանակ հայտնաբերված ապակե, կավե և մետաղե անոթների տիպերը, ձևերն ու զարդերը, ինչպես և դրանց զարգացման ու փոխակերպությունների պրոցեսը հիմնական դժերով համընկնում են, իսկ դա ցույց է տալիս, որ ապակե անոթներն էլ կավե և մետաղե անոթների նման տեղական արտադրանք են և նրանց ձևերն ու զարդերն էլ զարգացել, փոխակերպվել են տեղական հողի վրա և տեղական ճաշակին համեմատ:

Անխի միջնաբերդում 10—11-րդ դարերի շերտում գտնվել են և վառ կարմիր կամ դուրեկան կապույտ շերտերով եզերված և

¹ Հովհաննես կաթողիկոս, Պատմութիւն, էջ 250:

² A Survey of Persian Art, vol. VI, pl. 1441
A. B. Ռոբերտ Շմիդտը ապակու փորագրությունը բնորոշ է համարում 10—11-րդ դարերի համար (Robert Schmidt, Das Glas Berlin 1912, S. 46.

սակեզույն զարդեր ունեցող սարտկու բեկորներ, որոնք դժազարդեր չեն, այլ բունում են բավականաչափ մեծ մակերես և կազմում են զանազան ձևի երկրաչափական ու բուսական պատկերներ, կատարված ոչ թե գրաֆիկական, այլ արժնապատման տեխնիկայով:

Ավելի ուշ շրջանի շերտերում գտնվել են ապակե անոթների բեկորներ, որոնք նկարազարդված են սպիտակ և երկնագույն կմալով, զուգակցված կարմիր, մուգ շագանակագույն կամ դեղին ֆերկերի հետ և սակեզոծված են 12—13-րդ դարերի գրաֆիկ զարդերին համապատասխանող օրնամենտներով: Այս զարդերն արված են վրձինի օգնությամբ, բավականաչափ նուրբ են, երբեմն շատ մանրակրկիտ: Այս տիպի նկարների գույները մեջ սովորաբար դերակշռում են կարմիրը և սակեզույնը:

Արևելյան արձնապատ, սակեզոծ ապակին դիտնականները իրավացի կերպով թվագրում են 12—13-րդ դարերով¹, թեև Բյուզանդիայում այն երևան է գալիս դեռևս 10—11-րդ դարերում, բայց լայն տարածում չի ստանում²: Արձնապատ ապակին ամենից ավելի զարգանում և սովորական է դառնում 13—14-րդ դարերում:

Արձնապատ և սակեզոծ ապակի գտնվել է և Դվինում (№ 349, դ—1946 թ.):

Անիում գտնված մի գավաթի բեկորի վրա սակով նկարված են շուշաններ, իսկ կարմիր գույնով արված է գոտին: Մի այլ գավաթի վրա նկարված է մարդու մինիատյուր պատկեր բուսական օրնամենտի ֆոնի վրա³: Անիում և Դվինում գտնված նկարուն ապակու մեջ կան այնպիսի նմուշներ, որոնք

ունեն արարատա մակագրություն կամ դրսեմանեցումը:

Անիի ապակեղենի լավագույն նմուշներից մեկը մի սրվակ է, մուգ սրճագույն, ունի նեղ կոնաձև հատակ, իսկ կողերը դեպի վեր քիչ լաճանում են, ապա միանգամից նեղանալով կազմում են վիզը: Այս սրվակը գտնվել է Բաղրատունիների պալատում 1907 թ⁴. պեղումների ժամանակ: Անիի ապակե անոթներից հիշատակենք նաև շատ բարակ գեղնավուն ապակուց պատրաստված սափորիկը, որի մի մասն է պահպանվել: Սափորիկը բավականաչափ մեծ է եղել, ունեցել է շրջանաձև բարձր սաք, նրա շատ շքեղ և երկար կանխը, ինչպես Հ. Օրբելին է նշում, իր ձևով շատ մոտ է Գագիկի տաճարում գտնված փորագիր զարդեր կրող պղնձե սափորիկի կանթին⁵: Անիի մի այլ ապակե անոթի վրա վրա կարմիր գինեզույն ապակյա վերադիր թելերով զարդեր են արված և նույն գույնի ու փիրուզագույն ռեֆեֆ կետեր դրված:

Անիի նկարուն ապակու բեկորներից հիշատակենք մի քանիսը. մի երկարավուն սպիտակ բեկորի վրա նկարված են ծաղիկներ. ինչ որ շենքի պատեր, մուգ երկնագույն խոշոր վազա և թուշուսի պատկեր⁶: Նույն անոթի երեք այլ բեկորների վրա նկարված են բուսական օրնամենտներ. անոթի շուրթը ունեցել է սակեզոծ երիզ, բեկորներից մեկի վրա պահպանվել են ջրում լողացող կարապի նկարի մնացորդներ: Ապակու մի այլ բեկորի վրա նկարված է բուսական շքեղ օրնամենտ⁷:

Կան բեկորներ, որոնք զարդարված են սակեզույն, սպիտակ, երկնագույն և շագա-

¹ Ernst Kühnel, Islamische Kleinkunst, Berlin 1925, S 180—181 Տե՛ս նաև A. Survey of Persian Art vol. VI pl. 1446—1448. J. Vavra, Das Glas und Jahr tausende. Prag, 1954, S. 65.

² Robert Schmidt, Das Glas, Berlin, 1912, S. 37.

³ Н. Я. Марр, Ани, Ереван, 1939, стр. 201.

⁴ И. Орбелн, Каталог Анийского Музея древностей, стр. 80.

⁵ Նույն տեղում, էջ 80:

⁶ Նույն տեղում, էջ 81:

⁷ Նույն տեղում:

նակագուցն ներկերով նաև արաբական գրե-
րի նմանեցված զարդերով: Մի այլ բեկորի
վրա կարմիր, սպիտակ, երկնագույն և բաց
կանաչավուն ներկերով նկարված է առյուծ,
որից պահպանվել են գլուխը և առջևի թա-
թերը:

Անիի Գաղիկի տաճարի մեծ ջահի վրա
եղել են 117 թասեր գույնզգույն ապակուց:
Բերված օրինակներով Անիի պեղումների
ժամանակ գտնված ապակեղենը չի սպառ-
վում, բայց նրանք էլ հստակ պատկերացում
են տալիս ապակեգործության վերաբերյալ:
Պարզվում է, որ ապակեղենի մի մասը
նկարվում կամ այլ եղանակներով զարդա-
րվում էր վերնախավի պահանջներին և ճա-
շակին համեմատ և սովորաբար լինում էր
բարձրորակ ապակուց, իսկ մյուս մասը բո-
լորովին անզարդ էր ու ցածրորակ ապակուց
կամ զարդարվում էր պարզ, անպաճույճ
ձևով ու դուրին տեխնիկայով:

12—13-րդ դարերին պատկանող շատ
ափիլի մեծ քանակությամբ ապակեղեն զբա-
նրվել է Դվինում: Դրանք բաժակներ են,
թասեր, ապակե սափորներ և այլ անոթներ,
նրանց նյութը, ըստ գույների, լինում է ան-
գույն վճիտ, կանաչավուն, դեղին, բաց դե-
ղին և այլն: Այդ ժամանակաշրջանում Դվին-
ում ևս ամենասովորական տեխնիկան է
նույն գույնի կամ այլ գույնի ապակու ձուլ-
վածքից վերադիր թելեր, գույնզգույն ուլեֆ
կետեր և այլ զարդեր հանելը: Փորագոր-
ծյան կամ ցկարի ֆոնը հեռացնելու մեծ
աշխատանք ու շատ թանկ նստող տեխնի-
կան համարյա անհետանում է, քանի որ
այս բնագավառում ևս անհատական պատ-
վերով արտադրությունը տեղի էր սովել շու-
կաթի համար կատարվող արտադրության:

Ապակե անոթները քանդակելով զարդա-
րելու տեխնիկան, տեղի տալով վերադիր
զարդեր անելու տեխնիկային, սակայն, բո-
լորովին չի վերանում: Անիում, Դվինում,
Գառնիում վերադիր զարդերով ապակու հեռ
միասին գտնվել են նաև փորագիր նկարուն
ապակու բեկորներ: Գառնիի միջնագարջան

նույնիսկ 3—4-րդ դարերի շերտերում հայտ-
նաբերվել են ապակե անոթների բեկորներ
հաստ, բայց թափանցիկ ապակուց, որոն-
ցից մեկի վրա մետաղե գործիքով քանդակ-
ված է շրջագիծ, իսկ մյուսի վրա փորագր-
ված են շեղ լայն դծիկներ: Հաստ ու թա-
փանցիկ մի այլ բեկորի վրա կարմիր գույ-
նով և ոսկեզօծումով արված են բուսական
ոճավորված օրնամենտներ:

Հաճախ գտնվում են բավականաչափ
հաստ և բոլորովին հարթ ապակու խոշոր
բեկորներ, որոնք զարդեր կամ օրնամենտներ
չունեն: Ամենաքն հավանականությամբ, զբ-
րանք պատուհանի ապակու բեկորներ են:
10-րդ դարի սկզբին Ոստանում Գաղիկ Արծ-
րունու կառուցած պալատի մանրամասնու-
թյանները թվելով, Թովմա Արծրունին նր-
շում է նաև նրա պատուհանները. «լուսան-
ցոյցս շողախաղացս, որք ի ծագել և ի
մտանել արեզականն փայլատակելով ի վե-
բայ ծովուն՝ շող գործեն ի սիրտս տաճարին,
և յերկնային շրջալեզելով զգրօշեալ պատ-
կերատիպան և զպաճաղան յօրինուածսն՝
զմիտս հիացուցանէ զտեսօղացն...»¹: Ակա-
դեմիկոս Հ. Օրբելին իրավացի նշում է, որ
շողախաղաց լուսամուտները, որոնք արևը
ծագելիս և մայր մտնելիս փայլատակում են
լճի մակերեսին և շողքեր են նետում դահ-
լիճի ներսը ու շրջելով գույնզգույն օրնա-
մենտների վրա՝ զմայլեցնում են տեսնողնե-
րին, ուրիշ բան չեն, բայց եթե ապակիով
պատած լուսամուտներ: Վարդան Այգեկցին
իշխան Պաղտինին գրած նամակում, ի միջի
ալլոց հիշատակություն է անում, որից երե-
վում է, թե պատուհաններին դրվում էր
թափանցիկ ապակի՝ «Որպէս լոյս ընդ ա-
պակի, որ ի պատուհանի»²— ասում է նա:

Այսպիսով, մեծը տեսնում ենք, որ ապա-
կուց պատրաստել են բազմաթիվ ու բազմա-

¹ Թովմայի վարդապետի Արծրուն-
ւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917,
էջ 477:


² Մասնագրասի ձեռագիր N 638, էջ 12:

վան անոթներ, ինչպես նաև պատուհանի ապակի: Բայց դրանցով ապակու գործադրությունը դեռևս չէր սահմանափակվում:

Ապակե ապարանջաններ և ուլունքներ: Ապակուց պատրաստված ապարանջաններն ու ուլունքները չափազանց տարածված են հղել բնակչության կենցաղում: Անիի, Գվինի, Գառնիի պեղումների ժամանակ ամենից հաճախ հանդիպող ապակե առարկաները ուլունքներն ու ապարանջաններն են, որոնք իհարկե գտնվում են ջարդված վիճակում:

Ապակին շատ ջարդվող նյութ է, մանա-

նաև բաց կապույտ, մուգ կապույտ, երկնադույն, մանուշակադույն և այլ երանգի ապարանջաններ: Ամենից ավելի գտնվել են ներսի կողմից հարթ, իսկ դրսից ուռուցիկ կամ կորընթարդ ձևի ապարանջաններ, որոնց վրա ծայրերի միացման մասում լինում են հևավոր կերպով օձի զրուխ հիշեցնող ուլունք վարդ: Կան և ապակե ձողից պատրաստված հարթ մակերեսով ապարանջաններ, բայց ավելի շատ են բարակ պարանի նման ուղղուն կամ սպիրալաձև մակերես ունեցող ապարանջաններ (տխա. LXIV ա): Երբեմն ուրտուն ա-



Նկ. 36. Ապակե ապարանջանների բեկորներ (Գառնի), ՊՊԹ.

վանդ ապակե ապարանջանը, որի առթիվ ժողովուրդը առած է հորինել՝ «նարմանազուկ շուշա բլազուկ», այսինքն շուշա բլազուկի (ապակե ապարանջանի) նրբագույն (նարմանազուկ) լինելը դարձել է առած և տարածվել է վերին ստախձանի նրբագույն մարդկանց, մանավանդ երեխաների վրա: Իհարկե, այս առածի առաջացման հիմքերն անհասկանալի կմնային, եթե նկատի չառնվեր, որ միջին դարերում «շուշա բլազուկը» լայն գործածություն է ունեցել:

Ապակե ապարանջանները բազմազան են իրենց ձևով և գույներով: Ամենից ավելի հանդիպում են կանաչավուն և դեղնավուն ապարանջաններ, բայց քիչ չեն և բաց կամ մուգ, սև գույնի ապարանջանները, կան

ապարանջանները մուգ ֆոնի վրա սնունդ են բաց գույնի սպիրալաձև վալարվող շերտեր (Նկ. 36):

Ապակե ապարանջանները հասարակ տեսք ունեն, այդ է պատճառը, որ ապարանջանագործ վարպետները շատ հաճախ ապարանջանը պատրաստում էին սմալտայից: Այս ապակեման, բայց անթափանցիկ մասսային մետաղական օքսիդների միջոցով, ինչպես մենք տեսնում ենք Անիում և Գվինում հայտնաբերված նմուշներից, կարելի էր ուղած գույնը կամ նուրբ երանգը տալ: Իսկապես հանդիպում են բազմազան և շատ հաճելի գույնի՝ երկնադույն, փիրուզագույն, կապույտ, դեղին, մանուշակագույն, արծաթագույն սմալտայից պատրաստված ապարանջանների բեկորներ:

Հազվագեղեցիկ են բազմագույն սմալտայից կազմված ասպարանջանների բեկորները: Բացի ասպարանջաններից, ասպակուց պատրաստել են նաև մատանիներ: Անհրամ գտնուվել են ասպակի մատանիներ, սրտնց ակը գրված է այլ գույնի ձուլված ասպակուց: Կան և սմալտայից պատրաստված մատանիներ: Սմալտայից և ասպակուց պատրաստված ասպարանջանները Անիի, Դվինի և Գառնիի պեղումների ժամանակ գտնուվել են 9—10-րդ դդ. շերտում, վաղագույն հմուշներն են, որոնք հարթ են ու գունավոր (ավելի նուրբ երանգներ ունեն), իսկ ավելի մեծ թվով հասարակ կանաչավուն, դեղնավուն ու մուգ գույնի հարթ կամ դալարուն ասպարանջաններ գտնուվել են 12—13-րդ դարերի շերտերում:

Ասպակուց և սմալտայից պատրաստուվել են նաև ուլունքներ: Ուլունքները միջնադարյան քաղաքների պեղումների ժամանակ հաճախակի հանդիպող իրերից են: Նրանք պատրաստված են գույնզուգույն, բյուրեղաքարերից, ասպակենման խմորներից (պաստա), ոսկորից, մետաղներից, բայց ամենից ավելի ասպակուց: Ուլունքներն աչքի են ընկնում ոչ միայն տարբեր մեծությամբ և գույններով, այլև ձևերի բազմազանությամբ: Գրանով հավանաբար զբաղվում էին առանձին արհեստավորներ — ուլնեզործներ կամ հուլնաբարձներ, ինչպես անվանված են այդ արհեստավորները Անիի 1222 թվականի երազահանում¹:

Ուլունքների ձևը և գույնը ինքնին սիմվոլիկ նշանակություն ունեին, բայց և կային աչքածե կլուսաներով և այլ հատուկ ձևերի ուլունքներ, որոնք հուսուլթրային նշանակություն տնեին և, իբրև թե նման ուլունքները կրողին պաշտպանում էին չար աչքից, առանձին չար ոգիներից և հիվանդություններից: Ասպակե ասպարանջաններ, մատանիներ և ուլունքներ ասպակուց (կամ ասպակու պաստայից) շատ են գտնուվել և հին Գանձակում²:

Միջնադարյան Հայաստանում պատրաստել են նաև արհեստական մարգարիտ, կաթողացել են խոշորացնել բյուրեղները: Այդ առթիվ տեղեկություններ պահպանվել են ձեռագրերում, օրինակ, 16-րդ դարում, հավանաբար ավելի հին օրինակից արտագրված մի ձեռագրում նկարագրված է արհեստական մարգարիտ շինելու եղանակը, որը կապված է բազմաթիվ ֆյուլների օգտագործման և տեխնոլոգիական բարդ պրոցեսների հետ¹:

Նըրափակելով մեր խոսքը կավագործության և ասպակեզործության վերաբերյալ կարելի է անել հետևյալ եղրակացությունները:

1. Կավե ամանները տնտեսության և բնակչության կենցաղի մեջ վերին աստիճանի մեծ տեղ և բազմազան կիրառություն են ունեցել, ուստի այդ պահանջները սպասարկող կավագործության արհեստը ամենատարածված և զարգացած արհեստներից մեկն է եղել:

2. Հայաստանի կավագործներն արտադրել են առանց ջնարակի կամ հասարակ, ջնարակած կարմրակավ խեցեղենի և սպիտակակավ խեցեղենի ամենաբազմազան տեսակներ: Այս մեծ բազմազանությունը նկատվում է խեցեղենի, թե կիրառական նրշանակության, թե ձևերի, կատարման տեխնիկայի եղանակների, զարդերի և զարդարման եղանակների և թե ամանեղենի որակի և արժեքի մեջ:

3. Ջնարակած խեցեղենի արտադրությունը Հայաստանում թե կարմրակավ ամանեղենի և թե սպիտակակավ հախճապակու դժով, մետաղական բազմազան օբսիդնի օգտագործմամբ, կրանդների հաջատությունը ու նրբությունը, ճոխ զարդերով ու զարդարման եղանակի բազմազանությամբ Մերձավոր Արևելքի կավագործական արտադրության մեջ գրավել է առաջնակարգ տեղերից մեկը:

¹ Մատենադարանի ձեռագիր № 695, էջ 220-ր:

² И. М. Джафарзاده, укр. соч. стр. 34, 81—83.

¹ Մատենադարանի ձեռագիր № 3204, էջ 329 և 330-ր:


4. Բարձր պարգայման հասած կավագործությունը այլևս չէր կարող սովորական գյուղական արհեստ լինել և կենտրոնացել էր քաղաքներում, որտեղ առաջացել էին կավագործների առանձին թաղեր, իսկ այս թաղերում, ինչպես Դվլինում, կային հավանաբար ընկերովի օգտագործվող թրծման մեծ հնոցներ:


5. 9—10-րդ դարերում խեցեղենի, մանավանդ ջնարակած ամանեղենի արտադրությունը կրում էր առավելապես անհատական բնույթ և հիմնականում կատարվում էր պատվերով, իսկ 12—13-րդ դարերի խեցեղենի արտադրությունը, որոշ բնագավառներում մասսայական արտադրության (իր ժամանակի մասշտաբով և իմաստով) բընույթ ստացավ և կատարվում էր առավելապես շուկայի համար:

6. Կավագործության մեջ էլ, ինչպես մյուս արհեստներում, նկատվում է աշխատանքի բաժանում: Խեցեղենի տեսակներից, ձևերից, զարդերից, վարպետների նշաններից, արտադրության տեխնիկայի մեջ նրկատվող բազմազանությունից, արտադրանքի ծավալից և այլ տվյալներից դատելով, կարելի է ասել, որ կային կավագործության մի քանի ինքնուրույն ճյուղեր: Ամենից ա-

ռաջ պետք է նկատել, որ առանձին արհեստավորներ էին զբաղվում հասարակ (առանց ջնարակի), ջնարակած ամանեղենի և շինարարական խեցեղենի մի քանի տեսակների արտադրությամբ, առանձին և ինքնուրույն ճյուղ էր կազմում և աղյուսագործությունը: Աշխատանքի բաժանման խորացմանը արհեստագործության մեջ նկատելիորեն նպաստում էր զերադանցապես պատվիրատուի համար կատարվող արտադրությունից շուկայի համար կատարվող արտադրության անցման արդեն սկսված և որոշ բնագավառներում զավականաչափ խորացած պտոցի սով:

7. Հայաստանի քաղաքներում պարգայմա արհեստների թվին էր պատկանում նաև ապակեգործությունը, որի արտադրանքը նույնպես աչքի է ընկնում տեսակների ու կատարման տեխնիկայի բազմազանությամբ: Ապակե անոթների և ապարանջանների արտադրությունն էլ 12—13-րդ դարերում առավելապես շուկայական արտադրություն է դառնում: Ապակու հումքը օգտագործելու դեպքում, տասանորդ պետք է վճարվեր այն ֆեոդալին, որի տիրույթի մեջ գտնվում էր այդ հումքը:





ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ, ԳՈՐԳԵՐԻ ԵՎ ԿԱՇՎԵՂԵՆԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՀԵՍՏՆԵՐ

1. ՄԱՆԱԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿՎԱԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Գործվածքների արտադրությունը միջնադարյան Հայաստանում արհեստագործության տառվել տարածված և զարգացած մի քնդարձակ ճյուղ էր հանդիսանում: Դրա համար անհրաժեշտ պայմաններ ընձևում էին երկրի տնտեսությունը և բնակչության պահանջները: Լեռնային սրբնչելի արդյունքը վերին աստիճանի նպաստավոր էին ոչ խարաբուծության համար, որից ստացվող բուրդը լավագույն նյութ էր անկվածագործության համար, իսկ բարեխառն կլիմայի անեցող արգավանդ դաշտավայրերում այդ գեղործության, պտղարուծության և հացացանքսի կողքին՝ նշանակալից տեղ էր դրավում անխնիկական կուլտուրաների՝ վառի, բամբակենու և շերամտպահության համար օդաագործվող թիֆենու մշակությունը:

Գգրարություն: Բուրդը և բամբակը մանելուց առաջ հարկավոր էր մաքրել և գվել: Բուրդը գվում էին մեռաղի ատամնավոր սանտրով կամ սանդերքով. «սրպէս գրուրդ

պարզեալ ի սանտրէ յտակեացից»¹: Բամբակ գվելու համար գործածվում էր գլրարի աղեղը²: Դա հատուկ գործիք էր, որի վրա կապվում էր ձգված աղեղար, որը մոտեցնելով հունդից ալատված բամբակին, խփում էին լարին փայտե հարվածող գործիքով՝ թոսրով և լարի ուժգին ցնցումով գվում բամբակը³:

Բուրդ մանողները իրենք էլ գվում էին այն, իսկ բամբակ գվելը հատուկ արհեստավորի գործ էր, որը կոչվում էր գլրար կամ գվող, որ հիշատակված է Անիի երազահանում մյուս արհեստավորների հետ, «բամբակածախի» կողքին, սակայն «գող» փոխանակ «գլղող» սխալ գրչությունը⁴:

¹ ՆՃԲ, սանտր բառը:

² ՆՃԲ, աղեղ բառը:

³ Ինչպես բուրդ գվելու սանդերքը, որից մի օրինակ գտնվել է Անիում, նույնպես և բամբակ գվելու աղեղը հին մամանակներից պահպանվելով հասել են մինչև մեր օրերը:

⁴ Մատենագրարանի ձեռագիր N 695, էջ 220ա:

Մանածագործուրյուն: Մանվածքներ պատրաստելը ջուլհակությունից կամ անկվածագործությանից անջատ ինքնուրույն գրադմուճք էր, որով պարապում էին, ինչպես առանձին արհեստավորներ, նույնպես և ավելի մեծ թվով քաղաքաբնակ ու գյուղաբնակ կանայք, մանավանդ ձմռան ամիսներին, երբ նրանք ազատ էին լինում դաշտային աշխատանքներից:

Միջնադարյան թարգմանական մի վրձվածքում պատմվում է, թե եկեղեցու վարագույրը գործելու համար թեև մասնակցում են տալիս վանքում սնված կույսերին, որոնց թվում էր և Մարիամ կույսը: Այս առնչությունը ասվում է. «Արկէք վիճակ, ո՞ման է զուսկեթնն, զբեհեզն և զծիրանին, զկարմիրն և զկապտոն. և երբ արկին վիճակ, ել վիճակն Մարիամու ծիրանին և կարմիրն. և առեսու լուռթեամբ երթայր ի տուն իւր, և սկսու յառաջ մանկ զկարմիրն»: Տանը մանկելով կույսը թեև հանձնում է վանքին: Այս վրկայության մեջ բացի գոմակ դոմնակ թեւերից ու նրանց անուններից ուշադրավ է նաև շատ վաղ ժամանակների համար բնորոշ կարգը՝ նյութը վանքին է և մանվելով հանձնվում է վանքին:

Եթե նկատի առնվի, որ գյուղական կանանց մանած թեև համարյա ամբողջապես գործածում էին գյուղական ջուլհակները և իրենք կանայք հերոններով ու շյուղերով զգեստներ ու գուլպաներ պատրաստելու համար, ապա պարզ կլինի, որ անկվածագործական արհեստի ծավալումն ու վարգացումը առանց մանածագործական արհեստի ինքնուրույն գոյության, անհնարին կլինի: Դրա մասին են վկայում նաև Անիում գտնված և հին ձեռագրերի կադմերին փակցրած մետաքսի և վուշի գործվածքները, որոնց շատ նուրբ թելերը մանկ են հասկապես այդ արհեստով զբաղվող մեծ փորձ ու հմուտ:

¹ Թանգարան հայկական հին և նոր դպրութեան Բ. Անկանոն գիրք նոր կտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 14:

թյուն ունեցող արհեստավորները, ճախարակների օգնությամբ: Եղև են նույնիսկ մազից թել մանող արհեստավորներ, որոնք այդպես էլ կոչվել են՝ մազման¹: Որ մազը լայն գործածություն է ունեցել, դա կասկածից դուրս է, բանի որ խորգը կամ բուրձը, որը այժի մազից պատրաստված կոպիտ գործվածքն էր, միջին դարերում շատ սովորական գործվածք էր: Ներսես Շնորհալին այժի մասին գրած իբ մի հանելուկում նույնըն է ասում.

Յամէն շըրջի ինքն ի քարեր,
Ունի ծախու մազէ քըրձեր.
Գինոյ ունի աղուոր տըղեր,
Ի օժտէր ձըրի դանկի կոթեր»²:

Այս հանելուկը ուշադրավ է նրանով, որ այժը դիտված է ջուլհակի, մորթեգործի և դանակագործի առանկյունից: Կասկած չկա, որ այս և նման հանելուկները գրվում էին հաշվի առնելով քաղաքի բնակչության, մասնավանդ արհեստավորների հետաքրքրության շրջանակները, որը հետևանք էր դարպացած արհեստագործության առկայության³:

Թեև մանում էին փլիկներով: «Առաքեաց

¹ Մատենագրարանի ձեռագիր N 695, էջ 219բ:

² Ն եր ս ի ս ի Շ ն ո ր հ ա լ ւ ո յ , Բանք շափաւ, էջ 562:

³ Արհեստավորների և առհասարակ քաղաքային բնակչության կենցաղն արտահայտող հանելուկները Շնորհալու մոտ շատ հաճախ են հանդիպում, հյուսված շատ ավելի մեծ թվով կրօնա-քարոզչական հանելուկների հետ: Իհարկե նման հանելուկներ երևան եկան արհեստագործության զարգացման հետևանքով, սակայն Շնորհալին դա անում էր այն բանի համար, որպեսզի ժողովրդական բան ու խոսքի և նրա ձևի (հանելուկ, առակ) օգտագործմամբ կրօնական գաղափարները քարոզվին, ինչպես Կիրակոս Գանձակցին նրա մասին ասում է. «Զի հնար իցէ ոչ որ խօսեսցի ի խօսս աշխարհականս, բայց ի գրոց, ոչ ի գրնարբուս, և ոչ յալ ուրախութիւնս» (Կիրակոս Գանձակցի, էջ 111): Ուրեմն աշխարհական զրույցները շատ տարածված էին և Ներսես Շնորհալին ստիպված էր դրանք մատուցել ժողովրդին միայն հյուսելով կրօնական գրույցի ու քարոզի հետ:

զնա առ ազախնայան՝ զի վաստակեսցի իլիկ և ոստայն»¹:

Իլիկների քարե, կավե, ոսկրե զուլաները մեծ քանակությամբ գտնվել են Անիի, Գլինի և Գառնիի պեղումների ժամանակ: Ավելի կատարելագործված միջոց էր ճախարակը, որով կարելի էր նրբագույն թելեր մանել: Անիի երազահանում կողք կողքի հիշատակված են բամբակը, իլիկը և «ջահ-յան», այնուհետև «ապրեշումը», բուրդը, մազը և կաճը²:

Մանողները իրենց ապրուստը վաճառելիս համար աշխատում էին զոք ու դիշեր. «Այս ծով գիշերըս ի բուն ես երկու շրջան մանեցի, խոշ հարս այլ միտս ընկավ, թեզ մեղա զջահրաս վերուցի...»³: Հավանաբար սովորություն կար շաբաթվա ընթացքում մանածը կիրակի օրը հաշվել կամ վաճառել: Ըստ երևույթին այդ է ակնարկում մի հեղինակ ջահրիկ անունով ծախ մասին գրած իր մի գովքում, որտեղ նկատի է առնված այդ ծախ և մանելու ճախարակի (ջահրիկ) անունների նույնությունը:

Ջահրիկն փոքր էր զևս ծարր,
Ու զընդընայր զերդ մանծրար
Շաբաթն ի բուն ինքն ջանայր
Ու կիրակին մանած չըկայր⁴:

Մի այլ հանելուկում Շնորհալին գրում է.
Չորեքուտի միալարի,
Քառասուն թևով ինքն շրջի,
Աջակողմամբն շրջադայի,
Ձախովն ի ներս տայ յարմարի⁵:

(Ճախարակի աջակողմում նրա պատեցնելու թևն էր լինում ճախակողմում թև հավաքող իլիկը):

1 Յայսմաուրբ, մարտի Ժ օրվա ընթերցելիքում:

2 Մատենադարանի ձեռագիր. № 695, էջ 205ր:

3 Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական առդեր, Երևան, 1940, էջ 140:

4 Կիրակոս երեց, «Գովանք թռչնոց»: Մատենադարանի ձեռագիր № 3595, էջ 77ր: (Ինչպես երևում է «ծրար» կամ «մանծրար» կոչվել է ճախարակի իլիկը, նրա վրա գոյացած թելի կծիկի հետ միասին):

5 1512 թ. սովորած տաղարանը, էջ 41:

Ճախարակի իլիկի վրայից մշակումով լինեա կիսավարտ թելը կամ կաժը առնվում էր կաժառի վրա, այնուհետև երկու, երեք կամ նույնիսկ շորս կաժառի թելերի ծայրերը վերցնելով կծկում էին ի մի և մանում ստանալով երկթել, եռաթել կամ քառաթել մանվածք: Թելը մանելուց հետո հարթում, կոկում էին հարքիչի կամ հեջունի միջոցով: Դա բարակ ձող էր պատրաստված մետաղից, ոսկորից կամ փայտից, որը անցկացնում էին օղ արած թելի մեջ և մատերի միջև բռնելով թելի երկայնությամբ ետ ու առաջ տանելով կոկում ու նրբացնում էին թելը: Նման հեջուններ գտնվել են Գլինի միջնաբերդում: Թելի կոկելու այդ աշխատանքը կոչվում էր հեջունել, խազազել կամ խարզել, որոշ բարբառներում նաև բոել (մեծ մասամբ դրանք հնչյունական նմանեցումներով կազմված բառեր են):

Գործվածքի որակը մեծապես կախված էր ոչ միայն բրդի, բամբակի, վուշի, մետաքսի հումքի որակից, այլև մանվածքից՝ նայած այն բանին, թե որչափ բարակ կամ հաստ, ոլորուն կամ քիչ ոլորուն էր լինում թելը, որչափով էր այն կոկված: Բամբակից, մանավանդ մետաքսից ու վուշից, հաճախ մանել են այնպիսի նուրբ թելեր, որոնցից պատրաստված գործվածքները, մասնավորապես մետաքսյա շղարշները իրենց ներբույնությամբ վարմանը են առաջացնում: Դրանք հայտնի էին զազ անունով, ինչպես կոչվում էին նաև մետաքսի կոկոնից ստացվող նուրբ թելերը:

Պատրաստվում էին նաև թելեր, ոսկուց և արծաթից, ապա առանձին կամ վուշի, մետաքսի թելերի հետ խառը մանված հյուսում էին ոսկիթել ու արծաթաթել գործվածքների՝ դիպակների մեջ:

Անկվածագործություն: Բրդից, բամբակից, վուշից, կանեփից, մետաքսից գործվածքներ արտադրելու արհեստը միջնադարյան Հայաստանում հայտնի է եղել մի շարք անուններով: Ժողովրդի մեջ առավել պործածական, ինչպես երևում է, եղել է

կաավագործություն տերմինը, իսկ արհեստավորը կոչվել է կաավագործ, որը և տեղ է գտել առականների մեջ, օրինակ՝ Մխիթար Գոշի մոտ¹: Գրական լեզվի մեջ ավելի դործածական է եղել ուսուցանակություն տերմինը, դրան համապատասխան արհեստավորն էլ կոչվել է ուսուցանակ²: Հիմ էն նաև անկված, անկվածագործություն տերմինները³: Վերջապես, համեմատաբար ավելի նոր է, բայց միջին դարերում գործածվել է ջուլհակ⁴, պարսկերենից փոխառյալ տերմինը:

Ուսուցանակության տեխնիկան միջնադարյան Հայաստանում բավականաչափ զարգացած էր: Վաղուց ի վեր օգտագործվում էին երկու տեսակի հաստոցներ կամ դազդահներ՝ հորիզոնական և ուղղահայաց: Առաջինը շատ պարզ էր, կարելի էր ամրացնել գեանի վրա, ամեն տեղ հորիզոնական դիրքով, այդ դազդահի երկու մասերի միջև պրկել հենքի թելերը կամ առեչքները մի քանի մետր երկարությամբ, ապա այս ամշարժ հենքի վրա հյուսել թեղանի⁵ թելերը, որը արվում էր կամ ընդ առեչ, կամ ընդ թեղանի⁶: Այս ախլի հաստոցը շատ պարզ էր ու նախնական, աշխատանքը նրա վրա մշտապես կռայած, կորամեջք վիճակում ծանր էր և անարտադրողական: Կանգնած կամ նստած դիրքով աշխատելու համար այս հաստոցը ամրացնում էին պատի երեսին: Նման հաստոցի ակնարկությունը պատկերում ենք Աստվածաշնչում, որտեղ ասված է «կորզեաց զյիցսն հանդերձ ուսուցանին և

ալըրամբն յորմոյ անտի»¹: Այս պրիմիտիվ հաստոցը քաղաքի զարգացած արհեստագործությունից դուրս էր մղվել և պահպանվում էր գյուղերում:

Քաղաքներում գործածվում էր ուղղահայաց հաստոցը, որը մի շարք առավելություններ ուներ նախորդի նկատմամբ. սա ավելի բարդ էր և ուներ բազմաթիվ հարմարանքներ: Ուղղահայաց հաստոցի տակ լինում էր միտս՝ ջլկահոր, որի մեջ ոտքերը կախում էր հաստոցի սուջե նստած ջուլհակը և արի մեջ հավաքվում էր կտավը: «Ջուլհակերոյն հորակտան» հիշատակված է Ավանի եկեղեցու մի արձանագրության մեջ²: Ջուլհակի հորը հիշատակում է և Ներսես Շնորհալին: Սարգիս նմանեցնելով ջուլհակին նա գրում է.

Ի սուլտանի մեծ քարխանան,
Կայր մին ութայ խիստ աննման,
Առանց հորի և մարուբան,
Գործէր բարակ գործ անխափան³:

Միանգամայն բնական է, որ լեզուն էլ պահպանել է միջնադարի համար այս առավել կատարելագործված և առավել դործածական հաստոցի ու նրա օգտագործման տեխնիկայի հետ կապված մի քանի տասնյակ բառեր ու հասկացություններ, որոնք ազգապրական նյութերի հետ միասին թույլ են տալիս վերականգնել միջնադարյան ուղղահայաց հաստոցի պատկերը⁴:

1 Դատատրայ ԺԶ, 14:

2 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Ավանի երկրագլխան ծածկագիր արձանագրությունը, էջ 21:

3 1512 թ., տպագիր գիրքը, էջ 32—33:

4 Ուղղահայաց հաստոցի մասն էր կազմում այն շրջանակը՝ տորբը, որի մեջ ագուցվում էր սանդերքը (փայտե ձողեր կամ բրեք), որոնց վրա ամրացված էր լինում հենքը (գործվածքի հիմքը կազմող առեչաթելերի ամրոզությունը): Ուղղահայաց հաստոցի շրջանակը շարժական էր լինում և կաշվում էր խաղանավոր, որը հենքի հետ միասին կոչվում էր ազր: Սա շորս ճախարակներով կամ ճլուղանքներով կախված էր լինում ճլուղանրասար կոչվող մի հորիզոնական փայտից արհեստանոցի հատակին զանվող փոսի վրա, որը կոչվում էր ջլկահոր (ջուլհակահոր քառից), հորի մեջ հարմարեցված էին լինում ուսուցանակները:

1 Մարգարեություն Նասուկա, ԺԲ, 9. Մխիթար Գոշ, Առական, Երևան, 1951, էջ 120:

2 Ա. Թադևոսյան ԺԷ, 7. Բ թ ա դ ա լ ո ռ ա յ ԻԱ, 19, Ելից, ԻԸ, 6, 16, 35, 1Ը, 23. Յոր, 1Ը, 36. Գրիգոր Նսրիստրոսի թղթերը, էջ 204:

3 Ելից ԼԲ, 10, 21, 22: Մովսես Խորենացի, Բ, 1Գ, էջ 158:

4 Յայտնատորբ, փետրվարի Ա. Կ. Ղ ա ֆ ա դ ա ռ յ ա ն, Ավանի երկրագլխան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 21:

5 Ղ.ա. ԺԳ, 48—59:

6 Նույն տեղում, ԺԳ, 51:

Կլիմիսի պեղումների ժամանակ, ինչպես Դիշատակում է Կ. Ղաֆադարյանը, հայտնաբերվել է ջուլհակի արհեստանոց ջլկահորով, այսինքն այդտեղ հարմարեցված է եղել ուղղահայաց կամ կանգուն հաստոց: Դիվիսի և Անիի գլուխների թվում կան մի քանի կկոցներ պատրաստված սկորից, իսկ մեկը պղնձից¹:

Պատրաստի միադույն սպիտակ գործվածքը հաստոցի վրայից հանելուց հետո մարբելու

իսկ սրանք կապված էին ճլրանքների հետ, որոնցից կախված էր ազրը: Ազրի առջև նստած ջուլհակը ոտքերով հերթով սեղմելով մեկ կամ մյուս տախտակի վրա, բարձրացնում և իջեցնում էր հենքի մեկ կամ մյուս խավը, իսկ ձևաքերով հենքի առջև թեքների միջով անցկացնում հյուսվող թելը կամ թևանը, որի ծայրը կապված էր լինում կկոցից (կկոչյա) կամ մագուկից: Մագուզը 10—15 սմ երկարությամբ, 2—3 սմ լայնությամբ և 2—3 մմ հաստությամբ, առջևի ծայրը սրած, իսկ մյուս ծայրին թել կապելու անցք ունեցող մի գործիք էր պատրաստված փայտից, սկորից կամ մետաղից: Թևանը քանիցս անցկացնելուց հետո հարկավոր էր գործվածքը նստեցնել, որպեսզի նա խիստ լիներ: Այդ նպատակի համար ծառայում էր սանդրը Մխիթար Գոշի մոտ «սանդր շոյն», Առակներ, էջ 121), որը ամրացված էր լինում ազրի վրա: Հաստ թելերից կոպիտ գործվածքների թևանները նստեցնելու համար գործված կտավը թրջում էին փայտի ծայրին ամրացված շորով, որը բարբառներում կոչվել է վիրտաչ: Թևանի թելերը ամրացված էին լինում ազրի ետևի կողմից վերևում հաստատված մի փայտի վրա, որը բարբառներում կոչվել է մավրա: Գործված կտավը փաթաթվում էր ազրի հոտում, ներքևում կամ ջրկահորում հաստատված մի ճախարակի վրա, որը կոչվում էր սալման, կամ սայմի: Մենք այստեղ թվեցինք ջուլհակի ուղղահայաց կամ կանգուն հաստոցի միայն հիմնական հարմարանքները. դրանցից բացի կային և ուրիշները. օրինակ՝ ստեծ կոչվող փայտածոզերը, որոնց վրա արվում էր հենքը, ապա ամրացվում ազրի շրջանակի մեջ, կավե ծանրոց կախիչները, որոնք գործածվում էին դեռևս ուրարտացիների ժամանակ, գտնվել են Կարմիր-բլուրում, ինչպես և այլ հարմարանքներ, որոնք միառձի թվել անհրաժեշտ չէ:

¹ Н. Я. Марр, Реестр предметов древностей из VI археологической кампании в Ани, СПб, 1907, стр. 2.

և շատկապես սպիտակեցնելու նպատակով, լվանում ու թափում էին հատուկ գործիքով, որ կոչվում էր թափիչ¹: Հետաքրքրական է, որ թափիչ էր կոչվում նաև սպիտակեցման գործողությունը միտարող աշխատավորը:

Պատրաստի կտավեղենը մարբելուց, սպիտակեցնելուց հետո թափախում էին ալյուրից, օալայից և խեթից պատրաստված մի լուծույթի՝ շոհի մեջ, նրան ամրություն և գեղեցկություն տալու համար: Այդ լուծույթը պատրաստող և նրա մեջ գործվածքը թափախելու աշխատանքը կատարող աշխատավորն է, հավանաբար, որ կոչվում էր շոհարա:

Մանածագործության և անկվածագործության անխնիկայի հետ մեր ունեցած ծանոթությունից պարզ է դառնում, որ այդ տեխնիկան թույլ էր տալիս մանկ ամեն տեսակի թել և գործել ամենակոպիտ հյուսվածքներից սկսած, մինչև ամենանուրբ շղարշները: Իրոք, միջնադարյան գրտկանություն մեջ, էլսոմ հայերենի բառապաշարում միջնադարից զալով պահպանվել են բառեր ու տերմիններ, որոնք գործվածքների մեկ հասած նմուշների հետ միասին ցույց են տալիս, որ գործվածքների տեսակները վերին աստիճանի բազմազան են մեղել:

Գործվածքները ամենից առաջ պետք է խմբավորել ըստ այն նյութի, որից պատրաստվել են: Ինչպես երևում է, ամեն նյութի համար եղել են համապատասխան արհեստավորներ:

Ասվագործություն: Անկվագործության հնագույն, կարելի է ասել անդրըհեղեղյան Ճյուղը եղել է մազից ու բրդից գործվածքներ պատրաստելը: Այժմ մազից պատրաստված գործվածքը կոչվել է այժմինի, իսկ հյուսող արհեստավորը այժմնագործ², մազից ավելի տարածված էր բրդի օգտագործումը, որից ստացվում էին ավելի բարձր որակի գործվածքներ: Բրդի և բրդեղենի կամ ասուխի սարեայ, ասրեղեն գործվածքների

¹ նշՐ թափիչ բառը

² նշՐ, Այժմի և այժմնագործ բառերը

մասին բարձրաթիվ շիշտասկոթյաններ կան հայ հին մատենագրության մեջ¹: Բրդից գործվածքներ պատրաստող արհեստավորը կոչվում էր ասրագործ²:

Բրդե գործվածքներ հայանաբերվել են պեղումների ժամանակ, դեռևս ուրարտական բնակավայրերից: «Կարմիր-բլուրի պեղումները,— գրում է այդ պեղումների ղեկավար պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին,— տվել են բրդյա նուրբ գործվածքների շատ օրինակներ, մի դեպքում հաստ և ամուր գործվածքը սնկեր խավ՝ նման թավիշի»³:

Կտավագործություն: Անկվածագործության երկրորդ և համարյա նույն չափ հին ճյուղը լուսակաճն թելերից գործվածքներ պատրաստելն էր: Նույն Կարմիր-բլուրում գտնվել է մի ցանց, որը Բ. Բ. Պիոտրովսկու ասելով պետք է հյուսված լինի բունջութի թելերից: Բուսական թելերից էր գործված նաև նույն տեղում գտնված կոպիտ գործվածքը⁴:

Բույսերի ցողոմաների վրայից հանվող կանեփի թելը ավելի մեծ գործածություն դտավ, քան բունջութի թելը: Կանեփի թելից պատրաստում էին ամեն տեսակի թոկեր, շատ պինդ ու կոպիտ գործվածքներ, որոնք օգտագործվում էին վրանների, նավերի առագաստների և նման այլ նպատակների համար: Սակայն բուսական թելերից կտավի թելն էր, որը չտեսնված լայն ասպարեզ բաց արեց անկվածագործության համար և նրա պատեց նրա զարգացմանը:

Վուշը կամ կտավը (այսպես կոչվում էր կտավհատի բույսը) Հայաստանում հայտնի է եղել և նրանից ստացվող թելը օգտագործվել է գործվածքներ պատրաստելու համար հնագույն ժամանակներից սկսած:

Բրդյա գործվածքներ պատրաստելուց ստացվել կտավագործությունն էր, որ գյուղատնտեսությունից անջատվելով ինքնուրույն արհեստ դարձավ, դեռևս շատ հնում: Դրանով պետք է բացատրել, որ հնում կտավագործություն ասելով հասկանում էին անկվածագործության արհեստն ընդհանրապես: Վուշի կամ կտավի մշակույթի զարգացմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ նրա սերմերը պարունակում են մեծ քանակությամբ ձեթ, որը հանել և օգտագործել են նույնպես հին ժամանակներից սկսած:

Իզուր չէ, որ կտավի բույսին և կտավագործությանը կովկասյան ծագում են վերագրում: Կտավի և կտավագործության արհեստի ու գործվածքների վերաբերյալ երեք տասնյակ բառերի գոյությունը հին հայերենում ցույց է տալիս, թե որպիսի կարևոր տեղ է գրավել կտավագործությունը տնտեսության, մանավանդ կենցաղի մեջ: Դրան պետք է ավելացնել, որ հին հայերենի մեջ մտել են և բեհեզ, ասորերեն busa, շունարեն byssos բառերը, որոնք սկզբնապես նշանակելով կտավի բարակ թել, հայերենում զարգացել և հարաբարդվելով տասից ավելի բառեր են կազմել, կապված կտավագործական արհեստի և գործվածքների հետ:

Բեհեզ կամ բեհեզեղեղեն կոչվել են կտավի գործվածքները¹, որոնք սովորաբար բավականաչափ նուրբ էին լինում:

Սիջին դարերից մեկ հասած գործվածքների զգալի մասը, վուշի թելից է պատրաստված, այսինքն՝ բեհեզեղեղեն է: Կտավեղենը կամ բեհեզեղեղենը խոշոր դեր է կատարել առևտրի մեջ՝ շուկայում: Դրանով պետք է բացատրել, որ առաջացել են բեհեզավանառ, բեհեզաստուն, որից և ծագել է միջնադարյան բազազտունը, այնուհետև բազազալոց, որպես բեհեզեղեղեն գործող և վաճառողների շարք կամ ամբողջ թաղամաս միջնադարյան հայկական բաղաքներում, որ արդեն

¹ Տե՛ս ՆՀԲ,
² Նեմեսիոսի փիլիսոփայի եմեսացույ, Յաղագրությունների մարդու, Վենետիկ, 1889, էջ 85, «Ասրագործ ոմն գործէր ի տան նորայն»:
³ Б. Б. Пиотровский. Кармир-блур I, стр. 34.
⁴ Նույն տեղում, էջ 34:

¹ ՆՀԲ, բեհեզ և նրանից բարդված բառերը:

ստացել է յայն իմաստ և նշանակել է առձայտարակ գործվածքների արտադրության է վաճառքի վայր՝ շառք, թաղ: Այստեղից էլ առաջացել է վերջին դարերի բազմաբարձ, սրը նշանակել է գործվածքների վաճառող վաճառական:

Բամբակեղեն գործվածքներ: Անկվածագործության հաջորդ խոշոր ճյուղը բամբակեղեն գործվածքների արտադրությունն է եղել: Այն փաստը, որ Շիրակացու աշխարհացույցը (7-րդ դար) միայն Փայտակարան նահանգն է հիշատակում իբրև բամբակի մշակության վայր, թերևս ցույց է տալիս, որ բամբակը և բամբակեղեն գործվածքները հնում շատ տարածված չեն եղել: Հետագայում, 10—13-րդ դարերում, բամբակի մշակությունը աղբյուրներում հիշատակվում է արդեն Հայաստանի և Անդրկովկասի շատ վայրերում և բամբակը դառնում է անկվածագործության մեջ հսկայական դեր խաղացող նյութ: Բամբակի գործվածքների շատ տարածված լինելը պարզ երևում է այն բանից, որ 10—13-րդ դդ. հայերեն ձեռագրերի կազմերի տակ փակցված բամբակյա գործվածքների քանակը շատ մեծ է:

Մետաքսագործություն: Մետաքսի արտադրությունը Չինաստանից դուրս գալով, շուտով տարածվեց դեպի արևմուտք: 10-րդ դարում Թարսրիստանը, Ջուրջանը և Անդրկովկասի երկրները դարձել էին մետաքսագործության կարևոր կենտրոններ¹:

Մետաքսագործության զարգացած լինելը միջնադարյան Հայաստանի քաղաքներում հաստատվում է, ինչպես մատենագրական վկայություններով, նույնպես և մեզ հասած գործվածքների նմուշներով: Դրանից արտահանվող մետաքսի գործվածքների մասին խոսում են արաբ հեղինակները²:

Մետաքսի նուրբ գործվածքներ գտնվել են և Անիի պեղումների ժամանակ: Բավականաչափ մեծ է կարմիր և բաց դեղին գույ-

նի այն մետաքսե նուրբ գործվածքների թիվը, որոնք փակցվել են միջնադարյան ձեռագրերի կազմերի տակ և դրա շնորհիվ մեզ են հասել:

Մետաքսագործությունը կազմում էր ստախանկության առանձին ճյուղ և մետաքսի գործվածքներ արտադրող իբրև ինքնուրույն արհեստավոր հիշատակված է Անիի 1276 թ. վիմադիր մի արձանագրության մեջ, որտեղ ասվում է թե «Բուլեն ասյրեշմագործ»-ը արկահան-տամազիի պաշտոն էր ձեռք բերել¹: «Ասյրեշմագործ» բարբառային ձևից լացի կա և մետաքսագործ դրական ձևը, ըստ որում տրվում է և նրա հյուսած գործվածքի անոմը «մետաքսագործ կերպասի (կամ կերպասուց)», որ հանդիպում ենք Գրիգոր Մագիսարոսի, Հովհան Երզնկացու բերականության գրքերում²:

Գործվածքներ զանազան նյութերից արտադրվել են տարբեր նպատակների ու կիրառության համար: Դրան համապատասխան, նրանք եղել են տարբեր տեսակի և տարբեր որակի՝ շատ կոպիտ, հաստ, միջին տիպի, բարակ, վերին աստիճանի նուրբ, ցածրորակ կամ բարձրորակ և բավարարել են, ինչպես վերին, նույնպես և միջին ու ստորին խավերի պահանջարկը (տխտ. LXV):

Կոպիտ գործվածքներ: Ամենակոպիտ և կոշտ գործվածքները պատրաստվում էին այծի մազից և կոշվում էին խորգ³, ձորձ կամ բուրձ⁴, սակավ նաև այծէք: Իր կոպտության պատճառով խորգը կամ բուրձը մտել է վարքագրական գրականության մեջ իբրև իրենց մարմինը խոշտանգող ձգնավորների զգեստ:

1 Հ. Գ. ժամկոչյան, Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրության մասին, Երևանի Պետհամալսարանի «Գիտական աշխատություններ», 47 սրբալ. 2, էջ 89—90:

2 ՆՆԲ, մետաքսագործ բառը:

3 Փավստոս Բուզանդ, Պատմություն, Թիֆլիս, 1912, էջ 398, Լաստիվերտցի, էջ 48, Յայսմաուրբ, փետրվարի, ԺԳ, հոկտեմբերի ԻԸ:

4 Տե՛ս ՆՆԲ:

1 Hayd I, S. 43—44.

2 СМОМПК, вып. XXXVIII, стр. 92.

կար խորզին նամանիշ ցվախ րատր: «Բրդեղեն սչ զգեցաւ, ալլ միայն ցփսխ, ալլսինն մազեղէնս»¹:

Ճգնաւորներին ոչ սրբերին երբեմն կոչել են խաւազանգզեաւ կամ խարազնազգայ, որ կաշվի սրեմներից գործված խարազան իմաստից է, բայց ե՞լի գործածվում է ըզգեստների համար, կաշվի սրեմներից գործածված զգեստը իր վաղեմի իմաստը շունի, ալլ ընդդժվում է զգեստի կոպիտ պատրաստած լինելը, մասնավորապես ալլի մազից գործված լինելը²:

Բավականաչափ կոպիտ էին նաև բրդի հաստ գործվածքները, որոնք բացի ասվեղեն և բրդեղեն ամուսներից կոչվել են նաև շալ, որը շատ գործածական բառ է ժողովրդի մեջ: Այս գործվածքների կոպիտ լինելը արտահայտված է «շատ դատողին շալի շապիկ, քիչ դատողին շարև շապիկ» սոցիալական դիպուկ իմաստ ունեցող հին առածի մեջ:

Կանեփի կամ կաւովի թելից պատրաստվող կոպիտ գործվածքները կոչվում էին պաստառակ կամ պարզապես խաշար³: Կանեփի և կտավի թելերից գործում էին վրաններ, որոնք գործածական էին իշխանների և զորականների տեղաշարժերի ժամանակ:

Բարձրորակ և նուրբ գործվածքներ: Պատրաստվում էին և կտավի թանձր, բայց բարձրորակ վարագույրներ և ծածկոցներ, որոնք ձառընտիրներում կոչված են բեժ⁴: Բեհեղ բառը ընդհանրապես կտավեղեն նրշանակելով գործածվել է և նեղ իմաստով կտավի նուրբ գործվածքների համար: Մեղ ըլում է, թե արարական սղրչուղների բողջում⁵ բառը, որով կոչված են հայկական քաղաքների շատ հարգի գործվածքները,

բեհեղեղեն և նշանակում: Համանիշ բառ է բաղեան կամ բաղին¹ բառը, որը բեհեղեղեն նշանակելուց բացի, ունեցիլ է և կտավի շապիկ նեղ իմաստը:

Բամբակից պատրաստել են միջին սրակի զատաղան գործվածքներ:

Կերպաս տերմինը սովորական է եղել մետաքսե նուրբ միագույն և ծաղկավոր գործվածքների համար, անգամ կերպասաբեր գրականության մեջ անվանել են շերամի սրդին: Կերպասագործ², կերպասաւնեւ տերմինները գործածվել են միայն մետաքս հյուսողների, ներկողների և վաճառողների համար: Մետաքսաթելի և կերպասեղենի համար ժողովրդի մեջ գործածական էին նաև արեւշում և արեւշումնիլ³ բառերը:

Թավրը, բացի բամբակից, պատրաստվում էր նաև մետաքսից և շատ հարգի էր մասնավորապէս եկեղեցիների վարագույրների, ինչպէս և վերին դասի ու հոգևորականների զգեստների համար:

Մետաքսե ողորկ և փայլուն երեսով գործվածքը կոչվում էր արլա: Վարդան Այգեկեցուն վերագրվող առականներից մեկում կարդում ենք. «Ազուան է հողեր արլա ու Բիվխա, ի մէջքն է կապեր ոսկի հայասայ, ի վերեն քաշէր կանաչ լարիֆայ»⁴: Ընդգրծվածները բոլորն էլ գործվածքների տեսակներ են:

Մետաքսի նուրբ գործվածք կար, որը կոչվում էր մավ: Մեծ մասամբ մետաքսից (նաև բամբակից ու կտավից) էր շար⁵ կոչվող գործվածքը (շարև շապիկ—նուրբ փափուկ շապիկ):

Շարագույր⁶ կոչվում էր առավելապես

1 Յայամուրը, հոկտեմբերի ԻԱ:

2 Մ ո վ ս ե ս և ս ո բ ե ն ա ց ի, Պատմութիւն, էջ 295—320, Յայամուրը, սեպտ. Ի:

3 Գրիգոր Մագիստրոսի Ողբերը, էջ 204:

4 ՆԶԲ:

5 A. Kremer, Culturgeschichte des Orients, unter den Chalifen, Bd. I, WienS 1875, S. 342.

1 Մարգարեութիւն Դանիելի ժԲ, 6:

2 Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, Մատենագրութիւն, էջ 351, ՏԵ՛ս նաև ՆԶԲ:

3 Մ. Ա բ ե ղ յ ա ն, Գուսանական ժողովրդական սողեր, էջ 95, 96, 108, 143, 144 և ալլն:

4 Ժողովածոյը առական վարդանալ, հատ. Բ, էջ 344:

5 Մ. Ա բ ե ղ յ ա ն, Գուսանական ժողովրդական սողեր, էջ 61, 93:

6 Մագարիա արեղա, էջ 16:

մետաքսից (նաև կտավից, բամբակից) բարակ գործվածքը, կանանց զլխի ծածկոցը: Լեռնաքսից էին պատրաստում որդան կարմրով ներկված հայկական հռչակավոր ծիրանին, որը պարսիկների և արաբների մոտ հայտնի էր կրմզ և մարիզի, իսկ բյուզանդացիների մոտ պորփյուրիկոն¹ անուններով:

Մետաքսից պատրաստում էին ամենափրփրին շղարշներ, որոնք հայտնի էին դազ կամ կազ, անոճաներով: Կազ գործելը այնքան նուրբ արհեստ էր, որ թերևս անշատ արհեստ էր համարվում և կրում էր կազագործուրյուն² անոճը:

Ոսկերեկ դիպակներ և ծաղկազարդ ու նկարազարդ գործվածքներ: Բազավորական պալատների, իշխանական դղյակների տերերի և հարուստ վանքերի ու եկեղեցիների բարձր հոգևորականության շրջաններում գործածական էին դրականության մեջ ոսկեթել, ոսկեթեղան, ոսկեճամուկ, ոսկեհուռ, ոսկեկար, ոսկենկար և արծաթաթել անվամբ զիպակները: Դրանք առավելապես մետաքսից, նաև կտավից ոսկեթել և արծաթաթել գործվածքներ էին, որոնք գովաբանված են հայ ինչպես և արաբ հեղինակների կողմից³: Հայկական դիպակները հռչակված էին ոչ միայն Հայաստանի շուկաներում, այլև Երկրից դուրս. դիպակների սարքեր տեսանելի կային՝ ավելի թանձր, բարակ, երեսը ողորկ և այլն: Մետաքսի ոսկեթել ողորկ դիպակը կոչվում էր սնդուս⁴, բավականաչափ նուրբ գործվածք էր, նաև զառնավուխտ⁵ պարսկական անոճը կրող դիպակը: Ոսկեթել դիպակներից պատրաստում էին ոչ միայն զգեստներ⁶, այլև վարագույրներ ու

ծածկոցներ¹, անկողին, բարձեր կամ մովթաքաներ, որոնք նույնպես գովաբանված են արաբ հեղինակների կողմից:

Հայ Ֆեռդուրների նվերների թվում, որ նրանք արել են օտարազգի իշխանավորներին, կամ երկրի ներսում՝ եկեղեցիներին, որդան կարմրով ներկած կերպասներին և ոսկեթել դիպակներին հատկացվել է առաջին տեղը²:

Բագրատունի Սմբատ Ա թագավորը զորեղ դիմադրություն կազմակերպելով 10-րդ դարի սկզբին Հայաստանի վրա հարձակված էմիր Յուսուֆի դեմ, հարկադրում է նրան հաշտություն կնքել և մեծամեծ նվերներ ստանալով, ինքն էլ նվերներ է տալիս նրան: Դեպքերին ժամանակակից Հովհաննես կաթողիկոսը գրում է, թե թագավորը Յուսուֆին նվիրեց «երևելի զարդա հանդերձանաց, և նկարակերտ կազմուռածու բազմականաց կարմրութեամբ որդանաց, և քմրակս և նուագըս. և կամար ի համակ ոսկեւոյ՝ գործ հոմայական ճարտարաց, յերանգս դունակ գունակ ապակեւոյ»³:

Բացի հռոմեական (բյուզանդական) արծնապատ ոսկե գոտուց, մնացած իրերը և հանդերձները հայկական են եղել, իսկ զգեստների և բազմոցների գործվածքները, ինչպես նշված է, ներկված են եղել որդան կարմրով:

Սակայն, շուտով, Յուսուֆը թագավորական թագ տալով Գապիկ Արծրունուն և դաշն կնքելով նրա հետ՝ ընդդեմ Սմբատի, նոր պատերազմի պատրաստություն է տեսնում: Սմբատը կամենալով մեղմել արաբացի վայրագ զազանին, ինչպես ասում է պատմիչը, նվերներով նրա մոտ է ուղարկում կաթողիկոսին, որն իր պատգամավորությունն մասին գրում է, թե Սմբատի և այլ նախարարները հորդորանքով ես զնացի Պարսկաստան ոս-

1 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 204:

2 Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն, էջ 16, նաև ՆՁԲ Կաղազործութիւն բառը:

3 Մովսես Խորենացի, Պատմութիւն, էջ 190: Հովհաննես Կաթողիկոս, Պատմութիւն, էջ 249—250, 265: Յայամաւորք, հունվարի Ա:

4 Եզեկիել ԺՁ, 10:

5 Նույն տեղում, 13:

6 Յայամաւորք, նոյեմբերի Ժ:

1 Նույն տեղում, հոկտեմբերի ԻԸ:

2 Հովհաննես Կաթողիկոսի, պատմութիւն, էջ 250, 265:

3 Նույն տեղում, էջ 250, տե՛ս նաև էջ 265:

տիկանի մոտ «ընծայիւր և պատարագօր բազմօր յարքունի խանդարանաց, երևելի ոսկեհամուկ զգեստիւք, և ի նկարակերպ կանանց ոստայնանկովեանց բազում բազմականս կազմեալ, և բազում ձիս և ջորիս ի զարդս և ի զէնս յարդարեալ, այլև դանձոս ոսկեայ և արծաթոյ: Ոչ միայն զայսօսիկ, այլև ի տանէ սրբարանաց մերոց ըստ ձեռին լուսականի ընդ իս առեալ տանէի նմա»¹:

Այս վկայութիւնից մենք տեսնում ենք, որ թագավորական թանգարանից վերցրած զգեստներն ու բազմոցների ծածկոցները պատրաստուել են տեղում, այլև իմանում ենք, որ դրանք հշուակ են կանայք:

Յակուբին ևս հիշատակում է բազմոցներն ի ծածկոցները, որոնք արտադրվում էին Հայաստանում: Նգիպտոսի Սիուա (Ասիուա) քաղաքում արտադրվող նույնատիպ գործվածքները հռչակված էին և դրանք ներկվում էին որդան կարմրով: Ծածկոցների արտադրութեամբ անոն էր հանել նաև Բարսիստանը²:

Դիպակները լինում էին ոսկեթել և ծաղկազարդ: Ստեփանոս Տարոնացին խոսելով նույն 10-րդ դարում կառուցված Արգինայի վանքի մասին, ասում է թե խաչիկ կաթողիկոսը (973—992) այս վանքը զարդարել է ոչ միայն «սքանչազեղ յօրինաւածովք», այլև «մեծապայծառ, ծիրանածաղիկ, ոսկեթել անկուածովք»³:

Մի փոքր անց, 1001 թ. ավարտվում է Անիի հռչակավոր կաթողիկեի կառուցումը, և Կատրանիդե թագուհին այս տաճարը, ինչպես ասում է պատմիչը. «զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ, ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց և բազմապայծառ լուսատու անօթոց վայել-

չութեամբ, որովք շահանայր ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անուոյ»⁴, Այստեղ անկվածը ոչ միայն ոսկեթել է ու ծիրանածաղիկ, այլև նկարագործ, այսինքն վրան նկարված են եղել զանազան պատկերներ: Այս կարգի գործվածքների վերաբերյալ մի վկայութիւն էլ պահպանել է Կիրակոս Գանձակեցին: Նրա տեսնով Քրդի սրդի Սադունի քույր Արզու խաթունը, որը Հաթերքի իշխան Վախթանգի կինն էր, Ոսեթիին (1196) Գեառիկի նորակառուց եկեղեցուն, որ կառուցել էր Մխիթար Գոշը, նվիրել է մի վարագույր: Այդ ավելի պատմիչը գրում է. «Արար և վարագույր գեղեցիկ դասերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մալոյ այծից կակղագունաց, ներկեալ պէսպէս և զանազան, զործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք. տնօրինականօք փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողան»⁵:

Ըստ պատմիչի «իմաստութիւնն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան» կանանց տրված աստվածային պարզե էր⁶:

Արզու խաթունը նման վարագույրներ կամ ծածկոյթներ նվիրել է նաև Հաղրասին, Մակարա և Գատի վանքերին⁷:

Այժմ կակղագույն մաղից կամ աղվամազից, «քանդակակերպ», այսինքն ռելեֆ կերպով «ճշգրտագոյն հանուածովք», այսինքն բնդունված կանոնիկ ձևով ու պորտրետայնույթյամբ տեսարաններ ու սրբապատկերներ նկարելը գործվածքների վրա, խոսում է գեղարվեստական անկվածագործութեան գոյութեան մասին: Դիպակների որոշ նմուշներ մեզ հասել են ձեռագրերի կազմերի տակ փակցված (տխտ. XLVI):

¹ Յ ո վ հ ա ն ն է ս կաթողիկոս, Պատմութիւն, Երուսաղեմ, 1867, էջ 265:

² Jakub y, 119. տես A. Kremer, Culturgeschichte des Orients. R., I, S. 297

³ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց Ի, Պատմութիւն, Պեանքբուրդ, 1885, էջ 185:

⁴ Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ա ց Ի, Պատմութիւն, էջ 256:

⁵ Կ Ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց Ի, Պատմութիւն, էջ 203:

⁶ Նույն տեղում, էջ 203:

⁷ Նույն տեղում, էջ 204:

Վերևում բերված վկայությունների մեջ շեշտվում է ազնվական դասին պատկանող կանանց դերը՝ ոսկեթել, ծաղկազարդ և նկարազարդ «գործվածքներ պատրաստելու բընագավառում և դա հիմքից զուրկ չէ, եթե նկատի ունենանք, որ խոսքը վերաբերում է ոչ թե ոստայնանկության սովորական արհեստին, որով ազնվականները չէին զբաղվում, այլ արվեստի բնագավառին, որտեղ անտեսական և այլ հոգսերից ազատ ազնվական կանայք ձգտում էին ցուցադրել իրենց շնորհքը, ինչպես ազնվական տղամարդիկ հատուկ ձգտում ունեին ցույց տալ իրենց շնորհքը ուղղմական սխրագործությունների, խաղերի և որսորդության մեջ: Ավելի ուշ ժամանակի հյուսածո պատկերազարդ մի հին խաչվառ պահվում է էջմիածնում: Նրա մի երեսին պատկերված են Հիսուսը և չորս ավետարանիչները, մյուս երեսին՝ Տրդատը, Գրիգոր Լուսավորիչը և Հռիփսիմեն:

Մատենագրական աղբյուրները խնամքով հիշատակելով արտագործության մեջ աննշան տեղ դրավող ազնվական կանանց ոստայնանկության և նկարակերտման հանձարի մասին, ծայրահեղ սակավախոս ու ժլատ են Հայաստանում զարգացած և տընտեսություն, կենցաղի, առևտրի, նաև միջազգային առևտրի մեջ խոշոր դեր խաղացող անկվածագործության և ընդհանրապես արհեստագործության մասին: Այնուամենայնիվ անկվածագործության բոլոր արհեստի մասին որոշ տեղեկություններ կարելի է գտնել:

Գրիգոր Պահլավունի իշխանը, որը ֆեոդալական գիտության և կուլտուրայի գագաթից դեպի ժողովուրդը, «գոհհիկները», ինչպես նա անվանում էր, նայում էր ըի արհամարհանքով, նույնպիսի քամհարանքով էր խոսում նաև ընչաղուրկների կարիքներն սպասարկող կոպիտ գործվածքների արտագործության մասին: Նա ասում է. «թե կա երկու տեսակ ոստայնանկություն, ոմանք պատառ են դործում, խաշար, անհեթեթ, նոսր, որը անհարթությամբ կեմից գործվածի (խսիրի)

տեսք ունի (կեմատարաղ է) և կարկատված ու այլանդակված է մատերի մանվածքով: Իայց թող սրա նման պարսավելի շհամարեն ու շայպանեն ճախարակի նրբաքարը թելերից խիտ ու քանոնի հարթություն ունեցող պորվյուրիկոն — ծիրանի գործվածքներ և ժանյակներ հյուսելու արհեստը, որը հեղինակը դասում է ոսկի խուլյրեր պատրաստելու: «խուլյրագործություն» շարքը¹:

Ժողովրդական մասսաների կարիքներին ծառայող հասարակ գործվածքների արտագրությունը հակադրված է ֆեոդալական վերնախավի պահանջներն սպասարկող մետաքսյա շքեղ գործվածքների արտագրությանը և դրանք համարված են անկվածագործության իրարից տարբեր և փոքր հակադիր բնագավառներ, որոնցից առաջինը, Մագիստրոսի կարծիքով, պարսավելի է, իսկ երկրորդը՝ արժանի փառարանություն: Որքան էլ Մագիստրոսի վկայությունը արտահայտեր նրա քամհարանքը անկվածագործության առաջին բնագավառի նկատմամբ, այնուամենայնիվ խոսքը վերաբերում է միևնույն արհեստի մեջ իրարից արտադրանքով, արժանիքներով ու կատարման վարպետությամբ երկու տարբեր ճյուղերի գոյությունը:

Տարբեր տիպի գործվածքների մասին, բայց ֆեոդալականին հակառակ, ժողովրդական դադափարախոսության դիրքերից խոսում է և Ֆրիկը, որն փոքր քանաստեղծություններից մեկում խարաղանելով սոցիալական անարդարությունը ասում է՝

Մեկին բեհեզ և ծիրանի,
Մեկին բրդե շալ մի շանկի:
Մեկին աստլաս ու ղըրմզի,
Մեկին շապիկ մի շի հասնի²:

Վերևում հիշվեց, որ բարձր որակի ու թանկարժեք գործվածքների շատ տեսակներ են արտագրվել: Վարդան Այգեկցուն վերա-

1 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 204:

2 Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 236:

գրվող առականերում ևս տեղեկություններն են հանդիպում կանացի ղդեստների համար առավել հարգի գործվածքների մասին, զբրանք էին դումաշը (կերպասը), կարմիր սալին, սև աղլազին: Վարդան Այգեկցին հիշատակում է ջուհակի հյուսած «ծիրանին և երկնագուլյնն»¹:

Ա. Կրեմերը արարական աղբյուրների հիման վրա հիշատակում է մի շարք գործվածքներ. Mashj թաղիք, dabyky—գործվածք վուշի թելից, kasab — ոսկեթել— գործվածք, machamal — մախմուր, թալիշ, Chosrawāny — խոսրով շահի անվան հետ կապված բարձրակ զործվածք, sharb— գաղ կամ նրբահյուս շղարշ, alforosch-al kalamuny — ծաղկազարդ ծածկոցներ, dybāq — բարձրորակ և ծանր մետաքսե գործվածք, chazz— (խասս) atlas, ասվում է, թե լավագույնը հայկականն էր Chazz taruny և այլն²:

Օմայյան, Արաւսյան և Ֆաթիմյան խալիֆայությունների ժամանակների թվագրված գործվածքների մեջ, ինչպես երևում է, 8—10-րդ դարերի՝ փուլսիդայն թելերով նրբահյուս վուշե, բրդե, բամբակե և մետաքսե գործվածքներ շատ են հանդիպում³:

Տնտեսության և կենցաղի մեջ անկվածագործության խաղացած խոշոր դերով պետք է բացատրել, որ Յայամավուրքում տեղ է գտել Վարդենի անունով ոչ աղնվական ոստայնանակ կնոջ վարքագրությունը: Վարդենին նստած ոստայն է հյուսում և մի ցոփ երիտասարդի հետապնդումներից ազատվելու, փրկել իրրև կույս վանքին նվիրելու համար իր ձեռքի կկոցով կուրացնում է իր զույգ աչքերը⁴: Երիտասարդ և գեղեցիկ կնոջ հրաժարվելը նվիրական սիրուց, աշխարհիկ

կյանքից և անուն Լավաթի ու եկեղեցու խնքնակուրացումը հոգևորականների հորինած մի էֆեկտավոր պատմություն է, որը պետք էր եկեղեցուն բնակչության մեջ զարգացող աշխարհիկ հակամտների աճի և հավատի թուլացման դեմ կոմբելու համար: Բայց պարտադիր չէր, որ սյուլթեֆ հիմնական գործող անձը ոստայնանակ կինը լիներ. և եթե նրան են ընտրել, ապա դա պետք է բացատրել այդ արհեստի յարածված լինելու և կարևորության հանգամանքով, ինչպես և արհեստավորների շրջաններում ազատամբտության դեմ պայքարելու ձգտումով:

Անկվածագործությունը որպիս անաչնակարգ արհեստ, նրա կենտրոնները: Անկվածագործությունը վարդացած էր Հայաստանի բոլոր քաղաքներում, սակայն նրա խոշորագույն կենտրոններն էին Դվինը, Անին, Կարսը, Կարինը, Խլաթը, Նիքիթը: Հայկական հուշակավոր ծիրանի գործվածքի արտադրության կենտրոնը Դվինն էր: Արար մասենագիրները՝ Իսթահրին, իբն-Հաուբալը, Յակուրին վկայում են, թե Դվինը նշանավոր էր իր գործվածքներով: Մեծ համբավ ունեցր արհեստանապես «մաքիզի» գործվածքը: Դվինից ոչ հեռու Կրեմերը (հին Արտաշատ), որը դարձել էր Դվինի հետ սերտորեն կապված մի ավան, արար հեղինակների ասելով, ներկում էին ընտիր կերպասների և պատրաստում նուրբ քողեր և գոտիներ: Ալ-Իսթահրին ասում է. «Դարիլ (Դվին) քաղաքում պատրաստում էին: բրդե ղդեստներ և գորգեր, բովաքաներ, բազմոցներ, ժանյակներ և հայկական արտադրության այլ իրեր»¹:

Ավելի ընդարձակ են իբն-Հաուբալի տված տեղեկությունները: Նա ասում է. «Դարիլում պատրաստում են աղվամազից և բրդից մանվածքներ գորգերի, բարձերի և բազմոցների ժանյակների և այլ տիպի հայկական արտադրանքների համար՝ ներկած կրեմով (որդան կարմիր)... Դարիլում պատրաստվում են շատ մետաքսե ղդեստներ, իսկ

¹ Մատենագրանի ձեռագիր 6617 էջ 214ր
² A. Krem-er, (culturge-schichte des Orients unter den Chalifen, B. II S 283—290.
³ The Textil museum Catalogue of dated Traz fabrics Umayyad, Abbasid, Fatimid. By Ernst Kühnel, technical Analysis by Louise Bellinger Washington 1952 p. 5—85.
⁴ Յայամուրք, մայիսի Թ:

ինչ վերաբերում է այս վերջիններին, ապա նրանց նմանները շատ կան Ռուսի երկրում (Բյուզանդիայում), բայց սրանք (հայկականները) սովելի արժեքավոր են: Ինչ վերաբերում է այն արտադրանքներին, որոնք կոչվում են «հայկական գործվածքներ», ապա դրանք են «բուստը»¹, բազմոցները, գորգերը, ծածկոցները, փոքրիկ գորգերը (տապաստակ) և բարձերը. առարկաների մեջ չկա հուսնոց նմանները աշխարհի մի ծայրից, մյուս ծայրը և բոլոր ուղղութիւններում»²:

Ալ-Իսթահրին նշում է, որ Դվինում արտադրվում էր մեծ քանակութամբ օճառ, որ Ա. Կրեմերի կարծիքով դույնդույն ծաղկազարդ և ծանր մետաքսի գործվածքներն էին³:

Ինչպես տեսնում ենք, հայ և օտար աղբյուրների մատենագրական վկայությունները, լեզվի ու հնագիտության տվյալները բավականաչափ պերճախոս կերպով ցույց են տալիս, որ անկվածագործութունը իր բազմաթիվ ճյուղերով միջնադարյան Հայաստանի քաղաքների արհեստագործության մեջ նշանակալից տեղ էր գրավում: Նա իր արտադրանքով սպասարկում էր բնակչության բազմազան պահանջները, վաճառքի հանվելով երկրի ներսում և մեծ դեր էր խաղում երկրից արտահանվող ու միջազգային տարանցիկ առևտրի առարկա հանդիսացող արտանքների թվում:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը արաբական աղբյուրների հիման վրա նշում է Դվինից և այլ քաղաքներից արտահանվող այն գործվածքները, որոնք արտաքին շուկաներում շատ հարգի էին, ինչպես Դվինի մարիզին, հայկական ծածկոցներն ու վարապուրները, բազմոցի, բարձերի երեսները, չալմալի համար օգտագործվող գործվածքը,

բողոնը, ոտը համարվել է դույնդույն ծանր գործվածք, գոտիները և այլն: Այնուհետև հենդինակը բերում է փաստեր այն մասին, որ հայկական գործվածքները խալիֆաթի երկրորդից բացի արտահանվել են նաև Բյուզանդիա: Տրապիզոնում, օրինակ, վաճառվում էին հայկական դիպակը, բողոնը և այլ գործվածքներ¹:

Ֆիլիս Աքերմանը գտնում է, թե սասանյան ժամանակների հետ համեմատած՝ սելջուկյան ժամանակաշրջանում զգալիորեն վարգառել էր գործվածքների ինչպես արտադրություն, նույնպես և նկարագրամասն տեխնիկան, մշակվել էր նկարագրամասն բուն տեքստիլ ոճը ի տարբերություն սասանյան ժամանակաշրջանի, երբ գործվածքների վրա կրկնվում էր մետաղների զարդարման ոճը²: Ճիշտ կլինե՞ր ասել, որ այդ բանը տեղի էր ունեցել սելջուկներից առաջ 9—11-րդ դարերում:

Հ. Մանանդյանը Հայաստանի միջնադարյան քաղաքներում զարգացած արհեստների թվում ամենախոշոր նշանակություն վերագրում է անկվածագործությանը: Ընդգծելով անկվածագործության խոշոր դերն ու նշանակությունը, նրա զարգացման բարձր աստիճանը, իր ժամանակի համար, այնուամենայնիվ չի կարելի համաձայնվել հեղինակի այդ կարծիքի հետ: Եթե ելակետ եննանք ոչ թե տարանցիկ առևտուրը և նրա մեջ գործվածքների խաղացած դերը, այլ երկրի արհեստագործական արտադրության և տնտեսության մեջ արհեստների առանձին բնագավառների ունեցած դերը, ապա առաջին տեղը պետք է հատկացնել ոչ թե անկվածագործությանը, այլ մետաղագործությանը նրա բազմաթիվ ճյուղերով

1 Я. Манандян, О торговле и городах, 1930. стр. 160—161.

2 Phyllis Ackerman, Some problems of Seljuq and Sufavid Textstils. Տե՛ս III Международном конгрессе по иранскому искусству и археологии. Доклады. Москва-Ленинград. 1939, стр. 2—3.

1 Բուստը գործվածքներից գլխանոց էր, որը ծածկելիս փեղեր փռվում էին ուսերին:

2 СМОМПК вып. XXXVIII, стр. 92.

3 A. Kremer, Culturgeschichte des Orients, B I S 392.

հանդերձ: Չնայած դրան, անկվածագործության արհեստին պատկանում է առաջին տեղերից մեկը: Եթե Գրիգոր Պահլավունու և ֆեոդալական վերնախավի համար հարզի էին անկվածագործության այն ճյուղերը, որոնք սպասարկում էին այդ վերնախավի պահանջները, ապա ժողովրդի համար հարզի էին նրա բոլոր ճյուղերը՝ ընդհանրապես անկվածագործությունը: Զուգահեռները իրենց արհեստի հասարակական դերին և բերած եկամուտներին համեմատ սկսել էին որոշ տեղ դրավել հասարակության մեջ, այլև սկսում են թափանցել գրականության մեջ:

Վերևում խոսվեց յստայնանկ Վարդենու վարքագրության մասին, որը տեղ է գտել Յայամավուրբի մեջ և ընթերցվել է եկեղեցում ամեն տարի մայիսի 9-ին: Զուգահեռ մտել է և առակագրության մեջ: Մխիթար Գոշի Առակագրքում կարդում ենք. «Այդ ոմն կտաւագործ բնակեալ էր ի Տամբաւ. և իւր սովորութեան բարբ էր՝ առ ի զօրացուցանել զօրդին՝ ասէր, քազաւոր եմք արուեստիս: Եւ ի հարցման որդուցն, թէ ո՞րպէս, ասաց. սանդր շտոյն իբր զթագ րնեմ ի դուլս և զստէծ իբր զսուր վերացուցանեմ, և ի գործ կտաւին իբր յաթոռ նստիմ, ընդ ոտիւք տնկուով պատուանդան, և զկտաւ ժողովեմ իբրև աշխարհ հնարանդեցուցանելով, և ձայն սանդերն իբր զձայն փողոց և այլ ինչ ասացեալ այսպիսի: Յայամանէ ստիպէ [որդի] զհայրն՝ զգուտոր թագաւորին Պարսից խընդրել իւր. և երթեալ խնդրէր: Եւ նորա զայրացեալ հրամայեաց սպանանել: Եւ դիտացեալ թէ ի Տամբաւայ է այրն, հրամայեաց ներել»¹:

Այս առակի մեջ սրամտությունն այն է, թե տամբաւոցիք խնդրից պակաս են, բայց դա հետին պլանում է դրսևում, մի նախադասություն է կալմում և դժվարություն է հասնում ընթերցողին: Կարևորը մի կողմից կտավագործի և նրա աշխատանքի կենդանի

պրոցեսի տեղ գտնելն է 12-րդ դարի առակագրության մեջ, իսկ մյուս կողմից այն, որ կտավագործը դիտակցում է իր դերն ու արժանապատվությունը, խրախուսում է իր որդուն «թագաւոր եմք արուեստիս», ասում է նա, իրեն համեմատում է թագավորի հետ և այլն: Այսպիսով, էականը այս առակի մեջ թաքնված դաստիարակությունն է, որքան էլ իրականում կտավագործը հեռու լիներ թագավորից: Շատ հնարավոր է, որ Մխիթար Գոշը այդ առակը վերցրել է ժողովրդից:

Նշանակությունից զուրկ չէ և այն փաստը, որ շուգահեռ ընտանիքից արդեն դուրս են գալիս գրագետ մարդիկ և եկեղեցական գործիչներ: Օրինակ, 1020-ական թվականներին Պետրոս կաթողիկոսի հետ Կոստանդնուպոլիս զնացող վարդապետների թվում էր Ֆակ Գեորգ վարդապետ Զուգահեռագրը²: Զուգահեռները իբրև նվիրատուներ երևան են գալիս նաև 13—14-րդ դարերի ձեռագրերի հիշատակարաններում³:

Հայ շուգահեռները մեծ անուն էին հանել արարական աշխարհում և արար մատենագիրները գովեստներով են խոսում նրանց մասին իբրև շատ հմուտ արհեստավորներ: Յակուտը խոսելով Եգիպտոսի Ասիութ քաղաքում անկվածագործության դարգացած լինելու մասին, հատկապես նշում է, որ այստեղ կային հայ շուգահեռներ: Արար մատենագիր Աբու Սալեհի վկայությամբ Ասիութում հայ դարձվ կար, որն ուներ մեկ վանք և շորս եկեղեցի:

Անկվածագործության մի քանի մանր նյութեր: Անկվածագործության ճյուղերից էին խորանագործությունը, առագաստագործությունը և այլն: Խորանը կամ վրանը մի-

¹ Մ տ թ Ե ո ս Ու ա հ ա յ Լ ց ի, Ժամանակագրություն, էջ 105:

² ԺԳ-դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները կազմեց Լ. Խ ա չ ի կ յ ա ն, էջ 169, 361: Նաև Յայամաւորք, փետրվ. Ա:

³ Յ ա կ ու տ. դիրք Ա, էջ 272:

¹ Մ խ ի Թ ա Ր Գ ո շ, Առակներ, Երևան, 1951, էջ 120—121 (ընդգծումը մերն է — Բ. Ա.):

ջին դարերում մեծ գործածութիւն ունենալու և կային ջուհակներ, որոնք զբաղւում էին հատկապէս խորան գործելով, այդ պատճառով էլ կոչւում էին խորանագործ, կամ խորանարար¹, որոնք միաժամանակ կարող էին և առագաստագործ լինել, այսինքն նավերի համար առագաստ գործել: Կային ջուհակներ, որոնք հատկապէս դիպակե ծածկոցներ և մուխքանների երեսներ էին պատրաստում: Սրանք պատկանում էին դիպակագործների թվին: Հայաստանում շատ տարածված էր գոտեգործութիւնը: Հայաստանի գոտիները, որոնք պատրաստւում էին բրդից, մետաքսից և կտավից լինում էին ոսկեթել, արաբական պատմիչների ասելով: լավագույններն էին բոյոր գոտիների թվում և վաճառւում էին թանկ գնով: Հուզուդալ-ալամում ևս հիշատակւում են Դվինի շրջանի գոտիները: Նույն աղբյուրի վկայութեամբ գոտիներ արտադրում էին Հարավային Հայաստանի քաղաքները՝ Խոյը, Բերկրին, Արճեշը և Խլաթը: Դվինում և այլ քաղաքներում արտադրւում էր ճակ հատուկ գործվածք, որը օգտագործւում էր շալմաների համար:

Գոտեգործութեանը մոտ էր ժանյակագործութիւնը: Ժանյակը կամ նեղ ժապակներ մեծ գործածութիւն ունենալու և դրւում էր ղզեստների, փեշերի, թևերի, կրծքի բացվածքների, օձիքի վրա, նաև օգտագործւում էր իբրև գոտի՝ կանանց և երեխաների ղզեստների համար: Այսպիսի ժանյակների արժեքը նույնպէս մեծ էր լինում: Ժանյակները հյուսւում էին առավելապէս մետաքսից, երբեմն նաև կտավից, բամբակից: Ժանյակները հյուսւում էին հերունների օգնութեամբ ձեռագործ կատարելու եղանակով. երբեմն նրանք ամբողջւում էին շատ սլարդ դադգահի վրա, որպէսզի ավելի հեշտ լինեն նրանց միջից գույնդույն կամ ոսկե արծաթե թելերը անցկացնելը: Ժանյակը կամ ժա-

պակները կոչւել է նաև բուղ, ուստի հանդիպում է և բղագործ հին բարը:

Անկվածագործութեան ճյուղերից էին նաև գուլպագործութիւնը և քարպանագործութիւնը: Իհարկե, սկզբնապէս դրանցով զբաղւում էին կանայք իրենց ընտանիքի անդամների պետքերի համար գործելով գուլպա և ձեռնոց: Սակայն զորքի, մանավանդ քաղաքում անընդհատ աճող ընտանիքից զուրկ և օրավարձով աշխատող մարդկանց պահանջները բավարարելու համար գուլպան ու թաթկանը կամ ձեռնոցը նույնպէս շուկա գուրս եկան: Հնարավոր է, որ այդ գործով զբաղւում էին քաղաքի աղքատ դասերին պատկանող կանայք, որոնք փրկեց արտադրանքը շուկա էին հանում օրվա կտոր հացի փող վաստակելու համար:

Ձեռագործ: Կանանց, երեխաների, այլև տղամարդկանց ղզեստները, մանավանդ կերպասեղեն և բեհեղեղեն գործվածքներից կարածները, նուրբ քողերը, դանազան ծածկոցները և վարագույնները ծաղկազարդւում էին կամ նկարազարդւում գործելու ժամանակ, սակայն շատ տարածված էր նաև նրբանց ծաղկազարդումն ու նկարազարդումը ձեռագործով կամ ասեղնագործութեամբ: Ձեռագործ անելը սովորական էր՝ կանանց մեջ և երբեմն անցնում էր արհեստների սահմանները և դառնում ղզարվեստական ստեղծագործութիւն: Բարձրարվեստ ձեռագործ կատարողները, որոնք նկարում էին ամբողջ սյուժեներ, արդեն սոսկ արհեստավորներ չէին: Ձեռագործած գործվածքը երբեմն կոչւել է մառնեհրած¹: Հաճախ գործվածքներն ու ղզեստները զարդարում էին ձեռագործ ծաղիկներով և բուսական օրնամենտներով: Նման զարդեր ունեցող գործվածքներ հայտնաբերւել են Անիի պեղումների ժամանակ:

Անիում և Դվինում գտնւել են նաև ձեռագործի հերուններ, ոսկորից և մետաղից:

¹ Յ ո լ Տ. Ո ս կ ե բ ե ր ա ն, Մեկնութիւն նասյեայ, տե՛ս նշԲ:

¹ Մ. Արեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, էջ 118 և 282:

Հայկական ձեռագործների մասին կարելի է դատել ոչ միայն մեզ հասած ձեռագործական նմուշներից, այլև այդ նմուշներին շատ նման, երբեմն նրանց օրինակով քանդակների շնորհիվ, որոնք կատարվել են քարի և փայտի վրա և մեզ են հասել մեծ քանակությամբ:

Գործվածքները և ձեռագործության նրմուշներ՝ գտնված պեղումների ժամանակ: Անկվածագործության պատմության համար բացառիկ նշանակություն ունեն գործվածքների մեզ հասած, թեև սակավ նմուշները: Դրանում քանիցս գտնվել են ոսկեթել դիպակների մնացորդներ, ինչպես և հասարակ կտավե գործվածք: Անիում գտնվել է վերմակի կտոր՝ նուրբ գործվածքից, որի մեջ բամբակ էր դրված և կարված: Անկվածագործության զարգացման բարձր աստիճանը ցույց տվող կարևոր նմուշ է Անիում Մաղկոցաձորի քարայրային մեծ դամբարանում 1908 թ. դտնված փսքրիկ աղջկա զգեստը (№ 1140), որ նկարագրել է այն ժամանակ Անիի հնադիտական արշավախմբի աշխատակից Հ. Օրբելին, որից և օգտվում ենք:

Դամբարանում բացվել է մի գերեզման, որի մեջ, երեսայի զգեստը բավականաչափ լավ է պահպանվել (տխտ. LXVII ա): Դամուգ դեղնավուն մետաքս է, բայց սկզբնապես եղել է բաց դեղնավուն: Ամբողջ զգեստի միջով վերից վար կարմիր թելով անցկացված են իրար զուգահեռ գծեր, զգեստի վերին և ցածի մասերը գոտկատեղում միացված են իրար հորիզոնական կարով, առջևից՝ գոտկատեղից ցած աջ կողմից ավելի կոպիտ գործվածքից երկու շրջանաձև կտոր է դրված փեշի վրա և կարված: Դա հազիվ թե կարկատան լինի, ավելի շուտ այդ կտորները դրված են իբրև զարդ և Հ. Օրբելու կարծիքով թալիսմանի նշանակություն են ունեցել: Առջևից, գոտկատեղից ցած, զգեստը մինչև փեշի ծայրը բացվածք ունի, որը չի կոճկվել, իսկ կրծքի վրա անցքեր են արվել և երկու տեղից կապվել է նույն գործվածքից պատրաստված կապերով: Զգեստի վիզը

բարձր չէ և նրա վրա առջևից կարված է ձեռագործով ոսկեթելերով արված վեց պսակաթերթ և պտղաբերած վեց վարդյակ: Արանք արված են առանձին կտորի վրա, որը վարդյակների արանքում կտրված է այնպես, որ վարդերը կտորի մնացած մասով շղթայաձև իրար հետ են միացված: Զգեստի թևերի ծայրերին դրված են ավելի հաստ կտորից նեղ երիզներ, որոնց վրա ձեռագործով արված են զարդեր՝ իրար հետ մոտակից վերև, դրված են փոռեր, ուսնք զգեստի թևին ամրացված են միայն վերևի եզրերով, իսկ փոռը ազատ ընկել է թևի վրա և ցածի եզրերից նրան կայցված չէ: 4,5 սմ լայնք ունեցող այս փոռը, հավանաբար բնականա ճուրբ գործվածք է, տակին ավելի նուրբ կտորից դրված աստառով և զարդարված է ձեռագործ ոսկեթել նկարով, որը ներկայացնում է երկու զուգահեռ գծերի միջով անցնող, իրար հատող գծերից կազմված երկրաչափական զարդ, արված փոռի վերին և ցածր եզրերից, իսկ սրանց միջև փոռի կենտրոնում երկու իրար հատող նեղ ժապավեններով արված է հյուսվածքաձև նկար: Վերևում հիշատակված վարդյակների շղթայի նման մի շղթա էլ դրված է օձիքի վրա և անցնում է նրա ամբողջ երկայնքով: Գոտին մետաքս վարդադույն ժապավեն է՝ հարմարեցված ներսի կողմից և չի կապվել: Հ. Օրբելու կարծիքով դա սիմվոլիկ նշանակություն է ունեցել: Աղջկա թևին եղել է ուլունքներից կազմված ասարանջան¹:

Աղջկա գլխին կապված է եղել սև գույնի մետաքս նուրբ շղարշ, որի գործածությունը թերևս թաղման ծեսի հետ է կապված: Շղարշը փթել է և նրա մի մասը պահպանվել է կյած դագաղի փայտին: Շղարշի վրա ձեռագործով նկարված է երկու զազան իրար մոտեցողի դիրքով, մեկը հովազ է՝ կանգնած

¹ И. Орбели, Каталог Анниевского музея, стр. 32—35.

ոճավորված իւրի տակ, իսկ մյուսը՝ փոքրը առյուծ (տխտ. LXVII գ): Մետաքսե շղարշի սև ֆոնի վրա ձեռագործ նկարն արված է նուրբ ոսկեթելերով և եզերված է ոսկեղօծ նուրբ հյուսվածքով: Աղջկա գլխի տակ դրված է եղել մետաքսե գործվածք, հավանաբար բարձի ծածկոց, որի վրա ձեռագործով արված են եղել բարդ նկարներ: Դրանցից երևում են բազմաթիվ թռչուններ, որոնք պատկերված են թռչելու մոմենտին՝ վերին աստիճանի դինամիկ ու համարձակ: Դամբարանում գտնվել է նաև դեղնագույն մետաքսյա գործվածքի մի կտոր¹:

Դատելով տեղից, ահազ. Օրբելին ենթադրում է, թե այս դամբարան-քարայրը Տիգրան Հոնեցի հանգստարանն է եղել²:

Մի փոքրիկ աղջկա զգեստի վրա մետաքսե ու բեհեզե յոթ տեսակի գործվածքների, ինչպես և դանազան տեղի ձեռագործ զարդերի, պատկերների առկայությունը, ինքնին վերին աստիճանի կարևոր մի փաստ է անկիվածագործության և ձեռագործի բարձր զարգացման աստիճանի վրա գտնվելու վերաբերյալ: Բայց դա միակ փաստը չէ. Անիում գտնվել են նաև գործվածքների այլ մուսոցորդներ: Օրինակ, քաղաքի հյուրանոցներից մեկի պեղման ժամանակ գտնվել է մորու գույնի մետաքսե մի սքանչելի գործվածք, հաստ ու բարակ թելերից հյուսված շերտերի հաջորդական զուգադրությամբ: Այս շերտերի վրա էլ գործված են քառակուսիներ: Գործվածքը շատ լավ է պահպանված, աճպես որ երևում է նրա մետաքսե խավը:

Պետական Պատմական թանգարանում, բացի վերևում նկարագրված զգեստից, Անիի հավաքածոյի մեջ մի քանի համարների տակ պահվում են այդ քաղաքում գտնված գործվածքների և ձեռագործի նմուշներ: Դրանց թվում վուշի գործվածքի մի կտոր, հաստ թելերից հյուսած գործվածք (№ 1124):

Բարակ թելերով նույն մետաքսե (թերևս կտավե) գործվածք (№ 1130): Մի քանի դեպքերում գործվածքը փթել է, չի պահպանվել, բայց մնում է նրա վրա արված ձեռագործ զարդը: Օրինակ նույն հավաքածուի 1126 համարի տակ պահվում է ոսկե թելերով ձեռագործված մի փոքրիկ շատ գեղեցիկ ծառի սլատկեր (տխտ. LXVII բ): Իսկ 1127 համարի տակ պահվում են ձեռագործված ոսկեթել վարդյակներ, 1139 համարի տակ՝ ոսկեթելով ձեռագործված բուսական և երկրաչափական մոտիվների զուգակցություներ կայացնող մի զարդ: Մի դեպքում կարելի է վերականգնել ձեռագործը կատարելու եղանակը, խոսքը վերաբերում է ոչ թե սլատրաստի գործվածքի վրա ձեռագործ անելուն, այլ դադագահի վրա ամրացրած հենքի վրա դուշնդուշն թելերով ձեռագործ պատկերներ նկարելուն (№ 1122):

Ձեռագրերի կազմերին փակցրած գործվածքներ: Միջնադարյան անկվածագործության տևումնասիրության համար խոշոր նշանակություն ունեն հին գործվածքների այն նմուշները, որոնք պահպանվել են հայկական ձեռագրերի կազմերի տակ՝ փակցրված լինելով կազմերի տախտակին՝ ներսի կողմից:

Մենք նայել ենք Մատենադարանում պահպանվող 9—13-րդ դարերի բոլոր ձեռագրերի կազմերը և դրանց տակ փակցրած գործվածքները: Այստեղ հանդիպում են վերևում մեր թվարկած, կարելի է ասել, բոլոր աստիճանի գործվածքների նմուշները, որոնց մասնագիտական ուսումնասիրությունը մինչև այժմ ոչ ոք չի զբաղվել, տեղամ չի որոշված գործվածքների առանձին լամբերի նյութը, հայտնի չեն նրանց մեծ մասի արտագործության վայրերը և ժամանակը, թեև պարզ է, որ դրանց զգալի մասը ժամանակակից է այդ ձեռագրերին:

Գործվածքների մասնագետ շինելով, արժարծվող հարցերը մենք չէինք կարող լուծել, սակայն անհրաժեշտ ենք գտնում

¹ И. Орбелн, Каталог Анийского музея. стр. 36—38.

² Նույն տեղում, էջ 38:

անել մի քանի նախնական բնույթի ընդհանուր դիտողություններ:

Նախ պետք է նկատել, որ կազմերի տակ փակցրել են գերազանցապես կտավի գործվածքներ, այնուհետև մետաքսի, վերջապես նաև բամբակե գործվածքներ: Բրդյա գործվածքներ չեն հանդիպում: Մետաքսե գործվածքները աչքի են ընկնում իրենց նրբությամբ, շատ նման են վերևում նկարագրված փոքրիկ աղջկա զգեստին և ներկված են առավելապես կարմիր (որդան կարմրով և տորոնով), բաց դեղին ու դեղին գույներով: Կան և այնպիսի կտավե գործվածքներ, որոնք նրբությամբ մոտենում են մետաքսին:

Ոսկեթել և արծաթաթել դիպակները, ինչպես երևում է ավելի բնորոշ են եղել հին ժամանակների նաև 9—10-րդ դարերի համար թեև քիչ են պահպանվել: Հետագայում (11—13-րդ դարեր) դիպակներ պատրաստելիս նրանց զարդերի ոսկե կամ արծաթե թելեր փոխարինել են ոսկեգույն և արծաթագույն ներկած մետաքսե կամ վուշե թելերով, որոնցով արված են ծաղկազարդեր՝ գործելու միջոցին: Նույն այս եղանակով է դարդարված օրինակ ՉՄԷ (1308) թվականի № 1590 ձեռագրի կազմի տակ փակցված դիպակը՝ 13-րդ դարի համար բնորոշ խաչի պատկերով, որի թևերի միջև գործված են հայերեն տառեր, իսկ խաչը առնված է շքեղագծի մեջ:

Ավելի հաճախ են հանդիպում երկու կամ ավելի գույներով ներկված թելերից, տարբեր գույնի շերտերով կամ վանդակաձև նկարով հյուսված գործվածքները, սովորաբար բամբակից¹ (տխտ. LXVIII): Եթե չհաշվենք միագույն (կանաչ, շագանակագույն, կարմիր, կապույտ), ամեն տեսակի և ամեն նյութից գործված նմուշները, ապա կարելի է ասել, որ ամենից ավելի պահպանվել են,

¹ Եգիպտական նույնտիպ նմուշները թվագրվում են 12-րդ դարով, Ernst Kühnel, Islamische Stoffe aus Agyptischen gräbern, Berlin, 1927, S. 37. Tafel 19.

ինչպես և պետք էր սպասել, մասսայական արտադրանք հանդիսացող գրոշմազարդ կամ դաճաղարդ գործվածքները (տխտ. LXIX): Սրանց վրա լինում են ամեն տեսակի՝ առավելապես բուսական և երկրայափական զարդեր, որոնց կամ նկարն է ներկված, ֆոնը մնում է բաց գույնի, կամ ընդհակառակը, ֆոնն է ներկված, իսկ եթե ծաղկազարդերը դրված են շերտերի մեջ, ապա հաջորդաբար ներկված է լինում մեկ ֆոնը, մեկ նկարը: Այս զարդերի ուսումնասիրությունը կարող է պարզել գործվածքների արտադրության տեղի, ժամանակի և առանձին դարոցների վերաբերյալ շատ կարևոր և կնճռոտ հարցեր: Դյուրությամբ կարելի է զանազանել օրինակ, Տաթևի վանքի արհեստանոցներում կազմված գրքերի կազմերին փակցված կտավե գործվածքները, որոնք դրոշմված են երկու տիպի տրաֆարետներով, որոնցից մի տիպը թույլ էր տալիս ներկել նկարը, մյուսը ընդհակառակը՝ ֆոնը: Տաթևի համար բնորոշ է հաստ, ոչ հրատակ դժերով խճողված նկարը և դժվար է որոշել նրա բուսական կամ երկրաչափական լինելը:

Գրքերի կազմերի վրա փակցված գործվածքները ներկված են բազմազան գույներով, բայց առավել գերակշռում են կարմիրը, կանաչը, շագանակագույնը, դեղինը և կապույտը: Որդան կարմրով ներկված են ինչպես կտավը, նույնպես և մետաքսի և բամբակե գործվածքները: Բոլոր դեպքերում էլ որդան կարմիրը պահպանել է իր թարմ ու վառ գույնը, իսկ տորոնով նկարվածները, մեծ մասամբ խոնացել են:

Կազմերի տակ փակցված պահպանվել են նաև ձեռագործություն նմուշներ: 1267 թ. № 3611 ձեռագրի կազմի տակ փակցված սպիտակ նուրբ գործվածքի վրա կարմիր մետաքսաթելով ստեղծագործված են շեղանկյան մեջ առնված կենաց ծառեր, յոթ դույզ ոճավորված ձյուղերով: Շեղանկյան անկյունները նույնպես ձևավորված են երկ-

րաշափական պատկերներով, իսկ ամբողջը առնված է շրջանակի մեջ¹:

Ձեռագործած շեղանկյան պատկերներ, բայց այլ տիպի, հանդիպում են նաև № 521 ձեռագրի կազմի տակ փակցրած կտավի նուրբ գործվածքի վրա: Դրանք նույնպես կատարված են սպիտակ ֆոնի վրա կարմիր մետաքսաթելով և համաչափ են ու շնորհալի:

Այս նախնական և շատ ընդհանուր դիտողություններն անգամ թույլ են տալիս կրկին անգամ պնդելու, որ ձեռագրերի կազմերին փակցրած գործվածքները բացառիկ նշանակություն ունեն միջնադարյան անկվածագործության և ժողովրդական արվեստի ուսումնասիրության համար: Այդ շատ կարևոր աշխատանքը կատարելու ժամանակը վաղուց է հասունացել:

Ներկարարություն: Միջնադարյան Հայաստանում ներկերը շատ լայն գործադրություն ունեին: Նրանք գործածվում էին մի շարք այլ արհեստների մեջ. օրինակ՝ գործվածքների, գորգերի, կաշվեղենի ներկման, գրչության մեջ, ինչպես և որմնանկարչության, կավագործության ու այլ բնագավառներում:

Հայաստանը հռչակված էր իբրև բաղմազան ու բարձրորակ ներկերի արտադրության երկիր: Ներկերը պատրաստվում էին տարբեր նյութից և տարբեր եղանակներով՝ բույսերից, հանքանյութերից (զանազան հողերից), մետաղներից, նաև միջատներից (որդան կարմիր): Ներկը պատրաստելու բաղմազան ձևեր կային, օրինակ՝ տրորելը, քամելը, հյութը քամելը, ջրով եփելը, դափելը, օքսիդացնելը և այլն:

Կենդանական ներկերից ամենաճանաչա-

վորն էր որդան կարմիրը, որը դեռևս 5-րդ դարի հայ մատենագիրների վկայությամբ մեծ հռչակ էր վայելում և արտահանվում էր երկրից դուրս: Որդան կարմիրը պատրաստվում էր Արարատյան դաշտում բույսերի և նրանց արմատների վրա բնակվող կարմրագույն միջատից: Անանիա Շիրակացու Աշխարհացույցում կարդում ենք. «Եւ ունի Այրարատ լեռունս, դետս, և դաշտս պիտանիս, և երէս, և հաւս, և զամենայն պատրաստութիւն և զծովակն Գալլատու, և որդն սիզաբերեալ արմատոց, առ ի վարդ կարմրութեանս դունոյ»: Այս միջատը հավաքում էին, երբ նա բզեզ էր կամ հարսնակային վիճակում էր լինում, կաթսաների մեջ եփում էին և ստանում ներկ: Ներսես Շնորհալին մի հանելուկում որդան կարմրի մասին գրում է.

«Տեսի արուեստ զարմանազան,
Ձի նշտակով զերկիր բանան,
Հանեն արիւն անտի զինչ թան
Եւ դիր գրեն կայսերական»:

«Եկ և տես ա՛յլ սոսկալի,
Ձի հատոցով երկիր բլրի,
Ելնէ կենդան ու ոչ կենդանի,
Առնէ կարմիր զգոյն սպիտակի»²:

Ներկատու որդը իջնում էր հողի մեջ և հարսնյակ դառնում, շերամի պես ծածկվելով թելավոր կոկոնով: Ներկ պատրաստողները հենց որդերի հողի մեջ իջնելու ժամանակ էլ հավաքում էին նրանց, երբ մի մասը դեռևս հարսնյակ չէր դարձել, իսկ մյուս մասը կոկոնավորվել էր. այդ իմաստով էլ պետք է հասկանալ Շնորհալու ասածը, թե երկիրը բրելով հանում են կենդանի և անկենդան (հարսնյակ) որդը, որով սպիտակ թելը և այլ նյութերը կարմիր են ներկում:

¹ Ասեղնագործած զարդերով այս գործվածքը փակցված է գրքի կազմի վրա շրջված վիճակում՝ աստառով զեպի դուրս և վերականգնված ու հրատարակված է ասեղնագործության մասնագետ Սերիկ Դավթյանի կողմից (տե՛ս «Թանրեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 43—51):

¹ Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, Մատենագրություն, էջ 351:

² Ն ն ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի, տե՛ս Մատենադարանի ձեռագիր, № 9071:

Որդան կարմրի և նրա պատրաստման մասին տեղեկություններ են պահպանել արաբ մատենագիրները. ալ-Մուկադդասին, օրինակ, ասում է, թի Դվինի և Վաղարշապատի շրջանում «...հանդիպում է կրմզը— դա որդ է, որը երևում է հողի մեջ, որտեղ գալիս են կանայք և ուշադրությամբ հավաքում են նրան պղնձի ամանների մեջ և գնելով հաց թխելու թոնիրների վրա» հիվելով պատրաստում են ներկը¹: Իրն-ալ-Ցա-կիհի ասելով որդան կարմիրը այնքան է հուշակված, որ հայերը պարծենում էին նրանով: Նա գրում է. «Հայերն ասում էին՝ մեզ մոտ առատությամբ կա մանանան, կամ այլ կերպ տարանջուրինը²: Մեզ մոտ կա կրմզ, որը բացի մեր երկրից; ուրիշ ոչ մի տեղ չկա: Դա կարմիր որդ է, որ երևում է դարնան օրերին. նրան հավաքում են, նստում և ցրանով ներկում են բրդեղենը»³:

Իրն Հատկալը ասում է. «Կրմզը կարմիր ներկ է, նրանով ներկում են ավլամազե և բրդե իրերը: Այդ ներկը գոյանում է որդից, բոլոր հյուսում է իր շուրջը նման շերամի որդի, փնչպես որ սա կոկոն է հյուսում իր շուրջը»⁴: Ներսես Շնորհալու մի դրվածքում կարդում ենք հետևյալ տողերը.

«Որ ըզգեցար ըզծիրանին,
Արկեր քղամիդ կարմիր յանձին...
Ըզքուրձ մեղաց մերկես յինէն,
Ձյորդան կարմիր արիան գունին»⁵:

Արաբ մատենագիրների վկայությունները, թե որդան կարմրով ներկում էին միայն ավլամազից և բրդից պատրաստված գործվածքները. ճիշտ չէ: Ինչպես տեսանք ողբյուրներում հիշատակված է որդան կարմրով ներկված մետաքսը: Բացի այդ, կան

միանգամայն անառարկելի փաստեր. Մատենադարանի ձեռագրերի կազմերի տակ փակցված գործվածքներից պարզ երևում է, որ որդան կարմրով ներկել են ոչ միայն բրդեղեն, այլև մետաքսեղեն, բամբակեղեն, կտավեղեն գործվածքները: Որդան կարմիրը աչքի է ընկնում մուգ կամ վառ կարմիր գույնով և ունենում է հատուկ փայլ, որը անվթար կերպով պահպանվում է դարեր շարունակ:

Մատենադարանի նախկին քիմիկոս Խոսրով Գալֆայանի փորձերը ցույց են տվել, որ հին Հայաստանում հուշակված այդ կարմիր որդից ստացվում էին ոչ միայն բազմազան երանգի կարմիր ներկեր, այլև սովորական և մատչելի բաղադրություններ խառնելով կարելի էր ստանալ վարդագույն, մանուշակագույն, շաղանակագույն, դեղին, մոխրագույն, երկնագույն, ներկեր: Բայց ամենից ավելի վառ ու դուրեկան գույնը որդան կարմիրն էր, որ Բյուզանդիայում հայտնի էր «հայկական պուրպուր» անունով:

Մեծ կիրառություն ունեին բուսական ներկերը, որոնք արտադրվում էին զբաղի քանուկությամբ: Շատ տարածված ու սովորական էր տոբոնի արմատներից ստացվող կարմիր ներկը, որով ներկված գործվածքները նույնպես հաճախ են հանդիպում ձեռագրերի կազմերի վրա: Նույն Իրն-ալ-Ցա-կիհի վկայությամբ հայերն ասում էին, թե «մեզ մոտ առատությամբ կա տարանջուրինը»¹—տորոնը: Տորոնի գործածությունը շատ հին է, իզուր չէ, որ այս բույսն հիշատակված է դեռևս Շիրակացու Աշխարհացուցում: Սև և թուխ երանգի այլ ներկեր պատրաստելու համար մասսայաբար դործածվում է գրորը: Հավաքելով կանաչ գրորը ծծոնում կամ աղում էին ու հիվելով բարձրորակ սև ներկ կամ թանաք էր ստացվում: Ուշագրավ է, որ մի հին ժողովրդական երգում ասվում է.

«Նկեք ծծե՛նք սոխ ու սխտոր, կանաչ

¹ СМОМПК, вып. XXXVIII, стр. 16.

² Մանանան դա ծառերի տերևների վրա նստող մեղրացողն է, սակայն այստեղ նա նույնացվում է տարանջուրինի հետ, որը տորոնն է կամ մարենան:

³ СМОМПК, вып. XXXI, стр. 39.

⁴ СМОМПК, вып. XXXVIII, стр. 92.

⁵ Ներսիսի Շնորհալույ Բանք շափաւ, էջ 121:

¹ СМОМПК, вып. XXXI, стр. 39.

վխատր...», իսկ 12-րդ դարի մի տաղում,
ամեն Մեր Ներսես Շնորհալուսն անվանում է.
«ավեր խաղաց, գղթող աղաց»:

Պարզվում է, որ ներկելու և կաշին դա-
լաղելու համար գործածվող մեծ քանակու-
թյամբ գղթորը աղում էին հին, մաշված
քար տնեցող ջրաղացներով: Ներկարս-
ները ներկում էին կամ թելեր կամ պսու-
րաստի գործվածքներ: Նրանք ունեւում էին
իրենց արհեստանոցը, որը կոչվում էր նեւ-
կատուն, ներկոց, նաև տուն ներկոց¹:

9-րդ դարում, երբ Դվինը խոշոր քաղաք
էր և արհեստագործության կենտրոն, Ար-
տաշատը պահպանվում էր սրպես սուկ մի
ավան, որտեղ կաշին գործվածքները ներկե-
լու, մասնավորապես որդան կտրմբով
ներկելու արհեստանոցներ. այդ պատճառով
Բիլաձորին Արտաշատը անվանում է «գա-
րիետ յուլ-կերմեզի», այսինքն կարմիր ներ-
կի ավան²:

Ներկարարները ավելի հնում կոչվել են
Նարոտաների: Մի թարգմանական աշխա-
տության մեջ կարդում ենք «Գունակ գունակ
ձաղկովք զարդարեալ է առհասարակ ամե-
նայն երկիր... որոյ ոչ կարե՛ն նմանեցուցա-
նիլ նարոտաներկք իւրեանց ճարտար արու-
եստագիտությամբն»³: Սարգիս Շնորհալին
ևս զարմանքով է խոսում ծիրանի պատմու-
ճան և մորթի ներկող (մորթեներկք) արվես-
տի մասին⁴:

Ներկարարի համար գործածված է նաև
ներկիչ անունը⁵:

Ներկանյութերը հաճախ պատրաստում
էին առանձին-առանձին և վաճառվում, եր-
բեմն էլ շուկա էին հանում բոլորովին ան-

պատրաստ ներկանյութը: Ներկարարները
պետք է լինեին այնքան փորձառու և հմուտ,
որպեսզի իրենք պատրաստեին ներկերը
համ ձեռք բերած հումքից կամ կիսապատ-
րաստ նյութերից: Այդ տեսակետից բնորոշ
է Մատենադարանի № 551 (17-րդ դ.) ձե-
ռագրում պահված մի հատվածը, որը կոչ-
վում է «ներատ կարմիր ներկելոյ թէ կտաւ,
թէ մանած»: Այդ խրատից երևում է, որ
ներկարարը ձեռք բերելով կիսապատրաստ
ներկանյութեր՝ գղթոր, պաղլեղ և տորոն,
ինքը պատրաստել է կարմիր ներկը և իրար
հաջորդող գործողություններով ներկել գործ-
վածքը:

«Մէկ նուկի բունին պատորն Մ դրամ
շիպ ԴՆ. դրամ տօրունն Ա. նուկի, պատորն
զշիպն ւողայ զատ ի զատ և յառաջ տաք
ջրով զպատորն շաղվէ և զբանն այդով աճոէ,
բայց ջուրն ա[յ]նչամի թող լինի, որ լուր
վկտան թոջ և շաւեղնայ. և փոէ յարեղակն,
որ շորանայ. դարձեալ զշիպն տուր այդ
կերպովը և շորացուր յարեղակն, բայց եթէ
կտաւ է և փոես դուզ անդեհն որ արեղակն
լինի, նշան արա, որ ի ներկելոյ տեսնն
երես զայն առնես: Ապա երբ շիպն շորաց-
նես՝ տար ի քաղցր ջուր լվայ զբանին
զամէն դեհն Զ. Զ. անգամ ի քարն զարգ և
քամէ և տար եթէ տօրունով սրայէս ռասմն
(կարգն) է և դէմն հանէ, զ Ա. ծայրն պաղ
ջրով լվայ և տես որ, երբ հաւանիս գունին
շուտով հանես, թէ չէ սևադուն լինի»⁶:

Գործվածքները ներկելիս, որպեսզի գույ-
նը լավ բռնի և կայուն լինի, ներկի լուծույ-
թի մեջ օգտագործում էին աղ, կալաքար,
և այլ նյութեր, երբեմն էլ ներկված գործ-
վածքը հանելով ներկի միջից դնում էին
ամրացնող լուծույթների մեջ, պահելով այս-
տեղ մի առժամանակ, նայած ինչ լուծույթ
էր գործածվում և ինչ թանձրություն ունեւր

1 Յայտամուտք, փետրվարի Ը, Ներսես Շնորհա-
լի, թողթ ընդհանրական, էջ 66:

2 Из книги зинсеганий стран Ахм. Белад-
зорни. Пер. П. К. Жузе. Баку, 1927, стр. 10.

3 Բարսեղ Կեսարացի, Ճառք վասն վեցօ-
րեայ արարչութեանն, Վենետիկ, 1830, էջ 102:

4 Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանյ
թղթոց կաթողիկեայց, Կ. Պոլիս, 1826, էջ 190:

5 Յայտամուտք, փետրվարի Ը:

6 Ա. Խ. Հարությունյան, Ներկերի և թա-
նաքների գործածությունը հին հայկական ձեռագրի-
րում, Նրևան, 1941 թ., էջ 35, դեղատոմս № 28, (հմ.
ձեռ. 551, էջ 87բ—88բ):

վածքների գույնը. գործվածքների 'ամար պետք է քիչ գործածական լինել նաև թանկարժեք երկնագույն կապույտ լաջվարդը: (ինդիգոն), որը մանրանկարներում առատորեն է գործածված, իսկ որդան կարմիրը շատ հարգված ու գործածական էր անկվածագործության մեջ: Ձեռագրերի կազմերին փակցրած գործվածքներից և մանրանկարներից երևում է, որ շատ ատրածված են եղել կարմիր, կանաչ, դեղին, կապույտ, վարդագույն, շագանակագույն, մանուշակագույն, մոխրագույն, սև գույները՝ իրենց բազմաթիվ երանգավորումներով: Շատ ատրածված է եղել նաև դեղին գույնը, որն ստացվում էր զաֆրանից, իսկ վառ դեղինը՝ քրքում ծաղկից:

Ձարդերի մեջ գերակշռողը ծաղկազարդն է, բուսական օրնամենտը, այնուհետև երկրաչափական զանազան ձևի զարդերը, ինչպես և տարբեր գույների, շերտերի, շրջանակների, անորոշ տեսք ունեցող պատկերների համադրությունը, նաև վանդակաձև զարդը:

Կազմերի տակ ամրացված գործվածքների ուսումնասիրությունը երևան է գալիս մի շատ կարևոր երևույթ՝ փայտից կամ տախտակից փորագրությունը պատրաստված զարդաձևերի (դրոշմ, տրաֆարետ) օգնությունը տարբեր գույնի ներկերով գործվածքները դրոշմելու տեխնիկան: Թեև այդ տեխնիկան կարող էր առաջացած լինել վաղուց, սակայն նրա ընդարձակ կիրառությունը կապված էր արհեստագործության զարգացման այն աստիճանի հետ, երբ արհեստավորը սկսում է արտադրել շուկայի համար: Իրոք, 12—13-րդ դարերում, բազմագույն թելերով հյուսածո ծաղկազարդեր ունեցող գործվածքներ շատ սակավ են հանդիպում, մինչդեռ դրոշմազարդ գործվածքները բացարձակապես տիրապետող են դառնում:

Գործվածքները դրոշմազարդելու (դաճելու) տեխնիկայի կիրառությունը միջին դարերում հաղիվ թե 10-րդ դարից ավելի վաղ սկսված լինի (խոսքը բացառություններին

չի վերաբերում, ոչ էլ հին եգիպտական (լիթինների) գործվածքներին: Գիտնականները հրատարակել են արաբական խալիֆաթի (նաև ֆաթիմյանների) երկրներից մեզ հասած թվագրված գործվածքները, որոնց քանակը բավականաչափ մեծ է, իսկ գործելուց հետո ներկած, ոսկեզօծած և դրոշմազարդ գործվածքները՝ դրանց թվում աննշան են, ընդամենը մի քանի հատ և պատկանում են 10—11-րդ դարերին¹, փակ ավելի վաղ օրինակներ չկան (ավելի ուշ օրինակներ չեն բերված): Կյուհնելի հրատարակած եգիպտական նմուշների մեջ հնագույնները պատկանում են 12-րդ դարին:

Հեղինակի առեղծվածը դրոշմազարդումը սկսվում է ուշ-ֆաթիմյանների ժամանակը:

Գործվածքները դրոշմազարդելը տեխնիկապես դյուրին գործ էր և հնարավորություն էր տալիս օգտագործել նկարիչների շնորհքը նորանոր դրոշմազարդեր ստեղծելու և արտադրության մեջ կիրառելու համար, անկախ այն բանից, թե նրանք արհեստով զբաղվում էին: Դրա համար անհրաժեշտ էր թղթի կամ մագաղաթի վրա նկարված զարդերից հանել նրանց ընդօրինակությունը դրոշմելու տախտակների (տրաֆարետ, շաբլոն) վրա: 12—13-րդ և հետագա դարերից մեզ հասած դրոշմազարդ գործվածքների թիվը շատ մեծ է և թույլ է տալիս դրոշմազարդելու արվեստը համարել ժողովրդական հարուստ զարդարվեստի կարևոր բնագավառներից մեկը:

Կարելի է ենթադրել, որ ծաղկող բառը նկարող կամ նկարիչ իմաստով առաջացել է ոչ այնքան ձեռագիրները ծաղիկներով զարդարելու, որքան գործվածքները և սրանց նմանությունը շենքերի ու բնակարանների պատերը ծաղկավոր որմնանկարներով զարդարելու տարածված արհեստից, որին և

¹ The Textil Museum, Catalogue C. dated Tiraz Fabrics Umayyad, Abbasid Fatimid. by Ernst Kühnel, technical Analysis by Louisa Bellinger, Washington 1952 p.p. 87—89, 99, pl. L II.

² Ernst Kühnel, islamisch Stoffe aus Agyptischen Gräbern, Berlin 1927 S. 85, Tafel 48-50.



Դրոշմադարդ գործվածք (Մատենադարանի № 1175 ձևադրի կաղմի տակ, XIII—XIV դ.):

(Առաջին անգամ տպվել է «Армянская набойка» գրքում, Մոսկվա 1953):

Նկ. 6. հաշտորյան

հետևել են գրքերի մանրանկարներ անող ծաղկող նկարիչները, որոնք էլ ավելի դարգացրին ու ճոխացրին այդ արվեստը:

Ներկարարությունը սպասարկելով լայն ծավալ ունեցող անկվածագործություն, գորղադործության և այլ բնագավառների պահանջները, ինքն էլ տարածված արհեստ էր և եկամուտ էր բերում ոչ միայն ներկարար արհեստավորներին, այլև տեղական և օտարերկրյա փշխող ֆեոդալներին, որոնք հարկադրում էին ներկատները և ստանում նրանց եկամուտների զգալի մասը: Այս տեսակետից բնորոշ է Ներսես Շնորհալու մի վկայությունը. խոսելով այն մասին, թե սելջուկները հարկ են դրել եկեղեցիների վրա, նա գրում է. «Աճեցուցանեն զկապալա ի վերայ եկեղեցույ Քրիստոսի, որպէս զտունս բաժից կամ զներկոցաց»¹: Ուրեմն, բաժ տներից և ներկոցաց տներից պանծվող հարկը և դրա աճը տարածված մի սովորական հրեւոյթ էր, որը ոչ մի տարակուսանք չէր առաջացնում, Ուստի Շնորհալին եկեղեցու հարկադրությունը նրանց հետ է համեմատում:

Կերձակույրուն: Դերձակությունը միջնադարյան քաղաքներում նշանակալից տեղ էր գրավում: Բնակչության վերնախավերը՝ ֆեոդալներն ու հոգևորականությունը ֆեոդալական հիերարխիայի մեջ իրենց բռնած տեղի համեմատ հատուկ ձևի և որոշ գործվածքներից զգեստներ էին հագնում: Դրանցից միայն թագավորները, իշխանները և բարձր հոգևորականներն էին օգտվում փրենց պալատական կամ վանքապատկան դերձակների կարած զգեստներից, իսկ մյուսները պատվիրում էին քաղաքի արհեստավորներին: Քաղաքի միջին կարողության բնակչությունը նույնպես իր զգեստները դերձակներին էր կարել տալիս: Չի բացառվում և այն, որ պատրաստի վիճակում գնում էին արհեստավորներից: Այդ են ակնարկում արաբական աղբյուրները, որոնք

խոսում են ոչ միայն Հայաստանի գործվածքների վաճառքի մասին, այլև հիշատակում են այս կամ այն գործվածքից վաճառքի համար պատրաստված մետաքսյա ըղպեստները¹:

Մատենագրական ավանդներից հայտնի է, որ հայկական թագավորությունների և իշխանությունների զորքերը հատուկ ձևի համազգեստ էին հագնում, իսկ կարսի Գապիկ թագավորի զորքերի զգեստների ոչ միայն ձևը, այլև դույնն էր սրորոշված. ընտրված էր կարմիր զգեստը, որպեսզի վինվորների վիրավորվելու դեպքում, մյուսները չնկատեին արյունը և չբնկճվին մարտի դաշտում: Դժվար է մտածել, թե թագավորը այնքան մեծ թվով դերձակներ էր պահում յր պալատում, որ նրանք սպասարկելին, թե արքունիքի և թե զորքի պահանջները: Բնական կլիման և նթագրել, որ հարկ եղած դեպքում արքունիքը մեծ քանակությամբ զգեստներ էր պատվիրում դերձակներին, ինքը հայթայթելով պահանջվող տեսակի և գույնի գործվածքը: Զորականի զգեստի սարքերությունը աշխարհականի կամ հոգևորականի զգեստից, դրականության մեջ, նշվում է²: Հավանականությունից զուրկ չէր լինի այն ենթադրությունը, թե տղամարդկանց, կանանց, աշխարհականների, զորականների և հոգևորականների զգեստները կարում էին յուրաքանչյուր բնագավառում մասնագիտացած դերձակները: Համենայն դեպս գրականության մեջ, իբրև տարբեր արհեստավորներ են դիտված դերձակները և հալավարները, որոնցից առաջինները զգեստներ էին կարում աշխարհիկ մարդկանց համար, իսկ երկրորդները՝ պրազանցապես հոգևորականների համար: Թերևս այդ իմաստով պետք է հասկանալ Անիի երազահանում հիշատակված «հալավարար» տերմինը «հալավարարը սրբահավատ մարդ է»³: Մանավանդ դրանից անմիջապես վերև

1 СМОЛІК, вып. XXIX, стр. 19.

2 Յայմաուրք, հոկտեմբերի 18:

3 Մատենագրանի ձեռագիր N 605, էջ 220:

1 Ն Ե Ր Ա Լ Ս Շ Ն Ո Ր Հ Ա Լ Ի, Թուրք ընդհանրական, էջ 66ա:

նույն նախադասութեան մեջ առանձին խոս-
վում է նաև դերձակների մասին: «Հալավը»
Վիսնոս Օրբելյանի մոտ գործածված է
իբրև սարկավագի շապիկ¹:

Դ՛ ղձակութունը շատ հին արհեստ է.
ինքը դերձակ բառը պահպանվել է մինչև
այժմ և ժողովրդի մեջ պահպանվել
է դրա դարդի ձևը: Այս արհեստը միջին
դարերում կենտրոնանալով քաղաքներում,
մյուս խոշոր արհեստների նման առանձին
շարք էր զբաղեցնում: Անիի պեղումների
ժամանակ բացվել է դերձակի արհեստա-
նոց, որտեղ գտնվել են մետաղե մատնոց և
ասեղ: Դերձակներն անգամ հավակնութուն
են ունեցել իրենց արհեստը գերադասելի
համարել ջուհակութունից, որն իր արտա-
հայտութունն է գտել առակագրության մեջ:
Գոշի առակներից մեկում կարդում ենք.
«Արքային Սողոմոնի հանդերձ ոմն կարել
արուեստիւ սքանչելի, և յոյժ ուրախացեալ
պանծայր: Եւ բեհեզագործն ընդդէմ նմին
գիւրն հարգէ արուեստ: Եւ լուեալ արքայի
կոշեաց զնոսա և ընտրեաց ի մէջ նոցա, թէ
անկազմ է կտաւ առանց կարողի. սակայն
զո՞ կարէ արուեստին, եթէ չիցէ արարեալ
կտաւ, զի և Ադամ զտերև եգիտ և արար
հանդերձ: Եւ այսու առաջին ցուցաւ կտաւս-
պործ, քան զկարող:»

Ամենայն ուրէք առակս անպարսաւ ցու-
ցանէ զկտաւագործ, զոր բազումք այլա-
նեն»²:

Գոշը առաջնութունը տալիս է կտավա-
պործին, որովհետև գործվածքը արտադրողը
նա է և ոչ թե դերձակը:

Դերձակներն աշխատում էին առավելա-
պես պատվերով և պատվիրատուի նյութով,
սակայն հիմք կա կարծելու, թե նրանց մի
մասը աշխատում էր շուկայի համար: Այս
դեպքում դերձակը կարում էր զգեստներ և
իր արհեստանոցում սպասում էր զնորդների:
Որոշ քանակությամբ զգեստներ պատրաս-

տում և տնտեսականներին զուրս էին բերում
շուկա՝ վաճառքի: Շատ կարևոր տեղեկու-
թյուններ են պահպանվել արաբ և տաջիկ
հեղինակների մոտ, որոնք խոսում են Հա-
յաստանից արտահանվող ոչ միայն գործ-
վածքների, այլև պատրաստի զգեստների
մասին: Վերևում Դիլիսի վերաբերյալ մեջ
բերվեց ալ-Խաթահուե վկայութունը, որտեղ
ասվում է թե այնտեղ պատրաստվում էին
բրդե զգեստներ, որոնք արտահանվում էին:
Նույն 10-րդ դարի անանուն տաջիկ հեղի-
նակը «Հուզուդ-ալ-ալամ»-ում Ադրբեջանի,
Արմենիայի և Առանի մասին խոսելիս նշում
է, թե այնտեղ արտադրվում է կարմիր
(կիրմիզ) ներկ (խոսքը հայկական որդան
կարմրին է վերաբերում), բրդե անդրավար-
տիկ և հագուստներ, աղելարեր, բամբակ,
ձուկ, մեղր և մում»³: Ինչպես տեսնում ենք
հեղինակը խոսում է նաև պատրաստի հա-
պուստեղենի մասին:

Անկվածագործության վերաբերյալ նյու-
թերի քննութունից կարելի է անել հետևյալ
կարակացութունները.

1. Անկվածագործութունը քաղաքային
արհեստագործութունն էր բռնում էր առաջ-
նակարգ տեղերից մեկը:

2. Զուհակները իբրև նյութ, լայնորեն
օգտագործում էին բուրդը, վուշի թելը, բամ-
բակը և մետաքսը՝ արտադրելով բազմա-
պիսի գործվածքներ, որոնք օգտագործվում
էին բազմազան նպատակներով և բավա-
րարում հասարակության, ինչպես վերնա-
խավերի, նույնպես և ստորին խավերի պա-
հանջները:

3. Հայկական գործվածքները աչքի էին
բնկնում բարձր որակով և կատարման բար-
ձր արվեստով, դույնների ու զաքդերի հա-
լրատութամբ: Նրանց մի քանի տեսակները՝

¹ Ս ա լ փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Յ Ա Ն, Պատմութիւն
էջ 110:

² Մ ի թ ա ր Գ Ծ Ղ, Առակներ, էջ 122:

³ Худуд-ал-алам, 326—33а. Հմմտ. Հ. Փա-
փազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստա-
նի, Ադրբեջանի և Արևելյան Արաստանի աշխարհա-
գրության և տնտեսական հարաբերությունների մո-
սին (10-րդ դար), ՀՍՄՍ ԳԱ «Տեղեկագիր», № 5,
1953, էջ 77—78:

որդան կարմրով ներկված մետաքսեղենը, հայկական ծիրանին, գուլնզգուլն և ծաղկազարդ մետաքսե կերպատները, կտավե գործավածները՝ բեհեզները, ոսկեթել դիպակները, ծածկոցներն ու վարագույրները, բազմոցների ու բարձերի երեսները, գոտիներն ու ժանյակները մեծ հռչակ էին վայելում թե՛ երկրի ներսում և թե՛ նրանից դուրս: Հայաստանի քաղաքների ջուլհակները անուն էին հանել իբրև բարձրակուսակա և հմուտ վարպետներ:

4. Բավականաչափ խորացել էր աշխատանքի բաժանումը անկլավադործության մեջ և այդ արհեստը բաժանված էր բազմաթիվ ճյուղերի ու մասնաճյուղերի, նայած այն բանին, թե ինչ աշխատանք էր կատարվում, ինչ էր արտադրվում և ինչ նյութից: Խնքնուրույն արհեստավորներ էին դարձել ղողոչները, մանողները, բրդից, վուշի թելից, բամբակից, մետաքսից գործվածքներ արտադրողները, նուրբ և կոպիտ գործվածքներ պատրաստող վարպետները, առագաստագործները, դոտեգործ-ժանյակագործները, ներկարարները:

5. Անկլավադործության արտադրանքը սպասարկում էր թե տեղական պահանջը և թե արտահանվում էր երկրից դուրս: Հայկական գործվածքները միջազգային առևտրի մեջ զգալի տեղ էին գրավում:

6. Հետզհետե մեծանում է անկլավադործության արտադրանքի շուկայական նշանակությունը. 12—13-րդ դարերում ջուլհակները արտադրում էին առավելագույն շուկայի համար, դրան համապատասխան դիպակների և հյուսածո ծաղկազարդ նկարներ ունեցող գործվածքների արտադրությունը, որը միշտ էլ սահմանափակ ծավալ է ունեցել, 11-րդ դարից սկսած տեղի է ապրիս դրոշմման տեխնիկայով ծաղկազարդվող գործվածքների արտադրությանը, որը ընդարձակ արտադրություն էր և 12—13-րդ դարերում տիրապետող էր դարձել: Բացի գործվածքներից շուկայի համար արտադրվում էր նաև պատրաստի հագուստ:

Դորգագործությունը առավելագույն տնային արհեստ էր, որով զբաղվում էին գործից ազատ ժամանակ, մեծ մասամբ ձմեռը, երբեմն ամբողջ ընտանիքով կամ ընտանիքի իրական սեռի բոլոր անդամները, որոնք հմուտ գորգագործ հոր կամ մոր ղեկավարության ներքո հորինում էին ամեն տեսակի ու երանգի ծաղիկներ ու պատկերներ: Տնային գորգագործության այս ավանդական սովորությունը պահպանվել է մինչև մեր օրերը: Բայց տնային գորգագործությունից ավելի ուշագրավ էր միջնադարյան քաղաքներում զարգացած գորգագործական արհեստը, որը ինչպես կտեսնենք առաջնակարգ է համարվել Արևելքի բոլոր երկրներում: Արաբ մատենագիրների հիշատակած հայկական գրգերը, որոնք հսկայական մեծություն ունեին և իրենց զարդերով էլ հանդիսանում էին գորգագործության դուրս գործոցներ, իհարկե տնային գորգագործությանը չէին պատկանում և հանդիսանում էին քաղաքներում բարձր զարգացման հասած արհեստի արտադրանք:

Անցյալի հայկական գորգագործության վերաբերյալ մատենագրական և այլ տեղեկությունները հավաքել և գորգագործության վերաբերյալ իր աշխատության մեջ շարադրել է պատմական դիտությունների թեկնածու Վ. Ս. Թեմուրճյանը¹:

Հայկական աղբյուրները տեղում արտադրվող գորգերի մասին լուծում են, ինչպես շատ ուրիշ արհեստների արտադրանքի մասին: Եթե բազմոցների, ծածկոցների կամ վարագույրների մասին մի քանի հիշատակություն էլ հանդիպում է, այն էլ շնորհիվ այն բանի, որ բազմոցների երեսները

1 Վ. Ս. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում. պատմա-ազգագրական ուսումնասիրություն, Երևան, 1955 թ.: Միջին դարերի գորգագործության վերաբերյալ տե՛ս էջ 26—47:

Սմբատ Ա.-ը նվիրել է Յուսուֆին, իսկ վարագույրները, որոնց մասին հիշատակություն կա, եկեղեցիներին նվիրել են անվանի տիկիներ և երախտապարտ հոգևորական պատմիչը հարկ է համարել հիշատակություն խողնել այդ առթիվ, իսկ գորգերի մասին գրելու առիթ չի ունեցել: Այս պակասը մասամբ լրացնում են օտար, մասնավորապես արաբական աղբյուրները:

Բյուզանդական հեղինակ Սիմեոն մագիստրոսը իր Ժամանակագրությունը մեջ պատմում է, թե բուլղարների 814 թ. Թլրակիա կատարած արշավանքի ժամանակ վերցրած ավարի թվում կային հայկական բարձրորակ խավավոր գորգեր, (χαλσαθηραζα ζωοι հագրատեղեն և պղնձե անոթներ):

Հայկական գորգերի մասին տեղեկություն պահպանվել է Մուհամմեդ Բար-Յահյա պատմիչի ասորական մի պատառիկում, որտեղ ասվում է, թե հիջրեթի 299 թ. (911 թ.) «Էմիր Աբուսաջը Մուկտադիր խալիֆին ուղարկեց (Հայաստանից) 400 ձի, 30 հազար գինար և յոթ հայկական գորգ, գորգերից մեկը 60 կանգոն փրկարություն, և 60 կանգոն լայնք ունեւր, այդ գորգի վրա աշխատել էին տաս ասորի»²: Եթե Այդ ժամանակ գործածվող կանգոնն ընդունենք 0,51—0,52 մետր ապա գորգի երկայնքն ու լայնքը կկազմի մոտ 31 մետր, իսկ մակերեսը՝ ավելի քան 960 քառ. մետր: Իրավ, դա գորգագործության գլուխ գործոց պետք է լիներ: Արաբական խալիֆաթը փնչպես երևում է շատ բարձր գնահատելով հայկական գորգերը, ամեն տարի իբրև հարկ Հայաստանից ստացել է որոշ քանակությամբ գորգ: Այդ առթիվ ուղղակի վկայություն է պահպանել իբն-Խալդունը իր հարկերի ցուցակում, որտեղ ասում է, թե գեռև Մահդիի և Հարուն-ալ-Ռաշիդի օրոք խալի-

ֆաթը Հայաստանից ստանում էր 20 գորգ¹: Իբն-Ֆադլանը 10-րդ դարի 20-ական թվականներին այցելելով Կամայի բուլղարների երկիրը, վկայում է, թե նրանց թագավորի վրանում, որտեղ կարող էր հազար մարդ տեղավորվել, փռված էին հայկական գորգեր, իսկ գահույժը ծածկված էր բյուզանդական դիպակով²:

Ակադեմիկոս Վ. Բարտոլդը արաբական և սլավոնական աղբյուրների հիման վրա նշել է, թե հայկական գորգերը մեծ հռչակ էին վայելում ոչ միայն արաբական աշխարհում, այլև Իրանում: Հայկական գորգերը հիշատակված են Մահմուդ Ղազնևի սուլթանի՝ Կազարի Կադիր խանին ուղարկած ընծաների մեջ³: Մեջբերելով այս վկայությունները, ակադ. Հ. Մանանդյանը իրավացիորեն եզրակացնում է, թե Պրանք «հաստատում են Հայաստանի գորգագործական արտադրության էքսպորտային նշանակությունը»⁴:

Գորգերի արտադրությունը Դվինում հիշատակում է ալ-Բաթահրին⁵: Աբու-Յազլ-Բեյհակին իր պատմության մեջ հիշատակում է, թե Խորասանի կառավարիչ Աբու-Յազլ Սուրի-Մարիդին Ղազնևյան սուլթան Մասուդին (1033—1044) Նյուշապուրից նրվերներ է տարել, որոնց թվում ցուան հայկական գորգեր»⁶:

Յակուտը գորգի՝ Արևելքում տարածված խալի անունը կապում է Կարնո քաղաքի հետ: Նա ասում է «Քալիքալյում (Կարնո

¹ A Kremen, Culturgeschichte des Orients, B. 11, S. 353. В. В. Бартольд, Историко-географический обзор Ирана. СПб, 1903, стр. 150.

² Путешествие ибн-Фадлана на Волгу. Перевод и комментарии под редакцией акад. И. Ю. Крачковского, Москва, 1939, стр. 73.

³ В. В. Бартольд, Историко-географический обзор Ирана, стр. 150.


⁴ Я. А. Манадьян, О торговле и городах Армении, 1930, стр. 162.

⁵ СМОМПК, вып. XXIX, стр. 19.

⁶ Материалы по истории туркмен и Туркмени, Москва, 1939, стр. 238.

¹ Theopanes Continuatus, Bonnae, 1833, P. 617.

² Н. Я. Марр, Ани. Ереван, 1939, прим. 165 н, стр. 237—238.



1202 թ. գորգը հայերեն արձանագրությամբ:
Արտատպված է Alois Riegl-ի «Ein orientalischer Teppich von Jahre 1902 N. chr.» գրքից:

քաղաքում) մի տեսակ դորդ են պատրաստում, որն իր (քաղաքի) անունով կոչվում է խալի»¹ Այս վկայությունը կարևոր է այն տեսակետից, որ Հայաստանը համարվում է խալիի արտադրության հայրենիք։ Նույն Յակոբը Վան քաղաքի մասին խոսելիս նույնպես վկայում է, թե «այնտեղ գորգեր են պատրաստում»²։

Արարական ավբյուրները հիշատակում են, որ Հայաստանում գորգեր գործելու համար, մանվածքներ բերում էին անգամ դըրսից, օրինակ՝ Սիջազետքից, մասնավորապես հիշատակվում է Տիգրիսի ափին գտնվող Նահրաբան քաղաքը, որտեղից մանվածքներ էին բերում Հայաստան»³։

Հայկական գորգերն ու գործվածքները շատ հարգի էին և նրանց հետ, որպես լավագույնների հետ, համեմատվում էին ուրիշ երկրների գորգերը, օրինակ, Եգիպտոսի Ասիութ քաղաքում գործվող գորգերը և գործվածքները, որոնք, ի դեպ, ներկվում էին որդան կարմրով, ասվում է, թե ետ շէին մնում հայկականներից։

Պահպանվելով մեզ է հասել հին հայկական մի նշանավոր գորգ, որը պահվում էր Վիեննայում։ Սա եռախորան մի գորգ է, որի երեք կամարների տակ ֆոնը կարմիր է, կամարների ճակատը և սյունները բաց գույնի են՝ քիչ դեղնա-մոխրավուն գույն ունեն։ Խորանը շրջափակվում է քառանկյունի շրջանակով, որի վրա պատկերված է եռատերև ճյուղի կամ բողբոջի շարք՝ հաջորդաբար մեկ կանաչ մեկ կարմիր գույնի եռատերևով, ըստ որում կանաչ եռատերևը դարձած է դեպի դուրս, իսկ կարմիրը՝ դեպի ներս։ Արտաքին լայն շրջանակը ունի ոսկեգույն դեղին ֆոն, որի վրա ռճավորված բուսական նկարներն արված են մուգ կարմիր, բաց

կարմիր և դուրեկան կապույտ (լաջվարդ) գույներով։

Սյունների խարխսխները, խորանների վրա և կամարների ճակատին նկարները (նույնպես ռճավորված բուսական և երկրաչափական օրնամենոտ) արված են կարմիր, կապույտ և դեղին (վերջինս քիչ է) գույներով։

Գորգի վրա կա հայերեն արձանագրություն, որը ընթերցել է Գրիգորիա տեր Կալամֆարը հետևյալ կերպ. «(Դ)ՐԱՆ. Արկանի Կիրակոսի բանասերի ետ(?) ու Յիշատակ Հոփիսիմեի տ(ան)ն ՈՄԱ. րվին գաս Դ (կամ Պ) որժիս ա(րու)եստա»¹։

Նույն արձանագրությունը Վ. Թեմուրճյանը մեջ է բերում հետևյալ կերպ.

Արկանելիս Կիրակոսի Բանանցեցուց ի յիշատակ Հոփիսիմեի տն ՈՄԱ. րվին գաս գործեցի»²։

Տեր Կալամֆարի ընթերցանության մեջ ռոլորովին ավելորդ է առաջին դրան բառը։ Արձանագրության սկզբում գրվում է մի ուղղահայաց գիծ, որը իբրև Ր նկատելով և Դ տառը ավելացնելով նա ստացել է ԴՐԱՆ, մինչդեռ արձանագրությունը սկսվում է ԶԱՐԿԱՆԵԼԻ բառով. վիճելի է նաև ԿԻՐԱԿՈՍԻ բառին հետևող երկու անընթեռնելի բառերի ԲԱՆԱՍԵՐԻ և ԵՏՈՒ ընթերցանությունը։ ՅԻՇԱՏԱԿ ԶՈՒՓՍԻՄ ԷՒ բառերից հետո գրված ՏՆ կարող է կարդացվել ՏԱՆ ինչպես և ԾՆ (ՈՂԱՑ), վերջին բառի Ա(ՐՈՒ)ՆԱՍԱ(ԻՈՐ) ընթերցանությունը անստույգ է։

Վ. Թեմուրճյանի ընթերցանության մեջ անստույգ է Բանանցեցուց ընթերցանությունը, իսկ նախավերջին բառը փոխանակ գործիս կարող է կարդացվել գործի (վերջին Ս տառը մյուս բառի հետ կկապվի) և ոչ թե գործեցի։ Ինչևէ, կարևորն այն է, որ գորգի ՈՄԱ (1202) թվականը ստույգ է և արվեստ

1 Ցակուտ, գիրք Դ, էջ 19։

2 Նույն տեղում, էջ 895։

3 Այս տեղեկությունը քաղել ենք Զ. Նալբանդյանի «Արարական ավբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատության ձեռագրի առաջին հատորից։

¹ Alois Riegl, Ein orientalischer Teppich von Jahre 1202 N. Chr. und ältesten orientalischen Teppichen Berlin 1895, S. 8—9.

² Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1955, էջ 35։

տով էլ այդ նշանավոր սահղծագործությունը լիովին կապվում է այդ ժամանակների հայկական զարգարվեստի հետ: 9—13-րդ դարերից, այլ գորգեր մեզ չեն հասել: Իրավացի ենք համարում էննստ կյունհնչի կարծիքը, թե 13-րդ դարի համարված վիշապագորգը իր արվեստով ավելի շուտ 14-րդ դարի վերջերի գործ է¹:

Երկար տարիների ընթացքում խոշոր գորգեր գործելու մասին տեղեկություն կանակ միջնադարյան ժողովրդական տաղերի մեջ, օրինակ, մի տաղում ասվում է. «Միռեց սէրէսէր խալի, որ գործած տասուներկու տարի»²:

Խոշոր գորգերի արտադրության կողքին Հայաստանում զարգացած էր և մանր գորգերի արտադրությունը: Դրանք գործածվում էին անհատապես՝ աղոթքի ժամանակ և հայ ու օտար բնակիչների մոտ շատ հարգի էին: Նրանց մասին հիշատակություն ենք գտնում արաբ աշխարհագիր Իդրիսիի մոտ, որն ասում է, թե հայկական փոքրիկ ոտքի գորգերը (փովում էին աղոթողների ծնկների տակ) առանձնապես գործածելի էին: Այս փոքրիկ գորգերը կոչվում էին տապաստ կամ տապաստակ³. Նրանք գործածական էին նաև առևտրական քարավանների ուղևորների մոտ, երբ հարկ էր լինում ուտելու նստել, այս տապաստակները փուռում էին դետեհին և նստում վրան: Ուշագրավ է, որ 11-րդ դարի վրացական մի ժամանակագրության մեջ այս փոքրիկ գորգերը կոչված են ևրձեղձո ճոձոձո, «հայկական տարաստակ»⁴: Մի դրվածքում ասված է. «ընթրեաց առնեն, և տապաստակս և բար-

ձրս բազումս նմին պատրաստականս»¹: Այս տապաստակները արտադրվում ու վաճառվում էին, թե երկրի ներսում և թե արտահանվում էին ուրիշ երկրներ, մանավանդ արաբական երկրները և Իրան²:

Հայկական գորգերի վրա արվում էին բազմաթիվ դարդեր ու նկարներ, որոնց մեծ մասը ձևափոխվելով գալիս էր հնագույն ժամանակներից: Գործածական էին ամեն տեսակի գույներ, սակայն արաբական աղբյուրներից երևում է, որ տիրապետողը այստեղ էլ որդան կարմիրն էր, որը և կազմում էր հայկական գորգագործության երանգների ոգին:

Այ-Մուկադդասին Արմենիայի մասին գրում է. «Չկա ոչ մի բաճ, նման նրանց մոտ

1 Յոզահան Ոսկերեբան, Աևտարանագիրն Մասթէոս, Վենետիկ, 1826, Գ. դիրք, էջ 69:

2 Վերջերս ծանոթացանք Հարություն Քյուրայանի «Գորգը հայոց մեջ», Վենետիկում 1947 թ. լույս տեսած գրքին, որն ընդհանրապես օգտակար աշխատություն է: Հեղանակը գորգի և գորգագործության վերաբերյալ հին տեղեկությունները մեջ բերելուց բացի քննարկում է նաև բնակչության տարբեր խավերի կենցաղում գորգի խաղացած դերը, գորգի վաճառականության և արվեստի զարգացումը Հայաստանից դուրս և դրան հայերի ունեցած մասնակցության հարցը, գորգագործության արվեստը և այլն: Աշխատությունը սակայն զերծ չէ միևնույն տեղեկությունների կրկնություններից, սխալ հարցադրումներից ու մեկնարանություններից և այլ բերություններից: Քննարկվող հարցի կապակցությամբ նշենք միայն, որ հետևելով Վ. Հացունուն, հեղինակը «տապաստակ» բառը հոմանիշ է համարում Փավոստի մի անգամ հիշած «ակըմբին» կամ սբ. Գրոց մեջ հիշված «մաշկ»-ին, «որը հայ թարգմանիչն հայացված է «ակումբն մաշկեայ» ձևով. պարզապես ակնարկելով կաշիս կլոր սփռոցին, որ գորգի սեղանին վրա կիռեին հայք և յուրյանց դրացի ժողովուրդները» (էջ 17—18), նթն հեղինակը ծանոթ լինելու «տապաստակ» բառի վերաբերյալ մյուս սովյաներին, ապա այն կաշվե սփռոցի հետ չէր, նույնացնել:

Սխալ է նաև «անկուած»-ը իբրև գորգ բացատրելը (էջ 18), քանի որ «անկուած» նշանակել է գործվածք, իսկ անկուածագործություն հոմանիշ է ուսույնանկություն կամ շուկանկություն: Սխալ, առավել ևս վիճելի կետեր ունի «բազմական» բառի բացատրությունը (էջ 14—17):

1 Տե՛ս Ernst Kühnel-ի, «Orient Toppiche Statliche Museum in Berlin» սերիայով լույս տեսած աշխատությունը, էջ 4:

2 Մ. Ա. Բ. Գ. Յան, Գուսանական ժողովրդական տաղեր, էջ 176:

3 «Տապաստակ» շատ հին բառ է, հանդիպում է 5—6-րդ դարերի թարգմանական գրականության մեջ և նշանակում է գետնին փովելիք:

4 Н. Я. Марр, Ани, Ереван 1939, стр. 237. прим. 165а.

պատրաստվող ժանյակներին, դորգերին, կրմզին (որդան կարմրով ներկված մետաքսե գործվածք), ծածկոցներին, ներկին, «դոմկալ» կոչվող մրգին, կասբուվիին և ասարիխ» ձկան: «Նրանց մոտ կա տխիլ և շադանակ խիստ լավ որակի»¹:

Կապերտագործություն: Եթե դորգերը գործածական էին առավելապես վերնախավի կենցաղում, ապա միջին կտրողության բնակիչների տներում շատ գործածական էին կապերտները:

Աղագարական նյութերից դատելով կարելի է ասել, որ լինում էին ամեն տեսակի կապերտներ, անգամ այնպիսիները, որոնք իրենց գույների վարդերի ռե նկարների ճոխությունը չէին դիջում գորգերին, բայց և գորգերից շատ ավելի մատչելի էին իրենց զներով: Արտագրվում էին և կապերտներ պակաս արվեստով ոչ ճոխ երանդավորումներով և ավելի պարզ վարդերով, անգամ առանց վարդերի: Դա բնական է, պետք էր սպասարկել ոչ միայն վերնախավերի միջին կտրողության թնակչություն, այլև ավելի աղքատ բնակչության պահանջները:

Հայկական գորգերի որոշ նմուշներ մեզ հասել են. վերևում խոսված Ռիպի հրատարակած 1202 թ. գորգի և մյուս ամբողջական նմուշների մասին: Որոշ նյութ էլ տվել են հնագիտական պեղումները, մասնավորապես Անիի պեղումները: Գորգի մնացորդներ Անիում գտնվել են Բագրատունիների պալատում, ինչպես և Տիգրան Հոնենցի՝ Մաղկոցաձորի քարայրային տոհմական դամբարանում՝ 1907 թվականին:

Բագրատունիների պալատում գտնվել է նաև կապերտի մի բեկոր (№ 1122), սակայն դժվար է որոշակի գաղափար կազմել ամբողջի մասին²:

Հայկական գորգերի վայելած հուշակի և միջազգային առևտրի մեջ նրանց խաղացած դերի հետևանքով է, որ հայկական «կար-

պետ» բառը անցել է ֆրանսերենին (carpette) և անգլերենին՝ (carpet) գորգ իմաստով: Առաջին անգամ այդ տերմինը եվրոպացիների մոտ հանդիպում է 1295 թ. Մարսելից Այաս (Կիլիկիա) ժամանած նավի՝ վենետիկցիների կողմից կողոպտվելու առթիվ կազմված փաստաթղթի մեջ, որտեղ կողոպտված իրերի թվում հիշատակված են գորգերը կարպետ անունով¹:

Գորգագործության մասին եղած տեղեկություններից կարելի է եզրակացնել.

1. Գորգագործությունը միջնադարյան Հայաստանում անկախագործության նման դարգացած արհեստ էր:

2. Հայկական գորգերը իրենց որակով, զարդարվեստով և գույներով համարվում էին առաջնակարգ:

3. Հայկական գորգեր արտագրվում էին թե՛ թերկրի ներսում գործածելու և թե՛ մանավանդ արտահանության համար և տարածված էին արաբական խալիֆաթի, Բյուզանդական կայսրության երկրներում, Իրանում և հասել էին արևելքում մինչև Միջին Ասիա, արևմուտքում՝ Թրակիա, հարավ-արևմուտքում՝ Եգիպտոս, իսկ հյուսիսում մինչև Վոլգայի բուլղարների երկիրը և Կիևյան Ռուսիա:

4. Գորգագործության մեջ աշխատանքի բաժանումը բավականաչափ խորացել էր. գորգեր և կապերտներ հյուսելը և դրանց համար թելեր պատրաստելը արհեստի երկր տարբեր ճյուղեր էին:

Կանագործություն: Հայաստանում հրեանազույն ժամանակներից ի վեր, սովորություն կար, բացի գորգերից և կապերտներից, արտագրել նաև կան (այդտեղից էլ՝ րեչա) կամ քաղիք:

Նորենացու մի վկայությունից հրևում է, որ թաղիք հագնելով զինվորները պաշտպանվում էին մարտի դաշտում: «Ոմն սկալ վառեալ, և թաղեալ կաճեալ բոլորով ամե-

¹ СМОМПК, вып. XXXVIII, 15.

² И. Орбелин. Каталог Анийского музея, стр. 31.

¹ Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 393.

նեքեամբ պարածածկեալ, շահատակէր ի մէջ զօրացն... քանզի հարեալ Գիզակա՝ ճախր առնոյր կաճեալն»¹:

Վարդան Արևելցիին ևս ունի աղվառեալն կճակուռ թաղեալ²: Կաճի և թաղիքի նույնությունը միանգամայն սարգ կրեում է մեջքերված վկայութիւններին: Կաճը կամ թաղիքը պատրաստում էին բրդից՝ ճմլելու, տրորելու, կամ ինչպէս կոչվում էր լմելու միջոցով³:

Իհարկե, կաճագործութիւնը շատ ավելի հնշտ արհեստ էր, քան գորգագործութիւնը կամ կապերտագործութիւնը, սակայն բրդի երանգների լայլ ընտրութիւնը, բարձրարվեստ զարդերն ու նկարները թաղիքի երեսին կարող էին մեծ էֆեկտ ստեղծել: Թաղիքը կարող էր պատրաստվել նաև կարմրաշագանակագույն, մուգ մոխրավուն և այլ մուգ գույնի բրդերից, որոնց ֆոնի վրա զարդերն արվում էին բաց գույնի բրդերից: Բայց լավագույն թաղիքները պատրաստվում էին սպիտակ բրդից, իսկ զարդերը դրվում

էին ոչ միայն բնական մուգ գույնի տարբեր բրանդի բրդերից, այլև վարդագույն կարմիր, կապույտ և այլ գույներով ներկված սպիտակ բրդից:

Այժի մազից պատրաստված թաղիքը, կոչվում էր այժեանակաճ⁴: Թաղիքները շատ զործածական էին միջին կարողութեան և աղքատ բնակչության կենցաղում: Թաղիքը մեծ մասամբ փռում էին թախտերի վրա, դրոմ անկողնու տակ: Բայց թաղիքը օգտագործում էին և գլխարկներ (քոլոզ) և վերարկուներ պատրաստելու համար, իսկ դարդեն ավելի շուտ դյուղական, տնայնագործական արհեստներին էր պատկանում: Այժեանակաճից վերարկուների (գարանակների) վրայով ջուրը սահում էր և նրանց տակ կարելի էր պատսպարվել դրսում՝ անձրևի ու ձյան ժամանակ: Այն այժեանակաճ գաբանակները, որոնց դրսի երեսից կախված էին լինում այժի մազի խոսպոպիկներ կոչվել են գաբեղեն⁵ (այժմ ժողովրդի մեջ հայտնի են յափունջի անունով):

Խորագործուրյուն: Քաղաքի և գյուղի տառվել աղքատ բնակչութիւնը, զուրկ լինելով նյութական տարրական միջոցներից, հնարավորութիւն չունեւր գործածել ոչ միայն գորգ ու կապերտ, այլև թաղիք և բավականանում էր ճիլ խոտերից (պրոտից) գործած յափունջով կամ փախարնեով⁶:

Հայ հին գրականութեան մեջ խափրը հիշատակված է որպէս ամենահասարակ կոստիւմ իր: «Առեչ խսրին մանէին»⁴ (խոտերից) և գործված խափրը օգտագործում էին փուռնով տան հողե հատակի կամ թախտի վրա: Խափրը հիշատակված է իբրև անկողին վարքագործութիւնների մեջ Գեղարագրովուհ ճգնաւորների: Բայց խափրը իբրև անկողին

1 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, Պատմութիւն, էջ 267:

2 Վ ա Ր Գ Ա Ն Վ ա Ր Գ ա Ս Կ Ե Ս, Պատմութիւն էջ 45:

3 Կաճ կամ թաղիք պատրաստելու արհեստն իր պրիմիտիվ եղանակով հասել է մեզ: Բուրգը լավ մարբելուց և գզելուց հետո, որոշ հաստութեան շերտով փուլում էր պատտառակի, կտավի կամ կապերաների վրա: Փուլոզ բրդին տալով անհրաժեշտ քառանկյունի ձևը և մեծութիւնը, ապա տարբեր գույնի բրդից դնելով ուղած զարդեր ու նկարներ, քիչ թրջում էին և երեսին փռելով կտավ կամ պատտառակ, մի քանի մարգ միասին մի ծայրից բռնելով պտտում և փաթաթում էին այդ բուրգը, նրա տակին և երեսին փուլած պատտառակի կամ կտավի հետ միասին, մեջը որպէս առանցք դնելով ոչ շատ հաստ գլանաձև կոկ փայտ, որը քիչ ինչ երկար էր լինում պատրաստվող կաճե լայնքից: Ստացված գերանաձև հաստ գլանը կամ փաթեթը այնուհետև մի քանի օր տեղութեամբ ոտքերով պինդ սեղմելով գլորում էին հարթ գետնի վրա: Այս պրոցեսը երկարատև կրկնելու հետևանքով լավ գզված բուրգը ամուր նստում էր և 1—2 սմ հաստութեամբ պինդ շերտ էր կազմում, ունենալով այն ձևն ու շափերը, և զարդերը ինչ արված էր փուլածքի ժամանակ: «Իբրև դժող լմեալ», տե՛ս լմիմ և թաղ բառերը էջ 28:

1 Տե՛ս էջ 28:

2 Տե՛ս էջ 28:

3 Հարանց վարք, ԺԱ և Ի:

4 Յայմատուրք, դեկտեմբերի 1:

5 Նույն տեղում, սեպտեմբերի ԻԻ:

էր ծառայում նաև քաղաքի աղքատ բնակչու-
թյան և գյուղից քաղաք եկած, օրվա պատաս-
հացը օրավարձով վաստակող, մարդկանց
համար, որոնց թիվը քաղաքներում զգալի
էր և մշտապես ավելանում էր: Երբ արհեստ-
ները զարգացել ու տարածվել էին, վանքե-
րի աբեղաները նույնպես սկսում են ար-
հեստներով զբաղվել, սակայն եկեղեցու
առաջնորդները վայել չէին համարում նման
զբաղմունքը, և թուլլտարելի էին համարում
ամենահետին արհեստներով զբաղվելը, ո-
րոնցից մեկն էր խարազործութունը¹:

Ա. Կրեմերն իրավացի ասում է, թե խսիր-
ըը (hosoz saman) արևելքում տարածված
երևույթ էր²:

● Անիի պեղումների ժամանակ խսրի
կտորներ գտնվել են աղքատիկ հյուղակնե-
րում:

Միանգամայն հնարավոր է, որ խսիր
պատրաստելու արհեստը գոյութուն ունե-
նար նաև քաղաքներում:

3. ԿԱՇԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՄՈՐԹԵՂՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կաշեգործութունը հին և զարգացած ար-
հեստներից էր: Իր արտագրանքի ծավալով,
խհարկե նա զիջում էր ջուհհակությանը,
բայց եթե վերջինս սպասարկում էր բնակչ-
ության միայն կենցաղային կարիքները,
այլև արտահանվում էր երկրից դուրս, սպա
կաշեգործութունը սպասարկում է, ճիշտ
է, բնակչության կենցաղային համեմատա-
բար սահմանափակ կարիքները, սակայն
որոշ դեր խաղում էր նաև ուսմական, կուլ-
տուրական, մասամբ և ամենատեղի բնա-
զավառներում:

Անցնելով զարգացման երկար ուղի, կա-
շեգործութունը 10-րդ դարում ճշուղավոր-
վելով, մի քանի ինքնուրույն արհեստների է

լսմանվում: Իրոնցից աչքի էին ընկնում
կաշվի մշակման արհեստը, կոշկակարու-
թյունը, թամբագործութունը, մագաղախ
պատրաստելը, լարարարութունը:

Կաշվի մշակումը: Կաշեգործութունը նկ
լիմատով կաշվի մշակման արհեստն էր:
Միջին դարերում կաշեգործները կուպիտ
կաշվեղենի մշակումից շատ էին առաջ ան-
ցել: Դեռևս հին Հայաստանում հայտնի էր
կոշիկները՝ կարմիր, կանաչ և այլ գույներով
ներկված բարձրորակ սեկը, որը պատրաստ-
վում էր այժի մորթուց: Կաշվի մշակութուն-
ը մի բարդ աշխատանք էր, որը ինքնուրույն
արհեստ էր գործել և հայտնի էր խաղախո-
ղութուն անունով, կաշի մշակող արհես-
տավորը դրան համեմատ կոչվում էր խաղա-
խոդ¹, կաշեգործի արհեստանոցը՝ խաղա-
խոդարան, խաղախոդանոց, նաև կաշե-
գործանոց²:

Աղբյուրները թույլ են տալիս բավակա-
նաչափ ամբողջական պատկերացում կազ-
մել կաշվի մշակության վերաբերյալ: Պարզ
է, որ դա ծանր աշխատանք էր և պահան-
ջում էր մի շարք հաջորդական պրոցեսներ:
Ամենից առաջ ստացված չոր կաշին թրջոց
էր դրվում և քերվում ներսի կողմից՝ մետա-
ղե քերիչի օգնությամբ, ախուհետև հեռաց-
վում էին կաշվի վրայի մազերը կրի օդ-
նությամբ (կաշին կամ դրվում էր կրաչրի
մեջ կամ նրա վրա քսվում էր շհանգած
կրի մածիկը (նուրբ կաշիները): Կիրը տա-
լուց և մազերը հեռացնելուց հետո կաշին
վացվում էր և աղաչրի մեջ դրվում, վաց-
վում, դցվում էր ալյուրի թեփից պատրաստ-
ված շիոթի մեջ և նորից լավ քերվում:
Դրանից հետո կաշին դաբաղվում էր: Գոր-
ծածվել են մի շարք դաբաղող նյութեր,
ամենից ավելի գոթորը և աղթորը (սումաղ):
Բացի այս հիմնական դաբաղող նյութերից,
օգտագործվել են պաղլիղը (սա ուժեղ դա-
բաղող նյւթ է, ուտի գործածվել է հաստ

1 Մատենադարանի ձեռագիր. № 2680, էջ 277—
278:

2 A. Kremer, Culturgeschichte des Orients, B.
II, S. 298.

1 Մխիթար Գոշ, Առական, էջ 123:

2 Նշթ, Խաղախոդ բառը:

կաշինների համար), ընկույզի պտղի կանաչ կեղևը, շագանակի պտուղները, խաղողի կորիզները և նուա՛ն կեղևը:

Մխիթար ձերբացիին խոսելով կաշվի վրա տտիպ նյութերի ներգործութեան մասին, հիշատակում է, թե կաշին մշակում են «գխտուրով կամ նուա՛ն կեղևով»¹: Դաբաղելու ժամանակ կաշին պետք էր տաշտերի մեջ երկար ժամանակ տրորել ոտքով, քրեղ և նորից տրորել: Դաբաղելուց հետո կաշին նորից աղաչրի մեջ էր դրվում, այս անգամ տանինը շիղբացնելու համար, նորից քերվում և կրտավհատից պատրաստված հատուկ մասսո կամ ձեթ քսելով փափկացվում էր: Երեսուցու ներկվող կաշվին և մազաղաթին ձեթ չէր քսվում: Կաշվի մշակման վերջին պրոցեսն էր նրա կոկումը և ներկումը (եքեսուցոն):

Կաշվի մշակման բոլոր պրոցեսները տևում էին մեկից մինչև մի քանի ամիս: Լայ՛վ դաբաղած և խոնավութեամբ չբացվող կաշի ստանալու համար, պետք էր կաշին դաբաղելու պրոցեսը շատ երկարացնել, այսինքն շատ ավելի երկար ժամանակ պահել դաբաղող նյութերի մեջ և տրորել ոտքով: Կաշվի մշակման այս ծանր պրոցեսն է նկատի ունեցել Ներսես Շնորհալին իր մի բանաստեղծութեան մեջ, որտեղ գրում է.

«Քերմամբ մորթոց սրբոց անձին,
Բորքք մեղաց իմ քերիպին,
Նւ մորմորմամբ հարման աղին,
Հեշտախառութիւնն մաքրեսցին:
Ընդ բազմահնար տանջման նսցին,
Նւ ընդ հատեալ մասանց հոզին»²:

Այստեղ Շնորհալին ակնարկում է կաշվի քերելը, աղ դնելը և դաբաղող նյութերի մեջ դնելու ժամանակ տանջել-տրորելը:

Ավելի ուշագրավ է 1440 թ. արտագրու-

ված մի ձեռագրում հանդիպող «խրատ»-ը, որտեղ նկարագրված է մազաղաթի պատրաստումը: Այս խրատում շատ լավ պատկերված է կաշվի մշակումը բացի դաբաղելուց, քանի որ մազաղաթը չէր դաբաղվում:

«Խրատ մազա(ղա)տի

Առ զայս մորթերս՝ առ մորթ ուլիս, թէ տան, թէ վայրի, վվայրի ոչխարին, զծիոքուկին, զլապըզտուկուան, զջէրանին, զորթուն. առ զկիրն լաւ մաղէ ու զջուրն ի վերա ած, ապա թէ նաւար լինի մորթն նա դու նաւար արա, թէ թանձր՝ նա թանձր արայ. յորժամ որ հասնի՝ նա զմաղն առ և լուս սուրբ ու նոր կիր ած, յորժամ հաստանայ, համց որ մճղես՝ նա նաւարանա առ լուսայ և ի շարհ՝ պնդէ շուանով առ զքերիչն և քերէ զմսի դեհն, մինչ որ միս հատանէ և լավ երես լինի. առ զջուրն և դիր յարեգակն ու յորանայ, ապա զմաղի դեհն շոր քերէ: Նշա՛ մազաղատի. ձվի սպիտակուց և սպիտակ կուտա, Գ օր ջուր ած զկ(տ)աւատն՝ նա քան զմեղեր ծոր դառնա, նշայէ զմսի (դեհն) և քերիչով քերէ»³:

Կաշի մշակողի կամ խաղախորդի արհեստը իրավացի կերպով համարվում էր ծանր և ահա՛ն գործ. այդ ամբիվ Մխիթար Գոշի առականներից մեկում կարդում ենք. «Նաղախորդ ումն էանց ընդ դուռն մորթէ-գործի, և սկսու աշխանել և շարահոտ զնա կոշել: Նւ նորա ելեալ թշնամանէր ասելով. Նթէ յոսկեգործաց և կամ այլոց ևս նախատ լինէի՝ ի դէպ էր. դու ժահահոտ քան զիս, դիարդ համարձակիս»⁴:

Մխիթար Գոշը, որը սիրում էր միշտ նշել, թե ո՞վ կամ ի՞նչ բանն է գերադասելի և ինչը ստորագաս, տվյալ դեպքում

¹ Չորհը կաշին քերելու, դաբելու և կակելու դաղահան է:

² Նշա — մազաղաթի վրա բսելու նյութն էր կոշվում և քսվում էր, որպեսզի անցքերը փակվեն, երեսը կոկ լինի և ներկեր լավ վերցնի:

³ Մասնաղարանի ձեռագիր N 1819, էջ 156ր:

⁴ Մխիթար Գոշ, Առականք, էջ 123:

¹ Մխիթարայ Բժշկատեալի Հերաց-
ւոյ, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832,
էջ 12:

² Ներսես Շնորհալի, Բանք շափաւ, էջ 133:

նախապատվութիւնը տալիս է մորթեալներին և ստորագասում է խաղախորդին:

Հայաստանում պատրաստվող կաշվե-դէնը շատ հարգի էր նաև երկրի սահմաններին դուրս. նրա վերաբերյալ գովասանքով է խոսում բյուզանդական կայսր Կոստանդին Ծիրանածինը և հիշատակում է, թէ բյուզանդական արքունիքում էլ հայկական կաշվե դէնը գործածվում էր:

Հայաստանում հայտնի էր նաև Բլմուխտը՝ էշի կամ ջորու մշակված կաշին: Հետագայում քիմուխտ կոշիկաց յաւ մշակված ու կոկված, բարակ ամեն մի կաշի:

Եթէ նկատի առնվի տարբեր տեսակի կաշիների, տարբեր նպատակներով գործածելու փաստը, ապա կարելի կլինի ասել, թէ սեկ պատրաստելը, քիմիստարութիւնը և կաշվի փոկեր ու կոպիտ մշակված կաշի պատրաստելը կաշեգործական տարբեր մասնագիտութիւններ կ'իւն դարձել:

Կոշկակարութիւն: Միանգամայն ինքնուրույն արհեստ էր դարձել կոշկակարութիւնը: Եթէ հնում կոշկակարը ինքն էլ մշակում էր կաշին, ապա 9—10-րդ դարերում նա միայն իր նեղ արհեստով էր զբաղվում: 12—13-րդ դարերում կոշկակարութիւնը մյուս արհեստների նման արդեն առավելապես շուկայի համար էր արտադրում: Կոշկակարները համախմբված էին և խոշոր քաղաքներում զբաղեցնում էին առանձին փողոց կամ թաղամաս: Անիում այդ թաղամասը կոշվում էր կոշկակարոց, որն հիշատակված է 1251 թ. մի արձանագրութեան մեջ: Արձանագրութեանը թողել է ոմն Առյուծ Հոգեվորյանց կոշվող Անեցի: Սա Հոռոմոսի վանքին է նվիրել մի կուղպակ, որը գտնվում էր Անիի կոշկակարոցում («որ ի կաշկալարոցին»): Նույն արձանագրութեանից երևում է, որ կոշկակարոց փողոցը կամ թաղը կից էր Տիգրանի «Տիգրան Հոնեցի» թաղին²:

Կոշկակարոցի հիշատակութիւնը 1251 թ. արձանագրութեան մեջ չի նշանակում, թէ այդ թաղը և նրա անունը առաջացել են 13-րդ դարում: Անհավանական չէ, որ այդ տեղի է ունեցել 10—11-րդ դարերում: Կոշկակարների առանձին թաղի կամ շարքի գոյութիւնը վկայում է կոշկակարների համխմբվածութեան և նրանց արտադրանքի բնած մեծ տեղի ու ապրանքային նշանակութեան մասին:

Կոշիկ պատրաստող արհեստավորը կոշվում էր կոշկաբար՝ կամ կոշկակար, իսկ նրա արհեստանոցը կոշկակարոց: Միսիթար Գոշը իր առակներից մեկում նկարագրում է կոշկակարի աշխատանքի մի կենդանի պատկեր: Կոշկակարը աշխատելիս կաշին ձգում է ատամներով և այդ առթիւ մեկը, որը փողոցում ընկած լեշ էր կերել, նախատում է կոշկակարին, փակ վերջինս վերադարձնում է նախատինքը ասելով, թէ ես մորթը չեմ ուտում, իսկ դու լեշ ես ուտում և ինչպէս ես համարձակվում ինձ նախատել:

Մուկակակարութիւն: Քաղաքի և շրջակա գյուղերի աղքատ բնակչութիւնը, մասնավորապես կանայք, գործածում էին ավելի հասարակ, հեշտ կարվող և քիչ կոշիկներ, որոնք Հայաստանում հայտնի էին հնագույն ժամանակներից և կոշվում էին մուկակ³: Մուկակ կարողները պակաս հմուտ և ավելի աղքատ արհեստավորներ էին, որոնք աշխատում էին քաղաքի և գյուղի շոնևոր խավի պահանջները բավարարելու համար: Արտադրվում էին նաև սանդալներ, որոնց նման փոկերով ոտքին ամրացվող կոշիկներ էին նաև սողերը⁴: Սրեմներով ոտքերին կապվող ոտնամանների հասարակ տեսակը կոշվում էր մուկակ⁴:

1 Միսիթար Գոշ, Առակներ, էջ 123: Հանդիպում է և «Կոշկար» հասկանալի ձևը (Յայտնաբերող ասորիի ԻԵ):

2 Եթող զսանդալ իւր, և էարկ յոտս զմուկակ կընդն», Վարք, հարանց 2:

3 ՏԵՍ ՆՆԲ:

4 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն, էջ 271:

1 Քիմուխտը պահպանված բառ է, հետևաբար այդ արհեստը շատ հին է:

2 Վիմական տարեգիր, էջ 95:

Թամբագործուրյուն: Կաշեգործության հետ կապված մի առանձին արհեստ էր նաև թամբագործությունը, որը կոչվում էր սառանուրյուն: Սառաճը ձեռք բերելով ձիու սարքի մետաղե մասերը ինքը պատրաստում էր թամբը: Թամբի կաշե մասերը, ձիու փորկապները, սանձի փոկերը հաճախ ներկված ու զարդարված էին լինում օրնամեններով, մետաղե ու ոսկրե, սադափե զարդերով: Թամբագործները սպասարկում էին հեծելազորի, թափավորական և իշխանական տների պահանջները: Թամբերը արտադրվում էին նաև շոկայում ամեն, մի դնորդի վաճառելու համար: Այն հանգամանքը, որ Անիում կար թամբագործների հատուկ թաղ կամ փողոց, ջուլց էր տալիս, որ դա առանձին և նշանակալից արհեստ էր:

Անիի «սառան փողոցը» (թամբագործների փողոց) հիշատակված է Թագուհի անունով մի անեցի տիկնոջ Բագնայրի տաճարի վրա թողած 1234 թ. արձանագրության մեջ¹, լայց, ինչպես կոշկակարոցը, Անիի սարաճ փողոցն էլ պետք է դոյուբյուն ունեցած լինի ավելի վաղ ժամանակներից:

Համետագործուրյուն: Հայաստանի պես լեռնոտ երկրում, բռնակիր անասունները կամ գրաստները խոշոր դեր էին խաղում. Երանցով փոխադրում էին ամեն տեսակի բռններ, տուն բերում բերքը սարերից, ձորերից, նրանցից էին կազմվում առևտրականների քարավանները, զորքերի գումակները: Բոլոր տեսակի գրաստների՝ ուղտերի, ձիերի, ջորիների և էշերի վրա դրվում էին համետներ (փալաններ), իսկ սրանց վրա հարմարեցվում էր բեռը: Բնական է, որ քաղաքներում համետների զգալի պահանջ կար: Ահա այդ պահանջը բավարարում էին համետագործ արհեստավորները, որոնք իրենց արտադրանքը վաճառում էին: Դրա վերաբերյալ ռղղակի վկայություն կա Վարդան Այգեկցոյն վերագրվող մի միջնադարյան առակում, որի մեջ պատմվում է, թե միկը

այցելել էր եկեղեցի և էշը բակում թողած ներս էր մտել աղոթելու և ավելի էշի մասին էր մտածում՝ չլինի թե գողանան էշը կամ նրա փալանը, քան իր կրոնական պարտքի մասին. «Փալանն այլ նոր է՝ դեռ եմ առել, չի տանեն» ասված է առակում:

Իհարկե սխալ կլինեք կարծել, թե բռնակիր անասունների մեծ մասի համետները պատրաստում և վաճառում էին քաղաքների արհեստավորները: Ընդհակառակը, բնական կլինեք ենթադրել, որ հիմնականում գյուղերում գյուղական արհեստավորներն էին այդ գործով զբաղվում: Այնտամենայնիվ քաղաքներում համետագործների դոյուբյունը կասկածանքի ենթակա չէ, որ երևում է նաև հետագա ժամանակների տվյալներից: 18—19-րդ դարերում Անդրկովկասի, Թուրքիայի, Իրանի քաղաքներում կային փալանսազ կամ փալանդուղ-համետագործների շարքեր, նույնիսկ համբարություններ:

Լկամարուրյուն: Մատենագարանի № 695 ձեռագրում լկամարուր կոչված է սանձագործը: Ձին և ջորին փոխադրական ամենասովորական միջոցներն էին, իսկ հեծելազորը զորքի տարածված տեսակ էր: Հեծնելու երիվարը անպայման պետք է սանձ կամ լկամ² ունենար, որի պատրաստելը թեև դժվար չէր, բայց նրա նկատմամբ եղած մեծ պահանջի հետևանքով առանձին արհեստ էր դարձել:

Լկամարուրներն էին պատրաստում ձիասարքի և ամեն տեսակի սարքերի փոկեմասերը:

Այլ կաշվեղեն իրերի պատրաստում: Կաշվից պատրաստում էին տիկեր՝ դինի, օղի, ձեթ և այլ հեղուկ նյութեր լցնելու, մանավանդ փոխադրելու համար: Կաշվե սոսորակները գործածվում էին շոր նյութերի լցնելու համար: Կաշին զգալի դեր էր կատարում նաև ժողովրդական երաժշտ-

¹ Մատենագարանի ձեռագիր № 695, էջ 290:

² Լկամ բառը սանձ իմաստով գործածված է նույն ձեռագրում, էջ 208ր.—209ա:

¹ Վիմական տարեգիր, էջ 78:

տական դործիքների պատրաստման մեջ, հիշենք պարկապղզուկները, որ կաշվե պարկեր էին, դճոլներն ու դափերը, սագերը, որոնց երեսները պատած էր լինում հատուկ մշակված նուրբ կաշվով: Կաշվից էր պատրաստվում նաև դարբնի փուլբը: Մի խոսքով կաշին լայն գործածություն ունեւ բազմաթիւ բնագավառներում:

Փոկերից կամ սրեմներից պատրաստում էին նաև մաղեր՝ փոկեմաղեր, որոնք գործածվում էին հացահատիկը քարից և մոլախոտերի սերմերից մաքրելու և աղունելու համար:

Անիում, պեղումների ժամանակ, գտնվել է կաշվե շապկի փեշի մի մաս, որի եզերքով անցնում է սեղմելու, ճնշելու միջոցով արված զարդ, արաբական գրության նմանեցված նկար՝ բուսական օրնամենտի զուգակցությամբ: Այդ շապիկը վարդարված է եղել նաև արծաթե ոսկեզրած թիկրով արված ձեռագործով, որը կատարված է նուրբ ժառամիների վրա և կարված շապկին¹ (տխտ. LXX):

Հայաստանի Պետական պատմական թանգարանում Անիի ժողովածուի 1137 համարի տակ պահվում է լավ մշակված կաշվի մի կտոր, որն ունի ասեղի կամ բզի ծայրով ծակոտկեն դարդեր, իսկ եզերքը ձևավորված է արիքաձև կտրվածքով: Նույն ժողովածուի 1138 համարի տակ պահվում է մի կաշվե վարդյակ, որը հավանաբար կարված է եղել ինչ որ զգեստի կամ իրի վրա, իսկ 1132 համարի տակ պահվում է կաշվե սրեմներից կատարված մի հյուսվածք: Կաշվե սրեմներից ամենից ավելի հյուսում էին խարազաններ (տխտ. LXXI բ): Կաշվից պատրաստում էին նաև զինքերի պատյաններ, կապարճներ և այլն:

Լարարարություն: Կաշեգործությունը հարակից արհեստ էր լարարարությանը: Լարարարը կենդանիների աղիքներից պատ-

րաստում էր լարեր, որոնք օգտագործվում էին թե՛ երաժշտական գործիքների, թե՛ զրգարի աղեղների և թե՛ մանավանդ, ռազմական աղեղների համար:

Լարարարությունը բավականաչափ եկամտաբեր արհեստ էր: Քաղաքներում բնակիչների թվում կային լարարարներ, որոնք հնչուկա երևում է, ունեին իրենց սեփական տունը, ունեցվածքը: Անիի լարարարներից մեկը թողել է հետևյալ արձանագրությունը. «Սա Սարգիս լարարարս ետու զիմ տունս ի սուրբ Գրիգոր...»¹: Իհարկե այս լարարարը քիչ թե շատ կարգին տուն պետք է ունենար, այն էլ երևի իր բնակվածը չէր, այլ գանձով գնածը, որպեսզի կարելի լիներ այն նվիրել Անիի ամենահարուստ եկեղեցիներից մեկին:

Հայաստանում արտագրվող աղեղները նույնիսկ արտահանվել են երկրից դուրս: «Հուդուդ-ալ-այամում» խոսվում է Հայաստանում, Առանում և Ադրբեջանում արտագրվող և տարանցիկ առևտրի մեջ նշանակություն ունեցող նյութերի մասին. կարմիր ներկից (որդան կարմիր) և հագուստեղենից հետո այնտեղ հիշատակվում են աղեղները²:

Մտքեզոծություն: Հայաստանում ապրում են մի քանի փափկամազ կենդանիներ՝ աղվեսը, կուղբը, կզաբիսը, առնետը. սրանց, ինչպես, և դայրի ու գազանների մորթը օգտագործվում էր մորթիներ պատրաստելու համար: Բացի այդ առևտրականները կապվելով Ռուսիայի և հյուսիսային այլ երկրների հետ, ներմուծում էին զգալի քանակությամբ մորթիներ, դրանց թվում և թանկարժեք սամույրը: Ահա այս բազայի վրա 9—10-րդ, մանավանդ 12—13-րդ դա-

¹ Ա ի շ ա ն, Շիրակ, էջ 53:

² Х у д у д - а л - а л а м, стр. 326—33а, հմմտ. է. Փ ա փ ա ղ յ ա ն, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Արաստանի աշխարհագրության և անտեսական հարաբերությունների մասին (10-րդ դար): Հայկական ՍՍՌ ԳԱ սեղեղկագիրք, № 5, 1953, էջ 77—78:

¹ И. Орбелн. Каталог Анниского музея. стр. 33, рис. 12.

րևրում՝ նախկան քաղաքներում՝ զարգացում է մորթեգործությունը:

Մորթեգործ արհեստավորը իր կուղապուկում, որը և արհեստանոց և խանութ էր, մորթիներ էր սլատրաստում և վաճառում: Մորթեգործի աշխատանքը ծանր դարձահատությունների հետ կապված աշխատանք էր, նման խաղախորդի (կաշեգործի) աշխատանքին, սակայն. Գոռը, ինչպես ասվեց, մորթեգործի արհեստը գերադասում էր կաշեգործի արհեստից¹:

Մուշտակագործություն: Հնում մորթեգործը, ամենայն հավանականությամբ, պարպում էր նաև մուշտակագործությամբ, բայց այս արհեստները զարգանալով իրարից բաժանվել էին և մուշտակագործը արդեն մշակված մորթիներից իր արհեստանոցում մուշտակներ էր կարում: Դրանով պետք է բացատրել, որ այս արհեստով պարպողների համար միջին դարերում գործածվում էին մուշտակագործ, մուշտակաբար, մուշտակակար բառերը: Եթե դրանցից առաջինը և երկրորդը դեռևս նշանակել են մորթի պատրաստող և կարող, ապա երրորդ տերմինը պարզ ցույց է տալիս, որ մուշտակակարությունը մուշտակների մորթը պատրաստելու արհեստից անջատ էր:

Իրն-ֆակիհը վկայում է, թե Հայաստանի կրոնավորներն ու ազնվականները ինչ որ կառավի մորթուց մի տեսակ ընտիր և թանկագին մուշտակ էին կարել տալիս ու հագնում: Մուշտակով զգեստավորված պատկեր հանդիպում է և 13-րդ դարի մանրանդակարներում² (տխտ. LXXI ա):

Ձրիկն էլ մուշտակը դիտում է որպես ունևորների հագուստ.

«Ձօրն կեր ու խում արիր, և հագար բուրդաս մուշտակը»³,

Կտակկարություն: Միջնադարյան հայկական քաղաքներում տարածված ու սովորական արհեստներից մեկն էր գտակկարությունը: Կարելի էր կարծել, որ այդ դեպքում ունեցող արհեստավորների թիվը այնքան էլ մեծ չէր, սակայն այն փաստը, որ Անիում եղել է գտակկարոց կոչվող հատուկ փողոց, կամ շարք, ցույց է տալիս, որ այդ արհեստը շատ էլ երկրորդականներից չէր:

Անիի 1348 թվակիր մի արձանագրություն մեջ, ունի Հովհաննեսի որդի Շապագինը Առաքելոց եկեղեցուն նվերներ է տվել, որոնց թվում «եւ մեկ կուղապակ, որ ՚ի դասակարոցի խանապարի դիմաց է»⁴: Ճիշտ է, այս արձանագրությունը սլատկանում է 14-րդ դարի կեսերին, բայց գտակկարոցը մյուս փողոցների հետ միասին գոյություն է ունեցել վաղուց, մանավանդ 14-րդ դարում, Անիի անկման և ամայացման այդ ծանր ժամանակաշրջանում շեր կարող արհեստավորական որևէ թաղ կամ փողոց, այն էլ գտակկարների փողոց առաջ գալ:

Գտակներ կարում էին զանազան նյութերից՝ գործվածքներից, թաղիքից, կաշուց, բայց սմենից ավելի մորթուց: Դրանք լինում էին զանազան ձևերի: Պետք է նկատի ունենալ, որ դասային կառուցվածք ունեցող ֆեոդալական հասարակության մեջ խստադույն կերպով սահմանված էր, որ ամեն մի մարդ կարող էր կրել իր դասին և դիրքին համապատասխան զգեստներ, մանավանդ գլխարկ, որով նա անմիջապես տարբերվում էր մյուս դասերի մարդկանցից: Զինվորները բոլորից տարբեր և միայն նրանց հատուկ գլխարկներ ունեին. նույնը կարելի է ասել նաև քաղաքի աստիճանավորների մասին:

Գտակ կարող արհեստավորների թվում կային այնպիսիները, որ պարպում էին միայն մորթուց դտակ կարելու արհեստով և կոչվում էին ճոն, մի տերմին, որը հանդի-

¹ Մ խ ի թ ա ր Գ ո ը, Առակներ, Երևան, 1951, էջ 123:

² Մատենադարանի ձեռագիր № 6320, էջ 399բ:

³ Ձրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 57:

⁴ Ա ի ը ա ն, Շիրակ, էջ 63:

պում է Անիի և մոսակա Արշո-Առիճի արձանագրութիւններէ մեջ: Ինչպես երևում է, Ճոնի որդի Մխիթարը բավականաչափ ունեցվածքի տեր էր, անգամ անշարժ գույք և արտեր էր ձևը բերել, որի մի մասը նա նվիրել էր եկեղեցուն¹:

Հիշատակվում են նաև Ստեփանոս և Կորդ Ճոնակները Մուշ քաղաքում. սրանցից երկրորդը խաջար է կանգնեցրել 1144 թ. մեռած Ստեփանոսի գերեզմանի վրա: Մի Ստեփանոս Ճոն էլ դարձյալ Մուշ քաղաքում հիշատակված է իբրև 1204 թ. գրված մի ձեռագրի նվիրատու²:

Քսակագործութիւն: Քաղաքների և դքսամական շրջանառութիւն զարգացման հետ. բնակչութիւն կենցաղի մեջ ավելի ու ավելի արմատացավ գրպանում փողի քսակ պահելու սովորութիւնը: Քսակները գործում էին թելից, մանավանդ պատրաստում կաշվից և այլ նյութերից, երբեմն վարպետորեն զարդարելով դանազան նախշերով: Եթե գյուղերում բնակիչները բավարարվում էին տնային եղանակով պատրաստած հասարակ քսակներով, ապա քաղաքի բնակչութիւնը ունէր մասը քսակը գնում էր հատուկ քսակագործ վարպետներից, կամ պատվիրում նրանց: Շնորհիվ այս պահանջի, քաղաքներում առաջացան, թեև փոքրաթիւ, ինքնուրույն արհեստավորներ, որոնք քսակներ էին պատրաստում և կոչվում էին քսակագործ:

Քսակները առավելապես պատրաստվում

էին կաշվից, այս դեպքում նրանք ոչ թե գործվում, այլ կարվում էին և արհեստավորն էլ կոչվում էր քսակակար: Որ քսակակարութիւնը ինքնուրույն արհեստ էր, պարզ երևում է Ավագ Սալմաստեցու վկայաբանութիւնից, որտեղ ասվում է, թե այս Ավագը «արուեստիւ քսակակար էր»¹: Ճիշտ է, այս վկայաբանութիւնը 14-րդ դարի վերջերին (1390 թ.) է վերաբերում, սակայն ոչ մի հիմք չունենք կասկածելու քսակակարութիւն, ինչպես և քսակագործութիւնի գոյութիւնը քաջաջման այս դարից առաջ 10—13-րդ դարերում, երբ տնտեսական կյանքը և քաղաքները վերելք էին ապրում:


Այսպիսով, տեսնում ենք, որ կաշեգործութիւնն ու մորթեգործութիւնը նույնպես միջնադարյան Հայաստանի քաղաքների զարգացած արհեստներից էին:


10—13-րդ դարերում արհեստի այս բնագավառում ևս աշխատանքի բաժանումը խորացել էր և առաջ էին եկել կաշեգործական ու մորթեգործական մի շարք ինքնուրույն արհեստներ ու սրանց մասնաճյուղերը. դրանք էին՝ կաշվի մշակումը (խաղախժրութիւն), կոշկակարութիւնը, մուճակագործութիւնը, թամբագործութիւնը, համետագործութիւնը, լիամարաբութիւնը, լարարարութիւնը, մորթեգործութիւնը, մուշտակագործութիւնը կամ մուշտակարարութիւնը, դասակագործութիւնը, քսակագործութիւնը և այլն:

1 Ա լ ի շ ա ն, Շիրակ, էջ 123; Վ ա ռ դ ա ն Պատմութիւն, էջ 69:

2 Ա լ ի շ ա ն, Հայաստան, էջ 450:

1 Հայոց նոր վկաները, Կաղարշապատ, 1903, էջ 157:





ԳՐԳԻ ԵՎ ԳՐԶՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՇԵՍՏՆԵՐ

Հայ ժողովրդի կուլտուրական ժառանգութեան մեջ դիրքը և գրականութիւնը առաջնակարգ տեղ են գրավել: Դեռևս 4-րդ դարի վերջերից ստեղծելով սեփական գիր և գրականութիւն, հայ ժողովուրդը հետագայում ավելի ընդարձակում է իր գրավոր կուլտուրան: Շատ գրքեր են գրվում ու արտագրվում և դրան համապատասխան զարգանում են գրչութեան հետ կապված մի շարք արհեստներ՝ մագաղաթի, թղթի, թանաքների և ներկերի արտադրութիւնը, բառի նեղ իմաստով՝ գրչութիւնը, կազմարարութիւնը:

1. ԳՐԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մագաղաթ պատրաստելը: Մագաղաթ պատրաստելը կաշեգործութեան ճյուղերից մեկն էր: 9—14-րդ դարերից մեզ հասել են հազարավոր ձեռագրեր, իսկ շատ ավելի մեծ քանակութեամբ ոչնչացել են կամ անհայտացել: Միջին դարերում, թեև թուղթը օգտագործվում էր, բայց ձեռագրերի մեծ մասը գրվում էր մագաղաթի վրա, որը ոչ միայն դիմացկուն, այլև գրելու, նկարելու

համար ավելի հարմար ու բարձրորակ նյութ էր քան թուղթը: Մագաղաթը շատ լավ է վերցնում ներկերը: Մի երկրում, որտեղ հազարավոր ձեռագրեր են գրվել ու արտագրվել, պետք է, որ մագաղաթի մեծ պահանջ լինէր, ինչպես և պետք է լինեին զգալի թվով արհեստավորներ՝ այդ պահանջը բավարարելու համար: Իսկապես, միջնադարյան Հայաստանում, ինչպես երևում է ձեռագրերից, կարողանում էին պատրաստել շատ բարձրորակ և նուրբ մագաղաթ: Իրենք՝ միջնադարյան հեղինակները գովելով բարձրորակ մագաղաթը, անվանում էին այն «մագաղաթ շուշանափայլ նուրբ և ազնիւ»: Այսպիսի նուրբ, սովորական թղթից ավելի բարակ մագաղաթի վրա գրված մեծ թվով ձեռագրեր, պահվում են Մատենադարանում: Դրանք պատրաստվել են ինչպես բուն Հայաստանում, նույնպես և Կիլիկյան հայկական թագավորութեան մեջ, որտեղ այդ արհեստը ավելի բարձր կատարելության հասավ: Սակայն, բուն Հայաստանում էլ մշակված մագաղաթները շատ բարձրորակ են, թեև փոքր ինչ հաստ են: Մատենադարանում պահպանվում են մա-

զաղաթյա շատ փոքրիկ մինիստայուր գրքերից սկսած մինչև հսկայական մեծովյան գրքերը: Մուշում պատրաստված մի մեծ ձեռագրի վրա ծախսվել է ավելի քան 600 հորթի կամ ոչխարի կաշի և ամեն կաշուց պատրաստված է միայն մի թերթ:

Թղթագործություն: Թուղթ պատրաստելը շատ վաղուց հայտնի է եղել Չինաստանում: Արարական խալիֆաթում վուշից և բամբակից թուղթ պատրաստել սկսեցին 10-րդ դարի սկզբներին (իրև իլլիմագործության կենտրոն հայտնի էր Սամարղանդը): 13-րդ դարում թղթի արտադրությունը անցնում է Եվրոպա: Մեղ հասած հայերեն ձեռագրերի մեծ մասը գրված է թղթի վրա: Ծիշտ է, դրանք առավելագույն ուշ ժամանակի ձեռագրեր են, սակայն վաղ օրինակների թվում էլ թղթի վրա գրված մատյանները բնշ չեն: Արհեստագործության զարգացման մակարդակի բարձրացումը և թղթի համար համքի առկայությունը թույլ էին տալիս թուղթը պատրաստել տեղում: Սակայն Հայաստանում թուղթ արտադրելու վերաբերյալ ստույգ տեղեկություններ մեզ չեն հասել: Միայն հունարենից հայերեն թարգմանված մի վարքագրության մեջ պահպանվել է վկայություն այն մասին, թե «եղբարքն (որոնց մասին պատմում է վարքագրությունը) գիտեին գործել թուղթ»²:

1236 թ. մի ձեռագրի հիշատակարանում ևս ասվում է, թե ոմն Մխիթար ձեռագրի թուղթը պատրաստեց³:

Բայց առաջին դեպքում վկայությունը Հայաստանին չի վերաբերում, իսկ երկրորդ դեպքում «թուղթ պատրաստել»-ը կարող էր նշանակել պատրաստի թուղթ կոկել, տողել, նախապատրաստել գրելու համար: Պրոֆ. Լ. Աճառյանը գտնում է, թե թղթի պատրաստումը Հայաստանում հայտնի էր սկսած 11-րդ դարից, այնուհետև նա անցել է

Ենաստանյանուպուլիս և 13-րդ դարի կեսերին հասել է Արևմտյան Եվրոպա:

Պրոֆ. Լ. Աճառյանը, հավանաբար ելնում է այն հղելությունից, որ թղթի արտադրությունը արևելքից է արևմուտք անցել: Զինացիները թուղթ պատրաստել գիտեին շատ վաղուց, իսկ 10-րդ դարում հուշակված էր Սամարղանդում պատրաստվող թուղթը², իսկ Հայաստանը Եվրոպայից ավելի վաղ կարող էր սովորել թղթի պատրաստման արհեստը:

Թղթի վրա գրված ամբողջական ձեռագիր մատյան մեզ հասել է 972 թվականից (Մատենադարանի ձեռագիր № 2679): Հայաստանում թղթի արտադրության և դրա ժամանակի հարցը պարզելու համար, նոր տվյալներ են հարկավոր:

Գրչության համար անհրաժեշտ ներկերի և քանակների պատրաստումը: Ներկեր և թանաքներ պատրաստում էին բուսական, կենդանական և հանքային ծագում ունեցող նյութերից:

15—18-րդ դարերի ձեռագրերում պահպանվել են ներկեր և թանաքներ պատրաստելու շատ մեծ թվով դեղատոմսեր³, որոնց մի զգալի մասը գալիս է 10—11-րդ դարերից, եթե ոչ ավելի վաղ շրջանից: Այդ դեղատոմսերից երևում է, որ ներկեր և թանաքներ պատրաստելու համար օգտագործվել են մեծ թվով բուսական ու հանքային նյութեր, մասամբ և կենդանական ծագում ունեցող նյութեր:

Ստորև բերում ենք այդ նյութերի ցուցակը, որը կազմված է հրատարակված և դեռևս անտիպ դեղատոմսերի հիման վրա. ցուցակը պատվերված է այբբենական կարգով:

¹ Լ. Աճառյան, Հայոց գրերը:

² В. Г. Гафуров, История таджикского народа, т. I, 1949, стр. 178.

³ Միջնադարյան Հայաստանի քիմիայի պատմության ուսումնասիրող Ա. Հարությունյանը «ներկերը և թանաքները հին ձեռագրերում» խորագիրը կրող իր աշխատության մեջ հրատարակել է 100 դեղատոմս, շատ շատերն էլ մնում են դեռևս չհրատարակված:

1 A. Kremer, Culturgeschichte des Orients, B. II, S 308.

2 Վարդ հարանց, ԺԲ:

3 Ձեռ. Վնեհոփի, էջ 443:

Քուսական ծագում ունեցող նյութեր	Հանքեր, մետաղներ	Կենդանական ծագում ունեցող նյութեր
1. Աղբերաք արյուն	Աղ կամ բարաղ (կերակրի)	Գոգ (մեզ, միզանյութ)
2. Բողկ	Աղեր (բազմազան)	Հեղի (եղան, ձկան, պախրալի)
3. Բրինձ այրված վիճակում	Արծաթ	Հեղաքար
4. Գարի	Արջասպներ (բազմազան)	Հոթուր
5. Դեղաջուր (խեժաջուր)	Ռորակ	Կաթ (այծի, ոչխարի, կովի)
6. Դղթոր	Դեղին դառնիս (դառիկ)	Ջկան սոսինձ
7. Չափոան կամ բրբում	Ջաղ (սեռա դաղ)	Ջու (դեղնուց, սպիտակուց)
8. Ընկուղի պտղի կսնաչ կեղևը	Ջաճ (ծծմբաթթվային երկաթ, ծծմբաթթվային աղեր)	Որդն (որդան կարմիր)
9. Ընկուղի ճյուղի կսնաչ կեղևը	Ջանջաք (կինաբարիս)	Սպիտաճ (սպիտակ ոսկորի աղացած փոշի, որն օգտագործվում էր մանրանկարչության մեջ մարդկանց դեմքերի և մարմնի բաց մասերի պատկերման համար՝ իբրև որմնանկարի և այլ նկարների հիմք)
10. Թղենու կաթ	Ջառիկ (մկնդեղ)	
11. Լալի	Ոսկեզատիկ (դեղին)	
12. Լօբ (խեժ է)	Լաճվարդ (լավուրիտ)	
13. Խունկ կամ դեղնուխունկ	Լեղակ (տեղական, սաճիկ լեղակ)	
14. Խաչափայտ (դեղին ներկի համար)	Կարմիր արջուսալ	
15. Խոնդարի ծաղիկ	Կարմիր կալ (հայկական կարմիր կալ)	
16. Միծառն կժիկ ծաղիկ	Կալարար	
17. Կտավհատի ձեթ	Կիր	
18. Հիբիկ ծաղիկ	Կլայեկ (անագ)	
19. Մազթաքի	Հայ քար (կապույտ, կանաչ և ճերմակ երանգներով կլոր բարեր ընկուղի մեծությամբ լինում է լեռներում, որտեղ արծաթի հանք կա)	
20. Մանուշակի տերև	Հինա	
21. Մեղր	Ճնարակ (քարե զառիկ)	
22. Մոխիրներ կաղձու, փալուտի և այլն, նաև ածուխ	Մուր (մոմի, ձեթի, նավթի)	
22. Նշաստա (օսլա)	Ոսկի	
23. Նոսան կեղև	Պաղլեղ (շիբ)	
24. Որդնափայտ որ է բաղամն (կարմիր փայտ է)	Պղինձ (կարմիր, դեղին)	
25. Չողան	Պողպատի խարտուք	
26. Սամաղ նաև զսմղ, սամղարապի, որ է կեղև	Սիլիկոն	
27. Սպիտակ սոսինձ	Սուր ջուր (արքայաջուր, թեզաջուր). պատրաստվում էր կայարարից և կրից)	
28. Սխտոր		
29. Սոխ (հյուլը և կեղևը)		
30. Վարդ (վարդաջուր)		
31. Տաճիկ շուղ		
32. Տորոն (տորոն)		
33. Տուտայ, որ է ձիթին ծարուրն		
34. Սշարակ		
35. Օշնա		
36. Ցքի (օղի)		
37. Քայսիս		

Այս ցուցակը դեռևս շատ հեռու է լրիվ լինելուց, քանի որ բոլոր ներկանյութերը պարզելու համար հասուղի ուսումնասիրություն է հարկավոր, նույնիսկ հազիվ թե դա հնարավոր լինի, որովհետև շատ նյութերի անունները գրավոր աղբյուրներում չեն պահպանվել։ Իհարկև, թվարկված նյութերի մի մասը օժանդակ դեր է կատարել և օգտագործվել է ներկերը քսելու, կապնելու,

ներկը կայուն դարձնելու, փայլ առաջացնելու և այլ նպատակներով։

Ներկերն ու թանաքները ստացվել են մի շարք եղանակներով. օրինակ՝ բույսերի ծաղիկները, տերևներն ու արմատները տրորել ու քամել են, կլիել են ջրով, ծեծել կամ սղկել են հավանքում, սանդերի մեջ, աղացել են կրկանքով կամ նույնիսկ ջրաղացում, լոսել (տրորել) են սպիտի վրա, մե-

խանիկորեն խառնել են իրար նեո, քրիստո-
կան միացություններ են ստացել, օքսիդաց-
րել, թթվացրել, այրել, մարմանդ կրակով
տաքացրել, երկաթի, պողպատի, պղնձի, ոս-
կու, արծաթի, արճճի, անագի խարտուրներ
ստացել, ձուլել, համաձուլել, բաց արել
կամ լուծել՝ ջրով, քացախով և այլ նյու-
թերով, մետաղները լուծել են սնդիկով,
հարել, կոկել, թորել և այլն: Պարզ է, որ
ներկագործները բավականաչափ կուլտու-
րա, փորձ և հմտություն ունեցող մարդիկ
էին, որոնք անտեղյակ չէին միջնադարյան
քրիստոսին: Կարելի է ասել, որ ինքը միջ-
նադարյան քրիստոս (ալքրիստոս) առաջացավ
զարգացած մետաղագործություն, ներկա-
գործության և այլ արհեստների հիման
վրա:

Գրչության համար անհրաժեշտ բարձ-
րորակ սև թանաք արտադրելու հիմնական
նյութը գլխորն էր: Մի բավականաչափ հին
ձեռագրի վրա 16-րդ դարում գրված է.
«Մագաղաթի թանաք» պատրաստելու հե-
տևյալ խրատը: «Առ նուկի մն կանաչ գլխոր
ու կէս նուկի նուան կեղև և լոսէ մանր, և
լից զերկուան ի նոր պուտուկ, և լիտր մի
ջուր ի վերա և եփէ, որ մնա կէս լիտր ջուր,
և լից նուկի մն քացախ ի վերա և սակաւ մի
քացախովն եփէ, ապա քամէ ի թանձր լաթ,
և դարձոյ ի պուտուկն և առ ժՆ մթխալ
սամղ և լոսէ և թանաքին ջրովն տրորէ և
հար փայտով շատ և դարձոյ ի պուտուկն և
սակաւ մի այլ եփէ և է անգամ զերկաթն
կրակցու և ի ներս վարկ և քամէ և լից ի
կաղամարն և գրէ»¹: Ծիշտ նույն խրատը
գտնում ենք և այլ ձեռագրերում² և կաս-
կած չկա, որ նա շատ հին ծագում ունի:

Գլխորից պատրաստում էին նաև այլ
գույնի ներկեր: 1752 թ. մի ձեռագրում
պահպանվել է վարդագույն ներկ պատրաս-
տելու կերպը, որն անշուշտ արտագրված է
ավելի հին օրինակից: Այդ ձեռագրում կար-

գում ենք. «Եւ կամենաս վարդագոյն գեղ
չինել, առ սպիտակ դխտոր և կոտորէ և արկ
ջուր որչափ ծածկէ և թող ժամ մի, որ գրխ-
տորի գոյնն առնու և զնճուֆր, սպիտաճ
շաղու է քացախով և արկ ի փոքրն աման
և ծեփեայ զկճիճն աղեկ և թաղէ ի մաղմաղն
Գ օր և աղա մանր և դխտորի ջրովն խառնէ
և սաղմով գրէ»¹:

Գլխորը տարբեր նյութերի հետ եփելով
և այլ եղանակներով ստանում էին տարբեր
գույնի ու տիպի ներկեր ու թանաքներ.
Դրանց ընդմեջ՝ բացի սևից, նաև շագանա-
կագույնը:

Ինչպես վերևում ասվեց, ձեռագրերում
պահպանված ներկերի ու թանաքների դե-
ղատոմսերի թիվը շատ մեծ է: Ստորև կըն-
դենք դրանցից մի քանիսը, որպեսզի ընթեր-
ցողը պարզ պատկերացում ունենա միջնա-
դարյան Հայաստանի ներկագործության մա-
սին: Մատենադարանում պահվող 15-րդ
դարի մի ձեռագրի բնագրի ինն էջերի վրա
բերված ան գրելու ներկեր պատրաստելու
շատ դեղատոմսեր. օրինակ՝

«... Զարանի ջուրն ի յոսկին խառնէ, որ
կարմիր գա:

Զլազվարդն սպիտաճ խառնէ, շուք է լա-
զուարդին և ներքին աստառ, զլազվարդն
աղա, թեզ քերիճուցով կամ սմղով յարոյ և
գրէ:

Զքերիճ բարակն դիր ի պուտուկն և ջուր
արկ ի վերայ և եռացոյ պինդ, և լեղակ խառ-
նէ և ժՆ (15) օր թաղէ ի տաք տեղ, հան
կոչդ խառնէ և գրէ:

Այլ դեղ. զտօրոմն կեղևէ և գինով
եփէ, լեղակ խառնէ կոիզով յարոյ և գրէ:

Այլ՝ զլեղակն խառնէ ընդ սպիտաճն
ձուի դեղնուցով յարոյ և գրէ:

Դեղին դեղ. զոսկէ զառիկն աղա մանր և
դեղնախոունկ խառնէ, կոիզաջրով յարոյ և
գրէ:

Ճնարակ, որ է քար. զառիկն խառնէ ի
ձուի դեղնուցն և գրէ:

¹ Մատենադարանի ձեռագիր № 752, էջ 180բ:

² Տե՛ս, օրինակ ձեռագիր № 1395, էջ 359բ:

¹ Մատենադարանի ձեռագիր № 7092, էջ 22ա:

Մարմնոյ դեղ սապէս արա. ա՛ռ Վյորդան փայտին զջուրն և խառնէ ի ներս սպիտաճ և սամղ արկ և գրէ:

Կարմիր դեղ սապէս արա. ա՛ռ կարմիր գինի Գ շափ և տօրուն Բ շափ, յիրար խառնէ և եփէ և սմղ արկ և գրէ:

Միրանի դեղ և կարմիր սապէս արա. ղնջուֆրն աղա ջրով և ջուրն ի վերև դա ի ղատ քամէ լեղակ խառնէ՝ նա ծիրանի լինի. կոհզով յարոյ և գրէ՝ նա կարմիր լինի:

Այլ՝ զսլիկոնն ձուի դեղնուցով և գրէ:

Այլ՝ աղբրացարին ի կիրն խառնէ և մանր աղա, շպլեխով յարոյ և գրէ՝¹,

«(Վ)արդ դեղ՝ սպիտաճ խառնէ ընդ սլիկոն, կոհզով յարոյ և գրէ:

Միրանի դեղ՝ տրոնափայտ եփէ քաջ, բորակ ի ներս կոհզաջրով յարոյ և գրէ:

Այլ ծիրանի՝ ղծիծուան կօշիկ² ծաղիկն քաղէ և շորացոյ և կաթամբ թրջէ, կռէզ արկ և գրէ:

Այլ ծիրանի՝ զտաճիկ լօղակն Ա շափ, որդնափայտ Բ շափ մանրէ և ջուր արկ և Ը օր յարև դիր, կռէզ արկ և գրէ:

Այլ դեղ՝ ա՛ռ զկլայկն նօսրացոյ և ի քաջ քացախն թաց և ի պուտովն ի կախ արա մինչև ժանկ առնու, և առ զկոհզաջուր հարոյ և գրէ:


Պատկերի դեղ՝ զսպիտակ ոսկրն այրէ և լեսէ և ձուի դեղնուց խառնէ և գրէ:

Կանաչ դեղ՝ զկարմիր պղիծն ի քաջ քացախն թաց և ի տունն կախէ, որ ժանկ առնու, ա՛ռ և քերէ զզաֆրանն քացախով թրջէ և յայտ թրջած զաֆրանէտ զքացախն ի վերայ լից և այտիւ աղա, ձուի դեղնուցով խառնէ և գրէ:

Այլ կանաչ՝ առ Ա շափ լեղակ և զառիկ խառնէ և աղա ձուի դեղնուցով յարոյ և գրէ՝³:

Նույն ձեռագրում գտնում ենք «պատկերահանի և ծաղկարարի դեղերն» պատրաստելու, դրանք իրար հետ կամ այլ գույ-

նի ներկերի հետ խառնելու եղանակով բազմաթիվ նուրբ երանգներ ստանալու 50-ից ավելի դեղատոմսեր: Ուշագրավ է, որ մշակված է եղել հիմնական գույների և նրանց իրար հետ խառնելու եղանակով այլ և այլ գույներ ու երանգներ ստանալու հատուկ տեսութուն, որը պատկերված է նաև գծադրով: Ծիշտ է, այդ ձեռագիրը 1732 թվականի է, սակայն լեզվից և ոճից երևում է, որ արտագրված է ավելի հին օրինակից: Այդ ձեռագրում կարդում ենք. «Գոն է շարժական այնր, որ նկարագրութեամբ թափանցիկ է և այս ըստ բնատրեալ բնութեանն: Տեսակ հրեկի դոմոցն են հինդ, այսինքն՝ սպիտակ, դեղին, կարմիր կապոյտ և սեաւ: Ի սոցանէ յառաջագային այլ ամեն գոյնք, ըստ տրում տեսանի ընդ) հետեալ քաշուածոջս, յորում ծննդական մտաւորն զյուով խորին պայտնիս ուսանի:



լծորդութիւն գլխաւոր գունոցն: Սպիտակ գոյնն ընդ սևոյն լինի մոխրաշաղ, ընդ դեղնոյն՝ լինի դեղնաշորթ, ընդ կարմրոյ՝ լինի գոյն որդան, ընդ կապուտոյն՝ մոխրագոյն: Դեղին գոյնն ընդ կարմրոյ լինի ոսկէգոյն, ընդ կապուտոյն՝ լինի կանաչ, ընդ սևոյն՝ դառնա թուխ: Կարմիր գոյնն ընդ կապուտոյն՝ լինի ծիրանի, ընդ սևոյն՝ թուխ կարմիր: Կապոյտն ընդ սևոյն՝ լինի թուխ կապոյտ»¹:

1 Մատենադարանի ձեռագիր № 186, էջ 58—58բ: Տե՛ս նաև Ա. Խ. Հարությունյան, Ներկերի և թանաքների գործածությունը հին հայկական ձեռագրերում, էջ 15—17:

1 Մատենադարանի ձեռագիր № 573, էջ 239ա:
2 Պետր է լինի ծիծուան կփիկ:
3 Մատենադարանի ձեռագիր № 573, էջ 239բ:

Մի շարք նյութեր՝ լեզին, ս՛աղը (աղտոր), մազթաքեն, ձվի սպիտակուցն ու դեղնուցը գործածվում էին, որպեսզի ներկերին տրվի կաշունություն, կայունություն և փայլ: 1752 թ. արդեն հիշատակված ձեռագրում մի դեղատոմս կա, որով պատրաստված լուծույթը, եթե քսես «նախշի յերեսն՝ պայծառ և մնացական լինի»¹:

Մի այլ ձեռագրում նշվում է, թե ամեն գույնի թանաքի հետ պեաք է ձվի դեղնուց խառնել, որպեսզի այս թանաքով գրված ձեռագիրը ջուրն ընկնելիս գրվածքը չթրջվի, իսկ եթե թրջվի էլ՝ չսպականվի²:

Ձեռագրերում հաճախ հանդիպում են նաև արծաթագույն ու ոսկեգույն ներկեր պատրաստելու, ինչպես և ոսկու վառաղ պատրաստելու դեղատոմսեր: Ահա արծաթագույն ներկի մի դեղատոմս.

«Պատուական արծաթադեղ. առ յոսկերչէն ժուայի արծաթ [արծաթանդիկ] տուր ծեծել ոսկերչին, խիստ նաւար և տուր մալաղմայ առնել, ապա աղայ ի վերայ խարտ սալին և առ քան զլուր կշեռն Դ մաղտաքէ և արորէ և աղայ և զմալիղմայն և զմաստաքէն խառնէ և դիր յոսկերչին բութակն և դիր ի վերայ խուրն և մտոյ յոսկերչին քուրայն և վառէ ի վերայ գործելով կրակ և փշէ մեղմն մինչ այրի մաղտաքէն և մնա արծաթն միայն, ապա առ ի յետ և թող որ հովնայ և աղայ ի վերայ սպիտակ մարմարին և լուս և յըստակէ և սաղմ (սամղ) արկ և գրէ»³:

Մատենադարանի ձեռագրերի մանրանրկարներում շատ են հանդիպում սևացած տեղեր, որոնք սկզբնապես եղել են արծաթագույն, բայց նկարված լինելով «կլայնկի դեղով», կամ ցածրորակ արծաթագույն ներկով, դարերի ընթացքում կորցրել են փրենց գույնը և սևացել: Կան և «պատուական արծաթի դեղ»-ով նկարված ձեռագրեր, որոնք պահպանում են իրենց արծաթե գույնը:

Ոսկեգույն ներկը (վարաղը) նույնպես պատրաստել և՛ն տարբեր տեսակի ու որակի: Բարձրորակ վարաղը ստացվում էր ոսկուց, մի եղանակով, որը հայտնի է եղել «օսկի հալել» անոմսով: Նույն ձեռագրերում պահպանվել է «եւրատ վասն ոսկոյ հալելոյ», որը մեջ բերվեց վերևում:

Հիշյալ ձեռագրում կա նաև հասարակ ոսկեդեղ պատրաստելու դեղատոմս. «Այլ ոսկեդեղ, առ կանաչ գխթոր և եփէ մինչև թանձրանայ և զոսկէ զառիկն կէս արա դեմ դըխթորին, աղա մանր և խառնէ ընդ յիրեար և Ծծ օր թաղէ փ ցուրտ տեղի, պղնձի ամանով, ապա հան կռէզ արկ և գրէ»⁴:

№ 551 ձեռագրում կրկնում ասվում է թե ինչ գույնի ներկ, ինչ պատկերների համար պեաք է օգտագործել: Օրինակ. «Ի ճնարակն (դեղին գույնի է) կանաչ խառնէ վասն Եղիայի և Յովհաննու և ճգնաւորաց հանդերձուն և ի դոյն խաչափայտին:

Ի սպիտաճն սակաւ թուխ խառնէ ի գոյն կապկի և ագուաի, դիւի և այլ վայրի իրեաց:

Իսկ թուխ որ վասն ծաղկի առնես, զփիճի կամ զուռի գործելին լեսէ, սամղով յարոյ և ապայ խառնէ:

Ձղնճուֆն (կարմիր գույնի է) ու թուխն խառնէ մսովի և հերաց դեղ է, թէ կարմիրն շատ խառնէս նայ խարդէջ գեղոյ և հրեշտակաց թեի»⁵:

Պահպանվել են և որդան կարմրից թանաք պատրաստելու դեղատոմսեր⁶:

Գրիչները հաճախ, չկարողանալով մագաղաթ ձեռք բերել, օգտագործում էին հին գրված գրքերի մագաղաթը նախօրոք մաքրելով նրանց վրա եղած գրվածքը: Դրա համադրությամբ հետևում է տրվում. «Կաղնի մոխիրն քսէ աճոէ ջրով և լից յամանի եռացոյ և պարզէ. զմագաղաթն այն ջուրն դիր այնչափ, որ

¹ Մատենադարանի ձեռագիր № 573, էջ 240ր:

² Ա. Խ. Հարությունյան, ներկերի և թանաքների գործածությունը, էջ 47, դեղատոմս 67—61, ձեռագիր 551, էջ 126ա:

³ Նույն տեղում, էջ 55, դեղատոմս 73:

¹ Մատենադարանի ձեռագիր № 7092, էջ 18ա, բ:

² Մատենադարանի ձեռագիր № 2191, էջ 155բ:

³ Մատենադարանի ձեռագիր № 573, էջ 242ա:

ելնէ գիրն և լաւ թանաքն լվա ըաղի սապոնով, բավ է»¹:

Թեև այս ձեռագիրը ուշ ժամանակների է, սակայն թանաքից մաքրած և նորից գրված մագաղաթյա ձեռագիրներն հանդիպում են դեռևս 10-րդ դարում:

Ներկերի և թանաքների վերաբերյալ ձեռագրերում պահպանված նյութերը շափազանց շատ են և մեջբերված տեղեկությունները կազմում են նրանց մի փոքր մասը, սակայն դրանք էլ բավական են այս արհեստի բարձր մակարդակի մասին գաղափար կազմելու համար:

Միանգամայն պարզ է, որ ներկեր և թանաքներ պատրաստելու համար օգտագործվել են մեծ թվով և շատ բազմազան նյութեր: Հաճախ ներկերի պատրաստումը ուղեկցվել է քիմիա-անխնոլոգիական բավականաչափ բարդ եղանակների կիրառությամբ, որը վկայում է ներկագործների դարավոր փորձի և նշանակալից դիտելիքների մասին:

Ներկագործները և գրիչները պիտեին, թե ինչ ներկ ինչ նպատակի համար պետք է օգտագործել, ինչպես ստանալ ավելի բարձրորակ ներկեր, ինչպես կայունացնել մանրանկարի ներկերը, որպեսզի նրանք երկար պահպանվեն, վառ ու թարմ մնան: Դրա շնորհիվ մինչև այսօր էլ դարերի խորքերից մեզ հասած ձեռագրերն իրենց մանրանկարներով հիացմունք են առաջացնում:

Քննող է այն, որ ներկագործներն ու գրիչները լավ իմանալով, թե որ ներկերն են ավելի բարձրորակ, որոնք ավելի ցածրորակ արտադրել ու օգտագործել են թե՛ մեկ, և թե՛ մյուս տեսակի ներկեր՝ համաձայն պահանջի: Միշտ չէ, որ պատվիրատուները և գնորդները ներկայացնում էին ավելի թանկ նրատող ձեռագրերի պահանջ: Դրան համեմատ պատրաստվել են նաև ձեռագիր մատյաններ ավելի ցածրորակ նյութերից, ցածրորակ ներկերով՝ հաճախ առանց մանրանկարների՝

սպասարկելով ավելի մասսայական պատվիրատուի, մանավանդ գնորդի պահանջարկը:

2. ԳՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՇԵՍՏԸ

Հայ ժողովուրդը, սկսած Մեսրոպ Մաշտոցի, ժամանակներից հատուկ սեր ունի դեպի գիրն ու գրականությունը. դրան համեմատ գրչությունն արվեստը շատ հարգի է եղել: 9—13-րդ դարերում գրվել են հազարավոր ձեռագիր մատյաններ և գրչության արվեստը բարձր զարգացման էր հասել: Իհարկե, գիր գրել, արտադրելը խոշոր կուլտուրական գործ էր, բայց և նա իրավամբ դիտվում էր իբրև արհեստ. ավելին՝ հազարավոր գրքերի ստեղծումը պայմանավորում էր մի շարք արհեստների՝ մագաղաթագործության, ներկերի ու թանաքների արտադրության, գրչության, կաղմարարության և այլ արհեստների գոյությունը:

Հայաստանի համարյա բոլոր խոշոր վանքերն ունեին գրատուն¹, որը ոչ միայն գրապահոց էր, այլև գրչության բազա և արհեստանոց: Այս գրատներում ստորին դասի հոգևորականությունը պարապում էր գրչության մասին և գրքեր պատրաստում ոչ միայն տվյալ վանքի, այլև ուրիշ վանքերի, եկեղեցիների, նաև ֆեոդալների ու մեծատունների համար:

Գրքեր պատրաստելու արհեստով զբաղվում էին նաև առանձին անհատներ կամ մի քանի մարդ միասին, քանի որ մի արհեստավորը կգծվարանար իրականացնել գրքի արտադրության հետ կապված բոլոր աշխատանքները: Իսկ դրանք թվով շատ էին: Ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ նրանց վրա աշխատում էին գրիչը, ծաղկողը և կաղմոզը իբրև հիմնական գործը կատարողներ, բայց սրանց օգնում էին թուղթը կոկողը, քանոնողը (գիրքը զրելուց առաջ տոգում էին ձևմամբ): Կային նաև ներկեր

¹ Մտերենագրարանի ձեռագիր № 2191, էջ 155ր:

¹ Տե՛ս վիմական տարեգիր, էջ 33, 72, 79, 102 և այլն: Նաև Ս տ ե փ ա ն ո ո Օ Ր Ե Լ Լ Կ Ա Ն, Պատմութիւն, էջ 225:

ու թանաքներ պատրաստողներ, ոսկեղեղ պատրաստող վարպետներ (ամեն գրիչ չէր կարող ոսկեղեղ պատրաստել, ինչպես և ձեռագրերը ոսկեզօծել): Ոսկեզօծող վարպետը կոչվում էր ոսկող, կար նաև պարզող, որը պրլած թերթերն էր փուռում, շորացնում: Երբևմն գրիչը բաց էր թողնում վեճնագիրը և գլխագիրը և դրանք լրացնում էր մի ուրիշը՝ ոսկեզույն կամ կարմիր ներկով: Իհարկե, աշխատանքի նման բաժանումը զարգացած էր խոշոր վանքերի և բարձր տիպի դպրոցների՝ կից գրատների արհեստանոցներում, իսկ միայնակ գրիչները իրենց օգնականի և աշակերտի հետ միասին կատարում էին աշխատանքի բոլոր պրոցեսները. երբևմն պրիշն ինքն էլ ծաղկում, նկարում էր, բայց սովորաբար գրիչը, ծաղկողը և կազմողը միանգամայն տարբեր մասնագիտություն արհեստավորներ էին. դրանցից որակյալ ծաղկողը արդեն արվեստագետ էր:

Ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ գլխավոր դործը կատարող վարպետներին օգնողները երբևմն մի քանի հոգի էին լինում: Դրանք հավանաբար վարպետացուներն ու աշակերտներն էին, որոնք հաճախ բոլորը միասին հիշատակված են պարզապես «աշխատողք» բառի տակ: 1053 թ. (ՆՅ 3793) ձեռագրի հիշատակարանից երևում է, որ այդ ձեռագիրը արտագրել է Հովհաննեսս գրիչը, որը հավանաբար և ծաղկողն է հղել, կազմել է Հակոբոսը, մագաղաթը կտկել է Մովսեսը, ոսկեղեղը պատրաստել են Հովհաննես Սողկը և Թորոս Խաղրակը, սպասավորել է Դավիթը: Հիշատակվում է նաև Միքայել ոսկերիչը, որը հավանաբար դարդարել է գրքի կազմը ոսկե կամ արծաթե զարդերով: Ոսկերիչները հաճախ վաղուց պատրաստի ձեռագրերի վրա ամրացնում էին ոսկե, մանավանդ արծաթե խաչեր և կամ կոստղում էին գրքերի կազմից, այսինքն համատարած կերպով կամ որոշ պատ-

կերներ (մեծ մասամբ խաչեր) կազմելով պատում էին գրքի երեսը: Ձեռագրում կոստղել ասելով հասկացվում էր արծաթե մեծագույն գամերով գրքի կազմի վրա շորջանակներ, խաչեր և այլ պատկերներ կազմելը: Հանդիպում են և համատարած կոստղած կազմեր:

1184 թ. մի ձեռագրի վրա աշխատել են հինգ մարդ՝ հայր Պետրոսը, Անդե Գծողը, Սատվածատուրը, որը կոչվում է «պատրաստող նիւթոց», Սուաբել քահանան, որը «չլուով աշխատեցաւ ի սպասաւորութիւն գրոցս և ոմն «ձեռնասուն մանուկ»¹: Նման օրինակների թիվը մեծ է, բայց բավականաճանք մեջբերվածներով:


Ձեռագրերում հանդիպում են մանրանկարներ, որոնք պատկերում են գրչագրական արհեստանոցը: Այստեղ սեղանի վրա տեսնում ենք մագաղաթ կոկելու մետաղե դործիքներ՝ կոկիչներ, որոնք կոշկակարի կոկիչից շին տարբերվում և նույնությամբ պահպանվում են մինչև մեր օրերը, դանակներ, քերիչներ, բլեր, թանաքի և ներկի ամաններ, գրիչներ, վռձիչներ և այլ պարագաներ:

1338 թ. մի ձեռագրում (Ն 7643 էջ 2 բ) Մատթեոս ավետարանիչի առջև նկարված են գրչության գործիքներ և պարագաներ. որոնց կողքին գրված են նրանց անունները. գրանք են.

1. քանոն
2. թղթի կոկիչ
3. կաղ(ա)մար (2 հատ)
4. գրիչ (2 հատ)
5. մկրատ
6. ձևիչ
7. դանակ մեծ
8. դանակ փոքր
9. մետոկ
10. կարմիր և սև ներկամաններ

¹ Գ ա ռ ի գ ի ն Ա. կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 233—234 և 651:

¹ Գ ա ռ ի գ ի ն Ա. կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 500:



Նկ. 38. Գրչութիւն պարագաներ (մանրանկար, Մատենադարանի ձեռագիր № 7643, էջ 2ր, 1338 թ.):

11. խուին սնտուկի (տոպի կախարիչը փորագիր)¹ (նկ. 38):

Ղուկաս ավետարանիչի առջև նկարված է նաև մարմարի տախտակը, որը գործածվում էր ներկերը իրար խառնելու և փորձելու համար:

Ձեռագիր պատրաստելը հեշտ գործ չէր, թե՛ նյութական միջոցների ծախսի, և թե՛ գործադրվող ծանր ու մանրակրկիտ աշխատանքի տեսակետից: Մատենադարանում պահվող մի ձեռագրի վրա, որը բերվել է Մշո Առաքելոց եկեղեցուց, ինչպես տեսանք, ծախսված է 600-ից ավելի հորթի կամ ոչխարի մորթի և ամեն մորթուց մի թերթ է պատրաստված: Նրա վրա ծախսվել են նաև թանկարժեք ներկեր, ոսկի, իսկ թե որպիսի տքնաջան ու երկարատև աշխատանք են

գործադրել գրիչն ու ծաղկողը, վեր է ամեն երևակայությունից: Ձեռագրեր կան, որոնք արտագրված են ոչ միայն մի քանի ամսվա, այլև մի քանի տարվա ընթացքում: Որպիսի համառ, մանրակրկիտ ու դժվարին աշխատանք և համբերություն էր հարկավոր մի քանի հարյուր, երբեմն ավելի քան հազար մեծագիր էջեր գրելու և նկարազարդելու համար: Իդուր չէ, որ 1046 թ. արտագրված մի ձեռագրի գրիչը, ավարտելով ձեռագիրը և շունչ առնելով երկարատև ու ծանր աշխատանքից, գրում է. «Ղի որպէս նաւավարին յափն ծովուն հասանելն խնդուլիւն է, նոյնպէս և գրչի՝ յետին պիծս»¹:

Որպիսի համեստությունը են կուլտուրայի այդ անխոնջ մշակները խոստով իրենց

¹ Մատենադարանի ձեռագիր № 7643, էջ 2ա:

¹ Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 225:

կատարած գործի մասին, որոնք իրենց խակ ասելով հաճախ աշխատել են նյութական դառն զրկանքների, ցրտի, քաղցի, մազադաթի, թանաքների ու ներկերի պակասի պայմաններում, ձյան հալքից ու անձրևից կաթացող տանիքով հյուղակներում, ճրագի աղոտ լույսի տակ, հավուր ծեղովյան դողդոջ ձեռքերով, աղոտած տեսողությամբ: Նրանք իրենց աշխատանքը չեն ընդհատել, նույնիսկ պատերազմների և սևհավիտքների ժամանակ, քաղաքական անբարենպաստ պայմաններում և միշտ աշխատել են ուժերի առավելագույն լարումով, շխնայելով ոչ իրենց ջանքերը, ոչ էլ շնորհքը:

1215 թ. գրված մի ձեռագրի Պետրոս անունով գրիչը, ասես իր արած գործի համար ներողություն խնդրելով գրում է «Դարձեալ աղաչեմ զընթերցողսդ՝ սխալանաց և խոշորութեան և անհարմար գրելոյս չլինել մեղադիր»¹: Նման հիշատակարաններ շատ կան:

Մխիթար Երզնկացի գրիչը 1314 թ. գալով Գլաձոր, այստեղ ծանր պայմաններում, ձեռագրեր է արտագրել և մի ձեռագրի հիշատակաբանում ասում է.

«Որք ընթերցամբ: հալիք ի սա,
Եւ հանդիպիք դանձու սորա,
Տե՛ս թէ քանի՜ աշխատեցայ
Ես Մխիթար գրիչ սորա:
Թուղթս անկող ու գրիչ չկայ,
Աւուրքս ցուրտ ու պարզկայ.
Չարտախս բարձր ու կրակ չկայ:
Դոնեքս [հաց] չոր ու սսլաս չկայ.
Եւ այս Գլաձորն ո՞վ գիտենայ:
Եւ յոյժ նեղած ու ճար չկայ.
Գիրքս յերկար և եզր չկայ
Եւ ես պանդուխտ, ու վեղար չկա
Ինձ հատուցումն յիշման արա
Վասն փցուն գրի սորա»²:

Վանքերը գրիչ, ծաղկող, կազմող վարպետներին արամադրելով անհրաժեշտ նյութեր և հոգալով գրչութեան ծախսերը, տեր էին դառնում պատրաստվող ձեռագրերին և տնօրինում էին այդ ձեռագիրը՝ վաճառում կամ փոխանակում էին: Այս եղանակով վանքերը շահագործում էին գրչութեամբ պարասող ստորագաս հոգևորականներին:

Հաճախ ձեռագրութեւ պատրաստվում էին թագավորների, իշխանների, մեծատունների և եկեղեցականների պատվերներով: Պատվիրատուները, երբեմն հոգում էին ձեռագրերի ծախսերը, արամադրում անհրաժեշտ նյութերը, բայց ավելի սովորական էին այն դեպքերը, երբ պատվիրատուն միայն վերջում վճարում էր կատարված ծախսերը և ստանում գիրքը:

Ձեռագրերը բավականաչափ թանկ էին և ամեն ոք չէր կարող ձեռագիր պատվիրել կամ դնել, ուստի պատվիրատուների դերում մենք տեսնում ենք ունևոր դասի ներկայացուցիչներին, սակայն բնորոշ է, որ 12-րդ դարի երկրորդ կեսից սկսած հաճախ են հանդիպում ձեռագրեր, որոնք պատվիրված են մի խումբ մարդկանց կողմից: Այս կուրիոսիվ պատվիրատուների թվում քիչ չեն հանդիպում քաղաքի արհեստավորները և մանր առևտրականները, որոնք մասնակցելով ձեռագրի համար անհրաժեշտ ծախսերին կամ կուրիոսիվ կերպով գնելով պատրաստված ձեռագիրը, փրավումք էին ստանում հիշատակվելու նրա էջերում:

Ուսումնասիրելով հայկական ձեռագրերը, նրանց հիշատակաբանները և մի շարք ձեռագրերի ճակատագիրը, տեսնում ենք, որ մի վարմանալի համաժողովրդական սեր է անդել դեպի գիրքն ու գրականությունը և սրա շնորհիվ է, որ փրկելով ժամանակի քայքայիչ ազդեցությունից, օտարերկրյա նվաճողների ուղղման արշավանքների և ուղեկցող ավերակներից, հրից ու կողոպուտից միւր նախնիները մեզ են հասցրել շուրջ 24 հազար ձեռագիր: Նույն սերն ու ակնածանքը դեպի գիրքը մղում էր մարդկանց փրկու-

¹ Գ ա Ր Ե գ ի ն և կաթողիկոս, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 775:

² Ա յ ի շ ա ն, Սխալան, էջ 135:

րել գտնել գերի տարած գրքերը և ինչպես գերի տարված մարդկանց ետ դնելով ազատել գերությունից ու վերադարձնել իրենց տեղերը:

Շատ աղետալից պատմութիւն է ունեցնւ Մշո սուրբ Ղազարի վանքում 1204 թ. գրված Տոնականը: Այս մեծ ձեռագրի արտագրութիւնը և նկարազարդումը տեւել է երեք տարի: Վարդան քահանա գրիչից այս Տոնականը ստացել է Բաբերդցի պատրոն Աստվածատուրը, որին նշանակել է միւր Ալեքին: Բանտարկում սպանում է: Զեռագիրը Բաբերդի ղազին (գատավորը) բռնագրավելով տանում է նշանակ, որտեղ դիրքը երեք տարի մնում է գերի: Երեք անգամ, մեծ թվով աշխարհիկ և հոգևորական մարդիկ ճանապարհորդում են նշանակ ձեռագիրը հետ գնելու, սակայն ղազին շատ մեծ դին է նշանակում: Վերջապես սուրբ Ղազար վանքի վանականները, Մուշ քաղաքի բնակիչները, որոնց թվում նաև ոմն Հայրապետ և իւր անդամները Ղազարը, որոնք «շատ աշխատեցան ի քաղաքաւանն Մուշ» (հավանաբար շինարար վարպետներ էին), շատ ուրիշ աշխարհիկ մարդիկ, դրանց թվում և կանայք փող են հավաքում և պատգամավորութիւն են ուղարկում նշանակ ձեռագիրը գերութիւնից ազատելու: Պատգամավորութիւնը ցրտաշունչ ձմռանը սարեր ու ձորեր անցնելով հետ է գնում ձեռագիրը 4000 դրամով և վերադարձնում է սուրբ Ղազարի վանքը¹:

Գիրքը բավականաչափ թանկ դնահատուղ ապրանք էր դարձել: Մի միջին մեծութիւն և յշ շքեղ ձեռագրի հիշատակարանում, օրինակ, ասվում է, թե ստացողը դրան մի կով է տվել: Մի նույնպես միջակ ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ այն գրված է 1232 թ. և «դրանալ յայլասիրիցն», իսկ 1308 թ. հետ է գնվել 600 սպիտակով² (արծաթ դրամով): Հիշատակվում

են ձեռագրեր 1500 դրամ արժեքով, իսկ վերևում տեսանք, որ ձեռագիրը հա եւ գնել 4000 արծաթ դրամով:

Ոչ միայն վանքերի, այլև սուրբապետներին արհեստանոցներում գրքեր պատրաստում էին և պատվերով, սովորաբար երկաթագիր գրչութեամբ (տխտ. LXXIII), պարզապես շուկա՝ վաճառքի հանելու նպատակով, բոլորգրով (տխտ. LXXIII): Զեռագրերի հիշատակարաններից երևում է, որ գիրք պատրաստող գրիչները, ծաղկարարներն ու վաղմոզները հաճախ պատվիրատուից վարձատրութեան էին ստանում և ապրում էին իրենց աշխատանքի վաստակով: Դրա վերաբերյալ կան և որոշ մատենագրական տեղեկութիւններ: Ռոմանոս վարդապետ գրիչը աշխատել է Վասպուրականում, 1276 թ. նրա թողած մի հիշատակարանից իմանում ենք, որ նա ծեր էր, աչքի լույսից պակաս և աղքատ, բայց «մուրանալ տմաշէր», ուստի հավուր ծերութիւն շարունակում էր գրքեր արտագրել. որպեսզի հոգա իր և իր մերձավորների ապրուստը: Ընդօրինակելով ձեռագիրը մի վանքում նա վաճառել է այն Պոլիս անունով մեկիքին¹:

1332 թ. գրված մի այլ ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ այդ ժամանակ մի Աստվածաշունչ արտագրելու համար ծախսվել է 2200 դրամ, որից միայն գրչութեան ծախսը, հաշված նաև ներկերն ու թանաքները կազմել է 1800 դրամ, որ պետք է ստանային միասին աշխատող Հովհաննես, Դավիթ և Եփրեմ գրիչները: Ստացող երեսն վարդապետը բողբոջում է, թե Դավիթը ազատ մարդ էր և զրկել է իրեն՝ 300 դրամով ի վարձ պահանջելով²:

Ավելի մեծ աշխատանք էր պահանջում «Յայլասուրբ»-ի արտագրութիւնը. N 4681

¹ Գ արևդին Ա կաթողիկոս, Հիշատակարանը ձեռագրաց, էջ 712—719:

² Նույն տեղում, էջ 890:

¹ Զ. Ա Ն ա յ ա ն, Անձնանունների բառարան, տե՛ս Ռոմանոս անունը:

² ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմից Լ. Խաչիկյան, էջ 225—246:

ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ 1407 թ. Խիզանի մի վանքում Հայսմատուրքը արտագրելու համար Հովհաննես գրչին վճարվել է 2600 դրամ և 200 դրամի ուտելիք, 200 դրամ էլ՝ տրվել է թուղթը կոկողին: Այսպիսով, գրչության ծախքը կազմել է 3000 դրամ¹: Որպեսզի պարզ լինի, թե գրիչներն ինչ վարձ էին ստանում, պետք է ասել, որ նույն հիշատակարանում ասված է, թե վեց կապիճ հացը 200 դրամ է գնահատվել, իսկ մի կապիճ հացի գնով, ուր կազմում էր 33,33 դրամ կարելի էր մեկ լիտր յուղ գնել կամ երկու լիտր մեղր: Այս Հովհաննես գրչին էլ գրկել է վանքի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսը, որն ինքն էլ գրիչ լինելով արտագրել է 10 տետր (70-ից), բայց ստացել է վարձի ոչ թե 1/7-ը (400 դրամ) այլ 600 դրամ: Այսպիսով, վանքերը և նրանց առաջնորդները գրչատներից եկամուտ էին ստանում և՛ այն դեպքում, երբ տեր էին արտագրված ձեռագրին և վաճառում էին այն, և՛ այն դեպքում, երբ ապաստան էին տալիս այս կամ այն գրչին, որ իրենց վանքում եղած ձեռագրից օրինակ հանի, քանի որ դրա համար յուրացնում էին գրչի վարձի մի մասը: Աղքատ գրիչները հաճախ շրջում էին տեղից տեղ և գրքեր արտագրում իրենց ապրուստը հոգալու համար: Այդպիսին էր, օրինակ, Մատենադարանի № 4309 ձեռագրի գրիչը, որը ստիպված էր կրչությամբ պարապել դառափյալ հասակում:

«Վայ, որ ձեռս կու դողայ ու ազգի ազգի կիրս (գիրս) կու աւիրիմ, ի՞նչ առնեմ, որ ծեր եմ ու աչքս վատատես է. Խ (40) տարի է, որ գիր կու գրեմ. թողութիւն արարէք»²:

Հիշատակարաններից երևում է, որ 12—13-րդ դարերում սովորական էր այն երևույթը,

երբ ձեռագիրը գրված է վաղ, փսկ ստացողը ձեռք է բերել տարիներ, երբեմն երկար տարիներ հետո, ուրեմն ձեռագիրը պատրաստվել է վաճառքի համար և հիշատակարանում նշված ստացողը ոչ թե պատվիրատուն է, այլ գնորդը: Շուկայի համար են արտագրվել և այն ձեռագրերը, գոնե դրանց մեծ մասը, որոնց մեջ ոչ մի հիշատակութուն չկա պատվիրատուի, անգամ ստացողի մասին: Ձեռագրերը շուկայի համար արտագրելու և վաճառելու մասին կան ուղղակի վկայություններ:

12-րդ դարի վերջերում գրված շարականների մի ժողովածուում նրա ստացող Սարգիս—Լևոն քահանան ասում է. «Ընդ փարթամացուցաք զսա (ձեռագիրը), յոյժ, որպէս և տեսանէք իսկ, ոչ յաղագս մարմնաւոր ինչ շահավաճառութեան, այլ հոգևոր և աստուծա[յ]ին յիշատակ բարեաց և պատճառ յիշելո[յ]» և աստուած ողորմի ասելո[յ]»³:

Այս վկայութունը ուշագրավ է այն տեսակետից, որ ցույց է տալիս, թե շուկայի համար ձեռագիր էին պատրաստում ոչ միայն գրիչները, այլև գրչության ծախքը հոգացող կամ նյութերը տրամադրող պատվիրատուները «յաղագս մարմնաւոր շահավաճառութեան», որը պետք է սովորական երևույթ լիներ, որպեսզի Սարգիս—Լևոն քահանան հատկապես հիշատակեր, թե ինքը այդ սովորական նպատակին հետամուտ չէ:

Մի կարևոր վկայություն էլ գտնում ենք Մխիթար Սասնեցու (1260—1337) կենսագրի մոտ, որի ասելով Մխիթարը հայտնի էր իբրև «քարտուղար, ճարտար գեղեցկագիր և ստուղաբան», որը ձեռագրեր էր գրում և «զշահ գրելոյն բաշխէր աղքատաց և կարօտելոց»⁴: Պարզ է, որ այստեղ խոսքը վերաբերում

¹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, կազմեց Լ. Ս. Կաշիկյան, Երևան, 1955, էջ 71:

² Մատենադարանի ձեռագիր № 4309, էջ 999բ—100ա:

³ Գ ա Ր Ե գ Ի ն Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 666:

⁴ Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Մխիթար Սասնեցի, վարչապատ, 1899, էջ 15:

է ոչ թե պատմիրատուից ստացված վարձատրութեանը, այլ պատրաստված ձեռագրի վաճառքից ստացվող շահին:

Ուրեմն, գիրք պատրաստելու հետ կապված մի քանի արհեստներ դարձել էին ասպարուստի միջոց, ոչ միայն պատմիրատուից վարձատրութեան ստանալու, այլև գրքեր պատրաստելու և շուկայում վաճառելու հղանակով: Նայած այն բանին, թե ում և ինչի համար էր պատրաստվում գիրքը, այն կարող էր լինել շքեղ կամ անսպաճույճ, գրվել երկաթագրով կամ բոլորգրով:

Գրքեր արտագրելու հետ կապված բոլոր արհեստներից ամենագլխավորը գրչութունն էր: Գրիչ արհեստավորը գրչութունն էր: Գրիչ արհեստավորը գրելու մեջ հմուտ և գրագետ մարդ էր, որը ձեռքի տակ ունենալով որևէ ձեռագիր, ընդօրինակելով արտագրում էր սև գույնի թանաքով, երբեմն ինքն էլ գրում էր ձեռագրում հանդիսող վերնագրերը, բայց արդեն կարմիր թանաքով, եթե գրիչը նկարելու շնորհք ուներ, ինքն էլ նկարում էր կենդանադիր սկզբնասառերը, նույնիսկ մանրանկարները, սակայն սովորաբար գրիչը այլ մարդ էր լինում, նկարիչը՝ այլ:

Դիտելով հայկական ձեռագրերը, պիտի չէ նկատել, որ ձեռագրերը արտագրվելուց հետո ստուգվում և ուղղվում էին մի ավելի գրագետ ու բանիմաց գրչի ձեռքով, որի ուղղումները՝ կատարված այլ ձեռագրով գրվում էին ստղծի վերևում կամ լուսանցքում: Այդ առթիվ հիշատակութուններ ունեն նաև իրենք գրիչները, որոնք համեստությամբ թերագնահատելով իրենց ուժերը, խնդրում են սրբագրել իրենց արտագրած ձեռագրերը: Գարեհդին Հովսեփյանը իրավացի նշում է, թե գրչութեան կենտրոն մեծ վանքերում կային հատկապես սրբագրութեամբ պարապող ունձինք: Օրինակ, Հաղբատի վանքում Մխիթար Քոթայրեցի սրբագրիչը ուղղել, սրբագրել է նույն վանքում 1211 թ. Հակոբ գրչի գրած ավետարանը¹: Այդ բանի պահանջը հասկա-

նալի է, քանի որ Հայաստանում տարածված հերձվածների առկայությունը ստիպում էր հոգևորականներին հետևելու, որ կրոնական բնագրերը լրիվ համապատասխանեն նախօրինակին:

Գրիչների թիվը միջնադարյան Հայաստանում զգալի էր: Նրանցից շատերը իրենց անունները թողել են ձեռագրերի հիշատակարաններում և դրա շնորհիվ 10—13-րդ դարերից մեզ հասած ձեռագրերում պահպանվել են մեծ թիվով գրիչների անուններ:

Մաղկարաուրյուն: Արտագրված ձեռագրերը նկարագրելու կամ ծաղկագրելու էին մանրանկար կատարող նկարիչների ձեռքով, որոնք կոչվում էին ծաղկող: Մանրանկարներով զարդարվում էին վերնագրերը կամ նրանց սկզբնասառերը, ձեռագրերի լուսանցքները, մանրանկարների համար աղատ թողնված էջերը, երբեմն էլ շքեղ մանրանկարներ էին արվում առանձին թերթերի, նույնիսկ ամբողջական պրակների վրա և դրվում ձեռագիր մատյանի մեջ: Ինչպես երևում է ձեռագրերի հիշատակարաններից, ծաղկողը և ոսկեգծողը երբեմն սարբեր մարդիկ էին: Ծաղկողն իր աշխատանքը ավարտելուց հետո, գիրքը հանձնում էր՝ ոսկողին: Գրիչը քահանա ոսկողն, օրինակ, 1297 թ. ոսկել է մի ավետարան, որը գրել էր Ստեփանոս գրիչը¹: Խրատից տարբեր արհեստավորներ կարող էին լինել նաև ոսկողը և ոսկեգեղ պատրաստողը, որը պարզ երևում է 1053 թ. ձեռագրի վերևում մատնանշված հիշատակարանից:

Իհարկե, մանրանկարչությունը հիմնականում արվեստի բնագավառին պատկանող զբաղմունք էր: Մի շարք նկարիչ-ծաղկողների շատ հայտնի էին և նրանց ստեղծագործությունը դեռևս կարող է մասնագիտական ուսումնասիրությունների: Բայց մանրանկարչությունը իր ակունքներն ուներ արհեստագործության մեջ և սերտորեն կապված

¹ Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, Ա. էջ 41, 62—63:

¹ Հ. Ա. Ն. Ս. Ս., Անձնանունների բառարան:


էր գիրք պատրաստելու և այլ, օրինակ, գործվածքներ ծաղկազարդելու արհեստների հետ: Ուստի, երբ խոսում ենք արհեստների մասին, չենք կարող, թեկուզ, չհիշատակել մանրանկարչությունը, մանավանդ որոշ թվով մանրանկարիչներ փրենց ցածրորակ նկարներով ավելի շուտ արհեստավորներ էին, քան արվեստագետներ:

Մագաղաթ և րուղբ կոկողներ: Մագաղաթը և թուղթը գրելուց առաջ լրացուցիչ մշակման էին ենթարկվում կոկելու միջոցով: Այդ աշխատանքը կատարողները կոչվում էին կոկողներ, որոնք ձեռագրերում հիշատակված են իրրև գրիչների օգնականներ, հնարավոր է, որ դրանք աշակերտները կամ կրտսեր գրիչները լինեին: Կոկողների աշխատավարձը աննշան էր: Ինչպես տեսանք վերևում բերված օրինակից Հայսամավորի երկու գրիչները ստացել էին 2800 դրամ, իսկ կոկողը՝ միայն 200 դրամ¹:

Գրիչը և կոկողները գիսեին նաև դանադան եղանակներով թղթին և մագաղաթի տեսք տալ: Դրա համար օգտագործում էին թղթին քսելու դանադան նյութեր (նշա): Չեռագրերից մեկում գտնում ենք թղթին մագաղաթի տեսք տալու հետևյալ խորհուրդը. «Առ զկտաւատի հատն և լից յաման և թրջէ և ապա պարզէ. ի ջուլմն մանր կիր խառնէ և հաւասար թուղթն օծնէ նաւարանա և մագաղատի պէս լինի: Կամ այս ջրովս զնշայն եփէ և նաշէ զթուխտն»²:

Գրչությունը Հայաստանում զարգացած և նյարևոր գործ է եղել: Նա կյանքի է կոչել իր հետ կապված մի շարք արհեստներ: Գրչությամբ զբաղվել են ոչ միայն վանքերում, այլև քաղաքներում: Պեղումների ժամանակ ևս թե՛ Անիում և թե՛ Դվինում գտնվել են որոշ նյութեր՝ կապված գրչության արվեստի հետ, ինչպես օրինակ գրչահատ և նսնաբաման-

ներ¹: Դվինում գտնված թանաքամար (№ 1617/33) երեք բաժանմունք ունի տարբեր գույնի թանաքների կամ ներկերի համար և վրայի արձանագրությունից երևում է, որ նա պատկանել է մի գրչի, որի անունն էր Ստեփանոս² (նկ. 29):



Նկ. 29. Թանաքաման տարբեր գույնի ներկերի համար, (Դվին), ՊՊԹ:

3. ԿԱԶՄԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շատ հնում գրքերը պահպանվում էին միաթեթևերով, ծածկվելով գործվածքներով կամ կաշվով՝ դրվելով փայտյա, մետաղյա և փղոսկրյա տուփերի մեջ: Իսկ միջին դարերից մեղ հասած գրքերը կազմված են, ուր համար օգտագործվել են մետաղներ (ոսկի, արծաթ), գործվածքներ և մանավանդ կաշի: Գիրք կազմելը պահանջում էր հատուկ հրմտություն և, ինչպես կտեսնենք, նաև տեսնիկական մի շարք միջոցների գործադրություն. նրանով ամեն մարդ չէր կարող պարտապել, ռատի առնվազն 10-րդ դարից կազմարարությունը սկսում է դառնալ առան-

1 Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 71:

2 Մատենադարանի ձեռագիր № 2191, էջ 156ա:

1 И. Орбели, Каталог Анийского музея, стр. 112.

2 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 235, նկ. 220:

ձին մի արհեստ, որով շատ հաճախ պարապում էին այդ մասնագիտությունն ունեցող արհեստավորները:

Պնդելով, թե կազմարարության արհեստը ինքնուրույն մասնագիտություն է դարձել առնվազն 10-րդ դարում, մեր ելակետը միայն այն չէ, թե 10-րդ դարից մեզ հասած կազմված ձեռագրեր կան, այլև այն, որ պահպանվել է այդ բանը հաստատող մատենագրական փաստ:

Մատենագրարանի 10-րդ դարի № 5547 ձեռագրի գրիչ Գրիգորը, կազմարար Գէորգ կրոնավորը և 1284 թ. կրկին նորոգող ու կազմող Հովհաննեսը տարբեր մասնագիտությունն արհեստավորներ են եղել:

11-րդ դարի երկրորդ կեսում հիշատակվում են Գրիգոր կազմողը², Հակոբ կազմարարը, որն իր արհեստով զբաղվել էր Այրիվանքում և հիշատակված է 1190 թ.³, երբ նույն վանքում գործել են նաև Աղբայրիկ և Գորգիոս կազմարար եղբայրները և սրանց հայր Փիլիպոսը, որը գրիչ էր⁴:

1194 թ. Գեորգ կազմարարը հիշատակում է իր ուսուցիչ Թորոս կազմարարին⁵: Պարզ է, որ կազմարարությունն առանձին արհեստ էր և հիշատակարանում կազմարար վարպետը հանդես է գալիս իր աշակերտների հետ միասին:

Նույն 11-րդ դարի առաջին կեսին, Անիում գործել է Գեորգ կազմողը, որը միաժամանակ գրիչ է եղել⁶:

13-րդ դարի հիշատակարանները ավելի մեծ թվով կազմարարների անուններ են պահպանել, դրանց թվում էր Հռոմկլայեցի նշանավոր Առաքել կազմարարը, որ 1260 թ. կազմելով մի ձեռագիր հիշատակում է

իր ուսուցիչ Սարգիս քահանա կազմարարին¹:

Կազմարար կոչվել են գիրքը կարող, կապող և սովորաբար կաշվով կազմող վարպետները, իսկ ոսկե և արծաթե կազմերը առանձին պատրաստում էին ոսկերիչները և հանձնում կազմարարին, որոնք մետաղի զարդարուն տոսիք ամրացնում էին գրքի վրա, թեև պարզ երևում է, որ ոսկերիչ-կազմարարներ ևս կային: Բայց դա ոսկերչության ճյուղին էր պատկանում:

Կարմիր համար օգտագործվող հիմնական նյութը կաշին էր: Միջնադարյան Հայաստանում գրքի կազմի համար արտադրվում էր հատուկ, լավ դաբադած բարձրորակ կաշի, որը բավականաչափ հաստ էր սովորական երեսացուլից, բայց միանգամայն ողորկ էր և սովորաբար ներկված էր լինում շագանակագույն, բաց շագանակագույն, կարմրին տվող շագանակագույն, սակավ հանդիպում են նաև կարմիր ներկած և նուրբ գույնի կարմիր կազմեր:

Կազմարարները, որոնք ձեռագրերում հայտնի էին մեծ մասամբ կազմող անոնում, նախ պետք է ամուր թելերով կարեփն և իրար միացնեին գրքի քառածալ, ավելի հախաճ վեցածալ կամ ութածալ պրակները: Գիրքը կարելի էր կպցնել կազմարարության մեջ շատ կարևոր աշխատանք էր, այդ էր պատճառը, որ կազմողները իրենց անվանում էին նաև զբաղալ, օր. Գրիգոր գրակապ, Սիմեոն գրակապ: Կուսված գրքի յուրաքանչյուր պրակի կարի թելերը փաթաթվում կամ հյուսվում էին գրքի մեջքի վրա հարմարեցված հաստ թելե կապերի հետ, որոնք անցկացնելով կազմի տախտակի մեջ արվող անցքերով, պինդ կապվում էին նրա հետ, իսկ կարի թելերի երկու ծայրերը հյուսվում էին գրքի մեջքի երկու անցքերին:

1 Տե՛ս Մատենագրարանի ձեռագիր № 5547, էջ 7ա, 149բ:

2 Մատենագրարանի ձեռագիր № 275:

3 Շողակաթ, էջ 197:

4 Մատենագրարանի ձեռագիր № 3795:

5 Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց:

6 Մատենագրարանի ձեռագիր № 988:

1 Հայապատում, էջ 489:

2 Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 820: Տե՛ս նաև Գրիգոր գրակապ. 2. Աճառյանի Անձնանունների բառարանում:

պրված հաստ թելերի հետ, ապա նրանց ազատ մնացած ծայրերը խրձիկով միացվում էին կազմի եղերքների մոտ, այնքան ամուր, որ միջին մեծության գրքերի կազմերը երկար դարերի ընթացքում չեն սլուկվել գրքից: Մատենադարանի ձեռագրերի վրա մեր կատարած դիտողություններից երևում է, որ առավելապես մեծ ու ծանր գրքերի կազմերի մեծ մասն է սլուկվել և վերանորոգվել կամ բուրոտվին փոխվել, մյուսները առավելապես պահպանվել են սկզբից և թ:

Կազմի կաշին թրջվում և քաշվում էր հատկապես կազմերի համար պատրաստված հատուկ տախտակի վրա, որն ոճենում էր 3—4 մմ, խոշոր կազմերի վրա՝ մինչև 5—6 մմ հաստությամբ: Տախտակի վրա արվում էին անցքեր, որոնց միջից անցկացնելով ամրացնում էին պրակները իրար հետ կապող հաստ թելերը: Ներսից տախտակը պատում էին զանազան գործվածքներով, որոնք փակցվում էին սոսինձով: Գրքի էջերը կազմի հետ շփվելուց և գործածության ժամանակ վնասվելուց պաշտպանելու համար կազմի տակ գրքի սկզբից և վերջից սովորաբար դրվում էր հին մագաղաթյա ձեռագրերից վերցրած մեկական կամ երկուական թերթ պահպանակ: Հայտնի է, որ դրա շնորհիվ պահպանակների մեջ երբեմն հանդիպում են շատ հին ձեռագրերի ընտիր նմուշներ թե՛ հայերեն, և թե՛ օտար լեզուներով:

Կաշվե կազմը փոխարինում էր մետաղե տուփին, և այդ է պատճառը, որ նրան տրվում էր տուփի տեսք (երկու կող, կոնակ և դոնակ), ավելին, կաշվե կազմերի դարդարումը կատարվում էր ոսկեթղթյան համար բնորոշ տեխնիկայով:

Կազմի կաշին դեռևս կիսաթաց վիճակում վարդարվում էր գեղեցիկ օրնամաներով մի քանի հղանակով: Ամենից ավելի գործադրված է սրածայր, բայց շկտրող գործիքով սեղմելով դժագրելու տեխնիկան: Ուղիղ գծեր տանելու համար օգտագործվել է քա-

նոնը, իսկ աղեղներ և շրջագծեր քաշելու համար՝ կարկինը:

Մեզ հասած հնագույն կազմերը պատկանում են 11-րդ դարին (ձեռ. № № 4804, 3793, 275): Դրանք վարդարված են թաղ կաշվի վրա սեղմելով գծելու և միայն մի տիպի նկատով գծագրի ներսում մանր համատարած գծիկներ սեղմելու եղանակով: Կազմի հղերից տարված են երկու կամ երեք զուգահեռ գծեր, որոնք կազմում են քիչ աչքի ընկնող ուղղանկյուն շրջանակ: Սրա ներսից և անմիջապես նրան կից կարկինով գծված աղեղիկների օգնությամբ կազմվում է հյուսածո ժապավենի տեսք ունեցող դարձյալ ուղղանկյուն շրջանակ: Այս շրջանակը ավելի ցայտոմն դարձնելու համար հյուսվող ժապավենների մակերեսը համատարած կերպով ծածկված է լինում սուր, քիչ ինչ լայնացող ծայր ունեցող մետաղե նկատի սեղմումով դրված համատարած գծիկներով: Վերին աստիճանի ջանադիր ու համբերատար կազմողները կազմի ամեն մի երեսի վրա դրել են հազարավոր սյդպիսի գծիկներ:

Այս ձևով կազմված հյուսածո շրջանակների մեջ գրքի կազմի առաջին կամ վերին երեսի կենտրոնական մասում նույն տեսիկայով գծագրվում էր հյուսածո խաչ, որը նույնպես վարդարված էր լինում սեղմումով դրվող մանր համատարած գծիկներով (տխտ. LXXIV ա): Խաչի երեք թևերը առնրված են լինում ուղղանկյուն խաչաձև կամ հաճախ շեղանկյուն գծագրի մեջ: Խաչը հենվում է եռանկյունաձև կամ աստիճանավոր, նույնպես հյուսածո և գծիկավոր պատվանդանի վրա: Կազմերի հյուսածո շրջանակներն ու խաչերը նման են 10—11-րդ դարերի հյուսածո քանդակ ունեցող խաչքարերին: Հետաքրքրական է, որ 10—11-րդ դարերի կազմերի վրա արված խաչերին ճիշտ և ճիշտ նման հյուսածո խաչ, կատարված ներկերով հանդիպում է էջմիածնի 986 թ. ավետարանում (ձեռ. № 7435), ինչպես և 1033 թ. № 283, (տխտ.

LXXIV բ), № 5747 ձ. (էջ 7 բ) մանրանը-կարներում: Դրանով անառարկելի կերպով հաստատվում է, որ իրոք ձեռագիր մատյանների կաշվե կազմերի զարդարման հիշյալ եղանակը և մոտիվը ծագում են ոչ ուշ, քան 10-րդ դարում:

11-րդ, մանավանդ 12-րդ դարերում ձեռագրերի կազմերի վրա երևան է գալիս նաև մի ուրիշ զարդաձև՝ միահյուսվող և աղեղներով փրար հատող շրջադժերը կամ առանձին շրջադժերը, որոնք աղեղներով հատվելով կազմում են աստղաձև կամ վարդյակի տեսք ունեցող զարդեր: Այս միահյուսվող շրջանակներն ու նրանց հատող աղեղները գծագրութայամբ կրկնագիծ են և հյուսածո շրջանակների ու խաչերի նման զարդարված են սեղմումով գրվող մանր գծիկներով: Այս վարդաձև զարդը շատ տարբերակներով ու բարդացումներով կրկնվում է (տխտ. LXXV): Բնորոշ է, որ այս զարդը հանդիպում է Սևանի վանքի 1176 թ. դրան վրա:

10—11-րդ դարերին բնորոշ հյուսածո գծագրի և սեղմումով գրվող մանր գծիկներով զարդերի կողքին 12-րդ դարում հանդես է գալիս կազմերը նկատներով զարդարելու տեխնիկան, որն ավելի մեծ շափերով կիրառվում է 13-րդ դարում և հետագայում:

Նկատելի մի մետաղե (բրոնզե) գլանաձև, քառանիստ կամ ձվաժիբ կտրվածքով ձող է, պատրաստված կաղապարի մեջ ձուլելու եղանակով, որի մի ծայրին լինում է ուլեֆ կամ փոս ընկած զարդ: Նկատի ծայրը դրվում էր թաց կաշվի վրա և մուրճիկի հարվածով նրա զարդը դրոշմվում էր կազմի վրա: Հանդիպում են կազմեր, որոնք զարդարված են մինչև ութ նկատի օգնութայամբ: 12—14-րդ դարերի տարբեր ձեռագրերի կազմերի վրա հանդիպում են մի քանի տառնյակ իրարից տարբեր նկատների դրոշմներ: Դրանցից ամենատարածվածներն են տարբեր ձևի ու մեծութայան վարդյակները, որոնք ունեն չորս, հինգ, վեց, մանավանդ ութ պսակաթերթ. սրանք էլ լինում են ուլեֆ կամ խորաքանդակ, լայն կամ

նեղ, երկու փոքրիկ և ձգված, իրար հետ միահյուսվող էլիպսների ձևի զարդը, ում-բիկները, միագիծ, կրկնագիծ և եռագիծ ցվաթները, զանազան դիրքի խաչաձև զարդերը, միագիծ ու կրկնագիծ մանրիկ շրջագծերը, ուլեֆ կամ փոս ընկնող կետերը, մանրիկ աստղաձև զարդերը, բուսական օրնամենտները և այլն: Այլ խոսքով, դրանք զարդեր են, որոնց մեծ հաղիպում ենք նույն ձեռագրերի մանրանկարներում:

Կազմող վարպետները մեծ ճաշակով, շնորհքով ու հնարամտութայամբ զուգակցելով տարբեր նկատները իրար հետ և նկատի դրոշմները օգտագործելով գծագրի հետ միասին ստեղծել են զարդերի վերին աստիճանի մեծ բազմազանություն: Դնդամ Երկու-երեք նկատների դրոշմները տարբեր ձևով ու դիրքով դնելով և հնարամտորեն համադրելով ասացել են բավականաչափ շքեղ զարդարված կազմեր: 12-րդ դարի վաղ օրնամենտներում հանդիպում են նույնիսկ 1—2 նկատով վարպետորեն ու ճաշակով զարդարված կազմեր:

Շատ սովորական է վարդյակի զարդը կրող նկատի կրկնութայամբ կազմի եղբրներով անցնող քառանկյունի շրջանակ դրոշմելը: Այս շրջանակի ներսում հյուսածո գծագրութայամբ և դարձյալ նկատների օգնութայամբ դրվում էին խաչեր, քառանկյունիներ և այլ երկրաչափական զարդեր:

12-րդ դարում և 13-րդ դարի առաջին կեսում նկատների դրոշմը օգտագործվում էր չափավոր, որոշակի մոնումենտալ պատկերներ ստանալու համար: 13-րդ դարի կեսերից սկսում են նկատների դրոշմները շոշալել, ցրելով դրանք կազմի ամբողջ մակերեսի վրա՝ ծածկելով կազմի երեսի ամեն մի ազատ մնացած տեղը: Նույն դարի երկրորդ կեսում և 14-րդ դարում նկատների դրոշմները գրվել են անգամ գծագիր պատկերների փոքր ինչ ազատ մնացած մակերեսների վրա և բանն այնտեղ է հասել, որ նկատներով դրոշմներ են դրել նույնիսկ վարդյակների պսակաթերթերի և աստղերի

յևերի վրա, նրանց կենտրոնում և այլ մասերում:

12—13 դարերում և հետագայում գծագրություններ կազմվող, հյուսածո և մանր գծիկավոր շրջանակները, խաչերը միահյուսվող շրջագծերը և իրար հատող աղեղները, որոնցով կազմում էին աստղեր և վարդյակներ, շարունակում էին պահպանվել և զարգանալ: Նրանք են դալիս շրջագծի մեջ կամ նրա հետ զուգակցված երկու, նրեք, շորս իրար հատող եռանկյունիների, երկու իրար հատող քառակուսիների շնորհիվ կազմվող վեցից—տասներկու թևանի աստղերը, որոնց թևերի ծայրերից կամ նրանց միջև տարվող աղեղների օգնությամբ, ստացվում է աստղի զուգակցությունը վարդյակի հետ, շրջագծի ներսում տարվող փոքր աղեղներով ստացվում է փոքրիկ վարդյակ աստղի կենտրոնում՝ մեծ վարդյակի ներսում, իսկ եռանկյունիների և քառանկյունիների կողքեր կազմում են շրջագծի մեջ առնված խաչաձև հատումներ և վարդեր (տխտ. LXXV):

Մոլորություն կար գրքերի կազմերի վրա՝ նրանց շորս անկյուններում փակցնել մետաղե թիթեղներ, ավետարանիչների կենդանակերպ պատկերներով, իսկ ավելի ուշ, դիրքը կոստղում էին մետաղե, զերազանցապես արծաթե դամբրով, կամ նրանց անկյուններում փակցվող մետաղե պատկերազարդ դրվագված թիթեղներով (տխտ. LXXVI):

Այսպիսով, կազմարարությունը ձեռագիր մատյանների արտագրության հետ կապված ինքնուրույն արհեստ էր դարձել, մշակելով դրքերը կազմելու և կազմերը զարգարելու բնորոշ տեխնիկական եղանակներ ու զարգածներ: Ինչպես կաղմարարության տեխնիկական եղանակները կապվում էին մյուս արհեստների, մասնավորապես ոսկերչության, տեխնիկայի հետ, այնպես էլ կազմերի վրա հանդիպող զարգածներն ու մոտիվները սերտորեն կապվում էին կիրառական արվեստների մյուս ճյուղերի մոտիվների հետ՝ կազմելով ժողովրդական

կեղարվեստական ստեղծագործության մի ուղագրավ բնագավառ:

Ձեռագիր մատյանները կազմելու և զարդարելու տեխնիկական առանձնահատկությունների և զարգածների ուսումնասիրությունը ունի ոչ միայն ինքնուրույն նշանակություն, այլև կարող է օգնել ձեռագրերի պատրաստման և կաղմելու տեղի, ժամանակի, ինչպես և ձեռագրական կենտրոնների ու դպրոցների կոնստրուկցիաների պարզաբանմանը: Ձեռագրերի կազմերի ուսումնասիրությունն այսուհետև, շպիտի մնա անուշադրություն, մատնված մի՛նչակում:

Քննարկելով գրչության հետ կապված արհեստները, հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Գրչության արվեստը լինելով հայ մուսուլմանի անցյալի կուլտուրական ստեղծագործության առավել աչքի ընկնող բնագավառներից մեկը, միաժամանակ կարևոր տեղ էր գրավում արհեստագործության մեջ:

2. Գրչության գործի ծավալման շնորհիվ, անջատվելով գրչության մայր արհեստից, առաջ էին եկել և զարգացել նրա հետ կապված մի շարք արհեստներ կամ արհեստային մասնաճյուղեր՝ մագաղաթ, գույնըգույն թանաքներ և ներկեր պատրաստելը, բուն գրչությունը, մանրանկարչությունը և կազմարարությունը:

3. Գրիչ, նկարիչ, կազմարար արհեստավորներն ևս, ինչպես մյուս արհեստավորները, ունեին իրենց աշակերտները և աշխատողները, որոնք օգնում էին նրանց աշխատանքի ընթացքում և սովորում նրանց արհեստը: Նրանք կատարում էին հասարակ աշխատանք, թողթ և մագաղաթ կոկել, տողել, գրված թերթերը շորացնել և այլն: Աշխատողները կամ օգնողները, ինչպես երևում է ձեռագրերի հիշատակաբաններից, ստանում էին աննշան վարձատրություն:

4. Գրչության պարասյուզներն այդ արհեստով հոգում էին իրենց, ինչպես և մերձավորների ապրուստը, ուստի ձեռագիր

մատչանները գրվում էին ոչ միայն պատվերով, այլև շուկայի համար: Պատվիրատուների և փնորդների պահանջների համեմատ՝ ձեռագիր մատչանները կարող էին պատրաստվել թե՛ բարձրորակ և թե՛ ցածրորակ նյութերից, վարդարվել շքեղ և ճոխ մանրանկարներով, ոսկու, վարաղի, լաջվարդի և այլ թանկ ներկերի գործադրությամբ կամ էլ՝ ունենալ անպաճուճ զարդեր, լինել բուլբուլի անզարդ: Նրանք կարող էին գրվել մոտեմենտալ երկաթագրով (սովորաբար պատվիրատուների պահանջով) կամ սովորական բուլբուլով՝ ունենալով շքեղ կամ հասարակ կազմ:

5. Հայաստանի խոշոր վանքերը ունեին ոչ միայն իրենց գրատները, այլև գրչագրութայն գործատուձարհեստանոցները: Այդ բանը երևում է ոչ միայն նման վանքերից մեզ հասած ձեռագրերի ղզալի քանակից, այլև Գլաձորի, Տաթևի վանքերի վերաբերյալ գրիչների և ստացողների թողած հիշատակարաններից, որոնք ցույց են տալիս, որ անգամ հեռավոր վայրերից այդտեղ են եկել ձեռագիր պատվիրելու կամ ձեռք բերելու համար:


Տաթևի վանքի 10-րդ դարի գրչութայն գործատուձարհեստանոցի (կամ արհեստանոցների) վերաբերյալ կա նաև Ստեփանոս Օրբելյանի վկայությունը: Պատմիչը գրում է, թե վանքի առաջնորդը ավարտելով տաճարի շինարարությունը «շինէ և սրբաշէն տրապէզս և գործատնեսս, համբարանոցս և սրբատունս և գրատունս»: Այնուհետև աս-


վում է, թե վանքը «պայծառանայր քահանայական և կրօնաւորական դասիւք ի շափ 500 եղբարց. լի էր և ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբբն. նա և արհեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք»¹:

Գրչությունը ղզալի եկամուտ էր բերում գրիչ, նկարիչ կազմարար, ներկագործ արհեստավորներին, սակայն նրանց մեծ մասը մանրակրկիտ ու ծանր աշխատանք կատարող շարքաշ ու աղքատ մարդիկ էին, մեծ մասամբ ստորին հոգևորականներ (մանավանդ վանդ վանքերում), որոնց շահագործում էին նույն այդ վանքերը:

Ծանր էր նաև վանքերի հետ շկապված ինքնուրույն աշխատող գրիչների, դրանց շարքում ղզալի թվով աշխարհիկ արհեստավոր գրիչների վիճակը, որոնց առջև ծառանում էին գրչութայն համար անհրաժեշտ նյութերի, ձեռագրերի ձեռք բերելու, ընդօրինակված ձեռագրի ստուգությունը, մանավանդ կրոնական ձեռագրերի կանոնական լինելը վավերացնելու և այլ դժվարություններ: Չընդհատելով իրենց աշխատանքը պատերազմների, ասպատակությունների ու սովի ամենածանր պայմաններում՝ հայ գրիչ, նկարիչ, կազմարար արհեստավորները թողել են մեզ անդնահատելի ժառանգություն:

¹ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 225, 226 (ընդգծումն իմն է.—Ռ. Ա.):





ՈՒՅԵՐՈՐԴ Գ Լ ՈՒՆ

ԱՅԼ ԱՐՇԵՍՏՆԵՐ

1. ՄԻ ՔԱՆԻ ՄԱՆՐ ԱՐՇԵՍՏՆԵՐ

Ոսկորե իրերի պատրաստում: Ոսկորի մշակումը, այսպես ասած, հնագույն արհեստներից մեկն է: Ոսկորից պատրաստված հերոմներ, թեղիկների գլուխներ զրտնրվել են Հայաստանի դեռևս էնեոլիթյան բնակավայրերում և առնվազն չորս հազար տարվա անցյալ ոճնն: Բոլոր դարերում ոսկորից և եղջյուրից իրեր և առարկաներ պատրաստվել են: Ոսկորը կամ եղջյուրը շատ հարմար էին դանակի, դաշույնի, սրի դաստակներ, կոճակներ, զանազան զարդեր և կենցաղային այլ իրեր պատրաստելու համար: Ինչպես տեսանք, Շնորհալու մի հանելուկի մեջ այժի եղջյուրները դիտվում են որպես հումք՝ դանակի կոթերի համար¹:


Միջնադարյան քաղաքներում ոսկորից իրեր պատրաստելու արհեստը զարգանալով ավելի լայն շափեր էր ընդոմնել: Պեղումների ժամանակ ոսկորե իրերի գյուտը հազվադեպ երևույթ չէ: Անիում գտնված եղջյուրները,

վարազի ժանիքները, որոնք ծառայել են իբրև հումք զանազան իրեր, առարկաներ արտադրելու համար, մի ամբողջ հավաքածու էին կազմում: Ծղջերուի և այլ կենդանիների եղջյուրների սղոցած բեկորներ բազմիցս գտնվել են նաև Դվինում և Գառնիում: Պեղումների ժամանակ հայտնաբերված ոսկորե իրերից են օրինակ երկու սրինգ¹, ջուլհակի կկոցներ, նարդի խաղի զառեր (նկ. 40, 41) խաղատախտակի փուլեր, ոսկորե զարդեր, որոնք ազուցված են եղել կահույքի, տուփերի, սրերի, դաշույնների, դանակների, փայտե բռնակների վրա, հերուն, շքասեղ, կոճակներ և այլ իրեր²: Սովորույթյուն կար ոսկորե զարդեր ազուցանել նաև ձիու թամբի և այլ սարքերի վրա: Անիում գտնվել է մի արհեստանոց, որտեղ ոսկորից և եղջյուրից իրեր են պատրաստել:

¹ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 178:

² Նույն տեղում, էջ 180:

¹ Ներսես Շնորհալու, Բանք շափաւ, էջ 562:



Նկ. 40. Ոսկորն գործիքներ, (Դվին, № 1794/301, 1906/26, 206), ՊՊԹ:

Ոսկորի մշակման մի ճյուղն էր սանրագործությունը, թեև սանրեր պատրաստել են նաև փայտից: Սանրը լայն գործածության առարկա է եղել և պատահական չէ, որ Լենիի, Դվինի և Գառնիի պեղումների ժամանակ սանրերի մնացորդներ գտնվել են բազմիցս: Սանր պատրաստող արհեստավորը կոչվում էր սանտրաբար, փնչպես նա անվանված է Անիի երազահանում¹: Պեղումների ժամանակ գտնված օրինակները պատրաստված են, փնչպես և պետք էր սպասել, եղջյուրից և փայտից: Նրանց սովորական ձևը եղել է ոչ շատ երկար, բավականաչափ լայն և բարակ փայտե կամ եղջյուրե տախտակը, որի վրա ատամները սղոցի օգնությամբ հանվում էին երկու կողմից՝ մի կողմից մանր ատամներ, իսկ մյուս կողմից՝ խոշոր:

Սանրագործը, հավանաբար, ինքն էլ

վաճառում էր իր արտադրանքը: Սերսես Շնորհալին հանելուկ ունի սանրի մասին, որտեղ սանրը ներկայացված է որպես ամենքին պիտանի իր.

«Եկ դու միտ դիր ով սիրելի,
Բան մի ասեմ զարմանալի,
Մէկ մի ունէր մագիլք հափ,
Վազէր յերես բըռնակալի,
Կուիէ զգլուխ դատաւորի,
Գործն որ գործէ, զերդ թշնամի,
Ժամ մի պիտոյ է մեռելի,
Ամենեցուն մեզ նա պիտի»:


Սատափից նույնպես, փնչպես ոսկորից պատրաստում էին կոճակներ, զանազան զարդեր: Սատափը գործածվում էր նաև փայտե իրերն ու առարկաները ընդհիլուզա-

¹ Մատենադարանի ձեռագիր № 9071, էջ 11ա—11բ: Լեռաջին բառյակը տե՛ս նաև Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 581—582:

¹ Մատենադարանի ձեռագիր № 695, էջ 220ր:

նելու (ինկրուստացիա) և զանազան վարդա-
րելու համար:

Ոսկորից և եղջյուրից պատրաստում էին
նաև իլիկներ կամ թեշիկների գլուխներ:



Նկ. 41. Ոսկորե սրինգներ և մի այլ իր (Դվին
№ 1906/12), Գառնի (№ 82 1955 թ.) ՊՊԹ:

Գյուղերում իլիկները պատրաստում էին
տեղական արհեստավորները, անգամ ար-
հեստ չիմացող մարդիկ: Դվինում, Անիում և
Գառնիում միջնադարյան շերտերից իլիկ-
ներ հաճախ են գտնվում, որոնք պատրաստ-
ված են ոչ միայն ոսկորից, այլև քարից և
լինում են մեծ խնամքով ու վարպետորեն
մշակված: Օգտագործվել են զանազան դույ-

նի քարեր, բայց ամենից ավելի մերգելներ,
ճալաքար և կրաքար:

Աղեղնագործություն: Մարդը շատ հին
ժամանակներից, դեռևս նեոլիթում է սկսել
նեա-աղեղի օգտագործումը, հետևաբար
նույնքան հին է և աղեղ պատրաստելը:
Սկզբում, եթե ամեն մարդ, փորձում էր
աղեղ պատրաստել, ապա հետագայում, դա-
րերի և հազարամյակների փորձի կուտակու-
մից հետո, աղեղ շինելով զբաղվում էին
այն մարդիկ, որոնք յուրացրել էին այդ
փորձը և հմտացել իրենց գործի մեջ: Այս-
պիսով աղեղնագործությունը մինչև միջին
դարերը հասնելը վաղուց էր ինքնուրույն
արհեստ դարձել:

Եթե չհաշվենք պարսատիկը, որը իբրև
զենք շատ լայն գործածություն չգտավ,
ապա կարելի է ասել, թե աղեղն էր զենքի
այն գլխավոր տեսակը, որով կարելի էր
թշնամուն հարվածել հեռվից, ուստի նա
շատ ընդարձակ կիրառություն ունեցավ:
Նրանք գործածվում էր պատերազմում, նաև
որսի ժամանակ:

Հնագույն ժամանակներից սկսած մինչև
հրազենի գյուտը աղեղը մնում էր իբրև շատ
կարևոր զենք, ուստի միջին դարերում նրա
պահանջը մեծ էր և զգալի թվով արհեստա-
վորներ զբաղվում էին աղեղի արտադրու-
թյամբ:

Աղեղնագործը կտրելով աղեղի համար
հատուկ փայտեր, որոնց աղեղի կամարի
ձևը տալու համար, թաց վիճակում ամրաց-
նում էր ըստ երևույթին սանդղածև հա-
տուկ հարմարանքի վրա, մինչև որ փայ-
տերը կշորանային և կընդունեին սլահանջ-
վող ձևը: Դրանից հետո աղեղնագործը
լարաբարներից ստանալով նրանց պատրաս-
տած աղեղնալարերը սրելում էր աղեղնա-
կամարի ծայրերից և աղեղը պատրաստ էր:

Երաժշտական գործիքների արտադրու-
թյուն: Միջնադարյան Հայաստանում գոր-
ծածվում էին զանազան երաժշտական գոր-
ծիքներ: Դրանք կարելի է բաժանել երեք
խմբի՝ փողային գործիքներ, լարային գոր-

ծիքներ և թմբուկներ: Առաջին խմբին պատկանում էին զանազան փողերը, շեփոքները, բազմափող երգեհոնը և սրինգները, որոնք պատրաստվում էին եղջյուրից, փայտից, ոսկորից և եղեգնից, ինչպես և պարկապուղուկը: Լարային գործիքներից շատ պորժածական էին տավիղը, փանդիւր, քնարը, ջրնարը¹: Թմբուկները լինում էին շատ մեծ, միջին մեծությամբ և փոքր կամ ձեռքի թրմբուկ: Կային և ծնծղա կոչվող գործիքներ, որոնք պատրաստվում էին մետաղից:

Մի շարք երաժշտական գործիքներ պատկերված են ձեռագրերի մանրանկարներում: Իսկ պեղումների ժամանակ գտնվել են սրինգներ¹ պատրաստված ոսկորից:

Մեր տրամադրությունն անկախ փաստեր չկան, թե զանազան տեսակի երաժշտական գործիքներ պատրաստողները տարբեր արհեստավորներ են եղել, սակայն, եթե նկատի ունենանք, որ այդ գործիքները պատրաստել են տարբեր նյութից ու տարբեր տեխնիկայով, ապա կարելի էլինի ենթադրել, թե առանձին խմբերի երաժշտական գործիքները պատրաստվում էին տարբեր արհեստավորների ձեռքերով:

Արև և «լուցկի» պատրաստելը: Կրակ վառելու պահանջն ունի ամեն մի ընտանիք, կարելի է ասել ամեն մի շտապան մարդ, ուստի պարզ է, որ կրակի գյուտից սկսած մինչև լուցկու գյուտը մարդը մշտապես հույ է տարել կրակի ստացման եղանակները կատարելագործելու ուղղությամբ: Դեռևս հին դարերում մարդը օգտագործում էր մետաղը, կաշիքարը և արեթը՝ կրակ ստանալու համար: Միջնադարյան Հայաստանում կրա-

կի ստացման համար անհրաժեշտ այդ երեք նյութերից բացի օգտագործվում էր նաև ծծումբը: Երբ կայծը ընկնում էր արեթի վրա նա առաջացնում էր կրակ, որը չէր բոցավառվում, իսկ ծծմբի օգտագործման շնորհիվ ստացվում էր բոց: Դրա համար մաքուր ծծմբից պատրաստում էին առանձին դրանակ (լուցկի), որը բռնկվում էր վառվող արեթից:

Կավագույն արեթը պատրաստվում էր ծառերի բնի վրա աճող սնկերից, իսկ հասարակը՝ բամբակից: Մխիթար Գոշը հատկապես հիշատակում է դարիկոնը՝ արեթի համար օգտագործվող ծառի սունկը, իբրև եկամտի աղբյուր ֆրիդի բնական հարստությունների թվում, նշելով, որ նա հավաքվում վաճառվում էր և շահ էր բերում, ուստի և տասանորդվում էր իշխանների կողմից¹: Բոցավառվող նյութի օգտագործումը հնարավոր դարձրեց նաև բամբակից բարձրորակ արեթ ստանալ, բայց դա արդեն որոշ փորձ և հմտություն պահանջող գործ էր:

Մետաղե հրահանը պատրաստում էր գարբինը, իսկ կայծաքարը պատրաստել չէր պահանջվում քանի որ այն ջոկում էին բնության մեջ գտնվող կայծաքարերից ու ամեն մարդ կարող էր ջարդելով համապատասխան կտոր ստանալ: Արեթը և ծծմբի «լուցկին» պատրաստելու գործը պահանջում էր որոշ նյութեր ու վարպետություն, ուստի նա դարձել էր ինքնուրույն արհեստ, մանավանդ որ արեթի և «լուցկու» պահանջը բավականաչափ մեծ էր:

Հրահանը, արեթը և ծծումբը լայն դուրսածություն և առարկա էին և պատահական չէ, որ նրանք տեղ են գտել միջնադարյան գրականության մեջ: Ներսես Շնորհալին հաննելուկներ է նվիրել հրահանին, արեթին և ծծմբին: Ուշագրավ է, որ վերջինս հաննելուկի մեջ կաշված է ալքիմիայի մեջ գործածվող «ծեր» պաղտնանունով: Ահա այդ հաննելուկը.

¹ Գվինում գտնված մի ապակե թասի հատակին պատկերված է ջութակահարու Հո. Զանփուղդյանի կարծիքով այդ թասը բյուզանդական ծագում ունի (տե՛ս նրա «Стеклянный сосуд из Двина» (Краткие Сообщения ИИМК, вып. 50, 1955, стр. 124). Պետք է նկատել, որ միջնադարյան Հայաստանում ջութակին ծանոթ են եղել Գրիգոր Նարեկացին ջութակը հիշատակում է իր Ողբերգության մատյանում (էջ 478):

¹ Մխիթար Գոշ, Գատաստանադիրը, Լճ 326:

«Նրկուան ընդ իրար կուվին,
Մէկ ի մէկ իսկի նրմանին,
Մէկ մ' այլ ի իւրեանց միջին,—
Էր մեռած, անկեղծ, ի տեղին:

Այն ոք ոք զկռիվն արին,
Շատ արին ի վայր թափեցին,
Ի այն անկելոյ ցօղին
Շունչ ետուր անկած մեռելին:

Ծեր մի բարեխօս բերին,
Որ եպագ զերես մեռելին,
Ի յայն յամբուրել ծերին՝
Լոյս ծագեաց մըթան գիշերին»¹:

Մի այլ տեղ Շնորհարին ասում է.

«Զի մի ի հուր ծըծմբածին
Տոշորիցիմ որպէս նոքին...»²:

Այստեղ էլ նշվում է, որ հուրը ծծմբի օգնութեամբ է ստացվում: Վարդան Այգեկցին իր քարոզներից մեկում օրինակ է բերում, թե «անսպէտ դայլախազն և փոքր երկաթն հուր պարզեն ի սպասաւորութիւն կենացն մերոց»³: Նշանակութիւն շունչ, որ Այգեկցին շի հիշատակում ծծումբը, կամ «լուցկին»:

Կողովներ, զամբյուղներ, մաղեր գործելը: Առօրյա գործածութեան, այգեկութի, մրդաստանների բերքահավաքների, կալերի, բանջարեղենի համար անհրաժեշտ էին զանազան ձևի ու մեծութեան կողովներ, զամբյուղներ, սալաներ ու մաղեր:

Կողովներ և զամբյուղներ հյուսելը դյուրին գործ է և բնակիչները դյուրում, ինչպես և քաղաքում մեծ մասամբ իրենք էին անհրաժեշտ կողովներ, զամբյուղներ և սալաներ հյուսում. սակայն, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ քաղաքում

ամեն բնակիչ շէր կարող ունենալ կողով կամ զամբյուղ հյուսելու անհրաժեշտ շիվեր կամ ծղոտ, նաև այն, որ քաղաքների մերգավաճառները դրանց կարիքն ունեին մըշտապես, ապա կարելի է ասել, թե որոշ քանակութեամբ կողովներ, զամբյուղներ, ու սալաներ պատրաստվում էին այդ գործով զբաղվող արհեստավորների ձեռքով, պատվերով կամ մեծ մասամբ շուկայում վաճառելու համար: Սալա կոչվում էին տաշտած և զամբյուղները, որոնք գործող արհեստավորը կոչվում էր սալագուգ¹: Փոքր կողովը կոչվում էր սակաու: Անիի պեղումների ժամանակ զամբյուղի մնացորդներ գտնվել են²: Նրանք սովորական էին թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում:

Ինչ վերաբերում է մաղ գործելուն, ապա դա հատուկ վարպետութիւն պահանջող աշխատանք էր և նրանով զբաղվում էին մաղագործ արհեստավորները: Մաղեր պատրաստվում էին ինչպես վերևում նշվեց փուկերից և կոշվում էին փռկեմաղ, նաև ձիւքաշի և պոշի մաղերից և կոշվում էին ձառեմաղ: Մաղ գործող արհեստավորները հազիվ թե հատուկ կուղւպակներ ունենային նրանք սովորաբար աշխատում էին իրենց տներում և տեղից տեղ շրջելով վաճառում էին իրենց արտադրանքը, կամ էլ տվյալ վայրում, որտեղ նրանք գտնվում էին շրջելու միջոցին, պատվեր ստանալով մաղեր էին պատրաստում ու վաճառում, մի հին սովորութիւն, որը հայ բոջանները պահպանել են մինչև մեր օրերը: Միջնադարյան մի ձեռագրում այդ սովորութիւնը նկարագրված է. «Եւ մաղագործ պէտս ունի պահպանութեան աստուծոյ, զի ի գեղս և ի քաղաքի շրջի ծախելով դարուեստն»³: Մի այլ տեղ՝

1 1512 թ. տպագիր գիրքը, էջ 41:

2 Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի, Բանք չափաւ, էջ 20:

3 Ժողովածոյք առականց Վարդանայ, հտ. Ա, էջ 320:

1 ՆՃԲ սալագոյց բառը:

2 И. Орбелин, Каталог Анииского музея, стр. 106.

3 Մատենագոյարանի ձեռագիր N 2630, էջ 278:

«Որ դմազս գործէ, նա ի գիւղ շրջի»¹ կամ սգործէր զմազս, և զյաւանակն մաղիւքն իւրովք բարձեալ առաքեաց զնա...»²:

Զամբլուղ, սալա, մաղ հշուսելու նման հասարակ արհեստները թուլատրելի էին համարվում նաև վանական միաբանների կամ անապատաբնակ եղբայրների համար: Մի ձեռագրում գտնում ենք հետևյալ տեղեկութիւնը. անապատի եղբայրներից հինգը արհեստավոր էին և զնալով մի ծեր հոգևորականի մոտ խորհուրդ են հարցնում իրենց կենցաղավարութեան մասին: Մերի այն հարցին, թե ինչով եք զբաղվում, առաջինը պատասխանում է. «Ես սիրա (սարան, կեմ) հիւսեմ». երկրորդը՝ «Ես հասեր (խսիր) գործեմ». երրորդը՝ «Ես մաղ կազմեմ». չորրորդը՝ «Ես գիր գրեմ», իսկ հինգերորդը՝ ասում է, թե «ես վուշ գործեմ... և հանդերձըս»: Մեր հոգևորականը առաջին երեք զբաղմունքներին հավանութիւն է տալիս, իսկ վերջին երկուսի մասին դիտողութիւններ է անում, թե գիր գրողները ամբարտավանաբար իրենց մեծ են համարում, ուրիշներին փոքր, իսկ կտավ գործելը աշխարհականի դործ է և ոչ հոգևորականի³:

Ակնագործութիւն: Ակնագործութիւնը կամ մարդարտագործութիւնը նույնպէս հնուց զարգացած արհեստ էր: Զանազան թանկագին և կիսաթանկագին քարերից պատրաստվում էին ամեն տեսակի ակնեղեն զարդեր, որոնք ազուցվում էին թագերի, գահուլքների, աղնիվ մետաղներից պատրաստված անոթների, տուփերի, զարդերի, եկեղեցական սպասների վրա: Ֆեոդալների, բարձր հոգևորականութեան և մեծատունների շրջաններում շատ տարածված սովորութիւնն էր գործածել անձնական կնիք-մատանիներ, որոնց վրա փորագրված էին լինում այլ և այլ նշաններ, կամ արձանագրութիւն:

Ակնեղենով բնդելուցում էին ոսկուց, ար-

ծաթից պատրաստված զարդերը և այլ իրերը:

Ակնեղենի 33 անուն հանդիպում է Անահիա Շիրակացու մոտ¹: Դրանցից շատերը գտնում ենք Գրիգոր Մագիստրոսի թղթերում²:

Առհասարակ 10—13-րդ դարերի գրականութեան մեջ ակնեղենի մասին հաճախ է խոսվում:

Պերճանքի առարկաները ավելի ու ավելի էն թափանցում վերնախավի ցոյի կենցաղի մեջ և եկեղեցիները: Ոսկուց, արծաթից, մարդարտահո սպասները սովորական երկվույթ էին դարձել: Ակնեղենով զարդարում էին խաչերը, նաև գրքերի ռակն ու արծաթե կազմերը, մասունքների տուփերը: 10—13-րդ դարերից մեզ հասած խաչեր և այլ իրեր կան, որոնց վրա ակնեղենը ազուցված է անգամ այն դեպքում, երբ ինքը՝ իջը կրկաթից կամ պղնձից է: Ակնագործ վարպետները աշխատանքի և իրենց պատրաստած ակնեղենը վաճառելու բավականաչափ յայն ասպարեղ ունեին և պատկանում էին Եկամտով առավել ասպահովված արհեստավորների թվին:

Պետական պատմական թանգարանում պահվում են միջնադարյան մի շարք քարե կնիքներ կիսաթանկագին քարից, որոնց վրա փորագրված են կամ անուններ, կամ ամբողջ արձանագրութիւններ, ֆորմուլաներ կամ նրանց տերերի նշանները: Մատենագործարանում ձեռագրերի հին կազմերի կամ նրանց վրա ամբարցված խաչերի վրա երբեմն ազուցված ան լինում կիսաթանկագին քարեր:

Ամանկաբուրյուն: Դլինի, Անիի և Գառնիի պեղումների ժամանակ գտնվել են հնում ջարդված և կարված կավն ամանների բազմաթիվ բեկորներ, որոնք ցույց են տալիս, որ միջին դարերում քաղաքներում կային

1 Վարք հարանց, ԺԱ:

2 Նույն տեղում, ԺԷ:

3 Մատենագարանի ձեռագիր № 2680, էջ 277—278:

1 Անահիա Շիրակացու մատենագրութիւնը, Երևան, 1944, էջ 260—261:

2 Տե՛ս, օրինակ՝ Գրիգոր Մագիստրոսի 2-րդ թուղթու թղթեր. էջ 223:

հատուկ արհեստավորներ, որոնք զբաղվում էին կավե ճաքած կամ նուճնիսկ ջարդված ամանները մետաղե լարերով կարելով¹:

Հին Գանձակում ևս գտնվել են կարկատած ամանների բեկորներ՝ մետաղյա լարերի մնացորդներով²:

Եթե նկատի ունենանք, որ միջին դարերում կավե անոթները բնակչության կենցաղի մեջ հսկայական դեր են խաղացել, ապա պարզ կլինի, թե ինչու ճաքած կամ ջարդված անոթները կարող-վերանորոգող վարպետների կարիք էր զգացվում, մանավանդ ձեռնտու չէր դյուրությամբ հրաժարվել ջնարակած և այլ բարձրորակ անոթներից, որոնք ճաքել կամ ջարդվել էին: Ամանկարուծյունը, ինչպես երևում է, շատ հին արհեստ է եղել, բայց հարգի գործ չի համարվել: Դեռևս Աստվածաշնչում հանդիպում է «Ձխնցի կարկատէ՝ որ ուսուցանէ ղյիմարըն»³:

Մումագործություն: Միջին դարերում մոմը շատ խոշոր գործածություն ուներ: Եկեղեցիներում ու պալատներում մոմ վառելը սովորական երևույթ էր: Բնակիչն է, որ շուկայում մոմի զգալի պահանջ կար, որ և հոգում էին մոմագործ արհեստավորները:

Ներսես Շնորհալին օտնի մոմին նվիրված հետևյալ հանելուկը.

¹ Այդ արհեստը պահպանվել էր մինչև 20-րդ դարի սկզբները: Ամանկարները շրջելով փողոցից փողոց, բակից բակ, առաջարկում էին իրենց ծառայությունը: Նրանք ունենում էին ծակելու շատ հասարակ կառուցվածքի՝ մեկ մի կողմ, մեկ մյուս կողմ պտտվող գալիկոն, որի ծայրի մետաղե ձողը ծակում էր ամանը: Գործիքի վերին ծայրին հաղցվում էր լայն անցքով փայտե տախտակ, որը հեշտությամբ վեր ու վար էր գնում: Այս տախտակի ծայրերից անցկացված էր լինում թել՝ մի պտույտ փաթաթված գործիքի ուղղահայաց ձողին: Հորիզոնական տախտակը վեր ու վար տանելիս ձողը պտտվում էր աչ ու ձախ: Մտկելուց հետո մետաղե լարերը անցկացնում էին դեմ դիմաց գտնվող անցքերի մեջ և կարում ամանը, կիր բռնում, օրպեսզի ջուր չմաղի:

² И. М. Джафарзاده, Историко-археологический очерк старой Ганджи, стр. 79.

³ Սիրար, ԻԲ, 7:

«Ի յանշնչից շարժականաց,
Մնունդ ճարպոյն ի ն(շ)խարաց,
Պարունակէ զնիւթեալ մանած,
Տայ տեսանել զգոյնս աշաց»¹:

Մոմը ավելի հարգի էր, քան ձիթածրազը. «Վիտրամիանի» վրացական վեպում ասված է. «Աստված փակեց քո առջև փոքր դուռը, բայց բացեց մեծը և եթե նա առավ քեզինից ձիթածրազը, ապա քեզ տվեց մոմը»²:

Այ և բորակ պատրաստելը: Վերևում խոսվեց այն մասին, որ վանա լճից մեծ բանակություններ բորակ էր ստացվում: Այդ գործով զբաղվում էին հատուկ մարդիկ, որոնք հմտացել էին՝ լճի ջուրը նրա ափին փոսերի մեջ գոլորշիացնելու եղանակով ոչ միայն բորակ, այլև աղ ստանալու գործում: Այլ մարդիկ էին զբաղված կողբի, կաղըզվանի և այլ աղահանքերից քարաղ կտրելու, հանելու գործով:

Պաղլեղ ստանալը: Շիրք կամ պաղլեզը զանազան գործածություն ուներ: Նույն շատ անհրաժեշտ էր, մանավանդ, ներկարարության մեջ՝ գույները հաստատուն դարձնելու համար: Շիրք ալյուրինատների թվին պատկանող հանք է, որը բնության մեջ հանդիպում է աղատ վիճակում կամ պատրաստվում է արհեստականորեն: Շքարները շիրք հանում էին հանքից, մաքրում (համախաբար ջրի մեջ լուծելով և գոլորշիացնելով բյուրեղացնելու եղանակով), ապա վաճառում: Հայաստանից ստացվող պաղլեզը հիշատակել է դեռևս Պլինիոսը³:

Շախաղագործություն: Եղեգնից շախար ստանալը հայտնի է շատ վաղուց: Կար եղեգնի հատուկ տեսակը՝ շաքարեղեգներ. որի բերքը պետք էր հավաքել վեգետացիոն

¹ Մատենադարանի ձեռագիր № 8575, էջ 308ա:

² Висрамини, Грузинский роман XII в. в персидская поэма Вис и Рамин, Москва Ленинград, 1938, стр. 30.

³ Проф. Л. А. Оганесян, История медицины в Армении, часть I, Ереван, 1946, стр. 59.

որոշ շրջանում, երբ արմատի մոտ գտնվող մասերը դալար էին և մեծ քանակությամբ շաքար էին պարունակում: Հավաքած եղեգները արհեստանոց բերելով պետք էր մաքրել, կաթսաների մեջ եռացնել, քանիցս ջուրը դոլորշիացնել և ստանալ շաքար: Իրն-Հաու-քալը Հայաստանի բնական հարստությունների թվում հիշատակում է նաև շաքարեղեգներ, որից շաքար էր պատրաստվում: Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարության» մեջ հիշատակված է հինգ տեսակի շաքար՝ սպիտակ, կարմիր, փենիտ և տապարզի¹, իսկ հինգերորդի անունը չի տրված:

Սնառագործություն: Օճառը բնակչության կենցաղի մեջ գործածվում էր վաղուց. այն հիշատակված է հայկական հնագույն աղբյուրներում օճառ, ալքիմիական ձեռագրերում սապոն անունով: Հիշատակվում է երկու տեսակի սապոն՝ սովորականը, որ կոչվում է հասարակաց և բարձրորակը, որը կոչվում էր պալատի սապոն²:

Միջնադարյան մի ալքիմիական ձեռագրում սապոնի պատրաստման մասին կարգում ենք.

«Դուռն սապոնի վասն թատպիրի. առ բաժին մի ձէթ, և բաժին մի գլուխ ջուր³. դիր դէթն յաման և լից սակաւ սակաւ զջուրն ի վերայ, և եփէ մինչև որ ցամաքի, առ և արա կաղպար. այլ դի օր մի վառէ մեղմ կրակ մինչ որ հասնի:

է և այլ փմն կներպ սապոն շինել. քանզի սապոն Բ ցեղ է՝ դէճ և շոր: Առ ձէթ և թեզ ջուր, որ ասի արապի ռասլխալի և լինի միաշափ, և լից յաման և եփէ մեղմ մինչ լինի քան զիսիդայ, և առ շոր մփ և պարզէ ի դետնին, և լից ի վերայ կիր մաղած, և

փռէ հան զեփածն և լից ի վերայ, որ պաղի և ապա կտրատէ լարով⁴:

Վարսավիրություն: Այս արհեստն էլ շատ հին է: Սափրիչ բառը ասորերեն է և փոխառված է հնագույն ժամանակներում: Բուն հայկական է վարսավիրայ բառը: Սափրելու գործողությունը հին հայերենում կոչվել է գերծել² կամ ուղղակի սափրել³: Այս աշխատանքը հատուկ հմտություն էր պահանջում: Ազգագրության սովյալներից էլնելով, կարելի է ենթադրել, թե սափրիչները մեծ մասամբ շրջում էին և սափրում նրան, ով կհամաձայնվեր սափրվել, լինի շտվաչում, փողոցում, թե տներում: Սակայն միանգամայն հավանական կլիներ ենթադրել, թե քաղաքների շուկաներում, հյուրանոցներում և խանապարներում, փնդովներում ու բաղնիքներում ևս կային սափրիչներ:

Սափրիչությունը իբրև առանձին արհեստ հիշատակված է շատ հեթաթեներում, սկըսած հին ժամանակներից: Մի հին առասպել մշակել է Նիզամին, որի մեջ պատմելվում է, թե վարսավիրը սափրելով Ալեքսանդր Մակեդոնացուն, իմանում է, որ նա եղջյուրավոր է:

Հացբովսություն: Քաղաքներում կալին հացթուխ կամ հացագործ արհեստավորներ, որոնք կոչվում էին նաև խտպաղ: Սրանք թխում էին տարբեր տեսակի հաց և վաճառում բնակչությանը: 1204 թ. հիշատակված է Արտավազ հացագործը Մուշ քաղաքում¹. Աղբյուրների վկայություններից երևում է, որ թխած հացը կուղսպակներից գնում էին ոչ միայն քաղաքում օրավարձով՝ աշխատող, սեփական բնակաբան և ընտանիք շունեցող

¹ Մխիթարայ բժշկապետի Հերացույ, Ջերմանց մխիթարության, Վենետիկ, 1832, էջ էջ 67—69, 100, 117 և այլն:

² Կ. Պ ա ֆ ա դ ա ռ յ ա ն, Ալքիմիան պատմական Հայաստանում, էջ 255:

³ Գլուխ ջուր, կամ թեզ ջուր, սուր ջուր, ժանտաջուր կոչվում էր կարթարի և կրի խառը լուծույթը:

¹ Կ. Պ ա ֆ ա դ ա ռ յ ա ն, Ալքիմիան պատմական Հայաստանում, էջ 113:

² «Կոչեաց վարսավիրայ և կերծ զեթանեսին գիտակս գլխոյ նորայ» Դատատրաց ԺԶ, 19, Եղեկիէլ Ե, 1:

³ Ա Ր Ի Ս Տ Ա Կ Ե Ս Լ Ա Ս Տ Ի Վ Ե ր Ս Կ Ի, Պատմություն, էջ 97:

⁴ Ա լ ի շ ա ն, Հայաստանում, էջ 450:

ընչազուրկ մարդիկ, այլև մյուս քաղաքացիները:

Վարդան Այգեկցու մի առակից երևում է, որ հացթուխի գնորդները բավականաչափ շատ էին և հերթ էին կանգնում կուղպակի առջև: Առակում պատմվում է, թե ինչ որ մեկը մյուսների հետ հերթ կանգնած լինելով հացթուխի կուղպակի առջև, նախօրոք վճարում է փողը, մինչև հերթը իրեն է հասնում հացը սպառվում է և նա ոչ միայն հացը չի ստանում, այլև իր տված փողը, որ ուրանալով, նրան չի վերադարձնում հացթուխը (խաբալը), իսկ տուժածը հերթ կանգնելով մտադործի կուղպակի առջև փող չվճարած ասում է, թե վճարել է և ստանում է իր պահանջած քանակությունը միսը¹: Այս առակից երևում է, որ հաց թխել վաճառելը քաղաքներում սովորական երևույթ էր և դա անում էր հացթուխ արհեստավորը: Այս առակը բնորոշ է նաև քաղաքի բարբերի տեսակետից:

2. ԳԵՂՈՐԱՅԲ ԵՎ ԱՆՈՒՇԱՀՈՏ ՅՈՒՂԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՐ

Դեղորայք և անուշահոտ յուղեր պատրաստելը Հայաստանում շատ դարգացած էր: Դրա վերաբերյալ աղբյուրները վկայում են դեռևս հռոմեական ժամանակներից սկսած: Հայաստանում գիտեին դեղորայք պատրաստել դանազան բույսերից, մասամբ և որոշ հանքանյութերից: Դեղագործությունը դարգացավ բժշկությանը համընթաց: 11—13-րդ դարերից մեզ հասած բժշկարաններն ու բրնախոսական բնագրերը թույլ են տալիս ասելու, որ միջնադարյան Հայաստանի դեղագործությունը Արևելքում հայտնի է եղել:

Դեղագործությամբ զբաղվում էին ամենից առաջ իրենք բժիշկները, բայց թե բրնախոսությունը և թե դեղագործությունը միջին դարերում այն աստիճան առաջադիմել էին, որ դեղագործությամբ ինքնուրույնաբար ըզ-

բաղվող մարդիկ կային: Լեզվի տվյալները ևս այդ ան ցույց տալիս՝ դեղագործ տերմինը շատ հին է և որոշ դեպքերում նշանակում է ներկ պատրաստող, մյուս դեպքերում՝ դեղորայք պատրաստող: Որ դեղագործությունը ինքնուրույն զբաղմունք էր դարձել, դժվար չէ նկատել, եթե ցույց տրվի, թե ինչ նյութերից և ինչպիսի բարդ խառնուրդներով ու զուգորդություններով էին դեղերը պատրաստվում:

Հարկ ենք համարում նշել, որ եթե դեղագործությունը ժողովրդի մեջ արհեստ էր, ապա իբրև բժիշկների և մասնագետ դեղագործների զբաղմունք, պատկանում էր գիտության բնագավառին: Միջնադարյան Արևելքում ձևավորվեց դեղագիտությունը: Անգամ արհեստագործության տեսանկյունով գիտված՝ դեղագործությունը ցույց է տալիս միջնադարյան գիտելիքների մակարդակը այդ բնագավառում:

Սի շարք դեղաբույսեր ու նյութեր, ինչպես ասացինք, հայտնի էին դեռևս հնագույն ժամանակներից: Պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը «Բժշկության պատմությունը Հայաստանում» վերնագիրը կրող իր աշխատության մեջ ի մի է բերել հին հեղինակների տեղեկությունները Հայաստանի դեղանյութերի մասին, որից և օգտվում ենք:

Հին հեղինակների վկայություններից երևում է, որ Հայաստանը հարուստ է եղել դեղանյութերով, մասնավորապես դեղաբույսերով: Պլինիոսի վկայությամբ Պոնտոսի թագավոր Միհրդատը Հայաստանի դեղաբույսերից պատրաստել է մի դիոլ, որը գործածվում էր իբրև հակաթույն՝ հին աշխարհում հայտնի բոլոր տեսակի թույների դեմ: Դարերիակն կոչվող հակաթույնն է եղել, որը հայերի մեջ կրել է Միհրդատի դեղ անունը: Թերիակների գործածությունը դուրս է մղվել միայն 1908 թվականին¹:

Շատ հայտնի է Լոզել հայկավը (bolus

¹ Ժողովածուք առկայ վարդանայ, հատ. 2, էջ 322—323:

¹ Проф. Л. А. Оганесян, История медицины в Армении. часть первая. Ереван. 1946. стр 55—56.

armena կամ bolus rubra), որը պարունակում է գիպս և սեննիտ: Այս կավը գործածվել է դանազան բաղադրությունների հետ, թե իբրև ներքին և թե իբրև արտաքին միջոց: Այդ դեղի մասին գովեստներով ան խոսել դեռևս Թեոֆրաստոսը (1-րդ դար մեր թվ. ա.) և Գալենոսը (2-րդ դար մեր թվ.): Հայ կավը հիշատակված է նաև բյուզանդական բժշկի- ների մոտ, ինչպես օրինակ, 6-րդ դարի հե- ղինական Աետիոսի, Ալեքսանդր Տրալացու և ուրիշների մոտ, իսկ միջնադարյան հայ- կական, արաբական, պարսկական բժշկու- թյան մեջ հայ կավը շատ լայն գործածու- թյուն է ունեցել¹: Մխիթար Հերացին հայ կավը հիշատակում է մի շարք դեղատոմսերի բաղադրության մեջ²:

Հայտնի է եղել նաև հայքարը կամ կա- պուլտ քարը (pietra armena կամ chrisocola), որը բաղկացած է պղնձարջասպից և կրից: Այս դեղը ընդունել են մի շարք հիվանդու- թյունների դեմ: Պլինիոսը և Դիոսկորիդեսը (1-ին դար) հիշատակում են այն իբրև ներ- քին գործածության միջոց: Այդ դեղը զոր- ծաղրել են Աետիոսը, Ալեքսանդր Տրալացին (6-րդ դար), Աբու-Մանսուրը, Աբու-Ալի իբն-Սինան (Ավիցեննա) և շատ ուրիշները³: Մխիթար Հերացին ևս հայքարը հիշատա- կում է մի շարք այլ նյութերի բաղադրու- թյան մեջ իբրև դեղ բաղմաթիվ հիվանդու- թյունների դեմ⁴:

Միջին դարերում, իբրև դեղանյութ օգ- տագործվում էր նաև հայ բորակը (բուրե-ի արմանի), նախորդների նման Արևելքից անցնելով Արևմուտք՝ նվրոպա⁵:

Նշադիրը կամ ամոնյակը նույնպես

1 Проф. Л. А. Оганесян, История ме- дицины в Армении, часть I. Ереван, 1946. стр. 57.
 2 Մ խ ի թ ա ր Հ ե ր ա ց ի, Ջերմանց մխիթարու- թյուն, էջ, էջ 43, 44, 45, 50:
 3 Проф. Л. А. Оганесян. ук. соч., том I. стр. 57.
 4 Մ խ ի թ ա ր Հ ե ր ա ց ի, Ջերմանց մխիթարու- թյուն, էջ 144:
 5 Проф. Л. А. Оганесян. ук. соч., том I. стр. 57—58.

հայտնի էր շատ վաղուց: Գիտնականների կարծիքով ammonium-ը աղավաղվելով առա- ջաքի է арmenium բառից¹, որը մեղ անհա- վանական է թվում:

Ստրաբոնը հիշատակում է, թե Հայաս- տանում այլ հանքերի թվում կա նաև սան- դիկը, որը կոչվում է հայկական ներկ: Սնդի- կի բաղադրությամբ այս նյութը օգտագործ- վում էր նաև միջնադարյան բժշկության մեջ:

Դիոսկորիդես կիլիկեցին «Գեղարույսների մասին» (περὶ ὕλης ἰατρικῆς) հարմիր աշ- խատության մեջ լավագույն ամոնը համա- րում է հայկականը, որը նրա ասելով ոսկե- դույն, բավականաչափ պինդ փայտ է և դու- րեկան հոտ ունի: Հնում և միջին դարերում հայտնի էին հայկական անուշահոտ օծանե- լիքները, որոնք պատրաստվում էին նար- դոս կոչվող ծաղկից: Դեռևս Քսենեֆոնն իր «Անաբազիս» երկում պարեջրի և անուշա- րույր զինիների հետ միասին հիշատակում է նաև քունջութի, դառը նշի յուղերը և անու- շահոտ օծանելիքներ: Պլինիոսը հիշատա- կում է Հայաստանից ստացվող անուշաբույր խեժերը asa loetida (հոտավետ խեժ) և la- xer-ը կամ larer pitium-ը, որը արտահանվում էր Հայաստանից, Պարսկաստանից և Մա- րսստանից: Այս անուշահոտ խեժերը միջին դարերում ևս շատ հայտնի էին: Պլինիոսը հիշատակում է նաև Հայաստանից ստացվող պաղլեղը²:



Գառնիում և հին վաղարշապատում կա- տարված պեղումների ժամանակ հայտնա- բերվել են մեծ թվով ապակե սրվակներ. որոնք գործածվել են անուշահոտ յուղերի համար: Այդ սրվակների թիվը մեծ է, մա- նավանդ Գառնիում, արտեղ մի դերեզմանում՝ երբևմն զրված է լինում մինչև չոթ սրվակ: Անուշահոտ յուղերով օծանելը սովորական է եղել հայկական իշխող վերնախավի շրջ- աններում³:

1 Նույն տեղում, էջ 58:
 2 Նույն տեղում, էջ 59:
 3 Փ ա վ ր տ ա ս Բ ու ղ ա ն դ, Պատմութիւն, էջ 211:

Կլավդիոս Կլավդիանոսը, Կալիմաքոսը և ուրիշները վկայում են, թե Հայաստանում զանազան բուսական և կենդանական բազադրոսթրոններից, քանավանդ ձկներից պատրաստել են թունավոր փոշիներ:

Ղազար Փարպեցին նույնպես վկայություն է պահպանել Արարատյան դաշտում աճող դեղաբույսերի մասին: Նա ասում է.

Միջնադարյան հայկական բժշկարաններում և դեղագիտական գրվածքներում հանդիպող դեղանյութերի քանակը շափաղանք մեծ է: Դրանք հանրագրամարի են բերված Ամիրդովլաթի մոտ, մասնավորապես նրա Ախրապատինում: Նպասակ շունենալով ընդգրկել այդ ամբողջ նյութը, կբավականանանք հայերեն լեզվով մեղ հասած ամենա-



Եկ. 42. Հավանքի քարե դասակ (Գառնի, N 1966/115) և Մարմարե գունդ (N 1966/69), սովորաբար գործածվում էին դեղորայք ձեռնարկող և արտադրող (լուսնու) համար. ՊՊԹ:

«Անդ գտանին և աղյի աղյի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգահերմուտ բժշկացն յօրինուածոցն, ևրագահաս ախտահալած սպեղանիք, և կամ արմամբ յերկարելոցն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւն»¹:

Ինչպես ներկագործության մեջ, նույնպես և դեղագործության մեջ գործածական էին նաև պղնձը ու մաղթաքին: Իբն ալ-Ֆակիրը վկայում է, թե Կարինում, մի անգամ, որի վրա եկեղեցի էր կառուցված, հավաքում էին ինչ որ բնական փոշի, որը հավաքույն էր և բժշկում էր օձի ու կարիճի խայթածը²:

Հին բժշկարանի՝ Մխիթար Հերացու (12 դ.) «Ջերմաց մխիթարության» մի քանի տվյալները մեջբերելով:

Հերացու բժշկարանում հիշատակված դեղանյութերի ու դեղաբույսերի թիվը հասնում է 220-ի, սրից 193-ը ունեն բուսական ծագում, 7-ը՝ կենդանիներից ստացվող և 20-ը՝ հանքային նյութեր են: Պատրաստվում էին խաշուքներ, քամուքներ (մուղ) ջրեր, շաքարներ, հյութեր, ձեթեր, փոշիներ, հարեր, քսելու մածիկներ կամ մաշուններ և այլն. որոնք օգտագործվում էին իբրև ներքին և արտաքին միջոցներ: Դեղորայքը մանրամասորում էին քարե հավանքներում, տախտակների վրա, օգտագործելով մարմարե նույնպես քարի դաստակներ և մարմարի կնդեր (Եկ. 42):

¹ Ղազար Փարպեցի, Պատմութիւն, էջ 20.
² СЛОМПК, вып. XXXI стр 35.

եկե՛ս դեղը շորացնում էին սաւլերի տակ և փոքրիկ գնդեր կամ կոճակներ էին շինում, ապա դա կոշվում էր ճապ, փոշիածակ գեղերը կոշվում էին կուրս կամ ղուրս, հեղուկները՝ ըմպելիք կամ մատուցութիւն, մաշկին քսելիք կամ վերքի վրա դրվող գեղերը կոշվում էին տլե, մաճուն կամ սպեղանի: Վերջինս դործածվում էր առաւելելապես կոմպրեսների համար:

Այս կամ այն դեղն ստանալու համար, երբեմն իրար էին խառնում տասնյակ դեղանյութեր: Այդ է պատճառը, որ միջնադարյան դեղերը կրում էին ունիվերսալ բնույթ և գործածվում էին մի շարք իրարից տարբեր հիվանդութիւնների դեմ:

Որպէսզի ընթերցողը պարզ պատկերացում ունենա դեղերի պատրաստման մասին, ստորև բերում ենք մի քանի օրինակ: Ահա մի հապի դեղատոմս, որի մեջ հիշատակվում է հայքարը:

«Հասլ աշարիճ՝ որ օգտէ գլխոյն և աշացն և սակերացն, և հանէ զաւելուածքն և զգլխոսթիւններն ի գլխոյն և ի յամենայն մարմնոյն: Առ հինգ աղբ հալիլէ, սապո, ըռեանդ, կարմիր վարդ, դարբիկոն, թրպոլ կէս կէս դրամ. շահմ խանգալ, սակամոնի, աֆթիմոն, հնդի աղ, քիթրէ, մուսլազրախ, անիսոն, մի մի տանկ. պալասանի փայտ և պտուղ, ասարօն, սալիխայ, մաղտաքէ, դարիսենի, սուսպուլ, դաֆրան, օշինդր, հայ քար, ջնուտ քար, լազուարդ քար, սուրինճան, պուզիտան, հապնիլ կէս կէս դանկ. լոսէ զամէնտ մանտր, և դսակամոնին խոշոր, և շաղէ սաթառճի ջրով, հասլ արա»¹:

Ահա և մի դուրսի դեղատոմս, որի մեջ օգտագործված է հայ կավը. «Ղուրս հով՝ որ օգուտ է սլին ջերմանն²: Առ դառնալեղու հրեք դրամ, հայ կաւ շորս դրամ, վարդի

կոնդմէն յիստակած վեց դրամ, սերկելիլ կուտ յիստակած, դոմի հունդ յիստակած, փրփրեմի հունդ վեց վեց դրամ, մարուխի քամուրսն տասն դրամ, տաճիկ կոէղ, քեթրայ և նշայ երեք. երեք դրամ, սելսի կուտ եօթն դրամ, դայս ամէնս աղա և մաղէ, և շաղվէ պղրղատոմսի լուսպով և ղուրսեր արա, և ի շքի շորացուր, և տուր աղցած և մաղած մի մթխալ քաղցր նուսն ջրով և խիարի ջրով անօթեց, օգտէ հալ և մաշ ջերմանն, և այն ջերմանն, որ սիւ կոշի»³:

Բերենք մի հաս էլ տլեի դեղատոմս:

«Տլէ աշոցի, որ ի տաքէ լինի: Եւ դայս ալէս ի վերայ աշոցին (ուռուցքի) զիր, զի շատ օգտակար է: Առ հայ կաւ և դառնալեղու ջրով և սանտալի ջրով և դալար գնձի ջրով տրորէ, և ի վերայ աշոցին ի բանի պահէ»²:

Վերջապես բերենք և մի սպեղանու դեղատոմս:

«Սպեղանի հով վասն տաք աշոցի: Դեղ մին այլ օգտակար է: Առ ամիոն և կակիկայ, որ է աղի ծաղիկ, և իսրոյ առջասրն, և նուսն կեղև, ի յամէն մէկէ կրկու դրամ. պղնձի փերճոկ և բանկի հունդ, որ է աղվէշ բանկ, յամէն մէկէ մի դրամ. դայս ամէնս աղա և մաղէ, և խաշխաշի ձիթով շաղվէ, և ի վերայ տեղացն սպեղանի արա. օգտակար է թէ աստուած կամի»³:

Բերված փաստերից պարզ է դառնում, որ բժիշկը, որն է բարդ դեղ պատրաստելու համար պետք է իր ձեռքի տակ ունենար պատրաստի դեղանյութերը առանձին առանձին և ապա խառնէր դրանք ու դեղ պատրաստեր: Ուրեմն միջին դարերում պատրաստվում և վաճառվում էին ոչ թե պատրաստի դեղերը, այլ դեղանյութերը, մանաւանդ ինչպես տեսանք, մի շարք դեղանյութ-

¹ Մ խ ի թ ա ր 2 ե ր ա ց ի, Ջերմանց միլիթարու-թիւն, էջ 144:

² «Սլին ջերման... է թորցն խոցնալն և մաշիլն», «Սլին ջերմանն հաղ լինի... զի հաղալն յաղթէ մարմնոյն...» (Մ խ ի թ ա ր 2 ե ր ա ց ի):

¹ Մ խ ի թ ա ր 2 ե ր ա ց ի, Ջերմանց միլիթարու-թիւն, էջ 43:

² Նույն տեղում, էջ 74 .

³ Նույն տեղում:

լիւր արտահանւում էին երկրից դուրս, իսկ ուրիշները, ընդհակառակը, ներմուծւում էին, ինչպես Քապուլի հալիւն, տաճիկ կոճղը, ջհուտ քարը, հոռոմի կավը, Խորասանի հասնիլը, վրացական խաբախի կոճը և այլն: Կարելի է ենթադրել, որ զգալի թվով մարդիկ էին դրաղւում դեղանյութերը հավաքելու, մշակելու և օդատարածման համար պատրաստելու դործով:

Արեւելքում հին ժամանակներից ի վեր սովորական էր նաև դարեջուր, նուան ջուր և օշարակ պատրաստելը, որը քաղաքներում վաճառւում էր¹:

Անուշահոտ յուղեր պատրաստելը: Միջին դարերում, մանավանդ վերնախավի կենցաղում շատ սովորական էին դանադան յուղերն ու օծանելիքները, ինչպես նաև անուշահոտ խեժերը, որոնք խնկարկւում էին ոչ միայն կեղեցիներում, այլև ֆեոդալների ու մեծատունների պալատներում: Քաղաքների զարգացման հետ, քաղաքային բնակչության կենցաղի մեջ ևս թափանցում են անուշահոտ յուղերն ու օծանելիքները, անգամ կանանց հոնքերն ու այտերը ներկելու դեղերը և նման այլ միջոցներ, որոնց դեմ պայքար են մղում եկեղեցական գործիչները, օրինակ, նույն ներսես Շնորհալին, Վարդան Այգեկցին, իսկ դեղերից մի քանիսը (օրինակ, երկխան վիժելու դեղերը) արգելված են եղել դատաստանապրքերով²:

Անուշահոտ յուղերի մի քարդ կոմպլեքս էր մեռոնը, որի պատրաստման եղանակը գտնում ենք 1471 թ. մի ձեռագրում, արտագրված ավելի հին օրինակից, որը և մեջ ենք բերում:

«Այս է նիւթ սրբազան մեռոնին: Պալասանի զանճափիլ, զարափիլ, ջուլը, զաքիսենի և որչափ դտանես տաք դեղորունք. վարդ, նոմոֆար, շուշան, բոխան և գամինայն

ձաղկունս մինչև շի (72). և որչափ գտանես պտուղ, մազտաքէ, հայ խոճնկ, Բ. Թողալ մուշկ և մաքար, լիտր մի վարդ(է) ջուր, լիտր մի անուշ դինի: Զդեղորունքն սղկէ. և զձաղկունքն ջրով եփէ և զձեթն սլտղի լիցի սլղինձն և զփետն խաղէ ու այնչափ եփէ կրակով, քիչ մի և ապա լից դղինին և զվարդէջուրն և զտաք դեղորունքն և զձաղկանց ջուրն ի մէջն և աքնչափ եփէ զձեթն, որ ջուրն մաշի և մնա զձեթն. ի խաղն շափէ խաղ փայտովն՝ ջուրն մաշի և ձեթն մնա ի յիւր շափն»¹:

Մեռոնը միակ բարդ օծանելիքը չէր: Շատ բարդ դեղեր ու օծանելիքներ պատրաստելը միջին դարերում սովորական երևույթ էր, բայց պատրաստում էին նաև մեծ թվով սլարդ անուշահոտ յուղեր (ձեթեր), այս կամ այն ծաղկից՝ վարդից, նուռոֆարից, մանուշակից և այլ ծաղիկներից:

Անիի և Դվինի պեղումների ժամանակ գտնուել են մեծ քանակությամբ ապակե ու կավե անոթներ, որոնք ծառայել են անուշահոտ յուղեր պահելու նույնիսկ հեռավոր տեղեր փոխադրելու համար:

Վարդաջուր պատրաստելը: Ծիշտ է նրկատված, որ վարդաջրի, մանուշակի ջրերը և անուշահոտ յուղերի արտադրությունը Արեւելքի երկրներում հնուց ի վեր սովորական էր²: Քաղաքների զարգացման հետ դատվելի լայն շափեր է ընդունում: Պատրաստում էին թորելու եղանակով: Հատուկ անոթի կամ կաթսայի մեջ լցվում էր վարդը, որը մաքրված էր լինում (թողնվում էին միայն թերթերը), մի այլ կաթսա դրվում էր առաջինի տակ և կրակը վառվում էր վերևից՝ խփի կողմից, իսկ վարդի թերթերը լինում էին կտավով կախված կաթսայի մեջ, կրակի ազդեցությամբ նրանցից ջուրը անջատվում էր և իջնում կաթսայի տակ, որի հատակին թողնված անցքերից անցնում էր երկրորդ

¹ A. K r e m e r, Culturgeschichte des Orients. B. II, S. 316—317.

² Ա. Արքանյան, Դավիթ Ալավկա որդու կանոնները (առանձնատիպ), Երևան, 1953, էջ 24:

¹ Մատենադարանի ձեռագիր N 5702, էջ 102ա:

² A. K r e m e r, Culturgeschichte des Orients. B. II, S. 316—317.

ամանի մեջ: Բայց կարևոր է բուն թորման եղանակը, երբ վարդի թերթերը լցվում էին տակի կաթսայի մեջ, որը և տաքացվում էր, իսկ դոկորշինները բարձրանում էին վերևի անոթի մեջ, սառչում և նրա մի կողմից թողնված ծորակով հավաքվում երրորդ անոթի մեջ:

Ալքիմիական մի ձեռագրում, որն արտադրված է 16-րդ դարում, բայց մասնագետների կարծիքով, ընդօրինակված է շատ ավելի հին ձեռագրերից, ալքիմիկոսների գործածած թորման մի ապարատի մասին կարդում ենք. «...Աման մի, որ պարզաբան կոչի և շոգիհան ունի նոյն պարզարան և շնչահան պնակ, նոյնպէս որպէս յառաջագոյն յիշեալ է, որ վերացուցիչ և պարզիչ կոչի: Ունի խուփն, իսկ գմբեթաձև և նոյն խփան ներքի դեհն է բոլոր, ըստ շափոյ շրթանցն ներքոյ ամանին: Եւ շուրթն խփանըս լիցի այսպէս պատրաստեալ, զի հեշտու մտցի ի մէջ երկու շրթանցն ներքոյ ամանին, որպէս նախայիշեալ են յաղագս վերացուցանողին և պարզարանին, որով պարզեցի վերացուցի զշունչսն: Բայց ամանս այս ոչ կոչի վերացուցանող, այլ շնչահան պարզիչ կոչի, զարդ, որ շրթունս շնչահանիս խփանն ծոեալ ընդ ներքո հայի վասն զի առցէ և արգելցէ զշուրն, որ ընծայի ի շոգոյն, որ ելանէ առատաղքն շնչահանիս. և յայնմ ծոեալ շուրթն կա քիթ, որ վայր հայի, ընդ որ շուր իջանէ (և զշուրն այն, որ ելանէր ընդ քիթն, ժողովէ ի յաման յապակի): Ամենեւին ամանն այս այնպէս, որպէս ամանն, որ վարդէջուր շինուի»¹:

Ուրեմն վարդաջուր պատրաստելու հարմարանքը այնքան տարածված ու սովորական է եղել, որ ձեռագրի հեղինակը իր նկարագրած ալքիմիական թորման ապարատը բնորոշում է իբրև ամենեւին նման՝ վարդաջուր թորելու ապարատին: Պարզ է,

որ այս ապարատի ներքևի պղնձն¹ ամանի տակ էր կրակը վառվում, բայց ձեռագրերում կա, ինչպես նշեցինք վերևում, վարդաջուր պատրաստելու նաև մի այլ ապարատ, որի շեռուցումը կատարվում էր վերևից: Վարդաջրի նման թորելու եղանակով էր պատրաստվում նաև օղին:

3. ՔԻՄԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱԼՔԻՄԻԱ)

Միջնադարյան հայկական ձեռագրերում ֆիլիակաևոլյուն է կոչված ալքիմիան: Մասնագետ չլինելով և նպատակ չունենալով որևէ շափոյ զբաղվելու միջնադարյան քիմիայի պատմությամբ, այստեղ քիմիականությունը կքննենք արհեստագործության հետ նրա ոմեցած կապի տեսանկյունից: Մեզ հասած հայերեն ալքիմիական ձեռագրերը ցույց են տալիս, որ ալքիման սերտորեն կապված է եղել արհեստների հետ: Ավելին, ալքիմիան արդյունք էր արհեստների զարգացման որոշ աստիճանի և շէր կարող առաջանալ առանց մի շարք արհեստների և քաղաքային կյանքի զարգացման: Արևելքում, շատ ավելի քան Եվրոպայում, նա չկորեց իր կապը արհեստագործությունից և ինչպես կտեսնենք, չկորցրեց իր կիրառական նշանակությունը:

Հայերեն ալքիմիական ձեռագրերը մեզ հասել են 16—19-րդ դարերի արտագրություններ: Եթե նրանք նույն դարերի թարգմանություններ չեն, որ համեմատաբար քիչ է պատահում, ապա մեծ մասամբ արտագրված են ավելի հին օրինակներից: Հայտնի է, որ Կիլիկիայի թագավոր Հեթումի ժամանակ (1224—1269) Ստեփանոս Սարկավազը պարսկերենից հայերեն է թարգմանել մի

¹ Տ. Ղաղանջյան, Քիմիական ապարատության և լաբորատոր տեխնիկան ըստ հին հայկական ձեռագրերի: Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, № 2, էջ 8:

ալքրիմիական ձևապիր: Նույն Հեթումի ժամանակ թարգմանվել է նաև դարբնություն, պողպատ շինելու և ներկարարության վերաբերյալ մի այլ աշխատություն¹: Բայց չէ որ ալքրիմիայով ալեքի շուտ են զբաղվել, քան նրա շուրջ գրականություն ստեղծվելը, մանավանդ ալքրիմիան համարվում էր «ծածուկ արուեստ» և գրականության մեջ մտավ համեմատաբար ուշ ժամանակներում: Առաջինը 12-րդ դարի հեղինակներ Սարգիս Շնորհալին, Ներսես Շնորհալին և Ներսես Լամբրոնացին են հիշատակում «ծածուկ արուեստը» կամ նրա հետ կապված մի շարք տերմիններ²:

Վարդան Արևելցին ակնարկ ունի ալքրիմիկոնների մասին իր «Պատմության» հետևյալ հատվածում. «... և զհալական նիւթս, զոսկի, և զարծաթ և զակն և զայլան զոր գործէ բնութիւնն ծծմբով և ժիպակով՝ որպէս սսսնն դիտողը»³: Եթե նկատի ունենանք, որ ալքրիմիկոսների կարծիքով մետաղները կարող էին ոսկու վերածվել սնդիկի (ժիպակ) օգնութեամբ, ապա պարզ կլինի, որ «գիտողը» ասելով հեղինակը նկատի ունի ալքրիմիկոսներին:

Նույն ժամանակների գրականության մեջ հանդիպում են նաև որոշ նյութերի այնպիսի գաղտնաճանաչումներ, որոնք գործածական էին ալքրիմիկոսների շրջանում. Օրինակ՝ ծծմբի «ծեր» գաղտնաճանաչումը, որը գործածվում է Ներսես Շնորհալու հանելուկներից մեկում:

Իրոք, և թե նկատի ունենանք արտադրություն, արհեստագործության և քաղաքային կյանքի զարգացման այն նախադրյալները, որոնք ծնունդ տվեցին ալքրիմիային, ապա կարելի է ասել, որ ալքրիմիան իր առաջացման և զարգացման համաք առավել բարենպաստ հող էր գտնում 10—13-րդ դարերում:

1 Ա լ ի շ ա ն, Սիսական, էջ 518:

2 Կ. Ղ ա ֆ ա դ ա Ր Յ ա ն, Ալքրիմիան պատմական Հայաստանում, էջ 37:

3 Վարդան Արևելցի, Պատմութիւն, էջ 4:

Ավանդությունը Անանիա Շիրակացուն է վերագրում այն բանը, թե նա է Վենետիկի թագավորին սովորեցրել երկաթից ոսկի սլատքաստելու գաղտնիքը: Դա իհարկե, ուրիշ բան չէ, քան, մի կողմից՝ Շիրակացու նամբավի մեծություն և մյուս կողմից՝ ալքրիմիայի արևելքից արևմուտք դնելու արձագանք:

Վերջապես, դա կարող է նշանավորել նաև ալքրիմիայի պատմության մեջ Հայաստանի խաղաղած որոշ դերը:

Քրիմիայի պատմությանը նվիրված աշխատություններում «փիլիսոփայական քաղը» կամ «փիլիսոփայական ձուռ» կոչված է «Հայաստանի քաղ», ալքրիմիկոս Օլիմպիոզոբոսին անվանում էին «Հայաստանի թագավոր» կամ նույնը «Պետրեյզիուս-Հայաստանի թագավոր»: Այս ամենը, ինչպես իրավացի նկատում է Ա. Հարությունյանը, ցույց են տալիս ալքրիմիայի դոյուսթյունը և խաղաղած զգալի դերը միջնադարյան Հայաստանում¹: Ալքրիմիան արևելյան երկրներում 12—13-րդ դարերում այնքան զարգացած ու սովորական էր, որ անգամ Հուլաղու խանի և Արզուն խանի հովանավորությունը դառնում է:

Ներկա թեմայի տեսակետից կարևորագույն հարցն այն է, թե ինչով էին գրառվում ալքրիմիկոսները և որն էր նրանց նպատակադրումը: Ըստ ալքրիմիկոսների բոլոր մետաղները բնության մեջ պետք է ոսկի լինեին, սակայն այդպիսին չեն իրենց պարունակած նյութի առավելության կամ պակասության, ջերմության, ժամանակի հանդամանքների առավելության կամ պակասության պատճառով: Ոսկի չլինելը մետաղի տկարությունն ու անկատարությունն է, ուստի և «միտքն արուեստիս այս է,— ա-

1 А. Х. А р у т ю н я н, Техно-химические знания в древней и средневековой Армении (см. Труды Института истории естествознания, том III, 1949, стр. 252.

2 Р а ш и д - а д - д и н, Сборник летописей, том III, перевод с персидского А. К. Арденса, Москва-Ленинград, 1946, стр. 61, 129.

ուում էին ալքիմիկոսները, — եթէ որպէս զյայտարար (մետաղները) ի սկարութենէ առողջութիւնն բերէ և ի անկատարութենէ՝ ի կատարութիւն...»¹։

Այդ կարելի է անել ջերմութեան տակ կատարվող զանազան գործողութիւնների, նյութերի տարրալուծման, դոման, ուրիշ նյութերի հետ միացնելու, մանավանդ «իբսիթի» (էլեքսիր) օգնութեամբ։ Բնական է, որ ալքիմիկոսները պետք է բավարար պատրաստութիւնն ունենային. և իրոք, ձեռագրերից պարզ երևում է, որ նրանք շատ հմուտ մետաղագործ, մանավանդ ոսկերիչ արհեստավորներ էին, միաժամանակ բավականաչափ կրթված մարդիկ։ Ալքիմիական գրականութեան մեջ ընդգծվում է այն պահանջը, որ ալքիմիկոսը հմուտ վարպետ և կրթված մարդ պիտի լինի²։ Ալքիմիկոսները շատ թաղմաղան գործողութիւններ էին կատարում մետաղների, հանքերի և այլ նյութերի հետ, ստանում էին կիրառական նշանակութիւնն ունեցող համաձուլվածքներ, դեղորայք, ներկեր և այլ օգտակար բաղադրութիւններ։

Եթև փորձերնք թվել այն նյութերը, որոնց հետ գործ են ունեցել ալքիմիկոսները, և այն գործողութիւնները, որ նրանք կատարել են, ապա հարկ կլինի կազմել հարյուրավոր նյութերի ցանկ և խոսել նույնքան բազմազան գործողութիւնների մասին։ Նյութերը ուսումնասիրել ալքիմիկոսների կարծիքով նշանակում էր իմանալ նրանց բնութիւնը (ինչ լինելը), ծնունդը (ինչից և ինչպես է առաջանում), պտուղը (ինչի հետ կարող է միացութիւններ տալ և ինչ կարելի է ստանալ այդ եղանակով) և զանազանութիւնը (ինչպես կարելի է անշատել այս կամ այն նյութը կամ տարրալուծել տվյալ բաղադրութիւնը)³։

Ալքիմիկոսները այն կարծիքին էին, թէ նյութը բնական է և քիմիականութեամբ կամ «արուեստով»։ Նոր նյութ ստանալ շիկարելի։ Նրանք ասում էին. «Եւ որպէս մարդն էշ, կամ էշն մարդ ոչ կարէ լինել, նոյնպէս մի պղնձեղէնն ի միւս այլն ոչ կարէ փոխիլ»¹։ Սակայն նրանք գտնում էին, որ արհեստական եղանակով կարելի է փոփոխել նյութի կերպը և լրացնել նրա թիրուցիւնը դարձնելով այն կատարյալ։ «Զի բնական գործն օգնականութեամբ վերագոյն է, քան թէ առանց օգնականութեան։ Իսկ օգնութիւնն արուեստիս այս գրնութիւնն փրոյնն ոչ փոխէ, այլ գործոյն բնութեանն օգնէ»։ Ըստ որում մարդկային արհեստական գործողութիւնը և իրի փոխակերպութեան բնական ընթացքը «նոյն և մի լինել կարեն»²։

Թեև ալքիմիկոսների կատարած գործողութիւնները չափազանց բազմազան էին և թվով շատ մեծ, բայց ձեռագրերի հիման վրա կարելի է ամենահիմնական դժերով նշել այդ գործողութիւնների բովանդակութիւնը։

1. Ալքիմիկոսները ստանում էին մետաղներ զանազան հանքերից։

2. Ստանում էին ամեն տեսակի մետաղական օքսիդներ մաքուր մետաղներից կամ նրանց խարտոփներից (քացախի, ժանտուշրի և այլ լուծուցիւնների ու կրակի օգնութեամբ)։

3. Մաքրում էին մետաղները և ստանում բարձրորակ մետաղներ։

4. Փոփոխում էին մետաղների կառուցվածքն ու խտութիւնը, հետևաբար և կարծրութիւնը։

5. Ստանում էին տարբեր մետաղային համաձուլվածքներ։

6. Փոփոխում էին մետաղների գույները։

7. Մետաղների խառնուրդի միջից անջատում էին ավելի դյուրին հալվող մետաղները։


1 Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, Ալքիմիան պատմական Հայաստանում, էջ 57—58։

2 Նույն տեղում, էջ 28։

3 Մատենադարանի ձեռագիր N 2527, էջ 69։

1 Մատենադարանի ձեռագիր N 2527, էջ 9ր։

2 Նույն տեղում, էջ 10ր։



Նկ. 43. Քիմիական փորձանոթներ, ձևապրեքիչ:

8. Նրկարատե մեղմ կրակի օգնութեամբ մետաղները փափկացնում էին և քիմիական ռեակցիաներ կատարում, զրանց հետեանքով առաջացած միացութունները անջատում ընդհանուր զանգվածից «իջեցուցանող» սպարատի միջոցով:

9. Ստանում էին վարաղներ, սսկիջուր, արծաթաջուր մետաղների սսկեղօծման կամ սսկիջրման և արծաթաջրման համար, անսպաստում անոթները:

10. Պատրաստում էին որոշ լուծույթների նրանց մեջ մետաղները լուծելու համար:

11. Պատրաստում էին մետաղների հալքը դյուրացնող նյութեր, աղեր, «բովրարներ»:

12. Փոփոխում էին նյութերի ֆիզիկական վիճակը, պինդը հեղուկ դարձնում, հեղուկը դաղ կամ պինդ մարմին, նյութերը բյուրեղացնում էին կամ բյուրեղը քայքայում:

13. Նյութերը ֆիլտրում, զտում էին աժլագի, թաղիքի, գործվածքների և կաշվի միջոցով:

14. Նյութերը թորում էին հատուկ ապարատների միջոցով:

15. Պատրաստում էին ներկեր, թանաքներ:

16. Պատրաստում էին զեղորայք:

17. Ստանում էին մետաղների հետ միացութուններ կազմող թունավոր նյութեր, որոնցից պաշտպանվում էին քացախով թըրջած շորով ծածկելով քիթն ու բերանը:

18. Պատրաստում էին անուշահոտ յուղեր և ջրեր:

19. Պատրաստում էին տարբեր տեսակի օձառներ:

20. Ստանում էին դարաղող նյութեր և պաղլեղ:

21. «Կրացնում» էին, այսինքն բարձր ջերմութեան տակ երկար ժամանակ բովելով սպիտակ փոշու էին վերածում զանազան հանքեր, անգամ մետաղները:

22. Ստանում էին տարբեր տեսակի աղեր:

23. Ստանում էին կենդանիներին բժշկելու զանազան տեսակի նյութեր, մաշկին և վերքերին քսելու կուպրեր:

24. Հորինում և պատրաստում էին զանազան գործիքներ, փորձանոթներ, արհեստագործի այլ և այլ հարմարանքներ (նկ. 43):

Ընդհանուր գծերով և ոչ լրիվ թվարկված

այս գործողութիւնները կատարելու համար ալքիմիկոսներն օգտագործում էին դարբնի, խնկերչի և այլ արհեստավորների գործիքներ, սալեր, հնոց, փուքսեր, հալոցներ, կթխաներ, կավի հասարակ և ջնարակած, ինչպես և ապակե անոթներ, կճուճներ, թասեր, տաշտեր, սրվակներ, ինչպես և բավականաչափ բարդ սպաղաւորա: Նյութերի օգտագործումը կատարվում էր շափերի և կշիռների գործադրութեամբ, որոշակի ջերմաստիճանի տակ, որը շափելու տարբեր եղանակներ էին գործադրվում:

Հայկական ալքիմիական ձեռագրերը ուսումնասիրող Տ. Ղազանջյանը մասնագիտորեն քննարկել է, թե ինչ գործողութիւններ էին կատարում ալքիմիկոսները և ինչ սպարատուրայի միջոցով:

Պարզվում է, որ ալքիմիկոսները թորման համար գործածում էին երկր տիպի սարքեր¹:

Ինորոշ է, որ թորման այս սարքերը ձեռագրերում համեմատվում են վարդաշուր թորելու սարքի հետ և ասվում է, թե դրանք են «որպէս ամանն այն, որ վարդեջուր շինուի»:

Հանքերի և որոշ մետաղների պտման համար ալքիմիկոսները կատարում էին սուբլիմացիա, այն է՝ պինդ նյութերը գաղաչին վիճակի վերածել՝ բարձր աստիճանի ջերմութեան տակ և գազերը սառեցնելով ստանալ նրանց փոշին: Ալքիմիկոսները այդ գործողութիւնը անվանում էին «շունչ հանել» կամ «վերացուցանել» կամ «պարզել» և կամ «քնութիւն» ստանալ:

Սուբլիմացիան նույնպես կատարվում էր մի քանի տեսակի սպարատուրայի միջոցով. դրանցից էին՝ պօթ-ալ-պօթ կթխան և շնչահանը կամ պարզիչը, որն ավելի բարդ սպարատ էր²:

1 Տ. Ղազանջյան, Քիմիական սպարատուրան և լաբորատոր տեխնիկան ըստ հայկական ձեռագրերի: Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, № 2, էջ 7—9:

2 Նույն տեղում, էջ 10—11:

Ձեռագրելու մեթոդները և «իջուցանող» կոչվող մի հարմարանք: Տաքացվող գլանի մեջ դրվում էր վերևում գնդաձև, փերքեում՝ բարակացող և անցքավոր քիչեր ունեցող անոթ և տաքացման շնորհիվ անոթի մեջ լցված սղինձը և զառիկը միացութեամբ էին կազմում և հալվելով իջուցանողի քիչ անցքերից, հոսում էին դրանաձև անոթի մեջ, իսկ եթե դրանաձև անոթը հատակ չէր ունենում, ապա հեղուկ մետաղը իջնում էր իջուցանողի տակ դրված մի այլ անոթի մեջ: Այս դեպքում իջուցանողը տաքացվում էր վերեւից¹: Ուշագրավ է, որ Գառնիում միջնադարյան շերտում գտնվել է խիտ բռնակ, որի գլանաձև մասը դատարկ է, իսկ կոնաձև մասի վրա անցքեր են թողնված: Ամենայն հավանականութեամբ դա քիմիական անոթի խիտ մաս է, կա և անոթը հերմետիկ կերպով փակող խոտի (նկ. 44):

Պրակտիկ խոշոր նշանակութեամբ ունեւր զանազան մետաղներից համաձուլվածքներ ստանալը. օրինակ՝ արծաթի և պղնձի որոշ հարաբերութեամբ խառնելով ստանում էին ոսկեգույն ձուլվածք, որից իրեր և առարկաներ էին պատրաստում: Ալքիմիկոսները ստանում էին նաև արծաթագույն համաձուլվածք: Այս դեպքում սղինձին կամ բրոնզին մեծ քանակութեամբ կապար էին խառնում, կամ արծաթ էին խառնում կապարի հետ, կամ էլ պղինձ էին խառնում արծաթի հետ: Ուշագրավ է, որ ոսկեգույն ու արծաթագույն համաձուլվածքներից պատրաստված իրեր և դարդեր պահպանվել և մեզ հասել են, մանավանդ Մատենադարանի 13—14 և հետագա դարերի ձեռագրերի կազմերի վրա փակցրած վիճակում:


Այս կամ այն մետաղի նմանվող ձուլվածքը կոչվում էր այդ մետաղի դուռը կամ նրա դուռը մտնող, այսինքն նրա տեսքն ընդունող մետաղ: Այսպիսի «դռներ» կարող էին լինել ոչ միայն մետաղների, այլև ուրիշ նյութերի համար: Ալքիմիական ձեռագրե-

1 Նույն տեղում, էջ 16:

բում շափազանց շատ են նման դռներ պատ-
րաստելու «կերպերն» ու եղանակները:

Ճնագեանների համար կարևոր է այն
փաստը, որ ալքիմիկոսները և մյուս արհես-
տավորները միջին դարերում գիտեին շատ
նյութեր, դրանց թվում նաև մետաղներ
հնացնել կամ հները նորոգել, այնպես, որ
բոլորովին նոր երևան: Հինը նորոգելը գործ-

էր արհեստ, պիտում էին իբրև ապրուստի և
հոգևոր բավարարության միջոց, այն ալիքի
վեր դասելով սովորական «արուեստներից»:
Նրանք ասում էին. «Անկտակարողիւն սրու-
կատիս այս երկու տակ է՝ զի և զհոգին յոր-
ժամ արտում է զանազան ուրախութիւնք
պարգևէ, և զմարմինն ի յաղբատութեան
ծառայութենէ: ապատէ»¹:



Նկ. 44. Կավե խփի բռնակ, հատուկ անցքով և անոթի
միակամ փորձանախների մասերն են
հերմետիկ կերպով փակող խուփ, հավանաբար բի-
(Փառնի, N 1966/112, 1965/175):

նական նշանակություն ունեն, իսկ նորը հը-
նացնելը հարկ կլինեն այն դեպքում, եթե
դա արվում էր անտիկվարային նպատակնե-
րով՝ նոր փրերը հնի անվան տակ թանկ
դնով վաճառքի հանելու համար:

Ալքիմիկոսների զբաղմունքի վերաբերյալ
մեջ բերված փաստերը միայն ընդհանուր
գծերով են ցույց տալիս նրանց «արուեստի»
էությունը, սակայն կարծում ենք, թե դրանք
էլ բավական են պնդելու, որ ալքիմիան
զարգացավ արհեստագործության զարգաց-
ման հիման վրա և սերտորեն կապված էր
նրա հետ: Իրենք ալքիմիկոսները իրենց
«արուեստը», որ այդ դարերում նշանակում

Այստեղ միանգամայն պարզ ու որոշակի
կերպով է ընդգծված «քիմիականության ա-
րուեստի» շահափետ, պակաս տանջալից լի-
նելը և այն, որ մարդկանց հոգեկան բավա-
րարություն էր բերում և աղքատությունից
ազատում: Հենց դա էլ այդ արհեստով
զբաղվելու բուն նպատակն էր, եթե մի կողմ
թողնենք ոսկի ստանալու ցնորքը:

Ալքիմիկոս դառնալը հեշտ գործ չէր
հրկու պատճառով: Ամենից առաջ՝ այն պս-

¹ Մատենադարանի ձեռագիր N 2527, էջ 8բ:
Նույնը տե՛ս նաև Կ. Ղ ա Ֆ ա դ ա ր յ ա ն, Ալքիմիան
պատմական Հայաստանում, էջ 59:

հանջում էր մեծ համարվյալն ունեցող արհեստավոր, այլև գրագետ, կրթված մարդ լինել. «զի պարտ է մարդկանց, որ զարուեստս զայս գործեն, զի մտացի իցեն և նուրբ և խորու հասկանան և իմանան»¹: Երկրորդ հենց այն պատճառով, որ այդ արհեստը շահավետ ու եկամտաբեր էր, այն դադարի էր պահվում և հանդիսանում էր սահմանափակ շրջանների մասնադիտությունը և այդ խիստ նեղ շրջանները ոչ մի մրցույթուն չէին հանդուրժում: Ամենհամուտ արհեստավորը, ասենք ոսկերիչը, պղնձագործը կամ դեղագործը մեծամեծ դժվարություններ հաղթահարելու և երկար ժամանակ կորցնելու դնով միայն կարող էր տիրապետել այդ արհեստին: Ալքիմիկոսները ասում էին. «Վարդապետքն և երգողքն [վարպետները և վարպետացուները] արուեստիս այս միջին և տարակոյսինք խօսեալ են. զի եթէ յայտնի և պարզ խօսեալ էին՝ ամենեքեան իմանային և ուսանէին, և արուեստս այս անարժեք լինայր»²:

Արհեստը, կամ գոն նրա որոշ նւրբությունները համբարության շրջանակներում զադարնի պահելը բնորոշ էր միջնադարյան բոլոր արհեստավորների համար և շատ ավելի ալքիմիայի համար, որը սկզբից ևեթ հռչակվեց «ծածուկ արուեստ» և մինչև վերջ այդպիսին էլ մնաց: Մյուս կողմից ալքիմիայի՝ աշհեստագործական բնույթը և եկամտի աղբյուր լինելը ակնհայտ է և այդ է պատճառը, որ նա շահամանափակվեց արհեստի որևէ նեղ ճյուղով, ասենք ոսկերչությունում, այլ ընդգրկեց արհեստագործության մի շարք ճյուղեր, որպեսզի աշխատանք, արտադրանքի սպառում և եկամուտ ապահովի ալքիմիկոսներին, որոնց թիվը թեև փոքր էր, բայց աննշան չէր: Այդ է պատճառը, որ ալքիմիական ձևագրերում հանդիպում են գուտ կիրառական նշանակու-

թյուն ունեցող նյութերի՝ ներկերի, թանաքների, դեղորայքի, լաքերի, անուշահոտ ջրերի և յուղերի, օդու, օճառի, անգամ պանրի, կենդանական յուղերի և այլ նյութերի պատրաստման «կերպեր»: Դրան նպաստել է և այն, որ ֆակտի ունենալով ալքիմիական գրքերի նմանօրինակ բնույթը, նրանց հետագա արտադրողները լրացրել են ձևագրերը դուա կիրառական նշանակություն ունեցող նյութերի պատրաստման այդ «կերպերով»:

4. ՄԻՋԻՆ ԴԱՐՆՈՒՄ ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԶԲԱՂՄՈՒՆԵՆԵՐ

Մի շարք դբադմունքներ, որոնք այժմ արհեստ չեն համարվում և արտադրական նշանակություն երբեք չեն ունեցել, միջին դարերում արհեստ էին համարվում և դրանց գծով ևս քաղաքներում դոյացել էին շարքեր անգամ համբարություններ: Ուստի միջնադարյան արհեստագործության մասին խոսելիս, անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել նաև այդ դբադմունքների վրա:

Մսագործություն: Բնակչությանը մսեղեն սննդով ապահովելու համար, քաղաքներում մորթում և վաճառում էին ամեն տեսակի անասուններ, որոնք «սուրբ» էին համարվում, այսինքն որոնց միսը կարելի էր ուտել:

Միսը մորթում և իրենց կուղպակներում վաճառում էին մսագործները: Քաղաքների շուկաներում ըստ Կրեույթին կային մսագործների շարքեր, որտեղ վաճառվում էին խոշոր եղջերավոր անասունների, ոչխարի, խոզի միս, և ամեն տեսակի թռչնեղեն: Այդ առթիվ պայտերները որոշ վկայություններ պահպանել են: Տաջիկական հեղինակ Նասիր Խոսրովը, որը 1046 թ. եղել է Վասպուրականի Ոստան քաղաքում, ասում է. թե «այստեղի շուկայում խոզի միսը վաճառում էին այնպես, ինչպես ոչխարի միսըն է վաճառվում»³:

¹ Մատենադարանի ձևագիր № 2527, էջ 13ա:

² Նույն տեղում, էջ 13ա. տե՛ս նաև Կ. Ղաֆարյան, Ալքիմիան պատմական Հայաստանում, էջ 15:

³ Насир-и Хусраву, Сафарнамэ, М.—Л., 1933, стр. 33.

Քաղաքներում իրենց կուղւակներն ունեցող մագործներին է նվիրւած նաև Վարդան Այգեկցու առականերից մեկը¹։

Խորտկարարություն։ Քաղաքներում կային խորտկարարներ, որոնք սպասարկում էին ոչ միայն օտար վաճառականներին, ճամբորդներին, այլև տեղական բնակչության մի մասին։ Խորտկներ պատրաստող կուղւակատերերը կոչվում էին խոհագործ, խոհակեր, խոհարար, խորտկարար կամ խոհավաճառ²։ Նրանք իրենք էլ պատրաստում, և՛ վաճառում էին ամեն տեսակի խորտիկներ։ Խորտկարարները ևս քաղաքներում առանձին շարք էին կազմում, որտեղ դիմելով ամեն մարդ կարող էր ստանալ իր պահանջած ուտելիքը, իսկ խոհավաճառները դրանից նկատելի շահ էին ստանում։

«Խոհավաճառութիւն, — կարդում ենք մի գրվածքում, — յամենայն քաղաքի եղև՝ ոչ ի սակս վնասու, այլ ամենեին ներհակապէս։ Ամենայն, որ առ խոհավաճառութիւն և վաճառականութիւն և պանդոկապանութիւն սևուք են ընդ դաւաճանութեամբ և ընդ վարշելեօք եղին նախատանօք»³։

Խորտկարաններ տեսին ամենից առաջ թաղավորները, իշխանները, մեծատունները, վաճառներն ու եկեղեցիները։ Այդ եղելով ժամը նկատի ունի Մխիթար Գոշի մի առակը, որի մեջ ասվում է, թե «Ասիւծ և արջ և դաշ ի միասին ցանկացեալ ասեն. է՛ր լինիմք հրմակեր, ըմբռնեսցուք զումն ի մարդկանէ՛՞ զի ըստ օրինակի իւրեանց զորսս մեր կերակուր մեզ պատրաստեսցէ. և կալեալ զումն արարին խորտկարար»⁴։

Բայց մեզ ավելի հետաքրքրում է այն, որ խորտկարարը քաղաքի շուկայում խորտիկներ էր պատրաստում ու վաճառում ամեն տեսակի հաճախորդների ու դնորդ-

ների։ Թեև այդ բանը կատկածանքի ենթակա չէ, բայց բերենք մի վկայություն։ Վարդան Այգեկցու առականերից մեկում պատմվում է, թե դատավորը իր հյուրերին հյուրասիրում է շուկայի հացով, խորովածով ու գինիով և իմացվում է, որ հացը խաբազից է փնված, միսը մագործից, իսկ գինին՝ գինեվաճառից, ըստ որում այդ մթերքները ցածրորակ են եղել։

Գինեվաճառ։ Քաղաքների շուկաներում լինում էին և գինետներ։ Այստեղ գինեվաճառները գնորդներին վաճառում էին մեծ քանակովյամբ գինի կամ ուղղակի հաճախորդները գինետում մտնելով գինի էին խմում և նույնիսկ որոշ ուտելիքներ ստանում։ Դվինի և մյուս քաղաքների գինետների մասին գովեստներով են խոսում արար մատենագիրները։

Հիշատակվում է, որ այս գինետներում հաճախորդները գինարքուքով էին դբաղվում։ Նասիր Նոսրովը Ոստանի մասին խոսելիս ասում է, թե այդ քաղաքի շուկայում կանայք տղամարդկանց հետ միասին նստած, առանց պատկառանքի, գինի էին խմում⁵։

Բաղանեպանություն։ Ինչպես Մերձավոր Արևելքի շատ քաղաքներում, Հայաստանի քաղաքներում ևս կային բաղնիքներ, դբբանց թվում և «հասարակաց» բաղնիքներ։ Բաղնիքի հնոցը վառելու և հաճախորդներին սպասարկելու համար լինում էին հատուկ աշխատողներ, որոնք կոչվում էին բաղանեպան կամ բաղանապան⁶։ Բաղնիքը կարու է պատկանել առանձին մարդկանց, որոնք նույնպես կոչվում էին բաղանեպան, բայց աշխատողներից տարբերվելու համար հաճախ կոչվում էին բաղանեպան։ Չեղաները մեծատուններն ու եկեղեցիները ևս ունենում էին հասարակաց բաղնիքներ, որոնցից եկամուտ էին ստանում։ Բաղնիքներում աշխատում էին նաև սևագործ բանվորներ՝ փայ-

¹ Ժողովածուք առակաց Վարդանայ, հատ. 2, էջ 245։

² Նշք, տես համապատասխան բառերը։

³ Պղատոն, Յաղազս օրինաց, ժԱ, տի՛ս ՆՃԲ։

⁴ Մխիթար Գոշի առակները, Երևան, 1951, էջ 88։

⁵ Насир - н Хусрау, Сафарнаме. стр. 38.

⁶ Յայամատուր, նսյեմբերի ժէ օրվա ընթերցելիքում։

տահատներ, չրկիրներ, որոնք խեղճ ու ըն-
չազուրկ մարդիկ էին:

Աղբարություն: Միջին դարերում հատուկ
արուեստ» էր հանդիսանում նաև աղբա-
րությունը:

Միջնադարյան տղիտուվյունն ու խավա-
րըն էին ծնունդ տալիս աղթարությանը:
Հիվանդներին, մանավանդ հոգեկան հի-
վանդներին՝ «այսահարներին», աննորմալ
կառուցվածքով ծնված երեխաներին «բժըշ-
կելու» համար դիմում էին աղթարների ծա-
ռայությունը: Աղթարները նաև վիճակ էին
զցում, մարդկանց բախտն էին գուշակում,
աղթարական արարողություններ էին կա-
տարում՝ զանազան առիթներով:

Քաղաքային կյանքի՝ զարգացման հետ
աղթարներն սկսեցին դբաղվել նաև մարդ-
կանց զբաղմունքին ու ոճեցվածքին վերա-
բերող հարցերի գուշակումով, իսկ քաղաքա-
յին բարքերի համեմատաբար ազատությունը
նպաստեց նաև մարդկանց վարքի, սիրո,
ատելության գուշակման և համապատաս-
խան «կասպող» աղթքների «սիրո դեղերի» և
նման դեղատոմսերի ու հմայուվյունների
առաջացմանը:

Աղթարությունը դբավորներից շատերը
քաղաքային կյանքի, կրթության դործի սրոշ
զարգացման շնորհիվ գրագիտություն էին
ձեռք բերում, գրքեր գրում, կամ թարգմա-
նում, որպեսզի հաջողութամբ դբաղվեն
իրենց «արուեստով»: Այս եղանակով առաջ
եկավ բավականաչափ, աղթարական դրա-
կանություն, որից բազմաթիվ նմուշներ հա-
սել են մեզ և պահվում են Մատենադա-
րանում: Աղթարական դրականության ու-
ռումնասիրությունը կարող է պարզել միջ-
նադարյան գյուղի և քաղաքի կենցաղի, ինչ-
պես և միջնադարյան իդեոլոգիայի հետա-
մնաց և սեակցիոն կողմերը, նաև շատ հնից
եկող սրոշ պատկերացումներ:

Դավիթ Ալավկա որդու Դատաստանա-
դրքում նախորդությունը դատապարտվում է և
այդ կասկածությունը թվարկվում են աղ-
թարների զանազան հմայուվյունները, որոնք

դիտվում էին իբրև աստծու, նրա եկեղեցու և
հավատի դեմ ուղղված շար ու սատանայա-
կան գործողություններ, մանավանդ որ այդ
գուշակները աղթքներով ու հմայուվյուննե-
րով իրենց ձեռքն էին ձգում և հողեորական-
ների այն եկամուտները, որ նրանք ստանում
էին՝ բերքը, կալը, հնձանը, արհեստները և
այլն շարից կապելու համար: Դավիթ Ալավ-
կա որդին նշում է, թե աղթարները դեբրի
անուններով, անհասկանալի բառերով ու
ձևակերպումներով հմայական թղթեր էին
գրում կապում մարդկանց և անասունների
վրա, թքում էին հիվանդների վրա ու ձեռքով
շփում իբրև թե շար աչքից փրկելու համար,
կրակի կայծ էին զցում ջրի մեջ, կասպու
հալում, լցնում ջրով լիքը ամանում և դնում
հիվանդի կրծքին իբրև թե սրտաթափի, ջեր-
մի և ատամացավի դեղ է: Նրանք բազմաթիվ
հմայուվյուններ էին կատարում ծննդի,
հարսանիքի, մարդկանց ձանապարհ զցելու,
տնից մեռել հանելու դեպքում, հնձանի, կա-
րասի, կալի, անասուն մորթելու, ամանից
ուտելիք հանելու, հանդերձ ձևելու վրա և
այլն:

Հմայուվյուններ էին կատարվում «ի վե-
րայ որսոց, այլև ի նարաւտաներկութիւնս,
ի յոստայնանկութիւնս, այլև յամենայն աւ-
րինակս արուեստից»: Նայած, թե ինչ օր է
կամ ինչ ժամանակ, դրան համապատասխան
աղթելվում կամ թուլատրվում էին մարդ-
կանց զանազան գործողությունները: Հմայ-
վում էին նաև արհեստները. «Եւ ամենայն
արուեստաւոր ի մոտս տարոյն յարուես-
տըն իւրեանց հմայն: Դարբինն կոտանաւ մի
հարկանէ զսալ, ոստայնանկ թել մի քարշի
կկոցէ և բիճօն երիս հարկանէ, մանոցն
թել մի ձգէ և տայ զայն զիլիկաւ: Այնու-
հետև հեղինակը շարունակում է թվարկել
բազմաթիվ հմայուվյուններ, որոնք կատար-
վում էին ամեն առիթով, անգամ եկեղեցա-
կան տոներին¹:

¹ Դավիթ Ալավկա որդու կանոնները (Առանձնա-
տիպ «Էջմիածին» ամսագրից, Երևան 1953, էջ 42):

Պարտիզայանություն: Մատենադարանի № 695 ձեռագրում, որը Անիի երազահանն է պարունակում, իբրև ինքնուրույն արհեստ, հիշատակված է նաև պարտիզայանությունը¹: Քաղաքներում պարտիզայանությունը զարգացած էր, այնտեղ կային թագավորներին, իշխաններին, վանքերին, մեծատուններին պատկանող պարտեզներ, անգամ ծաղկանոցներ, որոնց վրա խնամք էին տանում փորձված պարտիզայանները և դա նրանց արհեստն էր ու եկամտի աղբյուրը: Քաղաքների բնակչության աճի հետ, քաղաքների մերձակայքում և մոտակա գյուղերում ու ավաններում շատ պարտեզներ էին մշակվում՝ քաղաքային բնակչության և շուկայի պահանջը բավարարելու համար: Դրա շնորհիվ պարտիզայանների թիվը աճում էր: Պարտիզայանները գիտեին ծառերը պարարտացնել, պատվաստել, որոշ հիվանդությունների առաջն առնել և զաղափար ունեին սելեկցիայի մասին: Նրանք ընտրության ու մշակման եղանակով ստանում էին ավելի լավ մրգեր ու պտուղներ:

Փայտակոտորենք: Անիի երազահանում, իբրև առանձին արհեստ, հիշատակված է նաև փայտ կոտորելը²:

Հայկական մատենագրություն մեզ փայտակոտորենի վերաբերյալ հիշատակություն հանդիպում է՝ Առնոդ երեցի մոտ 774—775 թթ. տպատամբության կապակցությամբ, սրտեղ պատմվում է, թե շնայած իրենց հերոսական գիմադրության, արաբական զորքերի դեմ, հայ ասպատամբները պարտություն կրեցին և նրանցից շատերը զոհվեցին, իսկ մնացածներին արաբները գերի տարան ջրկիր և փայտակոտոր դարձնելու համար:

Գուսաններ և երամիջաներ: Քաղաքներում գոյություն ունեին գուսաններ, որոնք շրջելով շուկաներն ու հրապարակները, փողոցներն ու բակերը, պալատներն ու հյուղակները, իջևանները, հյուրատները, պառ-

դոկները, գինետները երգում էին զանազան վեպեր, ասքեր, ժողովրդական երգեր, հորինում զանազան գովքեր և նվագակցում փանդիոններով, քնարներով ու այլ նվագարաններով:

Սկեզեցիներ և հողերականությունը սլաքար էին տանում նրանց դեմ, իսկ ժողովուրդը շատ էր սիրում նրանց և առիթ չէր բաց թողնում լսելու նրանց երգն ու նվագը: Գուսանները նվագում ու երգում էին նաև ժողովրդական բոլոր տեսակի հանդեսների ժամանակ: Անիի երազահանում, իբրև առանձին արհեստավորներ, հիշատակված վն գուսանը, փողզարկը (փող նվագողը), տոպտոպարկը (թմբուկ խփողը), պկազարկը (պարկապղուկ նվագողը)¹: Նրա ժիշտներին արհեստավոր համարելը միանգամայն բնական է, որովհետև ժողովրդի աչքին բացի էրկրապործությունից, անասնապահությունից և առևտրից, մնացած գրաղմուտները որոնցով մարդն իր ասյուրուտն էր հողում արհեստ կին:

Գուսանները, ինչպես նաև ժողովրդական դործիքների վրա նվագող մյուս նրաժիշտները, Հայաստանում շատ վաղուց էին հայտնի: Դեռևս հնում մեծ հռչակ էին վայելում գողթան երգիչները կամ գուսանները²:

Նրբ քաղաքները և քաղաքային կյանքը վարդացան, գուսաններն ու երաժիշտները քաղաքի կենցաղի անբաժան մասը դարձան և այժմ նրանք նրգում ու նվագում էին ոչ միայն ժողովրդական հարսանիքներում, հանդեսներում, թատրոններում, և իշխանների պալատներում, այլև շուկաներում, հրապարակներում, կիրակնօրյա տոնավաճառներում և նոր զարգացող քաղաքային սենկոր խավի հանդեսներում:

Իերասաններ և խեղկատակներ: Քաղաքներում վարդացած էր և թատրոնը, որի

¹ Մատենադարանի ձեռագիր № 95, էջ 220ա:

² Մ ո վ ս ս ո խ ո Ր ե ն ա ց ի, Պատմություն, էջ 191: Տե՛ս նաև Յայամուրթը, նոյեմբերի 5, դեկտեմբերի 3, և նաև ձեռագիր № 8030, էջ 257, Յ Ր ի կ, Բոսնասեղծություններ, 1941, էջ 111:

¹ Մատենադարանի ձեռագիր № 695, էջ 220բ: Տե՛ս նաև Յայամուրթը, մարտի Բ:

² Մատենադարանի ձեռագիր № 695, էջ 220բ:

դեմ պայքար էր մղում եկեղեցին: Միջին դարերում դերասանությունն էլ էր արհեստ համարվում:

Դերասաններն իրենց արվեստը ցուցադրելու շատ առիթներ էին գտնում ժողովրդական հին բաղմաթիվ հանդեսների, արարողությունների, տոնախմբությունների ժամանակ, որոնց համար դուրսվում են ունեն ավանդաբար բանավոր հաղորդվող բնագրեր, ծեսեր և արարողություններ, որոնք ղուգակցվում էին թատերական խաղով, երգ ու պարով¹:

Բացի դերասաններից, այդ տոներին հանդես էին դալիս և խեղկատակները, միմտը կամ ճուհին:

Խեղկատակներ կային նաև թագավորների և իշխանների պալատներում:

Մի խեղկատակի կմախքը գտնվել է


¹ Գրիգոր Նարեկացի, Նարեկ աղավթից, Վենետիկ, 1827, էջ 156—157: Հայոց նոր վիաները, էջ 47:

Պահլավունիների ամրոց Անբերդի պեղումների ժամանակ: Խեղկատակը խեղված, այլանդակված է եղել դեռևս մանուկ հասակում: Ակադ. Հ. Օրբելին ենթադրում է, թե այդ խեղկատակը կարող է բերված լինել Եվրոպայից, ուրտեղ, մարդկանց խեղելու և իրրև խեղկատակ, թանկ զնով ծախելու երեւելույթը սովորական էր¹:

«Այլ արհեստներ» անվան տակ մեր քըննարկած արհեստները և արհեստ համարված ղբաղմունքները կազմում էին միջնադարյան քաղաքի արհեստագործության և կենցաղի անբաժան մասը, ուստի առանց նրանց, թևրի կլիներ ինչպես արհեստագործության, նույնպես և քաղաքային բնակչության ղբաղմունքի, դիտելիքների, կյանքի ու կենցաղավարության պատկերը:

¹ И. Орбели, Баян и скоморох XII в., Памятники эпохи Руставели, Ленинград, 1938, стр. 168—170.





Ի Ն Ն Ե Ր Ո Ր Գ Գ Լ Ո Ւ Ե

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՍԺԱՆՈՒՄԸ ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՆՋԱՏՈՒՄԸ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՅ

Արտադրության զարգացման տեսակետից ամենախոշոր նշանակություն ունեցող երևույթը, որ տեղի ունեցավ միջին դարերում, դա արհեստի անջատվելն էր երկրագործությունից և կենտրոնանալը քաղաքներում, դրա հետևանքով քաղաքի անջատվելը գյուղից և նրանց միջև համագործության առաջանալը: Աշխատանքի հասարակական այն մեծ բաժանումը, որը դրսևորվեց երկրագործությունից՝ արհեստագործության անջատումով, սկսվում է դեռևս առաջին դասակարգային հասարակություն՝ ստրկության դարաշրջանում:

Ստրկատիրական հասարակության նըկատմամբ վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում տեղի է ունենում հակառակ երևույթ՝ արհեստագործությունը խիստ նվազում է, մասամբ էլ լուծվում գյուղական համայնքի մեջ և միայն ֆեոդալիզմի ծաղկման ժամանակաշրջանում աշխատանքի այդ բաժանումը տեղի է ունենում ավելի լայն բազայի վրա, նոր պայմաններում ու նոր բովանդա-

կություններ: Ի տարբերություն վերադանդայես ստրկական աշխատանքի վրա հենված արտադրության, արհեստագործությունը այժմ երևան է գալիս, իբրև մի արտադրություն, որի հիմքը կազմում է արտադրության միջոցների տեր մանր արտադրողների աշխատանքը: Արհեստագործության անջատումը գյուղատնտեսությունից խոշոր նշանակություն ունեցավ, որովհետև դրա շնորհիվ էր հիմնականում, որ զարգացան արհեստագործությունը և նրա տեխնիկան, մինչ այդ եղածի համեմատությամբ խոշոր շահով աճեց պահանջը արհեստագործական արտադրանքի նկատմամբ, զարգացավ առևտուրը, ինչպես և սպորանքա-գրամական շրջանառությունը: Մանր ապրանքային արտադրության կենտրոնը և սպառման գլխավոր շուկան դարձել էին քաղաքները, որոնց աճի և զարգացման հետ ավելի ու ավելի երկրորդական դեր են խաղում գյուղի և ֆեոդալական գոյակներին ու խոշոր վանքերին կից գործատները: Քաղաքի տեր արքաներին և այլ ֆեոդալներին այժմ ավելի ձեռնառու էր

ստանալ իրենց պաշտօնի և զորքի պետքերի համար՝ իրենց ենթակա քաղաքի արհեստավորների արտադրանքի մի մասը և զրամական հարկեր, քան ընդարձակել սեփական ղղյակին կից արհեստանոցները, որտեղ աշխատող արհեստավորը ավելի քիչ էր շահագրգռված արհեստի և նրա տեխնիկայի զարգացմամբ, քան քաղաքի ազատ արհեստավորը:

Քաղաքի արհեստավորը իր արտադրածի ավելի մեծ բաժնի տերն էր, ուստի ավելի էր շահագրգռված բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, ճորտ արհեստավորի համեմատությամբ նա ավելի ազատ էր իր ստեղծագործական ուժերը զարգացնելու և ծավալելու մեջ, թեև նա նրկատելիորեն կաշկանդված էր համքարական սահմանափակումներով: Խոշոր դեր էր խաղում տվյալ քաղաքի շուկան նույն քաղաքի արհեստավորների՝ համքարությունների ձևով սպահելու ձգտումը: Քաղաքի արհեստավորները պետք է զարգացնեին իրենց աշխատանքի տեխնիկան, տվելի բարձր որակով ու մաշելի գներով արտադրեին, որպեսզի ապահովվեր արտադրվածի սպառումը և շահավետությունը, մի հոգատարություն, որից՝ ի վնաս իրեն և արհեստի զարգացմանը՝ ազատ էր դրակի կամ վանքի ճորտ արհեստավորը:

Քաղաքի արհեստավորը որոշ առավելություններ ուներ նաև գյուղի արհեստավորի նկատմամբ՝ ֆեոդալից նրա կախվածության աստիճանի և ֆեոդալի նկատմամբ բնական պարտավորությունների ամուսկետից: Գյուղի արհեստավորը գտնվում էր անմիջական կախման մեջ տեղական ֆեոդալից, կրում էր զանազան պարտավորություններ և հարկատու էր թե՛ նրան և թե՛ պետությանը: Քաղաքի արհեստավորը սովորաբար ազատ էր անմիջական կախումից, նրա աշխատանքային և այլ պարտավորությունները սահմանափակ էին և սովորաբար կապված էին քաղաքում կատարվող հասարակական նշանակություն ունեցող շինարար-

ություն, քաղաքի պարխուսների ամրապնդման և պաշտպանության հետ: Նա հարկատու էր միայն քաղաքի տիրոջը կամ սրբատությանը, իսկ հաճախ այդ երկուսը համընկնում էին: Խոշոր նշանակություն ուներ և այն հանգամանքը, որ քաղաքային արհեստավորությունը միավորված եղբայրությունների՝ համքարությունների մեջ պայքարում էր շահագործողների դեմ, պաշտպանում էր իրավունքներն ու շահերը ֆեոդալների ոտնձգություններից և համատեղ ջանքեր գործադրում արտադրության ու սպառման պայմանների բարելավման ուղղությամբ:

Ինչպես տեսանք, քաղաքի բնակչության որոշ արտանությունները նշվում են դրականության մեջ: Դա, նույնիսկ իրավական նորմա էր դարձել և կոչվում էր «պայման քաղաքականաց»: Դրան համաձայն «Արք քաղաքացիք առաւել քան ղգեղջուկս պատուիցին...»¹:

Բնական է, որ այս ամենի, մանավանդ գյուղացիության ճորտացման պրոցեսի հետքերն ստատկացման հետևանքով գյուղացիները և գյուղական արհեստավորները փախչում էին քաղաք:

Սակայն դա չի նշանակում, թե գյուղում արհեստագործությունը զբաղվողները շմայցին: Գյուղական արհեստավորությունը միշտ էլ գոյություն է ունեցել, սպասարկելով արհեստագործական արտադրանքի՝ նկատմամբ գյուղացիության պահանջները մեծ մասը: Գյուղական կենցաղում գործածվող կավանդների, փայտե իրերի, գործիքների, սարքերի պատրաստելը, թել մանելը, կուպիտ գործվածքներ հյուսելը, դարձնությունը, որմնագրությունը և այլն գյուղերում էլ տարածված արհեստներ էին, թեև արտադրության տեխնիկայով, արտադրողականությունով և արտադրանքի որակով զիջում էին քաղաքներում զարգացած արհեստներին:

¹ Մ ի ի ա թ Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 318:

Գյուղերում մշտապես դոյուբյուն է ունեցել նաև տնային արդյունաբերությունը, որի մասին Վ. Ի. Լենինը ասում է. «Ճնային արդյունաբերություն - մենք անվանում ենք հում նյութերի վերամշակումը հենց այն տնտեսության մեջ (գյուղացիական ընտանիքում), որն ինքն է արդյունահանում այդպիսիները»¹:

Մեք խոսքը վերաբերում է այն բանին, որ արհեստագործական արտադրանքի կենտրոնը դառնում է քաղաքը, որը և որոշում է արհեստների զարգացման և առաջադիմությանն ուղիները:

Երկրագործությունից և արհեստագործությունից անջատվեց նաև առևտուրը, որի մասին կխոսվի առանձին:

Կ. Մարքսը նշելով, թե ուրբան պարզ է աշխատանքի անհրաժեշտությունը ազգերի և ընդհանրապես հասարակության գոյության համար, ավելացնում է. «Ճիշտ այդպես էլ ամենքին հայտնի է, որ մթերքների նկատմամբ մասսաների սպառողական պահանջի տարբեր զանգվածներին համապատասխան պահանջվում է հասարակական համատեղ աշխատանքի տարբեր և քանակապես որոշակի մասսա: Ինքնին հասկանալի է, որ որոշակի հարաբերությամբ հասարակական աշխատանքի այս բաժանման անհրաժեշտությունը չի կարող ոչնչացվել հասարակական արտադրության որոշակի ձևով. փոխվել կարող է սոսկ նրա դրսևորման ձևը»²:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քաղաքային արհեստների զարգացման, նրանց տեխնիկայի նշանակալից առաջադիմության, ապրանքային արտադրության նկատմամբ պահանջի զգալի աճի հետևանք

քով սեղի ունեցավ աշխատանքի բաժանման խորացումը նաև արհեստագործության մեջ:

Արտադրության, կյանքի և կենցաղի այն պայմաններում, որոնք դոյացել էին զարգացած ֆեոդալիզմի շրջանում, ունիվերսալ արհեստավորները, ասենք դարբինը կամ կաշեգործը, չէին կարող բավարարել մետաղներից կամ կաշվից պատրաստվող սման տեսակի իրերի պահանջները:

Մետաղագործական և կաշեգործական, ինչպես և մյուս բոլոր տեսակի արհեստներից ճյուղավորվելով առաջ էին եկել բազմաթիվ նոր արհեստներ:

Հյուսնության հիմնական արհեստից առաջացած ճյուղերի մասին է խոսում Գրիգոր Մագիստրոսը, ասելով՝ «Ըստ օրէն հիւսանց, ոք արհեստին են մակացուք, ոչ նախտւտ յանտառս կամ փ մայրս ճեպին հատանել փայտս. քանզի այլ ոք են պարապեալ այնոցիկ և այլ, որք հարթեն և սղոցեն և ապա ծայրագոյնքն ճախարակօք և այլովք գործարանօք գեղապանծ զնոսա յարդարին դահաւորակս և աթոռս և այլ ինչ գործարանս: Այսպէս և որք ոսկւոյ են պարապեալք և երկաթոյ և պղնձոյ»¹:

Անիի երազահանում գտնում ենք մտտ քառասոմն արհեստի հիշատակություն: Դրբանցից մսագործի և փալանագործի արհեստները առանձին էջի վրա են հանդիպում, իսկ մնացածները թվարկված են միևնույն տեղում: Այդ հատվածը մեջ ենք բերում ամբողջովին ընդդեմով արհեստները և այլ զրաղմոմքները, որոնք հանդիպում են բնագրում «արուեստ» անվան տակ, արհեստների և զբաղմոմքների վրա դնելով հերթական համար:

«Ձի՞նչ արուեստ կայ, որ կու քանի. հանց ասեն թէ դարբին՝ տեսանես յերպի՝ մեծ մարդ է, թէ փնքն դարբնութիւն սունէ՝ գանձ գտանէ, թէ լինի դարբին զմարդու բանն յատեանն կատարէ— հանց մարդ

¹ Վ. Ի. Լենին, հատ. 3, Երևան, 1947, էջ 414:

² К. Маркс и Ф. Энгельс. Избранные письма. ОГИЗ, 1937. стр. 208.

¹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 9:

լ, գուսանն² հանց մարդ լինի, որ յայլոց շահ գայ, սլեհարարն³ հանց մարդ լինի, որ օգնական է, սառածն⁴, և մազմանն⁵ կանայք լինին, լկամարարն⁶ ատենահաս մարդ լինի, նետարարն⁷ ուղղորդախօս մարդ լինի և ուղղորդ, թամբարարն⁸ իրաւարար մարդ լինի, նալպանդն⁹ յայլոց լաւարար մարդ լինի՝ կոպղայքարարն¹⁰ առաջնորդ մարդ լինի, փոքեզիկն¹¹ ինչ... սլընձադործն¹² հաւատացեալ մարդ է, և շարշարկոտ, ցորենածախն¹³ երկրակալ մարդ է, ոսկերիչն¹⁴ ստախօս, ներկարարն¹⁵ հանց մարդ լինի, որ իւր ձեռնէն լաւութիւն գայ այլոց, և դէպ ինքն սուտ շատ ասեն, լկամարարն¹⁶ սրբահաւատ մարդ է, աղօթարարն¹⁷ յերազն լաւ մարդ լինի, դերձակն¹⁸ հաւատով մարդ է, մուճկրարն¹⁹, և ջուհահն²⁰ հանց մարդ լինին, որ զայլոց բարին կամենան սպասարարն²¹ և բրուտըն²², հայեղեցոյն լաւ մարդ լինին, նայ ևս գիտնական լինին, որ զայլոց փուտ հանեն, հալաւարարն²³ սրբահաւատ մարդ է. հացրարն²⁴ ուղղորդարար և պարոն լինի, զրամզարկն²⁵ և փողազարկն²⁶, սլըկազարկըն²⁷, տօպ[ա]օպզարկն²⁸, և այլն ի յայս նըման, ամէնն անիրաւ մարդիք են և սոցին ձայնն ամենեկին հիւանդութիւն է, գողն [պետք է լինի գողըն]²⁹ հիւանդ մարդ է, բամպակծախն³⁰ հիւանդութիւն է, հաճամն³¹ կամքն կատարի, հիւիւն³², և մօքերիկն³³, և խարսպանդայն³⁴, և ուղտապանն³⁵ և ըռքէպտարն³⁶ այդ ամէնդ թատալիրարար մարդիք են. մայալումն³⁷ գլխուոր մարդ է, պարտիզպանն³⁸, և բաղնէպանն³⁹, և դարպըսպանն⁴⁰—այս ամէն գանձ են, և տղայք. և քարգործն⁴¹ հարուստ մարդ է և հարկեւոր, ջահրարն⁴² տխմար մարդ, փայտ կոտորողն⁴³—ճաշուչ է, նատաւն⁴⁴ գզրափախուց մարդ է, սանտրարարն⁴⁵ լաւ մարդ է, հոլնարարան⁴⁶ հալալաբան մարդ է, ապա թե բանի լինի՝ մարդուն ըստ ինչն է՝:

1 Մատենադարանի ձեռագիր № 695, էջ 219բ, 220բ: Առաջին անգամ հրատարակել է Վ. Աբրահամյանը, տե՛ս նրա «Արհեստները և համբարային կազ-

միջնագարչան արհեստների և նրանց ձյուղերի թիվը, իհարկե, քառասունից շատ ավելի էր: Նախորդ գլուխներում կատարված ուսումնասիրություն հիման վրա կազմել ենք արհեստների, նրանց մասնաձյուղերի և միջին դարերում արհեստ համարված զբաղմունքների մի ցանկ, որը բերում ենք ստորև:

Յ Ա Ն Կ

Արհեստների և նրանց մասնաձյուղերի միջնագարչան Հայաստանում 9—13-րդ դարերում: (Միևնույն արհեստի մասնաձյուղերը զծիկով ցույց են տրված նույն համարի տակ):

Մետաղագործություն

1. Հանքագործություն կամ հանքահատություն (երկաթահատք, սլընձահատք, կապարահատք, ոսկեհանք և արծաթահանք).
2. Դարբնություն
 - Դարբին գլուղատեսակաճ գործիքներ շինող
 - Դարբին արհեստավորների և այլ սիպի գործիքներ շինող
3. Փականագործություն
4. Դանակագործություն
5. Պայտարություն
6. Զինագործություն (սլեհարար)
 - Զրահարար և վահանագործ
7. Նետարարություն
8. Պղնձագործություն
 - Պղնձագործ ձուլող

մակերպությունները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1946, էջ 45—46:

Երազահանի սույն քննարկը պահպանվել է նաև № 597 (էջ 156բ—157ա) և № 5613 (էջ 371բ—372բ) ձեռագրերում, որոնց մասին մեզ տեղեկություն տվեց Հ. Անասյանը: Վերջին ձեռագրում որոշ արհեստագործություններ բացակայում են, իսկ № 597 ձեռագրում չկան «հաճամն» և «հոլնարարն» բառերը, բայց № 695 ձեռագրում թվարկվածներից դուրս հիշատակված են ևս շորս զբաղմունք «հայկաջոցն», «որսորդն», «ձիածախն» և «մունեղիկն»:

- Պղնձադարձ՝ կոսով, գրվադով
- Կաթնալուսարձուկներ
- Չափազանցություն, անարժանապատեան
- Պղնձե զարդեր պատրաստելը
- 9. Կլեկարարություն
- 10. Ոսկերչություն, արծաթալուսարձուկներ
- Ոսկերիչ կամ արծաթալուսարձուկ, ձուլող, դրվագող, սեւադող
- Ոսկերիչ կամ արծաթալուսարձուկ հյուսող, հատիկներով դարգարող
- Արծնադորձ (էմալապատող)

Կավագործություն, ապակեգործություն

- 11. Կավահատք (կավ հանողներ)
- 12. Տնային կավագործություն (առանց դուրգի)
- 13. Բրուտ հասարակ խեցեղենի (խեցեղենի արտադրություն դուրգով)
- 14. Բրուտ ջնարակած խեցեղենի
- 15. Բրուտ հախճապակու
- Շքալյուսի արտադրություն
- 16. Աղյուսագործություն
- 17. Բրուտ փողրակարար, կղմինդրագործ
- 18. Ապակեգործություն
- 19. Հովնարարություն (ուլունքներ պատրաստելու սրհեստը):

Քարի մշակում և շինարարական առհեստներ

- 20. Քարահատություն
- 21. Քարտաշություն
- 22. Որմնադրություն
- Որմնադրություն քարի
- Որմնադրություն աղյուսի
- Որմնադրություն կավի (մոյրա դենելը)
- 23. Քարակոփություն (քարից իրեր, սարքեր շինելը)
- 24. Քանդակագործություն
- 25. Կրագործություն, գանադործություն (բուրգործություն)
- 26. Գիպսե զարդերի արտադրություն (շենքերի ներքին ճարգարման համար)

- 27. Արմուղ շինելը
- 28. Գրիչ արձանագիր (քարի վրա արձանագրություն փորագրելը)
- 29. Ճարտարապետ
- 30. Մեխրար (սվաղող, դաճող)
- 31. Նկարիչ (որմնանկարիչ)

Փայտի մշակում

- 32. Փայտահատություն
- 33. Խղրարություն (տախտակ քաշելը)
- 34. Հյուսնություն
- Հյուսն գործիքներ շինող, կահագործ, փայտե սարքեր, ճախարակներ, ռազմական մեքենաներ շինող
- Հյուսն առաջագործ
- Փայտից տաշտ, դուսլ, պնակ և այլ կենցաղային իրեր շինելը
- 35. Նավաշինություն, լաստագործություն
- 36. Փայտի դեղարվեստական փորագրություն
- 37. Ածխագործություն

Մանածագործություն և անկավածագործություն

- 38. Մանածարար
- Մազման (մազից լեւ մանելը)
- 39. Շերամապահություն և մետաքսի կաթարություն
- 40. Գյրարություն
- 41. Անկավածագործություն (ոստայնանկ, ջուլհակ)
- Ասվագործություն,
- Կտավագործություն
- Դիպակների և այլ ծաղկազարդ և ոսկեհատ գործվածքներ արտադրելը
- «Աբրեշոմագործ»
- 42. Ներկարարություն
- Դաճարարություն (գործվարքները դրոշմազարդելը)
- 43. Զեռագործ անելը
- 44. Գոտեգործություն, ժանյակագործություն

- 45. Կորպագործություն
- 46. Կապերտագործություն
- 47. Կաճագործություն
- 48. Խորագործություն
- 49. Դերձակություն, հալավարարություն:

Կաշվի և մորրու մշակման հետ կապված արհեստներ

- 50. Կաշեգործություն կամ խաղախորդություն
 - Կոպրա կաշիների մշակում
 - Սեկ պատրաստելը
- 51. Լկամարարություն
 - Խարազանագործություն
- 52. Կոշկակարություն
 - Մուճակարարություն
- 53. Սառաճություն
 - Պատենագործություն (սառը զենքերի պատյաններ պատրաստելը)
- 54. Լարարություն
- 55. Մուշտակագործություն
- 56. Մուշտակարարություն
- 57. Գտակկարություն
- 58. Համետագործություն
- 59. Քսակկարություն

Գրքի և գրչության հետ կապված արհեստներ

- 60. Մագաղաթագործություն
- 61. Գրչության համար անհրաժեշտ ներկեր և թանաքների արտադրելը
- 62. Գրչություն (ձեռագրեր արտադրելը)
- 63. Ծաղկարարություն (մանրանկաչիչ)
 - Ոսկող (մանրանկարների ոսկեզօծում)
- 64. Կազմարարություն:

Այլ արհեստներ

- 65. Ոսկորի մշակում
- 66. Սանտրագործություն
- 67. Սատափարարություն
- 68. Աղեղնագործություն

- 69. Երաժշտական զործիքներ պատրաստելը

- 70. Աբեթ և Վրացկի» պատրաստելը
- 71. Կողովագործություն և զամբյուղագործություն
- 72. Մաղագործություն
- 73. Դրամահատություն (մետաղներից դրամ կտրելը):
- 74. Ակնագործություն
- 75. Ամանկարություն (կտրած կավի ամաններ կտրելը)
- 76. Մամագործություն
- 77. Աղագործություն (բորակ և աղ ստանալը Վանա լճի ջրից)
- 78. Աղահատություն
- 79. Շաքարագործություն
- 80. Վարդաջուր պատրաստելը
- 81. Օճառագործություն
- 82. Դեղագործություն
- 83. Քիմիականություն (ալքիմիա)
- 84. Զիթահացպանություն (ձիթհանում ձեթ պատրաստելը)
- 85. Զրաղացպանություն
- 86. Բաղնիպանություն
- 87. Վարսալիրություն
- 88. Խարաղություն (հացթուխություն)

Միջին դարերում արհեստ կամարված զբաղմունքներ

- 89. Մագործություն
- 90. Խորտկարարություն
- 91. Գինեծախություն
- 92. Աղթարություն
- 93. Պարտիզպանություն
- 94. Փայտակոտրություն
- 95. Դուսանություն
- 96. Վարձակություն, խնդկատակություն, միմտություն
- 97. Երաժիշտ (փողհար, թմբկահար):

Այսպիսով, մենք նշեցինք միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցող 88 արհեստ, 9 արհեստ համարվող զբաղմունք և 30 արհեստային մասնաճյուղ: Արհեստագործության նման լայն ճյուղավորվածությունը

միանգամայն բնորոշ է եղել վարգապած ֆեոդալական քաղաքների համար:

Իհարկե, շատ արհեստավորներ կարող էին տվյալ արհեստին մոտիկ մի քանի մասնաճյուղերով զբաղվել, բայց դա մասսայական երևույթ չէր և վերևում բերված ցուցակում արհեստները, արհեստագիտական մասնագիտությունները ինքնուրույնություն էին ստացել: Այդ բանին, ինչպես կոտեսենք, նպաստում էին նաև համաքարային կարգերը արհեստագործության մեջ, րանի ող համաքարությունները արգելում էին արհեստավորներին իրենց մասնագիտությունից դուրս ուրիշների արհեստով ևս զբաղվել:

Նիստ կարևոր է նշել այն հանգամանքը, որ աշխատանքի բաժանումը ֆեոդալական քաղաքի արհեստագործության մեջ հիմնովյալն տարբերվում էր մասնակատուրայի մեջ տեղի ունեցող աշխատանքի բաժանումից:

Մասնակատուրայի մեջ՝ աշխատանքի բաժանումը տեղի էր ունենում արհեստանոցի ներսում և առանձին արհեստավորներ կատարում էին տվյալ արհեստի կամ արտադրական պրոցեսի հետ կապված առանձին-առանձին աշխատանքներ կամ գործողություններ, որոնք նրանց նեղ մասնագիտությունն էին կազմում, իսկ ամբողջ արհեստի կամ արտադրության ամբողջական պրոցեսի մասին համարյա զաղափար չունեին, հետևաբար արտադրանքը, ասենք մահուղը ստացվում էր բազմաթիվ արհեստավորների ձեռքով ամօնելուց հետո փբրև արդյունք տարրեր մասնագիտության արհեստավորների կողակտիվ աշխատանքի:

Միջնադարյան քաղաքի արհեստագործության մեջ աշխատանքի բաժանումը տեղի էր ունենում ո՛չ թե տվյալ արհեստի կամ արհեստանոցի ներսում, ըստ խորություն, այլ տարածական բնույթ էր կրում, այսինքն նախկինում մի ունիվերսալ՝ արհեստը՝ ճյուղավորվելով, առանձին-առանձին ինքնուրույն արհեստների էր բաժանվել և յուրաքանչյուր ճյուղում արհեստավորը կատարում էր իրի կամ առար-

կայի արտադրության բոլոր պրոցեսները սկզբից մինչև վերջ, որոնց և տիրապետում էր հավասարապես: Ուրեմն այստեղ աշխատանքի բաժանումը նախնական բնույթ էր կրում:

Արհեստանոցի ներսում աշխատանքի բաժանումը կայուն էր ու քարացած. աշխատանքը բաժանված էր վարպետի, վարպետացուի և աշակերտի միջև:

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը խոսելով աշխատանքի բաժանման մասին՝ միջնադարյան արհեստագործության մեջ և նկատի ունենալով, որ այդ ժամանակ արհեստավորները ընդգրկված էին համաքարությունների մեջ, նշում են, որ աշխատանքի բաժանումը միջնադարյան քաղաքներում տեղի էր ունենում ըստ համաքարությունների և ուներ պրիմիտիվ բնույթ:

«Աշխատանքի բաժանումը քաղաքներում՝ առանձին համաքարությունների միջև դեռևս միանգամայն պրիմիտիվ էր, իսկ իրենց՝ համաքարությունների ներսում առանձին բանվորների միջև առհասարակ դեռևս չէր կատարվել: Յուրաքանչյուր բանվոր պարտավոր էր փմանալ մի շարք աշխատանքներ, պարտավոր էր կատարել այն ամենը, ինչ հնարավոր էր կատարել նրա գործիքների օգնությամբ. սահմանափակ հաղորդակցությունը և առանձին քաղաքների թույլ կապը իրար հետ, բնակչության սակավաթիվ լինելը և սպառման սահմանափակությունը արգելակում էին աշխատանքի հետագա բաժանմանը և այդ պատճառով ամեն ոք, ով կամենում էր վարպետ դառնալ, պարտավոր էր տիրապետել իր արհեստին ամբողջությամբ: Ահա թե ինչու միջնադարյան արհեստավորները դեռևս որոշ հետաքրքրություն ունեին դեպի իրենց մասնագիտական աշխատանքը, դեպի այն բանը, որ աշխատանքը լավ կատարեն, մի հետաքրքրություն, որը կարող էր բարձրանալ մինչև պրիմիտիվ՝ զեղաքվեստական ճաշակի աստիճանը: Բայց հենց այդ պատճառով յուրաքանչյուր միջնադարյան ար-

հաստավոր ամբողջովին ներգրավվում էր իր աշխատանքի մեջ, վերաբերվում էր նրան ստրկական նվիրվածությամբ և ավելի էր հնթարկված նրան, քան ժամանակակից բանվորը, որը անտարբեր վերաբերմունք ունի դեպի իր աշխատանքը»¹:

Ֆ. Էնգելսը Կ. Մարքսին դրած մի նամակում նույն երևույթի մասին ասում է, թե համաբարոյությունների մեջ գոյություն ունի աշխատանքի հակառակ բաժանում, հակադիր այն բանին, որը գոյություն ունի մանուֆակտուրայի մեջ—փոխանակ աշխատանքի բաժանմանը արհեստանոցի ներսում, աշխատանքը բաժանված էր համաբարոյությունների միջև»²:

Միջնադարյան քաղաքի բարդ և բազմակողմանի պրոբլեմից, մեր աշխատության ներկա առաջին մասում, ինչպես նկատում է բնօրինակը, քննարկված են միայն մի քանի

հարցեր՝ ֆինոգալական քաղաքի առաջացումը, դրա պայմաններն ու պատճառները Հայաստանում, քաղաքների զարգացումը 9—11-րդ դարերում, արհեստագործության ճյուղերն ու նրանց զարգացումը 9—13-րդ դարերում և աշխատանքի բաժանումը արհեստագործության մեջ:


Մի շարք կարևոր հարցեր, ինչպես՝ ներքին և արտաքին առևտուրը, դրամական շրջանառության աճը, քաղաքների հետագա զարգացումը, նրանց վիճակը 11-րդ դարի կեսից մինչև 13-րդ դարի վերջը, բնակչության կեղեքվածությունը՝ իշխող դասակարգի և տարբեր խավերի կողմից, սոցիալական պայքարի սրվելը և նրա արտահայտությունները քաղաքներում, քաղաքների ներքին կյանքի հետ կապված հարցերը՝ սոցիալական կառուցվածքը, համաբարոյությունների հարցը, քաղաքային ինքնավարության առաջացումը և վերջապես քաղաքների անկումը և դրա պատճառները կազմում են աշխատության երկրորդ մասի բովանդակությունը:

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр. 42—43.

² К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, ОГИЗ, 1947, стр. 361.



ՉԻՆԿԵՐ



အလှူပေးစာ



ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբաս — 251
Աբաս՝ թագավոր — 80, 81
Աբաս՝ որդի Սմբատ Ա-ի — 87
Աբասյաններ — 276
Աբդլա (սմյուս՝ անվանված) — 36
Աբդլմանեհ կրոնավոր — 138
Աբեղյան Մ. — 20
Աբու-Սուար Շադդադի — 74
Աբու-Ֆեդա — 104
Աբու Ալի իբն-Սինա (Ավիցեննա) — 331
Աբուլամբ — 251
Աբումսար՝ ամիրա նփրկերտի — 107
Աբուսալեհ — 278
Աբու-Սահլ — 251
Աբուսաջ՝ ամիրա — 291
Աբու-Ֆազլ-բնյիսակի — 291
Աբու-Ֆազլ Սուրի-Մարիդի — 291
Աբրահամյան Վ. — 17, 18, 135, 143, 152, 205,
Աբրամիոս, տե՛ս Իբրահիմ Ծանալ
Ագաթանգեղոս — 48, 137, 201
Ադամ (բիբլ.) — 151, 289
Աետիոս — 331
Ալ-Մանսուր՝ խալիֆ — 57
Ալ-Մուկադդասի, տե՛ս Մուկադդասի
Ալայեդին — 193
Ալեդին՝ ամիրա Խլաթի — 213
Ալեքսանդր Մակեդոնացի — 52, 329
Ալեքսանդր Տրալացի — 331
Ալիշան Ղևոնդ — 8, 29
Ալի Աբսլան — 78, 79
Ահարոն — 113
Ահմեդ իբն-Վադիհ Իսպահանցի — 47
Աղբայրիկ՝ կաղմարար — 317
Աճառյան Հ. — 166, 304
Ամիրդովլամ՝ բժշկապետ — 332
Ամր՝ արաբ զորավար — 103
Անահիտ՝ դիցուհի — 170
Անանիա Մոկացի — 85, 86, 90
Անանիա Շիրակացի — 54, 56, 57, 75, 271, 283,
284, 297
Անաստաս՝ կայսր — 110
Անդե՝ գծող — 331
Աննենկով — 62
Աշոտ Ա Բագրատունի — 19, 39, 40, 41, 68, 76, 85,
86, 102, 104
Աշոտ Բ Բագրատունի — 72, 73, 87, 104, 137
Աշոտ Գ Բագրատունի — 29, 75, 76, 80, 159, 165
Աշոտ Դ Բագրատունի — 74
Աշոտ Բագրատունի՝ իշխանաց իշխան (Իմա՝ Աշոտ Ա
մինչև թագավոր դառնալը) — 31, 40, 90, 101
Աշոտ՝ իշխան Վասպուրականի — 90
Աշոտ Բագրատունի, իշխան Տարոնի — 200
Աշոտ Ողորմած, տե՛ս Աշոտ Գ
Աշոտ՝ որդի Սահակ Բագրատունու — 103
Աշոտ սպարապետ՝ որդի Շապուհի — 72, 85
Ապասակ Մագիստրոս — 104
Ապլկերտ, տե՛ս Ապլվարտ
Ապլղարիպ Արծրունի — 150
Ապլղարիպ՝ մարզպան — 199
Ապլվարդ՝ ամիրա Մանգղկերտի — 102
Առաքել՝ կաղմարար — 317
Առաքել Սյունեցի — 43, 209
Առաքել քահանա — 310
Առյուծ Հոգևորյանց — 298
Աողղիկ, տե՛ս Ստեփանոս Տարոնացի
Ասուտ, տե՛ս Աշոտ Ա Բագրատունի
Ասովաձատուր ոմն — 310
Ասովաձատուր Բաբրեղցի — 313
Ավագ Սալմաստեցի — 302
Ավագ տիկին — 50
Ավետենց Սահմանդին, տե՛ս Սահմադին
Ատտալիատես Միքայել — 22, 78, 111, 124

- Արզու խաթուն՝ — 274
Արխատակես Լաստիվերտցի — 78, 81, 82, 106, 111, 113, 114, 115, 148, 204
Արծրունիներ — 37, 94, 97, 98, 101, 103
Արղուն-խան — 336
Արշակունիներ — 44, 170
Արտաշեսյաններ — 43, 44, 98, 170
Արտաշիր՝ որդի Կավատի — 53
Արտավազդ Մամիկոնյան — 143
Արտավաս՝ հացագործ — 329
Սփշին — 72, 87
Աքերման Ֆիլիս — 277
- Բարեկ — 39**
Բագարատ Բագրատունի — 99, 104
Բագրատունիներ — 9, 19, 30, 31, 37, 39, 51, 71, 74, 76, 78, 79, 80, 82, 86, 87, 88, 89, 100, 101, 102, 103, 108, 109, 135, 145, 149, 165, 175, 192, 195, 202, 207, 260, 273, 294
Բագրատունիներ՝ վրաց — 81, 115, 117
Բալաձորի, տե՛ս Բելաձորի
Բակուր Բ թագավոր — 170
Բանու-Ռայրան, տե՛ս Դերենիկ Արծրունի
Բաշու Նուլին — 92
Բաստամյան Վ. — 66
Բատ՝ ամիրա Խլաթի — 99, 107
Բար-Հերրայոս — 200
Բարդուղիմեոս — 52
Բարսեղ՝ եպիսկոպոս — 89
Բարսեղ՝ արքեպիսկոպոս Անիի — 105
Բարտուղ Վ. — 7, 29, 117, 291
Բելաձորի — 57, 103, 104, 105, 106, 110, 115, 285
Բելով Գ. — 25
Բեկա Օպիզարի — 177
Բեննշևիչ Վ. Ն. — 7
Բեշքեն Օպիզարի — 177
Բերտելո — 55
Բունիաթով Գ. Ն. — 8
Բուղա — 40—94, 104, 152
Բրյուսով Վ. — 19
- Գարրիել՝ հրեշտակապետ — 167, 176
Գադիկ Ա Բագրատունի — 73, 74, 78, 82, 140, 154, 159, 163, 164, 168, 191
Գադիկ Արծրունի — 54, 90, 93, 94, 96, 101, 193, 261, 273
Գադիկ՝ թագավոր Կարսի — 288
Գալաու Հանրի — 246
Գալենոս — 331
Գալուստ՝ ճարտարապետ — 193
Գալֆայան Խ. — 284
Ար. Գևորգ — 167
Գեորգ՝ կազմարար — 317
- Դեորգ՝ կազմարար այլ — 317
Դեորգ՝ կազմարար այլ — 317
Դեորգ Գառնեցի — 88
Գեորգ վարդապետ Ջուլհակաձագ — 278
Դեորգիոս Կեդրենոս, տե՛ս Կեդրենոս
Գլավկոս Քիացի — 135
Դոշ, տե՛ս Մխիթար Գոշ
Գորգ Ճոնակ — 302
Գորգիոս՝ կազմարար — 317
Գորդլեսկի Վ. — 29
Գուրգեն Արծրունի — 98, 174
Գուրգեն՝ Տաշիր-Ձորագետի թագավոր — 165
Գրիգոր (փորագրված կարասի վրա) — 226
Գրիգոր՝ գծող — 208
Գրիգոր՝ գրական — 317
Կրիգոր՝ գրիչ — 317
Գրիգոր Լուսավորիչ — 175, 208, 275
Գրիգոր՝ կազմարար — 317
Գրիգոր Պահլավունի (Մագիստրոս) — 83, 184, 202, 209, 271, 275, 348
Գրիգոր Մամիկոնյան — 86
Գրիգոր Նարեկացի — 20, 160, 174, 189
Գրիգոր Սուփան — 75, 88, 90, 92, 125, 170
Գրիգոր՝ քահանա — 315
Գրուսե Թենե (R. Grousset) — 19
- Դայում՝ ամիրա Ատրպատականի — 109
Դավթակ՝ քորեպիսկոպոս Արծնի — 114
Դավթյան Ս. — 283
Դավիթ ոմն — 310
Դավիթ Ալավկա որդի — 343
Դավիթ՝ գրիչ 313
Դավիթ Անհաղթ — 177
Դավիթ Անհողին — 82
Դավիթ Դ թագավոր վրաց — 117
Դավիթ Կյուրապաղատ — 82, 102, 172
Դերանիկ Արծրունի — 41, 93, 98, 109
Դրոնիսիոս թել-Մահրեցի — 54
Դրոսկորիդես — 331
Դյակոնով Մ. — 168
Դոպշ — 25
- Եզիտ — 36, 57
Եզր՝ կաթողիկոս — 56, 86
Ելտուզ՝ աթարեկ — 84, 89, 127
Եղիա (Բիրլ.) — 308
Եղիազարով Ս. Ա. — 18, 19
Եղիշե՝ պատմիչ — 202
Եվրոժի՝ քարգործ — 188
Երեմյան Ս. Տ. — 19
Երվանդունիներ — 33, 44
Եփրեմ — 258
Եփրեմ՝ գրիչ — 313

Ջախողներ Ք. — 29
 Ջառե Յ. — 168, 240, 241
 Ջաքարիա Ամիրսպասալար — 54
 Ջաքարյաններ — 51, 52, 84, 85, 171, 193
 Ջոսիմա՝ քահանա — 162, 163:

 Է:ա չ՝ իշխան — 175, 176
 Էնգելս Յ. — 34, 67, 68, 353

 Թագուհի՝ անեցի տիկին — 299
 Թավաձե Գ. — 178
 Թեմուրճյան Վ. — 290
 Թեոդորոս Բ կայսր — 110
 Թեոդորոս Ռշտունի — 95
 Թեոփիլոս կայսր — 99, 100
 Թեոֆրանտոս — 331
 Թոռնիկ Մամիկոնյան՝ իշխան Տարոնի — 118, 202
 Թովբել (քիր.) — 133
 Թովմա Արծրունի — 38, 54, 80, 90, 93, 94, 95, 96, 97, 98, 101, 102, 103, 104, 108, 134, 136, 152, 174, 193, 198, 199, 206, 261
 Թորամանյան Թ. — 8, 76, 208
 Թորոս՝ գծող (քանդակող) — 208
 Թորոս Խաղբակ — 310
 Թորոս՝ կազմարար — 317
 Թոփչյան Հ. — 19

 Ժդանկո Տ. Ա. — 230
 Ժուզե Պ. Կ. — 21

 Իադ իրն-Ղանիմ՝ արաբ զորավար — 103, 104
 Իբն ալ-Աթիր — 103, 104, 105, 106, 109, 114
 Իբն ալ-Ասիր, տե՛ս իբն ալ-Աթիր
 Իբն ալ-Ֆակիհ — 36, 47, 48, 54, 55, 200, 284, 301, 332
 Իբն-ի Բատուտա — 55, 140, 166
 Իբն-Խալդուն — 47, 291
 Իբն-Խորդադրեհ — 36, 40
 Իբն-Հատուկալ — 40, 45, 47, 55, 56, 73, 107, 117, 276, 284, 329
 Իբն-Սերապիոն — 99
 Իբն-Ֆադլուն — 291
 Իբրահիմ Եանալ (Ինալ) — 113, 114
 Իդրիսի — 213, 293
 Իսթահրի (ալ-Իսթահրի) — 48, 73, 116, 117, 200, 277, 289
 Իսրայել ոմն — 203, 286

 Լաստիվերտցի, տե՛ս Արխատակես Լաստիվերտցի
 Լենին Վ. Ի. — 60, 62, 63, 348
 Լեո — 19, 29, 30
 Լիպարիտ՝ վրաց զորավար — 113
 Լիպարիտ Օրբելյան — 149, 150

Լյաշենկո Պ. Ի. — 28, 38
 Լորան Ի. (Laurent I.) — 19

 Լուլաթյանց Բ. — 21
 Լուչիկ՝ կաթողիկոս — 85, 170, 274
 Լուչիկյան Լ. — 20
 Լոճա Նույին — 92
 Լորազմ՝ ոսկերիչ — 175
 Լորենացի, տե՛ս Մովսես Լորենացի
 Լորյան՝ պարսից զորավար — 110
 Լոցադեղ — 240
 Լուռազ — 171
 Խուցես՝ պարոն — 171

 Մեր ոմն — 285

 Կադիր խան՝ Կաշգարի — 291
 Կալամֆար Գրիգորիս — 292
 Կալիմաքս — 332
 Կախարեր — 171
 Կամարականներ — 75
 Կավասիլիաս՝ Վասսուրականի ղյուզանդական կառավարիչ — 101
 Կավատ՝ Պարսից շահ — 53
 Կատրանիդե՝ Թագուհի — 170
 Կարաուով Ն. Ա. — 21, 55
 Կարապետ Սասնեցի — 133
 Կեդրենոս (Գեորգիոս Կեդրենոս) — 22, 92, 111, 113, 124
 Կիրակոս Գանձակեցի — 54, 83, 88, 97, 202, 266, 274
 Կիրակոս՝ գորգագործ — 292
 Կլավդիոս Կլավդիանոս — 332
 Կլյուչևսկի Վ. Օ. — 26, 27
 Կյուհենլ Էնստ — 155, 156, 169, 232, 287, 293
 Կյուրիկե Բ, Տաշիր-Չորագետի Թագավոր — 82
 Կողմա — 41
 Կոստանդին Միրանածին — 22, 80, 101, 102, 103, 104, 108, 298
 Կոստանդին կաթողիկոս — 176
 Կորյուն վարդապետ — 177
 Կվեբֆելդ Է. Կ. — 231
 Կրեմեր Ա. — 276, 296

 Հերիր իրն-Մասլամա — 89, 110
 Հախվերդով — 18
 Հակոբ՝ գրիչ — 316
 Հակոբ՝ կազմարար — 317
 Հակոբ Կարնեցի — 55
 Հակոբ Մծրնացի — 52
 Հակոբոս՝ կազմարար — 310
 Հակոբ՝ Սյունյաց եպիսկոպոս — 44
 Հակոբ՝ Սյունյաց կաթողիկոս — 90

- Հակոբյան Ս. Ե. — 20
 Հակոբյան Վ. — 20
 Համդալլահ Ղազվիհի — 55
 Հայրապետ՝ բնակիչ Մուշ քաղաքի — 313
 Հառակալ, տե՛ս Իբն-Հառակալ
 Հասան — 251
 Հասան՝ թոռ Պոռշի — 175
 Հասան Զալալ Դովլա — 172
 Հարուսթյունյան Ա. — 55, 304, 336
 Հարուսթյունյան Վ. Մ. — 8, 16
 Հարուն ալ-Ռաշիդ — 36, 291
 Հացագործյան Վ. — 177, 178
 Հացունի Վ. — 293
 Հեթում Ա Յազավոր — 335, 336
 Հելդ — 29
 Հերակլ՝ կայսր — 56, 86, 100, 110
 Հիշամ՝ խալիֆ — 103
 Հիսուս — 159, 175, 176, 202, 203, 208, 286, 288
 Հյուրըման — 19
 Հովհանն (բիրլ.) — 308
 Հովհան Մամիկոնյան (պատմիչ) — 102
 Հովհաննես Ավետարանիչ — 46, 175
 Հովհաննես Երզնկացի — 271
 Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի — 38, 39, 40, 41, 84, 86, 87, 88, 106, 125, 127, 150, 151, 206, 259, 273
 Հովհաննես՝ հյուան — 208
 Հովհաննես՝ գրիչ — 310
 Հովհաննես՝ գրիչ այլ — 313
 Հովհաննես՝ գրիչ այլ — 314
 Հովհաննես՝ կազմարար — 317
 Հովհաննես՝ որդի Շապագիների — 301
 Հովհաննես Մկրտիչ — 175
 Հովհաննես Չմշկիկ — 110
 Հովհաննես Սմբատ — 74, 83, 86, 87
 Հովհաննես Սողի — 310
 Հովհաննեսիսյան Աշոտ — 20
 Հովհաննեսիսյան Լ. — 338
 Հովհաննեսիսյան Կ. — 8
 Հովսեփ (Հիսուսի հայր) — 202, 203, 286
 Հովսեփյան Գարեգին — 20, 315
 Հուլաղու խան — 336
 Հուստինիանոս՝ կայսր — 106, 110
 Հոփոսիմե՝ կուլս — 292
 Զագրիկ՝ իշխան Սյունյայ — 90
 Դադանջյան Տ. — 335, 339
 Դադար՝ բնակիչ Մուշ քաղաքի — 313
 Դադար Փարսեցի — 53, 133, 332
 Դադարյան — 19
 Դաֆադարյան Կ. — 16, 17, 145, 179, 196, 197, 216, 218, 222, 226, 227, 233, 242, 269
 Դովլաս՝ դժող — 208
 Դուլաս՝ ալեխտարանիչ — 311
 Դևոնդ Երեց՝ պատմիչ — 36, 100, 143, 344
 Ճոն՝ հայր Մխիթարի — 302
 Մահդի՝ խալիֆ — 291
 Մահմուդ Ղազնևի — 291
 Մամախաթուն — 51
 Մամբրե վերծանող — 177
 Մամիկոնյաններ — 53, 143
 Մամլուն — 82, 110
 Մամբան — 251
 Մանանդյան Հ. — 14, 15, 19, 21, 22, 30, 31, 32, 68, 81, 200, 217
 Մանուկյան Հ. — 126
 Մանուկյաններ — 252
 Մանվել՝ ճարտարպետ — 96, 189, 193
 Մառ Ն. Յա. — 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 29, 30, 251
 Մասուդ Ղազնևի — 291
 Մատթեոս Ուռհայեցի — 78, 86, 100, 111, 114, 115, 117, 118, 149, 150, 152, 205
 Մարիամ՝ կուլս (նաև Տիրամայր) — 159, 167, 185, 266
 Մարկվարդ 3. — 19
 Մարքս Կ. — 34, 62, 67, 68, 348, 353
 Մելիքսեթ-բեկ — 21, 47
 Մենոն — 52
 Մխիթարի Ասորի — 37, 99, 102, 115, 142
 Սիհրդատ — 330
 Մինորսկի Վ. — 19
 Միրայել՝ ոսկերիչ — 310
 Միրայել Ատոտալիատես, տե՛ս Ատոտալիատես
 Միրայել՝ հրեշտակապետ — 176
 Միրայելյան Գր. — 19
 Մլրե՝ թագուհի — 174
 Մխիթար ոմն — 304
 Մխիթար՝ որդի Ճոնի — 302
 Մխիթար Գոշ — 45, 46, 54, 57, 61, 64, 65, 66, 137, 203, 257, 268, 274, 278, 289, 297, 301, 325, 342
 Մխիթար Երզնկացի՝ գրիչ — 312
 Մխիթար Հերացի — 297, 329, 331, 332
 Մխիթար Սասնեցի — 314
 Մխիթար Քորայրեցի — 315
 Մկրյան Մ. — 20
 Մնացականյան Աս. — 189, 226
 Մոոս — 228, 241
 Մովսես ոմն — 310
 Մովսես Խորենացի — 64, 65, 66, 95, 105, 110, 149, 184, 204, 294
 Մովսես կաղանկատվացի — 53, 57

- Մորդան Ժակ — 19
 Մորթման — 21
 Մորիկ՝ կայսր — 106
 Մուավիա՝ խալիֆ — 110
 Մուսասիմ Բիլահ՝ խալիֆ — 110
 Մուկադդասի (ալ-Մուվադդասի), 42, 73, 103, 104, 109, 116, 284, 293
 Մուկտադիր՝ խալիֆ — 291
 Մուհամմեդ բար-Յահյա — 291
 Մուշեղ՝ Կարսի իշխող — 80, 81
 Մուսա իրն-Ջուրար՝ Բաղեշի ամիրա — 104
 Մրվան՝ դարբին — 138
- Յակոբսոն Ա. Լ. — 243, 252
 Յակուբի — 27, 276
 Յակուբովսկի Ա. — 29, 168
 Յակուտ — 22, 48, 54, 100, 104, 106, 108, 109, 115, 116, 117, 206, 207, 278, 291, 292
 Յահյա իրն-Մահմեդ՝ Արզնեցի գիտնական — 105
 Յարալով Յու. Ս. — 8
 Յուշկով Ս. Վ. — 26, 27
 Յուսուֆ՝ ամիրա Ատրայատականի — 72, 82, 90, 91, 273, 291
 Յուսուֆ ոստիկան — 99
- Նալլրանդյան Հ. — 21, 22, 45, 292
 Նանա Ասորի — 46
 Նասիր հոսրով — 56, 95, 104, 105, 107, 311, 342
 Ներսես կաթողիկոս Տայեցի — 64
 Ներսես Կամսարական — 86
 Ներսես Շնորհալի — 43, 46, 50, 133, 145, 149, 152, 156, 160, 161, 165, 174, 181, 185, 190, 192, 206, 219, 220, 266, 283, 284, 285, 288, 297, 322, 323, 326, 328, 334, 336
 Նիզամի — 329
 Նսր՝ զորավար — 91
- Շաղաղայաններ — 74, 116
 Շահնազարյան Աս. — 16
 Շապադին — 301
 Շապուհ Բ — 34, 89, 204
 Շապուհ Բագրատունի (կեղծ). — 72, 81, 93, 97, 98, 101, 106, 108, 110
 Շարլ-Դիլ — 168
 Շելկովնիկով Բ. Ա. — 16, 227, 228, 233, 234, 240, 241, 242, 246, 247, 248, 250
- Ուխտատուր՝ վանական, — 44
 Ուռհայեցի, տե՛ս Մատթևոս Ուռհայեցի
- Չայոյան Վ. — 20
 Չամչյան Մ. — 19
 Չմշկիկ՝ զորավար՝ Հովհաննես Չմշկիկի պապը — 110
- Չոպանյան Ա. — 189
 Չուբինաշվիլի (Չուբինով) Գ. Ն. — 8, 226, 227
- Պալասանյան — 29
 Պախտով Ե. Ա. — 29
 Պաղտին — 261
 Պահյավունիներ — 82, 160, 345
 Պապովյան Ա. — 66
 Պեհրեղիուս — 336
 Պետրոս՝ առաքյալ — 174, 175, 176
 Պետրոս՝ գրիչ — 310
 Պետրոս՝ գրիչ ալլ — 312
 Պետրոս՝ կաթողիկոս — 83, 111, 209, 278
 Պետրուշևսկի Ի. — 29
 Պերոզ՝ արքա — 53
 Պիլեզիկյան — 19
 Պիտարովսկի Բ. — 270
 Պիրենն Անրի — 26
 Պլինիոս — 328, 330, 331
 Պոլլանսկի Ֆ. Յա. — 28
 Պոկրովսկի Մ. Ն. — 12, 26
 Պողոս Առաքյալ — 174, 175, 176
 Պողոսյան Ս. Պ. — 20, 64
 Պովրոս՝ մելիք — 313
 Պոռո՝ իշխան — 175
 Պոսկ Արթուր — 168, 229, 232, 234, 236, 238, 241, 244, 245, 246
 Պրոկոպիոս Կեսարացի — 22, 35, 53, 118
 Պրուդոն — 62
- Ջալալ — 251
 Ջահապ՝ Կայսիկ ցեղի առաջնորդ — 102
 Ջանփուլադյան Հո. — 16, 17, 227, 325
 Ջափարիձե Վ. Վ. — 217, 230, 238
 Ջահանշիր՝ որդի Ջագիկ Սյունեցու — 90
- Ռաշիդ ադ-Դիլ — 205
 Ռիբակով Բ. Ա. — 28, 155, 252
 Ռիզլ Ա. — 294
 Ռոմանոս՝ վարդապետ՝ գրիչ — 313
 Ռոստովցև Ի. — 7
 Ռուսթավելի — 13, 167, 168
 Ռուսուդան՝ թագուհի — 238
- Սագուն՝ որդի բրդի — 274
 Սահակ Բագրատունի — 103, 151
 Սահմադին — 251
 Սամվել Անեցի — 79, 89, 127
 Սամվելյան Ն. — 19, 64
 Սարգիս՝ գրիչ — 194
 Սարգիս՝ լարարար — 300
 Սարգիս-Լևոն՝ քահանա — 314
 Սարգիս՝ Հաղբատի վանքի առաջնորդ — 52

Սարգիս Շնորհալի — 232, 257, 285, 336
Սարգիս Փառչկյան — 193
Սարգիս՝ քահանա կազմարար — 217
Սարգսյան Գ. Ն. — 65
Սաֆարյան Ս. Ա. — 8
Սեբեոս — 95, 100, 104, 110
Սելեկոս՝ թագավոր — 99
Սենեքերիմ՝ թագավոր Վասպուրականի — 92, 95, 118
Սերգեյեիչ Վ. Ի. — 26
Սիմեոն — 53
Սիմեոն՝ գրակապ — 317
Սիմեոն՝ կազմող — 174
Սիմեոն Մազիստրոս — 291
Սմբատ Ա Բագրատունի — 41, 68, 72, 80, 82, 85, 87, 90, 101, 102, 104, 273, 291
Սմբատ Բ (Շահնշահ) — 76, 86
Սմբատ՝ իշխան Սյունյաց — 90, 91
Սմբատ սպարապետ — 86
Սողոմոն՝ արքա հրեից — 189, 190, 289
Սողոմոն՝ եպիսկոպոս Սյունյաց — 181
Սովիա՝ Սյունյաց տիկին — 170
Սուլեյման՝ ոստիկան — 86
Ստեփան — 226
Ստեփանոս — 174
Ստեփանոս՝ գրիչ — 315
Ստեփանոս՝ գրիչ այլ — 316
Ստեփանոս՝ եպիսկոպոս Խիզանի — 314
Ստեփանոս Ճոն — 302
Ստեփանոս Ճոնակ — 302
Ստեփանոս՝ սարկավազ — 335
Ստեփանոս Տարոնացի (Ասողիկ) — 38, 41, 75, 80, 81, 82, 87, 88, 99, 101, 102, 110, 115, 125, 274
Ստեփանոս Օրբելյան — 38, 41, 49, 63, 68, 90, 91, 92, 149, 150, 181, 206, 289, 321
Ստոկլիցկայա-Տերեշկովիչ — 28
Սարարոն — 52
Սարժիգովսկի 3. — 8, 168

Վախթանգ՝ իշխան Հաթևրբի — 274
Վահան Մամիկոնյան — 53
Վահրամ՝ իշխան — 51
Վահրամ՝ կաթողիկոս — 83
Վահրամ՝ Հեշուբ — 45
Վաղարշակ՝ թագավոր — 65, 66
Վակտորսկայա Ն. Ն. — 230
Վաչե Վաչուտյան — 51, 171
Վասակ՝ իշխան Սյունիքի — 90

Վասակ Պահլավունի — 82, 83, 149, 152
Վասիլ Ա կայսր Բյուզանդիայի — 39, 82
Վասիլ Բ կայսր Բյուզանդիայի — 92, 107, 108, 110, 115, 205
Վարդ Սկլեբոս — 99
Վարդան քահանա՝ գրիչ — 313
Վարդան Այգեկցի — 151, 188, 203, 214, 215, 218, 261, 271, 275, 276, 278, 299, 326, 330, 334, 342
Վարդան Արևելցի (պատմիչ) — 82, 85, 86, 127, 295, 336
Վեստ Սարգիս — 83
Վլադիմիրցև Բ. — 29
Վրիվ — 53

Տաբարի — 46, 99
Տիգրան Բ — 170, 181
Տիգրան Հոսեանց — 12, 50, 281, 291, 298
Տիխոմիրով Մ. Ն. — 27, 28
Տոլստով Ս. Պ. — 29, 230
Տոկարսկի Ն. Մ. — 8, 196
Տոտլ՝ եղբայր Ուխտատուրի — 44
Տուրիլ Բեկ — 102, 103, 106
Տրդատ Գ — 208, 275
Տրդատ՝ ճարտարապետ — 86, 187, 189

Փաղուն՝ ամիրա Գանձակի — 74
Փալատոս Բուզանդ — 52, 53, 293
Փիլիպե՝ իշխան Սյունյաց — 44, 90
Փիլիպոս՝ գրիչ — 317

Քարիմադին — 251
Քիրամ — 189
Քյուրտյան Հ. — 293
Քուրդ՝ հայր Սադունի — 274
Քուրդ՝ որդի Կախարբերի — 171
Քսենոֆոն — 331
Քրիստոս, տն՝ս Հիսուս

Օմայաններ — 276
Օրբելի Հ. Ա. — 6, 7, 8, 13, 14, 29, 30, 145, 152, 160, 161, 162, 164, 167, 168, 251, 260, 261, 280, 281, 345
Օրմանյան Մ. — 19

Յաթիմյաններ — 276
Յահրադին — 251
Յրիկ — 43, 254, 275, 301

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբասաձոր՝ պղնձի հանքավայր Բջնո գավառում — 55, 188
- Ադրբեջան — 6, 36, 47, 57, 73, 109, 116, 117, 112, 230, 235, 246, 256, 289, 300
- Ալաշկերտ — 46, 81
- Ալավերդի — 52
- Ախուրյան՝ գետ — 30, 51, 52, 76, 86
- Աղթամար՝ կղզի, բաղար — 54, 95, 97, 122, 124, 125, 136, 193, 206
- Աղթամար՝ ամրոց — 95
- Աղթամարի բևեռ — 106
- Աղթամարի եկեղեցի — 97, 191, 193
- Աղբակ, տե՛ս Մեծ Աղբակ
- Աղիովիտ — 55, 56
- Աղձնիք — 54, 57, 119
- Աղահար՝ իոտե բաղարի թաղերից մեկը — 126
- Աղվանք կամ Աղվանից աշխարհ — 47, 57, 59, 75, 116, 162, 202
- Ամենափրկիչ՝ Հավուց թառի — 206, 208
- Ամիգ — 55, 100, 117, 200
- Ամյուկ բերդ — 101
- Ամրական՝ բարանձավ — 93, 199
- Ամրակից՝ իոտե բաղարի թաղերից մեկը — 126
- Այաս — 294
- Այգեստան՝ գյուղ Դվինի մոտ — 179
- Այգեստան՝ թաղամաս հին Վաղարշապատում — 19
- Այրարատ նահանգ — 33, 35, 54, 55, 56, 82, 88
- Այրարատյան թագավորություն — 33
- Այրիվանք — 317
- Անրերդ — 6, 156, 160, 165, 168, 230, 256, 345
- Անդեղ, տե՛ս Անհիլ
- Անգեղակոթ՝ ավան Կոզովիտում — 98
- Անգեղակոթ՝ գյուղաբաղար Սյունիքում — 124
- Անդրկովկաս — 5, 6, 10, 13, 17, 29, 45, 46, 47, 52, 53, 54, 57, 177, 178, 208, 226, 238, 243, 247, 252, 271, 299
- Անթիլիաս — 20
- Ա. և ի — 6, 7, 8, 9, 11, 12, 13, 14, 17, 18, 29, 31, 42, 50, 51, 60, 68, 75, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 93, 105, 109, 111, 114, 122, 123, 124, 125, 128, 134, 135, 136, 137, 139, 140, 141, 112, 144, 145, 146, 148, 149, 150, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 163, 165, 166, 167, 169, 170, 171, 173, 177, 183, 185, 188, 191, 192, 193, 194, 195, 196, 198, 199, 202, 207, 212, 214, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 233, 234, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 262, 263, 265, 266, 267, 269, 271, 274, 276, 279, 280, 281, 286, 288, 289, 291, 298, 299, 300, 301, 302, 304, 316, 322, 323, 324, 327, 334, 344
- Անի՝ ամրոց Եփրատի ափին — 115
- Անի-Կամախ — 33
- Անհիլ — 107—108, 124
- Անձապուցայ երկիր — 53, 98
- Անշխիսեթի — 177
- Աշուշատ (Շիմշատ) — 36, 60, 99, 121, 122, 124, 126
- Աշնակ — 88, 89, 127
- Աշտարակ — 124
- Աշրահան՝ իոտե բաղարի թաղերից մեկը — 126
- Ապահունիք — 54, 56, 104
- Աշանան — 55
- Առան — 36, 48, 116, 117, 289, 309
- Առաջավոր Ասիա — 36, 121
- Առաջին Արմենիա (Արաբական աղբյուրների) — 36
- Առաքելոց եկեղեցի՝ Անիում — 75, 154, 168, 191
- Առաքելոց եկեղեցի՝ Մշո — 208, 311
- Առաքելոց եկեղեցի՝ Սևանի — 208
- Առեստ ավան — 98, 123, 124

- Ասիա — 5, 111
 Ասիուտ — 274, 278, 292
 Ասորիք — 47, 55, 119, 213, 229, 240, 252, 258
 Ավան — 268
 Ատրպատական — 75, 90, 101, 108, 109, 110, 117
 Արարական թերակղզի — 119
 Արարական խալիֆատ — 30, 31, 37, 39, 40, 100, 101, 103, 291, 304
 Արագածոտն — 8, 88
 Արարատ լեռ — 200
 Արարատյան դաշտ — 45, 53, 71, 119, 121, 190, 213, 254, 283, 332
 Արածանի՝ գետ — 99
 Արարս՝ գետ — 48, 53, 92, 116, 120
 Արգինա — 84, 85, 86, 124, 170, 274
 Արգիշտիխինիլի — 33
 Արդարիլ — 42, 73, 117
 Արդահան — 117
 Արդանջան, տե՛ս Երզնկա
 Արզանկա, տե՛ս Երզնկա
 Արդիս, տե՛ս Արճեշ
 Արզն — 31, 41, 60, 67, 103, 104—105, 120, 122, 124, 126
 Արզրում, տե՛ս Կարին
 Արթիկ — 192
 Արծկե — 105—106, 124, 126
 Արծն — 31, 81, 93, 111—114, 115, 123, 124, 125
 Արծրունիք — 135
 Արծրունյաց թագավորություն — 122
 Արկաթիակերտ — 33
 Սրղնի — 107, 108, 123, 124
 Արղնի-մադեն, տե՛ս Արզնի
 Արճեշ — 36, 60, 67, 92, 100—101, 102, 103, 104, 106, 108, 120, 122, 123, 124, 125, 206
 Արմավիր — 33
 Արմինիա՝ արարական վարչական միավոր — 36, 41, 47, 48, 71, 73, 200, 289, 293
 Արշամաշատ — 33
 Արշամունյաց գավառ — 115
 Արշարունիք — 87
 Արուճ — 84, 86
 Արջիշ, տե՛ս Արճեշ
 Արջո՛հառիճ — 50, 302
 Արտագերս — 75
 Արտանուշ — 81, 115, 117
 Արտաշատ — 33, 35, 89, 120, 217, 254, 276, 285
 Արտաշեսյան՝ քաղաք — 33
 Արտավազական՝ քաղաք — 33
 Արտոս՝ լեռ Վասպուրականում — 45
 Արևմենյան Պարոկոստան — 230
 Արևելք — 5, 14, 21, 29, 30, 35, 108, 131, 149, 168, 202, 227, 291
 Արևմտյան Եվրոպա — 121, 135, 218, 240, 304, տե՛ս նաև Եվրոպա
 Արևմտյան Հայաստան — 110, 114, 115, 119, 208, տե՛ս Հայաստան
 Արևմուտք — 5, 14, 35, 81, 119, 331, 334, 335
 Արիսագիտ — 36
 Բար-Անի՝ Դվինի դռներից մեկը — 73
 Բար-Թիֆլիս՝ Դվինի դռներից մեկը — 73
 Բար-Կիլիզար՝ Դվինի դռներից մեկը — 73
 Բար-ուլ-Աբվար (Դեբրեհնդ) — 117
 Բար-Ֆիրուզ-Կուրազ — 36
 Բարերդ — 115, 124, 313
 Բագարան — 60, 84,—85, 124
 Բաղնայր — 299
 Բաղրատունյաց թագավորություն — 31, 41, 68, 70, 71, 74, 75, 76, 82, 83, 89, 90, 122
 Բաղրևանդ — 36, 46, 82
 Բալու — 54, 99, 121, 122, 124
 Բաղմազըլուր՝ ավան Մանանաղոս — 114, 257
 Բաղաբերդ — 90
 Բաղդադ — 36, 46, 203
 Բաղդագեղկի եկեղեցի՝ Անիում — 191, 198
 Բաղեշ — 31, 56, 60, 67, 104, 105, 120, 122, 124, 125
 Բաղք — 90
 Բայլական (իմա՝ Փայտակարան) — 116
 Բանդի-մաճի (իմա՝ Առեստ ավան) — 98
 Բաջունայս (իմա՝ Վասպուրական) — 36, 54
 Բասեն — 115, 258
 Բարձր Հայք — 55, 56, 119
 Բաբու — 116
 Բելգիա — 26
 Բենլին — 19, 155, 156
 Բերդա, տե՛ս Պարտավ
 Բերկրի — 31, 60, 67, 92, 101, 102, 103, 104, 108, 124, 126, 279
 Բզնունյաց ծով — 106
 Բիթլիս — տե՛ս Բաղեշ
 Բյուզանդիա — 10, 36, 37, 39, 46, 83, 87, 92, 177, 110, 240, 260, 277, 284
 Բյուզանդական կայսրություն — 9, 10, 30, 31, 75, 101, 102, 106, 118, 119, 185, 294
 Բյուրական — 44, 88
 Բոլոն — 53
 Բոնն — 22
 Բուզ՝ գետ — 27
 Բուլղար (Վուլգայի վրա) — 116, 119
 Բուսպուրաջան (իմա՝ Վասպուրական) — 36
 Բջնի — 55, 82, 83, 92, 124
 Բջնո բերդ — 83
 Բջնո նահանգ — 188

- Դագիկի տաճար՝ Անիում — 8, 140, 154, 159, 163, 164, 166, 168, 191, 260, 261
- Գայլախազում՝ լեռ — 257
- Գայլատու լիճ — 283
- Գանձակ — 6, 17, 74, 116, 142, 172, 205, 217, 223, 226, 227, 230, 238, 244, 246, 263, 328
- Գառնի — 6, 34, 48, 60, 75, 88, 124, 127, 135, 138, 139, 140, 141, 142, 144, 145, 150, 154, 169, 171, 172, 173, 180, 181, 194, 214, 215, 217, 219, 220, 222, 223, 224, 225, 226, 227, 230, 238, 253, 254, 256, 257, 261, 262, 263, 267, 322, 323, 324, 327, 331, 339, 340
- Գեւաթի — 185
- Գեղարքունիք — 89, 90, 92, 125
- Գետիկ, տե՛ս Նոր Գետիկ
- Գերմանիա — 62
- Դլաձոր (Գլիձոր) — 51, 76, 312, 321
- Դյոմոնոլ (Դյոմոնոլյան) — 55
- Դնդեվանք — 44, 170
- Դոմաձոր — 124
- Դոմաձոր՝ գյուղաքաղաք Բասենում — 115
- Դոշավանք — 202
- Դուգարք — 54, 132
- Դուդարեխի — 238
- ւր. Գրիգոր՝ եկեղեցի Անիում — 50, 51, 191, 198
- Դաբարվան — 117
- Դաղստան — 162
- Դամասկոս — 104
- Դատի վանք — 274
- Դատվան — 124
- Դարնաց-քար — 53
- Դարմանաթաղ՝ խոռո քաղաքի թաղերից մեկը — 126
- Դարոնք — 75
- Դեհարական — 117
- Դեբրենդ — 116, 117
- Դիարբեքիք — 54, 108
- Դիլիջան — 202
- Դմանիսի (Դումանիս), 6, 17, 81, 117, 226, 227, 230, 238, 246
- Դնեպր — 26, 27
- Դվին (Դաբիլ, Դոսլիլ) — 6, 15, 16, 17, 19, 35, 36, 48, 59, 67, 71—75, 76, 80, 87, 88, 89, 92, 93, 103, 109, 111, 119, 120, 123, 124, 125, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 153, 160, 166, 170, 171, 178, 179, 180, 181, 184, 185, 190, 191, 195, 196, 197, 198, 199, 201, 205, 207, 212, 214, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 260, 261, 262, 263, 264, 267, 269, 271, 276, 277, 279, 280, 284, 285, 289, 291, 316, 322, 323, 324, 325, 327, 334
- Եդիպոսոս — 54, 156, 230, 258, 274, 292, 294
- Եղեգիք (Եղեգիս) — 49, 89, 90, 91, 124
- Եղվարդ — 88
- Եկրատան — 89
- Եկեղյաց գավառ — 115
- ւր. Եվգինիոս վանք — 258
- Ծվրոպա — 5, 25, 28, 36, 241, 304, 331, 335, 345
- Երազգավորք — 60, 75, 84, 85, 124
- Երասխ՝ գետ, տե՛ս Արաքս
- Երասխաձոր — 87
- Երզինա, տե՛ս Արգինա
- Երզնկա (նաև Եզնկա) — 115, 119, 124, 125, 166,
- Երիզա — 99, 115
- Երկրորդ Արմենիա (արաբական աղբյուրների) — 36
- Երոպոլիս, տե՛ս Չմշկածաղ
- Երվանդաշատ — 33, 85
- Երրորդ Արմենիա (արաբական աղբյուրների) — 36
- Եփրատ՝ գետ — 115, 117
- Երևան — 8, 16, 19, 43, 64, 66, 124, 143, 177
- Զարեհավան — 33
- Զարեհանդ — 60, 98, 124
- Զարիշատ — 33
- Զոդ — 55
- Զվարթնոց — 42, 64, 78, 88, 136, 232, 234, 235, 258
- Էջմիածին — 181, 182, 206, 232
- Էջմիածնի վանք — 174
- Էրզնրում, տե՛ս Կարին
- Էրմիտաժ (Պետական Էրմիտաժ) — 1²
- Ըննա՝ գավառ Կորճերի — 98
- Թաբարիստան — 271, 274
- Թալին — 44, 84, 86, 124, 127
- Թավրիզ — 117
- Թբիլիսի — 6, 8, 36, 81, 117, 216, 230, 238
- Թեյշեբախի (Կարմիր-բլուր) — 230, 256
- Թեոդոսուպոլիս — 53, 60, 111, 113, 119, տե՛ս նաև Կարին
- Թիլ՝ ավան — 119
- Թոփրակ-կալե — 253
- Թուրքմենական ՍՍԹ — 230
- Թուրքիա — 394
- Թրակիա — 291, 294
- Իրերիա — 35
- Իդաձոր — 76
- Իկոնիա — 118, 193

- Իկոնիայի սուլթանություն — 118
 Ինճե մինարեիլի մեդրեսե՝ Կոնիայում — 92
 Իշխանազեո՝ Գեղարքունիքում — 92
 Իսպահան — 116
 Իսպանիա — 36
 Իրան — 10, 75, 89, 117, 119, 155, 156, 206, 229, 235, 238, 241, 244, 247, 258, 291, 293, 294, 299
 Իրաք — 47, 55, 56, 116, 117, 119, 213, 240
- Լակզիք — 36
 Լենինգրադ — 8, 168, 230
 Լոռն՝ քաղաք — 51, 82—83, 124, 126, 192
- Խախուզ — 185
 Խարբերդ — 99—100, 122, 124, 126
 Խերսոնես — 160, 243, 247, 248, 252
 Խերսո, տե՛ս Հեր
 Խիզան — 98, 124, 314
 Խլաթ (Ախլաթ, Խալիաթ) — 36, 54, 60, 67, 99, 100, 101, 102, 103—104, 105, 107, 108, 120, 122, 124, 125, 138, 168, 206, 252, 276, 313
 Խոզան՝ քաղաք — 100, 124
 Խոմ (Խամ) — 119, 138
 Խոյ, տե՛ս Հեր
 Խոտակերաց վանք — 175, 180, 182
 Խոտանան՝ գյուղ — 44
 Խորասան — 47, 116, 207, 291, 334
 Խորենդ — 230
 Խուզիստան — 116
 Խութ (Խույթ) — 56, 104
 Խրամ — 124
- Մաղկոցաձոր (Մաղկաձոր) — 30, 280, 294
 Մանսիոն ձոր — 55
 Մար՝ գյուղ — 202
 Մուլք Արզնու — 105
 Մոփք (Մոփաց աշխարհ) — 33, 98, 99, 100, 128
- Կաբուլ — 52, տե՛ս նաև Կապուղակ
 Կալիկալա, տե՛ս Կարին
 Էադղվան — 56, 60, 84, 124, 125
 Կամա՝ գետ — 291
 Կամա՞ն — 60, 115, 121, 122, 124, 126
 Կաշգար — 168, 291
 Կապադոկիա — 117, 118
 Կապուղակ — 116, տե՛ս նաև Կաբուլ
 Կապան — 80, 90, 91, 122, 124, 126
 Կապուլտ ամրոց — 82
 Կապուտան լիճ (Կաբուզան), տե՛ս Ուրմիա լիճ
 Կավակերտ — 88
 Կասպից ծով — 5, 57
 Կարբի — 124
 Կարին (Կարնո քաղաք) — 35, 36, 55, 60, 67, 99, 109, 110—111, 114, 115, 119, 120, 122, 123, 124, 125, 276, 291, 332
 Կարմիր-բուր — 6, 32, 33, 45, 48, 136, 170, 180, 201, 219, 230, 253, 270
 Կարմիր՝ գետ — 98
 Կարուց բերդ — 80
 Կարուց դուռ՝ Անիի դռներից մեկը — 137, 141
 Կարս — 31, 80—81, 87, 103, 108, 109, 123, 133, 124, 125, 128, 141, 276
 Կարս՝ դավառ — 122
 Կենտրոնական եվրոպա — 218
 Կեչաուր — 171
 Կեչուտ — 44
 Կեչրոր — 124
 Կեսարիա — 118
 Կեցան — 98, 124,
 Կիլիկիա — 19, 118, 119, 294, 335
 Կիլիկյան հայկական թագավորություն — 303
 Կիրովական — 170
 Կից վտակաց (Սյունիքում) — 92
 Կիև — 27
 Կիևյան Ռուսիա — 28, 116, 119, 294
 Կլյազմա — 27
 Կյուլ-Սերե — 116
 Կյումուզխանա, տե՛ս Գյումուզխանա
 «Կյուրակի» — 60
 «ալ-Կյուրկե» (չոկա Պարտավում) — 116
 Կոգովիտ՝ դավառ — 98
 Կոթ՝ գյուղաքաղաք — 89, 90, 92, 122, 123, 124, 125
 Կոթա գետակ (Իմա՝ Իշխանազետ) — 92
 Կոթեր՝ ավան — 114, 119
 Կոշք — 56, 84, 86—87, 124, 125
 Կոնիա, տե՛ս Իկոնիա
 Կոստանդնուպոլիս — 278, 304
 Կովկաս — 19, 57
 Կորճեք — 98
 Կուաշ — 88
 Կումայրի — 143
 Կուտատիսի, տե՛ս Քուֆայիսի — 14
 Կուր՝ գետ — 47, 53, 57, 216
 Կուրի նահանգ — 104
 Կրմզ (Իմա՝ Արտաշատ ավան) — 276
- Հադամակերտ — 97—98, 122, 124
 Հաթերք — 274
 Հալե գյուղ — 44
 Հաղարծին — 160, 161, 167, 188
 Հաղբատ — 51, 52, 274, 315
 Հայաթաղ (թաղամաս Բյուրականում) — 44
 Հայասա-Ազգի — 32
 Հայաստան — 5, 6, 7, 9, 10, 11, 12, 14, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 25, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46,

- 47, 48, 49, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 60, 65, 66, 68, 71, 73, 75, 79, 80, 89, 90, 98, 99, 100, 101, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 114, 115, 117, 119, 120, 121, 122, 123, 125, 126, 128, 132, 133, 134, 135, 136, 142, 143, 145, 149, 150, 151, 152, 153, 156, 157, 158, 160, 161, 162, 166, 169, 172, 173, 174, 178, 184, 185, 187, 188, 190, 191, 192, 193, 198, 199, 200, 201, 202, 205, 206, 207, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 227, 229, 230, 233, 235, 241, 243, 247, 248, 250, 251, 252, 254, 255, 256, 257, 258, 263, 267, 268, 270, 271, 274, 275, 276, 277, 279, 283, 284, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 296, 298, 299, 301, 302, 303, 315, 316, 317, 321, 324, 325, 328, 330, 331, 336, 342, 344, 349, 353
- Հայկական Լեռնաշխարհ — 52
- Հայկական տուն — 11
- Հայնի, տե՛ս Հանի
- Հայոց աշխարհ — 36, 41, 52, 78
- Հայոց երկիր — 36, 37
- Հայոց ծով — 56
- Հանի — 54, 107, 108, 124
- Հառիճա վանք — 170, 171, 194
- Հավճիշ բերդ — 114
- Հավուց թառ — 208
- Հարավային Ադրբեջան (206, տե՛ս Ատրպատական)
- Հարավային Հայաստան — 100, 109, 279, տե՛ս Հայաստան
- Հարնակ (հանքավայր) — 108
- Հարք — 104
- Հեր (Խոյ, Խերտ) — 31, 103, 104, 108, 124, 150, 279
- Հյուսիս — 119
- Հյուսիսային Ադրբեջան, տե՛ս Ադրբեջան
- Հյուսիսային Կովկաս — 258
- Հյուսիսային Հայաստան — 55, 71, 109, 119, տե՛ս Հայաստան
- Հնդկաստան — 35, 36, 111, 117, 119
- Հողս՝ գյուղաքաղաք — 124
- Հոնաց աշխարհ — 53
- Հոռոմոսի վանք — 44, 51, 191, 298
- Հովվի եկեղեցի — 8
- Հոռոմ — 25
- Հոռոմկլա — 105, 317
- Ձագեձոր — 44
- Ձկնարած՝ գետ — 44
- Ձորագետ — 82, 126
- Ղրիմ — 118
- Ծուաշ՝ գավառ — 98
- Մազազ՝ գավառ — 32
- Մալաթիա, տե՛ս Մելիտինե
- Մակարավանք — 274
- Մակու — 98, 124
- Մաղասբերդ — 137
- Մայաֆարկին (Մուֆարկին, Մուփարդին) — 41, 67, 106, 107, 119, 120, 205, Տե՛ս նաև Նփրկերտ
- Սանազկերտ — 60, 67, 100, 101, 102—103, 104, 106, 120, 122, 148, 204, 252
- Մանանաղի դավ. — 54, 114, 135, 257
- Մանկագոմ — 124
- Մառական՝ ավան — 98
- Մասիս՝ լեռ — 174, տե՛ս Արարատ լեռ
- Մատենադարան — 21, 173, 180, 181, 182, 184, 185, 189, 281, 283, 284, 288, 291, 303, 304, 318, 339, 343, 344
- Մարաղա — 117
- Մարանդ — 117
- Մարաստան — 331
- Մարբուրդ — 19
- Մարդին — 117
- Մարսել — 294
- Մարտիրոսպոլիս (Մարտիրոսաց Պոլիս) — 106, տե՛ս Նփրկերտ
- Մարտվիլի — 173
- Մաքենացոց վանք — 68, 75, 170
- Մելիտինե — 99, 108, 118
- Մեծկերտ — 100, 124
- Մեծ Հայք — 33, 103, 108
- Մերձավոր Արևելք — 13, 29, 46, 56, 115, 198, 218, 228, 231, 240, 241, 247, 250, 342
- Միջագետք — 37, 75, 117, 119, 169, 223, 232, 240, 241, 252, 292,
- Միջերկրական ծով — 5, 118
- Միջին Ասիա — 46, 119, 228, 230, 233, 252, 258, 294
- Միջին Արևելք — 10, 117
- Միսիանա՝ գետակ — 52, 82, 126
- Մժնկերտ — 124
- Մժուրն — 33
- Մշո գավառ — 166
- Մշո դաշտ — 213
- Մշո Առաքելոց եկեղեցի, տե՛ս Առաքելոց եկեղեցի
- Մոսկվա — 8, 161, 168, 230
- Մուհադասա՝ արվարձան Նփրկերտում — 107
- Մուշ — 98, 99, 122, 124, 126, 128, 149, 208, 302, 304, 311, 313, 329
- Մուսուլ — 103, 117
- Մրեն — 84, 124, 127
- Մցխեթ — 117
- Յուվա՝ գյուղ — 217, 228

- նոսխճավան — 33, 35, 36, 60, 89, 90, 120, 121, 123, 124, 126
 նահրաբան՝ բաղաբ — 292
 նասիրիկ — 107
 նիկոսրոլիս — 119
 նյուշապուր — 291
 նոր գետիկ — 54, 202, 203
 նփրկերտ — 31, 36, 60, 100, 105, 106, 107, 108, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 252
 Շահաստան՝ բաղաբ Անձևացյաց երկրում — 98, 124
 Շամախի — 116
 Շամիրամի բաղաբ (Վասպուրականում) — 93, 97
 Շամրոր — 116
 Շատախ (Սատախ) — 119
 Շեմախա-կալա (Միջին Ասիայում) — 230
 Շիմշատ, տե՛ս Աշմուշատ
 Շիրակ — 46, 71, 75, 76, 82, 86, 122, 192
 Շիրակավան, տե՛ս Երզրզավորք
 Շիրի՝ բերդաբաղաբ — 114, 124
 Շիրվան, երկիր — 57, 116, 158, 167
 Շիրվան՝ բաղաբ — 116
 Շնհեր՝ գյուղ — 44
 Շոշ (Սուզա) — 229
 Ոստան — 94—95, 122, 124, 126, 206, 261, 341, 342
 Ոստանն Ռշտունյաց — 94
 Ուխտյաց բաղաբ (Օլթի) — 115
 Ումուր-Ռան (բաղաբամայր Առանի, խոսքը վերաբերում է Պարտավին) — 116
 Ուրարտական պետություն — 32, 33
 Ուրդենչ — 228
 Ուրմիա՝ լիճ — 55, 117, 206, 207
 Ուրմիա՝ բաղաբ — 117
 Չինաստան — 36, 46, 240, 246, 271, 304
 Չմշկածագ — 100, 124
 Չորրորդ Արմենիա (արար. աղբյուրների) — 36
 Չորրորդ Հայք — 54, 56, 105
 Պախրա՝ լեռ Մանանաղի գավառում — 257
 Պարսից թագավորություն — 53
 Պարսկաճայր — 53
 Պարսկաստան — 35, 79, 110, 111, 116, 230, 273, 278, 331
 Պարտավ (Բերդա) — 57, 59, 73, 92, 103, 116, 173
 Պետական պատմական թանգարան — 157, 180, 207, 208, 281, 300, 327, տե՛ս նաև նկարների տակ հասցեակված ձևով (ՊՊԹ)
 Պետրոգրադ — 7, 8
 Պերսարմենիա — 258
 Պղնձահանք — 52
 Պոնտոս — 330
 Պսկով — 161
 Պրակ՝ գյուղ — 44
 Ջազիրա (Ջեզիրե) — 56, 73
 Ջերմ՝ բաղաբագյուղ — 114, 124
 Ջուրջան — 36, 271
 Բեկ — 116, 247, 256
 Ռշտունյաց Ոստան — 94
 Ռշտունիք — 52, 94, 59, 174
 Ռոստով — 27
 Ռումի երկիր — 277
 Ռուսաստան — 38, 121
 Ռուսիա — 138, 172, 300
 Սամաստ — 31, 104, 108, 109, 117, 124, 166, 302
 Սամարղանդ — 304
 Սամարրա — 240, 249, 258
 Սամշվիլդե — 82
 Սանահին — 51, 165, 171
 Սասուն — 99, 200, 202
 Սարկապանու դաշտ — 44
 Սարալանջ՝ գյուղ — 220
 Սերաստիա (Սվաղ) — 115, 118—119, 123, 140
 Սինոպ — 119
 Սիուտ, տե՛ս Ասիուտ
 Սիս — 257
 Սիսական, տե՛ս Սիսավան
 Սիսական (Սիսաջան) — 36, 124
 Սիսավան — 89, 91—92, 124
 Սիսիան — 178, 180
 Սիսպերիտիս — 52
 Սիրաջ Թայր — 36
 Սկյութական աշխարհ — 52
 Սղերդ — 98, 124
 Սյունիք — 36, 37, 41, 44, 55, 63, 89, 90, 91, 92, 122, 128, 132, 170, 181
 Սյունյաց աշխարհ — 49, 91
 Սուգդարիլ — 36
 Սուխումի — 117
 Սուզգալ — 27
 Սուլթանաբադ — 247
 Սուրենաշեն՝ ավան — 119
 Սուրմարի (Սուրբ Մարի) — 83, 124
 Սպեր — 52, 55
 ՍՍՌՄ — 28
 Եր. Ստեփանոսի վանք — 119
 Սև ծով — 5, 31, 36, 117, 118, 119, 123
 Սևան կղզի — 207
 Սևանա լիճ — 48, 92, 123, 152, 206, 208, 280
 Սևանի վանք — 319
 Վաթնունի, տե՛ս Վարաթնունիք
 Վաղարշակերտ — 60, 81—82, 121, 122, 129, 124

- Վաղարշապատ — 33, 34, 48, 49, 87—88, 124, 215, 234, 284, 311
 Վաղարշավան — 81
 Վալոց ձոր — 41, 89
 Վան — 33, 35, 48, 56, 60, 92—94, 95, 121, 122, 124, 125, 128, 199, 206, 253, 292
 Վանա բերդ — 93
 Վանա ժայռ — 97
 Վանա լիճ — 48, 55, 56, 106, 123, 206, 328
 Վանանդ — 80, 81, 122
 Վանտոսպ — 92, 93
 Վասպուրական — 41, 44, 54, 71, 90, 92, 93, 94, 95, 98, 99, 101, 109, 118, 128, 189, 193, 313, 341
 Վասպուրականի թագավորություն — 92, 122
 Վարագա լեռ — 93, 97, 199
 Վարաժնունիք — 54
 Վարարակն — 44
 Վարդանակերտ — 116
 Վարդգեսավան — 33
 Վենետիկ — 177
 Վերամիս — 256
 Վերին Արտաշատ — 216
 Վիեննա — 8, 19, 292
 Վհրի քաղաք — 98, 124
 Վոլգա — 26, 27, 294
 Վոլինյան մարզ — 27
 Վրաստան — 6, 12, 36, 47, 48, 57, 72, 75, 117, 162, 185, 217, 230, 235, 238, 246

 Տաթև — 59, 63, 91, 208, 232, 321
 Տամբատ — 278
 Տայք — 53, 55, 57
 Տաշիր-Ձորագետ — 54, 82, 165
 Տառ-Վլարչեթի վրաց թագավորություն — 102

 Տավրոսյան լեռներ — 108
 Տարոն — 41, 46, 99, 100, 118, 128, 200, 201
 Տարոնո քաղաք — 99
 Տեկոր — 84, 124
 Տիգրանակերտ — 33, 34, 35, 64, 65, 106, 120, 121, 204, 254 (տե՛ս նաև նփրկերտ)
 Տիգրիս՝ գետ — 19, 292
 Տուշպա — 92
 Տուտիս — 54
 Տուրուբերան — 54
 Տրապիզոն — 31, 81, 111, 115, 119, 123, 258, 277
 Տփղիս — տե՛ս Բրիլիսի

 Ճկորասթավի — 177

 Փայտակարան — 6, 45, 53, 235, 270
 Փանագիտն՝ բերդ — 53
 Փասիանե երկիր, տե՛ս Բասեն
 Փոթի — 161
 Փոքր Ասիա — 103, 119, 252
 Փոքր Հայք — 33, 118, 119
 Փրկչի եկեղեցի (Անիում) — 78, 196, 199

 Քապուլ (Քարուլ) — 334
 Քարաունջ — 88, 124
 Քալիմար — 124
 Քութայիսի — 117, 161
 Քրդի դուռ՝ Պարտավում — 116

 Օկա՝ գետ — 27
 Օշական — 88
 Օպիզարի — 177
 Օրան-Կալա — 6, 116, 226, 227, 230, 236, 298

ԳՐՔՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Գուժանի խոփ, Զվարթնոց 9—10, դդ., ՊՊԹ, № 1649	42
2. Զիթհանի մնացորդներ, Անի	51
3. Դվին քաղաքի միջնաբերդի հատակագիծը՝ ըստ Ն. Մառի	72
4. Հին շենքերի մնացորդներ Դվին քաղաքի միջնաբերդում, հատակագիծ ճարտ. Գր. Քոչոյանի	74
5. Անի քաղաքի ընդհանուր հատակագիծը, ըստ Ֆ. Մոսկիչի	77
6. Անիի Բաղրատունյաց պալատի հատակագիծը, ըստ Բ. Թորամանյանի	78
7. Անի քաղաքի բնակիչի մի թաղամասի հատակագիծը, ըստ Բ. Թորամանյանի	79
8. Կոռի քաղաքի հատակագիծը, ըստ ճարտ. Վ. Հարությունյանի	83
9. Երկաթի դուր, Դվին, ՊՊԹ	139
10. Երկաթի մանդաղ, Անի, ՊՊԹ	139
11. Մետաղե կողպեքներ (Անի, № 1548), ՊՊԹ	140
12. Երկաթի դանակի լեզվակ, Գառնի, ՊՊԹ	141
13. Երկաթի դանակ, Անի, ՊՊԹ	141
14. Պայտարի տաշիչ, Գառնի, № 150, ՊՊԹ	142
15. Երկաթի պայտեր, Դվին, ՊՊԹ	142
16. Նեախի ծայրեր, Անի, Դվին, ՊՊԹ	144
17. Նեախի ծայրեր, Գառնի, ՊՊԹ	144
18. ա, բ, գ) Նիզակի ծայրեր, Դվին, (№№ 135, 223), դ) Երկաթե գրահի շերտեր, ՊՊԹ	146
19. Նիզակի ծայր հեծյալներին ձիուց վայր բերելու հարմարանքով, Անի, ՊՊԹ	146
20 և 21. Նիզակի ծայրեր, հեծյալներին հարվածելու, և ձիուց վայր բերելու հարմարանքով, Դվին, ՊՊԹ	147
22. Սուր, Անի	148
23. Դաշույններ, Գառնի, ՊՊԹ	150
24. Բրոնզե զանգ, Անիի համար քննորոշ զարդերով	161
25. Բրոնզե հայելի, Գառնի (№ 1963/108), ՊՊԹ	169
26. Ոսկերիչի հալոց և գդալներ, Դվին, ՊՊԹ	172
27. Ոսկերիչի մուրճ, Գառնի (№ 1964/182), ՊՊԹ	173
28. Ոսկե ապարանջան, հյուսածո (Դվին, № 1745), ՊՊԹ	179
29. Կաղապարով թափված գիպսե զարդերով խորշ (Դվին)	197
30. Բրուտի գուրդի սկավառակ (Դվին, № 1906/235), ՊՊԹ	214
31. Բրուտի քարե կոկիչ, Գառնի (№ 1965/180), ՊՊԹ	222
32. Սափորի բեկոր, ներձկված զարդով (Գառնի, № 1966/119), ՊՊԹ	223
33. Կարասի բեկոր, վերադիր զարդով (Գառնի), ՊՊԹ	225
34. Վաբպետների նշաններ, ջնարակած պնակների հատակների վրա (Գառնի), ՊՊԹ	233
35. Փորագիր ապակու բեկորներ (Գառնի), ՊՊԹ	259

36. Ապակե ապարանջանների բեկորներ (Գառնի), ՊՊԹ	262
37. Գուլների լծորդովյան տակատակ (Մատենադարանի ձեռագիր, № 7186, էջ 58) .	307
38. Գրչության պարագաներ (մանրանկար Մատենադարանի ձեռագիր, № 7643, էջ 2 ր, 1338 թ)	311
39. Թանաքաման տարբեր գույնի ներկերի համար (Դվին), ՊՊԹ	316
40. Ոսկորե գործիքներ (Դվին, № 1794/301, 1906/26, 206), ՊՊԹ	323
41. Ոսկորե սրինդներ և մի այլ իր (Դվին, № 1906/12, Գառնի, № 82), 1955 թ., ՊՊԹ	
42. Հավանքի քարե դաստակ (Գառնի, № 1966/115) և մարմարե դունդ (№ 1966/69), սուլորարար գործածվում էին ղեղորայք ծեծելու և տրորելու (լոսկու) հա- մար, ՊՊԹ	332
43. Քրմիական փորձանոթներ ձեռագրերից	338
44. Կավե խփի բռնակ, հատուկ անցքով և անոթը հերմետիկ կերպով փակող խուփ, հա- վանարար քրմիական փորձանոթների մասեր են (Գառնի, № 1966/112, 1965/175), ՊՊԹ	340

ԳՐՔՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ԳՈՒՆԱՎՈՐ ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Բազմադույն ջնարակով դարդարված ափսե (Զվարթնոց, X դ.): Նկ. Բ. Արզումանյանի	232
Հախճապակյա թաս, դարդարված ճնշումով և ծակոտիներով, որոնք փակված են թափանցիկ ջնարակով (Անի, X—XI դդ.), ՊՊԹ: Նկ. Հ. Կարազյոզյանի	240
Հախճապակյա թաս, դարդարված դժադրելու և ճնշելու եղանակով (Անի, X—XI դդ.), ՊՊԹ: Նկ. Հ. Կարազյոզյանի	244
Ապակյա անոթ (Դվին, X դ.), ՊՊԹ: Նկ. Բ. Արզումանյանի	257
Ոսկեզույն դիպակի նմուշ (Մատենադարանի № 2388 ձեռագրի կազմի տակ, XIII—XIII դդ.): Նկ. Հ. Կարազյոզյանի	273
Դիպակի նմուշ (Մատենադարանի № 1590 ձեռագրի կազմի տակ, XIII դ.): Նկ. Հ. Կարազյոզյանի	273
Զործվածքների նմուշներ, հյուսված գույնզգույն թելերից: Նկ. Վ. Ախիկյանի	280
Ասեղնագործության նմուշներ (XIII—XIV դդ.): Նկ. Լ. Ա. Դուրնովոյի	280
Դրոշմազարդ գործվածք (Մատենադարանի № 1175 ձեռագրի կազմի տակ, XIII—XIV դդ. (Առաջին անգամ տպվել է «Армянская Набоитка» գրքում, Մոսկվա, 1953 թ.): Նկ. Ն. Խաչատրյանի	289
1202 թ. գորգ հայերեն արձանագրությամբ: Արտատպված է Alois Riegl-ի «Ein orientalischer Teppich von Jahre 1202 N. Chr» գրքից	292

ԳՐՔԻ ՎԵՐՋՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԻ (ԱՌԱՆՁԻՆ ՏՍ.ԽՏԱԿՆԵՐԻ) ՑԱՆԿ

- I. Անի քաղաքի միջնաբերդը:
- II. Անի քաղաքի պարիսպները:
- III. Անիի մայր տաճարը (գմբեթն ընկած):
- IV. { Անիի Գազկաշեն տաճարը (կառուցված 11-րդ դարի սկզբին Զվարթնոցի օրհնակով: Վերակազմություն Թ. Թորամանյանի:
Անիի Փրկչի եկեղեցին:
- V. Անի քաղաքի պարսպի մի հատվածը, հետին պլանում միջնաբերդը և մայր տաճարը:
- VI. { Եղեղիսի Զորաց եկեղեցին:
Մաղասերոյ, որը պաշտպանում էր Անիի մատույցները հարավից:
- VII. { Աղթամարի տաճարը:
Մշո սուրբ Կարապետի վանքը:
- VIII. { Նփրկերտի պարիսպների մնացորդները:
Կարնո քաղաքի միջնաբերդը:
- IX. Երկաթե գործիքներ. բահ (Դվին, № 1906/242), կացիններ և ուրագ (Դվին, № 1905/50), ՊՊԹ:
- X. Երկաթե խաչ, Աշոտ Բ. Երկաթին վերագրվող (էջմիածին, վանքի թանգարան) Երկաթե ուրագ (Գառնի), ՊՊԹ:
- XI. Երկաթե մկրատներ (Դվին, №№ 1948/25, 1928/110), ՊՊԹ:
Երկաթե դանակներ (Դվին, Գառնի, № 1964/149), ՊՊԹ:
- XII. Պայտարի տաշիչ (Դվին, № 1913/177 և դաշույններ (Դվին), ՊՊԹ:
{ Պղնձե կաթսա, կռածո (Անի), ՊՊԹ:
XIII. { Պղնձե ջրաման, դրվագված (Անի, № 1322), ՊՊԹ:
Պղնձե մոմակալ-կանթիղ, դրվագված, դոտին դրոշմադարդ (Անի, № 1325), ՊՊԹ:
- XIV. Մոմե մոդելով ձուլված ջրամաններ (Անի, № 1349), ՊՊԹ, աղվանական (Պետական էրմիտաժ):
- XV. Բրոնզե ափսե, բրոնզե ճրագ, ձուլածո (Անի), ՊՊԹ:
- XVI. Բրոնզե կանթիղ, ձուլածո (Անի, № 1265), ՊՊԹ:
- XVII. Հաղարծնի բրոնզե մեծ կաթսան, 1232 թ.:
- XVIII. Բրոնզե բուրվառ և կանթիղ՝ ձուլածո (Անի, № № 1265, 1324), ՊՊԹ:
- XIX. Անիի Գազկաշեն տաճարի մեծ ջահը, ՊՊԹ:
- XX. Բրոնզե դամբար և Աշտանակի ցածի մասը (Անի, № 1317), ՊՊԹ:
- XXI. { Արծաթե տուփի վերին երեսը, դրվագված և ոսկեջրած, 10—11-րդ դդ. (էջմիածին, վանքի թանգարան):
Արծաթե տուփի վերին երեսը, դրվագված և ոսկեջրած, 11—12-րդ դդ. (էջմիածին վանքի թանգարան):

- XXII. Խոտակերպ սր. Նշանի արծաթե տուփը, գրվազված, սուկեշրած, 1300 թ. (էջմիածին վանքի թանգարան):
- XXIII. Խոտակերպ սր. Նշանի տուփը բացված վիճակում:
- XXIV. { Ոսկե ապարանջաններ, ձուլածո (Գվին, №№ 1375, 1376, 1377), ՊՊԹ:
 { Ոսկե մանթակ հյուսածո (Գվին № № 1641/63), ՊՊԹ:
- XXV. Անիի գլխավոր մուտքն իր աշտարակներով:
- XXVI. { Աղթամարի տաճարի քանդակներից:
 { ա) Գաղիկ Արծրունու քանդակը:
- XXVII. Հոռոմոսի վանքի ժամատան ատաստաղի քանդակները:
- XXVIII. Անիի Բաղրատունիների ղինանշանը՝ քաղաքի պարսպի վրա:
- XXIX. Խաչքար՝ Գոշավանքից:
- XXX. Արձանագրություն Անիի մայր տաճարի շինության վերաբերյալ, 1001 թ.:
- XXXI. Գիպսե կամար և այլ բեկորներ, փորագիր շարքերով (Գվին, № № 1617/178, 1543/848), ՊՊԹ:
- XXXII. Գիպսե զարդեր, կաղապարով թափված (Անի), ՊՊԹ:
- XXXIII. «Տրդատի շքերթը», սրմնանկար (Անի):
- XXXIV. Գրակալ 10-րդ դ., 1161 թ. գրակալը երկու կողմից, փորագիր փայտ, ՊՊԹ:
- XXXV. Մշո Առաքելոց եկեղեցու դուռը, 1134 թ., փորագիր փայտ, ՊՊԹ:
- XXXVI. { Սևանի եկեղեցու դուռը, 1176 թ., փորագիր փայտ (№ 87), ՊՊԹ:
 { Հավոց թառի «Ամենափրկիչ» խաչչուծության բարձրաբանդակ, փայտի վրա (էջմիածին վանքի թանգարան):
- XXXVII. { Ջնարակած թասերն ու սնակները թրծելիս նրանց արտերում զրվող և իրարից անջատող եռոտանի (Գվին, № 1848/8), ՊՊԹ:
 { Հասարակ կավե սնակ, (Անի): Ձձումներ (Կարմիր-բլուրի միջնաբերդյան շերտից):
- XXXVIII. Անդրով պատած և փայլեցրած սափորներ (Գվին, № № 1794/443, 1906/250), ՊՊԹ:
- XXXIX. Փարշ, դժաղիր զարդերով (Գվին, № 1980/113), ՊՊԹ: Սափոր ներհկված զարդերով (Գվին, № 1907/142), ՊՊԹ:
- XL. Դողաձև զրոշմով զարդարված ձվաձև անոթ (Անի, № 1057), փարշ (Գվին, № 1794/186), ՊՊԹ:
- XLI. Կարասի բեկոր, վերագիր զարդով (Անի, № 41), կարաս և կարասի բեկոր, զարդարված զլանաձև կնիք-զրոշմներով (Գվին, Գառնի, № 1966/143), ՊՊԹ:
- XLII. Կարաս և կարասի բեկորներ, զարդարված բուրբակ և զլանաձև կնիք զրոշմներով (Անի, № 208), ՊՊԹ:
- XLIII. Կարաս, զարդարված բուրբակ կնիք-զրոշմով (Անի), ձվաձև անոթ, զարդարված բուրբակ զրոշմով և վերագիր զարդով (Գվին, № 1906/149), ՊՊԹ:
- XLIV. Ձվաձև անոթ, զարդարված կաղապարով ճնշելու եղանակով (Անի), ՊՊԹ:
- XLV. { Ջնարակած թասերի բեկորներ, թաց անոթի վրա արած դույնզույն նկարներով (Ջվարթնոց):
 { Ջնարակած թաս, նկարազարդված սպիտակ անոթով (Ջվարթնոց):
- XLVI. Ջնարակած թաս, վարդադույն անոթի վրա նկարած դույնզույն զարդերով (Գվին), ՊՊԹ:
- XLVII. Ջնարակած թաս, անոթի վրա նկարած դույնզույն շերտերով (Գվին, № 1847/59), ՊՊԹ:
- XLVIII. Ջնարակած սնակներ, զարդարված նկարի ֆոնում անդորը հեռացնելու եղանակով (Գվին, № 1949/65), (Անի), ՊՊԹ:
- XLIX. Պնակներ, զարդարված բազմադույն ջնարակով, ըստ դժաղրի (Գվին, Անի, №№ 312, 308), ՊՊԹ:
- L. Պնակ, ենթաջնարակային նկարազարդումով (Գառնի), ՊՊԹ:
 Պնակ, զարդարված անդորի վրա դժաղրելու եղանակով (Անի, № 303), միազույն ջնարակով ու դժաղր զարդով կճուճ (Գվին, № 1906/123), ՊՊԹ:
- LI. Ջնարակած սնակներ, դժաղր զարդերով (Գվին, № 1294/200), ՊՊԹ:

- LII. Փխրախեցի հախճապակյա թասեր, զծագիր և ծակոտկեն զարդերով (Դվին, Անի, № 757), ՊՊԹ:
- LIII. { Փխրախեցի հախճապակյա թաս, զծագիր և ծակոտկեն զարդերով (Անի, № 754), ՊՊԹ,
կարծրախեցի հախճապակյա ափսն, զծագիր զարդերով և կաթնաձուն ֆոնի վրա կորալտի օգնությամբ զրված կապույտ ցայտերնով (Դվին, № 1794/473), ՊՊԹ:
- LIV. Հախճապակյա անոթներ, զծագիր և խորաքանդակ զարդերով (Դվին, № 1794/123, 124), ՊՊԹ:
՝ Հախճապակյա սափոր, զծագիր զարդերով (Անի):
- LV. ՝ Հախճապակյա թաս, կիսաթափանցիկ (Դվին, № 1906/70), ՊՊԹ:
- LVI. Փխրախեցի հախճապակյա անոթներ, վերադիր զարդերով (Դվին, № 1641/57) (Անի, № 759), ՊՊԹ:
- LVII. Հախճապակյա նկարուն թաս, սիրենի պատկերով (Դվին, № 1794/167):
- LVIII. Շողուն հախճապակյա թաս, սիրենի պատկերով (Անի, № 776), ՊՊԹ:
- LIX. Շողուն հախճապակյա սափոր (Դվին, № 1913/145), ՊՊԹ:
- LX. Թրծած աղյուսի և ծածկի կղմինդրի նմուշներ (Դվին):
- LXI. Մածկի կղմինդրներ՝ ճակտոններով և ծածկի կղմինդրի նմուշներ (Դվին):
- LXII. { Ջրմուղի դիծ, կավն փողրակներով:
Տերակոտային աղյուսիկներով երեսպատված սլասի բեկոր (Դվին):
Շքաղյուսի բեկոր (Գառնի), ՊՊԹ:
- LXIII. { Ապակե դավաթ (Դվին, № 1617/70), անոթի բեկոր, փորագիր, (Դվին, № 1794/486):
Ապակե ջրաման (Դվին, № 1917/300), սպակե անոթի բեկորներ, գունավոր նկարուն զարդերով (Դվին), ՊՊԹ:
- LXIV. Ապակե ապարանջաններ (Անի), սպակե անոթներ, վերադիր զարդերով (Դվին, № 1217/197, 1906/262), ՊՊԹ:
- LXV. Կոպիտ գործվածք, վուշի թելից (№ 472 ձևագրի կաղմի տակ), նուրբ գործվածք, վուշի թելից և մետաքսյա նուրբ գործվածք:
- LXVI. Դիպակի հին նմուշ (№ 6263 ձևագրի կաղմի տակ), դիպակի հին նմուշ (№ 5554 ձևագրի կաղմի տակ):
- LXVII. { Մանկական զղեստ 13-րդ դարի (Անի, № 1140), ՊՊԹ,
Գործվածքի վրա մետաղե թելերով ձևագործած զարդ (Անի, № 1126), ՊՊԹ:
Գազանների ասեղնագործ պատկերներ՝ նուրբ-շղարշի վրա (Անի):
- LXVIII. Երկգույն թելից վանդակավոր գործվածքներ (№ 5204 ձևագրի կաղմի տակ):
- LXIX. { Գործվածք (№ 5194 ձևագրի կաղմի տակ), վերին կեսը ոսկեգույն դիպակ, ներքևի կեսը՝ դրոշմազարդ գործվածք:
Գրոշմազարդ գործվածքի նմուշ, № 3793 ձևագրի կաղմի տակ:
- LXX. Կաշվե զղեստի փեշի կտոր և նրա վրայի զարդը (Անի), ՊՊԹ:
- LXXI. { 13-րդ դարի մանրանկարներ, աշից Բեկի-խաթունը սամույրե մուշտակով (ձև-№ 6320, էջ 399 ր):
Կաշվե խորադանաձև հյուսված իրերի մնացորդներ (Անի, № 1132), ՊՊԹ:
- LXXII. Գրչության նմուշ 1053 թ. երկաթագիր (ձև. № 3793):
- LXXIII. Գրչության նմուշ, 13-րդ դարի բոլորգիր (ձև. № 416):
- LXXIV. { Կաշվե կաղմ հյուսածո խաչի զարդով:
Հյուսածո խաչ, մանրանկար (ձև. № 283, էջ 172 ր):
- LXXV. Կաշվե կաղմերի նմուշներ, Արևելյան Հայաստանից (ձև. № 1963), և Կիլիկիայից (ձև. № 5647):
- LXXVI. { Կաշվե կաղմ, զարդարված զծագրով և նկատներով զրվող դրոշմներով (ձև. 751):
Կաշվե հին կաղմ, հետադայում (16-րդ դար) կոստղած և ավետարանիչների պատկերներով թիթեղներ փակցված (ձև. № 5194):

Հ Ա Պ Ա Վ ՈՒՄ Ն Ե Ր

АН Арм. ССР—Академия наук Арм. ССР

АН СССР—Академия наук СССР

АрмФАН—Армянский филиал Академии наук СССР

ԳԱ—Գիտությունների ակադեմիա

ГАИМК—Государственная Академия истории материальной культуры

ЭВО—Записки Восточного отделения Русского археологического общества

ИАК—Известия Археологической комиссии

ИАН—Известия Академии наук

ՆԲՀ—Նոր բաղադրը Հայկազեան լեզուի

ПЭР—Памятники эпохи Руставели (Сборник, Ленинград, 1938)

ՊՊԹ—Հայաստանի Պետական Պատմական Բանգարան


СМОМПК—Сборник по описанию местностей и племен Кавказа

ВДИ—Вестник древней истории


ОАК—Отчеты Археологической комиссии

ՆԿԱՐՆԵՐ






Անի քաղաքի միջնաբերդը



Անի բազալի պարիսպները:



1111. 2. (S. ABS. 56-58)




Անիի Գագկաշեն տաճարը, կառուցված 11-րդ դ.
սկզբին Զվարթնոցի օրինակով.
Վերակազմություն Թ. Բարսեղյանի:




Անիի Փրիգլի կկեղեցին:



Անի բաղարի արտբալի մի հատվածը, հետին պլանում միջնորեղը և մալը տաճարը:



Եղեցիսի Զորաց Եկեղեցին.




Մաղառաբերդը, որը պաշտպանում էր Անիի մատուցները հարավից:



ԱգիաՍոփի տաճարը




Մշո սուրբ Կարապետի վանքը




Նախիջևանի պարիսպների մնացորդները:




Կարնո գաղաթի միջնաբերդը:




Նրկաթե գործիքներ, բաճ. (ԴՎԻՆ, № 196/242), կացիկներ և սրբագ, (ԴՎԻՆ, № 1905/50), ՊՊԹ.



Նրկաթն խաչ, Աշոտ Բ. Նրկաթին վերագրվող.
(Էջմիածին, վանքի թանգարան):



Նրկաթն ուրազ, (Գառնի), ՊՊԹ:




Երկաթե ձկրատներ, (Դվին, № № 1948/25, 1928/110), ՊՊԹ.



Երկաթե դանակներ, (Դվին, Գառնի, № 1964/145), ՊՊԹ.



Պալտարի տաշիչ, (Դվին, № 1913/177), ՊՊԲ:



Չաչույններ, (Դվին), ՊՊԲ:




Պղնձե կաթսա, կռածո, (Անի), ՊՊԴ:




Պղնձե ջրաման, (Անի, N 1323),
դրվագ լած, ՊՊԹ:




Պղնձե մոմակալ-կանթնդ, դրվագ լած, գո-
տին դրոշմագարդ, (Անի, 1825), ՊՊԹ:



Մոմե ճողկելով ձուլած ջրաման, (ԱԿԻ, № 1349), ՊՊԹ:



Մոմե ճողկելով ձուլած ջրաման, սղվանական (Պետական Էրմիտաժ):




Բրոնզե ափսե, (Անի), ԿՊԿՄ:




Բրոնզե ճրագ, ձուլածո, (Անի), ԿՊԿՄ:



Բրոնզե կանխեղ, ձուլածո, (Ա.Ե.Ի, № 1265), ՊՊԹ:




Հաղարծնի բրոնզի մեծ կաթսան, 1232 թ.:




Բրնդե րուբառ, ձուլածո, (Ա.Ն.Ի, N 1265), ՊՊԹ:




Բրնդե կանթեղ, ձուլածո, (Ա.Ն.Ի, N 1321), ՊՊԹ:




Անիի Գազկաշեն տաճարի մեծ ջահը, ՊՊԲ:



Բրոնզե զամբար, (Ա.Ն.Ի), ՊՊԹ:



Աշտանակի ցածի մասը, (Ա.Ն.Ի, N 1317), ՊՊԹ:



Արժաթն տուփի վերին երեսը, դրվագված և ոսկեջրած,
10—11-րդ դդ. (Էջմիածին, վանքի թանգարան):




Արժաթն տուփի վերին երեսը, դրվագված և ոսկեջրած,
11—12-րդ դդ. (Էջմիածին, վանքի թանգարան):




Խառակիրաց սր. Նշանի արձաթի առփր, գրվազված, սահչրած, 1300 թ.,
(Էջմիածին, վանքի թանգարան):




Խոտակերպ սր. Նշանի տուփը բացված վիճակում:




Ոսկե ապարանջաններ, ձուլածո, (Դվին, Ձ Ձ: 1375, 1376, 1777), ՊՊԹ.




Ոսկե մանյակ, հյուսածո, (Դվին, Ձ 1641/63), ՊՊԹ.




Անիի գլխավոր ժուռըն իր աշտարակներով:



Աղձամարի տաճարի քանդակներէց.
ա) Քաթիկ Արեւրունու քանդակը:



Հոռոմուսի վանքի ժամատան արաստաղի ընդգաները




Անի: Բագրատունիների զինանշանը քաղաքի պարսպի վրա:



Խաչքար՝ Գոշավանքից՝




Գրպան կամար և այլ բեկորներ, փորագիր զարդերով, (ԳՎԽ, Ն Ն 1617/178, 1543/848), ՊՊԹ:



Կիպոս զարդեր, կաղապարով թափված, (ԱՆԻ), ՊՊԹ:




«Տրդատի շքերթը», որմնանկար (Անի):



Գրակալ 10-րդ դ., ՊՊԹ.




1161 թ., գրակալը Երկու կողմից, փորագրեր փայտ, ՊՊԹ.







Մշո Առաքելոյ եկեղեցու դուռը, 1134 թ., փորագիր փայտ, ՊՊԹ.



Սեւանի եկեղեցու դուռը, 1175 թ., փորագրված
փայտ (N° 87), ՊՊԹ:



Հավուց թառի «Ամենափրկիչ» խաչնշու-
թյան բարձրաբանդակը, փայտի վրա,
(Էջմիածին, վանքի թանգարանի):



Հասարակ կավե պնակ, (Անի):

Ձնարակած թասերն ու պնակները
Յրծելիս նրանց արանքում դրվող
և իրարից անջատող եռոտանի,
(Դվլին, Ն 1848/8), ՊՊԹ:



Չճումներ (Կարմիր-բլուրի միջնադարյան շերտից):




Անդրազ պատած և փայլեցրած սափորն Լր. (ԳՖՆ. № 1791/443, 1906/250), ՊՊԲ.



Փաթը, գծագիր զարդերով, (Դվին,
№ 1980/113).




Սափոր, ներճկված զարդերով, (Դվին,
№ 1907/142), ՊՊԹ.



Դաղածն գրոշմով զարդարված ձվաձև անոթ, (Անի,
№ 1057), ՊՊԹ:



Դաղածն գրոշմով զարդարված փարջ, (Գվին,
№ 1794/186), ՊՊԹ:



Կարասի բեկոր, վերագիր զարդով, (ԱՊԻ, N 41), ՊՊԹ:



Կարասու և կարասի բեկոր, զարդարված գլանաձև կնիք-դրոշմներով, (ԳՎԻՆ, Գառնի, N 1966/143), ՊՊԹ:



Կարտու և կարտուի բեկորներ, զարդարված բալտրակ և զլանածև կնիք-զրույմներով,
(Անի, Ն՝ 208), ՊՊԹ,




Կարաս, զարդարված բոլորակ կնիչ-դրոշմով, (ԱՆԻ):



Զվածե աճով, զարդարված բոլորակ դրոշմով և վերադիր
զարդով, (Դվին, № 1906/149), ՊՊԹ:




Զվածև անոթ, զարդարված կաղապարով ճնշելու եղանակով, (Անի), ՊԳԹ:




Ջնարակած թասերի բեկորներ, թաց անգորի վրա արած գունդղույն նկարներով, (Ջվարթնոց)։



Ջնարակած թաս, նկարազարդված սպիտակ անգորով, (Ջվարթնոց)։



Ջնարակած թաս, վարդագույն անդրի վրա նկարած դուլնդուլն զարդերով, (Դվին), ՊՊԹ:




Ջնարակած թաս, անգորի վրա նկարած գույնզգույն շերտերով, (Դվին, 1847/59), ՊՊԹ.




Ջնարտիած պնակներ, գարգարիած նկարի ֆոնտմ տնդորր Ջնուպնեղու Լզանտիտի, (Իվին, № 1919/65), (Անի), ՊՊՐ:



Պնակներ, զարդարված բազմազուն ջնարակով, ըստ գծագրի, (Կլին, Անի, Ն.Ն. 312, 308), ՊՊԹ:





Պնակ, ենթաջնարակային նկարազարդումով, (Գառնի), ՊՊԹ:




Պնակ, զարդարված անգորի վրա դժագրի-
լու եղանակով, (Անի, № 303), ՊՊԹ:



Միագույն ջնարակով ու դժագիր վարդով
կճուճ, (Դվին, № 1906/123), ՊՊԹ:




Ջնարակած պնակներ, գծողիբ գարդերով, (Դվին, N 179-1/200), ՊՊԹ:



Փխրախեցի հախճապակյա թասեր, պճադիր և ծակոտկեն զարդերով, (Դվին, Անի, № 757), ՊՊԹ.



Փխրասեցի հախճապակյա թաս, գծագիր և ծակոտկենն զարդերով,
(Անի, № 754), ՊՊԹ:




Կարծրասեցի հախճապակյա ափսե, գծագիր զարդերով և կաթնավուն ֆոնի վրա կորալաձև
օգնությամբ դրված կապույտ շալտրերով, (Գվին, № 1794/173), ՊՊԹ:



Հախճապակյա սնոթներ, դժագիր և խորանարդակ վարդերով. (Գլին,
N: 1791/123, 124), ՊՊԹ.



Հախճապակեա սափոր, գծագիր դարգերով, (Անի), ՊԳԹ:



Հախճապակեա թառ, կիտաբախանցիկ, (Դվին, N 1906/70), ՊԳԹ:



Փխրախեցի հախճապահյա անոթներ, վերադիր զարդերով, (Դվին, Պ 1641/57),
(Անի, Պ 759), ՊՊԹ,




Հախճապակե նկարուն թաս, սիրենի պատկերով, (Բվին, № 1791/167), ՊՊԹ.




Շաղուն հախճապակե թափ, սիրենի պատկերով, (ԱԵԻ, № 776), ՊՊԹ.




Նոգան հարձադասի սափոր, (Դվին, N 1913/145), ՊՊԹ.




Թրձած աղյուսի նմուշներ, (Դվին):




Սառկի կղձիկերի նմուշներ, (Դվին):



Թրժած աղյուսի նմուշներ, (Դվին),




Մածկի կղմինդրի նմուշներ, (Դվին),



Ջրմուղի դիժ՝ կամե փողոցակներով, (Դվին):



Տերակոտային աղյուսիկներով
երեսապատված պատի բեկոր, (Դվին):




Շրաղյուսի բեկոր, (Գառնի), ՊՊԹ:



Ապակե գավաթ, (Դվին, N 1617/70), ՊՊԹ:



Անոթի բեկոր, փորագիր, (Դվին, N 1794/186), ՊՊԹ:




Ապակե ջրաման, (Դվին, N 1917/300), ՊՊԹ:




Ապակե անոթի բեկորներ, գունավոր նկարուն զարդերով, (Դվին), ՊՊԹ:



Ապակե ապարանջաններ, (Անի):



Ապակե անոթներ, վերադիր զարդերով, (Դվին, ՆՆ 1217/197, 1906/262), ՊՊԹ.




Կոսպիտ գործվածք, վուշի թելից (N 472 ձեռագրի կաղափ տակ):




Նուրբ գործվածք, վուշի թելից:



Մետաբայա նուրբ գործվածք:




Դիպակի հին նմուշ (№ 6263 ձեռագրի կաղմի տակ):




Դիպակի հին նմուշ (№ 5554 ձեռագրի կաղմի տակ):





Մանկական զգեստ 13-րդ դարի, (ԱՆԻ, N 1110), ՊՊԹ:




Դործվածքի վրա մետաղե ֆելերով ձևա-
գործած զարդ, (ԱՆԻ, N 1126), ՊՊԹ:




Գաղանների տեղնագործ պատկերներ նույն շրջանի վրա, (ԱՆԻ),





Երկգույն թելից վանդակալորը գործվածքներ (№ 5204 Հեռադրի կազմի տակ),



Գործվածք (N 5194 ձևադրի կտրմի տակ), վերին կեսը սակեղույն զիպակ, ներքևի կեսը
դրոշմազարդ գործվածք:




Դրոշմազարդ գործվածքի նմուշ (N 3793 ձևադրի կտրմի տակ):




Կաշվե զգեստի փեշի կտոր և նրա վրայի զարդը, (ԱՆԻ), ՊՊԹ.



13-րդ դարի մանրանկար. աջից Քեկի-խա-
թունը սամույրի մուշտակով (ձեռ.,
N 6320, էջ 399ր):





Կաշվե խարազանաձև հյուսված իրերի մնացորդներ, (Անի, N 1132), ՊՊԹ:




Պաշվե կաղձ, հյուսածո խաշի զարդով:




Հյուսածո խաշ, մանրանկար (ձեռ. № 283, էջ 172բ):



Կաշվե կազմերի նմուշներ, Արևելյան Հայաստանից (ձև. №1363) և Կիլիկիայից (ձև. № 5617).



Կաշվե կազմ, զարդարված դժագրով և նկատներով զրվուլ զբարձրով (ձև. N° 751):



Կաշվե հին կազմ, հետադաշտմ (16-րդ դ.) կոտաղած և անկյուններում ավետարանիչների պատկերներով թիֆիզներ փակղված (ձև. N° 5194):

Բ ՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն

4
5

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

Վերաբերյալի առաջացումը և զարգացումը Հայաստանում
9—11-րդ դարերում

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Ֆեոդալական բազայի առաջացումը Հայաստանում

1. Ֆեոդալական բազայի առաջացման հարցը	25
2. Հայաստանի հնագույն բազաները և նրանց անկումը	32
3. Երկրի անսահական զարգացումը և վերելքը, նրա անկախության վերականգնումը	37
4. Երկրի արտադրողական ուժերի աճը	42
5. Ֆեոդալական բազայի առաջացումը Հայաստանում	58

ԵՐԿՐՈՐԿ ԳԼՈՒԽ

Հայաստանի բազաները 9—11-րդ դարերում

1. Քաղաքները և գյուղաբազաները Բագրատունյաց թագավորության մեջ	71
2. Քաղաքները և գյուղաբազաները Սյունիքում	89
3. Քաղաքները Վասպուրականում	92
4. Տարոնի և Մոփրի բազաները	98
5. Քաղաքները Հայաստանի հարավի ամիրայություններում	100
6. Քաղաքները Հայաստանի արևմտյան մարզերում	109
7. Քաղաքները Հայաստանի հարևան երկրներում	115
8. Քաղաքների դասակարգումը, մի բանի հզորացումը	119

ԵՐԿՐՈՐԳ ԲՅՈՒՆ

Արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում

ԵՐՐՈՐԳ ԳՆՈՒՆ

Մետաղագործություն

1. Դարբնությունը և նրա ճյուղերը	133
2. Զինագործություն	142
3. Պղնձագործություն	153
4. Ոսկեբրնձություն	170

ՉՈՐՐՈՐԳ ԳՆՈՒՆ

Քարի և փայտի մշակում, Շինարարական արհեստներ

1. Քարագործություն	187
2. Շինարարական այլ արհեստներ	194
3. Փայտամշակություն	200

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԳՆՈՒՆ

Կավագործություն և ապակեգործություն

1. Կավագործության ընդհանուր բնութագիրը	211
2. Հասարակ կամ անջնարակ խեցեղենի արտադրությունը	218
3. Ջնարակած խեցեղենի արտադրությունը	230
4. Հախճապակու (ֆայանսի) արտադրությունը	240
5. Շինարարական խեցեղենի արտադրությունը	253
6. Ապակեգործություն	256

ՎՅՅԵՐՈՐԳ ԳՆՈՒՆ

Գործվածքների, զարդերի և կաշվեղենի արտադրության հետ կապված արհեստներ

1. Մանածագործություն և անվաղործություն	265
2. Գորգագործություն	290
3. Կաշեգործություն, մորթեգործություն	296

ՅՈՒՆԵՐՈՐԳ ԳՆՈՒՆ

ԴՐՄ և զբոսայգիների հետ կապված արհեստներ

1. Դրման համար անհրաժեշտ նյութերի արտադրություն	303
2. Դրման համար	309
3. Կտրման արտադրություն	316

ԵՆԹԵՐՈՐԳ ԳՆՈՒՆ

Այլ արհեստներ

1. Մի բանի մանր արհեստներ	322
2. Դեղորայք և անուշահամ յուղեր պատրաստելը	330
3. Քիմիականություն (Արիմիա)	335
4. Միջին դարերում արհեստ համարվող զբաղմունքներ	341

ԻՆՆԵՐՈՐԻ ԳՆՈՒԹ

Աշխատանքի բաժանումը արհեստագործության մեջ

1. Արհեստագործության անջատումը երկրագործությունից	346
2. Աշխատանքի բաժանումը արհեստագործության մեջ	348
Անձնանունների ցանկ	357
Տեղանունների ցանկ	363
Գրքում ղեակզված նկարների ցանկ	370
Գրքում ղեակզված գունավոր նկարների ցանկ	372
Գրքի վերջում ղեակզված նկարների (ստանձին տախտակների) ցանկ	373
Հապավումներ	376



ԲԱՐԿԵՆ, ՆԻԿՈՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Քաղաքները և արհեստները Հայաստանում
IX—XIII դարերում

Ձեռագրումը նկարիչներ՝ Հ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ և Թ. ՆԱՆՈՒՇՅԱՆԻ
Բնագրում զետեղված գրչանկարները Բ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆԻ
Լուսանկարները՝ Պ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, Ա. ՔՈՉԱՐԻ, Ա. ՇԱՀԻՆՅԱՆԻ, Ա. Պ. ԲՈՒԼԳԱԿՈՎԻ

Պատ. խմբագիր՝ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ ԷՄ. ՊԻՎԱԶՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Լ. ԱԶԻԶՈՆԿՅԱՆ
Սերագիրչներ՝ Ա. ԱԼԱՆՅԱՆ, Թ. ՄԱՆՈՅԱՆ

Վճ. 07951

ԽՀն 373:

Պատվեր 2595:


Տիրամ 3.000:

Հանձնված է արտադրության 17/IV 1957 թ.: Ստորագրված է տպագրության 25/X 1958 թ.:
Թուղթ 84×108...: 54,94 տպ. պայմ. մամ. տպագրական 33,5+9 ներդիր մամ., հրատ 33,4 մ.:
Գինը՝ 21 ո. 65 կ., կազմը՝ 3 ո.:

Հայկական ՄՍՈՒ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունա-
րերության Գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱՅՆԵՐ

Էջ	Սյուան	Տող	Տպագրած է	Պետք է լինի
20	I	ն. 15	կաթողիկոս	կաթողիկոսի
29	II	վ. I	Խ. Ս. Տոլստոլ	Ս. Պ. Տոլստոլ
32		վ. 19	Հայաստ-Ազգի	Հայաստ- Ազգի
46	I	ն. 13	տերևն	տերևն
75	II	ն. 17	կուղակ	կուղակ
77	նկ.	տակ	Մոսանիչ	Մոսանիչ
78	I	ն. 4	'Անյոս	'Անյոս
80	I	ն. 7-6	ազատներն են	ազատներն են
99	II	վ. 8	Յ37	Յ37
113	I	վ. 1	-, "Աբտիդ	το "Αβτιդ
189	II	վ. 20	Ո՞ւր	Ո՞ւր
190	I	ն. 4	1912	1512
192	II	վ. 5	դանէ	դանձէ
221	I	ն. 15	բարակ	բարկ
237	I	ն. 15	զարդարմանը	զարդարման
285	I	վ. 3	խաղաց	ճաղաց
287	II	ն. 2	islamisch	islamische
292-3	նկ.	տակ	1902	1202
305	I	ն. 23	սամադ	սու մադ
326	I	վ. 4	անկեղծ	անկամ
334	II	ն. 18	Ջրերը	Ջրերի
336	I	վ. 16	ալբիմիկոլների	ալբիմիկոսների





գալ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043949

ЦЕНА

1/5